Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ XIV–XVIII ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Л. О. БАБАЯН

ОЧЕРКИ ИСТОРИОГРАФИИ АРМЕНИИ XIV—XVIII ВВ.

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

9(47.925)
Բ-12

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ XIV—XVIII ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

2033

ՀԱՅԿ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆ-Գ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

ԳՄԴ 63.3(2 Հ)
Բ 123

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական
գիտությունների դոկտորներ Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆԸ և
Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԸ

Բաբայան, Լ. Հ.
Բ 123 Դրվագներ Հայաստանի XIV—XVIII դարերի պատմագրության /Պատ. խմբ.՝ Մ. Կ. Զուլալյան.—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984 —. 294 էջ։

Մենագրության մեջ լուսաբանվում են XIV—XVIII դարերի պատմագիրների՝ Թովմա Մեծոփեցու, Գրիգոր Դարանաղցու, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Քանաքեռցու, Զաքարիա Ագուլեցու, Աբրահամ Կրետացու, Խաչատուր Ջուղայեցու, Սիմեոն Երևանցու, Երեմիա Քյոմուրճյանի, Ստեփանոս Շահումյանի (Ընտիր պատմություն Դավիթ Բեգի), Եսայի Հասան-Ջալալյանցի, և Աբրահամ Երևանցու պատմագիտական, հասարակական-քաղաքական և կրոնական հայացքները։ Ցույց է տրվում նրանց աշխատությունների աղբյուրագիտական արժեքն ու նշանակությունը Հայաստանի և Մերձավոր արևելքի մի շարք երկրների պատմության ուսումնասիրության համար։

Հասցեագրվում է պատմաբաններին և ընթերցող լայն շրջաններին։

0505040000 ԳՄԴ 63.3 (2 Հ)
Բ————————15—84 9 (43)
703 (02)—84

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

ԱՌԱՋԱԲԱՆ

Ուշ միջնադարը բազմաշարշար հայ ժողովրդի ապրած ամենադաժան արհավիրքներով ու սարսափներով լի պատմաշրջաններից մեկն է՝ ճակատագրական իր բոլոր հետևանքներով։ Հայի հայրենիքը երեք հարյուր տարի անընդմեջ եղել է Մերձավոր արևելքում գերիշխանության ձգտող մահմեդական բարբարոս ցեղերի ու ժողովուրդների արյունահեղ պատերազմների թատերաբեմ, ենթարկվելով ավերումների ու կողոպուտի, բնակչության զանգվածային ոչնչացման, գերեվարման ու ամայացման։

Մայր հայրենիքում ու Կիլիկիայում պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդը թողնվել էր բախտի քմահաճույքին, դարձել օտար բռնակալների կամայականությունների ու վայրագությունների անպաշտպան զոհը։ Ոչնչացվել էին հայ խոշոր ֆեոդալական տներն ու իշխանությունները, քաղաքական կյանքը բուն հայրենիքում գրեթե մարել էր։ Անասելի չափերի ու դաժանության հասած ազգային ու կրոնական հալածանքները կլանում էին մարդկային բյուրավոր կյանքեր։

Ղևոնդ Ալիշանը, խոսելով այդ պատմաշրջանի մասին գրել է. «Դառնանք յարևելս, ի մայրն արևելեայ աշխարհաց, ի բուն մեր հայրենիս՝ ի Հայաստան... Ի՜նչ խորութիւն խաւարի և լռութեան. ի՜նչպէս աննշան եղեր է այն ընդարձակ և բազմաբնակ աշխարհն, որ ի սկզբան բոլոր երկրիս վրա առաջին նշանն էր, և երկար և կերպակերպ յեղափոխութեամբք գրեթե բոլոր հին և միջին ժամանակաց մէջ պատմաքննութեան մատդրութիւնը կրնար գրավել, նաև իրեն պատերազմաց և արեանց ասպարէզ բացուած ատենն. երբ դեռ դիականց և աւերակաց մէջ ալ գտուէին և փայլէին քիչ կամ շատ կենդանի նշխարք Հայութեան, շունչ մը հայ հոգւոյ, փայլ մը Հայ հանճարոյ, գործ մը Հայ ձեռին... Իսկ հիմա այս (ԺԶ) դարուս մէջ՝ յետ արիւնակոխ աւերասփիւռ արշաւանց Լէնկթիմուրի, և պատերազմաց Շահռուհի, Ագ և Գարա-Գոյունլու տոհմից, յետ տիրապետութեան Շահ Իսմայիլի ի Պարսս, և Օսմանեանց զօրանալով յարևմտից յարևելս աշխարհակալելու, հիմայ՝ թեև քիչ մը հան-

դարտ էր Հայոց երկիրն ի վրդովմանց կռուոյ և հակառակութեան, սակայն ազգին ինքնակալութիւնն գրեթէ իսպառ ջնջած կամ ճնշուած, դանդաղամած անշարժութեան մէջ էր։

Թերևս Հայութեան հիգագոյն դարն է ԺԵ—ԺԶ դարուց միջոցն. ոչ եկեղեցական յիշատակելի դեպք մը... ոչ ազգային քաղաքական երևույթ մը. և ոչ այլ նշոյլք բանասիրութեան կամ գրականութեան, որ թերևս քան զայլ նշանս՝ երկարատև և յայտնագոյն ցոյց է կենդանութեան մեր ազգին։ Այո, մատենագրութեան մասամբ այլ, ...մեր աղքատագոյն ժամանակն է այս... ոչ հայերէն գրական լեզուի յատակութիւն, և ոչ անոր մշակութիւն գրելով ու կարդալով, որոց դիւրութեան հնարքներն այլ նուազեր էին յետ աւերմանց և աւարմանց վերոյիշեալ բռնաւորաց»[1]։

Հիրավի, ժամանակակիցների վկայութեամբ, հայոց երկնակամարի տակ թանձրացած խավարն է տիրել։ «Տգիտութեամբ խոպանացեալ և կորդացեալ էր ազգս հայոց,— դառնացած գրում է Առաքել Դավրիժեցին,— և ոչ միայն ոչ ընթեռնուին, այլ և ոչ զգիրս գիտէին, և ոչ զզօրութիւնս գրոց. վասն զի անպիտացեալ էր զիրքն յաչս մարդկան, և իբրև զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հողով և մոխրով»[2]։

Նույն պատմագիրը, խոսելով Մեծ անապատի սան Պողոս վարդապետի ծավալած լուսավորական գործունեության ու դրա համար Մելքիսեթ կաթողիկոսի կողմից նրա կրած հալածանքների մասին, գրում է, թե ինչպես Պողոսը հիասթափված դիմել է իր աշակերտներին՝ խորհուրդ հարցնելով, արհամարհել արդյոք հալածանքները և շարունակել իր գործունեությունը, թե պետք է տեղի տալ ու հեռանալ։ Վերջիններն նրան պատասխանել են. «Դու ինքնին տեսանես զխաւար անգիտութեան, թէ որպէս սփռեալ է ի վերայ ժողովրդեանս... պարտ է քեզ արիանալ և համբերել փորձութեան վասն օգտի ժողովրդեանն և քարոզել զքանն կենաց»[3]։

Դավրիժեցու ապրած ժամանակշրջանում «զքանն կենացը» լուսավորությունն էր, հոգևոր կյանքի զարթոնքը, վերանորոգչությունը։

Լեոն միանգամայն դեպուկ նկատում է այս առթիվ. «Գուցե այնքան առատությամբ թափվող դժբախտություններից ոչ մեկն այնքան ահռելի չէր, որքան այն, որ 1200 տարի գիր և դպրություն պահպանած մի ժողովուրդ դարձել էր անգրագետ։ Հինգերորդ դարի սկզբին հայ աշխարհը փրկվել էր կործանումից, ստեղծելով ազգային դասաւիարակություն։ Նույն ցեղային բնազդը խոսեց և XVII դարի սկզբին, ամենուրեք տարածված ավերակների մեջ»[4]։

Լեոն հպարտությամբ ընդգծում է նաև, թե «Քաղաքական ոչ մի դժբախտություն չէր կարողանում վերջնականապես սպանել հայ ժողովրդի ձգտումը դեպի լույս և առաջադիմություն։ Լինում էին ժամանակավոր ճգնաժամեր, նույնիսկ ահեղ աղետներ,... բայց նրանք կարող էին միայն աղճատել զարգացման բնական ընթացքը, դանդաղեցնել կամ շեղել, զարտուղի ճանապարհների վրա դնել։ Իսկանն այդ չէր, այլ այն, որ առաջխաղությունն ապրում էր ժողովրդի սրտի և խելքի մեջ և գործոն էր բոլոր հանգամանքներում։ Որքան և զարհուրելի լինեին ավերակները, բայց շինարարական ոգին կարողանում էր իր վճիտ ալիքները տանել նրանց տակով, որոնելով նոր և նոր ուղիներ»[5]։

Ուշ միջնադարի վերջին երկու դարերը անվանի պատմաբանի այդ եզրահանգման փայլուն ապացույցն են։ Հայի ստեղծագործական ոգին ու շինարարական տաղանդը անցյալում շատ անգամներ են կենդանություն տվել օտարների կողմից ավերված իր հայրենիքին, սակայն նշված երկու դարերում այդ տաղանդը ոչ միայն կենդանություն պիտի տար ամենուրեք տարածված ավերակներին, այլև պիտի վերակենդանացներ անհուն խավարում տառապող ժողովրդին, պիտի նոր ուղիներ որոներ դուրս բերելու նրան այդ թանձրացած խավարից, նորից վեր խոյացներ հայի ազատատենչ ոգորումները։ Եվ այդ տաղանդը, գործադրելով գերմարդկային ջանքեր, պատվով է կատարել պատմական իր դերը։

Ճակատագրի բերումով հայ ժողովրդի ստեղծագործական միտքը նշված դարերում շատ ավելի բեղմնավոր ու արգասավոր դրսևորվեց աշխարհով մեկ սփռված հայ գաղթավայրերում, քան բուն Հայաստանում։ Բնաշխարհում հայը իրավազուրկ էր ու աղքատ, գտնվում էր ֆիզիկական ոչնչացման մշտական վտանգի ներքո, բռնի ու վայրագ միջոցներով տեղահան էր արվում, քշվում հեռավոր երկրներ։ Չնայած կաշկանդվածությանը, նյութական և բարոյական հնարավորությունների ու միջոցների բացակայությանը, այնուամենայնիվ, հենց օտարության մեջ է, որ հայ ժողովրդի ստեղծագործ միտքը կարողացավ գտնել այդ ստրկական վիճակից դուրս գալու ելքն ու ուղիները։

Մտավոր զարթոնքի վաղ արշալույսին, երբ շահաբբասյան հրոսակները Հայաստանի տարածքում իրականացնում էին արևելքի բռնակալի՝

1 Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 522—523։

2 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 255։ Այսուհետև՝ Դավրիժեցի։

3 Նույն տեղում, էջ 272—273։

4 Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 273։

5 Նույն տեղում, էջ 209։

երկրի ամայացման ու հայաջնջման դաժան ու նենգ քաղաքականությունը, Արարատյան դաշտում, Արաքսի ջրերում, նորից վեր էր խոյացել հայ ժողովրդի ինքնապաշտպանության հուժկու բնազդը: Լեոյի խոսքերով ասած՝ «Շահ-Աբբասն ամայացնել ուզեց Արարատյան երկիրը: Իբրև մեծ և անգութ բռնակալ՝ նա կարող էր բնաջինջ անել հայ ազգաբնակությունն այդտեղ: Բայց սպանել մի ազգի պատմական բնազդը, սպանել նրա մեջ այն դարավոր եռանդը, որ պատմությունն ստեղծել է տալիս հայրենի հողի վրա, այդ արդեն դուրս էր նույնիսկ պարսից մեծ բռնակալի կարողությունից»[6]:

Պարսկական բարբարոսության բյուրավոր զոհերը մեծ բռնագաղթի ժամանակ, կարծեք, սթափեցրին ժամանակի մի շարք առաջավոր հայ մտածողների (Կիրակոս և Սարգիս եպիսկոպոսներին, Մովսես և Փիլիպպոս կաթողիկոսներին, Պողոս վարդապետին, «Մեծ Անապատի» սաներին): Նրանք սկսեցին մտածել իրենց ժողովրդի դառն ճակատագրի մասին և հանգեցին այն եզրակացության, որ հիմնական պատճառը ճասարակության մեջ տիրող քաոծ խավարն է: Հայ մտավոր զարթոնքի արշալույսի այդ անխոնջ մշակները համոզվեցին, որ ստեղծված խավարից դուրս գալու միակ փրկությունը հին և մոռացված անապատականության վերականգնումն է:

Անապատականները խրախուսում էին «արտաքին գիտությունների» և «ազատական արհեստների» ուսումնասիրությունն ու տարածումը: Այս կապակցությամբ Աշ. Հովհաննիսյանը դիպուկ նկատում է. «Սակայն ինչպես որ նոր կառուցվող եկեղեցու շենքը նվիրագործելու համար օգտագործվում էին հնի քարերն ու քանդակները, այնպես նաև յուրացվում էին իմացության աշխարհիկ աղբյուրները, հին գիտության ու գրականության գանձերը, ոչ թե նոր, աշխարհիկ գիտություն ու գրականություն ստեղծելու, այլ եկեղեցական խամրած գիտությունն ու գրականությունը վերակենդանացնելու համար: Վանական լուսավորության տարածողները բազմացնում էին Դավիթ Անհաղթի, Հովհաննես Որոտնեցու ու Գրիգոր Տաթևացու գրվածքները, հրապարակ հանում Սիմեոն Ջուղայեցու իմաստասիրական ձեռնարկները, մոռացության գրկից հանում Պրոկլի և Դիոնիսիոս Արեոպագացու գրքերը, «Հոգեաց գիրքը» և նման ուրիշները: Այս ամենով ընդարձակվում էր վանական լուսավորության շրջանը, արիստոտելյան կիսամատերիալիզմը, պլատոնական իդեալիզմը և նեոպլատոնական միստիցիզմը ծառայեցվում հայ եկեղեցու դավաբանական դիրքերի պաշտպանության, մոնոֆիզիտյան ընդհանուր հայացքների յուրացման կամ դրանց ուրույն վերամշակության համար»[7]:

Հայ զարթոնքի պատմագիր Դավրիժեցին նկարագրում է բացահայտ ու դաժան այն պայքարը, որ անապատականների դեմ XVII դարում ծավալել են խավարամիտ, ետադեմ հոգևորականությունը և այն տիտանական ջանքերը, որ թշնամական միջավայրում գործադրել են առաջինները և իվերջո հաղթանակել: Հոգևորականության՝ սևագլուխների հին, խավարամիտ սերունդը պարտվել է այդ պայքարում, տեղի է տվել նոր, առաջադեմ սերնդին:

Հենց անապատականության վերականգնմամբ էլ հիմք դրվեց հայ մտավոր կյանքի վերակենդանության շարժմանը, որի հետագա զարգացումը պայմանավորեց զարթոնքը նաև պատմագրության բնագավառում: Այդ շրջանի պատմագրական ժառանգությունը իբրև հավաստի սկզբնաղբյուր չափազանց արժեքավոր է Հայաստանի, Մերձավոր արևելքի ու Անդրկովկասի երկրների ու ժողովուրդների XVI—XVIII դարերի պատմության ուսումնասիրության և ընդհանրապես արևելագիտության համար:

* * *

Հայաստանի ուշ միջնադարի պատմությունը, փաստորեն, ինչպես նրա տարածքում տեղի ունեցած օտար ցեղերի ու ժողովուրդների, (որոնց տիրապետության տակ էր գտնվում ինքը), ռազմաքաղաքական չափազանց հարուստ իրադարձությունների, այնպես և հայ գաղթավայրերի ու պանդխտության տարեգրությունն է: Ընդ որում՝ վերջինս ևս Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունն է այնչափով, որչափով առնչվում է այդ իրադարձությունների ու երևույթների հետ. և պատահական չէ, որ այդ պատմաշրջանի հայ պատմագիրների երկերի մեջ գերիշխող թեմատիկան կազմում են պատերազմները, ասպատակությունները, բնակչության զանգվածային կոտորածները, գերեվարումը, կողոպուտը, կեղեքումը, ավերումը, ամայացումը, բռնագաղթը, արտագաղթը, ապստամբությունները, ազգային ու կրոնական հալածանքները, նահատակությունները և այլն:

Հայաստանի տարածքն իրենից ներկայացրել է մի տեսակ բեմահարթակ, որի վրա իբրև դերակատարներ իրենց կործանարար ու ողբերգա-

6 Նույն տեղում, էջ 272:

7 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 165—166:

կան սրընթաց գործողություններով և փոխիփոխ հաջողություններով ու անհաջողություններով հանդես են եկել թամուրյանները, կարա-կոյունլու, ակ-կոյունլու և հյուսիս կովկասյան ցեղերը, ղզլբաշներն ու օսմանցիները, ջալալիներն ու քրդերը։

* * *

Հայ ժողովրդի մի զգալի մասը ֆիզիկական գոյությունը պահպանելու միակ ելքը օտար երկնակամարների տակ է փնտրել։ Ազգային ու սոցիալական այդ մեծ աղետը, որ սկսվել էր դարեր առաջ, անասելի չափերի էր հասել ուշ միջնադարում։ Հայությունը սփռվել էր աշխարհով մեկ՝ Հնդկաստանից մինչև Իսպանիա, Պորտուգալիա։

Հակոբ Բաթուկենցն իր ողբում Թոխատի ու նրա շրջակայքի հայ բնակչության մասին ջալալիների ասպատակությունների կապակցությամբ գրում է.

«Եւ բնակիչք միանգամայն
Եղեն ամենեն ցիր և ցան.
Յօտար երկիր պանդխտեցան՝
Իֆրանկստան և Պարսկաստան»[8]։

Առաքել Դավրիժեցին էլ ցավով գրում է. «ամենայն ազգն Հայոց ելեալ վտարանդիք եղեն յիւրաքանչիւր տեղեաց, ի հայրենի բնակութեանց և յաշխարհաց և տարադէմ գնացեալ ընդդէմ երեսաց՝ ցիր և ցան եղեալ սփռեցան ընդ ամենայն աշխարհ»[9]։ Սակայն օտար երկրակամարների տակ էլ բազմաշարշար հայը պիտի ճաշակեր պանդխտության սարսափները, մարդկային ու ազգային արժանապատվության ստորացումը, տարրական իրավունքների ոտնահարումը։

Ժամանակակից Առաքել Դավրիժեցին Պարսկաստան քշված հայերի մասին գրում է. «Եւ ազգ և ժողովուրդ մեր խլեալք ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց... եղեն վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլասեռ և այլալեզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մարմնոյ։ Որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուազին, ոմանք մահուամբ և կորստեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութեամբ...»[10]։

8 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 609։

9 Դավրիժեցի, էջ 147։

10 Նույն տեղում, էջ 54։

Բազմաթիվ երկրներում XV դարից սկի նման սկսել են աճել հայ գաղթավայրերը, որոնց պատմությունը ուշ միջնադարի հայ պատմագիրներից շատերի հիմնական թեմաներից մեկն է եղել։ Եթե Դավրիժեցին և Խաչատուր Ջուղայեցին տվել են Պարսկաստանի հայ գաղթավայրերի կյանքի դառն պատմությունը, ցույց են տվել, թե իրենց ապրած օրերում ինչպիսի թշվառ վիճակ է տիրել այնտեղ, ապա Դարանաղցին և Երեմիա Քյոմուրճյանը տվել են Թուրքիայի հայ գաղթավայրերի օրհասական ու երերուն կյանքի պատմությունը։

Երբեմնի հարուստ, փարթամ ու մեծ հայ գաղթավայր Նոր Ջուղայի մասին 1787 թ. Խաչատուր Ջուղայեցին գրել է. «Իսկ յարդիս հաղիւ գտանի ի Նոր Ջուղայս՝ երեք հարիւր տունք բնակիչք ի հայոց ազգէն. իսկ շատքն ի միջի մերում բնակելոցն՝ են ի յազգէն պարսից, որք օր ըստ օրէ գան ի քաղաքէն և սեփհականէն զկալուածս բնակութեան մերոյ և ի վերայ մեր իսկ բռնացեալ կոփահարեն»[11]։

Գաղթականի կյանքը հայերի մի մասին զրկել է իր անհատականությունից, օտարացրել է հայրենիքից։ Այդ կապակցությամբ Հ. Այտընյանը գրում է. «Բայց կերպարանափոխութեան բուն մեծ մղումը պիտի սկսէր բնականօրէն այն հզոր հարուածեն, զորն որ ազգն ունեցաւ՝ երբ քանի մը հարիւր տարուան միջոցի մէջ մէյ մէկ զանգուած բուն մարմնէն անջատած՝ վայրավատին ցիր և ցան եղաւ։ Այս մեծ դարագլուխն էր՝ Գաղթականութիւնք։ Գաղթականի մը համար՝ նոր երկիր, նոր կլիմայ, նորանոր սովորութիւնք, անսովոր ընտանեկցութիւնք, օտարալեզու ազգաց մէջ ընկղմել, անոնցմէ կախումն, իւր սեպհական աշխարհին անհաղորդ մնալ, և այլն, այս ամենայն այնպիսի օտար և օտարացուցիչ տարերք են, որ հարկաւ ամեն բանի, և մանաւանդ լեզուի, բոլորովին նոր կերպարանք կուտան»[12]։

Ուշ միջնադարում հայ ժողովրդի համար, ինչպես բուն Հայաստանում այնպես էլ, հատկապես, գաղթավայրերում, պակաս չարիք չէր լայն չափերով ծավալված միարարական (ունիթորական) շարժումը (մեր աղբյուրներում՝ «ախթարմայական»)։ Այդ չարիքը ջլատում, տրոհում էր ժողովրդի ուժերը, ոտնահարում հայության համընդհանուր շահերը, նպաստում նրա մի մասի ուծացման ընթացքի խորացմանը։ Ահա թե ինչու այդ չարիքի դեմ պայքարի պատմությունը նույնպես ուշ միջնադարի պատմագիրներից շատերի հիմնական թեմաներից մեկն է եղել։

11 Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 102—103։

12 Հ. Այտընեան, Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 231—232։

Նրանք բոլորն էլ ատելությամբ են գրել այդ շարժման հասցրած քայքայիչ ու դառն հետևանքների մասին, բացահայտել են պապականության հայաջինջ քաղաքականության նենգ ու ստոր էությունը, անարգանքի սյունին գամել դրանց ջատագովներին։

Այդ շարժման մասին չափազանց զայրույթով է գրում հատկապես XVII դարի առաջին կեսի պատմագիր Գրիգոր Դարանաղցին[13]։ (Այդ մասին հանգամանորեն կխոսվի նրան նվիրված բաժնում)։

Կաթոլիկություն ընդունած, հատկապես հայ հոգևորականության պառակտիչ գործունեությունը ստիպել է հայ եկեղեցու նախանձախնդիր կաթողիկոս Սիմեոն Երևանցուն խիստ հալածանքներ գործադրել նրանց դեմ։ Նա հայ կաթոլիկներին— «ախթարմա»-ներին «հոտեցուցիչք երկրին»[14] է համարում։

* * *

XVII—XVIII դարերի հայ պատմագիրները խորապես գիտակցել են հայ հասարակական կյանքում տեղի ունեցող նոր երևույթների խաղացած դերն ու նշանակությունը, որոնք և պայմանավորել են նրա զարթոնքն ու զարգացումը:

Նրանք իրենց երկերում զգալի տեղ են տվել հայ առևտրավաշխառուական կապիտալի վերնախավի ծավալած գործունեությանը Հայաստանում, Պարսկաստանում, Թուրքիայում և մի շարք գաղթավայրերում։ Բազմաթիվ կոնկրետ փաստերով համակողմանիորեն ցույց են տվել նրա որոշիչ ու կարևոր դերը հայ քաղաքական-հասարակական, սոցիալ-տընտեսական, մշակութային, հոգևոր ու շինարարական կյանքում, հայ կյանքի զարթոնքում։

Ի դեպ, այդ խավի գործունեության մեջ տեսել են լուսավոր այն ծալքերը, որոնք հող են նախապատրաստել ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման համար և մեծ հույսեր են կապել այդ գործունեության հետ ու մխիթարվել են դրանով։

Աբրահամ Բ կաթողիկոսի մահից հետո Երևանի խանը, երբ կանչել է Աբրահամ Կրետացուն ու պահանջել, որ նա ստանձնի կաթողիկոսությունը, վերջինս նրան ասել է. «Մեր նախնի սովորությունն այն է, որ մանսար անեն (հաշվի առնեն— Լ. Բ.) Սպահան և Ստամպօլ, որ այն Բ քաղաքացիք միաբանին, և զմի ոմն ընտրեն և կացուցանեն։ Ապա թե

13 Դարանաղցի, ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 262—263։

14 «Ջամբռ», Վաղարշապատ, 1875, էջ 42։

ոչ՝ սուրբ Աթոռին և կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի, գիր ևս ունիմք այսպէս հաստատեալ բազմաց գրով և կնքով»[15]։

Պատմագիր կաթողիկոսն, անշուշտ, նկատի ունի այդ քաղաքների խոջաներին ու դովլաթովներին։

Հայ առևտրական կապիտալի զարգացումը Հայաստանում ու Անդրկովկասում, ինչպես և գաղթավայրերում հիմք էր դառնում ոչ միայն երկրի տնտեսական զարթոնքին ու վերելքին, այլև նպաստում էր նրա քաղաքական-հասարակական ու մշակութային կյանքի վերակենդանացմանը։

Դրա արդասիքն էր ուշ միջնադարի հայ մշակութային կյանքում այնպիսի խոշոր իրադարձության սկզբնավորումն ու ծաղկումը, ինչպիսին տպագրության գործն էր։ Պատերազմների թատերաբեմ դարձած Հայաստանում, ուր տիրում էր մղձավանջային խավարը, այդ ժամանակ բացառված էր տպագրության գործի կազմակերպումը։ Այդ պատճառով հայ տպագիր գրքի ծննդավայրը հանդիսացավ ոչ թե մայր հայրենիքը, այլ Վենետիկը, նրա հայկական համայնքը։ Հայ տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտի ջանքերով 1512 թ. լույս տեսավ հայ առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք» խորագրով, իսկ 1669 թ. Ամստերդամում հրատարակվեց առաջին պատմական երկը՝ Առաքել Դավրիժեցու «Պատմությունը»։

Աղատագրական շարժումների արշալույսին հայ առաջավոր աշխարհիկ ու հոգևոր գործիչները քաջ գիտակցել են տպագիր գրքի դերն ու նշանակությունը ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման, լուսավորության տարածման ու արմատավորման, անցյալի պատմական հուշարձանների հրատարակության միջոցով դրանք սերունդների սեփականությունը դարձնելու ու նրանց հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում։

Թովմա Վանանդեցին իր ուղերձներից մեկում Բելգիայից գրել է. «Այժմ, մնում է կրթել մեր այն թշվառ քրիստոնյաներին, որոնք դտնվում են խավարի մեջ և ապրում են բռնակալական լծի տակ։ Այս նպատակի համար պետք է, որ իմ հայրենիքում այդպիսի մի դպրոց բացվի (լատինահայկական Լ. Բ.) և տպարանս էլ այնտեղ փոխադրվի...»[16]։

Աշ. Հովհաննիսյանը միանգամայն ճիշտ նշում է, որ «Հայաստանի պատմության և աշխարհագրության նվիրված գրքերի և սրանց թվում

15 «Աբրահամ Կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն...», Վաղարշապատ, 1870, էջ 9։

16 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. 2, էջ 169։

Դավրիժեցու պատմության կամ ավելի ուշ Խորենացու գրքի ու «Համատարած աշխարհացույցի» պես գործի տպագրության նպատակն էր կրթել և դաստիարակել հայրենասիրական ոգով հայ այն երիտասարդներին ու ընթերցողներին, որոնք, ինչպես ասում էր Թովմա Վանանդեցին, «գտնըվում են խավարի մեջ և ապրում բռնակալական լծի տակ»։ Մի հայտնի չափով տպագիր գիրքը պիտի դիներ ընթերցողին մտավոր այն միջոցներով, որոնք անհրաժեշտ էին նրանց գիտակցությունը կաշկանդող խավարը ցրելու և նրանց ազատությունը ճնշող բռնակալության լուծը խորտակելու համար»[17]։

Պատահական չէ, որ ժամանակակից պատմագիրներն ու ժամանակագիրներն իրենց երկերում զգալի տեղ են տվել տպագրության գործի կազմակերպման պատմությանը և հպարտությամբ գովերգել են այդ գործի նախաձեռնողներին, կազմակերպիչներին՝ հայ մշակույթի անխոնջ մշակներին։

* * *

Հայաստանի տնտեսական, հասարակական-քաղաքական, հոգևոր ու մշակութային կյանքի վերելքն ու զարգացումը նախապատրաստել են նաև հայ ազատագրական շարժումների զարթոնքը, որը և բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա ճակատագրում։

Մինչև XVIII դարի սկիզբը հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական վերնախավերը ավանդաբար Հայաստանի ազատագրումը կապում էին արևմտաեվրոպական կաթոլիկ պետությունների ու պապականության հետ, ջանքեր չէին խնայում նրանց հետ քաղաքական-դավանաբանական, դիվանագիտական ապարդյուն բանավարություններ վարելու համար։ Սակայն, Աշ. Հովհաննիսյանի դիպուկ խոսքերով ասած՝ «Պատրանքի ոսկե շղթայով գամվելով պապական եկեղեցու կամ եվրոպական պետությունների սին խոստումներին՝ հայ գործիչները ի վիճակի չեղան փշրելու հայ ժողովրդին կաշկանդող քաղաքական ստրկության շղթաները»[18]։

Հայ ազատագրական շարժման զարթոնքը, որն սկսվել էր XVI դարի կեսերից և հետագայում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գործադրած եռանդուն ջանքերով ավելի էր խորացել, նույնպես ընթացավ այդ հին

[17] Նույն տեղում, էջ 171։

[18] Նույն տեղում, էջ 631։

հունով և հասկանալի է, նրա ակնկալություններն էլ արդյունք չտվեցին և չէին կարող տալ։

Հայաստանի և հայ ժողովրդի ազատագրման գործը հին փակուղուց՝ արևմտաեվրոպական կողմնորոշումից դուրս բերվեց ժամանակի ականավոր քաղաքական— դիվանագիտական գործիչ մեծ հայրենասեր Իսրայել Օրու գործադրած տիտանական ջանքերով։ Նա առաջինն էր, որ իր Ռուսաստանյան կողմնորոշումով վերանայեց և ճշտեց հայ ազատագրական շարժման քաղաքական ուղղությունը և բացառապես Ռուսաստանի հետ կապեց իր հայրենիքի ազատագրման հեռանկարը։

20 տարի շարունակ արևմտաեվրոպական երկրներում դեգերելուց, արքունիքների դռները ապարդյուն բախելուց հետո, Օրու քաղաքական կողմնորոշման մեջ կատարված այդ վճռական շրջադարձով, Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման գործը դրվեց ռեալ ուղու վրա, հայ ազատագրական շարժումը թևակոխեց իր զարգացման նոր, որակապես միանգամայն տարբեր փուլը։ Հայ ժողովրդի ազատագրման գործի այդ ռահվիրան իր նպատակադրումները չսահմանափակեց հայերի ազատագրման մեկուսացած հեռանկարով, նա ջանքեր չխնայեց ստեղծելու Ռուսաստանի գլխավորությամբ անդրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների ու ադրբեջանցիների սերտ զինական համագործակցություն՝ ուղղված պարսկական ու թուրքական բռնակալությունների դեմ։

Օրուց հետո, 100 տարուց ավելի հայ ազատագրական շարժման գործիչներն ընթացան նրա գծած միակ ճիշտ ու գործնական ուղիով, որի շնորհիվ XIX դարի երկրորդ տասնամյակի վերջերին (1828 թ.) արևելահայությունը ռուսական զենքի միջոցով ազատագրվեց պարսկական ստրկությունից և իր բախտը մեկընդմիշտ կապեց ռուս ժողովրդի հետ։

Քաղաքական կողմնորոշման մեջ Օրու կատարած այդ ճակատագրական նշանակություն ունեցող լիակատար հեղաբեկումը XVIII դարի հայ քաղաքական կյանքում ամենախոշոր իրադարձությունն էր, որը և պայմանավորել է դարի հետագա ռազմաքաղաքական բուռն իրողությունների ընթացքը։ Այդ իրողություններն իրենց անդրադարձումն են գտել ժամանակակից հայ պատմագիրների ու ժամանակագիրների երկերում։ Հայ ազատագրական շարժումների պատմության պրոբլեմը դարձել է նրանց աշխատությունների հիմնական նյութը, դրա հետ սերտորեն առնչված՝ նրանք տվել են չափազանց հարուստ ու արժեքավոր տեղեկություններ հայ-ռուսական, հայ-վրացական, հայ-ադրբեջանական ժողովուրդների փոխհարաբերությունների, նրանց զինական համագործակցության ու օտար բռնատիրությունների դեմ համատեղ պայքարի մասին։ Նրանք

հայրենասիրական բոցաշունչ ասփոդումներով քարոզել են հայ ժողովրդի ու մյուս ժողովուրդների միասնության ու միաբանության վեհ գաղափարը, ամեն կերպ աշխատել են այն արմատավորել իրենց միջավայրում:

«Եւ յաւարտ բանիս ասեմք,— կարդում ենք Դավիթ-Բեկին նվիրված «Ընտիր պատմության» վերջում,— թե չար է արդարև և դժնդակ չար անմիաբանութիւնն ընկերաց ի մէջ հասարակութեան և նախադասելն զբարին, և զօգուտն իւրոյ անձին՝ քան զբարին հասարակութեան, և յորում հասարակութեան և գտանիցի չարս այս, առժամայն եղծէ, ապականէ, և ընդունայնացուցանէ զհասարակութիւնն զայն, թե՛ տուն իցէ, թե՛ քաղաք, թե՛ ազգ իցէ, և թե՛ անպարտելի թագաւորութիւն մեծ, զի՞նչ մեծագոյն քան զկայսերութիւնն Մակեդոնացւոց, և Հռոմայեցւոց, և ընդէր կորեան և կործանեցան, վասն զի, պակասեցաւ ի նոցանէ միաբանութիւնն և սէրն հասարակութեան, որով և զօրացեալ իսկ էին»[19]:

XVIII դարի հայ պատմագիրներից շատերը ոչ միայն դարի ռազմաքաղաքական բուռն իրադարձությունների կենդանի վկաներն են, այլև նրանց մի մասը դրանց ակտիվ մասնակիցներն ու գործիչներն են եղել, որոնք և դարերին ու սերունդներին են թողել այդ իրադարձություններին նվիրված կենդանի հուշարձաններ:

Հալիձորի՝ թուրքերի կողմից պաշարման ժամանակ Մխիթար սպարապետը և Տեր-Ավետիսը դիմելով զորքերին, ասել են. «Քաջացարուք, մի երկնչիք, ելէք զհետ մեր, եթէ հասեալ իցէ վախճան մեր քաջութեամբ մեռցուք, զի լաւ լիցի մեզ արիութեամբ արտաքոյ պարսպաց մեռանիլ քան աստէն առաջի աչաց մերոց տեսանել զմահ ընտանեաց և բարեկամաց մերոց, և զայլ դժնդակութիւնս»[20]: Հերոսական ինքնապաշտպանության այս վկայությունը պատկանում է Դավիթ Բեկի հրամանատարներից մեկին՝ Ստեփանոս Շահումյանին: Այս խոսքերը մի պահ տանում են ընթերցողին Ավարայրի դաշտը, հիշեցնում Ճակատամարտից առաջ Վարդան Մամիկոնյանի մարտակոչը զորքին:

Նկարագրելով վրաց-հայկական բանակների հանդիպումը Գանձակի մոտ, XVIII դարի հայ ազատագրական շարժման ականավոր կազմակերպիչ, Աղվանքի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանցը հպարտությամբ ու անհուն գոհունակությամբ գրում է. «Եւ այսպէս մեծաւ շքով հանդիպիլ միմեանց երկուց կողմանց զօրացն, և իբրև զօրէն պատերազմի ռազմ կարգեալ ճակատ առ ճակատ, և քաջամարտիկ մանկունք մերոյս դիմաց յառաջ խաղացեալ ճախր առեալ քաջընթաց երիվարօք, և զինակազմ զրահիւք պարէին յանդիման ճակատուն. և ի ձայնէ հրացանացն որոտայր և թընդայր վայրն այն, և փոշեխառն ծուխ նորին, իբրև զկայծակնափայլ ամպ արգել ճառագայթս արեգականն մինչ զի զմիմեանս հազիւ տեսանեաք: Եւ այսպիսի խրախութեամբ հասեալ իջաք մերձ առ բանակի նոցին, զոր տեսեալ Վախտանկին այսպիսի յառաջադիմութիւն մերայնոցս ցնծացաւ ի հոգի և մարմին իւր»: Այնուհետև Եսային գրում է, թե Վախտանգը «յորդորական բանիւ յուսադրեաց, և զորացոյց ասելով՝ «այսուհետև զօրասջիք և քաջ լերուք իբրև յորդիս զօրութեան և յուստեքէ և յումեքէ մի երկնչիքցիք զի ահա հասեալ է ժամանակ փրկութեան քրիստոնէից»[21]:

Վախտանգ թագավորի այս խոսքերն էլ ուղղված վրաց-հայ զորքերին, նույնպես հիշեցնում են Եղիշեի հերոս Վարդանի մարտակոչը: Ճիշտ է, Եսայու և Եղիշեի ապրած ժամանակները միանգամայն տարբեր էին, սակայն երկու հայրենասերների նպատակները նույնն էին՝ տեսնել հայոց պետականության վերականգնումը, ոգեշնչել ժամանակակիցներին վերջնական նպատակի մոտալուտ հաղթանակի հավատով:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որի ամենանշանավոր գործն այն էր, որ շարունակեց ու խորացրեց իր նախորդի՝ Հակոբ Ջուղայեցու սկսած հարաբերությունները ռուսական արքունիքի հետ, գոհունակությամբ գրում է, որ Եկատերինա երկրորդը 1768 թ. «արար զրոլոր երկիրն զայն հաստատապէս վիճակ Տէրունի սրբոյ Աթոռոյս՝ արքունական հրամանագրով... Եւ յայնմ հետէ եղև ընտանութիւն և մեծ սէր թագաւորին ռուսաց և նախարարաց նորին՝ և եպիսկոպոսացն առ սուրբ Աթոռս, և առ յաղագս մեր որպէս տեսանես զգրեանսն նոցին»[22]: Երևանցու այս վկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ նա Եկատերինային դիմել է ոչ միայն Ռուսաստանի հայկական համայնքներից առանձին թեմ ստեղծելու հարցով, այլև էջմիածնի և հայերի նկատմամբ ընդհանրապես, հովանավորություն ստանալու խնդրանքով:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, հավանաբար, այդ հովանավորության համար հատուկ մաղթանք էր գրել ռուսաց ցարերի և նրանց տան «արևաշատության» համար և այդ մաղթանքը կատարվում էր ռուսական պետության ենթակա բոլոր հայկական եկեղեցիներում մինչև 1917 թ.:

19 «Ընտիր պատմութիւն», Վաղարշապատ, 1871, էջ 73:
20 Նույն տեղում, էջ 49—50:

21 Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն..., Շուշի, 1839, էջ 59—60:
22 «Ջամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 40:

2033

* * *

Ուշ միջնադարի հայ պատմագիրների, ժամանակագիրների, օրագրողների թողած պատմագրական ժառանգության ամենահիմնական առանձնահատկությունը, համեմատած նախորդ, վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանների պատմագրության հետ, այն է, որ նրանում իր լայն անդրադարձումն է գտել ժողովրդի պատմությունը, նրա կյանքը, կրած արհավիրքներն ու սարսափները, բռնագաղթերը, պանդխտությունը, նիստ ու կացը, ավանդություններն ու սովորությունները, ֆիզիկական գոյության պահպանման համար անասելի մաքառումները, կրած տնտեսական, կրոնական ու ազգային հալածանքները, իրավազրկությունը, հասարակախավերի հակամարտությունները, դրանց ծանր ու քայքայիչ հետևանքները, ժողովրդի մի մասի՝ հատկապես վերնախավերի ապաազգայնացումը։ Նրանք արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև օտար բռնատիրությունների վարած ներքին ու արտաքին քաղաքականության, հայ հասարակախավերում և պարսկական ու թուրքական արքունիքներում, բարձրաստիճան պաշտոնեության շրջաններում արմատացած արատավոր բարքերի, կամայականությունների, չարաշահումների ու դրանց՝ ժողովրդին հասցրած չարիքների և շատ այլ երևույթների մասին։

* * *

Ուշ միջնադարի հայ պատմագրությունն ապրել է երկու փուլ՝ ամլության (XV—XVI դարեր) և զարթոնքի ու հետագա զարգացման (XVII—XVIII դարեր)։ Առաջին փուլի առաջացման նախադրյալներն ու գործոնները եղել են հայ պետականության անկումը բուն Հայաստանում ու Կիլիկիայում, խոշոր և միջին ֆեոդալական իշխանությունների ու տների զգալի մասի ոչնչացումը, գերիշխանության ձգտող մահմեդական բարբարոս ցեղերի ու ժողովուրդների հարատևող պատերազմներն ու տիրապետության հաստատումը, զարգացած ֆեոդալական հարաբերությունների փոխարինումը քոչվորական կիսաֆեոդալական, կիսանահապետական հարաբերություններով ու տնտեսաձևով՝ «քոչվորական ֆեոդալիզմով», տնտեսական, հոգևոր ու մշակութային կյանքի անկումը և ամենուր տիրող թանձրամած խավարը։

Երկրորդ փուլի առաջացման ու զարգացման նախադրյալներն ու գործոնները հանդիսացել են 1639 թ. թուրք-պարսկական հաշտության պայմանագրի կնքումից հետո երկրում ստեղծված համեմատաբար խաղաղ վիճակը, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի վերակենդանացման համար, որոշ առումով, ստեղծված նպաստավոր միջավայրը թե՛ բուն Հայաստանում և թե՛ գաղթավայրերում, անապատական շարժման ծավալումը, առևտրավաշխառուական կապիտալի աշխուժացումն ու հզորացումը թե՛ հայրենիքում և թե՛ Պարսկաստանում ու Թուրքիայում, նրա շփումները արևմտաեվրոպական երկրների հետ, գաղթավայրերի տնտեսական ու մշակութային սերտ կապերը բնաշխարհի հետ, տպագիր գրքի հրապարակ գալը, հայ մտքի վերակենդանացումը, ազատագրական շարժումների զարթոնքը և այլն։

Սույն մենագրության մեջ փորձ է արված համակողմանի ու ամբողջական ձևով վեր հանել Թովմա Մեծոփեցու, Գրիգոր Դարանաղցու, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Քանաքեռցու, Զաքարիա Ագուլեցու, Երեմիա Քյոմուրճյանի, Աբրահամ Կրետացու, Խաչատուր Ջուղայեցու, Սիմեոն Երևանցու, «Ընտիր պատմություն Դավիթ Բեկի» (Ստեփանոս Շահումյան), Եսայի Հասան Ջալալյանցի, Աբրահամ Երևանցու պատմագիտական, հասարակական-քաղաքական և գաղափարական հայացքները, ինչպես նաև նրանց երկերի աղբյուրագիտական արժեքները։

Աշխատության մեջ չենք անդրադարձել ականավոր պատմաբան Մ. Չամչյանի պատմագրական ժառանգությանը, նկատի ունենալով երկու հանգամանք, նախ, որ մենք նրան պատմաբան ենք համարում և ոչ պատմագիր, և երկրորդ՝ որ նրա այդ ժառանգության ուսումնասիրությանը նվիրված առանձին աշխատություն է պատրաստվում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում։

Հայաստանի XIV—XVIII դարերի պատմագիրների մասին համառոտ ու ընդհանուր գծերով տրված են Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» 2-րդ հատորում, Լեոյի «Հայոց պատմության» 3-րդ հատորում, Ա. Առաքելյանի «Հայ մտավոր մշակույթի զարգացման պատմության» 2-րդ և 3-րդ հատորներում, Երևանի պետական համալսարանի լույս ընծայած «Հայ ժողովրդի պատմության» 2-րդ հատորում, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» 4-րդ հատորում։ Որոշ պատմագիրների հասարակական— քաղաքական գործունեության և աշխարհայացքային հարցերը հանգամանորեն վերլուծված են Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» 2-րդ հատորում։ Առանձին պատմագիրներին նվիրված աշխատությունների մասին խոսվում է շարադրանքում և տրված է աշխատության վերջում զետեղված համառոտ մատենագիտության մեջ։

Մենագրության բնույթով է թելադրված այն, որ մեր առաջադրած

հարցադրումներն ու դրույթները հիմնավորելու համար մեջբերումներ ենք արել, առանձին դեպքերում ընդարձակ, պատմագիրների երկերի բնագրերից՝ առանց աշխարհաբարի թարգմանելու կամ բոլոր դեպքերում օգտագործված նյութերը հղումներով փոխարինելու։ Ինչպես միանգամայն ճիշտ նշում է ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը,— «այլապես վարվելով՝ թուլացրած կլինեինք մեր արգումենտների գիտական կշիռը և ընթերցողին զրկած՝ մեր վկայակոչումները ստուգելու դյուրությունից»[23]։

Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության ուսումնասիրությանը նվիրված մեր այս երրորդ գրքում էլ, ինչպես նախորդ երկուսում, աշխատել ենք որոշել XIV—XVIII դարերի հայ պատմագիրների, ժամանակագիրների և օրագրողների տեղն ու դերը, ինչպես Հայաստանի, այնպես և Անդրկովկասի ու Մերձավոր արևելքի մի շարք երկրների նշված դարերի պատմության լուսաբանման գործում և ընդհանրապես այն ավանդը, որ նրանք մտցրել են այդ դարերի արևելագիտության բնագավառում։

23 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. 1, Երևան, 1957, էջ 9։

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ

XV դարի հայ պատմագրության միակ ներկայացուցիչը նշանավոր մատենագիր, եկեղեցական գործիչ, վարդապետ և բարձունապետ Թովմա Մեծոփեցին է։

Մեսրոպ Մաշտոցից հետո Թովման առաջին հայ մատենագիրն է, որ ունեցել է կենսագիր։ Նրա երախտապարտ աշակերտներից Կիրակոս անունով մեկը գրել է նրա կենսագրությունը, և այն մեզ է հասել «Պատմութիւն մեծի բարձունապետին Թումայի, զոր արարեալ է Կիրակոսի բանասէր Վարդապետի» խորագրով[1]։ Ճիշտ է, Թովման էլ Դրասխանակերտցու և Ստ. Օրբելյանի նման, տալով իր ապրած ժամանակաշրջանի պատմությունը, միաժամանակ գրել է և իր կենսագրությունը, սակայն Կիրակոս կենսագիրը շատ մանրամասնորեն լրացնում ու ավելի ամբողջական է դարձնում այն և հնարավորություն է տալիս լրիվ ու ստույգ պատկերացում կազմելու այդ նշանավոր գործչի ծավալած գիտամանկավարժական ու հոգևոր-հասարակական բեղուն գործունեության մասին։

Թովմա Մեծոփեցին հարուստ ու փոթորկալից կենսագրություն է ունեցել։ Գ. Հովսեփյանը Թովմայի կենսագրությանը նվիրած իր աշխատության մեջ միանգամայն ճիշտ նկատում է, որ «ԺԴ և ԺԵ դարերի, Հայաստանի այս թշուառութեան շրջանի, հայ վարդապետների մեջ խորին յարգանաց արժանի դեմքեր ունինք՝ ուսումնասիրութեան, անձնասիրութեան ու տոկունութեան հոգվով լցուած։ Այս հոգին է, որ հայ եկեղեցու և ժողովրդի մէջ գրի ու գրականութեան կրակն անշէջ պահեց, որքան և թշուառութեան երեսից մոխրով ծածկուած։ Այսպիսի վարդապետներից մեկն էր Հովհաննէս Մեծոփեցին»[2]։

Մենք կավելացնեինք՝ և Թովմա Մեծոփեցին։

Թովման ծնվել է Վասպուրականի Քաջբերունյաց գավառի Աղի կամ Աղիովիտ գյուղաքաղաքում 1377/78 թ. «ի մեծ ստհմէ. յազնուա-

1 Տե՛ս Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ 1—13։

2 Նույն տեղում, էջ ԺԱ։

կան ազգէ»[3]։ Ըստ կենսագրի, մահացել է 1446 թ.[4]։ Սկզբնական կրթությունը ստացել է, ինչպես ինքն ու կենսագիրն են վկայում, Մեծոփա վանքում Հովհաննես Մեծոփեցու մոտ, այնուհետև ուսումը շարունակել է Սուխարաի կամ Խարաբաստայի վանքում՝ Սարգիս և Վարդան վարդապետների մոտ[5]։

Մեծոփա վանքում ավարտելով իր ուսումնառությունը, Թովման 1406/7 թ. ուսման մեջ կատարելագործվելու նպատակով գնացել է Տաթև ժամանակի հռչակավոր ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու մոտ։ Թովմայի հիշատակարաններից մեկում՝ գրված 1407 թ., կարդում ենք «և այլ վեցեքեան եղբարցս, որք եկեալ եմք տարաշխարհիկ ի գաւառէ Քաջբերունոյ վասն ուսման օգտի, և ոչ դիպեցաւ մեզ որպէս կամք մեր էր, այլ պանդխտութեամբ կացաք ի միասին ժամանակս ինչ»[6]։ Թովմայի և նրա ընկերների կամքն է եղել՝ երկար ժամանակ մնալ Տաթևում «առ ոտս մեծ վարժապետի, քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի արթուն անուն Գրիգորի՝... արգասաւորի, որ իբր զարեգակն պայծառ փայլէ ի մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ և լուսաւորէ իմաստութեամբ և գիտութեամբ առհասարակ զամենեսեան՝ զմերձաւորս և զհեռաւորս, և կարկէ զբերանս երկաբնակ հերձուածողաց...»[7]։ Երկու տարի է տևում Թովմայի ուսումնառությունը Տաթևում։ Հանգամանքների բերումով Տաթևացին ստիպված 1409 թ. իր աշակերտների հետ, որոնց թվում և Թովման, գնում է Մեծոփա վանք, մոտ մի տարի մնում է այնտեղ, շարունակում իր մանկավարժական գործունեությունը, հետո տեղափոխվում է Արարատյան երկիրը։ Այս բոլորի մասին մեզ հայտնում է Թովման։ 1410 թ. գրած հիշատակարանում նա նորից մեծարում է իր ուսուցչին՝ «մանաւանդ եռամեծին Գրիգորի... որ ի սոյն և ի սմին ժամանակի փայլէր ջահն լուսոյ և արուսեակն մեծապայծառ ի նսեմ և ի մութն գիշերիս, և կամ թէ իբր ճիւռ ի մէջ որկուղաց ի գաւառին Սիւնեաց, ուստի և համբաւ սորա տարածեալ առ ամենեքումբք։ Ընթանային ամենեքեան և գային, լուսաւորէին հոգով և մտաւք ի քաղցրաբան վարդապետութեանց սորա, զի առաքելանման բղխէր զշնորհս հոգոյն աստուծոյ, և նա թեքեալ շարժէր ղլեզու նորա առ ի վարդապետել զբանն ճշմարտութեան։ Ընդ

3 Կիրակոս, տե՛ս Գ. Հովսեփյանի նշվ. աշխ., էջ 6։

4 Նույն տեղում, էջ 11։

5 Նույն տեղում, էջ 7։

6 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա., կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 78։ Այսուհետև՝ Հիշատակարաններ։

7 Նույն տեղում։

որս և ես տկար հոգով և ցանկանալս գնացաք ի լուր նորա... և կացաք առ ոտս նմա՝ ամս Բ(2)՝ խնամածութեամբ և սիրով նորին»[8]։

Այդ գրելուց հետո, սրտի անհուն կսկիծով հայտնում է, որ Տաթևացուց բաժանվելուց 36 օր հետո լուր են ստացել նրա մահվան մասին։ «Աւաղ մեծի տարակուսանացս և յանկարծահաս թշուառութեանցս,— բացականչում է Թովման,— զի մինչև ցայսօր ժամանակի յայտնի գիտէաք, թե ողորմած է աստուած տառապեալ ազգիս մեր Հայկազնի, բայց այժմ երևեցաւ, թէ բարկացեալ է աստուած ազգիս Հայոց, զի զնա ունէաք հոգևոր և մարմնաւոր թագաւոր աստուածապարգև, և զնա եբարձ ի մեզանէ։ ... Եւ մեք մնացաք անգլուխ անձն և մարմին առանց հոգոյ, զի աստանդեալ, քայքայեալ ցրուեցան գրոց աշակերտեալ մանկունք, ոչ ունելով տեղիք ապաստանի և հոգևոր հանգստեան»[9]։

Իր պատմագրական երկում Թովման նաև գրում է. «Եւ երկոտասան եղբարքն աշակերտք մեծին Սարգսի, մեք էաք որ յետ մահուան նորա գնացաք յաշակերտութիւն նորա» (Գրիգոր Տաթևացուն —Լ. Բ.), այնուհետև թվարկում է այդ աշակերտների անունները և ավելացնում. «Եւ ես անարժանս Թովմա։ Եւ երկու ամ զմեզ մխիթարեաց Աստուածաշունչ գրովք։ Եւ ի հալածմանէ անօրինաց շարժեցաւ ի գաւառէն Սիւնեաց առեալ զմեզ՝ եկն ի գաւառն Արճիշոյ։ Եւ արարեալ ի բնակութիւն զաստուածահաճոյ ուխտն Մեծորայ»[10]։ Ասում է նաև, որ նա իր շուրջն է համախմբել 10 վարդապետ և ավելի քան 80 քահանա և աշակերտ։ «Եւ զամ մի լման մխիթարեաց զամենայն եղբարսն անճառելի ցնծութեամբ. Եւ զերիս գիրս մեկնեաց դասիւ՝ զԱւետարանն Յովհաննու աւետարանչին, զգիրս Յոբայ նահատակին եւ զգիրս գրչութեան երկոքեան վարդապետացն Գէորգայ Լամբրոնացւոյն եւ Արիստակէսի»[11]։

Այնուհետև հաղորդում է, թե ինչպես մեկ տարի հետո եկան նրա աշակերտները, որոշ ժամանակ մնացին «և գաղթագողի առեալ գնացին ի գաւառն Արարատեան... Եւ մեք ամենքին վարդապետք եւ աշակերտք գնացաք առ նա։ ... Եւ յետ ուրն աւուր գնալոյ նորա հիւանդացաւ եւ փոխեցաւ յաստի կենացս ի հանդերձեալն»[12]։ «Պատմության» 60-րդ էջում հավաստում է նաև. «Իսկ մեծ վարդապետն Գրիգոր օրհնեաց զաշխարհս

8 Նույն տեղում, էջ 101։

9 Նույն տեղում, էջ 102—103։

10 Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ, Փարիզ, 1860, էջ 51—52 Այսուհետև՝ Թովմա։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, էջ 53։

մեր, և առեալ զաշակերտս իւր՝ ելեալ գնաց ի գաւառն Արարատեան։ Եւ վարդապետն Հովհաննէս և ամենայն աշակերտքս զհետ նորա ընթացաք։ Եւ անտի ելեալ գնացաք ի շնորհալից աթոռն իւր սուրբ Առաքելոյն Ստեփէոսի»[13], որ քիչ հավանական է, քանի որ նախորդ վկայության մեջ և 1410 թ. գրած հիշատակարանում, նա ինչպես և նրա կենսագիրն, այդ մասին ոչինչ չեն ակնարկում։

Թովմայի բնութագրմամբ՝ Գրիգոր Տաթևացին «վարդապետն ամենայն Հայոց, երկրորդ լուսաւորիչն եւ աստուածաբանն գեր ի վերոյ գոլով ամենայն իմաստասիրաց եւ վարդապետաց հնոց եւ նորոց»[14]։ Եվ ահա այս «երկրորդ լուսաւորչից 1410 թ. Երևանում եղած ժամանակ, նախքան նրա Տաթև մեկնելը, Թովման ստանում է վարդապետական աստիճան։ Երբ Մեծոփա վանքից եկած վարդապետների ու աշակերտների՝ Գրիգորին իրենց մոտ ետ վերադարձնելու ջանքերը ապարդյուն են անցնում, Թովման վերադառնում է իր վանքը և դրանից հետո Մեծոփա վանքում 35 տարի վարդապետություն և հետո ուսուցչապետություն է անում մինչև իր կյանքի վերջը՝ 1446 թ.։

1444 թ. գրած հիշատակարանում Թովման նշում է իր մասին. «Եւ ես ԿԶ (66) տարոյ եմ»[15]։

«Եկեալ ի վանքն Մեծոփայ,— գրում է կենսագիր Կիրակոսը,— և Կ(60) ամ անդ կացեալ, բաղում ջանիւ և առաքինութեամբ և ԼԵ(35) ամ դաս ասելով ամենայն անձանց գրոց աշակերտելոց և բաղում որդիս ի փառս ածեալ և է (7) աշակերտի գաւազան տուեալ»[16]։

Թովմայի համար Մեծոփա վանքը, որտեղ նա մինչև իր կյանքի վերջը «ի դառն և յանբարի ժամանակիս»[17] ծավալել է եռանդուն գիտամանկավարժական և հոգևոր գործունեություն, հանդիսացել է «հրեշտակաբնակ կայարանս սրբոց վարդապետաց և ճգնաւորացն առաջնոց...»[18]։

Թովման երկար տարիներ եղել է Մեծոփա վարդապետարանի բարունապետը։ Մեծ հեղինակություն է վայելել ժամանակակից հոգևոր ու աշխարհիկ վերնախավերի շրջաններում։ Հակոբ Ղրիմեցի վարդապետը Թովմային հղած ուղերձում գրում է, «Արդ, ո՛վ բարունապետդ սուրբ և առաքինի, ահա և զայս ևս զխնդիր քո կատարեցի բաղում աշխատութեամբ։ Եւ առցես զսայ և ըստ ուշիմ և նրբահայեաց մտաց քոց որոնեսցես՝ զպակասն լցուսցես և զաւելորդն կշռեսցես,...»[19]։ Ղրիմեցին նրան աստվածաբան է համարում, «ցանկալի և բաղձալի վարդապետ», «առաջնորդ աստուածաբնակ քերոբէագումար հռչակաւոր սուրբ ուխտին Մեծոփայ վանք անուանելոյ»[20]։ Այլում նշում է նաև, որ ինքը «ծառայաբար» կատարել է Թովմայի «խնդրանքը»[21]։ Մի այլ հիշատակարանում կարդում ենք. «Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս (իմա՝ Մեծոփա վանք — Լ. Բ.) հոգիազարդ և երանաշնորհ և աշխահալոյս մեծ բարունապետիս մերոյ Թովմայ վարդապետի, որ հանապազ խրատ (տ)այ մեզ ի յարուեստ գրչութեանն»[22]։

Այս հիշատակարանի գրիչը Թովմային մի այլ առիթով «տիեզերալոյս վարդապետ» է համարում[23]։

Թովման ինքն էլ վկայում է, որ եղել է Մեծոփա վանքի առաջնորդը։ Քերականական նյութերի մի ժողովածու 1446 թ. խմբագրելուց հետո, հիշատակարանում գրում է. «...վարդապետս Թովմա՝ առաջնորդ սուրբ ուխտիս Մեծոփայ, վերստին սրբագրեցի զստ»[24]։

Նույն թվականին գրիչ Մկրտիչն իր հիշատակարանում գրում է. «Եւ մեծաւ տենչմամբ ... խնդրեցի ի վեհագոյն պետէն իմմէ և ի բարունապետէն Թումայի, որ փայլէ ի յաւուրս մեր իբրև արեգակն ի մեջաւրէի յազգս Հայոց և յերկիրս Քաջբերունի, ի հրաշափառ սուրբ ուխտս Մեծոփայ»[25]։

Թովմայի կենսագիր Կիրակոս բանասեր վարդապետն էլ գրում է. «Ի թուականութեանս հայոց մեծաց ՊՂ երրորդի Ե երրորդի եղև վախճան մեծ վարդապետին, երիցս երանելոյն սուրբ հօրն մերոյ երջանիկ և փառաւոր բարունոյն, խորիմաց հռետորին համանման անյաղթ փիլիսոփային՝ Դաւթի սոփեստոսին իմաստասէր հայկազեան սեռիս։ Վասն որոյ ի վերջին ժամանակս սա միայն գտաւ ի մէջ ամենայն վարդապետաց իբր և զարեգակն ի մէջ աստեղաց ամենայն առաքինութեամբ զարդարեալ տեսականաւն և գործնականաւն և գիտնականաւն»[26]...

---

13 Նույն տեղում, էջ 60։

14 Նույն տեղում, էջ 50։

15 Տե՛ս Հիշատակարաններ, մասն Ա, էջ 567։

16 Կիրակոս, տե՛ս Գ. Հովսեփյանի Նշվ. աշխ. մեջ, էջ 7—8։

17 Հիշատակարաններ, մասն Ա, էջ 103։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, էջ 182։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում, էջ 183։

22 Նույն տեղում, էջ 305։

23 Նույն տեղում, էջ 523։

24 Նույն տեղում, էջ 597։

25 Նույն տեղում, էջ 598—599։

26 Կիրակոս, տե՛ս Գ. Հովսեփյանի Նշվ. աշխ. էջ 1։

1427 թ. Ղուկասի ավետարանի՝ Սարգիս Կունտի գրած մեկնության իբրև՞ խմբագրողի թողած հիշատակարանում, Թովման նշում է, «Յիսեսջիք և զիմս աշխատութիւն, որ ի վերջին ժամանակի զգիրս զայս գտի և ետու ի ձեռս վարժապետաց և բաբունապետացդ հայկազեանս սեռի՝ դաս ասել սովաւ և զաշակերտեալսն ի հոգի և ի մարմին մխիթարել»[27]։

Այնուհետև պատմում է, թե ինչպես և որտեղից է գտել այդ մեկնությունը։ «Ելեալ գնացաք ի գեօղ մի կոչեցեալ Ասպիսընակ։ Մտաք յեկեղեցին և գտաք ի խորանին՝ ձգեալ անպիտան ի մէջ մոխրակուտին։ ...եւ վասն դառն և չար ժամանակիս թշուառութեան Ը(8)ամ ի մէջ անցաւ, և ոչ կարացաք գրել։ Իսկ յորժամ բարերարն աստուած սակաւ ինչ անդորրութիւն ետ՝ ի ՊՀԶ (1427) թվականիս... սակավ ինչ ես գրեցի, և զբոլորն գրել ետու հոգևոր որդոց իմոց, Թովմայ գրագրի և Յովհաննէս գրոց աշակերտի...»[28]։

Սակայն, ինչպես երևում է, այդ անդորրությունը երկար չի տևել, քանի որ նույն 1427 թ. գրած մի այլ հիշատակարանում նա գրում է «...Ի ՊՀԶ(1427) թվականի, ի դառն և չար ժամանակի, որ սէրն աստուածային պակասեցավ ի մարդկանէ... աւերեցաւ աշխարհս ամէն ի անաւրէն թուրքմանէն...»[29]։

1435 թ. Թովման խմբագրել է Պողոս առաքյալի 14 թղթերի մեկնությունը և իր թողած հիշատակարանում գրել. «...գտի մեկնեալ եւ թարգմանեալ, համառօտեալ եւ ի միասին հաւաքեալ ճշմարտասէր եւ ուղղադաւան վարժապետացն մերոց ի կրկին ազգաց՝ Յունաց և Ասորաց, քրիստոսածաւալ աղբեր եւ անմուտ արեգականն Յովհաննու Ոսկեբերանի եւ երջանիկ... Եփրեմ ի Խորին Ասորոյ, բացայայտ եւ պարզ տեսութեամբ մտաց վարդապետաց եւ ի լուսաւորութիւն գրոց աշակերտաց անձանց, որ էր թաքուցեալ յանկեան ուրեք՝ ի խաւարի տգիտութեան, անփոյտ եղեալ յուսումնասիրաց անձանց, վասն դառնութեան ժամանակաց պատահմանց եւ վասն աւերման մերոց աշխարհաց»[30]։

Իր ուսուցիչների նման՝ Թովման էլ որպես բաբունապետ, հանգիստ ու ապահով կյանք չի ունեցել, նա էլ ստիպված հաճախ դիմել է փախուստի, տեղից տեղ է փոխադրվել իր վարդապետների ու սաների հետ։

1435 թ. Իսքանդարի ասպատակությունների կապակցությամբ գրում է. «Իսկ մեք փախստական եղեալ հասաք ի Խլաթ քաղաք...։ Իսկ մեք մազապուրծ եղեալ ի նոցանէ, ի գիշերի հասաք ի լերինս Բաղիշու...»[31]։

1439 թ. ոմն նորոգող և կազմող Հերապետ իր հիշատակարանում գրում է. «յայսմ ամի տիեզերալուսս և քաջ բաբունապետն Թովմա փախստական էր եղեալ յազգէն նետողաց ի գաւառէն Արճիշոյ, և եկեալ հանդիպեցաւ ի սուրբ ուխտն Առաքելոց երկու վարդապետօք և բազում գրոց աշակերտօք. և ետես զպատուհաս ցասման»...[32]։

Խոսելով կարա-կոյունլու տիրակալ Իսքանդարի դեմ Շահռուխի երկրորդ անգամ գալու մասին, Թովման նշում է, թե «Եւ զայս յատնի եմ տեսեալ ի գաւառս մեր զիլ 885 (1436) թուականիս յերկրորդ գալն Զաղաթային փախեաք ի Զաղաթայէն և հասաք ի Խլաթ քաղաք, Հեր և Բերկրի, Արճէշ և Արծկէ»[33]։

Կիրակոս կենսագրից պահպանված են նաև տեղեկություններ Թովմայի ստացած գիտելիքների մասին։ Այս առնչությամբ կարդում ենք. «Ուսեալ էր զերկուասան մասունք իմաստասիրութեան, զբնաբանականն զուսումնականն զաստուծաբանականն և զբարոյականն, զտնտեսականն և զքաղաքականն, զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն և զաստղաբաշխականն և զամենայն իմաստ հռետորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան է (7) գրոց, որ է Քերականն, Սահմանքն, Պորփիւրն, Ստորոգութիւնքն Արիստոտէլին, Պերիարմենիասն, Աշխարհացն, Առաքինութեանցն, և զհին և զնոր Կտակարանացն, աստուածեղէն տառիցն Հ և Բ գրոց և Ծ նորոր գրոց. զժուարիմաստ և խրթին բառիւք ծածկեալ աստուածազարդ և ուղղափառ սուրբ վարդապետաց։ Եւ զԾԱ վիպասական պատմագրաց ի բերան առեալ՝ պատմէր մարդկան զտիւ և զգիշեր, յանձանձիր ուսուցանէր և լուսաւորէր զամենայն մարդ... Եւ ջանայր զամենեսեան ի գիտութիւն ճշմարտութեան աստուծային աւրինացն ածել և նմանիլ Աստուծոյ բարեաւն և գիտնականաւն և կատարելաւն։ Զի սա էր կատարեալ իմաստասէր ըստ Պղատոնին, որ ասէ. իմաստասէր կոչեմ ես ոչ զոքնագէտս և ոչ զայն, որ կարողագոյն բազում ինչ առնուլ ի բերան, այլ զայն, որ անբիծ և անաղտ վարս ստացեալ ունին յինքեանս»[34]։

Այնուհետև Կիրակոսը բնութագրում է իր ուսուցչապետին այսպես. «Եւ վարդապետս մեր ունէր զամենայն, ինքն ունակացեալ աստուածային և մարդկային առաքինութեամբ զարդարեալ։ Հաւատով ուղղափառ,

27 Հիշատակարաններ, մասն Ա., էջ 359։

28 Նույն տեղում, էջ 359—360։

29 Նույն տեղում, էջ 361։

30 Նույն տեղում, էջ 450—451։

31 Նույն տեղում, էջ 452։

32 Նույն տեղում, մասն Գ., էջ 388։

33 Թովմա, էջ 108։

34 Կիրակոս, տե՛ս Գ. Հովսեփյանի նշվ. աշխ., էջ 1—2։

յուսով հաստատուն, սիրով կատարեալ, խոհեմութեամբ, արիութեամբ, ողջախոհեութեամբ, արդարութեամբ քաղաքաւարեալ ի մանկութենէ մինչև ի խորին ծերութեանն։ ...Սուրբ հայրս մեր հոգևոր միշտ ցաւէր վասն հայոց եկեղեցեաց, կարգաւորաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, կենդանեաց և մեռելոց։ ...Զարշարէր զինքն ի յուսուցանել զմանկանս եկեղեցւոյ, ի սաղմոսն, ի յաղօթքն, ի շարական, ի գրագրութիւն, ի ժամակարգութիւն. զի գրեաց ընտիր և անսղալ աղաւթամատոյց և մեկնիչք և տաւնացոյց ի լաւ օրինակաց և ուսոյց ԻՐ ընտիր գրագիր»[35]։

Կենսագիրը Թովմայի խոսքերով վկայում է՝ «զինչ որ ի ժամատեղս կարգեալ եմ, զմինն ոչ եղեալ եմ յինէն, այլ յառաջին սուրբ հարցն եմ առեալ և եղեալ ի գրի»[36]։

* * *

Թովմա Մեծոփեցու պատմագրական ժառանգությունը չնայած ծավալով մեծ չէ, բայց պարունակած նյութով խիստ կարևոր ու արժեքավոր է XIV դարի վերջի և XV դարի առաջին կեսի Հայաստանի ու Անդրկովկասի պատմության ուսումնասիրության համար։ Թովմայի պատմության հրատարակիչ Կարապետ Շահնազարյանն իր առաջաբանում նշում է, որ Թովմայի Պատմությունը Շերեֆ-էդդինի (նկատի ունի Շարաֆ ադ-դին Յազդիի «Զաֆար-Նամե» երկը) գրածի համեմատությամբ շատ համառոտ է, եթե վերջինս մանրամասն տվել է Լանկ-Թամուրի հրապարակ գալը և պատճառած ավերածությունները մի շարք երկրներում, այդ թվում և Հայաստանում, Թովման հարևանցիորեն հիշում է այդ բոլորը և հետո ընդարձակ ձևով նկարագրում է Հայաստանում Թամուրի պատճառած ավերածությունները, գերեվարումը, բնակչության ոչնչացումը, որոնց մասին օտար գրողները մեծ մասամբ զանց են արել։ Նա միանգամայն ճիշտ նշում է, որ այդ առումով Թովմայի երկը խիստ կարևոր է մեր տոհմային պատմության ուսումնասիրության համար[37]։ Ճիշտ է նաև Գ. Հովսեփյանը, որ գրում է, թե Թովմայի Պատմությունը և Հիշատակարանը, իրենց թերություններով հանդերձ, պատմության համար անգնահատելի աղբյուրներ են իբրև ժամանակակից և ականատես անձի նկարագրություն, «առանց որոնց մեր տեղեկությունները թերի կլինէին ժամանակի այնպիսի դեպքերի մասին, որպիսին արիւնարբու Լանկթամուրի և նորա յաջորդների արշավանքներն են և հայրապետական Աթոռի վերանորոգությունը էջմիածնում։ ...Թովմայի պատմությունը ազգային շրջանակից դուրս հանրամարդկային պատմության համար ևս մի կարևոր աղբիւր է, Լանկթամուրի նման պատմական խոշոր անձի հետ կապուած լինելով, ուստի և գիտնականների ուշադրության արժանացած»[38]։

Ըստ Գ. Հովսեփյանի, ոչ պակաս կարևոր է «Յիշատակարանը» իբրև հայոց եկեղեցական պատմության այդ առաջնակարգ երևույթի (նկատի ունի կաթողիկոսության վերահաստատումը էջմիածնում) միակ ամբողջական նկարագրությունը[39]։

Կ. Շահնազարյանը նշում է, որ Թովմայի «Պատմությանը» Եվրոպայում առաջին անգամ ծանոթացել են XIX դարում ֆրանսիացի գիտնական Նեվի միջոցով[40]։

Նա միաժամանակ գրում է, որ բնագրի խորագիրը երկար լինելու պատճառով ինքը այն համառոտել է՝ «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ»[41]։

Թովմա վարդապետը Պատմությունն սկսել է գրել 50 տարեկանն անց հասակում. «զի ծեր էի եւ յետ 50 ամացս սկսայ. վասն այսորիկ յետ եւ յառաջ գրեցի»[42]։

Կիրակոսը գրում է,— «Եւ գրեաց պատմութիւն Կ տարւոյ, ի ՊԼԵ թուականէն մինչ ի ՊՂԵ ամի կատարման իւրոյ. սկիզբն ի Թօղթամիշ ղանէն և ի Թամուրէն առեալ և ի կատարումն ի Ջհանշէն վճարեցաւ։ Եւ զամենայն վիշտ և զդառնութիւն և զնեղութիւն և զտրտմութիւն տառապեալ ազգիս արամեան տանս աբեթեան լիովին և գեղեցկաշար բառիւք և ողբալից դիմաւք և աղիողորմ կսկծանօք և սրտահառաչ լալաւք և արտասուաւք պատմէր, և աշխատէր հանապազ ի թուղթ դրելն վասն աղքատաց և գերելոց, որ մին տարին Գ դաստա թուղթ վճարել էր ի նամակ դրելն»[43]։

Երախտապարտ սանը միանգամայն ճիշտ է ներկայացնում իր ուսուցչի գրած պատմությունը, հիրավի Թովմայի երկը կարդալիս մարդ այդ տպավորությունն է ստանում։

35 Նույն տեղում, էջ 2—5։

36 Նույն տեղում, էջ 5—6։

37 Թովմա, էջ 6։

38 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ. էջ ԻԷ։

39 Նույն տեղում։

40 Տե՛ս Թովմա, էջ 7։

41 Նույն տեղում։

42 Նույն տեղում, էջ 44։

43 Կիրակոս, Տե՛ս Գ. Հովսեփյանի նշվ. աշխ. էջ 6։

Հայաստանն ու հարևան երկրները, հայ ժողովուրդն ու հարևան ժողովուրդները Թովմա պատմագրի ապրած օրերում ծանր ու օրհասական վիճակում էին գտնվում, նորանոր կործանարար ու ավերիչ ասպատակություններ, բնակչության զանգվածային ոչնչացում, գերեվարում, առանց այն էլ նոսրացած գավառների ամայացում, սով, անապահով կյանք, զանգվածային արտագաղթեր, քաղաքների, գյուղերի, հոգևոր կենտրոնների ավերումներ ու կողոպուտներ։ Երկիրն անընդմեջ ոտնատակ էր արվում բիրտ ու վայրագ նվաճողների՝ թամուրյանների, թուրքմենական, քրդական ցեղերի կողմից՝ Հայաստանում իրենց գերիշխանությունը հաստատելու կամ վերահաստատելու, ավարի ու կողոպուտի, բնակչության գերեվարման համար ծավալած արյունահեղ պատերազմական գործողությունների, ավազակային ասպատակությունների ժամանակ, որոնք վերջ չունէին և անասելի սարսափներ էին պատճառում բնակչությանը։

Սակայն այդ դեռ բոլորը չէր։ Պապականության նենգ քաղաքականությունը պակաս չարիքներ չէր պատճառել հայ ժողովրդին։ Այդ քաղաքականությունը հայ ժողովրդի երկրորդ հայրենիքը՝ Կիլիկյան հայկական թագավորությունը հյուծել, կործանման եզրին էր հասցրել, խարխլել էր հայ եկեղեցու միասնությունը, անզիջում ու համառ պայքար էր սկսվել Կիլիկիայում այդ ժամանակ գտնվող հայոց կաթողիկոսության և հոգևոր վերնախավի ու բուն Հայաստանի հոգևորականության միջև։ Առաջինները զոհ էին դարձել կաթոլիկության մեքենայությունների և ուզում էին նույն ճակատագրին արժանացնել արևելահայ հոգևորականությանը։ Սա էլ դեռ բոլորը չէ։ Պապերի կողմից ուղարկված ունիթոռ քարոզիչները, որոնք վխտում էին Հայաստանի գավառներում և օրեցօր շատանում էին, իրենց քայքայիչ գործն էին կատարել ու իրենց հերթին խարխլել արևելահայ հոգևորականության միասնությունը, ջլատել ուժերը, ստեղծել իրենց կենտրոնները, խոր արմատներ գցել հայ հոգևոր ու աշխարհիկ շրջաններում։ Հայ ժողովրդի ինքնագոյությունը խիստ վտանգված էր։ Մահմեդական աշխարհը, հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացմանը զուգահեռ, դավանափոխության քաղաքականությունն էր ուժեղացրել, պապականությունն էլ, իր հերթին, հայերի ձուլումն էր խիստ ակտիվացրել։ Ստեղծված այդպիսի մղձավանջային ժամանակաշրջանում հայ ժողովրդի գոյատևման շահերը պահանջում էին միավորել ուժերը, պահպանել, գոնե, ազգային ինքնատիպությունը, որը մարմնավորված էր դավանանքի մեջ, ուստի հայ եկեղեցու միասնության ապահովությունը խիստ կենսական ու անհետաձգելի խնդիր էր առաջադրել արևելահայ հոգևոր ու աշխարհիկ տերերի առջև։ Անհրաժեշտ էր առաջին հերթին կաթողիկոսությունը փրկել կործանումից, մի բան, որ Կիլիկիայի պայմաններում արդեն հնարավոր չէր, ուստի պետք էր այն տեղափոխել մայր հայրենիք, վերակենդանացնել էջմիածնի դիրքն ու դերը։ Այս գաղափարը առաջին անգամ տվել էր 1441 թվից մոտ հարյուր հիսուն տարի առաջ Ստեփանոս Օրբելյանն իր «Ողբ ի ս. Կաթողիկէն»-ում, որ հետագայում նրա տոհմի ժառանգներից Հովհաննես Որոտնեցին ու նրա աշակերտները զարգացրին և նախապատրաստեցին, իսկ Գրիգոր Տաթևացու աշակերտներն էլ, որոնց թվում և Թովման, իրականացրին այն։

Այդ մասին առավել հանգամանորեն՝ քիչ հետո։

* * *

Ահա նշված պայմաններում է ապրել ու գործել, մեր պատմագիրը, իր սեփական կաշվի վրա կրել ապրած օրերի դառնությունները։ Նրա պատմագրական ժառանգության մեջ կարմիր թելի նման անցնում է, մի կողմից՝ անհուն սերն ու նվիրվածությունը հանդեպ իր հայրենիքը, իր դավանանքը, իր մշակույթը և, մյուս կողմից՝ անզուսպ ատելությունը օտար նվաճողների, դավաճանների, ուրացողների, քայքայիչների, բարոյալքվածների նկատմամբ։

Պատմագիր Թովման իր երկի հենց սկզբում ասում է, թե ինչի մասին է գրելու. «Պարտ է գիտել ուսումնասիրաց և բանասիրաց անձանց զի ժամանակն բաժանի յերեք՝ յանցեալն, ի ներկայն և յապառնին։ Եւ վարդապետաց եկեղեցւոյ պիտոյ է վասն երիցն գիտելոյ, վասն անցելոյն պատմել, վասն ներկային խօսիլ, վասն ապագային իմանալ և զգուշացուցանել։ Նմանապէս և մեզ պարտ է սակաւ մի համառօտաբար վասն ներկայիս, զոր ի մերում ժամանակիս եղե., պատմել, զոր շար թագաւորքն անհաւատք Արեւելից կորուստ բերին Հայկազեան սեռիս ի վերջին ժամանակիս, և ամենայն օտարացեղ ազգաց ցուցանել»[44]։

Հակառակ թամուրյանների պալատական և մի քանի այլ մահմեդական պատմագիրների Թամուրին տված սուբյեկտիվ բնութագրմանը, որը այսօր չարաշահում են առանձին մասնագետներ, մեծարում են ու բարձր գնահատում նրա գործունեությունն ու խաղացած դերը, Թովման, Արևելքի Թերևս առաջին պատմագիրն է, որ հնարավորություն է տալիս քողազերծ անելու այդ առասպելը։ Թամուրին՝ նրա տված բնութագիրը հաստատվում է ինչպես հայ, այնպես և օտար, այդ թվում և մահմեդական աղբյուրների կողմից։ Նրա մոտ կարդում ենք. «...այր մի Թամուր-

44 Թովմա, էջ 9։

Լանկ անուն, դաւանութեամբ և օրինօք պղծոյն Մահմետի՝ Նեռին կարապետի, յայտնեալ երեւացաւ ի յարեւելս և ի Սմրղանդ քաղաքի, անողորմ, անգութ, անագորոյն, լեալ ամենայն շարութեամբ, պղծութեամբ և հնարիւ բանսարկուին սատանայի»[45]։

Ըստ պատմագրի, Թամուրը «աւազակապետ և գլուխ մարդասպանից»[46] է, նրա հաջողությունները և հաղթանակները Թովման բացատրում է նրանով, որ նա իր շուրջն է համախմբել իր նմաններին, ավազակաբար, նենգ ու խարդախ միջոցներով կարողացել է տիրել Արևելքի երկրներին[47]։ Պատմում է, թե ինչպես է նա կարողացել տիրել Շիրազ, Քիրման և Սպահան քաղաքներին, որոնց իշխան Շահ-Մանսուրը, ութ տարի համառ մարտնչել էր նրա դեմ, որի համար Թովման նրան «արի» է համարում։ Պարտվելով Մանսուրից, Թամուրը վերադառնում է Արևելք, Մանսուրը դեսպան է ուղարկում նրա մոտ։ Իմանալով դեսպանի գալու մասին «չարահնարը» սուտ հիվանդ է ձևացնում, մի գառի արյուն է խմում, հրամայում դեսպանին կանչել իր մոտ, բազմության մեջ «եցոյց զդէմս կերպարանաց իւրոց իբրև զմեռելոտի», ապա հրամայում է պղնձե թաս բերել իրեն, խմած արյունը ետ է տալիս։ Դեսպանը այդ տեսնելով ներքուստ ուրախանում է և համոզվելով, որ նա հոգեվարքային վիճակում է ու պիտի «սատկի», գիշերը փախչում է և Մանսուրին հայտնում այդ մասին։ Վերջինս և ամբողջ ժողովուրդը շատ են ուրախանում, հանգստացած ցրվում են իրենց բնակավայրերը, «չարահնար» Թամուրը 3—4 օրից գալիս պաշարում է քաղաքը, «արի» Մանսուրը 800 հոգով հանկարծակի դուրս է գալիս քաղաքից ու հարձակվում թշնամու վրա, սակայն պարտվում է, Թամուրն այս ճանապարհով տիրում է նրա քաղաքներին[48]։

Թամուրը Սուլթանիայի իշխան Էդիլին, որը մտադրվել էր նրան սպանել բաղնիքում, ամբողջ բազմության առջև, պղնձե կաթսայի մեջ կենդանի եփել է տալիս[49]։

Թամուրը Թովմայի համար «զպիղծ վիշապն անդնդային» է[50], «չար գազանս»[51] և այլն։

45 Նույն տեղում։
46 Նույն տեղում, էջ 10։
47 Նույն տեղում, էջ 10—13։
48 Նույն տեղում, էջ 11—12։
49 Նույն տեղում, էջ 12—13։
50 Նույն տեղում, էջ 12։
51 Նույն տեղում, էջ 29։

Դառնացած պատմագիրը սրտի անհուն կսկիծով նկարագրում է «պիղծ և անօրէն Զաղատայի» զորքերի պատճառած ավերածությունները։ Ի դեպ նկատենք, որ նա ողբում է ոչ միայն իր հայրենիքի ու իր ժողովրդի օրհասական վիճակը, այլև նրան ցավ է պատճառել հարեվան երկրների քրիստոնյա և տեղական մահմեդական ժողովուրդների ու ցեղերի կրած տառապանքները։

Արարատյան գավառի գրավման կապակցությամբ նշում է. «եւ զայլ ամենայն բազմութիւն հաւատացելոց շարշարէին տանջանօք, սովով, սրով, գերութեամբ, անտանելի շարշարանօք և անագորոյն բարուք անմարդաձայն արարին զամենալից զաւառն Հայոց»[52]։

Այնուհետև նա ուրվագծում է Թամուրի ասպատակությունների երթուղին։ «Եւ ընթացեալ բաղում զօրօք (Թամուրը— Լ. Բ.) ի Փայտակարան Տփղիս քաղաք՝ էառ զնա և գերեաց անթիւ և անհամար։ Եւ կարծիք է՝ թէ սպանեալն յոլով էր քան թէ ապրեալն»[53]։

Իսքանդարի՝ Արալի որդու կապակցությամբ, որն իշխել է Վանում, գրում է. «առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մէր և Տաճկաց»[54]։

Ահա թե ինչպես է ողբում նա Վանի պաշարումն ու առումը. «Եւ նոցա նեղեալ ի հացէ եւ ի ջրոյ՝ ոչ կարացին կալ ի խսարին, եւ ետուն զբերդն ի ձեռս նոցա։

Աւաղ աղէտիս եւ դառն կսկիծիս։ Աստ էր տեսանել զահ եւ զերկիւղ աւուրն դատաստանի, զլալումն եւ զողորմն ամենայն բերդին զի հրաման եղեւ ի շար բռնաւորէն զկանայս եւ զմանկունս առնուլ ի գերութիւն, եւ զհաւատացեալս եւ զանհաւատս ի բերդէն ի վայր ընկենուլ։ Իսկ նոքա առժամայն կատարեցին զշար հրաման նորա սկսած առհասարակ զամենեսեան ի վայր ընկենուլ եւ այնքան բարձրացաւ մեռեալն, մինչ զի վերջին անկեալքն ոչ մեռանէին, զոր տեսաք աչօք եւ լուաք ականջօք մերովք ի սուրբ հօրէն՝ սրբազան արքեպիսկոպոսէն Տէր Զաքարիայէ եւ ի հօրէն վարդապետ Տեր Պօղոս կոչեցեալ, որ եւ նոքա աղատեցան լինելով ի բեղդին... Բայց ով կարէ պատմել զթիւ գերեացն եւ զսպանումն անմեղացն... զի լցաւ աշխարհ ամենայն գերութեամբ Հայոց, մեռան քահանայք եւ աշխարհականք հաւատացեալք եւ անհաւատք»[55]։

52 Նույն տեղում, էջ 19։
53 Նույն տեղում։
54 Նույն տեղում, էջ 99։
55 Նույն տեղում, էջ 30—31։

Ամփոփելով Լանկ Թամուրի առաջին արշավանքի հետևանքները, պատմագիրը բացականչում է. «Աւաղ եւ եղուկ ամենայն Հայոցս, զի աւերեցաւ ամենայն երկիրս, զի յԱրճշոյ մինչեւ ի տունն Վրաց եւ մինչ ի Կուր գետն Աղվանից շաղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն շարչարանօք, սպանմամբ եւ գերութեամբ։ Եւ յետ գնալոյ նորա յաշխարհէս մերմէ եկն սով սաստիկ յաշխարհս մեր եւ տարածեցաւ յամենայն տեղիս զի կերան զշունս եւ զկատուս, խորովէին զուստերս եւ զդստերս. այր՝ զկինն, եւ կին՝ զայրն սպանանէին զմիմեանս եւ ուտէին եւ ոչ յագենային, եւ յետոյ ինքեանք մեռանէին։ Զի ոչ կարեմ պատմել զդառնութիւնս մեր զոր տեսաք աչօք եւ լուաք ականջօք»[56]։

Այնուհետև նկարագրում է Թամուրի երկրորդ արշավանքը, նրա զորքի և ջելայիրյան Յուսուֆի միջև մղված պատերազմները, նրանց երկուսի պատճառած ավերածությունները Հայաստանի տարբեր քաղաքներում ու գավառներում։

Ապա տալիս է նրա երրորդ արշավանքը՝ 1401 թ., կատարած գաղանությունները ու վայրագությունները Դամասկոսում, Բաղդատում, Սեբաստիայում և այլուր։ Այսպես Դամասկոսում «Հրաման եղեւ ի նմանէ՝ (և ասէ) 700,000 մարդ կայք առ իս՝ 700.000 գլուխ այսօր և վաղիւն այսր բերջիք. և եօթն բերդ շինեսջիք, որ ոչ բերիցէ զգլուխ՝ հատցի գլուխ նորա։ ...Եւ բազում զօրացն սուր ի վերայ եղեալ՝ կոտորեցին զամենայն քաղաքն. և պակասեալ լինէին այր մարդ. և գլուխ գտանել ոչ կարէին. ապա կտրէին զգլուխս կանանցն և զհրամանն ի տեղ բերէին ամենայն զօրքն։

Աստ էր տեսանել զօրինակն համօրէն դատաստանին և զգոչումն և զաղաղակն, զլաց և զհառաչումն։ Եւ ով ոք որ ոչ կարէր սպանանել զգլուխ մի՝ ի 100 թանկայ գնէր և տայր ի համարն։ Եւ բազումք ի զօրացն ոչ սպանանել կարէին և ոչ գնել, զգլուխս նոցին հատանէին և ի շար մսէ բլուր դնէին»[57]։ Թովման այս գրելուց հետո ասում է. այդ մեզ պատմել է «հոգեւոր որդեակն մեր Մխիթար», որն եղել է այդ ժամանակ Դամասկոսում, իր աչքերով տեսել է հրեշավոր այդ իրողությունը և ինքը հազիվ փախել է քաղաքից։

Թամուրը նույնը կատարել է և Բաղդատում։ Խաբեությամբ գրավել է Սեբաստիա քաղաքը և հավատացյալներից և անհավատներից 4000 հոգու քաղաքից դուրս կենդանի «թաղեցին զնոսա, և ջրով և մոխրով

56 Նույն տեղում, էջ 32։

57 Նույն տեղում, էջ 63—64։

ծածկեցին»[58]։ Թովման զայրացած բացականչում է. «եւ ով կարէ ընդ գրով արկանել զայս դառն տանջանս, զորս գործեաց կարապետ Նեռին՝ անողորմ բռնաւորն»[59]։

Թամուրն այստեղից շարժվել է դեպի արևմուտք, գերեվարել 60.000 տուն զարաթաթարներից, ուղարկել դրանց Խորասան։ Ապա գնացել է Վրաստան, ուր վրացիներն ու հայերը ամրացել էին անմատչելի վայրերում, սակայն նա կարողացել է հաղթել և ավելի քան 60.000 գերի վերցնել։ «Եւ նոքա սրով ու հրով զամենայն աշխարհն Վրաց կործանեցին, զեկեղեցիսն քակեցին, զգերիսն առեալ հասուցին յաշխարհս մեր մերկ և բորիկ, քաղցած և ծարաւուած, ամեն հինգ Զաղատայ 20 գերի ունելով։ Եւ բազում այն էր, որ ի ճանապարհին մեռանէին և նոքա քար առեալ շախշախէին զգլուխս նոցա, զի մի կենդանի մնասցեն... Զոր տեսաք աչօք մերովք և լուաք», սրտի կսկիծով գրում է պատմագիրը ու ավելացնում, «վայ և եղուկն բարձրացաւ ի վերայ քրիստոնէից աղգիս, տեսանէաք զգերիսն եւ օգնել ոչ կարէաք, այլ հեղձամղձուկ լեալ՝ ողբով եւ լալով խոյս տուեալ փախչէաք ի նոցանէ»[60]։

Նկարագրելով Թամուրի որդի Միրան շահի հարձակումը Բաղեշի վրա և գրավումը, ապա վերադարձը Թավրիզ, Թովման մեծ բավականությամբ գրում է. «Եւ պիղծն Թամուր... սատակեցաւ շան պէս, և ոռնայր մեռելն իբրեւ զշուն ի պիղծ խատիրայ Մաշաթին»[61]։ Արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Միրան շահի ու նրա եղբոր Աբու-Բաքրի և ջելայիրյան Յուսուֆի միջև տեղի ունեցած ընդհարումների ու նրանց պատճառած ավերածությունների մասին։

Յուսուֆի՝ Բաղդատի սուլթան Ահմադի դեմ տարած հաղթանակից հետո որոշ չափով խաղաղություն է տիրում Անդրկովկասում, և Թովման ինքնաբավ շնչով հավաստում է. «Եւ եղեւ ի նոյն ժամանակս խաղաղութիւն... ամենայն աշխարհիս Վրաց և Աղվանից, և շինութիւն ամենայն աշխարհիս, մինչ զի յԱրճիշու մինչ ի գաւառն Արարատեան մարդիկ ի յաւեր ոչ բնակէին, այլ ի շէնս բնակէին և թէպետ հարկապահանջութիւնն բաղում էր, սակայն խաղաղութիւնն առանց խռովութեան էր։ Եւ ծաղկեալ էին եկեղեցիք քահանայիւք և սարկաւագօք. և մարդիկ որք յաւուրս Զաղաթային ի հաւատոց ուրացեալք էին, եկին ի հաւատս...»[62]։

58 Նույն տեղում, էջ 65։

59 Նույն տեղում։

60 Նույն տեղում, էջ 67։

61 Նույն տեղում, էջ 70։

62 Նույն տեղում, էջ 72։

Սակայն մեր պատմագրի հոգեկան բավականությունը երկար չի տևում։ Նկարագրելով Յուսուֆի՝ «Իբրեւ կատաղի եւ անողորմ գազան» Ախալցխայում իրագործած կոտորածը և գերեվարումը, նա գրում է, թե հայերը տեսնելով գերիների վիճակը աշխատեցին փրկագնով ազատել նրանց. «տեսանողքն ոչ կարէին ժուժկալել. կանայք զզարդարանս իւրեանց կողոպտէին, արք՝ զանասունս, քահանայք եւ կրօնաւորք զաղքատութիւնս իւրեանց ցուցին. ում ոչխարիկ եւ ում տաւարիկ կայր՝ տային եւ գնէին»։ Մինչև անգամ փրկագնի առասպելական չափն է հաղորդում. «եւ տեսեալ անօրինացն զյօժարութիւն նոցին՝ զամեն գերին հանեցին ի 10.000 եւ ի 20.000 մինչ զի քահանայի միոջ յԱրճեշ և յԱրծկէ երկերիւր երեսուն հազար դահեկան գնէին»[63]։

Անհուն վշտով է նկարագրում նաև Շահռուխի և կարա-կոյունլու գահակալ Իսքանդարի, վերջինիս ու նրա եղբայրների միջև տեղի ունեցած ընդհարումները և դրանց տխուր հետևանքները. «Ոչ կարեմ ընդ թիւ արկանել զմեռեալսն եւ զողբումն, զլացն եւ զաղաղակն եւ զկորուստս ազգիս մեր»[64]։

Ասում է՝ չէին խնայում նրանք «ոչ ի տաճիկ և ոչ Ասորի»[65]։ «Անողորմ վիշապն և արեանարբու գազանն»— Բաղեշի քուրդ ամիրան հայոց Որմի քաղաքում գաղանաբար 700 տաճիկ էր սպանել ու ավերել քաղաքն ու շրջակայքը[66]։

Թովման Իսքանդարի (Իսկենդերի կամ Իսքանդարի) մասին էլ ատելությամբ է գրում, նրան «յիմար եւ անդգայ եւ անհնազանդ եւ հպարտ եւ գոռող» բռնավոր է համարում[67]։

Նկատենք, սակայն, որ Թովմայի մոտ որոշ հակասություն է դրսևորվում առանձին մարդկանց, հատկապես Իսքանդարի բնութագրումների մեջ, և դա թերևս բացատրելի է։ Սկզբնական շրջանում նա, հավանաբար, տեսնելով Իսքանդարի առաջին հաջողությունները Թամուրյանների դեմ ծավալած պայքարում, որոշ հույսեր էր կապել նրա հետ։ Սակայն հետագայում, երբ համոզվել էր նրա անկարողության մեջ, իրենց վրա հասած նորանոր սարսափների պատճառը Իսքանդարի անհնազանդությունն էր համարում «Վասն հպարտութեան բարուց իւրոց ոչ ինքեան յաջողեցաւ եւ ոչ հաւատացելոցն, կորեաւ ինքն եւ կորոյս զազգս մեր»[68]։

Թերևս նա սկզբնական շրջանում տգետ չհամարեր այն մարդկանց, որոնք Իսքանդարին ցանկանում էին «երկար կյանք»։ Հավանաբար դրանք այն մարդիկն էին, որոնք իր նման սկզբում հույսեր էին կապել նրա հետ. «Զայս չարիս գործեաց անօրէն գազանն (Իսքանդարը— Լ. Բ.),— գրում է նա,— և տգէտ ոմանք վասն սակաւ սիրելոյն զհաւատացեալս թե ազգ բարի է՝ երկարութիւն կենաց խնդրէին, որ և կարծիք է մարդկան թէ՝ քան զաստեղս աւելի մարդիկ մեռեալ եղեն վասն սորին անհնազանդութեան և հպարտ բարուց որ ոչ հնազանդեցաւ թագաւորին արեւելից։ Վասն զի նա (իմա՝ Շահռուխը Լ. Բ.) խաղաղասէր էր»[69]։

Թովման որոշակի ասում է նաև. «Ի զ870 թուականէն ի հետ մինչ ի մահ սորա (Իսքանդարի— Լ. Բ.) ամենայն երկիր ի վրդովման կայր և ի խռովութեան անհաւատ և հաւատացեալ, զի երեք անգամ է այս որ Շահ-Ռուհ Զաղաթայն նորա անհնազանդութեան աղագաւ զամենայն Թուրքմանն և զՄիջերկրեայս ի գերութիւն ետ...»[70]։

Երբ ինքը վարդապետներով ու աշակերտներով փախուստի է դիմել ու ապաստանել Լիմ կղզում, ոմն Հաճիբեկ իշխան զորքով գնում է այնտեղ, բոլորից պահանջում ոսկի և արծաթ. «Եւ յերեկոյի ժամէն մինչեւ ի լոյս առաւոտուն 40.000 դահեկան էառ, բայց ի համարս աւելի (քան) զ100.000 Եւ յահէ նոցա կամէաք, զի ծովն ընկղմէր զմեզ սեսանելով եւ լսելով զաղաղակ եւ զճիչ կանանց եւ որդւոց նոցա. վասնզի հարկանէին զամենեսեան եւ բրածեծ առնէին»[71],— ցավով գրում է Թովման։

Իբրև ողբերգու Թովման թերևս զիջում է միայն Արիստակես Լաստիվերցուն։ Նկարագրելով Արճեշի գավառի բնակչության օրհասական վիճակը, նա գրում է. «Եւ բազմութիւն քրիստոնէիցն... ի լերինս եւ ի բլուրս, ի ծերպս եւ ի ծակս վիմաց փախուցեալք կային։ Եւ նոցա շրջապատեալ զլերամբն, իբրև արծիւ որ որսայ զթռչունս երկնից, գոչէին, ճայնէին, երիւարաւն արշաւէին, զսիրտս արանց եւ կանանց ճմլէին, իբրև զօր դատաստանին սոսկալի եւ սարսափելի պատուհասի հասին, զմեծամեծսն սպանանէին, զոմանս թլպատէին եւ ի հաւատոց բեկանէին, եւ զկին եւ որդի ի հարանցն յափշտակեալ գերի առեալ տանէին։ Գոչէր մայրն առ որդին եւ որդին առ մայրն. «մայր իմ՝ ո՞ տայր ինձ տեսանել

63 Նույն տեղում, էջ 77—78։
64 Նույն տեղում, էջ 84։
65 Նույն տեղում, էջ 82։
66 Նույն տեղում, էջ 85։
67 Նույն տեղում, էջ 86։

68 Նույն տեղում, էջ 93։
69 Նույն տեղում, էջ 105։
70 Նույն տեղում, էջ 108։
71 Նույն տեղում, էջ 88։

զքեզ»։ Եւ մայրն՝ առ որդին. «Ո՜վ որդեակ իմ՝ վայ է ինձ եւ եղուկ, եւ վայ աւուր քոյ ծննդեան, վայ ինձ եւ վայ հօր քոյ աւետեաց. վայ բեկեալ բազկիս որ զքեզ բարձի որդեակ՝ երթեալ գնաց ի ծով դառնութեան... Եւ այս կսկիծ դառնութեան անճառելի է ընդ գրով արկանել զայս աղէտ տարակուսանաց նեղութեանս։ Բայց սակաւ մի ծանօթութիւն տամ յետ մեզ եկելոցդ զի լալով լայք զկորուստ ազգիս Հայոց, զի անձամբ ի ներս կայաք»[72]: Այնուհետեւ ասում է. «Եւ մեք բազում անգամ հարցաքննութեամբ ի խնդիր ելեալ թերեւս գտանեաք զթիւ համարոյ գերեացն զԱրճիշոյ եւ զՎանայ. եւ ոչ ոք կարաց ստուգել...»[73]։

Թովման ողբում է նաև Իսքանդարի՝ Շամախու շրջանում և Դերբենդից հյուսիս ընկած տարածքում կատարած վայրագությունների հետեվանքները։ «Աւերեաց զաշխարհն ամենայն (Շամախի— Լ. Բ.), զքաղաք և զգիւղ և սրոյ ճարակ եան»[74]։ Ապա շարունակում է. «աւերեաց բազում աշխարհ (Դերբենտից հյուսիս— Լ. Բ.) անողորմ սրախողխող առնելով զլեռնականս և զդաշտականս՝ զամ մի լման անդ յարեալ զանմեղ արիւնս հեղլով զոր ոչ ոք կարէ ընդ գրով արկանել»[75]։

Խոսելով ոմն Փիրալի իշխանի՝ Արճեշի և Արծկեի գավառներում կատարած կողոպուտի մասին, Թովման հաղորդում է «Եւ զամենայն գաւառս այնքան կողոպտեցին եւ ի յընչից մերկացուցին մինչ զի ամենայն քրիստոնեայք որ այժմ կան մեծամեծք եւ փոքունք խոտեն զինքեանս և ոչ ինչ համարին, առանց ամօթոյ խոտով ծածկեն զինքեանս, և մերկ եւ բոկիկ շրջին իբրեւ զանասունս»[76]։

Դառնացած հավաստում է միաժամանակ, որ Լիմ կղզին գնացած կանանց վաճառել էին երկու-երեք հարյուր թանկայի. «Եւ այժմ ձգեալ է զամենայն հաւատացեալս ի ներքոյ հարկապահանջութեան՝ մինչ զի ամենայն մարդագլուխ 40 թանկայ առնուն թող զբահրայ (հողային ռենտան— Լ. Բ.) եւ զչարէք (բնակչության աշխարհազորային պարտականությունը— Լ. Բ.) ի ծերոց և ի տղայոց, յորբոց և յայրեաց ի կուրաց, յաղքատաց եւ ի տնանկաց։ Եւ ամենեքեան կենդանի մեռեալք և սովեալ կան»[77]։

Պատմագիրը ողբում է նաև 1431 թ. սովի հետևանքները. «մոթ ցորեանն աւելի հանէր քան զ60 թանկայ ի պաղարին Արճիշոյ»[78]։ Ցավագնորեն նշում է, որ սովի և աղքատության հետևանքով Արճեշից 500 հոգի ստիպված դավանափոխ են դարձել։ Սովը տևել է 7 տարի և այդ ընթացքում «սուրն կորոյս, սովն սպան, գերին պակասեաց, գաղանք կերան զմարդիկ, թռչունք կերան զվաստակս, գորտն և մկունք սպականեցին զանդաստանս»[79]։

* * *

Համեմատելով հայերին հասած պատիժը եբրայեցիների և եգիպտացիների պատիժների հետ, պատմագիրը սրտի կսկիծով նկատում է. «որդիք Եգիպտացւոց ի ծով ընկղմեցան, իսկ որդիքն Հայոց՝ ի ծովն անհաւատութեան... Նոքա ի ծովն մեռան, եւ ոչ ծննդեամբ բազմացան, որդիքն մեր և եղբարք, որք անհաւատութեամբ մեռան և կորեան, աճեն որդիք նոցա անհաւատութեամբ և լնուն զաշխարհս ամենայն...»[80]։ Այնուհետև ողբում է դրա տխուր հետևանքները, այն արատավոր բարքերը, որոնք այլասերել են մարդկանց և հասարակությանը։

«Եւ այս պատուհաս որ եղեւ,— գրում է նա,— մի կարգաւոր և աշխարհական, մեծատուն և աղքատ զլեզու իւր ոչ սանձեաց ի հայհոյութենէ յիշոցացն, եւ ոչ ասացին մեղայ Աստուծոյ և ի ժանտալից դառնապրտուղ և դառնաբերան անիծից և նզովից գարշաբերան աղտեղութեանց ղորս ժայթքեն հանապազօր մոխրաթաւալ նորընծայ ուխտի մանկունք եկեղեցւոյ Հայաստանեայց՝ հանապազ զաղտեղիս խօսելով զբերանս ուսումնականաց լնուն։ Այլ վայ և եղուկ է մեզ, և եղուկ է նոցա, զի անձամբ զանձն իմ դատապարտեմ զի և ես ի նոյնս կամ բայց հարեալ ի խղճէ մտացս, զի գիտութեամբ Աստուածաշունչ գրոց ծանօթացայ, կամիմ բառնալ, և ոչ կամին լսել և ես հանապազ ի դառնութեան կամ, զի սովորութիւնն հնացեալ բնութիւն մակստացական է։ Դարձեալ և ոչ կարեմ բառնալ ի մանկանց եկեղեցւոյ զի վիշապ ապստամբ եղեալ են, և ի խրատուէ հոգեւոր արանց և եկեղեցւոյ վարդապետաց խոյս տուեալ գնան զհետ կամաց իւրեանց»[81]։

Թովման էլ Լաստիվերցու և Ուռհայեցու նման, Արճեշի օրինակով բացահայտում է քաղաքներում արմատացած արատավոր բարքերը և դրանց պատճառը համարում է հասարակության վերասերումը. «Եւ մեք

72 Նույն տեղում, էջ 91։
73 Նույն տեղում, էջ 92։
74 Նույն տեղում, էջ 100։
75 Նույն տեղում։
76 Նույն տեղում, էջ 111։
77 Նույն տեղում։

78 Նույն տեղում, էջ 94—95։
79 Նույն տեղում, էջ 95։
80 Նույն տեղում, էջ 96։
81 Նույն տեղում, էջ 96—97։

զայս ամենայն տեսանելով զողբումն եւ զհառաչանս մերկացելոց եւ աղքատաց եւ գանգատ ի սուտ անուն տանուտերաց որ թուլութեամբ եւ անփոյթ առնելով կորուսին զտառապեալ ազգս մեր ոչ միայն ի դառն աղքատութեան այլև ի գործս անլսելիս եւ անպատմելիս եւ յանառակ արբեցութիւնս ծերոց եւ տղայոց, որպէս յայտ է տեսանել ի քաղաքն Արճէշ»[82], զայրույթով գրում է Թովման և ավելացնում. «չար սերմանցն չար լինի երկրագործութիւն, և չար ուսուցչացն չար լինի ուսումն նոցա»[83]։ Ասում է, որ ինքը շատ ջանքեր է գործադրել Արճեշում մարդկանց խրատելու, ճիշտ ճանապարհի բերելու համար, սակայն ապարդյուն. «Եւ մեք աղօթս և պատարագս մատուցաք թերևս թողութիւն մեղաց գտցէ, և նա ոչ զղջացաւ ի գործս իւրոյ։ Եվ կամ՝ «մենք դէմ յանդիման բարոզելով խրատեցաք, և նա ոչ հնազանդեցաւ, այլ երիցս և չորիցս նամակ օրհնութեան գրեցաք, և նա անտէս արար»[84] և այլն։

Իր նախորդ գրչակիցների նման վարդապետ Թովմա Մեծոփեցին էլ երկրներին ու ժողովուրդներին վրա հասած սարսափների ու ավերածությունների պատճառը մարդկանց՝ աստծու հանդեպ գործած հանցանքներն է համարում և դրանք դիտում իբրև ի վերուստ եկած պատիժներ. «Եւ այս ամենայն,— գրում է նա, —եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց եւ չար գործոց, մանաւանդ ի ծուլութենէ երիցանց և ի խաբեբայութենէ կրօնաւորաց և ի չար գործոց անհաւատ և սուտանան հաւատացելոց, ի զրկող և յանիրաւ տանուտերաց, ի պիղծ և ի զաղրալի առաջնորդաց...»[85]։

Այդ իսկ պատճառով՝ «Հեռացաւ Աստուած, կարծեմ, յաղգէս և յեկեղեցւոյս Հայաստանեայց»[86], ընդգծում է պատմագիրը։

Այս հեղինակն էլ համոզված է եղել, որ միայն աստված է պարգևում «յաղթութիւն հաւատացելոց եւ անհաւատից»[87]։ Բանից պարզվում է, որ թշնամին էլ է դրանում համոզված եղել։ Դերջանում Իսքանդարի՝ բնակչության գերեվարման ժամանակ սաստիկ ձյուն է տեղացել, շատ զոհեր պատճառել և բռնակալը «ծիծաղելով ասէր «Աստուած արար, զինչ փոյթ է ինձ, թող չէր տուեալ զդոսա ի ձեռս իմ և ոչ ձիւն յերկնից առաքեալ»[88]։

82 Նույն տեղում, էջ 111—112։
83 Նույն տեղում, էջ 113։
84 Նույն տեղում, էջ 114։
85 Նույն տեղում, էջ 95։
86 Նույն տեղում, էջ 99։
87 Նույն տեղում, էջ 87։
88 Նույն տեղում, էջ 105։

Նախորդ մեր մի քանի պատմագիրների նման, սակայն այս դեպքում թշնամիների բերանով, մոլեռանդ Թովման, կարծեք, իր տրտունջն է արտահայտում Աստծու նկատմամբ. «Եւ զայսպիսի կորուստ մեր պարծանս անձանց համարէին եւ ասէին բարձր ձայնիւ՝ ու՞ր է Քրիստոս Աստուածն նոցին. թող գայ եւ փրկեսցէ զհաւատացեալս իւր»[89]։

* * *

Ոչ պակաս արգասավոր է եղել Մեծոփեցու նաև հասարակական-քաղաքական ու հոգևոր գործունեությունը։ Այդ մասին չափազանց արժեքավոր ու հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում, ինչպես ինքը Թովման իր գրած Հիշատակարանում[90], այնպես և նրա կենսագիր Կիրակոս բանասերը։ 1441 թ. Հայրապետական աթոռը Սսից էջմիածին էր տեղափոխվել։ Այն ժամանակ այդ խոշոր իրադարձություն էր հայոց եկեղեցու և արևելահայ հոգևորականության կյանքում։ Հայոց եկեղեցական պատմության մեջ կարևոր նշանակություն ունեցող այդ իրադարձության միակ ամբողջական նկարագրությունը տրված է Թովմայի «Հիշատակարանում»։ Լինելով ժամանակակից այդ դեպքերին, և որ կարևորն է՝ հիմնական գործող անձերից մեկը, նրա գրածը ստուգապատում աղբյուր է էջմիածնում կաթողիկոսության վերականգնման պատմության ուսումնասիրության համար։ Հիշատակարանը փաստորեն Պատմության շարունակությունն է հանդիսանում։ Նրանում մոլի հայադավան Թովման սրտի խորը կսկիծով ու միաժամանակ զայրույթով բացահայտում է XV դարի առաջին կեսում հայոց եկեղեցու ապրած խոր ճգնաժամը, նրա նախադրյալներն ու կաթողիկոսական աթոռի փոխադրման դրդապատճառները։ Անարգանքի սյունին է գամում Սսի կաթողիկոսներին, որոնք տեղի տալով պապերի պահանջներին, ոտնահարում էին հայոց եկեղեցու ավանդական կանոններն ու սովորույթները. նորաձևություններ էին մտցնում նրա կանոններում ու ծեսերում։ Պատմագիրը հարց է տալիս. «Վասն զի՞նչ պատճառի եղեալ եղև կաթողիկոս ի Վաղարշապատ քաղաքի ի սուրբ էջմիածինն»[91] և ինքն էլ պատասխանում է՝ նշելով 12 նախադրյալներ[92]։

Թովման անզուսպ ատելությամբ է վեր հանում հոգևորականության

89 Նույն տեղում, էջ 121։
90 Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը, հրատարակեց իր յառաջաբանով Կ. Կոստանեանց, Թիֆլիզ, 1892։
91 Նույն տեղում, էջ 54—55։
92 Նույն տեղում, էջ 55—61։

մեջ արմատացած արատավոր բարքերը՝ աներկյուղ խստությամբ գրելով, թե հոգևորականները. «անառակությամբ և արբեցությամբ և պիղծ վարուք շրջէին և ինքեանք կապող և արձակող նստէին Հայոց»[93]։

XV դարի առաջին կեսին ջլատվել էր հայկական եկեղեցու միասնությունը։ Հայկական առաքելական դավանանքի ջատագովները բացահայտ պատերազմ էին հայտարարել մի կողմից պապականության միսիոներների և հայ ունիթորների (միաբարների, որոնք Մեծոփեցու մոտ անվանված են «աղթարմաներ՝ կախարդներ), մյուս կողմից Սսի կաթողիկոսության և քաղկեդոնականության հետ միաբանվելու կողմնակիցների դեմ։ Ժամանակի հոգևորականության առաջավոր թևը քաջ գիտակցում էր այդ պայքարի անհրաժեշտությունը, քանի որ կենսական պահանջ էր զգացվում միավորելու հոգևոր ուժերը, ապահովելու հայոց եկեղեցու միասնությունը, այդ էր թելադրում նաև ազգային մշակույթի ինքնուրույն զարգացման ու ինքնատիպության պահպանման շահերը։ Պատմագիրը դա շատ լավ էր հասկացել։ Այդ պայքարի հիմքը դրել էր Գլաձորի համալսարանի հիմնադիր Եսայի Նչեցին։ Նրա սկսած գործը շարունակել էր իր աշակերտ Հովհան Որոտնեցին, ապա վերջինիս աշակերտ Գրիգոր Տաթևացին և ի վերջո նրա աշակերտները— Հերմոնի վանքի վարդապետ Հովհաննեսը՝ մականվամբ Կոլոտիկը և մեր պատմագիր Թովմա Մեծոփեցին։ Վերջիններս էլ գլխավորեցին Էջմիածնում կաթողիկոսության վերահաստատման գործը։

Գարեգին Հովսեփյանը ճիշտ է նկատում, որ Թովման առհասարակ շատ ժլատ է իր անձի մասին տված տեղեկություններով։ Նրա առանձին ակնարկներից երևում է, որ նա շատ վաղուց է տոգորված եղել Էջմիածնում կաթողիկոսությունը վերականգնելու գաղափարով։ Աղթամարի կաթողիկոսները նրա աչքում դեռևս 1410 թվից ապստամբ են։

1416 թ. Ախալցխայի ավարից դնած «կոպեկայի» առնչությամբ Թովման այսպես է դատում. «Այս Էջմիածնին է պատշաճ, և ոչ այլ եկեղեցեաց, և ինձ մահ ոչ տացէ Աստուած մինչև բացեալ տեսից զդուռն Էջմիածնին»[94]։ Կիրակոս կենսագիրն հաստատում է, որ իսկապես կաթողիկոսությունը Էջմիածնում վերահաստատելու համար ծավալված շարժման ոգին Թովմա Մեծոփեցին է եղել։

«Եւ հանապազ խնդրէր յԱստուած,— գրում է կենսագիրը,— զի Էջմիածինն վերստին նորոգեսցի. կաթողիկոս և թագաւոր նստցի յԷջմիածին... Կատարեաց զխնդրուածս նորա և ելից զփափագ սրտի նորա»...[95]։ Թովմայի այդ փափագի մասին իմացել են ոչ միայն Հայաստանի, այլև Կիլիկիայի հոգևորականները։ Նա հավաստում է, որ ինքը Սսի չորս եպիսկոպոսներից նամակ է ստացել կաթողիկոսական աթոռի անկման նկարագրությամբ, և ինքը «սկիզբն արարեալ ողջունի նամակաց առ ամենայն ազգս, զալ ամենայն միաբանութեամբ ի յօրհնութիւն Էջմիածնին և ձեռնադրութեան կաթողիկոսութեան ամենայն հայկազեան սեռի»։ Այդ նամակներին առաջինն արձագանքում է Հովհաննես Կոլոտիկը, և Արարատյան գավառի տիրակալ Աղուբ (Եաղուբ) բեկի համաձայնությունը ստանալուց հետո՝ հրավիրում է Թովմային գալ կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու։ Վերջինս իր վարդապետներով, եպիսկոպոսներով և քահանաներով գնում է Էջմիածին։ Ահա թե ինչպիսի հրճվանքով է նա նկարագրում այդ պահը. «եկաք ի գիւղաքաղաքն Երևան. ասա էր տեսանել զուրախութիւն և զցնծութիւն ամենայն մերային ազինս. զի փողն զանգակացն գոչէր. երիտասարդքն գոչէին, ծերքն աղաղակէին... մանկունքն խայտային, կանայքն երկրպագութեամբ և լալով զամենեսեան զարհուրեցուցանէին և անօրինացն ուշ եղեալ զարմանային։ ...Զի ի վաղուց հետէ անտերունչ էին կացեալ...»[96]

Պատմագիրը հասել էր իր նպատակին, նրա գործադրած ջանքերը իզուր չէին անցել։ Մտավոր և ֆիզիկական աշխատանքով նա ամեն կերպ ձգտում էր շուտ իրականացված տեսնել իր փափագը. «Բազում աշխատութիւնս կրեաց ինքն վարդապետն և իւր աշակերտքն,— գրում է Կիրակոս կենսագիրը,— ի սրբել տաճարացն Էջմիածնին և Հռիփսիմին և Գայիանին և ի շինութիւն պարսպացն, խցերուն և տանցն, զի ինքն անձամբ աշխատէր և զամենայն յաւժարեցուցանէր ի շինութիւնն»[97]։ Շինարարական իր աշխատանքների մասին ակնարկում է ինքը՝ Թովման իր «Հիշատակարանում»։ Կաթողիկոսի ձեռնադրության օրը «առեալ բահ մի ի ձեռս զառաջին տան հիմնարկութիւնն շինութեանն ես արկի եղբարբք իմովք»[98]։

Վաղարշապատի ժողովին ավելի քան երեքհարյուր հոգևորականներ են հավաքված եղել և Թովմայի ու Հովհաննես Կոլոտիկի նախագահությամբ կաթողիկոս են ձեռնադրել Կիրակոս Վիրապեցուն[99]։ Թովման, մոտ մեկ տարի իր վարդապետներով ու աշակերտներով մնում է Էջմիածնում

93 Նույն տեղում, Հիշատակարան, էջ 56։

94 Նույն տեղում, էջ 62—63։

95 Կիրակոս, տե՛ս Գ. Հովսեփյանի նշվ. աշխ., էջ 8։

96 Թովմա, Հիշատակարան, էջ 68—69։

97 Կիրակոս, տե՛ս Գ. Հովսեփյանի նշվ. աշխ. էջ 10—11։

98 Թովմա, Հիշատակարան, էջ 63։

99 Նույն տեղում, էջ 53—54։

նում և գործուն մասնակցություն ունենում կաթողիկոսի գործերին։ Նրա նախաձեռնությամբ կաթողիկոսը «արձակեաց զԱղթամար ի զուր և յանպատշաճ անիծիցն, զոր վասն փառամոլութեանն արարին Կիլիկեցիքն... զամենայն անեծքս երարձ ի բանադրողաց և ի բանադրելոցն»[100], գրում է կենսագիրը և անմիջապես ավելացնում. «Եւ յայս որ պատճառ և միջնորդ և աւգնական ազատութեան և աւրհնութեան լուսաւոր հոգին եղև, մեծ վարդապետ Թովմա, որ իբրև զարեգակն լուսաւորեր զազգս հայոց»[101]։

Թովմա պատմագրի ուրախությունը երկար չի տևում սակայն։ Կիրակոս Վիրապեցուն նրա թշնամիները, Հովհաննես Կոլոտիկի գլխավորությամբ, երկու տարի հետո աթոռից զրկում և Գրիգոր Մակուեցուն են կաթողիկոս ձեռնադրում։ Այս իրադարձությունը, ինչպես վկայում է կենսագիրը, «շատ նեղութիւն և վիշտ կրեաց (Թովման Լ. Բ.) վասն էջմիածնին և Կիրակոս կաթողիկոսին համար յանաւրինաց և ի սուտ եղբարց»[102]։ Ըստ Թովմայի, Վիրապեցին զրպարտության զոհ էր։ Նա «լիրբ և յանդուգն» է համարում նրա թշնամիներին, զայրույթով խոսում է Կոլոտիկի մասին, որը Աղուր բեգի մոտ «ուրանալ զճշմարտութիւնն ...և ասէ քաւ լիցի, ես ոչ եմ ձեռնադրեալ զնա (Կիրակոս Վիրապեցուն— Լ. Բ.), այլ Թովմէն և ընկերք նորին»[103]։Այս խոսքերից թերևս կարելի է ենթադրել, որ Վիրապեցու ընտրության ժամանակ Թովմայի կողմնակիցները զորեղ են եղել։ Ի դեպ 1442 թ. մի հիշատակարանում կարդում ենք. «Ի յայսմ ամի եղև ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ, որոց գլուխ մեծ բարունապետն Թովմա և Յովհաննէս վարդապետն»[104]։

Թովմայի Հիշատակարանի վերջին մասն իսկապես մի դառն ողբ է և խարազանում անցյալի ու իր ժամանակի հոգևորականությանը, միաժամանակ ջերմ հայրենասերի սրտաճմլիկ խոսք։ Այնտեղ կարդում ենք. «աւա՜ղ անմտութեան աղգիս. աւա՜ղ թշուառութեանս. աւա՜ղ կուրութեանս աշխարհի, աւա՜ղ տխմարութեանս. աւա՜ղ հիքութեանս, աւա՜ղ չարութեանս, թե ո՜րքան լուսաւորս խաւարեցուցին աղգս Հայոց. ո՜րչափ աստուածարան բերանս խցեցին. քանի սիւնս եկեղեցւոյ տապալեցին. քանի քահանայապետս ի հող մահու իջուցին»[105]։

---

100 Կիրակոս, տե՛ս Գ. Հովսեփյանի նշվ. աշխ. էջ 8—9։

101 Նույն տեղում, էջ 9։

102 Նույն տեղում, էջ 10։

103 Թովմա, Հիշատակարան, էջ 80։

104 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ ԻԲ։ Ընդգծումը հրատարակչինն է։

105 Թովմա, Հիշատակարան, էջ 82—83։

* * *

Մեծոփեցին որոշակի տեղեկություններ է հաղորդում XV դարի առաջին կեսում Հայաստանում ունիթորական շարժման ծավալման և նրա դեմ կազմակերպված պայքարի ձևերի մասին։ Պատմագրի վկայությամբ ունիթորների՝ աղթարմանների և քաղկեդոնականների դեմ մաքառողների շարժումը գլխավորում էին Որոտնեցու երեք աշակերտները՝ Գրիգոր Տաթևացին՝ «անմար արեգակն, երկրորդ լուսաւորիչն», «առատ և ճոխ բանիւ, ոչ գոլով նման նմա յազգս ամենայն», Սարգիս մեծ վարդապետը, որ «ունէր մարգարեութեան ոգի և Ադամայ որդւոց մէջ խոնարհութեամբ և հեզութեամբ իւր նմանը չունէր», «պատկառելի քաջ վարդապետն Վարդանը», որը «իմաստութեամբ, խրատաւուք և առաքինութեամբ» հայոց բոլոր վարդապետներից բարձր էր։ Իրենց ուսուցչի նման նշանավոր այս վարդապետները իրենց շուրջն էին համախմբել համախոհներին ու բազմաթիվ աշակերտների, նպատակ ունենալով նախապատրաստել նրանց «աղթարմանների» կամ «ճշմարտության ուրացողների» դեմ մաքառելու համար։ Նշված վարդապետներն իրենց ուսուցչի նման, ամեն մեկն առանձին վանք էր ընտրել, ծավալել հոգևոր-քաղաքական ու մանկավարժական գործունեություն։ Նրանց շնորհիվ Տաթևի, Ապրակունիսի, Սաղմոսավանքի, Խառաբաստայի և Մեծոփա վանքերը իրենց ժամանակաշրջանի լուսավորության կենտրոններն էին։

Ստորև Թովմայի կողմից բերվող դեպքի նկարագրությունը ցույց է տալիս նախ հայ լուսավորչականների մոտ արմատացած ատելությունը հանդեպ ունիթորները և ապա նրանց դեմ պայքարելու միջոցները։ Նա պատմում է, որ մի անգամ ունիթորներից մեկը գնացել է Ապրակունիսի վանքը վերը նշված Սարգիս վարդապետի մոտ և հայտարարել «ես երբեմն արեղայ ի ձէնջ եղեալ եմ, բայց սատանայ կորոյս զիս և արար քաղկեդոնական, և սիրտ իմ հանապազ խոցի և դէմս ձեր անարգութեան և հայհոյութեան»։ Այս ասելուց հետո նա Սարգսին տվել է Առաքինութեանց գիրքը, որ ունիթորները թարգմանել էին լատիներենից. միևնույն ժամանակ հայտնել է, որ ճագարակեր Կարապետ վարդապետի աշակերտները այդ գիրքը ուսումնասիրել են և մտադիր են գալու Սարգսի մոտ նրան հարցեր տալու։ Սովորաբար ունիթորները իրենց հմտությունները ցույց տալու և հակառակորդների ակարությունը ապացուցելու նպատակով գալիս էին Ապրակունիսի վանքը, որ իրենց կենտրոնից հեռու չէր (Երնջակի մոտերը) և հարցեր էին տալիս Սարգսին։ Այս անգամ էլ նրանք եկել են, և Սարգսից ստանալով իրենց հարցերի պատասխանը՝

հեռացել։ Սարգսի աշակերտները, որ վաղուց լսել էին Առաքինության գրքի մասին, խնդրել են իրենց վարդապետից, որ նա այդ գրքի մասին դասախոսություն կարդա։ Սարգիսը կատարել է նրանց ցանկությունը, սակայն հետևանքը վատ է եղել, որովհետև աշակերտները տակավին այնքան լավ չէին ըմբռնել եկեղեցու նախնի սուրբ հայրերի վարդապետությունը, որ այդ դասախոսությունը նրանց չվնասեր, ուստի ցավով նկատում է Թովման, նրանք «վաղվաղակի տկարացան ի հաւատոց և կամէին աղթարմայ լինել» իրենց վարդապետից դաղտնի։ Վանքի փակակալ Ստեփանոս վարդապետը իսկույն իմացել է աշակերտների մոլորվելը։

Պետք էր դիմել վճռական միջոցների։ Նրանք Հովհան Որոտնեցուն անմիջապես օգնության են կանչել, վերջինս իր բազմաթիվ աշակերտներով ու քահանաներով եկել է, ստուգել եղելությունը, հրավիրել է իր մոտ Սարգսի աշակերտներին, հանդիմանել ու դատապարտել, հետո «տարեալ էդին ի բանտի, և զոմանս յերկաթի հարեալ, և զոմանս բրածեծ արարին»[106]։ Իսկ Սարգիս վարդապետի նզովքի ազդեցության տակ աշակերտներից ոմանք «գետակուր եղեն, ոմանք խայտառակեալ մերկս շրջէին, կէսք ի նոցանէ փախուցեալ գնացին յաշխարհն Ֆրանկաց, և ի նոցա միջի չարախօսութիւն արարեալ՝ ի պղնձի եդեալ եփեցին, կէսք ի նոցանէ զղջացեալք ապաշխարեցին, որպէս Ատոմն Մոկացին»[107]։ Թովմայի վկայություններից պարզվում է, թե որքան ազդու են եղել Առաքինության գրքի գաղափարները, որ մի դասախոսությունից աշակերտները, այն էլ այնպիսի վարդապետի՝ ինչպիսին էր Սարգիսը, մոլորվել են և չեն թաքցրել Որոտնեցուց իրենց գայթակղությունը։

Այն կրքոտությունը, որ Թովման հանդես է բերում այս միջադեպի նկարագրության մեջ, արդեն իսկ ցույց է տալիս նրա վերաբերմունքը հանդեպ ունիթորները, միաժամանակ կիրառված դաժան միջոցառումները խոսում են այն անհանդուրժողական մթնոլորտի մասին, որ տիրել է հայոց վարդապետարաններում։

Թովմայի հաղորդումներից պարզվում է նաև, որ աղթարմաների դեմ մաքառող վարդապետները նրանց դեմ զինվում էին նրանց իսկ զենքերով, ուսումնասիրում էին նրանց գրքերը, նրանց հնարագիտություններն ու մեթոդները։

Վերևում հիշված քաղկեդոնական դարձած աբեղան Սարգիս վարդապետին Առաքինության գիրքը տալիս է ու ասում. «Ահա քեզ գիրք առաքինութեանց. զի պատասխանի տացես նոցա»։ Սարգիսը «յոյժ ուրախացեալ փառս ետ Աստուծոյ մեծաւ գոհութեամբ»[108] նկատում է Թովման։ Որպեսզի պատասխան տա Սարգիսն իր մոտ եկող ունիթորներին, նա պետք է այդ գիրքը կարդար։

Թովման վկայում է նաև, որ իր ժամանակ Մերդինի շրջանում կռապաշտ արևորդիներ են բնակվել։ Հաղորդելով Թամուրի դեպի Մերդին կատարած ասպատակության և բնակչության գերեվարման մասին, գրում է. «Գերեցան եւ զչորս գեղս արեւորդի կռապաշտից զՇոլ, զՇմրախ, զՍաֆարի, զՄարաշի իսպառ կործանեաց։ Եւ յետոյ դարձեալ սատանայի հնարիւք բազմացան ի Մերդին և յԱմիթ»[109]։

* * *

Պատմագրին, մղձավանջային այն ժամանակներում, ուրախացրել է այն ամենը ինչ պատիվ է բերել իր հայրենիքին ու ժողովրդին, լինի դա անցյալից, թե՛ իր ապրած օրերից, լինի դա հաղթանակ թշնամու նկատմամբ, թե՛ հերոսական պաշտպանություն, խիզախություն, թե՛ մարտիրոսություն, համատեղ պայքար, միասնության փորձ, լուսավորություն տարածող վանք-վարդապետարան, գիտուն ու հռչակավոր վարդապետ, գերիների ետ գնում, խաղաղություն և շինություն և այլն։ Ուրախացել է և առիթ բաց չի թողել գրի առնելու ու հետագա սերունդներին թողնելու խավարում ցոլացող լուսաշող այդ ծայրերը։

Թովման հիացմունքով է գրում ոմն տանուտեր Մարտիրոսի մասին, որ համառ դիմադրություն է ցույց տվել Թամուրին «Իսկ բարեպաշտ տանուտէր մի Մարտիրոս անուն՝ յոյժ զօրեղ զօրական, ողորմած և աղքատասէր ի գեղջէն Կողբայ, ելեալ ի լեառն Բարդող... յոյժ արի և քաջ մանկամբք գեղջն՝ ապրեցոյց զամենայն հաւատացեալսն մեծաւ պատերազմաւ և սրտապինդ զօրութեամբ եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ՝ոչ կարացին առնուլ զլեառն զայն»[110]։ Հետագայում մի Թուրքմեն միայն նենդությամբ է կարողացել սպանել այդ հերոսին։

Մատթեոս Ուռհայեցուց հետո, Թովման երկրորդ պատմագիրն է, որ գովերգում է հայ կնոջ արիությունը։ «Բայց զարմանալի գործ մի գործեցաւ,— գրում է նա, —ի սմին աւուր, զի կին մի երկիւղած եւ ճաւատարիմ ի Մուշ գաւառէ ունելով զորդի մի յոյժ պատուական եւ բաղձալի, եւ

106 Թովմա, էջ 40։

107 Նույն տեղում։

108 Նույն տեղում, էջ 37։

109 Նույն տեղում, էջ 15—16։

110 Նույն տեղում, էջ 18։

դէմք կերպարանացն իբրև զերեսս հրեշտակի, զոլով ամաց իբրեւ եօթանց կամ ութից. զի յելանել զօրացն արեւելից ի լեառն Խութայ, բաղումք ի քրիստոնէից աստ եւ անդ փախուցեալ կային ի պրակս մայրիցն գաղտագողի։ Եւ տեսեալ զնոսա անօրինացն՝ արշաւեալ ի վերայ նոցա կամէին գերել զնոսա։ Իսկ ողորմելի մայրն սրբասէր եւ երկիւղած յեսու դարձեալ՝ տեսանէր զի գային զկնի, եւ մերձենային առնուլ զմանուկն։ Առեալ սուր ի ձեռին իւրում զենեաց զորդին ցանկալի եւ իբրեւ զգառն անմեղ պատարագեաց ի սէր գառին Յիսուսի... Եւ ինքն մայր մանկան սակաւ մի յառաջ ընթացեալ՝ էլ ի վերայ բարձրաւանդակ վիմի. ի վայր ընկէց զինքն...»։ Այնուհետև Թովման ասում է, «Եւ զայս մի ոք երկրայութեամբ եւ կարծեօք դիտեսցէ, զի մեք իսկ վարդապետօք եւ աշակերտօք գնացաք ի Սուրբ Կարապետն, եւ դարձեալ եկաք ի Մուշ եւ բերաք զտեսողսն եւ զլսողսն՝ ճգնաւոր հայրն զԴաւիթ կրօնաւորն... Եւ ի նոցանէ զճշմարիտն ստուգեցաք, եւ ձեզ յիշատակ օրհնութեան Աստուծոյ թողաք»[111]։

Գոհունակությամբ է գրում Թովման նաև ժողովուրդների համատեղ պայքարի մասին։ Իսքանդարի կողմից Արծկե քաղաքի պաշարման կապակցությամբ նկատում է. «Եւ պատերազմ մեծ եղաւ ի վերայ. եւ քրիստոնեայքն եւ այլ ազգիքն գուն քաջութեան գործեցին»[112]։ «Բայց արք գաւառին Սասնոյ եւ Խութայ հաւատացեալք եւ անհաւատք յազգէն Մարաց, քաջալերեալք ի միմեանց՝ դիմեցին ամենեքեան ի կողոպտել զաւար Զաղաթային, եւ լցան աւարօք եւ գանձիւք նոցին»[113]։ Վրաց Գեորգի թագավորը և իր երկու եղբայրները, երբ իմացել են Թամուրի շար նպատակների մասին, «Վաղվաղակի զօրաժողով եղեն, և զամենայն ազգն Վրաց և Հայոց յամրոցս արկեալ պահէին»[114]։

Պատմագիրը սիրո և միասնության գաղափարն է քարոզում. նա գրում է. «Բայց ազաչեմ զվերջին եղբարսդ որ գայք զհետ՝ եպիսկոպոսք և վարդապետք ...այս սուտ և անցաւոր կենացս համար մի նենդէք ի սերն եղբայրական. զի ամենայն որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է. և սիրովն եղբայրական ծնանի սէրն աստուածական. և որ ոչ ունի սէր աստուածական ոչ կարէ միաւորիլ յԱստուածն պետական...»[115]։

Թովման համակրանքով է խոսում հայկական իշխանական տների, առանձնապես օրբելյանների շառավիղների մասին, «որք իբրեւ զճիւռ մի ողկուզաց էին մնացեալ ի մէջ ազգիս»[116]։ Ցավով նշելով, որ Միրան շահի որդու՝ Օմարի կողմից բռնի դավանափոխ են արվել և քշվել Սամարղանդ Որոտանի տէր Բուրթել և Սմբատ Օրբելյան եղբայրները, Եղեղեացի տեր Տարսայիճը, Մակուլի տեր Սուրղաթմիշը, որը «սուտ և յերկաբնակ» ազգարմա էր դարձել, և Ազիտան անունով մի ազատորդի Արարատյան գավառի Աղցուաց գյուղից»[117], հետո սակայն գոհունակությամբ հավաստում է, որ կարճ ժամանակից հետո նրանք «եկին ի հաւատս» և վերադարձան հայրենիք»[118]։

Թովման առանձին հմայքով է արտահայտվում ուսումնական կենտրոններ դարձած վանքերի, հատկապես Տաթևի և Մեծոփի ու վարդապետարանների մասին։

Մեծոփա վանքում Հովհաննես վարդապետի ծավալած գործունեության կապակցությամբ նշում է. «զարդարեաց զսուրբ ուխտն ժամօք, աղօթիւք եւ պատարագօք, ընթերցմամբ գրոց եւ ուսումնականօք եւ գեղեցիկ կարգաւորութեամբ, ծառօք եւ տնկօք իբրեւ զդրախն եդեմական։ Եւ գային հաւատացեալքն եւ շարժէին ի բարին, եւ ասէին, ահա տեսաք զԵրուսաղէմ»[119]։

Տաթևի վանքը նրա համար «երկնահանգէտ մեծարգո ուխտ» է, «առաքելական աթոռ»[120]։

Երախտապարտ աշակերտը մեծ ակնածությամբ է խոսում իր ժամանակաշրջանի հայ մշակույթի անխոնջ մշակների ու հատկապես իր վարդապետների մասին։ Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու մասին նրա գովքը վերևում արդեն բերվել է։ Վերջինիս մասին, որ նրանց «ուսուցանէր զգիրս արտաքին իմաստասիրացն»[121], «երկրորդ Աստուածաբան, Յովհան Ոսկեբերան»[122]-ը «ապշեցոյց զամենեսին առաւել քան զիմաստունսն Հելլենացւոց»[123] գրում է նա։ Սարգիս վարդապետը «ունէր հոգի մարգարէութեան... եւ հեղութեամբ եւ խոնարհութեամբ ոչ գոլով նման նմա յորդիս Ադամայ... Եւ դէմք կերպարանաց իւրոց ահաբեկէր եւ զար-

111 Նույն տեղում, էջ 25—27։ Անդգծումները հրատարակչինն են։
112 Նույն տեղում, էջ 89։
113 Նույն տեղում, էջ 27։
114 Նույն տեղում, էջ 66։
115 Նույն տեղում, էջ 116—117։

116 Նույն տեղում, էջ 67։
117 Նույն տեղում, էջ 67—68։
118 Նույն տեղում, էջ 73։
119 Նույն տեղում, էջ 57։
120 Հիշատակարաններ, մասն Ա., էջ 78։
121 Թովմա, էջ 51։
122 Նույն տեղում, էջ 34։
123 Նույն տեղում, էջ 51։

մացուցանէր զամենայն մարդ, մանաւանդ զազգս այլազգեաց մինչզի ազգ Չաղաթային յերկրպագութիւն գային նմա... եւ ժողովեցան առ նա բազումք ի գրոց աշակերտաց եւ ի կրօնաւորաց եւ յուսումնասիրաց աւելի քան 60 կարգաւորք եւ ուսումնականք։ Եւ ուսոյց զամենայն ծովեզերս Վասպուրական դաւառիս ուսմամբ եւ գիտութեամբ»[124]։

«Վարդապետն հայոց Վարդան... լուսաւորեաց եւ պայծառացոյց զգաւառս Արճիշոյ, զվերջինն առաւել պայծառ քան զառաջինն[125]։

Դիտելի է այն կարևոր հանգամանքը, որ Թովմայի Պատմության մեջ կարմիր թելի նման անցնում է նրա կարեկցական վերաբերմունքը հանդեպ աղքատներն ու ընչազուրկները, և նա հոգևոր գործիչների ու իր վարդապետների, անգամ օտար բռնակալների (բացառիկ դեպքերում) բնութագրման մեջ, որպես դրական հատկանիշ ընդգծում է նրանց՝ աղքատների նկատմամբ ցուցաբերած բարյացակամությունը և հոգատարությունը։ Իր ողբերում հատուկ ընդգծում է աղքատների անելանելի ծանր վիճակը։

Իր ուսուցիչ Սարգսի աշակերտ Արծկեցի վարդապետ Գրիգորը «ոչ պարապեալ վարդապետական դասի վասն սառնացեալ բարուց ուսումնականաց մերում ազգի։ Այլ տիւ և գիշեր գիրս գրէր, և զամենայն աղքատս կերակրէր, եւ սիրէր զողորմածութիւն, և զամենայն վարդապետ եւ կարգաւորս ի նոյն յորդորէր։ Ոչ գոլով նման նմա ողորմած և մարդասէր և սպասաւոր աղքատաց և տնանկաց»[126]։

Վերևում բերվեց Թովմայի վկայությունները նվաճողների վարած ծանր հարկային քաղաքականության մասին։ Այստեղ ասենք, որ նրա կարծիքով այդ քաղաքականության նպատակն էր. «Եւ նոքա եդին խարաճ եւ հարկս մեծամեծս ի վերայ ամենայն ազգիս թերևս վասն բազում նեղութեանց դարձցին ի կրօնս մեր», և որպես դրա ապացույց ցավով նշում է. «Եւ ոմանք գնացեալ խառնեցան ի քուրդն Բաղիշոյ, Մշոյ եւ Սասնոյ վասն աղքատութեան եւ սովոյն դառնութեան ելեալ ի հաւատոց դարձան յանհաւատութիւն աւելի քան զ500 ոգի»[127]։

Արճեշի կապակցությամբ տեսանք, թե ինչպես է նա խարազանում սուտ անուն տանուտերերին, որոնցից ողբալով և հառաչելով գանգատվում են մերկացյալներն ու աղքատները[128]։

124 Նույն տեղում, էջ 36—37։
125 Նույն տեղում, էջ 49։
126 Նույն տեղում, էջ 42։
127 Նույն տեղում, էջ 95։
128 Նույն տեղում, էջ 112։

Պատմագիրն իր ողբն ավարտում է հետևյալ ընդհանրացումով. «վայ եւ եղուկ է ինձ հազար անգամ ի մի բերան. զի զոր անգթութեան մեղացն ի դատաստանի սուրն այսօր ի քաղաքիս մեր տեսաք. զի ամենայն գերին ի 1.000 թանկայ վաճառէին. եւ այնքան յաղքատութիւն անկեալ կամք ամենայն ազգս. քաղաք եւ գիւղք, վանք եւ ագարակ, զի մին քաղաք եւ մին գիւղ գերի մի գնել ոչ կարէ վասն դառն աղքատութեան տառապանաց, այլ սուգ եւ ողբ ի բերան առեալ՝ աղիողորմ դառնութեամբ եւ լալագին հեծեծանօք լամբք եւ ողբամբ զկորուստս մեր. զի անմեղ մանկունք գնեալ արեամբ Քրիստոսի, ժողովուրդ, սուրբ գառինք եւ անարատ հարսունք մատնեալ անօրինաց՝ իսպառ կորեան, եւ ոչ ոք էր որ օգնէր, եւ ոչ որ ի թիկունս հասանէր»[129]։ Այս հուսալքում չէր, այլ իրողության արձանագրում։ Պատմագիրը մեծ հույսեր էր կապել, ինչպես վերը տեսանք, իր փայփայած գաղափարի հետ, այն է Վաղարշապատում տեսնել հայոց կաթողիկոսության և թագավորության վերականգնումը, որի իրականացման համար նա նվիրել է իր ողջ կյանքը և այդ գաղափարը կիսով չափ իրականացրել։

Այդ իրականացման կապակցությամբ ահա թե ինչպես է երախտապարտ աշակերտը՝ Կիրակոս կենսագիրը, բնութագրել իր ուսուցչին. «իբրև զարեգակն լուսաւորէր զազգս հայոց։ Զի արեգակն զխաւարն հալածէ և սա զխաւարն անգիտութեան և անհաւատութեան, զխաւարն անյուսութեան և աստելութեան, զխաւար ծուլութեան և հպարտութեան, զխաւար բղջախոհութեան և անիրաւութեան, զխաւար անկարգութեան ի ժամատեղաց և զամենայն տեսակ մեղաց, որ խաւար կոչի ի գրոց... սուրբ վարդապետս մեր զամենայն մարդ յօժարեցուցանէր և ջերմացուցանէր ի տեսակս առաքինութեան աստուածայնոց և մարդկայնոց»[130]։

Թովման իր Պատմությունը ավարտել է Ջահան շահի կողմից 1440 թ. Տփղիսի ավերումով։

Մեծոփեցու պատմագրական ժառանգությունն այնքան էլ մեծ չէ, սակայն պարունակած նյութով այն անգնահատելի սկզբնաղբյուր է Հայաստանի ու հարևան երկրների XIV դարի վերջի և XV դարի առաջին կեսի պատմության ուսումնասիրության համար, Ջինգիզ խանի «արժանավոր» հաջորդների աշխարհավեր գործունեության ու նրանց զոհը դարձած ժողովուրդների ապրած ամենամռայլ ժամանակաշրջանի մասին ճիշտ պատկերացում ստանալու համար։

129 Նույն տեղում, էջ 122։
130 Տե՛ս Դ. Հովսեփյան, Նշվ. աշխ., էջ 9—10։

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՑԻ

XVII դարի սկզբին հայ պատմագրության զարթոնքի առաջնակը դարձավ Դարանաղի գավառի Կամախ քաղաքում 1576 թ. ծնված, ականավոր եկեղեցական գործիչ Գրիգոր վարդապետ Կամախեցին կամ Դարանաղցին՝ «Բուք» մականվամբ։ Մահացել է 1643 թ. վաթսունյոթ տարեկան հասակում «երկրորդ հայրենիքում»՝ Ռոդոստոյի-Հոոդոսի (Թեքիրդաղ) մեջ։ Նրա տապանաքարի վրա գրված է «Այս տապան հանգըստեան Քեմախցի Գրիգոր աւագ վարդապետի, Սա ծերացեալ լի աւուրքք ԻՂԲ ամսոյն սեպտեմբերի հանգեաւ ձեռամբ սորին բեւեռ փայտին փրկչական ածաւ այս վայր աղբիւր բուժիչ մաքրական որ եւ նախորդ հովիւ կարգի քաջարթուն հովուել զգաղթեալ զիւր հօտ նորեկ բարեմոյն»[1]։

Ննդյան տարեթվի մասին «Ժամանակագրության» մեջ երկու տեղեկություն է հայտնում, մեկը 1583 թ. Երզնկայի մեծ երկրաշարժի կապակցությամբ գրելով, թե այդ տարին ինքը 7 տարեկան է եղել[2], մյուսը՝ «Ցայսմ ամի (1590— Լ. Բ.) զմեզ մանուկ գոլով չորեքդասանամեայ՝ բռնութեամբ արեղայ օրհնեցին»[3]։

Դարանաղցին էլ Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Օրբելյանի, Աբրահամ Կրետացու նման, իր պատմական երկերը հեղինակելու հետ, միաժամանակ գրել է նաև իր կենսագրությունը, սակայն ավելի մանրամասնորեն։ Մանուկ հասակում որբանալով, թշվառ կյանք է վարել, կրել ժամանակի դառնություններն ու արհավիրքները։

Մինչև արեղա դառնալը Դարանաղցին հովվություն է արել Սեպուհ լերան վանքերում գլխավորապես Ծնանաոճի Ս. Աստվածածնի վանքում, որ իր «սննդեան տեղին է» համարում։ «Ցառաջն նախիր արածեաք,— նշում է նա,— եւ ետ օրհնելոյն դարձեալ եդին ի տաւարածութիւն։ Թէ զմեր որպես թշվառութիւնն որ ի ծննդենէ ի վեր՝ գրեմք, թե զորբութեամբ սնանիլն, թե զանտէրունչ լինելն եւ անայցելու եւ անխնամակալն ի վանորայսն, ոչ ուսուցանող եւ ոչ խրատու, որ թէ գրեմք մի ըստ միոջէ, նա անհաւատալի կու թուի բազմաց»[4]։

Մեր պատմագիրներից, թերևս, ոչ մեկը այնքան թափառական ու փախստական կյանք չի վարել ու փորձանքների ենթարկվել, ինչպես Դարանաղցին։

1621 թ. գրած հիշատակություններից մեկում կարդում ենք. «Եւ դարձեալ փախստեայ գոլով ի յահէ նեղչաց, եկաք յԿստամբօլս՝ թե դարձեալ երթանք յԵրուսաղէմ, և արգել զմեզ սատանայ, զի բազում անցք անցին ընդ մեզ, որ ոչ գիր կու տանի եւ ոչ լեղուաւ ճառել ոք կարէ։ Դարձեալ աստուածային այցելութեամբն եւ խնամօք ողորմութեամբ նորին զերծաք ի յանզերծանելի վտանգիցն եւ գնացաք յԵրուսաղէմ, երեք տարի շրջեցաք ասս։ և անդր եւ ոչ գտաք ուրեք հանգիստ, եւ դարձեալ եկաք, այլ աստէն եւ ոչ ունիմք դադարումն...»[5]։ Աստվածաշնչի ինքնագիր մի հիշատակարանում Դարանաղցին հավաստում է. «Ով եղբարք, մեր թշուառութիւնս ձեզ յայտ լիցի, որ չունիմք ուրեք դադարումն վասն չարութեան ժամանակիս, որ զայս երկու թուղթս և մէկ երէսն ի վերայ ոտից շուրջ գալով եմ գրեր ի գիւղն, որ Մոխրի կոչի»[6], «Զայս մէկայլ երեսս ի մեր հօրեղբօրն պաղչայն գրեցի մեծաւ տաժանօք»[7]։

Աստվածաշունչը Դարանաղցին ընդօրինակել է 17 տարվա ընթացքում՝ թափառական կյանք վարելու պատճառով։

Սակայն Դարանաղցին սոսկ ընդօրինակող չի եղել։ 1622 թ. գրած հիշատակարանում նա նշում է. «Արդ՝ եղեւ աւարտ եւ զրաւ աստուածաշունչ Բուրատանի սուրբ գրոցս Հին եւ Նոր կտակարանաց, որ եւ զկտակ երկոտասան նահապետացն եւ զԱսանեթի՝ կնոջն Յովսեփայն յաւելեաւք գրեցի եւ զբովանդակն ամենայն, ոչ թե ի միոյ օրինակէ՝ այլ ի զանազան յայլեւայլ օրինակաց, յաղագս միանգամայն չգրելոյն եւ տարտարոս գոլոյն եւ հանդիստ ուրեք չգտանելոյն՝ վասն չարութեան ժամանակիս, որպէս յայտ է յայլեւայլ գրերաց եւ ի փոփոխելոյ գրչաց, տեղաց եւ ժամանակաց»[8]։

1636 թ. Երուսաղեմի Սուրբ Հակոբ վանքին նվիրած Աստվածաշնչի

1 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրապարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, Նշանյանի գրած Դարանաղցու կենսագրության էջ ԾԱ։ Այսուհետև՝ Դարանաղցի։

2 Նույն տեղում, էջ 8։

3 Նույն տեղում, էջ 22։

4 Նույն տեղում, էջ 22—23։

5 Նույն տեղում, էջ 616։

6 Նույն տեղում, էջ 76։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում, էջ 610։

վերջում գրած հիշատակարանում Դարանաղցին իրեն աստվածաբան վարդապետ է համարում. «Յիշեցէք... վերջին ստացողի աստուածաշնչի՝ Թաքիրտաղի առաջնորդ Տէր Գրիգոր աստուածաբան վարդապետին, որ մականուն Բուգ վերաձայնի»[9]։

Դարանաղցին ժամանակի գիտուն և մեծ հեղինակություն վայելող վարդապետներից մեկն է եղել։ Նրան բարձր են գնահատել ժամանակակիցները։ Այս տեսակետից ուշագրավ է հետևյալ փաստը.

Էջմիածնում մեռոն եփելու արարողությանը մասնակցելուց հետո, երբ Դարանաղցին ցանկացել է վերադառնալ իր թեմը «Դաւիթ կաթողիկոսն արգելեաց զմեզ թէ՝ Երևան քաղաքին եւ ամենայն երկիրն զքեզ կու սիրեն լաւ քան զամենեսեան՝ թէ կաթողիկոս. թէ վարդապետ, ու զինչ կու հրամայես՝ թէ օրինաց, թէ այլ ինչ, նա՛ սիրով կու կատարէն ու մեզ չեն լսեր բնաւ»[10]։

1624 թ. Ռոդոսթոյում ընդօրինակած «Հարանց վարք»-ի գրիչ լեհացի Նիկողոս դպիրը իր հիշատակարանում Դարանաղցուն բնութագրում է իբրև, «Ամենագովելի, երջանիկ, ընտրեալ, պատուելի եւ աստուածահաճոյ ամենայն գովութեանց արժանաւորեալն, սուրբ եւ քաջ հռետորն եւ արիաջան բարունապետն, զտէր Գրիգոր եռամեծն եւ խրատակրօն յոյժ ճգնողի, անձանձրալի խրատող եւ ուսուցանող անզգամից»[11]։

Նույն Ռոդոսթոյ քաղաքում ոմն գրիչ Կիրակոս 1639 թ. իր ընդօրինակած «Կանոնագիրք եւ Պատարագի Մեկնիչի» վերջում գրած հիշատակարանում նշում է. «...ի հայրապետութեան էջմիածնայ Տէր Փիլիպպոսին եւ սեղուոյս առաջնորդութեանն, քաջ հռետոր եւ ջատագով յօրինացն Աստուծոյ, մեծ և անուանի եւ ամենայն իմաստիւք լի, Դարանաղու Գրիգոր վարդապետին»[12]։

Դարանաղցին երախտագիտությամբ է հիշում իր առաջին ուսուցիչներին։ Ողբալով իր և իր ժամանակի վիճակը, նա գրում է ոմն Պարոն ճգնավորի կամ միայնակյացի վերաբերյալ, որը 20 տարուց ավելի ճգնավորական կյանք է վարել Սեպուհ լեռան Շիկի քար կոչված վայրում, նրա համբավը տարածվել է ամբողջ երկրով մեկ, շատերը գնացել են նրա մոտ՝ մենակյացի ապրելակերպը ուսանելու։ Ճակատագրի բերմամբ Սեպուհ լեռան վանքերից մեկում Պարոն ճգնավորը հանդիպել է մանուկ Դարանաղցուն ու նրան վերցրել է իր խնամակալության տակ և ուսուցանել

9 Նույն տեղում, էջ 618։

10 Նույն տեղում, էջ 53։

11 Նույն տեղում, էջ ԾԸ։

12 Նույն տեղում, էջ ԾԸ-ԾԹ։

ու դաստիարակել է։ Երախտապարտ աշակերտը նրա մասին գրում է. «Յոյժ բազմահնար եւ մեծահանճար էր եւ աշխատասէր եւ բարուքն ողորմած էր եւ գթած առ ամենայն... Որ եւ զիս տրուպս ամենեցուն Գրիգոր բանի սպասաւորս, որ մանուկ էի և յոյժ տխմար եւ անտէրունչ ի հոգաբարձու խրատողաց, եւ իւր բարի խրատովն զգաւնացոյց զմեզ եւ բաղում ողոքական եւ սաստկական հնարիւք յորդորեց եւ հաւանեցոյց մեզ հետեւել գրոց արբանեկութեան...»[13]։

1590 թ. աբեղա դառնալուց հետո Դարանաղցին բնակություն է հաստատել Սեպուհի Ս. Լուսավորիչ վանքում, ուր մնացել է մինչև 1597 թ. Պարոն ճգնավորի հսկողության ու խնամակալության ներքո։ Այնտեղ էլ ստացել է քահանայական աստիճան։ Պարոն ճգնավորը նպատակ էր դրել Դարանաղցուն հասցնել վարդապետական աստիճանի, իսկ դրա համար անհրաժեշտ էր, որ նա աշակերտեր անվանի վարդապետներից որևէ մեկի մոտ, և քանի որ իրենց կողմերում այդպիսին Երզնկացի Ղազարն էր, ուստի որոշել էր նրա մոտ և ուղարկել Դարանաղցուն։ Սակայն հենց այդ օրերին, հանգամանքների բերումով, Բաբերդցի Սրապիոն վարդապետը հայրենիք վերադառնալու ճանապարհին, Ալփոշի գյուղում, հանդիպում է Դարանաղցուն ու առաջարկում է նրան՝ իրեն աշակերտել։ Վերջինս, հակառակ միաբանների ու իր խնամակալի՝ Պարոն ճգնավորի դիմադրությանը, որը ցանկանում էր իր որդեգրին պահել իր մոտ՝ իր հսկողության տակ դաստիարակություն տալ, համաձայնվում է գնալ աշակերտել Սրապիոն վարդապետին, որն Վահանաշեն գյուղի Ս. Ստեփանոս վանքի առաջնորդն էր և աշակերտներ էր պատրաստում վարդապետության աստիճան ստանալու համար[14]։ Սրապիոնին Դարանաղցին համարում է «քաջ հռետոր»[15], իր հոգևոր հայրը, որից և 1603 թ. ստացել է «գավազան վարդապետական իշխանության»[16]։ Աստվածաշնչի հուշագրերից մեկում էլ նրա մասին գրում է, հիշեցեք «զամենայն հոգեւոր երախտաւորքն մեր, որք ըստ հոգւոյ եւ մարմնոյ վարժիչք եւ խրատիչք եղեն մեզ, մանաւանդ զհոգեւոր բաղմերախտ հայրն մեր Սրապիոն քաջ տելետն եւ աստուածաբան վարդապետն»[17]։ Դարանաղցին ամեն առիթով միշտ ընդգծում է Սրապիոն վարդապետի «քաջ հռետոր» լինելու հանգամանքը։

Պատմագիրը գրչության արվեստի հմուտ ու ճանաչված մասնագետ է

13 Նույն տեղում, էջ 595։

14 Նույն տեղում, էջ ԺԱ-ԺԲ։

15 Նույն տեղում, էջ 40։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, էջ 603։

եղել, պատրաստել է շատ «գրոց աշակերտ»ներ՝ գրիչներ, ձեռագրեր ընդօրինակողներ, որոնց մասին նշում է «Ժամանակագրության» մեջ[18]։

Թերևս այդ է նկատի ունեցել լեհացի Նիկողոս դպիրը, որն իր հիշատակարանում նրան համարում է «արիաջան բարունապետն»։

Դարանաղցին մեծ վաստակ ունի «գրոց արբանեկութեան» բնագավառում։ Նա հավաքել ու անձամբ ընդօրինակել է բազմաթիվ գրքեր, որոնցից շատերը փրկվել են կորուստից և հասել մեզ։ Պատահական չէ, որ նա Սրապիոն վարդապետի մասին գրում է. «Մեծ Սրապիոն արարեալ էր պատմագիրս գեղեցկայարմարս եւ բերելով մինչ ի թվականին ՌՆ (1601) հասուցեալ, եւ ոչ է յայտ՝ թէ զի՞նչ եղեւ գրեալն, այլ ծածկեալ եղեւ ի նախանձոտաց եւ յանհաւանից...,— և ընդգծում է,— երկնչիմ՝ գուցե եւ մերս առնիցեն նմանապէս, ...զի տացե շնորհս լսողաց եւ ցանկասցին ի գաղափար օրինակել սորին եւ արժանասցին արքայութեան երկնից»[19]։ Բանից պարզվում է, որ իր գրած «Հարանց վարք» գիրքը, որ կրել է «Պատմութիւն Սեպուհ լերանց եւ զՄաքենեց եւ զԹեղենուցն յարեւելից կողմանց» խորագիրը՝ նվիրված անապատականներին, նույնպես արժանացել է Սրապիոնի Պատմության ճակատագրին՝ իր կենդանության ժամանակ «Նախանձոտներ»-ը նրա գիրքը չեն ընդօրինակել, այլ «թաքուցին ի խաւարի եւ կորեալք եղեն, վասն ոչ օրինակ առնելով եւ փոխարկելով զնոսա»[20]։

Դարանաղցու «Ժամանակագրության» հրատարակիչ Մեսրոպ վարդապետ Նշանյանը գտնում է, որ չնայած Դարանաղցին իրեն անվանում է վարդապետ, սակայն գրքի մեջ, նրա մի քանի ակնարկներից երևում է, որ նա մինչ վարդապետության աստիճան ստանալը, ունեցել է եպիսկոպոսի հոգևոր կոչում... Երկու տեղ պատմագիրը նշում է իր կողմից չորս քահանա ձեռնադրելու մասին[21] և Ռոդոսթոյի հունական եկեղեցին գրավելու կապակցությամբ Պոլսից իր թեմականներին գրած հուսադրական նամակում էլ նշել է. «Թէ որ չբաւեմ ճարել զամենայն ծախսն ի ճանապարհս եկեղեցւոյն, զամենայն գրեանս, զգաւազանս զեմիփորոնս եւ զթագս վաճառեմ եւ տամ»։ «Ասոնք անտարակուսելի ապացույցներ են Դարանաղցիի եպիսկոպոսութեան», ընդգծում է Նշանյանը, և ենթադրում է, որ նա եպիսկոպոս է ձեռնադրվել 1600—1603 թվականներին,

18 Նույն տեղում, էջ 185—.29, 197։
19 Նույն տեղում, էջ 370։
20 Նույն տեղում, էջ 351։
21 Նույն տեղում, էջ 104—611։

երբ նա գտնվել էր Էջմիածնի կողմերում, Մելքիսեթ կաթողիկոսի կողմից[22]։

* * *

XVII դարի առաջին հիսնամյակը հայ պատմագրության մեջ նշանավորվեց նրանով, որ նրանում առաջին անգամ իր արտացոլումը գտավ Հայաստանի և հայ ժողովրդի երկու մասի բաժանման իրողությունը և նրանցում հայ հասարակական, հոգևոր ու մշակութային կյանքի վիճակն ու զարգացման տարբեր պայմաններն ու միջավայրը։

Եթե հայ պատմագրության զարթոնքն ազդարարող երկու ականավոր պատմագիրներից՝ Դարանաղցին Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի քաղաքական բուռն իրադարձությունների պատմության ընդհանուր հենքի վրա տվել է XVII դարի առաջին կեսի արևմտահայության դառն առօրյան և հատկապես ջալալիների ասպատակությունների պատճառով բաղում գավառների ամայացումն ու զանգվածային արտագաղթը դեպի Թուրքիայի արևմտյան նահանգները, հիմնականում Կոստանդնուպոլիս և նրա շրջակաները, Ռումելի, Բուլղարիա, Լեհաստան և այլուր, այդ գաղթականությանը հայ հոգևորականության ու թուրք պաշտոնեության պատճառած չարիքներն ու տառապանքները, բացահայտ կողոպուտն ու սնանկացումը, գործադրած կամայականությունները և գրված գիրքերի շարաշահումները, հոգևոր ու մշակութային կյանքի անկումային վիճակը, ապա Դավրիժեցին, ինչպես իր տեղում կտեսնենք արևելահայության ճակատագրական նշանակություն ունեցող այդ ժամանակահատվածը ներկայացրել է Արևելյան Հայաստանի ու Պարսկաստանի՝ քաղաքական նշանակալից անցքերով հարուստ պատմության ընդհանուր շաղախում։ Ի դեպ, ընթերցելով այդ պատմագիրների ստեղծագործությունները, ստացվում է այն տպավորությունը, որ կարծեք նրանց միջև ինչ որ ներքին պայմանավորվածություն է գոյություն ունեցել։ Այն քաղաքական, հոգևոր ու մշակութային կարևոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Արևելյան Հայաստանում, Դարանաղցին անցողակի է նշում (Պարսկա-թուրքական պատերազմները, մեծ սուրգունը, կաթողիկոսության համար դահակալական պայքարը, Մելքիսեթի հալածանքները առաջադեմ հոգևորականության նկատմամբ, հայ եկեղեցու վերանորոգչությունը անապատականների ծավալած գործունեությունը և այլն)։ Թվում է, թե նրան հայտնի է եղել, որ այդ իրողությունների մանրամասն

22 Տե՛ս կենսագրությունը, էջ ԾԹ-Կ։

պատմությունը գրված է, գոյություն ունի և նա բավարարվել է միայն ակնարկների ձևով դրանց անդրադառնալով։ Ինչպես կտեսնենք, նույն ձևով վարվել է և Դավրիժեցին, նա էլ արևմտահայության կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին անդրադարձել է հպանցիկ։

Դարանաղցու ժամանակագրությունը բաղկացած է երկու մասից։ Առաջինը ընդգրկում է 1018—1634 թթ. ժամանակահատվածը՝ Թուրք հրոսակների ասպատակությունները Վասպուրականում և Սենեքերիմ Թագավորի կողմից Վասպուրականի հանձնումը կայսրությանը, նրա փոխադրվելը Փոքր Ասիա, մինչև հայոց զատկի կապակցությամբ հույների ու հայերի միջև վիճաբանություններին վերջ տալը (1—280 էջեր)։ Երկրորդը նվիրված է Էջմիածնի և Սսի՝ պատմագրի ապրած ժամանակաշրջանի կաթողիկոսների գործունեությանը, սկսած Դավիթ, Մելքիսեթ և Ավետիս կաթողիկոսներից մինչև Փիլիպպոսը ներառյալ[23]։

Ի դեպ Դարանաղցին երեք կաթողիկոսների առկայությունը «յոյժ անկարգություն»[24] է համարում ու Դավիթ կաթողիկոսի բերանով հաստատում է Դավրիժեցու վկայությունը կաթողիկոսության դրամական ծանր գրության մասին։ Դավիթն ասել է Դարանաղցուն, որ նման վիճակի պատճառը «ոչ էր հարկապահանջութենէ Թագաւորաց կամ յիշխանաց, այլ ի հակառակութենէ միմեանս անկանելով, յափշտակել ջանալով զկաթողիկոսութիւնն, կաշառս խոստանային անօրինաց ձեռագիր կընքեալ նամակով, մինչեւ քառասուն և վեց հազար զուրուշն յաւելով, ով որ զապուլ արար, նա նստելով յաթոռ։ Եւ առնէին բազում ապականութիւնս եւ նեխութիւնս և անկարգութիւնս իւրեանք եւ իւրեանց չար առաքեալ նուիրակքն ընդ ամենայն աշխարհին հայոց»[25]։ Դարանաղցին էլ խիստ բացասական է գրում Մելքիսեթ կաթողիկոսի մասին[26]։

Իսկ Սսինը՝ Գրիգոր Պահլավունուց (Ներսես Շնորհալու եղբայրը) մինչև Սիմեոնը (1636 թ.)։ Ժամանակագրությունը վերջանում է Լվովում Նիկոլ եպիսկոպոսի պատճառած չարիքների նկարագրությամբ (283—588 էջերը)։ Վերջում հրատարակիչ Նշանյանը տվել է հավելված, ուր բերված են Դարանաղցու ընդօրինակած մի քանի կարևոր գրքերում գրած հիշատակարանները, որոնք նրա կենսագրության մասին պարունակում են որոշ տեղեկություններ (591—619 էջերը)։

23 Հայտնի չէ, թե ինչու Դարանաղցին Սահակին չի նշում։

24 Դարանաղցի. էջ 52։

25 Նույն տեղում, էջ 54։

26 Նույն տեղում, էջ 284—285։

Դարանաղցին էլ, ինչպես ինքն է ասում, պատվերով է գրել իր «Ժամանակագրությունը»։ «Թուականաբար վիպասանաբար շարագրութիւն և պատմութիւնք ժամանակաց,— նշում է նա,— կարճ ի կարճոյ ժամանակաց անցելոյ, զոր ոմանք գրեալ են, բայց ոչ զժամանակն եւ ոչ զտեղին եւ ոչ զանուն գրողին է յայտնի։ Եւ մեք Գրիգոր ստրուպ ամենայն վարդապետաց հարկեալ մեր ի Գասպար իրիցիէ[27] բանասիրէ եւ իմաստակէ գրել համառօտ պատմութեանցս գրելոցս»[28]։

Պատմագիրն ընդհանրապես իր օգտագործած աղբյուրներից և ոչ մեկը չի հիշատակում, պատճառաբանելով, թե ոմանք գրել են, սակայն անունները հայտնի չեն։ Այստեղ, իհարկե, նա մեղանչել է պատմության առաջ. կաթողիկոսությունը Սսից Էջմիածին փոխադրելու պատմության ամբողջ շարադրանքը նա վերցրել է Թովմա Մեծոփեցուց, անգամ մի քանի տեղ հիշատակում է նրա անունն իբրև այդ գործի նախաձեռնողներից մեկի, սակայն առանց նշելու նրա «Պատմության» մասին։

«Ժամանակագրության» մեջ մի քանի անգամ նա ընդգծում է, որ այն, ինչի մասին ինքը գրել է՝ ականատեսի վկայություն է[29], կամ իրեն պատմել են դեպքերի մասնակիցները[30]։ Գրել է նաև «Հարանց վարք», որ մեզ չի հասել[31]։

Դարանաղցու հիմնական նպատակն է եղել տալ XVI դարի վերջից Թուրքիայի, հիմնականում նրա տիրապետության տակ գտնվող արևելյան նահանգների՝ Անատոլիայի, այդ թվում և հարավ-արևմտյան Հայաստանի տարածքում ծավալված ջալալիների շարժման, նրանց ասպատակությունների հետևանքով դեպի արևմուտք հայերի զանգվածային արտագաղթի, նրանց անկայուն ու անապահով վիճակի ու կրած անասելի տառապանքների պատմությունը։ Եթե Դավրիժեցուն կարող ենք համարել արևելահայության՝ Պարսկաստան բռնագաղթածների պատմագիր, ապա Դարանաղցուն՝ արևմտահայության հարյուր հազարավորների հասնող պանդուխտների պատմագիր։ Եթե 1639 թ. Պարսկա-Թուրքական դաշնագրից և Հայաստանի վերջնական բաժանումից հետո Արևելյան Հայաստանում, Թուրքիայի հետ համեմատած, հայերի՝ ֆի-

27 Հավանաբար այս այն Գասպարն է, որի մասին 83-րդ էջում գրում է «մեր հոգևոր որդի Գասպար»։

28 Դարանաղցի. էջ 3։

29 Նույն տեղում, էջ 465—470։

30 Նույն տեղում, էջ 38, 49, 59, 79 և հետո։

31 Ա. Առաքելյան. Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 511։

զիկական զանգվածային բնաջնջման վտանգը միաժամանակ դադարել էր սպառնալիք լինելուց և Դավրիժեցին նկարագրում է հայ բռնագաղթածների «զարիպականքի»՝ հիմնականում գյուղացիության ու քաղաքային ստորին խավերի գործադրած ջանքերը հայրենիք վերադառնալու համար, ապա ջալալիների շարժման խորացման ու ահռելի չափեր ընդունած ավերածությունների, կողոպուտի, գերեվարման, բնակչության ոչնչացման, քաղաքների ու գյուղերի ամայացման պայմաններում՝ Դարանաղցին, ընդհակառակը, պատմում է թե ինչ համառ ջանքեր ու միջոցներ էին գործադրում արևմտահայ պանդուխտները՝ երկարաձգելու իրենց վերադարձը հայրենիք և թերևս դրանով խուսափելու ֆիզիկական բնաջնջումից, քանի որ իրենց հայրենիքում սուրն ու կոտորածն էր թագավորում։

1639 թ. Պարսկաստանի և Թուրքիայի միջև հաստատված խաղաղությունը նվազ նպաստավոր եղավ վերջինիս և մասնավորապես Արևմտյան Հայաստանի համար, որի տնտեսական կյանքի հիմքերը խախտվել էին ոչ միայն տևական արտաքին պատերազմների, այլև 1595—1628 թթ. ընթացքում պարբերաբար կրկնված ու ծավալված ջալալիների ապստամբությունների պատճառով։

Ջալալիների ապստամբությունները երկրի ավերածության, անիշխանության, սանձարձակ կեղեքման ու ճնշման արդյունք էին։ Երկրի արտադրողական ուժերի անկումը, ենիչերիական կամայականությունների սաստկացումը կենտրոնական իշխանության դեմ ոտքի էին հանում ներքին նահանգների զինվորներին, ուժեղացնում նրանց դասալքումներն ու տրտունջները, հանգամանք, որ իրենց նպատակների համար ճարպկորեն օգտագործում էին կենտրոնական իշխանությունից դժգոհ բանակի միջին օղակի հրամանատարական կազմը և տեղական մանր ֆեոդալները։ Այդ ապստամբություններից, որ ուղղված էին սուլթանական ռազմաֆեոդալական դաժան ռեժիմի դեմ, մեծապես տուժում է Արևմտյան Հայաստանի և փոքրասիական նահանգների բնակչությունը և առաջին հերթին հայ գյուղացիությունն ու քաղաքաբնակչությունը[32]։

Դարանաղցին վշտացած գրում է այդ ռեժիմի ավերիչ հետևանքների մասին XVII դարի սկզբում, սուլթան Մուհամմադի ժամանակ նշում է, որ երկրում վերացել էր դատն ու դատաստանը, անիշխանություն էր տիրում, ջալալիները Անատոլի երկրամասը ավերակ դարձրին, ժողովրդին փախուստի մատնեցին, պանդխտությունը զանգվածային ծավալ ստացավ, «Չորս պատուհաս մի զմիոյ կնի եղեն ի վերայ ամենայն աշխարհացն, սով և մահ եւ սուր և գաղանակերություն, որ շատ մարդակերութիւն եղեն»[33]։

Այնուհետև ընդգծում է, որ սուլթան Մուհամմադի անհոգության պատճառով պարսից Շահ Աբբաս Ա-ն մեկ տարում բազում քաղաքներ ու գավառներ գրավեց, սուլթանի և վեզիրների անիրավ զրկանքների ու հափշտակությունների պատճառով հասարակության բոլոր խավերը՝ իշխանները, դատավորները, շինականները, զինվորականներն ու զորքը, տուժում են։ Պատմագիրը հաղորդում է, որ գավառապետներին ու դատավորներին կաշառքով էին նշանակում և չնայած դրան, նոր նշանակվածը դեռ տեղ չհասած պաշտոնանկ էր արվում և ուրիշն էր նշանակվում, սակայն առաջինն իր տեղը չէր զիջում և սկսվում էր ներքին արյունալի պայքար պաշտոնի համար, երկուսն էլ զորք էին հավաքագրում ռամիկ հողագործներից, կազմում մեծ բանակ ու ապստամբում սուլթանի դեմ, դառնում ջալալիներ։

«Եւ եղեն իբրև զձկունս մեծամեծք եւ փոքունք, որ զմիմեանս կլանեն... եւ զմիմեանս կու սպառէին առանց օտար թշնամեաց, այլ թշնամիք եղեն առ միմեանս եւ առ ազգայինս իւրեանց, եւ այսպէս շարանալով՝ բնաջինջ արարին զամենայն աշխարհն Անատոլու։ ...Բազում աշխարհք անմարդք դարձան, եւ ավերակք բազմացան»[34]։

Դարանաղցին գրում է, որ այդ սարսափները, կարծեք քիչ էին, դրան ավելացավ 1599 թ. երաշտը, 1600 թ. սկսված սովը։ «Բազումք մեռանէին ի սաստկութենէ սովոյն եւ անկեալ լինէին դիակունք նոցա թէ ի գիւղս, թէ քաղաք եւ թէ յանցս ճանապարհաց եւ ոչ որ էր որ թաղէր զնոսա»[35]։

Նրա «Ժամանակագրության» առաջին մասը հարուստ ու արժեքավոր տեղեկություններ է պարունակում XVII դարում Թուրքական պետականության հիմքերը խարխլող ջալալիների շարժման պատմության վերաբերյալ, և նրա լուսաբանմանը նվիրված աշխատությունների հեղինակները Դարանաղցուն չդիմել չէին կարող, նրանք հիմնականում բերել են նրա վկայությունները[36]։ Մեր նպատակը չէ տալ այդ շարժման պատմությունը, այլ անդրադարձել ենք այդ շարժման հետևանքներին՝

32 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 110—111։

33 Դարանաղցի, էջ 13։

34 Նույն տեղում, էջ 13—15։

35 Նույն տեղում, էջ 35—36։

36 Տե՛ս Մ. Զուլալյան. Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, (16—17 դարեր), Երևան, 1966։

հայերի ու Հայաստանի համար, որոնք և հանդիսացել են արևմտահայության արտագաղթի և պանդխտության հիմնական պատճառն ու խթանող հանգամանքը, որի պատմությունը և կազմել է Դարանաղցու «Ժամանակագրության» առանցքը։

«Երբ տեսաք,— գրում է նա,— Հարզուլումէն (Էրզրում— Լ. Բ.)»[37] ի վայր ամենայն աշխարհի մարդիկ երկրակոչ էին արարել իյահէ սպանողացն եւ չարաչար տանջողացն, ի փախուստ տեղացն մաղապուրծ լինելով, թափուր եւ ունայն յամենայնէ, մերկ եւ բոկ մուրանալով եկին յԿստամբօլս... ոմանք յԱնատօլի եւ ոմանք ի Թիրակայս, որ է Ռումելիս, յորում կամք մեք մերայովքս, բոլոր գաւառօքս բնակեալք ի վաղուց ժամանակաց հետէ (1605 թվից— Լ. Բ.)։ Եւ ոմանք բազումք ի մերոցն եւ այլեւայլ քաղաքաց եւ գաւառացն ի յԿստամբօլ մնացեալ, բնակութեամբ զետեղեցեալք, մինչեւ ցայսօր ժամանակի, որ է թվին ՌԶԳ (1634)։ ...Ոմանք երկու ամաւ յառաջ եկեալ էին եւ ոմանք բազումք ընդ մեզ եկին, որ էր թվ. ՌԽԴ (1605), եւ շատք այլ յետոյ եկին եւ ցրուեցան յԱնատօլ եւ յՈւռումէլս յամենայն քաղաքս, մինչ ի Պէլբրդատ, մինչ Պուղտանաց աշխարհն եւ ի Լեհաց»[38]։

Պատմագիրը ջալալիներին գազաններ է համարում. «...ի մարդակերպ Ջալալոց գազանաց ժանեացն զերծելոյն»[39]...»։

Դարանաղցին ցավով ներկայացնում է Հայաստանում ստեղծված անտանելի վիճակն ու հայերի բնաջնջման վտանգը։ Նա ընդգծում է. «Խուռն աւերակութիւն եղեւ ասիական աշխարհին, որ այժմ Անատօլիս կոչեն, ի ջալալոց բորբոքմանէն, մանաւանդ տառապեալ վշտատես աղգացս Հայոց աշխարհին, որ երկու սրոյ միջի գոլով միշտ եւ յանապազ՝ ի պարսից եւ ի Թուրքաց, ևս առաւել յայնմ ժամանակին ի ջալալոցն անհանդուրժելի դառնագոյն նեղութեանց վտանգիցն...

Եւ այսքան վտանգից միջի լինելով հանապազ, յահ եւ երկիւղ ի դողման եղեալ, ի խարխափել ծառոց տերեւանց՝ ի յայրս եւ ի փապարս լերանց եւ ի ծերպս վիմաց դիմէին փախստեայք, եւ անդ լինէր արհաւիրք ահից ի գողոց եւ յաւազակաց, ոչ թուփ թաքստեան լինէր եւ ոչ վէմ ապաւինութեան»[40]։

1620-ական թվականներին Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի մասին Դարանաղցին գրում է, թէ ինքը վաղուց մեծ ցանկություն է ունեցել գնալ հայրենիք, բայց «Երկիւղ ահից անօրինաց գիշատողացն չէաք իշխէր գնալ... յԿստամբօլու իվեր մեծանուն մարդն այլ չի ազատիր կեղեքողացն...»[41]։ Մի անգամ Երուսաղեմից վերադարձին, նա որոշած է եղել գնալ Հալեպ, այնտեղից էլ՝ հայրենիք, սակայն Հալեպում հանդիպել է իրենց քաղաքից՝ Կամախից նոր եկած երկու անվանի մարդկանց, որոնք նրան «Բօթալից խապարնի ետուն թէ՝ այնպէս սրոյ եւ սովոյ եւ գերութեան միջոյ է աշխարհքն մեր քան զառաջին ջալալոցն յաւելի, մանաւանդ եւս առաւել յայսմ ամի (1628— Լ. Բ.), որ հեծեալն մարախոյ պէս տարածել են եւ մանաւանդ տաթարին գայլազօրքն, որ ծուխ նոցա մինչեւ յերկինս է եւ շող սուսերացն իբրեւ զփայլակն կու ծփայ եւ կու փայլատակէ. յո՞ր կու գնաս։ Ահա մեք այլ փախստական եմք. յերեք դիհաց ահ եւ երկիւղ կայ՝ պարսից եւ Յապաղին (Էրզրումի փաշան — Լ. Բ.) եւ Թագաւորին հեծելազօրին։ Թէ ա՞նդ էիր, նա շատոց փախստական էիր լեալ. այժմ ի մէջ արիւնարբու՞աց կու կամիս գնալ, որ ի հողէն եւ ի ջրէն արիւնահոտ կուգայ»[42]։

Լսելով այդ մասին Դարանաղցին, ստիպված նորից գնացել է Ստամբուլ, քանի որ դրանից շատ առաջ նա և նրա հայրենակիցները իրենց կաշվի վրա զգացել էին այդ արյունարբուների պատճառած դառնությունները և ստիպված նորից փախել էին հայրենիքից ու վերադարձել Պոլիս, որի շրջակաները, ինչպես ինքն է գրում, էին «երկրորդ հայրենիքս մեր»[43]։

Նշելով, որ 1609 թ. Մուրադ փաշան, Անատոլիայում ջալալիների ապստամբությունները ճնշելուց հետո, վերադարձել էր Պոլիս, Դարանաղցին գրում է, թե այդ փաշան ելնելով պետության շահերից, նպատակ է ունեցել նորից շենացնել ամայացված Անատոլիան, դրա համար սուլթանից հրովարտակ էր վերցրել այնտեղից գաղթած հայերին ու թուրքերին իրենց նախկին բնակավայրերը բռնի վերադարձնելու մասին։ Նա գաղթածներին երեք ամիս ժամանակ էր տվել՝ նախապատրաստվելու վերադարձի։ Ժամկետը լրանալուց հետո նրանց բռնի ուժով «արտաքս արարին եւ հանին ի քաղաքաց եւ ի գեղորէից եւ յագարակաց եւ թողին անխնամս»[44]։ Շատերը, գրում է պատմագիրը, կաշառքով և մեծամեծ իշխանների հովանավորությամբ, մնացին իրենց տեղերում, իսկ «զշատոցն զկարասիսն ի դուրս լցին եւ զդրունսն փակեցին»։ Եվ դառնացած

37 Դարանաղցին սիրում է բառախաղել, օր. նրա մոտ ենիչերին դարձել է ենկիչարիք, այսինքն նոր շարիք, այստեղ Հարզուլումէն նշանակում է համընդհանուր զուլում։

38 Դարանաղցի, էջ 68—69։

39 Նույն տեղում, էջ 71։

40 Նույն տեղում, էջ 125։

41 Նույն տեղում, էջ 184։

42 Նույն տեղում։

43 Նույն տեղում, էջ 142։

44 Նույն տեղում, էջ 145։

ավելացնում է. «Անդ էր տեսանել զամենայն սիրտ ի տրտմութիւն եւ զաչս յարտասուս եւ զկականումն մօր եւ մանկանց»[45]։

Դուրս քշվածները հավաքվել են Դարանաղցու մոտ, պարտավորեցրել նրան առաջնորդելու իրենց՝ դեպի հայրենիք։ Եվ նա մեծ դժվարություններով 7000-ից ավելի հայերի ու Թուրքերի հետ վերադարձել է Անատոլիա։ Սակայն շուտով, ոչ միայն ինքը և իր հետ եկածներից, այլև նախկինում չգաղթածներից շատերը ստիպված են եղել նորից պանդխտության ցուպը բռնել ու գնալ դեպի Պոլիս և նրա շրջակաները։

Պատմագիրը հաղորդում է նաև, որ երբ իրենք եկել էին հայրենիք, Էրզրումի փաշան էր Հասան անունով մեկը, որը դեպի հայերը լավ է տրամադրված եղել, բայց 6 ամիս հետո այդ փաշային փոխարինել է ոմն «այրն անողորմ եւ գազանաբարո»[46] Զիլֆիխառ անունով, որի զորքը հիմնականում ջալալիներից էր կազմված. նրանց նկատմամբ մեր պատմագիրը խիստ ատելությամբ է խոսում։ Այս առնչությամբ նշում է, որ եթե որևէ գործի համար Հասան փաշան քաղաքներն ու գավառները հինգ ձիավոր էր ուղարկում, ապա «գազանս Զիլֆիխառս վաթսունական ձիավոր. «եւ սկսան զառաջին սովորութիւնն ի գործ ածել, զոր ի յապրստամբութեանն կու գործէին։ Եւ լցաւ երկիրն վայիվք եւ աղաղակօք ի բռնութենէ անօրէն նեղչացն»[47]։ Այնուհետև Դարանաղցին նկարագրում է, թե ինչպես ինքը 1611 թ. փախել է այդ փաշայի հետապնդումներից, թաքնվել է գոմերում, սպանությունից փրկվել ու գնացել է Բենկա վանքը, մեկ տարի մնացել է այնտեղ։ Սակայն այստեղ էլ հանգիստ չի գտել, անգամ ծեծի է ենթարկվել, նրան մեղադրել են, թէ իբր ասել է, բոլոր մուսուլմանները շուն են և մուռտար, շները լավ են քան նրանք[48]։ Մեծ դժվարություններ հաղթահարելով, նա մի կերպ կարողացել է փախչել, գնալ Տրապիզոն, այնտեղից էլ՝ Պոլիս, ուր հանդիպել է նորանոր անախորժությունների՝ Պոլսի պատրիարք Գրիգոր Կեսարացու կողմից։

«Բայց մեք,— գրում է նա,— անկաք ի փորձութիւնս անզերծանելիս ընդ յերկար ժամանակս, ի նեղութենէ եւ ի վշտաց սուտ եւ իրաւ, նախանձոտ եւ տչաղկոտ եղբարց եւ ի քսմոս եւ ի բանսարկու քահանայից եւ ժողովրդականաց ոմանց, որ զրգռեցին ընդ մէջ մեր եւ ընդ Կեսարացի Մեծ Գրիգոր վարդապետին՝... որ բազում վիշտս եւ անհանդուրժելի նեղութիւնս եւ սառապանս կրեցաք ի միմեանց եւ հալածանս ընդ յերկար ժամանակս»[49]։ Ահա թե ինչպես է բնութագրում Դարանաղցին իր երդվյալ թշնամուն՝ Կեսարացուն. «Եկաւ Կեսարացին մեծաւ ամբոխի, եմուտ ի Բուղանդիա ահեղագոչ եւ խրոխտ կերպիւ որպէս զառիւծ, որ ամենայն հայոց ազգն սարսեցին ի նմանէ։ ...Ունի խորհուրդ... զի ինքն միայն բնակելոյ յայսմ աշխարհի... կու հոչակէին հանապազ ամենայն ոք զանողորմ բարք եւ զընկերեղբայրատեցութիւնն եւ զգոռոզաբար մեծամտութիւնն, նա՛ չէաք հաւատար թէ՝ զոնեա օրինազանցսն անաչառ խրատելոյ և զոչ եկեալս յուղղութեան ազագաւ է։ Նա՛ ոչ բնաւ, այլ ագահութեան ախտից եւ փառամոլութեան համար եւ ոչ վասն Աստուծոյ»[50]։

Պատմագիրն ինչպես ինքն է իրեն ներկայացնում, անհաշտ ու անողոք է եղել տգետ, հետադեմ, ժողովրդին կեղեքող, նրա արժանապատվությունը ոտնահարող, խարդախ ու քսու սնագլուխների նկատմամբ, որոնց սակայն Գրիգոր Կեսարացին հովանավորել է և այդ հողի վրա քիչ չարիքներ չի պատճառել Դարանաղցուն։ Նա գրում է, թե իր մոտ է կանչել Ռաստողուց ոմն Նազարեթ (Ղազար) անունով երեցի, Նազաշ մականվամբ, հանդիմանել է նրան կատարած դավաճանության ու անօրինությունների համար. «Նա կատաղեալ բարուքն դարձաւ առ մեզ ի հայհոյութիւն եւ ի յաղտեղի խօսս անարգութեան։ Եւ այլ ոչ կարացաք հանդուրժել՝ ասացի. ո՛վ կատաղի չարութիւն, օձ, իժ եւ քարբ եւ մատնիչ Յուդայ, դու այնպիսի մեծահրաշ զատկի աւուրք յԸռատողու մեր քահանայիցն եւ առ հասարակ ժողովրդոց գլուխն ի՞նչ անհրաժեշտ չարիք է որ անցուցեր ես. կա՛ց, մնա՛, որ Կեսարացին գայ, ի հետ նորա դատաստանաւ քննութիւն առնենք եւ դատապարտեմք զքեզ չարաչար, որ շատոց խրատ լինի»։ Ապա դառնացած մեր պատմագիրն ասում է. «Այլ նա այսպիսեաց փոյթ չէ ունեցեր, այլ սա ի նմանէ (Կեսարացուց — Լ. Բ.) ուժ առեր եւ զօրացեր, նորին ուժովն լրբենի երեսօք իբր ղշուն կատաղի՝ հաչելով ընդ երեսս մեր անասելի հայհոյութեամբ, զի ոչ կարացաք հանդուրժել, այլ յարեայ գաւազանաւ հարի զանզգամ լիրբն զայն եւ Տէր Սիմէոն աշակերտն մեր ընդ բռամբ եհար ընդդէմ բերանոյն եւ գլխոյն եւ ի դուրս եհան»[51]։ Այնուհետև Դարանաղցին գրում է, թե այդ Նազարեթը գնացել գանգատվել է Կեսարացուն և նա ասել է. «Լուռ լեր, ես այնպիսեաց ազագաւ կու գամ յԸստամբօլ, զքո վրէժն այլ առնեմ եւ այլ շատ չարիք ունիմ առնել ընդ նոսա։ Եւ այս եղեւ սկիզբն եւ պատ-

45 Նույն տեղում, էջ 147։
46 Նույն տեղում, էջ 158։
47 Նույն տեղում, էջ 158։
48 Նույն տեղում, էջ 164։
49 Նույն տեղում, էջ 107։
50 Նույն տեղում, էջ 116—117։
51 Նույն տեղում, էջ 116։

ճառ երկանց ցաւոց եւ յերկար ժամանակուան անհաշտ խռովութեանցն եւ ատելի թշնամութիւն նորա ընդ մեզ»[52]։

Դարանաղցին ասում է, որ ինքը շատ է մտահոգված եղել պանդուխտների վիճակով, ամեն ինչ արել է թեթևացնելու նրանց դրությունը։ Նեղություններ պատճառողների նկատմամբ հանդես է եկել անօրոք դատավորի դերում, հրապարակայնորեն անարգանքի սյունին է գամել պանդուխտներին կեղեքող հոգևորականներին, որ ինքը թուրքական դատարաններում ու պալատական մեծամեծ պաշտոնյաների մոտ պաշտպանել է նրանց շահերը, հաճախ վտանգի ենթարկելով իր կյանքը։ Պատմագիրն առանձնապես ատելությամբ է խոսում Գրիգոր Կեսարացու մասին, առիթ բաց չի թողնում մերկացնելու նրա ու նրա հովանավորյալների մեքենայություններն ու նենգ ու դաժան, գուիդողական գործունեությունը։ Նա զայրույթով գրում է, որ Կեսարացին փոխանակ մխիթարելու պանդուխտներին, նրանց ծաղրի էր ենթարկում, հրապարակով խայտառակում, քաջ գիտենալով, որ գյուղական քահանաները գրագետ չեն, ստիպում էր գիրք կարդալ «ոչ թէ ուսուցանելոյ աղագաւ առնէր զայն, այլ Նազարէթին եւ այլոց վերակացուաց աշխարհականաց խրատովն (որոնց մասին գրում է. «զապալին ուժովն յառաջակայք» էին դարձել)[53] առնէր այնպէս, զի հաճոյ թուեսցի նոցա վասն առաւել ատելութեանն, որ ունին առ տառապեալ, աղքատ եւ տնանկ նժդեհից եւ պանդուխտ եղելոց քահանայիցն, որ պարտ էր եւ արժան՝ սփոփել եւ մխիթարիչ լինել հալածելոցն եւ ի մեծ վշտաց եկելոցն։ Նա փոխանակ մխիթարութեանցն՝ կրկին վիրաւորէին զվիրաւորեալսն եւ զթալանեալսն եւ զտարագրեալս ի գաւառաց եւ ի հայրենի տանցն եւ ժառանգութեանցն»[54]։

Պատմագիրը զայրույթով է գրում նաև Կեսարացու կողմից քահանաներին հարկադրման մասին[55]։

Այնուհետև նկարագրում է Կեսարացու կողմից իրեն հալածելը և եկեղեցուց հեռացնելը։ Նրան գցել են Ս. Նիկողայոս եկեղեցու խցերից մեկը, պահել իբրև բանտարկյալ, հաց ու ջուր չեն տվել, ստիպված երկու անգամ գրել ու խնդրել է իրեն բաց թողնելու մասին։ Նրա նամակատարին Կեսարացին ասել է «Թո՛ղ ելնէ երթայ յատապով յայսմ աշխարհէ, եւ թէ ոչ՝ զինքն յէշ կու հեծուցանեմ, զերես կու մրեմ եւ քաղերդ կու ան-

52 Նույն տեղում, էջ 117։

53 Նույն տեղում, էջ 113։

54 Նույն տեղում, էջ 124—125։

55 Նույն տեղում, էջ 127։

ցուցանեմ ի պարանոցն եւ ամենայն քաղաքին նշաւակ կառնեմ զինքն»[56]։ Այդ լսելով, գրում է պատմագիրը, թողել հեռացել է։ Հակառակ Կեսարացու ու նրա համախոհների հալածանքներին, Դարանաղցուն ժողովուրդը հարգել ու սիրել է, նեղն ընկած տեղը դիմել է նրա օգնությանը և փոխարենը նրա նեղն ընկած ժամանակն էլ ժողովուրդն է մխիթարել, թեավորել Դարանաղցուն, բնակության տեղ ու մեծ պատիվներ տվել[57]։ Անգամ մեղադրել են նրան, ասելով. «Վասն է՞ր լուռ կաս եւ ոչ խօսիս ընդ Կեսարացին. մեզ մեծ ամօթ է եւ նախատինք զքեզ յայդ հասուցանելն... Մեք առ ժամս այսչափ մարդիկս (50 հոգի— Լ. Բ.) զանձներս ի մահ եղեալ եմք ի վերայ քեզ»[58]։ Իրենց միջամտությունն ու օժանդակությունն են առաջարկել Դարանաղցուն՝ վերականգնվելու իր վիճակում, սակայն նա կտրականապես հրաժարվել է ու ուխտի գնացել Երուսաղեմ[59]։

Պատմագիրը նշում է, որ դրանից հետո էլ Կեսարացին չի դադարել իրեն հետապնդելուց։ Նկարագրելով պատրիարքության համար ծավալված պայքարը, նա գրում է. «մինչ որ այս Կեսարացի Գրիգոր թիւնաւոր վիշապս եւ փառամոլս ինքնին երեկ, բռնութեամբ անկաւ ի վերայ եւ յինքն գրաւեաց զպատրիարգութիւնն։ Ահա երկու ամ է եւ ի մուտ երրորդին եւ զմեզ խիստ կու նենգէ եւ ջանք ունի՝ թէ զհին ոխն թափէ ի մեզ...»[60]։ Ոմն Ազարիա փիլիսոփայի կապակցությամբ էլ գրում է. «Այս չար վիշապս եւ անյագ գայլս՝ Կեսարացի Գրիգոր պատրիարգ անուանեալս, որ այժմ չար խորհրդով է ընդ մեզ ի տարապարտուց, վասն ագահութեան ախտից աղագաւ անհաշտ թշնամութիւն ունի ընդ մեզ եւ որոգայթել կամի,... Այս գազանացեալ Գրիգոր Կեսարացին հանգստութիւն չետուր նմա՝ (Ազարիային— Լ. Բ.) վարպետ անուն սակին, որ երկոտասան ամ զաշխարհ կողոպտելով տալով իւրն, մինչ ի հինգ հազար ղուրուշն եւ այլ յաւելի, չկարացի յագեցուցանել զանյագ բնութիւն նորա։ Եւ առնոյր զժողովեալ ինչս նորա եւ ոչ կամէր տալ գաւազան, զի մինչ իւր ծառայեսցէ, ինչս ժողովեսցէ եւ բերցէ առ ինքն, որ քան զՅուդային եւ զՍիմոնին առաւել ունի զախտ արծաթսիրութեան»[61]։

Դարանաղցին ընթերցողին հավատացնում է, որ ինքն ատում է փառամոլությունն ու ագահությունը, զայրույթով է խոսում դրանցով

56 Նույն տեղում, էջ 172։

57 Նույն տեղում։

58 Նույն տեղում։

59 Նույն տեղում, էջ 172—173։

60 Նույն տեղում, էջ 397։

61 Նույն տեղում, էջ 411—412։

տարվողների մասին, անկախ դեմքից ու դիրքից։ Ասում է՝ «Եւ որք բանիրունք են՝ այսպիսի շարաշար ախտիւք լցեալք են, մանաւանդ որ մեծահռչակ գլուխ աթոռոց տեարք են, որպէս Յերուսաղէմայն, Սրսայն եւ Վաղարշապատուն, և Երուսաղէմայն եւ Կոստանդիանոսի Պոլսոյ սուտ անուն պատրիարգ նստողքն, ով որ եւ իցեն՝ կու ջանան որ իւրեանք միայն բնակիցեն յաշխարհի... եւ վիշապօրէն կամին զամենեսեան կլանել, մանաւանդ զմեզ, որպէս Կեսարացի Գրիգորն... ագահութեան եւ փառամոլութեան ախտից աղագաւ, որ զյափշտակութիւն գայլոց կու գործեն»[62]։ Այնուհետև նկարագրում է այդպիսիների կողմից ժողովրդին կողոպտելու մեքենայությունները «բազմահնար շարեօք խաբէութիւն առնելը»[63] (Զանկչի, Վարդան, Ոսկան, Մելքիսեթ և ուրիշներ)։ Ի դեպ այդ Զանկչի սնապլխի օրինակով Դարանաղցին բացահայտում է XVII դարում Հայաստանի տարածքում կաթոլիկ միսիոներների կողմից մասսայական բնույթ ստացած սրբերի մասունքների գողության, հափշտակության, առ ու ծախի, (որոնց մասին դարի պատմագիրները շատ վկայություններ ունեն), նպատակն ու պատճառը. ասում է, թէ դա մեծ եկամուտների ձեռք բերման հատուկ աղբյուր էր դարձել։ Ոստան գավառից Նիկիայի կողմերն է գնացել այդ Զանկչի կոչվածը, ուր հայկական գյուղեր շատ կային, հետը տարած է եղել մի սուտ աջ և «ի պատճառս նորա բազում ոճրագործութիւնս առնէր եւ հիացուցանէր զտգէտ եւ զկոյր դասս ռամիկ շինականաց»[64]։

Մեկ անգամ Ստամբոլի Պեշիկտաշի թաղում Զանկչին իր շուրջը հավաքված կանանց «այնչափն էր ջերմացուցեր ի սէր սուտ սնոտի փաթեթմանն, որ մերկացեր էին ի զարդուց ոսկեղինաց եւ արծաթեղինաց՝ թէ՛ ապարանջան, թէ՛ գինդ, թէ՛ մատանի, թէ՛ մեհեւանդ, թէ՛ լանջագեղ կամար, թէ՛ դիպակ լաչակ եւ պաստառակալ ասղանկար, թո՛ղ զբազմութիւն զուրուշից եւ դենարից եւ դրամոցն, եւ յայնժամն էին դիւահարել ողջ եւ առողջ հինգ կանայքն»[65]։

Այդ գրելուց հետո Դարանաղցին ընդգծում է, թէ «Եւ սուտ աջն այն զոր ունէր, կարծեմ՝ թէ յԸստամբոլէս տարեալ լինէին վաճառականքն եւ նորա վաճառեալ էին, որպէս մեզ պատահեալ եղեւ, որ հոռոմ աբեղայ մի տաճկացեր էր եւ այսպիսի շարաշար հնարօք զբաղումս պատրէր, երթեալ ի գերեղմանացն զմեռելոց ոսկերսն բովանդակ հանէր եւ հոռոմ

62 Նույն տեղում, էջ 415։
63 Նույն տեղում, էջ 422։
64 Նույն տեղում, էջ 422։
65 Նույն տեղում, էջ 423։

ձիթով քաջ եփէր, զաֆրանով եւ միսկով անուշահոտ առնէր եւ գաղտագողի վաճառէր ոմանց»[66]։

Պատմագիրը այսպիսի պատմություններով բարի ծառայություններ է մատուցել միամիտ հավատացյալ ժողովրդին. «զգուշացուցանելոյ աղագաւ գրեցի ձեզ, զի մի վաղվաղկոտ լիցիք եւ դիւրահաւանք յանծանօթս պատահողաց ձեզ այսպիսեացս, որպէս գրեցաք»[67]։

* * *

Պանդուխտներին, որոնց մեջ և մեր պատմագրին, պակաս վիշտ չի պատճառել 1635 թ. սուրգունը, և նա դառնությամբ է գրում այդ մասին։

Նա նշում է, որ Սեբաստիայում «յամենայն կողմանց մարդիկն՝ հայք և տաճիկք մնացեալքն որ անդ, զաղաղակ բարձեալ բողոքեցին առ կայսրն (սուլթան Մուրադին— Լ. Բ.) թէ մեք մնացեալք սակաւաւոր եմք եւ աշխարհնին աւերակք են, եւ հարկապահանջութիւնն անպակաս է, եւ այս աշխարհաց մարդիկն Ըստամբոլ եւ ի բոլորքն են, չեմք կարող հարկապահանջութեանցն դէմ կալոյ վասն սակաւութեանն մերոյ, կամ զնոսա զամենեսեան հրաման ա՛րա որ գան ի վեր յիւրաքանչիւր տեղիս, եւ կամ մեզ այլ հրաման տո՛ւր գնալ առ նոսա»[68]։ Սուլթանը խիստ հրաման է տվել՝ բոլորին քշել իրենց նախկին բնակավայրերը։ «Ողբովք եւ կոծովք լցաւ քաղաքն ամենայն» (Պոլիսը— Լ. Բ.) գրում է Դարանաղցին։

Հրամանով սուրգունից ազատվում էին նրանք, ովքեր 40 տարուց առաջ էին եկել, նրանք ովքեր նոր տեղում էին ծնվել ու մեծացել, ազատվում էին նաև այրիները, ծերերը, հիվանդները, կաղերն ու կույրերը[69]։ Պատմագիրն ասում է, որ ունևորները կաշառքով ազատվեցին, իսկ ինքը թաքիրդաղցիների հետ կարողացել էր երկարաձգել ժամկետը և դրա համար «մօտ երեք բեռն ստակ գնաց յետ եւ յառաջն»[70]։

«Եւ մեզ մնացելոցս,— դառնացած գրում է Դարանաղցին,— բազմահնարութեամբ կերպից մնացաք մինչ ի գալ թագաւորին ի պատերազմէն պարսից, եւ յամենայն աշխարհ ի կասկածի եւ ի դողման եմք, թէ թողո՞ւ եւ կամ վա՞րէ, զիարդն եւ զորպէսն մեր ոչ գիտելով զապառնին»[71]։

Հայ պանդուխտների վիճակը շատ ավելի վշտալից է եղել Ադրիա-

66 Նույն տեղում, էջ 424։
67 Նույն տեղում, էջ 90։
68 Նույն տեղում, էջ 520։
69 Նույն տեղում, էջ 525—526։
70 Նույն տեղում, էջ 529։
71 Նույն տեղում, էջ 493։

նապոլսում։ Քաղաքի կառավարիչը՝ «այր անօրէն եւ անողորմ, խստասիրտ եւ գազանաբարոյ»[72] անխտիր բոլորին բռնի քշել է քաղաքից[73]։

* * *

Դարանաղցին մեծ հարգանքով է խոսում անապատականների մասին և վկայում է, որ 1606 թ. Երուսաղեմ ուխտի գնացած ժամանակ անապատականության գաղափարն ինքն է ներշնչել 15 հայ ուխտավորների, այդ թվում և Կիրակոս և Սարգիս եպիսկոպոսներին, որոնք և այդ շարժման հիմնադիրները դարձան Հայաստանում։

«Եւ ես,— գրում է պատմագիրը,— յառաջագոյն պատմեցի նոցա, որ յԵգիպտոսէն գնացաք ընդ Սիմէոն աշակերտին մերոյ ի մեծն Իսկիտէ, եւ շրջելով ի յանապատսն, տեսանելով զամենայն կարգս եւ զսահմանս եւ զվարս նոցա, ոչ պակաս գոլով յառաջնոցն սուրբ հարանց վարուց սրբոցն։ Եւ յորժամ պատմեցաք նոցա զամենայն լիով որպէս տեսաք իսկ, եւ նոքա ցանկացան եւ սկսան ասել մեզ թէ՝ Ե՛կ, լե՛ր առաջնորդ մեզ եւ գնամք Իսկիտէ, զոր նոքա ողոքանօք խնդրէին լինել անդ, կամ զայլ որ յղարկել յաղդէս Հայոց, որ յառաջն բաղումք են կացեր եւ շատ գրեանք կայր անդ։ Եւ ես ասացի թէ՝ այնպէս եղիցի որպէս կամիք։ Եւ խորհեցաք ի միասին հնգետասան ոգի, եւ ես յանձին կալայ վասն նոցա ամենայն կարեացն՝ ի հեռաստանէ բերելով զամենայն պիտոյս նոցա»[74]։ Այնուհետև հայտնում է, որ այդպես որոշել էինք, բայց Կիրակոսը հետո միտքը փոխել էր, թէ՝ «ես ի մեր Հայոց երկիրն եւ յաղգին մերձ կու գնամ։ ...Եւ այս ի վերնական խնամոցն եւ ի տեսչութենէ Սուրբ Հոգոյն եղեւ նորա մտափոխութիւնն, որ նախասկիզբն եւ բաղմաց օրինակ լինելոց էին յանապատաւորաց յաշխարհէ հրաժարելոցն, որ եւ եղեն իսկապէս եւ կատարեցին անթերի։

Յորժամ այս խորհրդովս հաստատեցին զերեսս իւրեանց յԱրեւելահայսն, մեզ այլ կամ եղեւ գնալ ընդ նոսա անփոփոխ մտօք»[75]։ Յավով, սակայն գրում է, թե ինքը չի կարողացել գնալ նրանց հետ, քանի որ քրոջն օգնելու նպատակով շտապ վերադարձել է Պոլիս։

Մովսես և Պողոս վարդապետների մասին հիացմունքով գրում, թե «Եղեն լուսավորիչք Վերին Աշխարհացն Հայոց եւ զարդք եւ զարդարիչք անապատաւորաց... Եւ ուղղիչք ամենայն սահմանադրութեանց»[76]։ Այնուհետև մանրամասն նկարագրում է Մովսես Սյունացու գործունեությունը «ի մէջ երկուց աղգաց գերչաց»[77]։

* * *

Դարանաղցին, ինչպես առաջաբանում ասվել է, խիստ ատելությամբ է արտահայտվում կաթոլիկություն ընդունած հայերի մասին, որոնց անվանում է «հոռոմներ» և մանրամասն նկարագրում է այն չարիքները, որ նրանք պատճառել են հայադավան պանդուխտներին։ Նշում է, որ նրանք ավելի նենգ ու ստոր էին քան իսկական կաթոլիկներն ու թուրքերը։ Ամենուր այդ հոռոմները հայերին ծաղրուծանակի էին ենթարկում ու հալածում, այդ թվում և իրեն՝ պատմագրին։ Նա զայրույթով հաղորդում է, որ նրանք արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաների միջոցով «զթագաւորին սիրս հաւանեցուցին հարիւր յիսուն բեռն ստակ կաշառ դրին առաջի թագաւորին, ասելով ընդ թագաւորն թէ՝ հայոց աղգ ասածն մէկ սակաւիկ մե՛ն որչափ հոռոմոց ճինկանայքն են եւ դոցա շատքն ի զղրլպաշէն, հանապազ դոքա հետ նոցա մի են, նոցա լրտեսք են եւ եարտում (օգնություն —Լ. Բ.) կենեն յաստից ըստակ ուղարկելով։ Զթագաւորն հաւատացուցեր էին՝ ...քո զուլն (զորքն— Լ. Բ.) ամէնն, քո խազինան ի հոռոմէն կու ելանէ։ Շուն տաֆտարտարն ասելով թէ՝ ես կու ժողովեմ երկու տարին, հոռոմին հսապ (հաշիվ— Լ. Բ.) չկայ եւ ոչ թիւ. հայուն ութն հազար խարաճ եղեւ ընդ ամէնն։ ...զթագաւորն... հրամայեաց հրովարտակ գրել եւ տալ՝ թէ դոքա առաջին են քան զհայք... եւ այլ հայոց երես չտուին։ Եւ լքեալ յուսահատ եղաք...»[78]։

Պատմագիրն առիթը բաց չի թողնում մեկ անգամ ևս խարազանելու իր հիմնական ոսոխին։ Նա գրում է. «Եւ յետ այսքան խռովութեանցս եւ արիւնահոտ վրդովմանցս մրրիկ լինելոյն, մէր պատրիարգ անուանեալն՝ Գրիգոր Կեսարացին բնաւ հոգ եւ փոյթ չունէր հայոց ազգացս կոխան լինիլն եւ ծաղր եւ նախատ ի հոռոմոց,... թէ որ տաճկաց ահն որ չլինէր ի վերայ հոռոմոցն, վաղ ուրեմն բնաջինջ կամէին առնել զայս տեղաց պանդխտացեալ եւ տարագիր հայերս, նա՛ բնաւ հոգ եւ փոյթ չէր, այլ թուլացուցանէր զսիրտս արիացելոցն եւ լքեցուցանէր զձեռս զօրաւորացն ընդդէմ արեան ծարաւեաց մերոց՝ հին թշնամեացն հոռոմոց»[79]։

72 Նույն տեղում, էջ 530։
73 Նույն տեղում, էջ 531։
74 Նույն տեղում, էջ 103։
75 Նույն տեղում։

76 Նույն տեղում, էջ 288։
77 Նույն տեղում, էջ 299։
78 Նույն տեղում, էջ 262—263։
79 Նույն տեղում, էջ 263—264։

Ի վերջո դառնացած բացականչում է. «Ահա այսչափ ժամանակ եղեւ, որ նստող առաջնորդք եւ պատրիարգ անունք զարիւնն քրիստոնէից ծծեցին՝ թէ ըստամբոլցի աշխարհականքն, որ յանուն եկեղեցեացն բաղում գանձարանս լցին, որ յետոյ թշնամեաց եւոն ի կեր։ Նա՛ մեկ հոգեւոն կամ հիւանդանոց կամ վանաց կամ անապատից եւ կամ ժողովրդեան, որ հեռի են յեկեղեցեաց, աղօթարանից եւ պատարագաց տեղի պատրաստելոյ փոյթ եւ հոգ շարարին, այլ արարողացն հակառակէին խափանելոյ»[80]։

Նկատենք, որ պատրիարք Գրիգոր Կեսարացու բնութագրություններում Դարանաղցու անձնական փոխհարաբերությունները իրենց կնիքն են դրել և, հասկանալի է, որ դրանք օբյեկտիվ չեն կարող լինել, միակողմանի են և Կեսարացու գործունեությունը ճիշտ գնահատելու համար հիմք չեն կարող ծառայել։

* * *

Դարանաղցին ատելությամբ է գրում նաև Սսի կաթողիկոսների ու նրանց նվիրակների մասին։ Ասում է. Թագավորությունը վերանալուց հետո «եղեն կաթողիկոսք Սըսոյ թոյլք եւ անարիք եւ նուիրակք նոցա... էին արբշիռ եւ անառակ գործովք, լի ամենայն ցոփութեամբ եւ մանաւանդ, իբրեւ զգայլ յափշտակողք՝ հարեալ կուրութեամբ դաժան ախտին ագահութեան, ...զձեռնադրութիւնն, որ արծաթով տային առնել... նոքա վաճառէին զշնորհն աստուածային՝ ընչաւորացն, եւ զարժանաւոր աղքատսն խոտէին, որպէս այժմ ի ձեռնադրութիւն քահանայից եւ ամենայն աստիճանաւորաց եկեղեցականաց, եւ եպիսկոպոսէ մի առին հազար երեսուն ֆլորի եւ ապա եպիսկոպոս արարին»[81]։

Գրում է, թե Ղազար անունով մի նվիրակ մի քանի օր մնացել է ոմն մեծ տանուտեր Նիկիտայի տանը, հետո սուտ լուր է տարածել, թե իրենից քսան կարմիր է գողացել Նիկիտան։ Վերջինիս երդումներին չեն հավատացել, Կոստանդին կաթողիկոսը անեծքի թուղթ է գրել ու ուղարկել։ Նիկիտան զայրացել է ու ամբողջ տնով ուրացել իր դավանանքը, մահվան ժամանակ էլ «աղաղակէր թէ՝ Տէր Յիսու՛ս, զիմ հաւատոյ ուրացութեան պատճառն ի Կոստանդինէ խնդրէ եւ յամենապիղծն Ղազար Նուիրակէն։ Եւ այսպէս անպարտ անիծիւք զաշխարհս մեր լցին, կաթողիկոս՝ զեպիս-

80 Նույն տեղում, էջ 493։

81 Նույն տեղում, էջ 306—307։

կոպոսն, եպիսկոպոսն՝ զքահանայսն, քահանայն՝ զժողովուրդն»[82], եզրակացնում է Դարանաղցին։

Այնուհետև նկարագրում է կաթողիկոսության տեղափոխումը Էջմիածին ու դրա պատճառները՝ նյութը վերցնելով Թովմա Մեծոփեցուց։ Նորընծա կաթողիկոս Կիրակոս Վիրապեցուն գահընկեց անելը, նա անօրինություն է համարում[83]։ Դարանաղցին նկարագրում է նաև 1441 թվից հետո Սսի կաթողիկոսների գործունեությունը մինչ իր ապրած ժամանակը, այդ օրերում Միջագետքի վարդապետների ծավալած եկեղեցական ու ուսումնակրթական գործունեությունը, Պոլսի պատրիարքությանը տիրելու համար Հովհաննես Խուլ մականվամբ վարդապետի, Գրիգոր Կեսարացու և Զաքարիա վարդապետի միջև ծավալված պայքարը, յուրաքանչյուրի գործադրած նենգ ու խարդախ ջանքերը, ապա Լվովի Նիկողայոս վարդապետի կաթոլիկ դառնալն ու դրա քայքայիչ հետևանքները Լվովի հայ գաղթօջախի համար[84]։

* * *

Դարանաղցին առանձին հիացմունքով է խոսում իր ժամանակակից վարդապետներ «ամենագովելի փիլիսոփա» Բարսեղ Բաղիշեցու և Կարապետ Մոկացու մասին։ Վերջինիս կապակցությամբ ասում է, որ «եւ զամենայն վիպասական շարագրութիւն եւ պատմութիւնք ժամանակաց անցելոց ամենայն ազգաց. մանաւանդ հայկազանց պատմութեանց հնոց եւ նորոց առ ինքն հաւաքելով եւ վերծանելով զամենայն»։ Եվ ավելացնում է. «Որ եւ մեք այլ շատ ինչ օգտեցաք ի նորին շարագրութեանցն... որ ...շնորհեաց մեզ յընթերցումն...»[85]։

Դարանաղցին այնուհետև մեծարում է Դարանաղի գավառում իրենց ուսումնակրթական գործունեությունը ծավալած վարդապետներին, սկսած Հովհան Որոտնեցուց ու Հովհաննես Պլուզից մինչև 1628 թվին մահացած Ազարիա փիլիսոփան։ Համառոտ տեղեկություններ է հաղորդում նրանց մասին, տալիս յուրաքանչյուրի բնութագիրը։

Հետաքրքիր է Դարանաղցու վկայությունն այն մասին, թե իր ապրած օրերում ինչ-որ քարոզիչներ են երևացել, որոնց գյուղերում ժողովուրդը հետաքրքրությամբ ունկնդրել է և անգամ պաշտպանության տակ առել նրանց հալածողներից։ Նա զայրացած գրում է, թե մի գյուղում

82 Նույն տեղում, էջ 308։

83 Նույն տեղում, էջ 309—316։

84 Նույն տեղում, էջ 316—338։

85 Նույն տեղում, էջ 394։

ինքը տեսել է մի մարդու՝ շրջապատված բաղում կանանցով։ Իր այն հարցին, թե ինչու՞ են կանայք հավաքվել այդ մարդու շուրջը, պատասխանել են, որ լուսարար է խրատ և պատմություն է ասում կանանց. «Ասացի թէ՝ մեք բեռով գիրք ունիմք եւ խրատից համար կու շրջիմք եւ նոր եկեալ եմք յԵրուսաղէմայ... ահա երեք օր է, որ եկեալ եմք աստ, մէկ այր մարդ կամ կին ի ժամ չեն իգար կամ խնդրել եւ կամ հարցանել թէ՝ ո՞ստի իցես եւ կամ ո՞ստի գաս, նա՛ այն խաբուսկին վերայ այնչափն շեղջակուտեալ են։ Եւ կոչեցի առ իս զխելագարն զայն եւ հարցի թէ՝ ո՞վ ես եւ ո՞ստի ես եւ այդ ի՞նչ գործ է որ կառնես առաջի աչաց իմոց անամօթաբար եւ լրբենի դիմօք։ Եւ նա իբր զկատաղեալ լիրբ շուն՝ ընդվայրհաջմունք արար և խիստ պատասխանի արար եւ սկսաւ անարգել եւ հայհոյել զմեզ թէ՝ վասն է՞ր հարցանես զիս թէ ո՞վ իցեմ, եւ կամիս Յովհաննէս կաթողիկոսին պէս հարկանե՞լ զիս, որպէս նա արար ի Հալապ եւ կամիս դո՞ւ այլ այնպէս առնել։ Իբր ուսուցանելով զմեզ օրինական»[86]։

Այնուհետև նկարագրում է Սաղմոսավանքի մոտ գտնվող Սերկևիլ գյուղում մի կնոջ քարոզի մասին։ Սատանան երևացել է այդ կնոջ բակում մի ուռի ծառի վրա, ասել է, որ ինքը Գաբրիել հրեշտակապետն է. որ կինը պետք է իր բակն ուխտատեղի դարձնի։ Կինն այդպես էլ անում է. «Եւ սկսաւ քարոզել գեղջն եւ այլ շրջակայ գեղորէիցն զերեւումն սատանային եւ զամենայն պատրողական բանս նորա ի լսելիս ամենցուն, ...Որոց ասէր՝ սիրով գային հնազանդէին նմա իբր երեւելի ոմն ի ծառայութիւն... գտակն շարեաց կամելով զերիտասարդսն եւ զկանայս եւս առնել եւ հրամայելով երիտասարդացն առնուլ ի ձեռս իւրեանց հաստահոյլ եւ երկայն բիրս՝ վասն զընդդիմակս իւր հարկանելով։ Եւ ի Ջատկի Նոր կիրակէին զենմունք որ եղեն նմա յամենայն սուրբ կենդանեաց հարիւր թուով եւ այլ յաւելի, որ շատ քահանայք այլ սպասաւորէին նմա վասն արդեանց մտից նորա, եւ բաղում կանայք այլ ոմանք մոմալիցք, ոմանք կերակրեփիչք եւ ոմանք սպասաւորութիւն առնելով եկելոց ուխտաւորացն, եւ սկսան գալ յամենայն կողմանցն»[87]։ Դարանաղցին այնուհետև գրում է, թե գյուղի ամենախելոք քահանան երբ փորձել է հանդիմանել այդ կնոջը, նա երիտասարդներին հրամայել է ծեծել այդ քահանային. միայն գյուղի գլխավորի՝ ռայիսի միջնորդությամբ կարողացել են քահանային փրկել նրանց ձեռքից։ «Եւ մեք այլ ընդ այն մաքառ-

86 Նույն տեղում, էջ 443։

87 Նույն տեղում, էջ 447—448։

մանցն հասաք ի վերայ եւ շատ նախատեցաք զինքն եւ զհաւանողք նորին»[88], գրում է պատմագիրը։ Նշելով նաև մի քանի այլ այդպիսի քարոզիչների մասին, Դարանաղցին, սակայն, բավարարվում է նրանց պիտակավորելով «պոռնիկ», «անառակ», «խաբեբայ», չի բացահայտում նրանց «պատրողական բարբաջմանց վայրահաջութիւնս-ի էությունը, որով նրանք կարողանում էին համակրություն ստեղծել իրենց շուրջը։ Բայց անհրաժեշտություն է համարում ընդգծված ձևով շեշտելու, որ «Զայսքան վասն այն գրեցի, զի պատմեսցի ազգաց որ գալոցն է եւ ի զգուշութիւն տխմարաց, որպէս ասէ Տէրն. Զգոյշ լերուք ի նոցանէ, որ գայցեն առ ձեզ հանդերձիւք ոչխարաց»[89]։ Նկատենք, որ նշված այդ քարոզիչների մասին միակ աղբյուրը Դարանաղցու ժամանակագրությունն է։

Ասվել է, որ ուշ միջնադարի պատմագիրներից շատերը սուբյեկտիվ ու միակողմանի մոտեցում են ցուցաբերել իրենց կողմից նկարագրվող երևույթների, դեմքերի ու դեպքերի նկատմամբ և այդ պայմանավորված է եղել ժամանակի ոգով և նրանց դասակարգային պատկանելիությամբ։ Դա ամենացցուն ձևով արտահայտված է առանձնապես Գրիգոր Դարանաղցի պատմագրի մոտ։ Ահա, թե ինչպես է ներկայացնում նա XVIII դարի սկզբին Արցախի լեռնային շրջաններում ծավալված գյուղացիական շարժման ղեկավարին՝ ուտիացի վանական Մեխլուին ու նրա առնչությամբ՝ Ջուղայի խոջաներին. «Ոչ երիցոյ եւ ոչ աշխարհականաց հակառակութիւն չունէր, այլ միայն ի հետ սեւագլխոց։ Հետ լաւացն եւ վատացն միապէս մարտընչէր եւ մաքառէր, եւ ոչ օրինօք աստուածաշունչ գրոց վկայութեամբ խօսէր եւ ոչ կանոնօք սուրբ հարցն երից սուրբ ժողովոցն եւ ոչ սուրբ հարանց գրոցն, այլ մտացածին բանիւք յինքենէ՝ զոր ինչ բղխէր ի շար դիւական ոգւոցն՝ զայն խօսէր եւ մաքառէր ընդ ուխտականսն»[90]։

Պատմագիրը Մեխլուին դիվաբնակ է անվանում, իսկ շարժման մասնակիցներին՝ մարախ։ Մեխլուի ու նրա գլխավորած շարժման մասին նրա աղբյուրն, ինչպես ինքն է վկայում, ջուղայեցի վաճառականներն են եղել, որոնց խիստ բացասական է բնութագրում և դա հասկանալի է, եկեղեցու դաղափարախոսը չէր կարող այլ կերպ վարվել, քանի որ Մեխլուի շարժումն իր արձագանքներն էր գտել Ջուղայի քաղաքացիների

88 Նույն տեղում, էջ 449։

89 Նույն տեղում, էջ 435։

90 Նույն տեղում, էջ 457։

շրջանում և վաճառականներն էին նրա համբավը տարածում ամենուր։ Պատահական չէ, որ Դարանաղցին զայրույթով գրում է, թե «վասն առաւել ատելութեանց հպարտ եւ անառակ ջուղայեցւոցն, որ թողեալ զիւրեանց աշաց գերանն եւ զսեւագլխաց շիւղն հանել կու ջանան»[91]։ Այս այն դեպքում, երբ ոչ մեկն այնքան լավ չի տեսել սևագլուխների աչքերի գերանները և անարգանքի սյունին գամել նրանցից շատերին, ինչպես ինքը Դարանաղցին։

«Եւ գային այս ջուղայեցիք եւ հիացուցանէին զայս աշխարհի մարդիկ եւ սուտ սքանչելիս պատմէին թէ՝ բազմութիւն մարախոց ընդ իւր շրջեցուցանելով, եւ որք հակառակին եւ ոչ լսեն հրամանացն՝ զսեւագրելոյն ի ձեռն շտալով նմա, նա հրաման տուեալ մարախոցն ուտել զամենայն վաստակ եւ զխոտ երկրին եւ սպառել զամենայն պտուղ անդոյ նոցա, եւ ստայօդութիւնս բազում»[92]։ Հասկանալի է, որ ջուղայեցիներն այս ձևով չէին կարող հիացնել մարդկանց, այս մեր պատմագրի մեկնաբանությունն է։ Ջուղայեցիները «սուտ սքանչելիս»-ները պատմելով են հիացրել մարդկանց և «զօրացուցանելով զայս դիւաբնակ Մխլոյս»-ին, նրանով, որ իբր «հրովարտակ հանելով ի Շահէն եւ այլ խաներացն, ուր եւ գտանիցէ (սևագլուխներին— Լ. Բ.)... սպանանիցէ եւ զբազումս հալածեսցէ յաշխարհէն Հայոց, որպէս արար բազմաց»[93]։ Դարանաղցին սակայն խոստովանվում է, որ «Զարեանց հեղմունս գործէր (Մեխլուն— Լ. Բ.), եւ տեսանէր որ հաճոյ էր յաչս ամենեցունց ազգէտ աշխարհականացն իւր անօրէն մոլի կատաղութիւնն, նա օր քան զօր յաւելոյր զգործ չարեացն»[94]։

Ի վերջո, ասում է պատմագիրը, Մեխլուն գնացել է Երուսաղեմ, ուր տեղի Գրիգոր եպիսկոպոսը բանտարկել է նրան ու ցանկացել է հանձնել իշխանությանը, սակայն «ուխտական տօլմաթաւորքն բազում աղաչանօք հազիւ զերծուցեր էին ի ձեռանէ Գրիգոր եպիսկոպոսին եւ եկեալ էր ի Հալապ։ Եւ մեր երկրէն վաճառական Սաֆարն ասաց թէ՝ ի Հալպայ ես բերի մինչեւ ցԱմիթ եւ անտի ի յետ անյայտ եղեւ»[95]։

Ջուղայեցիների նկատմամբ ունեցած խիստ բացասական վերաբերմունքը և պայմանավորել է վաճառականությանը տրված Դարանաղցու բնութագիրը։ Դավրիժեցուց և դարի մյուս պատմագիրներից գիտենք, որ

91 Նույն տեղում, էջ 457։
92 Նույն տեղում, էջ 470։
93 Նույն տեղում։
94 Նույն տեղում։ էջ 471։
95 Նույն տեղում, էջ 472։

XVII դարում հայ հասարակական կյանքում ինչ դեր են խաղացել առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչները, հատկապես Ջուղայի խոջաները, ինչ դեր են կատարել հայ եկեղեցու վերանորոգչության բնագավառում։ Պանդխտության մեջ դեգերող մեր այս պատմագիրը, սակայն, վարկաբեկիչ ձևով է ներկայացնում վաճառականությանը, «թողեալ են զաստուածապաշտութիւնն եւ մամոնայի ծառայք են եղեալ, եւ ագահութեան ախտին կուրացեալք, եւ ամենեքեան մեծատունք լինելոյ կու ջանան եւ են քան զչափն յաւելի... թողեալ են զկին, զուստերս եւ զդստերս իւրեանց անտէրունչս եւ կարօտեալս եւ նեղեալս, եւ իւրեանքն ցիր եւ ցան եւ տարածեալ ընդ ամենայն երեսս երկրի՝ որպէս զմարախ... ի պատճառս ագահութեան ախտից եւ մթերման գանձուց յաւելուածութեան»[96]։ Ըստ Դարանաղցու, վաճառականությունն անհրաժեշտ է, սակայն այն պետք է չափ ու սահման ունենա։ Մոտակա տեղերում այն պետք է տևի 3—4 օր, ամենից շատը 40 օր, իսկ հեռավոր ճանապարհներինը՝ մինչև 3 և ոչ ավելի տարի, մինչդեռ «Որչափ եմք տեսել, որ երեսուն տարով եւ յաւելի ի յերիտասարդական հասակին ելան ի տանց եւ ի ծերութեան հասակին եղեն եւ մեռան յօտարութեանն և ագահութեամբ ժողովեալն թշնամեաց եղեն կերակուր, որպէս որ բազմաց պատահեցաք եւ շատ ջանացաք՝ չկարացաք ի հաւանութիւն ածել ի տուն գնալոյ... մանաւանդ ջուղայեցիքն»[97]։

Դարանաղցին այնուհետև նշում է, որ նրանք օտար երկրներում ցոփ ու անբարոյական կյանք են վարում, տեղի բնակչությանը գրգռում իրենց դեմ։ Օտարության մեջ նոր կին էին առնում, թողնելով իրենց ընտանիքը կարիքի ու կարոտի մեջ, հաճախ նոր կանանց պատճառով դավանափոխ էին լինում։ Ապա բերում է մի շարք օրինակներ ու ավելացնում. «Զայսքան փոքրիշատէն զոր ես գրեցի, ամենեցուն ականատես եմք լեալ, եւ են ամենեքեան շատաշուրջքն միապէս վէսք, ամբարտաւանք, սնապարծք, անգութք, անողորմք, աննուէրք, անպատիւք եւ բնաւ ոչ դնեն պատիւ ոմեք բայց յԵրուսաղէմացոց եւ էջմիածնեցոց՝ վասն փառասիրութեան աղագաւ»[98]։

«Եւ ի նոցա միջումն այլ կու լինին լաւ հասկացող եւ երկիւղած բարեսէր մարդիկ...»։ Բայց, ցավով նկատում է պատմագիրը, «մինն ի հազարաց եւ ի բիւրուց»[99]։

96 Նույն տեղում, էջ 457—458։
97 Նույն տեղում, էջ 459։
98 Նույն տեղում, էջ 465։
99 Նույն տեղում, էջ 466—467։

* * *

Դարանաղցու «ժամանակագրությունը» կարևոր աղբյուր է Թուրքիայի XVII դարի առաջին կեսի, ու հատկապես 30-ական թվականների իրադարձությունների՝ ենիչերիների ապստամբության, սուլթան Մուրադի դեմ կազմակերպված դավադրության ու նրա ճնշման, կառավարման արատավոր բարքերի, հայ գաղթօջախի և արքունիքի փոխհարաբերությունների, հարկային բիրտ քաղաքականության, շահագործման ձևերի, Պոլսահայ համայնքի ներքին կյանքի, ստորին խավերի ծանր վիճակի և շատ այլ բնագավառների պատմության ուսումնասիրության համար։

Այն, ինչպես ճիշտ նկատում է Ա. Առաքելյանը,— հարուստ նյութ է պարունակում XVI դարի վերջերի և XVII դարի առաջին կեսի հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ։ Նկարագրած դեպքերի ու դեմքերի մասին հաղորդումները մեծ մասամբ ճշմարտապատում են, որովհետև հեղինակն ականատես է եղել, անձամբ տեսել նկարագրվող անձերին, հարաբերության մեջ եղել նրանց հետ, իսկ որոշ դեպքեր լսել է ականատեսներից և գրի առել առանց ստուգելու երևույթների ճշմարտությունը։ Լինելով նախապաշարված, հավատացել է դևերի, հրաշքների և հաճույքով նկարագրել է դրանց մասին լսածը։ Դարանաղցին «Ժամանակագրության» մեջ ներկայացրել է իր ժամանակաշրջանի կենցաղը, սովորությունները և այլն[100]։

«Ժամանակագրությունը» կարևոր է նաև XVI—XVII դարերի սոցիալ-տնտեսական բազմաթիվ տերմինների վերծանման համար։

100 Ա. Առաքելյան, Նշվ. աշխ., էջ 517—518։

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ

XVII դարի առաջին տասնամյակների հայ մտավոր կյանքի զարթոնքի ծնունդ է նշանավոր պատմագիր Առաքել Դավրիժեցին, որի Պատմությամբ և նշանավորվեց ուշ միջնադարի հայ պատմագրության վերածնունդը։

Նա ծնվել է Ատրպատականի Թավրիզ քաղաքում և ծննդավայրի անունով էլ հորջորջվել՝ «Դավրիժեցի»։ Նրա ծննդյան թիվը հայտնի չէ, ենթադրում են XVI դարի վերջին տասնամյակը[1], մահացել է 1670 թ., թաղված է Էջմիածնում, տապանաքարի վրա գրված է՝ «Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետի Ռճժթ»։

Իր ուսումնառությունը նա ստացել է Էջմիածնի միաբանությունում, աշակերտել է Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսին և նրանից ստացել վարդապետական աստիճան։

«Իսկ նուաստս եւ տրուպս յամենեսին Առաքեալ կոչմամբս՝ սպասաւոր բանի, գոլով իմ տեղեաւ ի քաղաքէն Թաւրիզու, եւ յաշակերտութենէ սոյն տեառնս Փիլիպպոսի կաթողիկոսի, եւ ի միաբանութենէ լուսակառոյց աթոռոյն սրբոյ Էջմիածնի, որ և աստէն իսկ սնեալ եւ վարժեալ, եւ յաւուրս ծերութեան ժամանեալ»[2], գրել է իր մասին պատմագիրը։

Զաքարիա քանաքեռցու «Պատմագրության» Մատենադարանում պահպանված մի ձեռագրից իմանում ենք նաև, որ Դավրիժեցին մեկ տարի եղել է Հովանավանքի վանահայրը (1636 թ.), որից հետո գնացել է Էջմիածին[3]։

Ժամանակակիցները նրա մասին պատկառանքով են խոսել։ Ստեփանոս Լեհացին իր հիշատակարաններից մեկում, ուր խոսում է Էջ-

1 Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան 1946, էջ 443։

2 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 668։ Այսուհետև՝ Դավրիժեցի։

3 Մատենադարան, ձեռ. № 3024, թ. 143 բ։

միածնի ուսումնարանի մասին, գրել է. «Զայնու ժամանակաւ բաղում էին երևելի վարդապետք (յէջմիածին), քաջաբանք, բանաստեղծք աստուածային գրոց, քաջք գիտունք և հմուտք, յորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցիկ յարմար բանիւ գրոշմեալ»[4]։

Զաքարիա քանաքեռցին էլ գրել է. «Թաւրիզեցի Առաքեալ վարդապետն, որ տեղեակ էր ամենայն պատմագրաց, որ և արար զպատմութիւնս աւերման աշխարհիս Արարատեան ի մեծ Շահ-Աբասէն»[5]։

Դավրիժեցու ծավալած գործունեության ու պատմություն գրելու շարժառիթների մասին տեղեկություններն իմանում ենք նրա գրած պատմությունից, որ մեզ է հասել «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ սակս դիպուածոց Հայաստանեայց եւ գաւառին Արարատայ եւ մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ՌՇԱ թուականին հայոց մինչ ի ՌՃԺԱ թ. «խորագրով և Պատմության» վերջում տրված նրա հիշատակարանից։

Ըստ երևույթին, Առաքել Դավրիժեցին էջմիածնի միաբանության ճանաչված դեմքերից մեկն է եղել, իբրև Փիլիպպոս կաթողիկոսի նվիրակ շատ է ճանապարհորդել արևելքում և արևմուտքում, եղել է Հունաստանում, Ամասիայում, Սեբաստիայում, Ուռհայում, Հալեպում, Սպահանում և ուրիշ շատ քաղաքներում ու գավառներում[6]։ Նա իրեն համարում է Փիլիպպոս կաթողիկոսի «ձեռնասուն աշակերտը»[7]։ Լինելով այդպիսին, նա այդ կաթողիկոսից հրաման է ստացել գրելու ժամանակակից կարևոր իրադարձությունների պատմությունն ապագա սերունդների համար։ Դավրիժեցին վկայում է, որ իր ժամանակակիցներից շատերն են խնդրել կաթողիկոսին «արձանացուցանել ի գիրս յիշատակի ի գիտութիւն յապայ եկելոց, որք յանցնիւր դարս և ժամանակս յառաջագայինս»[8]... Պակաս շահագրգռված չի եղել և կաթողիկոսը «Եւս և ինքն կաթողիկոսն Փիլիպպոս,— ընդգծում է Դավրիժեցին,— զառաւելագոյն փոյթ ունէր քան զամենեսեան սակս սմին իրաց, վասն որոյ հարկէր երբեմն զայս՝ և երբեմն զայն՝ զի կատարեսցեն զայս գործս»[9], ինչպես նշում է պատմագիրը, բոլորն էլ հրաժարվել են իմանալով գործի դժվարությունն

4 Տե՛ս Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 442։

5 Զաքարիա Սարկաւագի Պատմութիւն, հ. Գ., գլուխ Դ., էջ 4, Վաղարշապատ, 1870։

6 Տե՛ս Դավրիժեցի, էջ 414—418։

7 Նույն տեղում, էջ 414։

8 Նույն տեղում, էջ 667։

9 Նույն տեղում, էջ 668։

ու բարդությունը և միայն ինքն է կատարել կաթողիկոսի «ահեղ հրամանն»[10]-ը, այնուհետև պատճառաբանում է, թե ինչու է համաձայնվել կատարել հրամանը՝ գրել պատմությունը։ Ասում է, չնայած ինքը շատ է աշխատել կաթողիկոսին համոզելու իր տկարության, հետևաբար և՝ անկարողության մասին, բայց իզուր։ Հարկ է նշել սակայն, որ Դավրիժեցին կատարել է ոչ միայն Փիլիպպոսի, այլև նրան հաջորդած Հակոբ Ջուղայեցու հրամանը, որովհետև առաջինի մահից հետո ինքը կիսատ է թողել պատմությունը «զի կարի բաղմախոնջ և աշխատաւոր և արժանի թուեցաւ ինձ այս գործ, վասն որոյ ի բաց կացի և հրաժարեցայ ի սորին առնելոյն»[11]։ Սակայն հետագայում Ջուղայեցին հարկադրում է պատմագրին շարունակելու ու ավարտելու սկսած գործը և այն նա ավարտում է 1662 թ., տալով 60 տարվա ռազմաքաղաքական բուռն իրադարձությունների հարուստ պատմությունը (1602—1662 թթ.)։ Դավրիժեցին «Պատմությունը» գրել է 9 տարում (սկսել է գրել 1651 թ. 1655 թ. դադարեցրել է և 1658 թ. շարունակել)։

Նրա պատճառաբանությունների մեջ կարևոր են երրորդը և չորրորդը, որոնք բնութագրում են պատմագրին իբրև ջերմեռանդ հայրենասերի։ Այնտեղ կարդում ենք, «Երրորդ և ես ինձէն իսկ տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին, և զնուաղիլն մերոյս ազգին, և զչարութիւն մահմետականաց, կսկծալի մորմոքմամբ այրիւր սիրտ իմ, վասն որոյ յօժարեցայ յարձանագրութեան սոցին։ Չորրորդ... զի հայելով ի յոլովութիւն յանցանաց... իբրև զլոմայս այրուն արկի ի դանձանակն Տեառն, զի թերևս սովաւ գտայց ներումն անցեալեաց իմոցս պարտեաց»[12]։

Ջերմ հայրենասիրության ներքին մղումն է ուժ ներշնչել ծերության հասակն առած ու տկար Դավրիժեցուն «յանձն առի զայսպիսի յոգնաշխատ և բազմաերկ և զտաժանելի գործս՝ և աւուրս յոլովս ի սմին դեգերելով ի յոլով երկիրս և յաշխարհս շրջագայելով ի խնդիր զրուցաց պատմութեան, ոչ միայն ի քրիստոնէից, այլ յայլոց ազանց հարցանելով, և ամենեցունց զասացեալսն գրելով, և վասն զստուգութիւն բանին գտանելոյ, եղև զի զմի պատմութիւն, տասն անգամ և այլ աւելի կրկնելով գրեցի, և զամս ինն ի սմին դեգերելով և զինչս ծախելով, հազիւ թէ զայսքան պատմութիւնս ի մի վայր հաւաքեցի և գրեցի, և բնաւ ոչ ոք եղև ինձ ձեռնտու...»[13]։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում, էջ 669։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, էջ 669—670։

Պատմագիրը գիտակցել է «այսքան պատմությունները ի մի վայր հավաքելու ձևով պատմություն գրելու պակաս ու թերի կողմերը։ Դիմելով ընթերցողներին նա գրում է. «իսկ թերին և թիւրն և այլ սոյնպիսիքն յիմս տգիտութենէ և ի տկարութենէ, վասնորոյ աղաչանօք խնդրեմ ի ձէնջ ներումն»։ Եվ ավելացնում է. «Այլև դիպեցաւ պատահել ինձ այս գործ ոչ ի ժամանակս առոյգ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի. նաև յոյժ ցաւագար մարմնով, և ի լուսոյ աչքս պակասեալ և ի պնտութենէ ձեռքս թուլացեալ դողայր. սոյնպէս և յայլոց յամենայն կարողութեանց տկարացեալ...[14]։

Պատմության «Նախադրութիւն»-ում Դավրիժեցին ընթերցողին ասում է, թե ինչի մասին է գրել և տալիս է իր շարադրանքի սկզբունքները։ Պարզվում է, որ նա ժամանակագրությանը շատ մեծ և կարևոր տեղ է տվել։ «Այլ և գիտելի է,— նշում է նա,— զի ըստ պահանջելոյ հարկին աստուանօր պարտ է դնել զթուականն իբր զհիմն, և ապա յարել ի նոյն զպատմութիւն որպէս զշինուածս, ըստ օրինի պատմագրաց, բայց քանզի ազգս մեր յաւարառուաց և ի գերլաց և ի հարկապահանջողաց ցիր և ցան եղեալ են... ոչ գտաք գիտող այր այնպիսի, որ զի ընդ պատմութեան և զթուականն ևս ծանուցեալ էր։ Բայց մեր յոլով աշխատութեամբ խոյզ արարեալ՝ զորս գտաք, կարգեցաք ընդ պատմութեանն և զթուականն ևս, և զորս ոչ գտաք, առանց թուականի պատմեցաք և դու ընկալ զայս այսպէս առանց մեղադրելոյ...»[15]։

Առաքել Դավրիժեցին անհրաժեշտ պատրաստություն չի ունեցել, էջմիածնի դպրոցը նրան սովորեցրել է գրաբարը, այն էլ ոչ դասականը, և «նա ավելի հետևել է ժողովրդական պարզ շարադասությանը, կենդանի ժողովրդական ձևերին ու դարձվածքներին, չխորշելով,— ինչպես ճիշտ նկատում է Մ. Աբեղյանը,— ճշտության ու պարզության համար նույնիսկ գավառական ու թուրքերեն բառերից, որ և ոչ թե պատմագրի պակասություն, այլ առավելություն պետք է համարել, զի ամեն պատմություն կամ զրույցների ժողովածու, ինչպես և Առաքելի Պատմությունը, յուր կենդանությունը, գույնն ու երանգը ստանում է միայն ժամանակի կենդանի լեզվով պատմվելով»[16]։

Էջմիածնի դպրոցը պատմագրին բավական ծանոթություն է տվել նաև ս. գրքերի մասին, որոնց ոգով և նա դաստիարակվել է և իր «Պատմության» մեջ առատորեն օգտագործել դրանք։ Նա ամեն կերպ հասկացնել է տալիս, որ ինքը գիտե ս. գրքերը, նա դրանցից վերցրել է ոչ միայն գրելու ձևերը , այլև շատ խրատական ու նկարագրական օրինակներ ու տեղայնացրել, հարմարեցրել իր ապրած օրերին։

Առաքել Դավրիժեցին մինչ XVII դարը հայ պատմագիրների մեջ այն բացառիկ դեմքն է, որի կենդանության ժամանակ տպագրվել է գրվածքը։ Նրա «Պատմությունը» հրատարակվել է 1669 թ. Ամստերդամում, հետևաբար հավանական է, որ նա տեսել է այդ հրատարակությունը։ Հետաքրքիր է, որ «Պատմությունը» հրապարակ գալուց (1662 թ.) 6 տարի հետո տպագրվել ու լայն ընթերցող հասարակությանն է ներկայացվել։ Կարծում ենք, որ այս հանգամանքը բացատրել միայն տպագրական հնարավորությունների առկայությամբ ճիշտ չէր լինի, այդ առկայությունը կար, երբ Դավրիժեցին ավարտել էր իր «Պատմությունը», բայց այնուհանդերձ, իր «յողորմելի ծերութեան» հասակում նա ստիպված է եղել, ինչպես վկայում է «Պատմությունը» 1666 թ. արտագրող— գրիչ Ավետիքը, թե «հոգաբարձութեամբ, ծախիք և արդեամբք՝ Առաքեալ վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագրքիս շինօղն և արարօղն... որ վասն զօրինակն բազմացուցանելոյ ետ գրել զայս գիրքս, որ եւ այս հինգերորդ գիրք է, որ ինքեան Առաքեալ վարդապետի ձեռացագիր օրինակէն գաղափարեցաւ, որ յոլով ջանիւ և բազում հոգաբարձութեամբ ծախէ ինչս և ձեռամբ գրչաց գրել տայ առաջին վասն օրինակին բազմանալոյ, և երկրորդ վասն առ տէր յիշատակի...»։ Ավետիք գրիչը իր հիշատակարանում նշում է նաև, որ Դավրիժեցին «զանազան և պէսպէս կերպիւ բազում աշխատանս կրեաց վասն պատմագրքիս, և տակաւին ևս ի նոյն աշխատանս կայ...»[17]։

Պատահական չէ, որ հայ պատմագիրների թողած հարուստ պատմագրական ժառանգությունից առաջինը հրատարակվել է Դավրիժեցու «Պատմությունը»։ Արդ, ինչով էր պայմանավորված այդ, ինչու XVII դարի 60-ական թվականներին ապրած հայ մշակույթի գործիչները հրատարակության գործում առաջնությունը տվել են Դավրիժեցու «Պատմությանը» և ոչ թե ամբողջ միջնադարում, չհաշված ս. Գիրքը, հայ պատմական ու պատմագրական մտքի վրա իշխած Պատմահոր Մովսես Խորենացու «Պատմությանը», որը տպագրվել է Դավրիժեցու գրքի լույս ընծայումից 16 տարի հետո միայն՝ 1685 թ. նույն Ամստերդամում։ Մեր կարծիքով այդ թելադրված էր Դավրիժեցու Պատմության պարունակած բովանդակությամբ, որն էլ իր հերթին կյանքի էր կոչվել ժամանակի պահանջով։

14 Նույն տեղում, էջ 671։

15 Նույն տեղում, Նախադրութիւն։

16 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 444։

17 Դավրիժեցի, էջ 673։

* * *

XVII դարը հայ ժողովրդի համար սկսվեց ավերիչ ու օրհասական իրադարձություններով։ Մեծավոր արևելքում գերիշխող դիրք գրավելու և Անդրկովկասը նվաճելու համար աշխարհակալության ձգտող Իրանի և Թուրքիայի միջև հակամարտություններն իրենց գագաթնակետին էին հասել, Հայաստանն ու հարևան շրջանները շարունակում էին մնալ պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմ, ոտնատակ տրվում փոփոխակի հաջողություններ ունեցող իրանա-թուրքական բանակների կողմից։ Դարի առաջին տասնամյակում հայ ժողովրդին վրա հասավ ամենասոսկալի և ամենակործանարար հարվածը՝ շահ-աբբասյան բռնագաղթը, երկրի շատ նահանգների ավերումն ու ամայացումը, որոնք զուգորդվում էին հայերի ազգային ու կրոնական հալածանքների անասելի ուժեղացմամբ ու դաժանությամբ։ Հենց այդ տասնամյակի արյունալի իրադարձություններում, կրակի մատնված քաղաքների ու գյուղերի բոցերում, Արաքսի փոթորկալից ու արյունաշաղախ ալիքներում ծնվեց հայ քաղաքական կյանքի զարթոնքը։ Հայ դավանանքը և ազգային ինքնատիպությունը խիստ վտանգված էր։ Դրանք պահպանելու համար նորից էր ըմբոստացել հայի ազատատենչ ոգին, ժամանակը հերոսական էր, հայակործան իրադարձությունները դյուցազներ ու դյուցազնուհիներ էին ծնում։

«Կանայք և տղայք և աղջկունք՝ որք մնացին ի սպանմանէն,— գրում է Դավրիժեցին գառնեցիների մասին,— իբրև տեսին զինքեանս մատնեալս ի ձեռս անիրաւ մարդադէմ գաղանաց՝ որ վարեն զնոսա ի գերութիւն՝ և պէսպէս աղտեղութեամբ ապականեն զսրբութիւն նոցա, վասն որոյ լաւ համարեցան զսրբութեամբ մահն իւրեանց քան զապրուստ սուղ ինչ ժամանակեայ կենաց... բազումք ի նոցանէ պատէին զերեսս փակեղամբ և ձորձով իւրեանց և յանբաւ բարձրութենէն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքեանս և մեռանէին»[18]։

Դավանանքի համար նահատակվելը, մարտիրոսանալը հաճախացել էր և առատ նյութ էր դառնում վկայաբանական, վարքագրական պատմությունների համար, որոնք միշտ էլ սիրելի էին ժողովրդին, մեծ հետաքրքրությամբ էին ընթերցվում, և որ կարևորն է, խթանում էին ժամանակիցների ու գալիք սերունդների ազգային ինքնագիտակցության բարձրացմանը։ Մ. Աբեղյանը ճիշտ նկատում է, որ «բազմաթիվ քաջ նահատակներով ավելի ևս զորանում էր ժողովրդի մեջ ազգային եկեղեցու հավատը, ջերմեռանդ փափագանոք համբուրելով «զսուրբսն», նրանց մարմնի մասունքը եկեղեցիների մեջ դնելով և բոլոր բազմությամբ դիմելով սրբի թաղմանը, մի ազգային մեծ հանդես կատարելով այն տխուր ժամանակին, երբ հայը զրկված էր ամեն հանդեսից ու մի տեղ խմբվելու հնարավորությունից, թեպետ և մահմեդականներն այդպիսի տխուր հանդեսներ կատարելն անգամ արգելում էին։

Մինչդեռ ազգային մխիթարությունն այդպիսիների գլխին լույս է իջեցնում, շարաշար պատժում է հավատուրացներին, որ միևնույն է՝ ազգուրացներին»[19]։

Եկեղեցու հարազատ զավակ պատմագիր Առաքել Դավրիժեցին, նրա շրջապատը՝ արյունալի իրադարձությունների պատմությունը գրի առնելու անհրաժեշտությունը գիտակցողները ճիշտ էին ըմբռնել վկայաբանական պատմությունների դաստիարակիչ դերը և նրանք չէին կարող անտարբեր լինել նրանց նկատմամբ։ Դրանով պետք է բացատրել, որ Դավրիժեցու Պատմությունը հագեցված է այդպիսի վկայաբանական պատմություններով, որոնք և նրա ժամանակակիցների վրա մեծ տպավորություն են թողել, այն ձեռագիր վիճակում ժողովրդի մեջ մեծ հետաքրքրություն է առաջացրել, ինչպես ասում են, բռնել է իր քննությունը և անհետաձգելի պահանջ դարձրել նրա տպագիր հրատարակությունը։

Առաքել Դավրիժեցու «Պատմությունը» դարձել է սիրելի ու ժողովրդական մի գիրք։ Նա միանգամայն ճիշտ է ըմբռնել իր ժամանակակիցների զգացմունքները, տենչանքներն ու ոգին և շատ գեղեցիկ կերպով արտահայտել է դրանք, և թերևս ժամանակակից հրատարակիչները ելնելով իրենց ժամանակի համար այդ երկի ակտուալությունից, առաջինը տպագրել են նրա «Պատմությունը»։

Կարծում ենք դժվար է անվերապահորեն ընդունել Դավրիժեցու մասին Մ. Աբեղյանի այն կարծիքը, որ իբր «նա չէր կարող, անշուշտ, պատմական առողջ դատողություն ունենալ և ոչ իսկ պատմական ընդարձակ աշխարհայեցողություն, որ կարողանար իրողությունները կշռադատել իրենց պատճառներով ու ծանրակշիռ հետևանքներով»[20]։ Մեծանուն բանասերը գտնում է, որ պատմագիրը պատրաստություն չուներ, նրա «բոլոր գիտությունը մի քանի կրոնական գրքեր կարդացած լինելն էր և շատ ճանապարհորդությունների ժամանակ յուր հարցասիրությամբ ձեռք բերած ծանոթությունները»[21]։ Մ. Աբեղյանը նկատում է նաև, որ նա շատ

18 Նույն տեղում, էջ 51—52։

19 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 450։

20 Նույն տեղում, էջ 451։

21 Նույն տեղում։

միամիտ ու սնոտիապաշտ է եղել և դրանով նա «ոչնչով բարձր չէ ռամիկ ու տգետ ժողովրդից»[22]։ Ինչպես հայտնի է Դավրիժեցուն գրչակից գրեթե բոլոր նախորդները ավելի կամ պակաս չափով հավատացել են հրաշքներին, տեսիլներին, երազներին, սակայն նրանք բարձր են կանգնած եղել «ռամիկ ու տգետ ժողովրդից», ուստի Դավրիժեցու՝ դրանց նկատմամբ հավատքն ու հասկացողությունը դժվար թե չափանիշ կարող է լինել նրա գիտելիքների ու կարողությունների աստիճանը որոշելու համար։ Չպետք է մոռանալ, որ միջնադարի մեր պատմագիրները իրենց երկերում հրաշքների, տեսիլների, կանխագուշակ քնի, երազների մասին զրույցները օգտագործել են պրակտիկ նպատակների համար։ Դրանցով նրանք սանձահարում էին եկեղեցու հակառակորդներին, ավելի ազդու դարձնում իրենց հետապնդած քարոզչական հոգևոր ու քաղաքական նպատակներն ու գաղափարները։ Որպես կանոն, այդ կարգի զրույցներում հիմնականում տեսիլները, հրաշքները, երազները վերագրված են հոգևոր վերնախավի ներկայացուցիչներին, որոնք աստծո ու Քրիստոսի օգնությամբ ու միջոցով կատարում էին այդ հրաշագործությունները։ Նկատենք նաև, որ նման զրույցները կամ պատմությունները ստեղծվել ու ավելի տարածում են գտել հատկապես այն ժամանակաշրջաններում, երբ հայոց եկեղեցուն, հայերի հավատին վտանգ է սպառնացել և հոգևոր հայրերը, եկեղեցու գաղափարախոսները ամեն ինչ արել են ժողովրդի մեջ ամրապնդելու հավատը՝ հանդեպ իրենց դավանանքը։

Դավրիժեցու ապրած օրերում էլ հայոց դավանանքը խիստ վտանգված էր և նա այլ կերպ չէր կարող վարվել, նա էլ թերևս շատ բաների չի հավատացել, բայց իր հետապնդած նպատակներն ավելի ազդու ու նպատակասլաց դարձնելու համար ստիպված է եղել իր «Պատմության» մեջ բերելու այդ զրույցները, պատմությունները՝ ժամանակի ժողովրդական կենդանի ու պարզ լեզվով։

Վկայաբանական պատմությունների համոզչականությունը, վարակիչ ու ազդու լինելը պահանջում էր դրանք հագեցնել հրաշապատումներով։ Այդ էր պահանջում Դավրիժեցի պատմագրի ապրած ժամանակաշրջանը և նրա «Պատմությունն» էլ այդ ժամանակաշրջանի արգասիք էր։ Անհրաժեշտ էր ցույց տալ, համոզել ընթերցողին, որ դավանանքի համար նահատակվածները «ամենեքեան արժանացեալք էին շնորհաց սրբոյ հոգւոյն», այդպիսի պատմությունները Դավրիժեցին համարում է «արժանի լսելոյ... վասն զի Հոգին Աստուած վերակացու էր նոցա»[23]։

22 Նույն տեղում։

23 Դավրիժեցի, էջ 258—259։

Մ. Աբեղյանը ճիշտ է նկատում, որ «ժամանակի վիճակն էր այդ. կրոնի պատճառով հայ ազգը հալածվում էր, և կարելի է ասել, որ Առաքելի ամբողջ գրվածքը գրեթե մի համազգային վկայաբանություն և նահատակություն է ինչ որ ընդհանուր ազգին է վերաբերում, բայց և մասնավոր նահատակություններով էլ լի է Առաքելի «Պատմությունը»... որոնք մի տեսակ հավելված են Առաքելի «Պատմության», և կարևոր հավելված՝ ժամանակի վիճակը լավ ըմբռնելու համար»[24]։

Նշելով XVII դարում հայ պատմագրության վերակենդանացման մասին Լ. Դանեղյանը միանգամայն ճիշտ գրում է, թե «Այս պայմաններում Դավրիժեցի պատմագրի ծնունդը օրինաչափ ու անհրաժեշտ երևույթ էր, և նրա «Պատմությունը» օրգանական շարունակությունն էր սկսված նորոգության»[25]։

Վերևում ասացինք, որ դժվար է անվերապահորեն համաձայնվել Մ. Աբեղյանի կարծիքին՝ Դավրիժեցու պատմագիտական աշխարհայեցողության մասին։ Այս հարցում անվանի բանասերը, կարծեք, հակասում է իրեն՝ գրելով. «չնայած յուր մեծ միամտությանը, նա (իմա՝ Դավրիժեցին— Լ. Բ.) լավ կերպով ըմբռնել է ժամանակի ոգին և մանավանդ Շահաբասի քաղաքականությունը, ձգտումներն ու նպատակը, գործ դրած խորամանկ միջոցները, մինչդեռ իր ժամանակակիցները չեն հասկացել այդ թագավորին, և նա զանազան զրույցների հերոս դարձած, նույնիսկ քրիստոնեասեր է համարվել»[26]։ Ինչքան մեզ հայտնի է, «պատմական առողջ դատողություն չունեցող» մարդը չէր կարող լավ կերպով ըմբռնել իր ապրած օրերում հայրենիքին ու ժողովրդին սարսափներ ու աղետներ բերող թագավորի նենգ ու բիրտ, աշխարհակործան քաղաքականության էությունը։ Ինչպես Եղիշեն ու Փարպեցին էին իրենց ժամանակին հասկացել Շապուհի՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության հետապնդած նպատակները, ինչպես Սեբեոսն ու Ղևոնդն էին հասկացել բյուզանդական կայսր Մորիկի՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության էությունը, այնպես էլ Առաքել Դավրիժեցին էր խորը կերպով ըմբռնել շահ Աբբաս Ա-ի հետապնդած նպատակները, նրա՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության կործանարար հետևանքները Հայաստանի ու հայերի ճակատագրի համար։ Նվ ոչ միայն այդ, Դավրիժեցին քաջ գիտակցել է նաև անապատների ու անապատականների խա-

24 Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 449։

25 Լ. Դանեղյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի 17-րդ դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978, էջ 11։

26 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 451։

ղացած դերը ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում, քաղաքական ու հոգևոր կյանքի զարթոնքի համար և զգալի տեղ է տվել իր «Պատմության» մեջ նրանց ծավալած բեղմնավոր գործունեության նկարագրությանը։

Մոլի կրոնասիրության և անարատ բարոյականության հետ՝ պատմագիր Դավրիժեցու մոտ սակայն, հայրենասիրության ոգին գերազանցում է ամենին, այն ավելի հզոր է ու սրտառուչ։ Միանգամայն ճիշտ է նկատում Մ. Աբեղյանը, որ Դավրիժեցին խորենացու հայրենասիրությամբ, բայց և առանց խորենացու ճարտասանության, պարզ ու բնական, խորենացուց ավելի սրտառուչ է ողբում յուր հայրենիքը, որից ավելի գեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ողբալ»[27]։

Պատմագիրը նախքան շահ Աբբաս Ա-ի հայերին պատճառած ավերածությունների մասին պատմելը, դառնացած գրում է հայ ժողովրդի ճակատագրի մասին, որից հետո անցնում է իր հիմնական նպատակին՝ մեծ գաղթի՝ սուրգունի պատմության շարադրմանը։

«Ազգս հայոց,— գրում է նա,— որք մատամբն և կամօքն իւրեանց կուրացուցին զաչս իւրեանց. զի ինքեանք կործանեցին զթագաւորութիւնն իւրեանց՝ նենգութեամբ և անհնազանդութեամբն իւրեանց, և եղեն ոտից կոխան, և ծառայք և գերիք այլոց ազգաց և թագաւորաց, և ի ժամանել նեղութեանց իրիք ի վերայ ինքեանց, իբրև ոչ գտանեն օգնութիւն յուստեքէ, անճար մնացեալ փախստական լեալ ճողոպրին այսր և անդր (ավանդաբար տիրող այս սխալ դրույթին տուրք է տվել նաև պատմագիր Դավրիժեցին— Լ. Բ.)։

Արդ՝ եթէ յայսմ պատճառէ, և թէ կանխաւ պատմեալ մեծ սովին և Ջալալոց պատճառէն, ամենայն ազգն Հայոց ելեալ վտարանդիք եղեն յիւրաքանչիւր տեղեաց, ի հայրենի բնակութեանց և յաշխարհաց, և տարագէմ գնացեալ ընդդէմ երեսաց՝ ցիր և ցան եղեալ սփռեցան ընդ ամենայն աշխարհ»[28]։ Այնուհետև թվում է այն երկրներն ու քաղաքները, ուր ապաստան են գտել գաղթած հայերը։

Դավրիժեցին անդուսպ ատելությամբ է լցված շահ Աբբաս Ա-ի և պարսկական արքունիքի նկատմամբ։ Զայրույթով և ցավով բացահայտում է նրանց՝ հայերի նկատմամբ գործադրած միջոցառումների բուն էությունը քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքի բնագավառներում, քայլ առ քայլ մերկացնում է պարսիկ բռնակալների՝

27 Նույն տեղում, էջ 448։
28 Դավրիժեցի, էջ 147։

Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ վարած նենգ ու բիրտ քաղաքականությունը, մինչդեռ Դավրիժեցու ժամանակակիցները, իր իսկ վկայությամբ, չեն հասկացել այդ քաղաքականության բուն էությունն ու հետապնդած նպատակները։

Դավրիժեցին այնքան խորն է ապրել իր հայրենիքին ու ժողովրդին Արևելքի այդ բռնակալի կողմից պատճառած արհավիրքները, որ նրա ամեն մի ձեռնարկումը նկարագրելուց առաջ, կարծեք թե թափանցել է շահ Աբբասի ներաշխարհը, կռահել նրա չար դիտավորությունները։

Անարգանքի սյունին դամելով Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսներին, որոնք մ. աթոռը ֆինանսական ծանր վիճակից փրկելու համար որոշել էին գնալ շահ Աբբասի մոտ, պատմագիրը գրում է. «Խորհեցան խորհուրդ՝ և ոչ տերամբ ըստ գրեցելումն, ի կորուստ անձանց իւրեանց, ի կործանումն և ի տապալումն աշխարհին, և ի ջնջումն ազգին իւրեանց»[29]։ Այնուհետև նշելով Մելքիսեթ կաթողիկոսի և երկու եպիսկոպոսների հանդիպումը շահի հետ Դավրիժեցին հենց սկզբից ընթերցողին տալիս է նրա բնութագիրը ու նրա հեռու գնացող նպատակադրումները։

Ասում է նշված հոգևորականները «զեկուցին նմա զխորհուրդս իւրեանց։ Իբրև զայն լուաւ շահն և ծանեաւ, ցնծացաւ ի յոգի, բերկրեցաւ ի միտս, զուարթացաւ ի մարմին,... և ըստ խորամանկ բարուց իւրոց Շահաբաս սկսաւ մեծարել և պատուել զնոսա տրօք և պարգևօք երևելեօք, և օր ըստ օրէ կոչեալ զնոսա առ ինքն՝ խօսէր ընդ նոսա ըստ մտաց նոցա, և զսիրտս նոցա յինքն յանկուցանէր և զինքն նոցին հաւատարիմ և բարեկամ ձևացուցանէր, և խոստանայր մեծաց բարեաց հասուցանել զնոսա, և այնքան սնոտի և պատիր խաբեութեամբ կեղծաւորեալ զինքն նոցին մտերիմ ցուցանէր, մինչ զամենայն խորհուրդս սրտից նոցա յինքն գողացաւ. և զամենայն որպիսութիւն աշխարհաց նոցա զել և զմուտ և զաշխարհակալ արանց իմացաւ»[30]։

Նկարագրելով Ջուղայում շահին ցույց տված ընդունելությունը Դավրիժեցին ավելացնում է. «Իսկ վիշապն անդրնդային Շահաբաս, որ ի սկզբանէ զբարս օձի ունի բնաւորեալ յինքեան ընդդէմ քրիստոնէից, իբրև տեսանէր զայնքան հարստութիւն՝ և զբարեվայելչութիւն քրիստոնէից՝ մախայր, և զգայրէր ի սրտի՝ թէ զիարդ պատճառ և ժամ գտցէ նենգել զնոսա։ Բայց առ ժամն ծածկեալ զթոյնսն առ երեսս սրտաճաճուկ լինէր»[31]։

29 Նույն տեղում, էջ 14։
30 Նույն տեղում, էջ 17—18։
31 Նույն տեղում, էջ 25։

Նշելով, որ «հանճարեղն ի խորհուրդս չարեաց Շահաբասը»[32], Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսներին կանչել է իր մոտ և ասել թէ նրանք պարտավոր են օսմանցիներին վճարելիք պարտքը պարսկական գանձարանին տալ, Դավրիժեցին կարծեք հեգնանքով նկատում է. «Այս կաթուղիկոսքս վասն պարտուցն փախեան և ապաւինեցան ի շահն, զի թերևս շահն զնոսա ազատեսցէ ի պարտատեարցն. արդ այժմ շահն ինքն յառաջ ածեալ պահանջէ ի նոցունց զպարտքն, արդ այս է օգնութիւն շահին յոր ապաւինեցան նոքա»[33]։

Նա զայրույթով է խոսում այն աշխարհիկ ու հոգևոր մարդկանց մասին, որոնք չտանելով թուրքական դաժան լուծը, կամովին հպատակություն էին հայտնում շահ Աբբաս Ա-ին, լքում էին հայրենիքը, գաղթում Պարսկաստան։ Նրանց նա «անմիտներ» է անվանում։ Հայրենիքի լքումը, գաղթը, գաղթականությունը Դավրիժեցին ամենամեծ չարիքն է համարում, ինչպես Հայաստանի, այնպես և ժողովրդի համար, և այդ միտքը կարմիր թելի նման անցնում է նրա ամբողջ «Պատմության» միջով։

Պարսկաստան գաղթեցրած հայերի մասին Դավրիժեցին դառնացած գրում է. «Իսկ արբշիռ, և անագորոյն, և անիմաստ, ...ազգս Հայոց՝ ոչ ի սկիզբն խորհեցան, և ոչ ի վերջն հայեցան՝ թէ զի՞նչ է լինելոց վերջ գործոյս այսորիկ, այլ... գոլով՝ գնացին և առին զթագաւորական գանձն, որ էր որպէս զմահարար թոյնս օձի, և պատճառ նոցին կորստեան. և ոչ եղեն մտախոհ, թէ որպէս զփուշս օձի է գանձն այն մահացուցանող»[34]։

Հայրենիքին անհուն նվիրված, սակայն սիրտը մորմոքված պատմագիրը ցավով բացահայտում է «աւերիչն աշխարհաց՝ և վատնիչն քրիստոնեայ ազանց՝ ...թագաւորն Շահաբաս»-ի[35] կողմից՝ 1604 թ. բռնագաղթի դրդապատճառները։ «Եւ զոր ի վաղ ժամանակաց,— գրում է Դավրիժեցին,— ունէր ի մտի զքշելն ազգին քրիստոնէից՝ և զաւերելն աշխարհին Հայոց... Քանզի գիտէր ի միտս իւր՝ թէ ո՛չ կարէ պատերազմաւ զդէմ ունիլ Սինան փաշային... վասն որոյ հրամայեաց զամենայն բնակիչս աշխարհին Հայոց... քշել յաշխարհն Պարսից։ Զի եկեալ Օսմանցւոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ։ Եւ ո՛չ գտցի կերակուր և ոռճիկ և այլ ինչ պիտոյք նոցա և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն Օսմանցւոց։ Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անդերծանելի հարկատուք՝ ծառայք, և հողագործք մինչև ցյաւիտեան»[36]։

Լսելով թուրքական բանակի առաջխաղացման մասին շահ Աբբասը Երվանդակերտում իր մոտ է կանչում հայերի մեծամեծներին «և զինքն կեղծաւորաբար ցաւակից ցուցանելով ազգին Հայոց» ասում է, թե ահա տեսնում եք թուրքական անհուն զորքը գալիս է ձեր երկիրը, մեր զորքն էլ անթիվ է, երկու կողմերից էլ կլինեն ելուզակներ ու ավազակներ, որոնք ձեզ կկողոպտեն, կգերեն, ժողովուրդը կոչնչանա «վասն որոյ ողորմեալ ձեզ հնարիմ փրկել զձեզ այսու կերպիւ», բնակչությունը թող իրենց գավառներից դուրս գա և մի քանի օրվա ճանապարհ գնա դեպի արևելք, այդ ժամանակ մենք կպատերազմենք թուրքերի դեմ, եթե մենք հաղթենք դուք կվերադառնաք ձեր տեղերը, եթե թուրքերը հաղթեն, մենք կթողնենք կգնանք, իսկ դուք նորից կվերադառնաք ձեր տները։ Հայ ավագանին, ասում է Դավրիժեցին, «ծանեան զդաւաճանեալ նենգութիւնն, և ոչ հաճեցան ի բանս նորա»[37]։ Նրանք պատճառաբանում են, որ ժամանակը աշնանային է և իրենք նախապատրաստված չեն դրան ու խնդրում են հետաձգել տեղահանումը գարնանը։ Հայերի խնդրանքը շահը մերժում է և իր զորավարներին հրամայում բռնի ուժով գաղթեցնել։ Պատմագիրն այդ հրամանը «աշխարհակործան» է համարում ու դառնությամբ նկարագրում բռնագաղթը։ «Իբրև հողմնախառն հուր ընդ եղէգն ընթացեալ, հապճեպ տագնապաւ վաղվաղակի զամենայն բնակիչս գաւառացն կորղեալք յիւրաքանչիւր բնակութեանց, և արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց, իբրև զչոլիրս բազմութեան հօտից և անդէոց զառաջեաւ արարեալ՝ բռնութեամբ վարեալ՝ ածեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարատու, և զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ. քանզի ի ստորոտէ լերանցն Գառնւոյ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին, իսկ զերկայնութիւնն... ասեմ աւուր միոյ ճանապարհ և յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ»[38]։

«Եւ եղեն երեք բանակք մեծամեծք և անհունք,— շարունակում է մեր պատմագիրը այդ հրեշավոր իրողության պատկերավոր նկարագրությունը,— առաջին՝ բանակն ժողովրդեանն, երկրորդն՝ բանակն Պարսից, երրորդն՝ բանակն Օսմանցւոց։ Եւ այնպէս դիպեցաւ պատահումն՝ զի յորժամ չուէր բանակ ժողովրդեանն, իջեալ բանակէր ի հանդրուանս նո-

32 Նույն տեղում, էջ 27, 32։
33 Նույն տեղում, էջ 28։
34 Նույն տեղում, էջ 150։
35 Նույն տեղում, էջ 39։
36 Նույն տեղում, էջ 38։
37 Նույն տեղում, էջ 39։
38 Նույն տեղում, էջ 40։

ցա Շահաբասն զօրօքն Պարսից և ի չուելն նոցա բանակէր ի նոյն տեղին Ջլալօղլին զօրօքն Օսմանցւոց»[39]։ Այսպես առաջին երկու բանակները հասնում են Ջուղա գյուղը, իսկ երրորդը՝ Նախճավան։ Հետո շարժվում են առաջ։ Պարսիկները թուրքերի ահից դրանից հետո ժողովրդին հանգիստ չէին տալիս «սաստիկ տագնապաւ նեղէին զժողովուրդն, զոմանս մահու հարուածով դանելով, և զոմանց զունչս և զականջս հատանելով, և զոմանց զգլուխն կտրեալ ի ձող ցցէին... իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին յառաջ զանհուն գետն տեսանէին իբրև զծով՝ որ խեղդէր, և յետուստ զսուրն Պարսից՝ որ սպանանէր... և առհասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յաչաց հեղեալ առնէին երկրորդ Երասխ. և ձայն լալեաց, և հառաչանաց, ճչանաց, վայոց, կսկծանաց, մորմոքանաց ընդ միմեանս խառնեալ զոչեցուցանէին ուժգին աղաղակաւ, իսկ ողորմութիւն և փրկութիւն ոչ ուստեքէ էր... եւ անողորմ զօրացն Պարսից վարեալ զժողովուրդն լնուին ի գետն... Եւ որք անհմուտք էին լողելոյ և անզօրք, ծերք և պառաւունք, տղայք և աղջկունք, և մատաղ մանկտիք լցեալք էին յերեսս ջրոյն և գետն առեալ տանէր զնոսա իբրև զխոտ ի ժամանակս գարնայնոյ, և գետատար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն, և թէպէտ անցին, որք անցին, այլ բազումք այնք էին՝ որք հեղձմամբ ջրոյն մեռան»[40]։

Այնուհետև նկարագրում է գետն անցնելուց հետո գաղթեցրածների կրած տառապանքները մինչև Սպահան և այլ գավառներ։

Շահ Աբբասի 1604 թ. այս գաղանաբարոյ բռնագաղթի ողբ-նկարագրությունը հայրենասեր պատմագիրը վերջացնում է ցավով ու զայրույթով բացականչելով «զի թշուառութիւնք՝ և արհաւիրք անտանելիք հասին ի վերայ ազգիս մերոյ, և ոչ բաւեմ թէ որով տարագու հիւսեցիս ողբս դամբանականս և աշխարանաց ի վրայ բեկման հայկական սեռիս, որք այսքան չարակրութեանց եղեն ընդունակք»[41]։

Միանգամայն իրավացի է Մ. Աբեղյանը, որ «Այսպիսի նկարագիրներ մեր պատմության մեջ քիչ կպատահենք Եղիշեի ժամանակից ի վեր»[42]։ Հիրավի, կարծում ենք սխալված չենք լինի եթե ասենք՝ Դավրիժեցի պատմագիրն էլ ողբասաց է, և վարպետ ողբասաց։

Դավրիժեցու՝ բռնագաղթի նկարագրությունները ամբողջությամբ հաստատվում են ժամանակակից ականատես մարդկանց թողած հիշատակարաններով ու ժամանակագրություններով, ինչպես նաև եվրոպական ճանապարհորդների հուշագրություններով»[43]։

Դավրիժեցին գոհունակությամբ գրում է, որ բռնագաղթի ժամանակ գառնեցիներն ու Գեղարդի ձորի բնակիչները ուժեղ դիմադրություն են ցույց տվել բռնագաղթն իրականացնող Երևանի Ամիրգունա խանին, Հավուց Թառի Մանվել և Գեղարդի Աստվածատուր եպիսկոպոսների գլխավորությամբ։ Այդ եպիսկոպոսները, երբ լսել են բռնագաղթի մասին, անհրաժեշտ պաշարաներով իրենց մերձավորների հետ ամրացել են Գեղարդա ձորի այրերում և քարանձավների ծերպերում։ Սակայն ի վերջո պարսիկները մեծ ջանքեր գործադրելով կարողացել են գրավել այդ այրերն ու հաշվեհարդար տեսնել նրանցում ապաստանածների, այդ թվում և Մանվել և Աստվածատուր եպիսկոպոսների հետ։

Այնուհետև նկարագրելով այրերում պարսիկների կատարած գազանությունների մասին, Դավրիժեցին դառնացած բացականչում է. «Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր, ճմլին սիրտք մեր, և գայարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշվառութեանս ժողովրդեանս մերոյ։... քանզի անմարդաբնակ արար միահաղոյն զամենալի և զյուռթի աշխարհս Հայոց։ Վասն զի ի քշելն զերկիրս՝ ո՛չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստան, այլ զբազումս»[44]։ Ապա թվարկում է այն գավառներն ու քաղաքները, որտեղից պարսիկները գաղթեցրել են բնակչությանը[45]։

Շատ ավելի սրտառուչ, բայց և գեղեցիկ է ողբում պատմագիրը բռնագաղթի հետևանքները ավերակ ու անմարդաբնակ դարձած «զվայելուչ աշխարհս Հայոց»-ի համար։

«Որ և այժմ տեսանեմք զարգաւանդ և զբերրի զհողս զարտ և զանդաստանս սորա, և զաւերակս բազմապատիկ գեղօրէիցն և զմեծանիստ աւանացն։

Նա և զաւերումն և զտապալումն և զքայքայումն զանառիկ և զամուր և զհաստահեղոյս վիմարդեամբք և կրով մածուցեալ զանմատոյց բերդօրէիցն...

...Եւ զայլ ամենայն վայելչութիւնս սորա տեսանելով հեղձամղձուկ

39 Նույն տեղում, էջ 41։

40 Նույն տեղում, էջ 42—44։

41 Նույն տեղում, էջ 44։

42 Մ. Աբեղյան. Նշվ. աշխ., էջ 446։

43 Տե՛ս Ավգուստինոս Բաջեցի (կաթոլիկ հայ քահանա), Նշխարք մատենագրութեան հայոց, Պետերբուրգ, 1884, էջ 6—7; Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, с. 468—474; Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 98, 100, 103, 104։

44 Դավրիժեցի. էջ 52։

45 Նույն տեղում, էջ 53։

Եղեալ փղձկիմք և հարեալ յարտասուս ողբամք և աշխարեմք՝ զի անապատ եղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր։ Եւ ազգ և ժողովուրդ մեր խլեալք ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և բնիկ ժառանգութեանց,... եղեն վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլասեռ և այլալեզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մարմնոյ։

Որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուազին, ոմանք մահուամբ և կորստեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութեամբ...»[46]։

Պակաս սրտառուչ չէ պատմագրի մոտ «զամենափարթամ գիւղաքաղաքն Ջուղայու» բնակչության բռնագաղթի նկարագրությունը։ Այդ կապակցությամբ Մ. Աբեղյանը նկատում է, որ այն «որքան սրտառուչ և տխուր իր պարզության մեջ, կարծես ամբողջ վիշտ լինի և իրավ, արտասուքով գրված մի բանաստեղծության կենդանի պատկեր է»[47]։

Կիրառելով նույն գաղանությունները ու բռնությունները, ինչ մյուս գավառներում, կողոպտելով բնակչությանը, պարսիկները ջուղայեցիներին շտապ դուրս էին հանել քաղաքի պարիսպներից և քշել։

Պատմագրին պակաս շափով չի անհանգստացրել ու հուզել Պարսկաստան և այլուր գաղթածների՝ «ղարիպականքի» ճակատագիրը և նա առիթ բաց չի թողնում ընթերցողին տեղյակ պահելու նրանց առօրյա կյանքի, սնանկացման, զանազան պատճառներով նոսրացման ու ազգային ու կրոնական հալածանքների մասին։ Այդ բոլորի մասին նա գրել է իբրև ականատեսի, եղել է գաղթավայրերում, զրուցել գաղթականների հետ, «յորոց հարցեալ տեղեկացայ»[48], «զոր մերով աչօք տեսաք»[49], «Նաև ի յիշատակարանաց գրոց՝ զորս ընթերցայ»[50]։ Կարևոր է նշել, որ պատմագրին առաջին հերթին հետաքրքրել է ամբողջ ժողովրդի և հիմնականում ստորին խավերի վիճակը և այդ զգացվում է ամեն քայլափոխում։ Սպահանում ու նրա շրջակայքում բնակեցրած հայերի մասին ասում է, թե բացի ջուղայեցիներից և երևանցիներից մյուսները «չքաւորեցան՝ զի զոր ինչ ունէին վաճառեցին և կերան»[51], որովհետև, պատճառաբանում է նա, Սպահանում ամեն ինչ շատ թանկ էր,

46 Նույն տեղում, էջ 53—54։
47 Մ. Աբեղյան, նշվ. աշխ. էջ 448։
48 Դավրիժեցի, էջ 148։
49 Նույն տեղում, էջ 68։
50 Նույն տեղում, էջ 148։
51 Նույն տեղում, էջ 149։

ունևորները ղբաղվում էին առևտրով ու արհեստներով, իսկ մնացածները հավանաբար այդ քաղաքների ստորին խավերից էին։ Ծայր աստիճան չքավորության հասածները դիմում են ամեն տեղ, օգնություն խնդրում, լուրը հասնում է շահին։ Վերջինս իր մոտ է կանչում նրանց առաջնորդներին՝ մելիքներին ասում է. ես ձեզ արքունի գանձարանից դրամ կտամ՝ պայմանով, որ երեք տարուց հետո դուք այդ գումարը վերադարձնեք, իսկ ով չի կարողանա ստացած գումարը վերադարձնել, նա կամ պետք է դավանափոխ լինի, կամ որդուն և դուստրին դարձնի «թագաւորական ծառայ»։ Հայերը ստիպված համաձայնվում են և ստանում 400 թուման դրամ։ Երեք տարուց հետո շահը պահանջում է դրամը, շատերն իհարկե ի վիճակի չէին նտ վճարելու, եղած միջոցներն էլ ստիպված էին կաշառք տալ դրամը գանձող զինվորներին, կերակրել նրանց ու նրանց ձիերին, որպեսզի մի կերպ ազատվեն տանջանքներից, ծեծից, կախաղանից ու բանտից։ Նրանց բոլոր աղերսանքները շահին ապարդյուն են անցնում և «իբրև կարի ստորանկեալ խոնարհեցաւ կողմն Հայոց», դառնացած գրում է Դավրիժեցին, վերցնում են իրենց տղաներին ու աղջիկներին տանում թագավորի մոտ ու ասում. քանի որ դրամ չունենք տալու, վերցրու սրանց դրամի փոխարեն, ինչպես նախօրոք պայման էիր դրել։ «Ընդ ուստերաց և դստերաց՝ զորս հարք նոցա ածեալ էին՝ և առ գութ աղետի նոցա եկեալ էին և ամենայն ազգականք նոցին, մարք, և եղբարք և այլք, որք միագումար կային և բարձրակական ողբովք և արտասուօք լային որ զտեսողացն ամենեցուն զսիրտ և զաղիս մորմոքմամբ ճմլեցուցանէին»[52]։ Պատմագիրն ասում է, շահը հրաժարվել է վերցնել որդիներին և ավելացնում է, թե ոմանք ասում են որ չվերցնելու պատճառը հայերի ողբն ու հառաչանքն է եղել, ոմանք էլ՝ թէ չի վերցրել, որպեսզի բոլորին ստիպի մահմեդական դառնալ։ Դավրիժեցին նշում է, որ վերջին պատճառաբանությունն իրեն ավելի հավանական է թվում, հաշվի առնելով երկու հանգամանք։ Նախ շահը վերակացուի վրա զայրացել է, որ նա հայերին բերել է իր մոտ և ասել է «զի՞նչ օգուտ է մեզ յածելն քո զողայսն, զի կամիմ ես զամենեսեան դարձուցանել ի տաճկութիւն»[53]։

Այստեղից էլ խորաթափանց պատմագիրը սկսում է բացահայտել շահ Աբբասի հեռու գնացող նենգ քաղաքականությունը հայերի նկատմամբ, ինչպես ասում են՝ բացել նրա խաղաթղթերը։

Ըստ Դավրիժեցու, շահ Աբբասը «ղարիպականքի» ստորին խավերի

52 Նույն տեղում, էջ 152—153։
53 Նույն տեղում, էջ 153։

նկատմամբ անզիջող ու դաժան է եղել, ամեն վայրագություն գործադրել է նրանց տնտեսական սնանկության հասցնելու և ստիպելու դավանափոխ լինել, մինչդեռ հայ առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների, հիմնականում ջուղայեցիների նկատմամբ, որոնց բնակեցրել էր Սպահանում, ելնելով իր պետության շահերից, բարյացակամ է եղել, ավելին, արտոնություններ է շնորհել նրանց[54]։

Այնուհետև բացատրում է, թե ինչու Սպահանում բնակություն հաստատածները չհեռացան, այլ շարունակեցին բնակվել այնտեղ։

Ըստ Դավրիժեցու, շահ Աբբասը մտադրված է եղել Սպահանում նոր էջմիածին կառուցել և մայր աթոռը տեղափոխել այնտեղ։ Եվ իբր դրա պատճառն այն է եղել, որ գաղթեցրած ժողովուրդը «յոյժ բաղձային գնալ յաշխարհն Հայոց»[55]։ «...Լուաք յոմանց,— գրում է պատմագիրը,— թէ զայն ևս ասացեալ են, թէ կամի շահն որ հաստատուն մնան ազգն Հայոց յաշխարհիս Պարսից. պարտ է նմա բերել զաջն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին յԱսպահան, և անդ շինել նոր էջմիածին...»։ Եվ ավելացնում է «Արդ օձն դարանակալ և խորամանկ թշնամին կենաց, և հոգւոց, և հաւատոց քրիստոնէից, որ յար հանապազ ի տարակուսի կայր վասն ազգին Հայոց... հաստատուն և անփոփոխելի եդ ի մտի իւրում՝ քակել զսուրբ էջմիածինն և խափանել որ անդ զկաթուղիկոսութիւնն և բերել զաջն Լուսաւորչին, և զքարինսն էջմիածնի յԱսպահան, և անդ շինել նոր էջմիածին. զի անդ նստցի կաթուղիկոսն, և անտի սփռեսցի մեռոն ընդ ամենայն աշխարհ. որպէս զի այնու մնասցեն ազգն Հայոց ի Պարսկաստուն, այլ և շահք և մուտք ամենայն աշխարհաց ժողովեցի ի քաղաք և յազգ իւր»[56]։

Այնուհետև ասում է, սակայն արշավանքը դեպի Վրաստան խափանել է նրա այդ մտադրության իրականացումը[57]։

Ա՛րդ, ինչով բացատրել, որ շահ Աբբասը «զարիպականքի» վերնախավի նկատմամբ ոչ միայն հանդուրժողական, այլև չափազանց բարյացակամ է վերաբերվել և օժտել արտոնություններով։ Թերևս պատմագիրն իր հետագա շարադրանքում, ընթերցողին ավելի համոզելու և իր ասելիքը ավելի ցցուն դարձնելու համար, չափազանցություններ մեջ է ընկել, այնուամենայնիվ այդ հարցի սպառիչ պատասխանը հենց ինքն է

54 Նույն տեղում։

55 Նույն տեղում, էջ 198։

56 Նույն տեղում, էջ 199—200։

57 Նույն տեղում, էջ 201։

տալիս ու բացատրում նման վերաբերմունքի հետապնդած բուն նպատակները։

Բնական է, որ շահ Աբբասի այդ վերաբերմունքը մոլեռանդ պարսիկների հոգևորականության ու մեծամեծների շրջաններում, զայրույթ պետք է առաջացներ, և Դավրիժեցին հաստատում է այդ։ Նա գրում է, թե նրանք դիմել են շահին, ասել «ը՞նդ էր այնքան թոյլ տաս քրիստոնէից (խոսքն արտոնյալ խավի մասին է— Լ. Բ.) համարձակիլ, և կամ ը՞նդ էր ոչ դարձուցանես ի մոլար օրինացն այն, ի ճշմարիտ օրէնս Մահմետի»[58]։

Շահն իր մեծամեծների հարցերին հետևյալ պատասխանն է տվել. «Դուք ընդ սուղ ինչ սնոտի սէրն իմ, զոր առնեմ ընդ նոսա, մի վշտանայք՝ և մեղադրէք ինձ, զի ես բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հաղիւ թէ կարացի բերել զնոսա յայս աշխարհ. ո՛չ թէ վասն օգտի նոցա՝ այլ վասն օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի՝ և ազգն մեր յաւելցի։ Եւ այժմ եթէ զմարդիկս ազգին քրիստոնէից որք յաշխարհէն իւրեանց եկեալ են՝ և այժմ կան, եթէ զամենեսեան զնոսա մասն մասն կոտորեալ յօդ յօդ բաժանէք, ո՛չ ոք ի նոցանէ դառնայ յօրէնս մեր։ Նա և այլքն խրտուցեալ սկսանին մի մի թաքնաբար փախչիլ՝ և դառնալ յաշխարհն իւրեանց. և վաստակն մեր լինի ընդունայն։ Եւ վասն այնորիկ առնեմ ես զայս սէրս ընդ նոսա, զի այսու կապեալ մնայցեն յաշխարհս մեր, և նոցին հին մարդիկքն, որք յաշխարհին Հայոց ծնեալք են և եկեալ աստ նոքա ամենեքեան մեռանին, և ի նոցանէ ծնեալքն՝ որք յայս աշխարհս ծնանին, նոքա ամենեքեան առանց մեր կոչելոյ և աշխատելոյ ինքեանք ինքեանց յօժարութեամբ գան յօրէնս մեր։ Արդ՝ եթէ դուք ևս կամիք զօգուտն ազգին մերոյ՝ դուք ևս արարէք որպէս և ես առնեմ։ Եւ ապա նոքա հաճեալ ի բանս շահին, և գովելով զիմաստութիւն նորա գնացեալք են ի բաց»[59]։

Պատմագիր Դավրիժեցին ցավով գրում է, որ իր ապրած օրերում իրականություն էր դարձել շահ Աբբասի ծրագիրը։ Եվ ոչ միայն իրականություն էր դարձել, այլև ազգակործան չարիք։ Այնտեղ ծնվածներից շատերը դավանափոխ էին եղել ու պարսիկների օգնությամբ ստոր ու նենգ միջոցներով հալածում էին հայոց դավանանքում հաստատուն մնացողներին, կողոպտում ու հափշտակում նրանց ունեցվածքը, անելանելի վիճակ ստեղծում նրանց համար։ Պատմագիրն ասում է, նրանց վիճակը շատ ավելի անտանելի դարձավ շահ Աբբասին հաջորդած շահ Սեֆիից հետո գահակալած շահ Աբբաս Բ-ի ժամանակ։ Պարսիկներն ու հայ

58 Նույն տեղում, էջ 66։

59 Նույն տեղում։

ուրացողները ավելի սանձարձակ էին դարձել և ավելի բիրտ միջոցներ էին գործադրում քրիստոնյաների նկատմամբ[60], և նրանք ի վիճակի չէին վերադառնալ հայրենիք քանի որ պարսիկները չէին թույլատրում[61]։

Պատմագիրը հավասար չափով ողբում է նաև Վրաստանից գաղթածների վիճակը։ «Բայց գնացեալ ժողովուրդքս... զոր ինչ ունէին վաճառեալ կերին. և ի պատճառէ չքաւորութեան բողոք բարձին ազգն Վրաց առ շահն... Եւ շահն պատասխանի արար նոցա, թէ ուրացէք զձեր հաւատն... և ես տամ ձեզ յոլով ինչս, որով ապրիք՝ և ուտէք։ Եւ նոքա,— ցավով գրում է Դավրիժեցին,— հարկեալք ի կարեաց սովուն՝ արարին զհրամանս շահին, և եղեն Մահմետականք և շահն ոչ ետ նոցա զինչս յոլովս ըստ իւրում խոստմանն՝ այլ ստեաց, քանզի խաբեաց զնոսա»[62]։ Այնուհետև նշում է, որ 1658 թ. երբ գրել է իր «Պատմությունը», բոլոր բռնագաղթված վրացիները դավանափոխ են եղած եղել և ճանապարհին պատահելիս իրենց բարևը չեն ընդունել, մեղք էին համարել քրիստոնյաներին բարևելը[63]։

Ժողովրդի տառապանքներով մորմոքված Դավրիժեցին, որ խոր գիտակցել էր շահի՝ հայ առևտրական դասի և հոգևոր վերնախավի նկատմամբ վարած քաղաքականության բուն էությունը, թերևս մխիթարվել է այն բանով, որ նոր Ջուղան դիտել է իբրև հայապահպանման օրրան և շահ Աբբասի հաջորդներին, կարծեք, հասկացնել է տվել, թե նա ոչ թե քրիստոնեասիրության,— այլ իր երկրի շահերից ելնելով է նման վերաբերմունք ցուցաբերել երկիրը շենացնողների, հայ առևտրականների նկատմամբ և դուք էլ հետևեցեք նրան։ Պատահական չէր, որ մեծ գաղթի ժամանակ 5 հարյուր տուն բնակեցրել էին Շիրազի նահանգում. «Քանզի Ալահվերտի խանն,— գրում է պատմագիրը,— որ էր տէր Շիրազու՝ խնդրեաց ի Շահաբասէն շնորհել նմա մասն ինչ յազգէն Հայոց վասն բարեմտութեան և հաւատարմութեան ազգին Հայոց, զի լիցին նմա ի ժողովուրդ»[64]։

Մի պահ թվում է, թե պատմագիրը շահ Աբբասի բնութագրման մեջ հակասության մեջ է ընկել, սակայն դա միայն թվում է, դրանում համոզվում ենք Դավրիժեցուց ստորև բերվող ընդհանրացումից։ «Արդ՝ որք գովեն զայս շահս,— գրում նա,— թէ քրիստոնէասէր և աշխարհաշէն

60 Նույն տեղում, էջ 69։
61 Նույն տեղում, էջ 67։
62 Նույն տեղում, էջ 133։
63 Նույն տեղում, էջ 134։
64 Նույն տեղում, էջ 46։

և խաղաղարար թագաւոր էր. այս է նորա քրիստոնէասիրութիւնն, որ զամենայն աշխարհն քրիստոնէից զՀայոց և զՎրաց աւերեաց, և զամենեսեան սպառեաց սրով և սովու և գերութեամբ, և զմնացեալսն վարեալ տարաւ ի Ֆահրապատ և յԱսպահան, որ նոքա ևս օր աւուր անդէն սպառին պէս պէս կերպիւ։ Եւ ով ոք որ գովել կամի զնա, թող յառաջ հայեցեալ նկատեսցե զարարեալ գործս նորա, զոր արար ընդ քրիստոնէից՝ և ապա գովեսցէ զնա»[65]։

Դավրիժեցին շահ Աբբաս Ա-ին համարում է «աւերողն Հայաստան աշխարհին և կործանողն Հայոց ազգին»[66]։

Ահա թե ինչպես է նա ներկայացնում պարսկա-թուրքական հակամարտությունների թատերաբեմ դարձած Հայաստանի վիճակը իր ապրած օրերում. «...զքանդումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն, և յափշտակումն ընչից և ստացուածոց, զուստերաց և զդստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն չարիսն զոր ածին ի վերայ աշխարհի, մեզ ոչ գոյ կար թուելոյ, այլ այնմ, որ թուէ զբազմութիւն աստեղաց, և ստեղծ զայնքան անձինս որք մատնեցան անողորմ և մարդադէմ գազանացն այնոցիկ»[67]։

* * *

Մանրամասն նկարագրելով ջալալիների պատճառած ավերածությունների, կողոպուտի, կոտորածի, գերեվարման մասին, պատմագիրը գրում է. «Եւ ոչ միայն այս Ջալալիքս այսպէս առնէին. գոյին և այլք Ջալալիք՝ ոմանք յոլովք՝ և ոմանք սակաւք, որ ի տեղիս տեղիս զկայ առեալ և որջացեալք էին՝ զայսպիսի գործս գործէին»։ Այնուհետև դառնացած նշում է թե «Այլ և ի քրիստոնէից ազգէ՝ արք ոմանք, որք ոչ ունէին զերկիւղն Աստուծոյ յինքեանս. իբրև տեսանէին թէ այլազգիքն որպէս առնեն. ինքեանք ևս սկսան այսպէս առնել. վասն զի աչօք տեսին և սրտիւ յօժարեցան, եթէ յայտնի յափշտակութեամբ՝ և թէ գաղտնի գողութեամբ այնպէս առնէին. քանզի երկիրն անտէր և ամայի էր յաշխարհակալ բռնաւորաց. և ամենայն ոք զախորժակս կամաց իւրոց կատարէր»[68]։

Դավրիժեցին ընդհանրապես խիստ բացասական է տրամադրված

65 Նույն տեղում, էջ 134։
66 Նույն տեղում, էջ 447—448։
67 Նույն տեղում, էջ 78—79։
68 Նույն տեղում, էջ 85։

ջալալիների նկատմամբ, նա չի ըմբռնել այդ շարժումների բնույթն ու էությունը, դրանք «աշխարհաւերք և աշխարհակործանք» է համարում։ Ասում է, թե «ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, ուարեալ կողոպտէին և զշինուածսն հրդեհեալ այրէին։

Ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև ցերևան քաղաք. ի Բաղդատայ մինչև ցԴամուրղափուն, զսպիտակ ծովու մէջն և զսեաւ ծովու մէջն. այս եղերքս՝ զորս ծրագրեցի. զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին։

Եւ յայսմ պատճառէ հողագործք և երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին, յերկիւղէ և յահէ փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լերանց ամրանային. և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենևին և սկսաւ լինիլ սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ոչ գտանիւր, և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր, և այն ևս ծանր գնոյ»[69]։ Այնուհետև ցավով ավելացնում է, «Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր և ցան ազգն Հայոց և գնացին իւրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ»[70]։

Ապա պատմագիրը նույնպիսի ցավով նկարագրում է 1606—1610 թթ. սասսրիկ սովը, պատճառած ավերածությունները, մարդակերության տարածվելը[71]։

Դավրիժեցին զայրույթով է գրում շահ Աբբասի՝ Կախեթի և Քարթլիի թագավորների նկատմամբ գործադրած նենգ ու ստոր միջոցառումների մասին[72]։ Կարևոր ու հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում վրաց Թամրազ և Լավասափ (ճիշտը՝ Լուարսաբ), թագավորների՝ պարսից զորքին ցույց տված դիմադրության[73], ինչպես նաև Գեորգի Սահակաձե թագավորի՝ թուրքերի դեմ ապստամբելու ու նրա հաղթանակների մասին ու իր համակրանքը դրսևորում նրանց նկատմամբ[74]։

Ինչպես ջալալիների, այնպես և սովի մասին Դավրիժեցու նկարագրությունները հաստատվում են ժամանակակից, ականատես ու ականջալուր գրավոր հայերեն ու պարսկերեն աղբյուրներով և հատկապես

69 Նույն տեղում, էջ 87։

70 Նույն տեղում, էջ 88։

71 Նույն տեղում, էջ 87—92։

72 Նույն տեղում, էջ 98—105։

73 Նույն տեղում, էջ 115—132։

74 Նույն տեղում, էջ 617—619։

Գրիգոր Դարանաղցու կողմից[75]։ Սակայն Դավրիժեցին նրանց համեմատ ավելի լայն ու բազմակողմանի է ծավալում մեր առջև ժողովրդի ահռելի թշվառությունը[76]։

Պատմագրին շատ է ուրախացրել 1639 թ. թուրք-իրանական երեսնամյա հաշտության պայմանագիրը։

Դավրիժեցի պատմագիրն իր ապրած ժամանակաշրջանի մղձավանջային պայմաններում, հայրենիքին ու ժողովրդին վրա հասած աղետները ողբալու հետ, տեսել է և լուսավոր ծալքեր ու հիացմունքով ու հպարտությամբ գրել նրանց մասին։

Այդ լուսավոր ծալքերը, հայ հոգևոր կյանքի, մշակույթի զարթոնքի սկիզբն էին ազգարարում և մեր պատմագիրը չէր սխալվել, որ մեծ հույսեր էր կապել դրանց հետ և մորմոքված սիրտը մխիթարել ու ժամանակակիցներին հուսադրել։

Սաղմոսավանքի Սարգիս եպիսկոպոսի կապակցությամբ, որը որոշել էր «հետևել լուսաշաւիղ երկնաչու ճանապարհին առաքինական վարուց», Դավրիժեցին ցավով գրում է. «Բայց ոչ գոյր ի ժամանակին յայնմիկ անապատ և կամ գիտող կարգաց կրօնաւորական վարուց, վասն բազում հինից թշնամեաց եկելոց ի վերայ և վրդովմանց՝ և աւերանաց աշխարհիս Հայոց, ամենևին բնաջինջ եղեալ էր և բարձեալ նշոյլ և նրշմարան առաքինի գործոց՝ և բարի կարգաց յաշխարհէս Հայոց»[77]։

75 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղեմ, 1915, էջ 13—14, 24—26 և այլն։

76 Առաքել Առաքելյանը միանգամայն սխալ և հակապատմական ընդհանրացում է անում։ Գրում է, թե, «ջալալիների մասին պատմելուց առաջ Դավրիժեցին նշում է, թե Շահաբասը հայտնի ավարառությունից հետո քաշվում է իր որջը, իսկ Զաղլոզլին մեռնում է։ Այդ ժամանակ Արարատյան դաշտին չէր տիրում դրանցից և ոչ մեկը, նրանք միաբան չէին (հայտնի է, որ այդպիսի վիճակ չի ստեղծվել, Արարատյան դաշտը ոտնատակ էին տալիս մերթ պարսկական մերթ թուրքական հրոսակները, չի հասկացվում թե նրանք ինչու չէին միաբան—Լ. Բ.)։ Այդ անտեր վիճակից հայերը չեն օգտվում, չեն կազմակերպում իշխանություն և երկրի ղեկավարությունն իրենց ձեռքը չեն առնում։ Նրանց միտքը կարծրացել էր, քաղաքական անկախության ձգտումը մեռել։ Հայի գիտակցությունն այն աստիճան թանձրացել էր ստրկահոգության և ուրիշին հպատակվելու մոլուցքի մեջ, որ նա օրինաչափ երևույթ էր համարում օտարին ծառայելը և օտարի լծի տակ կքվելը։ Քիչ չեն պատմական բարեպատեհ պայմանները, երբ հայությունը կարող էր հանդես գալ որպես մի կոմպակտ ընդգծած, քաղաքական մի գորեղ միացյալ ուժ և անկախության դրոշ բարձրացնելով ստեղծել ինքնուրույն պետական կյանք (Ա. Առաքելյան—Նշվ. աշխ., էջ 533)։

Մեկնաբանություններն այստեղ ավելորդ են, ասենք միայն, որ նման ընդհանրացումը մի ժողովրդի մասին, որ օտար նվաճողների դեմ հերոսական մաքառման 1000-ամյա հարուստ պատմություն ունի, հակապատմական է։

77 Դավրիժեցի, էջ 250—251։

Այնուհետև նույնպիսի ցավով, ինչպես ասվել է առաջաբանում, նա նկատում է, թե «անպիտացեալ էր գիրքն յաչս մարդկան, և իբրև զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հողով և մոխրով»[78]։

Սարգիս եպիսկոպոսը, որին հետևել է և տրապիզոնցի Կիրակոս քահանան (տէր), գնում են Երուսաղեմ։ Այնտեղ մտերմանում են. «յետ աւուրց ինչ,— գրում է պատմագիրը,— առ միմեանս կելոյ, գտին զիրեարս միով դիտաւորութեամբ և միով յօժարութեամբ և կրիւք ախտացեալս. և միակամ և միաբան և միախորհուրդ եղեալ յայնմ օրէ և առ յապա կենցաղավարիւ ի միասին»[79]։ Նրանք փնտրում են անապատ տեղ, իմանում են, որ Սյունիքում հին ժամանակներից կան այդպիսի տեղեր, Երուսաղեմից գալիս են Տաթև, ընտրում են հարմար տեղ և շինում մեծ անապատ, կառուցում են եկեղեցի, մենակյացների խցեր։ Շուտով նրանց բարի համբավը տարածվում է և նրանց շուրջն են համախմբվում «առնուանի արք», աշխարհականներ և հոգևորականներ՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, քահանաներ։ Նշված Սարգիսը և Կիրակոսը, այսպիսով, Հայաստանում հիմք են դնում անապատական շարժմանը։ Անվանի վարդապետներն ու եպիսկոպոսները միառժամանակ մեծ անապատում մնալուց հետո գնացել են Հայաստանի զանազան գավառները և տեղերում շինել անապատներ ու իրենց շուրջը համախմբել ուսումնասեր մարդկանց։ Ներսես Մոկացին գնացել էր Լիմ կղզին, Թումա եպիսկոպոսը՝ Շամախի, Կարապետ եպիսկոպոսը՝ Սևան և այլն։

«Սոքա երկոքին արքս,— գոհունակությամբ նկատում է Դավրիժեցին,— եղեն սկիզբն անապատիս, և անապատս եղև մայր և ծնող ամենայն անապատաց, և առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց»[80]։

Մեծ անապատից էր և Մովսես Խոտանանցի, կամ Սյունեցի կաթողիկոսը, որը և գլխավորել է ժամանակի առաջադեմ հոգևորականության պայքարը հետամնաց, տգետ հոգևորականության դեմ։

Այնուհետև գրում է, թե Սարգիսն ու Կիրակոսը և նրանց շուրջը հավաքվածները «սկսան յընթերցմանէ և յուսուցանելոյ գրոց վերատին նորոգել և յարդարել զամենայն կարգս բարիս անապատաց և վանօրէից և ժամատեղաց»[81]։ Ապա մանրամասն տալիս է նրանց կողմից սահմանած անապատականների ներքին կանոնները, կյանքը, նիստ ու կացը, օրվա ռեժիմը, ուտելիքը, հագուստը և այլն։

Հրհվանքով ասում է՝ ա. հոգին «բանայր առաջի մաքուր մտաց նոցա (Սարգսի և Կիրակոսի— Լ. Բ.) զգրունս գիտութեան, և խելամուտ առնէր զնոսա շաւղաց գրոց, որովք լուսաւորեցան ինքեանք, և լուսաւորեցին զմերձակայս և նոքօք՝ զաղգս Հայոց»[82]։

«Եթե Մեխլուն և իր հետևորդները կամենում էին վերջ տալ գյուղացիների կեղեքումներին՝ վանականներին ոչնչացնելու ճանապարհով,— գրում է Աշ. Հովհաննիսյանը,— նրա հակառակորդների շարքերից դուրս եկան եռանդուն քարոզիչներ, որոնք ձգտում էին վեջ տալ պորտապարար վանականությանը՝ մտավոր աշխատանքով զբաղվելու և անապատական կենցաղ կազմակերպելու միջոցով»[83]։

Չի կարելի, սակայն համաձայնվել Աշ. Հովհաննիսյանի այն կարծիքի հետ, որ իբր «Անապատական շարժումը շփման որոշ կետեր ուներ Մեխլու աղանդապետի գլխավորած շարժման հետ։ Անապատականները ևս մերժում էին վանականների մասնավոր սեփականությունը, սակայն ի տարբերություն Մեխլուի, նրանք ոչ թե գյուղական համայնքների այլ վանքերի «հասարակաց սեփականությունն» էին հռչակում վանականների մասնավոր գույքը։

...Եթե Մեխլուի շարժումը հանգում էր վանականության ժխտմանը, ապա անապատական շարժման գաղափարախոսները ձգտում էին բարենորոգման ենթարկել վանական կարգերը, վերականգնել հայ եկեղեցու հեղինակությունը և ընդլայնել նրա գործունեության ոլորտը»[84]։

Դրանք միանգամայն տարբեր նպատակներ էին՝ թելադրված դասակարգային պատկանելիության շահերից և դրանց մեջ «շփման որոշ կետեր» տեսնելը սխալ է իհարկե։

Ժողովրդի անգրագիտության ահռելի դժբախտությունը խոր գիտակցել է մեր պատմագիրը և նրա դեմ ուղղված պայքարի ամենափոքր փորձը, միջոցառումը ուրախացրել է նրան։

Նա քաջ գիտակցել է, Լեոյի թևավոր խոսքերով ասած, որ շահ Աբբաս Ա կարող էր բնաջինջ անել հայ ազգաբնակչությունը, բայց սպանել մի ազգի պատմական բնագդը, սպանել նրա մեջ այն դարավոր եռանդը, որ պատմությունն ստեղծել է տալիս հայրենի հողի վրա,— այդ արդեն

78 Նույն տեղում, էջ 255։

79 Նույն տեղում, էջ 252։ Թե այդ գործում ինչ դեր է կատարել Գրիգոր Դարանաղցին, ասվել է՝ նրա մասին շարադրանքում։

80 Նույն տեղում, էջ 254։

81 Նույն տեղում, էջ 255—256։

82 Նույն տեղում, էջ 255։

83 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 118։

84 Նույն տեղում։

դուրս էր գալիս նույնիսկ պարսից մեծ բռնակալի կարողությունից[85]։ Այդ դաղափարը Դավրիժեցին կարմիր թելի նման անց է կացրել իր «Պատմության» մեջ ու ժամանակակիցներին ու հետագա սերունդներին հասկացնել տվել, որ հայերի մեջ պատմական բնազդն ու դարավոր եռանդը մեռած չէ, որ իր ապրած օրերում արդեն հանդես են եկել մարդիկ, ճիշտ է դեռ անհատներ, որոնք իրենց կյանքը նվիրել են այդ բնազդին ու եռանդին նոր շունչ ու ոգի տալուն։ Մտավոր վերածնությունը, որ սկսվել էր Հայաստանում XVII դարի սկզբներին, շատ է ոգևորել մեր պատմագրին և նա հրճվանքով նկարագրում է Սյունյաց, Բաղեշի և Սպահանի դպրոցների, Սարգիս, Կիրակոս, Մովսես, Պողոս, Բարսեղ, Ներսես, Մելիքսեթ, Խաչատուր, Ստեփանոս, Սիմեոն վարդապետների ծավալած կրթական ու գիտական քրտնաջան, բեղուն ու հայրենանվեր գործունեությունը[86]։ Առանձին հիացմունքով է մեր պատմագիրը գրում հատկապես վերջին չորս վարդապետների կողմից արտաքին գիտության վերակենդանացման ու ուսուցման մասին։ Մելիքսեթ գիտնական վարդապետի մասին գրում է. «Եւ լինէր յորժամ Մելքիսէթ վարդապետն կանխեր ի դաս և ի քարոզ, իբրև զյորձանս ուղխից և հեղեղաց ընթանայր բանն ի բերանոյ նորա, յորոյ իմաստութիւնն ամենեքեան ապուշ եղեալ՝ հիանային և բաղձային»[87]։

Պատմագիրը Մովսես վարդապետի, հետագայում կաթողիկոսի բերանով կոչ է անում հայ մտավորականությանը անապատական շարժումը սկսել բուն Հայաստանում։ Մովսեսը Սարգիս և Կիրակոս վարդապետներին ասում է «յաշխարհին յայնմիկ (Սյունյաց— Լ. Բ.) կարի առաւել պաշաճ է շինել զանապատ. զի բուն Հայաստան է»[88]։

* * *

Պատմագիրը հիացմունքով է խոսում նաև առաջադեմ հոգևորականության խուլ և բացահայտ պայքարի դրսևորումների մասին՝ հետադեմ, տգետ հոգևորականության դեմ։ Նա անզուսպ ատելությամբ է խոսում վերջիններիս մասին, բացահայտում ու անարգանքի սյունին գամում նրանց՝ արատավոր բարքերի ու վարքագծի, կաշառակերության ու ագահության համար, հայրենի դավանանքի դոգմաներն ու ավանդական սովորույթները ոտնահարելու, օտար բռնակալներին քծնելու ու շողոքորթելու համար։ Հակառակ դրան, մեծ գովեստով ու բերկրալի հրճվանքով

85 Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946, էջ 272։

86 Դավրիժեցի, էջ 390—409։

87 Նույն տեղում, էջ 398։

88 Նույն տեղում, էջ 286։

է գրում հայոց դավանանքի անաղարտության վերականգնման, հայոց եկեղեցու վերանորոգչության, տգիտության ու խավարի վերացման համար պայքարի ելածների մասին։ Դավրիժեցու «Պատմության» կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ նա որոշակի պատկերացում է տալիս Հայաստանում վերանորոգչության սկզբում հոգևոր վերնախավի շրջաններում ծավալված այն պայքարի մասին, որ տեղի էր ունեցել հին սերունդի՝ ի դեմս Դավիթ, Մելքիսեթ, Սահակ կաթողիկոսների և նրանց համախոհների, որոնք հետապնդելով իրենց նեղ անձնական շահերը մայր աթոռը հեղինակազրկել էին, ֆինանսական անասելի ծանր վիճակի հասցրել, և նոր սերնդի՝ ի դեմս Մովսես և Փիլիպպոս կաթողիկոսների, Պողոս վարդապետի, որոնք համառ պայքարում հաղթանակ էին տարել հին սերնդի նկատմամբ և լայն գործունեություն ծավալել ու կաթողիկոսարանը դուրս բերել ճգնաժամային վիճակից։ Մեր պատմագիրն էլ պատկանում էր այդ նոր սերնդին ու նրա ջատագովն էր։ Սխալված չենք լինի եթե ասենք, որ նա հայ զարթոնքի պատմագիրն է՝ իր ամբողջ էությամբ։

Նկարագրելով մեծ անապատի սան Կարապետ վարդապետի աշակերտ Պողոս վարդապետի առաքինություններն ու Գողթան գավառում նրա ծավալած գործունեությունը, Դավրիժեցին ընդգծում է, որ մինչ նրա այդտեղ գալը «ի խոր խաւարի անգիտութեան նստեալ կային, որպէս թէ ի ժամանակս կռապաշտութեան,— գալուց հետո,— ...բացաւ դուռն հաւատոյ աշխարհիս արևելեան, քարոզութեամբ և ամբիծ և անկեղծ վարդապետութեամբ սորա, զի առաքելաբար շրջէր յամենայն տեղիս, քարոզէր զԲանն կենաց, կարգէր զքահանայս, շինէր զեկեղեցիս. և հաստատէր զբարի կարգս յեկեղեցիս և ի գիւղս, ժողովէր մանկունսն յուսումն սրբոց գրոց, և ի տեղիս տեղիս հաստատէր դպրատունս, և յիրոց աշակերտաց կացուցանէր դպրապետս...»[89]։

Պատմագիրը դառնությամբ նշում է, որ գավառի հոգևորականությունը ըմբոստանում է Պողոսի դեմ, և երբ վերջինս հիասթափված հեռանում է Աստապատ գյուղաքաղաքից, «ժողովուրդքն իբրև զգացին ըզգընալն վարդապետին, յայնժամ դիմեալ ի վերայ արեղայիցն, հարկանելով քարիւ և փայտիւ արտաքս վարեցին ի գեղջէն, և վաղվաղակի ընթացեալ զկնի վարդապետին՝ բաղում աղաչանօք դարձուցեալ զնա ածին ի գիւղ անդր. և սկսան շինել զեկեղեցին...»[90]։

89 Նույն տեղում, էջ 269։

90 Նույն տեղում, էջ 271։

Ժողովրդի պաշտպանությունն ու աջակցությունը վայելող Պողոս վարդապետին, դառնացած ասում է պատմագիրը, հետապնդում ու հալածանքների են ենթարկում ոչ միայն տեղի հոգևորականությունը, այլև Մելքիսեթ կաթողիկոսը։ Նա «բաղում անգամ առաքեաց առ վարդապետն բանս սպառնականս և յանդիմանութեան. թէ ելցես յերկրէս մերմէ, և գնասցես յերկիր քո՝ ուստի եկեալ ես, զի ոչ է պիտոյ մեզ խաբերայ և նորահանուկ քարոզութիւն քո, և ոչ կեղծաւոր վարքն քո, ապա թէ ոչ, առակ նշաւակի, և այպն կատականաց լինիցիս ի ձեռս իմ»[91]։

Պողոսի հայրենանվեր գործունեությունը հետադեմ հոգևորականությունն ու նրանց պարագլուխ կաթողիկոսը «խաբերայ և նորահանուկ քարոզութիւն» են համարել։ Վերջինս անգամ սպառնացել է թե Պողոսին կմատնի «ի ձեռս աշխարհակալ իշխանաց»[92]։ Դավրիժեցին ասում է, թե Պողոսին ոչ ոք չէր կարողանում օգնել, «վասն զի ամենեքեան երկնչէին ի կաթուղիկոսէն, զի թագաւորական իշխանութեամբ վարէր զկաթուղիկոսութիւնն»[93]։

Այնուհետև գրում է, թե Պողոսը հարցրել է իր աշակերտներից. «զի՞նչ բարւոք թուի ձեզ, արիանալ ընդդէմ փորձութեանս, և դիմակայել խռովութեանս այսմիկ և քարոզել զԲանն կենաց, թէ՞ տեղի տալ և հեռանալ ի շփոթէ սոցա»։ Աշակերտները նրան պատասխանում են, «զոր ինքնին տեսանես զխաւար անգիտութեան, թէ որպէս սփռեալ է ի վերայ ժողովրդեանս, և զայն ևս թէ, որպէս եբաց Տէր զդուռն քարոզութեան. քանզի զոր ինչ և քարոզես՝ վաղվաղակի արդիւնանայ։ Արդ՝ մի զուցէ վհատիցիս,... պարտ է քեզ արիանալ և համբերել փորձութեան վասն օգտի ժողովրդեանն և քարոզել զԲանն կենաց»[94]։

Պատմագրի ապրած օրերում «զԲանն կենաց»-ը լուսավորությունն էր, հոգևոր կյանքի վերածնունդը, վերանորոգչությունը, և պատմագիրը Պողոսի աշակերտների բերանով կոչ է արել Պողոսին և նրա նմաններին չվհատվել, այլ շարունակել դիմակայել թշնամիներին՝ հետադեմներին, տգետներին ու համառորեն առաջ տանել սկսած գործը։

Պողոսը շարունակել է իր գործունեությունը բավական լարված ու թշնամական մթնոլորտում։ Դավրիժեցին, սակայն, ցավով գրում է, թե տգիտությունն ի վերջո հաղթանակել է։ «Բայց ներհակքն կարի յաւէտ և բազմահնար պարաւանդիւք խորամանկութեան և զրպարտութեան, մեքենայիւք ճմլեալ կորացուցին զնա ասելով. զու մի ևս յաւելցիս ի շրջել առ ժողովուրդս և քարոզել, այլ տուր մեզ ձեռագիր վկայութեամբ մահմեդականաց, թէ այսուհետև քարոզես՝ լինիցիս թշնամի թագաւորին, և մահու և սպանման պարտական»[95]։

Պատմագիրը դառնացած գրում է, որ Պողոսը ստիպված կատարել է նրանց պահանջը և քաշվել Մեծ Անապատը, ուր և իր մահկանացուն է կնքել։

Պակաս վիշտ չի կրել և Մովսես Սյունեցին։ Պատմագիրն ասում է, թե երբ նա եկել է Տաթև, սկզբում սիրալիր ընդունելություն է գտել տեղի եպիսկոպոսներից ու աբեղաներից, սակայն շուտով «յետոյ յետս չդան ի նմանէ, քանզի ոչ ընկալան զքարոզութիւն նորա»[96]։ Մովսեսը տեսնելով այդ, հեռացել է Տաթևից, գնացել Մեծ Անապատը։ Դավրիժեցին ընդգծում է, թե «Իսկ զքարոզութիւն Մովսէս վարդապետին ամենայն ժողովուրդք խնդութեամբ ընդունէին և յոժարութեամբ կատարեին, և ուրախութեամբ փառաւորէին... Բայց եպիսկոպոսք գաւառաց, և աբեղայք վանօրէից ոչ հաճէին ի քարոզութիւնն Մովսէսի»[97]։

Պողոս վարդապետին ասպարեզից հեռացնելուց հետո, «միայն գրտեալ զՄովսէս վարդապետն, սկսան սաստիկ մրցանօք մաքառիլ ընդ նմա»[98]։ Այնքան են նեղել նրան, որ նա ստիպված իր փիլոն ու գավազանը ուղարկել է Մելքիսեթին, հրաժարվել վարդապետությունից, սակայն կաթողիկոսի խորհրդատուները չեն թողել կաթողիկոսին ընդունելու նրա հրաժարականը։ Պատմագիրն ասում է, թե «Թէպէտ ետ հրաման քարոզութեան Մելքիսէթն Մովսէսի, այլ ի նենգելոյ ոչ դադարեաց, զի հանապազ հարստահարէր, դատափետեալ պարտաւոր առնէր, և զրպարտէր, ինքն և համախոհքն իւր անխնայաբար նեղութիւնս ի վերայ նորա ածէին»[99]։

Մովսեսը որոշում է գնալ Էրզրում, սակայն Ամիրգունայ խանը[100] թույլ չի տալիս, պահում է Երևանում։ Դավրիժեցին հպարտությամբ ասում է, թե շուտով Մովսեսի համբավը «հռչակեցաւ ընդ ծագս աշխարհի, ի Հռոմաստան,... ի Վրաստան, ի Պարսկաստան. զի յամենայն աշխարհաց վաճառականք գային անդր և տեսանէին, և զհամբաւն տա-

91 Նույն տեղում, էջ 271—272։
92 Նույն տեղում, էջ 272։
93 Նույն տեղում։
94 Նույն տեղում, էջ 272—273։

95 Նույն տեղում, էջ 282—283։
96 Նույն տեղում, էջ 287։
97 Նույն տեղում, էջ 288։
98 Նույն տեղում, էջ 293։
99 Նույն տեղում, էջ 293։
100 Նույն տեղում, էջ 294։

նէին»[101]։ Եվ անմիջապես ավելացնում է. «Զայս ամենայն յաջողութիւնս, զառաջադիմութիւնս Մովսէս վարդապետին տեսանելով Մելքիսէթ կաթուղիկոսին զչարէր և հեղձամղձուկ լինէր ի սրտի, բայց ոչ կարէր զչար ինչ առնել Մովսէսի վասն երկիւղի խանին, զի նա յոյժ սիրէր զվարդապետն»[102]։ Այնուհետև նշում է, որ «մաքրակենցաղ և սրբասնունդ, երկայնամիտ և ողորմած»[103] Մովսեսը կաթողիկոս եղած ժամանակը շատ գերիներ է ազատել փրկագնով ու մեծ բավականությամբ ավելացնում է. «Եւ եկաց սա ի բարձրագահ Աթոռն ի սուրբ Էջմիածին՝ ուղիղ վարդապետութեամբ նորոգեաց զաւերակսն նորոգ շինութեամբ, և պայծառացոյց միսրանօք և վարդապետօք, և յարմար և հաստատուն ժամանակարդութեամբ, և փարթամացոյց եկեղեցական անօթով և մարմնական ստացուածով»[104]։

Դավրիժեցին գովաբանում է նաև Մովսեսի աշակերտ ու նրան հաջորդած Փիլիպպոս կաթողիկոսին, որն ավելի մեծ թափով ու մասշտաբներով շարունակել է Մովսեսի սկսած վերանորոգչական գործունեությունը։ Նկարագրում է Փիլիպպոսի գործադրած ջանքերը Կոստանդնուպոլսի պատրիարքարանի պարտքերը մարելու ուղղությամբ, ծավալած շինարարական աշխատանքները Էջմիածնում և այլուր, կրթական գործը ամուր հիմքերի վրա դնելու համար նրա ձեռնարկած միջոցառումները և այլն։ Այնուհետև հանգամանորեն բնութագրում է Փիլիպպոսին։ «Այլ և էր,— գրում է պատմագիրը,— այր կարի խորհրդական և հանճարեղ՝ աշխարհաշէն և արդիւնարար. և ի գիրս աստուածային՝ սրամիտ և նրբաքննին, և ի խրատս և ի քարոզս համեղաբան և արդիւնաւոր... Վասն որոյ յոյժ հռչակեալ համբաւեցաւ անուն նորա յամենայն աշխարհ, ոչ միայն ի մէջ Հայոց, այլ և մահմետականաց և Վրաց. և ամենեքեան սիրէին և պատուէին զնա... յոյժ երկնչէին ի նմանէ, ոչ թէ ռամիկք, այլ և աշխարհականք՝ իշխանք և զօրագլուխք. քանզի զբազումս տեսին ի թշնամեաց նորա, որք կործանեալ բարձան ի միջոյ, և ի սիրելեաց նորա՝ որք զօրացեալ յառաջադէմ եղեն»[105]։

Դավրիժեցուն ուրախացրել են ոչ միայն Մեծ Անապատի՝ սաների ու հոգևոր գործիչների ծավալած գործունեությունը, այլև իր ապրած օրերում նշանավոր նկարիչ-վարդապետներ Մինասի և Հակոբջանի գործերը։ «Այլ և պարտ վարկանիմ մեզ ականատես եղելոցս,— գրում է պատմագիրը նրանց մասին,— ոչ զանց առնել և այլովք ևս շնորհալից արամբք. թէպէտ և են աշխարհականք,... որք են պարծանք և օգուտ մերում ազգի»[106]։ Այնուհետև մեծ գոհունակությամբ նկարագրում է Մինասի՝ Սպահանի հայ խոջաների տներում և շահ Սեֆիի արքունիքում կատարած գործերի մասին[107]։

Պատմագրի համար լուսավոր ծալքեր են հանդիսացել և Սիմեոն վարդապետի գրած տրամաբանության գիրքը «իբր ներածութիւն արտաքին գրոց»[108], վերջինիս և լվովցի Ստեփանոս վարդապետի՝ անտիկ պատմագիրների և փիլիսոփաների գրքերի թարգմանությունները և այլն.

* * *

Ինչպես հայտնի է, սկսած Մ. Խորենացուց ու Ղազար Փարպեցուց, հետագայում նաև մեր մի քանի այլ պատմագիրներ, դատնությամբ ողբացել են հայ հասարակախավերի և առանձնապես հոգևորականության շրջաններում արմատացած արատավոր բարքերը։ Առաքել Դավրիժեցի պատմագիրն էլ անհուն ատելությամբ է գրել այդ մասին «...իւրաքանչիւր սեագլուխ ունէր իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, փէթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց. նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին։ Եւ զայն ամենայն ինքեանց, և ազգայնոց և իւրեանց հաճելեաց արանց ծախէին ի պէտս կարեաց։ Եւ զնուիրեալ տեղիսն Աստուծոյ... լցեալ էին զայնոսիկ կանամբք և տանտիկնօք, և իւրեանց ազգայնօք»[109]։ Ապա ընդգծում է. «Սոյնպէս և գեղական երիցունք՝ անուամբ միայն քահանայք, այլ ոմանք առեալ զիշխանութիւն մէլիքութեան, և ոմանք տանուտէրութեան՝ և ոմանք պոռնիկք և երկկանայք, ոմանք յարեցեալք յիշխանս այլազգեաց. արբանեակք շարեաց գործոց նոցա՝ և մատնիչք քրիստոնէից, ոմանք ի մարմնաւոր արուեստս և ի հողագործութիւնս պատաղեալ իբրև զաշխարհականս. և բնաւին թողեալ զժամ և զպատարագ»[110]։ Այնուհետև, սրտի անհուն կսկիծով պատմագիրն ավելացնում է. «Եւ ոչ միայն գեղական երիցունք և աբեղայք ըստ ասացելումս անուղղայ կարգօք լեալ թափառականք,

101 Նույն տեղում, էջ 295։
102 Նույն տեղում։
103 Նույն տեղում, էջ 312։
104 Նույն տեղում։
105 Նույն տեղում, էջ 325։

106 Նույն տեղում, էջ 409։
107 Նույն տեղում, էջ 410—413։
108 Նույն տեղում, էջ 406։
109 Նույն տեղում, էջ 288
110 Նույն տեղում, էջ 289։

այլև կաթուղիկոսքն՝ զի ոչ թէ մի էր, այլ երեք և չորք կաթուղիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան, և ագահութեան իբրև զմաքսաւորս դարալայիւ և հարկիւ ի Պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ և զսուրբ Աթոռն Էջմիածին. և ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն, թագաւորական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս, և զիրաւունս և զհասս՝ որք ի ժողովրդենէն ճշդիւ և բռնութեամբ ուժգին առնուին...[111]։

Իր հավատքին ջերմորեն նվիրված մեր վարդապետն այդ գրելուց հետո դառնացած բացականչում է, թե եթե եկեղեցականներն են այդպես, «զի՞նչ ևս ասացից զաշխարհականաց»[112]։ Այդ բոլորի հետևանքով «եկեղեցիք և վանօրայք, ամենեքեան անշուք և անպատիւք, բնաւին կողոպտեալք ի զարդուց և ի սպասուց... Բազմաժամանակեայ փակեալ դրամբք, խաւար և անլոյս, լռեալ ի պաշտամանց և ի պատարագաց. աւերեալ և խախտեալ շինուածք նոցա, տանիք և որմունք, իբրև զանտէր և այրի զրկեալ ի փեսայէն և օտարացեալ յորդւոց՝ նստեալ թախծեալ ոգւով և անմխիթար լայր ընդ երեսս մարդոյ»[113]։

Վաղարշապատի եկեղեցիների մասին գրում է. «էին աւերեալ խախտեալ և խարխալեալ և անշքացեալ, իբրև զտաղաւար յայգւոջ մրգապահաց և իբրև զհովանի ի մէջ սեխենեաց... Եւ յէջմիածին կային միայն միաբանք սակաւք, և այնք ևս յոյժ տգէտք և գռեհիկք։ Իսկ Գայիանեայ և Հռիփսիմեայ ամենեին անբնակ և անպարիսպ»[114]։

Պատմագրին առանձնապես հուզել ու զայրացրել է Էջմիածնի մայր աթոռի՝ XVII դարի առաջին տասնամյակների ողբալի վիճակը և նրան այդ վիճակին հասցնողների՝ Դավիթ, Մելքիսեթ և Սահակ կաթողիկոսների գռփողական, կաշառակերական, փառամոլական գործունեությունը։ Այստեղ է, որ նա չի խորշել անգամ անողուսպ առելությամբ գրելու նշված կաթողիկոսների և պարսից պաշտոնյաների խարդախ ու նենգ գործարքների ու մեքենայությունների մասին, որոնք ոչ պակաս չարիքներ ու ավերածություններ էին պատճառում երկրին և ժողովրդին։

Ասում է՝ Դավիթ կաթողիկոսը ստանձնելով գահը, միաժամանակ անցնելուց հետո, կաթողիկոս է ձեռնադրել Աղջոց վանքից ոմն Մելքիսեթի։ Ժամանակակիցներից ոմանք այդ պատճառաբանել են նրանով, որ այլազգիների հարկապահանջությունը այդ ժամանակ խիստ ծանրացել էր, մայր աթոռն էլ էր հարկադրվել։ Բայց Դավիթը իվիճակի չէր պահանջված հարկագումարը վճարել, ստիպված փախստական կյանք էր վարում հալածանքներից խուսափելու համար և, իբր, ձանձրանալով այդ վիճակից՝ որոշում է ընկերակից կաթողիկոս ձեռնադրել, որպեսզի իրար օգնեն, կարողանան դուրս գալ ծանր վիճակից։ Ուրիշներն էլ այդ բացատրել են Մելքիսեթի փառամոլությամբ, վերջինս կաթողիկոս դառնալու համար բոլորին առատ պարգևներով սիրաշահել էր և տեղի իշխանին կաշառք տվել։ Սա էլ հարկադրել էր Դավիթին, Մելքիսեթին կաթողիկոս ձեռնադրել։ Պատմագիրն իր կարծիքը՝ թե այդ պատճառաբանություններից որն է իրականության համապատասխանում, չի ասում, բավարարվում է միայն գրելով. «Արդ թէ այսպէս և թէ այնպէս՝ եղեն երկու կաթուղիկոսք միոյ աթոռի ի միում ժամանակի»[115]։

Միաժամանակ առաջին պատճառաբանության կապակցությամբ ասում է, որ Մելքիսեթը փոխանակ օգնական դառնալու՝ «եղև խոշնդակն և հակառակ նմա, որպէս և զկնի պատմութիւնքն ցուցանեն»[116]։ Սակայն նրա կողմից՝ Մելքիսեթի գործունեության մասին բերված պատմությունները հենց կասկած չեն թողնում երկրորդ պատճառաբանության հավանականության վերաբերյալ։

Առաքել Դավրիժեցին դառնացած գրում է «Թէպէտ երկու կաթողիկոսք... զի թերևս թեթևացուսցեն զպարտսն, և ևս առաւել բազմացուցին, զի մինչև ցարդ մի էր կաթուղիկոսն, և մի էր մխիթար, այլ այժմ եղեն երկու կաթուղիկոսք և երկու մխիթարք։ Արդ եթէ ի ծախելոյն նոցա և թէ ի հարկապահանջութենէ ժամանակին, և թէ յայլ ինչ պատճառէ, սակայն բազմացաւ բարդեցաւ, դիզացաւ պարտքն ձեռամբ նոցա ի վերայ սրբոյ աթոռոյն Էջմիածնի»[117]։

Պատմագիրը նշում է, որ նրանք պարտատերերից և թագավորական ու իշխանական հարկահաններից թաքնվում էին, փախուստի դիմում, որովհետև որինչ չունեին, որ կարողանային վճարել, մի տեղում երկուերեք օր չէին կարողանում մնալ, մի գյուղից մյուսը գնում էին զիշերները, որ ոչ ոք չտեսնի նրանց։ «Յոյժ ողորմելիք էին կեանք նոցա... որպէս և պատմեն տեսողքն»[118] հավաստում է Դավրիժեցին։

Այնուհետև ասում է՝ կաթողիկոսները երկար մտածելուց հետո փրկության ելքը գտնում են. նամակ են գրում Տիգրանակերտի առաջնորդ

111 Նույն տեղում, էջ 289։
112 Նույն տեղում, էջ 290։
113 Նույն տեղում։
114 Նույն տեղում, էջ 180։

115 Նույն տեղում, էջ 7։
116 Նույն տեղում, էջ 6։
117 Նույն տեղում էջ 8։
118 Նույն տեղում, էջ 9։

Սրապիոն վարդապետին, որ մեծ դիրքի և կարողության տեր էր, հրավիրում են Էջմիածին՝ պայմանով, որ նա վճարի բոլոր պարտքերը և դառնա կաթողիկոս, իսկ իրենք իրենց կամքով կհրաժարվեն։ Պատմագիրը գրում է, թե Սրապիոնը ոչ թե փառքի, այլ աթոռի փրկության համար համաձայնվում է, գալիս Էջմիածին և օծվում կաթողիկոս ու սկսում է բարենորոգչական գործունեություն։ Շուտով, սակայն, Դավիթն ու Մելքիսեթը ըմբոստանում են Սրապիոնի դեմ, հեռանում են Էջմիածնից և մտածում են ինչպես անեն, որ կաթողիկոսությունը իրենց ձեռքից բաց չթողնեն, և ելքն, ինչպես վերը ասվեց, գտնում են, գնում և իրենց հպատակությունն են հայտնում շահ Աբբասին։

Երևանը գրավելուց հետո Սրապիոն կաթողիկոսը ներկայանում է շահ Աբբասին, սակայն վերջինս նրան չի ընդունում, քանի որ ցանկանում էր Մելքիսեթին կարգել կաթողիկոս։

Դավրիժեցին այնուհետև հաղորդում է, որ Սրապիոնին Ջուղայում պարսիկները բռնել են, տանջանքների ենթարկել, նա ունեցած չունեցածը տվել է, սակայն նրանք չեն բավարարվել, ստիպված նա մեծ գումար է փոխ վերցրել, տվել է և հազիվ ազատվել ու գնացել է Տիգրանակերտ։

Դավիթն ու Մելքիսեթը այսպիսով շարունակել են մնալ կաթողիկոս, սակայն Դավիթն արդեն Մելքիսեթի կողմից հետին պլանն էր մղվել, վերջինս միանձնյա էր հանդես գալիս, էր «հետևող նախագահ իշխանության»[119]։ Պատահական չէ, որ պատմագիրը գրում է. «Ի ժամանակս առաջնորդութեան Մելքիսէթ կաթուղիկոսին»[120]։ Եվ միաժամանակ մի քանի անգամ ընդգծում է. «որ զիշխանութիւն կաթուղիկոսութեան զաբալաւ առեալ էր ի Պարսից թագաւորէն»[121]։ Այս Մելքիսեթը մեծ սուրգունի ժամանակ կես ճանապարհից ետ է դարձել Էջմիածին և վարել կաթողիկոսությունը։ «Բայց,— դառնացած նշում է պատմագիրը,— ինքն Մելքիսէթ կաթուղիկոսն ոչինչ բնաւ փոյթ ունէր վասն շինութեան, և պայծառութեան, և ժամակարգութեան, և հաստատութեան էջմիածնի, այլ իւր տեղի բնակութեան կալեալ յԵրևան քաղաքի... և ի վերայ իւր ժողովեալ զազգականս և զմերձաւորս իւր և նոքօք յօրանայր լոյծ և ընդարձակ կենօք, մտիւքն և արդեամբքն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի»[122]։ Նա միաժամանակ հայտնում է, որ Էջմիածնում եղել են մի քանի եպիսկոպոսներ և աբեղաներ, որոնք զայրացել են կաթողիկոսի նման վարքագծի համար, և հանդիմանել նրան, սակայն վերջինս արհամարհել է նրանց, նրանք ստիպված դիմել են Ամիրգունա խանին, որի կողմից հովանավորվում էր Մելքիսեթը[123]։

Խանը սկզբում տուգանել է կաթողիկոսին, հետո ղղջացել և նրան սիրաշահելու համար տուգանել է բողոքող եպիսկոպոսներին։ Նրանցից Կարապետ եպիսկոպոսը հուսալքված, հեռացել է Էջմիածնից, իսկ Մարտիրոս եպիսկոպոսին Մելքիսեթը խանի միջոցով արտաքսել է Էջմիածնից[124]։

Պատմագրին անչափ վրդովեցրել է Մելքիսեթի պատճառով մայր աթոռը շահի կողմից տարեկան 100 թումանի հարկադրման՝ մուղադայի հանգամանքը։ «Ի նորին պատճառէ անկաւ մուղադայն ի վերայ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի,— դառնացած գրում է նա,— և մնաց Աթոռն ի ներքոյ դաբալի։ Եւ այս եղև բեռն ծանր, և լուծ տաժանելի, և անուր անխղելի ի վերայ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ի զուր և ի տարապարտուց. և ամենայն ազին Հայկայ սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի եկեղեցականաց և աշխարհականաց»[125]։

Նկատենք, որ պատմագիրը մայր աթոռի վիճակի, Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսների մրցակցության, հետագայում Սահակ կաթողիկոսի գործելակերպի նկարագրություններում օբյեկտիվորեն ցույց է տվել, թե ինչպիսի նենգ ու բիրտ մեքենայություններով էին պարսիկ ու թուրք կառավարող շրջանները հայ եկեղեցին ու հոգևորականության վերնախավին, ծառայեցնում իրենց շահերին, նրանց մեծամեծ եկամուտների աղբյուր դարձնում։ Դրան հասնելու համար էր, որ նրանք ոչ միայն ընդառաջում էին, այլև շատ անգամ իրենք էին հրահրում այն ամենը, ինչը խորացնում էր եկեղեցու տնտեսական քայքայվածությունը և ուժեղացնում նրա տնտեսական կախումը իրենցից։ Դրա համար էր, որ նրանք հովանավորում էին հայ եկեղեցու անմիաբանությունը, նրա խախուտ վիճակը խորացնող մարդկանց, հանդուրժում՝ երկու երեք կաթողիկոսների միաժամանակյա առաջնորդությունը։

Դավրիժեցին Դավթի և Մելքիսեթի կոնկրետ օրինակով տվել է, թե ինչպես շահ Աբբասը նրանց միջև մրցակցությունը նենգաբար ծառայեցրել է անվանապէս ապահարկ մայր աթոռը «օրինականացված» ճանապարհով հարկատու դարձնելու համար։ Պատմագիրը նշում է, որ շահը հակված է եղել դեպի Դավիթ կաթողիկոսը, որովհետև նա սուրգունի

119 Նույն տեղում, էջ 7, 204—205։
120 Նույն տեղում, էջ 178։
121 Նույն տեղում, էջ 271։
122 Նույն տեղում, էջ 202։
123 Նույն տեղում, էջ 209։
124 Նույն տեղում, էջ 203—204։
125 Նույն տեղում, էջ 221—222։

հետ գնացել էր Սպահան և հլու հպատակվել էր իրեն, մինչդեռ Մելքիսեթը ոչ միայն Սպահան չէր գնացել, այլև շահի կողմից գահընկեց արվելուց հետո էլ շարունակել էր կաթողիկոսությունը, կաշառքով սրբերի ոսկորներ է վաճառել։ Այդ բոլորը շահին հայտնի դառնալուց հետո, որոնց մասին նրան հայտնել էր Մելքիսեթի դեմ բողոքի գնացած Դավիթը, նրան ձերբակալել են, տանջանքների ենթարկել, երեք հարյուր թուման տուգանել։ Սակայն հալածանքներից ազատվելու և կաթողիկոսությունում վերստին հաստատվելու համար նա շահին խոստանում է տալ «ամ յամէ ի դիւան թագաւորին յիւրաքանչիւր տարի հարիւր թուման ոռճիկս ծառայից թագաւորին։ Իսկ թագաւորին տեսանելով օգուտս յոլովս իւրոյն կողման, վասն որոյ... ետ նմա զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ հանդերձ թագաւորական նոմոսիւ գրեալ և կնքեալ»[126] և արքունական դիվանի մատյանում էլ գրում է թե «Մելքիսեթ կաթուղիկոսն խնդրեաց զէջմիածնի կաթուղիկոսութիւնն, և խոստացաւ ի տարին հարիւր թուման մուղադայ տալ ի դիւան թագաւորին, վասն որոյ և մեք շնորհեցաք նմա զիշխանութիւն կաթուղիկոսութեան, զի նա վարեսցէ»[127]։

Պատմագիրը ընդգծում է, որ որոշողը դրամն էր, կաշառքը և ոչ արդարությունը։ Դավիթը, որ մեծ ակնկալություններ ուներ շահի միջոցով վրեժ լուծելու Մելքիսեթից, իր նպատակին չի հասնում և փաստորեն արջի ծառայություն է մատուցում՝ առիթ տալով շահին հայ եկեղեցին հարկատու դարձնելու։

Նրա մասին Դավրիժեցին գրում է. «և Դաւիթ կաթուղիկոսն կայր ի բացեայ՝ մախալով նհանջեալ ի ներհակութենէ, և իբր զգազան կապեալ ի գառագեղի, սպասէր և ըղձայր դիպող ժամու»[128]։

Այնուհետև դառնորեն նկարագրում է Մելքիսեթ կաթողիկոսի՝ ժողովրդին պատճառած չարիքները։ Մեկ տարի լրանալուց հետո շահը «մուղադայն» գանձելու համար Մելքիսեթի մոտ է ուղարկել իր ծառաներից չորս բեկ իրենց սպասավորներով ու զինվորներով «Եւ այս եղև վտանգ և աղէտ դառնագին,— զայրույթով գրում է պատմագիրը,— և անուր անխղելի ի վերայ կաթուղիկոսարանին, զի բեռն ի վերայ բեռին բարձեալ եղև», որովհետև Մելքիսեթը 100 թուման չուներ որ վճարեր և եկածները մնացել էին էջմիածնում, նրանց բոլոր ծախսերն ու պահանջները պիտի հոգար կաթողիկոսը։ Պահանջված գումարը հավաքելու համար Մելքիսեթը շրջել է գավառները, նրա հետ են եղել և շահի ուղարկած մարդիկ, որոնք ծանր բեռ են դարձել ժողովրդի համար իրենց շռայլ ու անզուսպ կյանքով։ Մելքիսեթը պարսիկ զինվորների միջոցով ապօրինի գումարներ էր հափշտակում, կողոպտում հոգևորականներին և աշխարհականներին՝ ենթարկելով նրանց անասելի տանջանքների։

«Այլ և այս պատճառով, գրում է Դավրիժեցին,— մտին բազում անկարգութիւնք և օրինազանցութիւնք յազգս Հայոց, կաշառօք անարժանից ձեռնադրութիւն տալ՝ եթէ եպիսկոպոսաց, եթէ քահանայից, և կաշառօք զսեփհական վիճակն այսմ վանացս կտրել և այլում վանաց շնորհել և չհասի, և մեղօքի, կնաթողութեան, և երկակնութեան համարձակ հրաման տալ ամուսնութեան։ Զայսոսիկ և որ սոցին նման բազում անկարգութիւնս գործէին կաթուղիկոսն և եպիսկոպոսունքն իւր»[129]։ Ժողովրդից վայրագ միջոցներով հափշտակած գումարներն իրենց վրա էին ծախսում և «մուղադայն» Մելքիսեթը չէր կարողանում վճարել ու այն անընդհատ կուտակվում էր, հասնելով 800 թուման։ Բացի այդ, նա մեծ գումարներ էր փոխ վերցնում բարձր տոկոսներով, որ կարողանար բավարարել իր հետ գտնվող պարսիկների անհագուրդ պահանջները։

Դավրիժեցին ասում է. ի վերջո Մելքիսեթը որոշում է հրաժարվել կաթողիկոսությունից, այն հանձնել մեկ ուրիշին, որ նա վճարի «մուղադայն»։ Կաթողիկոս է ձեռնադրում իր եղբորորդուն՝ Սահակին, նրա իսկ խնդրանքով, որին ինքն էր եպիսկոպոսություն տվել։ Սահակը մեկնում է Սպահան շահի համաձայնությունը ստանալու, իսկ Մելքիսեթը որոշ ժամանակ մնում է էջմիածնում, հետո գաղտնի փախուստի է դիմում. «Այսպէս թագնաբար գաղտագողի գնացութեամբ զերծաւ Մելքիսեթ կաթուղիկոսն ի մասն բաժնի աշխարհի Օսմանցւոց»[130], գրում է Դավրիժեցին։ Այնուհետև նշում է, որ նրան Կոստանդնուպոլսում չեն ընդունում, այնտեղից նա գնում է Լվով, ուր մինչև իր կյանքի վախճանը (1626 թ.) նորից ծավալում խարդախ գործունեություն։

Լեոյի խոսքերով ասած՝ «եկեղեցու այս ոճրագործ պետի»[131] Մելքիսեթ կաթողիկոսի վարքագծի խիստ բացասական բնութագրումը պատմագրի կողմից՝ հաստատվում է նաև այլ աղբյուրներով[132]։

Պատմագրին քիչ չափով չի հուզել նաև հայ գաղթօջախների ճա-

126 Նույն տեղում, էջ 220։

127 Նույն տեղում, էջ 221։

128 Նույն տեղում, էջ 220։

129 Նույն տեղում, էջ 223։

130 Նույն տեղում, էջ 228։

131 Լեո, նշվ. աշխ., էջ 281։

132 Տե՛ս Դարաեաղցի, նշվ. աշխ., էջ 32; և Վանի Թեմի հոգևորականների՝ Մելքիսեթին ուղարկած հրահանգը, ուր նկարագրված են նրա արարքները, տե՛ս Գ. Վ. Սրուանձտեան, Թորոս Աղբար, հ. Բ., Պոլիս, 1884, էջ 280—293։

կատարիրը և առանձնապես Լվովինը, որը զոհ էր դարձել Հռոմի պապի և ճիզվիտների խարդախ մեքենայություններին և համառորեն պայքարի էր ելել նրանց դեմ։ Դավրիժեցին քիչ էջեր չի նվիրել այդ իրադարձությունների նկարագրությանը և իր վերաբերմունքը դրսևորել դրանց նկատմամբ։ Այդ մասին առավել հանգամանորեն քիչ հետո։

* * *

Դավրիժեցին ատելությամբ է խոսում նաև թուրքական արքունիքի ու պաշտոնեության մասին, անաչառ մերկացնում է նրանց կատարած մեքենայությունները հայ եկեղեցու ու հոգևորականության նկատմամբ։

Խոսելով Կոստանդնուպոլսի պատրիարքարանի վճարելիք 40 հազար զուրուշ պարտքի մասին, նա բացահայտում է այդ պարտքի առաջացման պատճառները. «Եւ պատճառ պարտուցս էին,— գրում է Դավրիժեցին,— նախ սոսկ միայն կոչմամբ ևեթ պատրիարգք անուանեալ առաջնորդքն, որ նստին թագաւորական իշխանութեամբ, և արծաթոյ ընտրութեամբ սպրդեալ ի ներքս մտանեն՝ յանձանց, և ի սուտակասպասից ընծայեալք, և ոչ յԱստուծոյ։ Եւ երկրորդ՝ խազմասէրքն և խռովարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան, և վասն նախանձու, և վասն մարմնաւոր շահուց ակնկալութեան, գումարակ լինէին, ոմանք ի վերայ այսմ առաջնորդի, և ոմանք այնմ առաջնորդի, և սուտակասպաս արբանեակք, և զօրավիգք լինէին նոցա. և ապա գնացեալ առ դավթարդար, և առ վէզիր և առ թագաւորն, տային կաշառս յոլովս նոցա, և վանէին զախոյեանն, և առնուին զիշխանութիւն սոսկ անուն պատրիարգութեան և առաջնորդութեան։ Եւ այլ ևս բազմապատիկ կաշառս ի դրունս իշխանացն ցրուէին աստ և անդ, և այսպէս առնելով բազմացաւ բարդեցաւ, և դիզացաւ պարտքն և եհաս մինչ ի ԽՌ (40 հազար) զուռուշն»[133]։ Այնուհետև պատմագիրը սրտի անհուն կսկիծով նկարագրում է մայր աթոռի և Մովսես կաթողիկոսի դեմ՝ Սահակ կաթողիկոսի ծավալած պառակտիչ ու ենթգործունեությունը Արևմտյան Հայաստանում, որի նպատակն էր այնտեղ ինքնուրույն կաթողիկոսություն ստեղծել, անջատվել էջմիածնից, դրանով իսկ տնտեսական հարված հասցնել ֆինանսական խիստ ճգնաժամի մեջ գտնվող էջմիածնին։ Նրան գործակցել ու հովանավորել են Սսի կաթողիկոսի եղբորորդին՝ Պողոս վարդապետը, Կոստանդնուպոլսի առաջնորդ Զաքարիա վարդապետը և ուրիշները։

133 Դավրիժեցի, էջ 335—336։

Չնայած էջմիածնին հավատարիմ հոգևորականները ու աշխարհականները խիստ հանդիմանել են, խնդրել, խոստացել նյութապես ապահովել նրա կյանքը, սակայն Սահակը անդրդվելի է մնացել և իր հովանավորյալների միջոցով արքունի մեծ վեզիրին գրել է. «խնդրեմք զի շնորհեսցես մեզ զիշխանութիւն կաթուղիկոսութեան ազգին Հայոց... մեք յաւելումք ի գանձարանն արքունի ամ յամէ իւրաքանչիւր տարուոյ ԺԻ զուռուշ... տամք»[134]։ Պատմագիրն ասում է. մեծ վեզիրը «ընթերցաւ և մտօքն հաւանեցաւ»[135]։ Էջմիածնականները, որոնց թվում և մի քանի հարուստ ու անվանի խոջաներ, նույնպես դիմել են մեծ վեզիրին, թե «մի մատնեսցէս զաղքատ և զտառապեալ ժողովուրդս ի ձեռս դոցա, զի զոքա վասն փառամոլութեան և ագահութեան իւրեանց մասնեն զողորմելի ռիթն ի ներքոյ ծանր հարկի, որ է ժողովրդականն մեծ սիթամ (առգանք) և գործողացն մեղք»։ Դավրիժեցին գրում է, թե այդ կարդալուց հետո նա բերողներին ասել է. «անխելք Հայեր, զիա՞րդ ոչ տամ նոցա զկաթուղիկոսութիւն, զի նոքա ի տարուոջն ԺԻ զուռուշ յաւելուն ի գանձարան թագաւորին»[136]։ Պատմագիրը ցավով նշում է, թե այդ լսելով էջմիածնական՝ վանեցի խոջա Իուհիջանը, որ անվանի էր և հավատարիմ մեծ վեզիրին, ասել է վերջինիս. «եթէ զողորմելի և զտառապեալ ազգն Հայոց վասն գանձի վաճառես նոցա, ինձ վաճառեա, և ես ոչ թէ ԺԻ զուռուշ, այլ ԻՌ զուռուշ տամ»[137]։ Վեզիրը կատարել է նրա պահանջը։ Այստեղ էլ կաթողիկոսության հարցը կաշառքով է լուծվել, Սահակը և նրա գործակից Պողոս վարդապետը տանջանքների են ենթարկվել ու միայն խոջաների միջամտությամբ ազատ են արձակվել ու հեռացել։ Էջմիածնում կաթողիկոսությունը շարունակել է վարել այդ իրադարձությունից առաջ նոր ջուղայեցի խոջաների միջնորդությամբ ձեռնադրված Մովսես Սյունեցի վարդապետը, որը և հիմք է դրել էջմիածնի վերանորոգությանը ու արժանացել մեր պատմագրի մեծարմանը։

Դավրիժեցին մեծ գոհունակությամբ հայտնում է, որ շահ Աբբաս Ա-ի մահից հետո, նրան հաջորդած շահ Սեֆիի ժամանակ Մովսես վարդապետին հաջողվել է նոր ջուղայեցի խոջա Նազարի միջնորդությամբ, մեծ գումարներ տալով և շատ չարչարվելով, հազիվ վերացնել տալ 100 թումանի «մուղադայն» նորընծա շահի կողմից և կաթողիկոսության հրաման ստանալ նրանից։

134 Նույն տեղում, էջ 244։

135 Նույն տեղում։

136 Նույն տեղում, էջ 244—245։

* * *

Հավատքում անզիջող պատմագիր Դավրիժեցու մերկացումից չեն վրիպել նաև Հռոմի պապը և ճիզվիտները, որոնք հովանավորել են Լվովի կաթոլիկություն ընդունած Նիկոլ(Նիկողայոս Թորոսովիչ) եպիսկոպոսին, թևավորել նրա սանձարձակ ու կամայական գործելակերպը։ Պատմագիրը ցավով գրում է, թե Մելքիսեթ կաթողիկոսը երբ Լվով է գնացել, այնտեղ բազում ոսկի կաշառք ստանալով տեղացի Նիկոլ աբեղային, հակառակ ժողովրդի համառ դիմադրությանը, գաղթօջախի եպիսկոպոս է ձեռնադրել, ժողովուրդը չի ընդունել նրան, իր նպատակին հասնելու համար նա ներկայացել է Լվովի ճիզվիտների միաբանությանը, ընդունել կաթոլիկություն։ Նրանց միջոցով քաղաքի իշխանից ստացել զինական ուժ ու բռնի տիրել է եկեղեցիներին ու վանքերին, իր հակառակորդներից շատերին բանտարկել ու տուգանել է, բոլորին ստիպել ընդունել կաթոլիկություն, հափշտակել ու վատնել եկեղեցիների հարստությունն ու ունեցվածքը, կողոպտել ժողովրդին, թաղման, պսակի, մկրտության և շատ այլ բաների համար դրամ պահանջել, խախտողներին մեծ տուգանքների ենթարկել։ Հայ գաղթօջախի բոլոր ջանքերը ազատվելու նրանից՝ ապարդյուն են անցել, ճիզվիտները միշտ ձախողել են այդ ջանքերը, անգամ արգելել Լեհաստանի թագավորին, որին գիմել էր Մովսես կաթողիկոսը, խառնվելու այդ գործին։ Նրանք պապի մոտ էլ խափանել էին Մովսես և Փիլիպպոս կաթողիկոսների դիմումներն ու Լեհաստանի թագավորի և հոգևոր առաջնորդի միջնորդությունը։ «...անդ ևս,—գայրացած գրում է Դավրիժեցին,— անիրաւ Եզվայիդայքն (ճիզվիտները— Լ. Բ.) ներհակացան Հայոց և ձախեցին զբանս նոցա»[138]։ Այսպես, մոտ 25 տարի պապի և ճիզվիտների պատճառով բախտախնդիր այդ Նիկոլը տանջել է Լվովի գաղթօջախի հայությանը։

Պատմագիրը Նիկոլի հետ կապված այս իրադարձությունների կապակցությամբ հետաքրքիր ու կարևոր տեղեկություններ է հաղորդում Լվովի գաղթօջախի ներքին ինքնավարության, կառավարման սիստեմի, դատավարության, կենցաղի և պապականության դեմ համառ ու անզիջում պայքարի մասին, որոնք և հաստատվում են արխիվային փաստաթղթերով»[139]։

137 Նույն տեղում։

138 Նույն տեղում, էջ 382։

139 Տե՛ս Аракел Даврижеци, Книга историй, перевод с армянского, предисловие и комментарии Л. А. Ханларян, М., 1973, стр. 34, примеч. 12.

* * *

Խորաթափանց պատմագիր Դավրիժեցին քաջ գիտակցել է հայ հասարակական կյանքում տեղի ունեցող նոր երևույթների խաղացած դերն ու նշանակությունը, որոնք և պայմանավորել են նրա զարթոնքն ու զարգացումը։

Պատահական չէ, որ նա իր «Պատմության» մեջ զգալի տեղ է տվել հայ առևտրավաշխառուական կապիտալի վերնախավի ծավալած գործունեությանը XVII դարի սկզբին Հայաստանում, Պարսկաստանում ու Թուրքիայում, բազմաթիվ կոնկրետ փաստերով համակողմանիորեն ցույց տվել նրա որոշիչ ու կարևոր դերը հայ քաղաքական-հասարակական, տնտեսական-մշակութային ու շինարարական կյանքում, հայ ժողովրդի վերապրած զարթոնքում։ Այդ խավի գործունեության մեջ հակառակ Դարանաղցու, նա տեսել է լուսավոր այն ծալքերը, որոնք հող են նախապատրաստել զարթոնքի ու ազգային ինքնագիտակցության բարձրացման համար և մեծ հույսեր կապել այդ գործունեության հետ ու մխիթարվել։

Պատմագիրը հիացմունքով ու հպարտությամբ է գրում Հին և Նոր Ջուղաների հարստության ու փարթամության մասին և ցավագին ողբում Հին Ջուղայի ճակատագիրը։ Նա գոհունակությամբ է խոսում նաև Արևմտյան Հայաստանի, Կոստանդնուպոլսի ու Լվովի հայ խոջաների ու դավլաթավորների մասին։ Նկարագրելով Հին Ջուղայում շահ Աբբաս Ա.-ի ընդունելության արարողությունը, նա նշում է. «Իշխանք՝ և ծերք, և երիտասարդք՝ ի զարդ և ի զէնս ոսկէհուռն սխրատեսիլ հանդերձից պըճնազարդեալք ընդ առաջ ընթանային։ Եւ նորաբողբոջ դեռահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ, և ազնիւ գինի մատուցանէին... ...Եւ զճանապարհս անցից արքայի զարդարեցին. և յեզէրէ գետոյն մինչև ցապարանս խոջայ Խաչիկին արկին փայանդաղ առաթուր թագաւորին, պատուական և վայելուչ կոմաշս, որոց վերայ էանց թագաւորն... Եւ ի տան անդր, խոջայ Խաչիկն ոսկի սկուտեղ լցեալ ոսկւով եղեալ ի ձեռն որդւոյ իւրոյ մատոյց առաջի թագաւորին, նոյպէս և ամենայն մեծամեծքն Ջուղայու մատուցին ընծայ... Եւ զաւուրս երիք եկաց անդ շահն, և ջուղայեցիք պատուեցին զնա համադամ կերակրօք և ծաղկեհամ գինեաւ»[140]։

Նոր Ջուղայի մասին հիացմունքով գրում է, որ ջուղայեցիները «շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարանօք, և ամարասուն հովանոցօք, բարձ-

140 Դավրիժեցի, էջ 24—25։

բարերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պէս պէս երանգաց ակնախտիղ տեսողաց։ Սոյնպէս շինեցին և զեկեղեցիսն հրաշագան յօրինուածովք... Երկնանման խորանօք, և գերամբարձ կաթուղիկէիւք, բովանդակ ծաղկեալ պէս պէս երանգովք ոսկւով և լաջվարդով... Եւ ի գլուխ կաթուղիկէից ամենայն եկեղեցեաց կառուցեալ զնշան սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն ի պսակ և ի պարծանս քրիստոնէից»[141]։

Դավրիժեցին ցասումով նկարագրելով Սպահանի մահմեդական բնակչության պահանջով քաղաքից հայ բնակչության տեղահանումը 1655—1658 թթ. և Նոր Ջուղայի մոտ բնակության տեղ հատկացնելը, բացահայտում է այդ տեղահանման դրական կողմերը, հանգամանորեն տալիս է և դրա պատճառները և հայերի համար դրանից ստացած օգուտները։ Հարկ է նկատել, որ Դավրիժեցու կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա վերհանում է իր կողմից եկարագրվող իրադարձությունների պատճառները, ամեն իրողություն նրա մոտ փաստարկված է, այդպես է և տեղահանման պատմությունը։ Ըստ նրա՝ տեղահանման պատճառն իբր քաղաքում տարածված հարբեցողությունն է եղել, մահմեդականները դրանում մեղադրել են քաղաքի հայ բնակչությանը, որի զբաղմունքի մի ճյուղը եղել է գինեգործությունը և գինեվաճառքը, հետևապես հայերն են մեղավոր, որ պարսիկները զբաղվում են հարբեցողությամբ։ Այս իհարկե պատրվակ էր և ոչ պատճառ։ Հիմնական պատճառը, որ մեր պատմագիրը չի կռահել, քաղաքի տնտեսական կյանքում այն խորացող մրցակցությունն էր, որ սկսել էր ծավալվել հայերի ու պարսիկների միջև առևտրավաշխառության և արհեստագործության բնագավառներում։

Պատմագիրը միաժամանակ նկատում է, որ չկա շարիք առանց բարիքի։ Նրա կարծիքով, այդ տեղահանումից հայերը շատ են շահել։ Սկզբում դժվար էր թողնել տուն-տեղն ու հեռանալ, բայց հետո գոհ են եղել «վասն բազում պատճառի» ու թվարկում է դրանք։ Նախ,— քրիստոնյաների և մահմեդականների համատեղ բնակությունը պարարտ հող էր ստեղծում հայ «թերահավատ մարդկանց» դավանափոխ դառնալու համար։ Նրանք ապրելով մահմեդականների միջավայրում, կրելով նրանց ազդեցությունը, հեռանում էին քրիստոնեությունից։ Երկրորդ՝ քրիստոնյաների աղջիկներին ու տղաներին «ծածուկ ու գաղտնի» միջոցներով համոզում ու ամուսնացնում էին իրենց աղջիկների ու տղաների հետ և մահմեդական դարձնում։ Ցավով նշում է, որ «Եւ զայսպիսիս բազումս տեսաք մերովք աչօք»...

Երրորդ՝ քրիստոնյաների տեղը քաղաքում նեղ էր և սակավաջուր, որի համար շատ դժվարություններ էին կրում։ Իսկ նոր տեղում ստացան ընդարձակ հողեր և շինեցին մեծածախ ու վայելուչ տներ «վերամբարձ վերնայարկօք և ամարասուն հովանոցօք, որոց առաջի տեղիք զբօսանաց, պարտէզք, և ծաղիկք, և ծառք մրգաբերք։ Չորրորդ՝ զի անջատեալ տրոհեցան յօձաբարոյ ազգէն մահմետականաց, որ հանապազօր խածատեալ նենգէին և զզուէին զքրիստոնեայսն, և այժմ ամենայն քրիստոնեայքն ի միում տեղւոջ գումարեալ կան և ուրախութեամբ գոհանան...»[142]։

* * *

Դավրիժեցին գոհունակությամբ ընդգծում և կոնկրետ փաստերով ցույց է տալիս, որ հայ առաջադեմ և եռադեմ հոգևորականության միջև տեղի ունեցած համառ պայքարում հայ խոջաներն ու դավլաթավորները զորավիգ են հանդիսացել առաջիններին, նյութական ու բարոյական աջակցություն ցույց տվել նրանց, ամեն ջանք գործադրել ձախողելու եռադեմների պառակտողական ձգտումները։ Այսպես, շնորհիվ Արևմտյան Հայաստանի «բարեպաշտ քրիստոնյա»[143] խոջաների ու դավլաթավորների, Սահակ կաթողիկոսին չի հաջողվել արևմտահայ հատվածն անջատելու էջմիածնի մայր աթոռից, չնայած գործադրած մեքենայություններին։

Նրանք, գրում է Դավրիժեցին «բազում աւուրս գնային առ Սահակ կաթուղիկոսն, աղաչէին ու խնդրէին, մի մատներ զտառապեալ ազգս Հայոց ի բերան այլազգի բռնաւորաց և մարդադեմ գազանաց»[144]։ Տեսնելով վերջինիս և Մելքիսեթ կաթողիկոսի անվայել վարքագիծը, արևելահայ և արևմտահայ խոջաները արհամարհել են նրանց և ամեն կերպ նպաստել ու ապահովել են առաջադեմների հաղթանակը, դրանով իսկ էջմիածինը դուրս բերել անկումային վիճակից։

Դավրիժեցին զայրույթով գրելով Լվովի հայ գաղթօջախի Նիկոլ եպիսկոպոսի մասին, միաժամանակ հպարտությամբ ու շեշտված ձևով, ցույց է տալիս, որ պապականության ու ճիզվիտների դեմ լվովցիների ավելի քան քսանամյա համառ պայքարը հաղթանակով էր ավարտվել

141 Նույն տեղում, էջ 63—64։

142 Նույն տեղում, էջ 453—454։

143 Նույն տեղում, էջ 242։

144 Նույն տեղում, էջ 243։

շնորհիվ գաղթօջախի ժողովրդի, այդ թվում և մեծահարուստների ու իշխանավորների անդրդվելիության, չնայած թշնամիները հզոր էին ու նենգ։

Պատմագիրը երախտագիտությամբ է նշում հայ առևտրական վերնախավի ցույց տված նյութական ու բարոյական օգնությունը անապատական շարժման ծավալման ու զարգացման, ուսումնակրթական ու հոգևոր-քարոզչական գործերի վերածննդի, վերանորոգչության ու հայոց հոգևոր կենտրոնի դիրքերի վերականգնման ու ամրապնդման բնագավառներում։

Նկարագրելով Պողոս Մոկացի վարդապետի՝ Թավրիզում ծավալած քարոզչական գործունեությունը, Դավրիժեցին նկատում է. «Քանզի յամենայն կողմանց եկեալ վաճառականքն, որք գային ի Թարվէզ, իբրև պատահէին լրոյ քարոզութեան սրբոյ վարդապետին՝ մխիթարեալ զուարճանային հոգւով, և օրհնութիւն մատուցանէին Աստուծոյ՝ տուողին այնպիսեաց շնորհաց»[145] և այնուհետև ավելացնում է. «Եւ ժողովուրդքն յոյժ սիրէին զնա վասն ճշմարիտ վարուց նորա, և վաճառականքն՝ որք էին յերկրէն Գողթնեաց, աղաչէին զնա գնալ յերկիրն իւրեանց ի քարոզութիւն, յորոց մի էր Ցղնեցի խոջայ Հայրապետն և այլք ևս ընդ նմա և զայս բան ի բազում աւուրս թախանձէին»[146]։

Պատմագիրը գոհունակությամբ նշում է, որ նույնպիսի վերաբերմունքի է արժանացել Մովսես Սյունեցին Կոստանդնուպոլսում։ Երուսաղեմից նա գնացել է Պոլիս Գրիգոր Կեսարացի վարդապետի մոտ, որն այն ժամանակ տեղի պատրիարքն էր, Մովսեսն իր վարքագծով շատ շուտով վայելել է ժողովրդի համակրանքը։ «Առ որ հաճեալ և հաւանեալ ամենայն ժողովուրդքն Կոստանդնուպօլսի, եկեղեցականք և աշխարհականք, և երևելի արք՝ որպէս Շահին չալապին, որ էր այր նշանաւոր ի դրան թագաւորին, և այլք ևս յոլովք։ Նաև վաճառականք արևելեան աշխարհին, որք պատահեցան ի Կոստանդնուպօլիս, և մանաւանդ Ջուղայեցիք և Գողթնացիք. զի գիտէին թէ Մովսէսն յարևելեան աշխարհէն է. ամենեքեան մատուցեալ առ Գրիգոր վարդապետն խնդրէին տալ տէր Մովսէսի՝ վարդապետութիւն»[147]։

Այնուհետև նշելով, որ Ամիրգունա խանը Մովսես վարդապետին պահել էր Երևանում ու առաջարկել վերաշինել քաղաքում գտնվող Անանիա առաքյալի դամբարանի վրա վաղուց կառուցված, բայց հետո ավերակ ու անմարդաբնակ դարձած մատուռը և այն դարձնել իր բնակատեղին, Դավրիժեցին ընդգծում է. «այլ և ամենայն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք աղաչելով զնոյն խնդրէին ի վարդապետէն»։ Մովսեսը համաձայնվում է և «արդեամբք և ձեռնտուութեամբ քրիստոնէից տեղեկանաց և վաճառականաց, որք յօժարութեամբ տային տուրս ողորմութեան ի շինումն տեղւոյն, վասն սիրոյ վարդապետին... բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարգաւն և սահմանաւն այն, զոր կարգեցին ի մեծ անապատն։ Առ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք և գրոց աշակերտք իմաստունք և սրբակեացք. կային ի միասին մեծք և փոքրք սիրով հանդարտեալք ի խցի, հանապազօր կանխեալ յաղօթս և յընթերցումն սուրբ գրոց»[148]։

Պատմագիրն ասում է, որ այդ տեղը անվանել են Անապատ[149]։

Ջուղայեցի վաճառականները, որոնք ներկա են եղել Էջմիածնում մեռոն օրհնելիքին Մովսեսի կողմից արված «զբարեվայելուչ արարողութիւնսն»-ին, վերադառնալով Սպահան, պատմել են այդ մասին ջուղայեցիներին, բոլորը փափագել են տեսնել Մովսեսին իրենց մոտ, պատվիրակություն են ուղարկել նրա ետևից, «Նա և գլուխն Ջուղայեցւոց, ողորմութեանցն Քրիստոսի արժանին խոջայ Նազարն գրեաց ի վերայ որդւոյ իւրոյ Խոջայ Սարֆրազին, որ յաւուրսն յայնոսիկ էր յաշխարհն Ատրպատականի, մեծարել զվարդապետն Մովսէս յԱսպահան»[150]։

Ի դեպ այդ խոջա Նազարի մասին պատմագիրը հպարտությամբ գրում է. «որոց պետ և գլուխ էր խոջայ Նազարն, ոչ միայն Ջուղայեցւոց այլ և ամենայն հայազուն քրիստոնէից բնակելոցն ընդ թագաւորութեամբն Պարսից, քանզի յոյժ հզօր և երևելի էր խոջայ Նազարն, նաև սիրելի թագաւորին Պարսից Շահաբասին»[151]։

Բջնիի ավերված տաճարը Փիլիպպոս կաթողիկոսի հրամանով վերանորոգվել է «ծախիւք և արդեամբք քրիստոսասէր մեծի պատրկի Ջուղայեցի խոջայ Պետրոսին»[152]։

Աշտարակի կամուրջը, որ կիսավեր վիճակում էր, երևանցի մահտեսի խոջա Գրիգորը քանդել էր, տեղը փոխել և նոր՝ ամուր ու գեղեցիկը կառուցել[153]։ Այնուհետև պատմագիրը գոհունակությամբ թվարկում է

145 Նույն տեղում, էջ 266—267։
146 Նույն տեղում, էջ 267։
147 Նույն տեղում, էջ 286—287։
148 Նույն տեղում, էջ 294—295։
149 Նույն տեղում, էջ 296։
150 Նույն տեղում, էջ 297։
151 Նույն տեղում, էջ 524։
152 Նույն տեղում, էջ 352։
153 Նույն տեղում։

այն քաղաքներն ու գյուղերը, որոնցում նորոգվել են վանքերն ու կառուցվել եկեղեցիներ, տեղի կամ դրսի մեծահարուստների աջակցությամբ ու ծախսերով[154]։

Պատմագիրը երախտագիտությամբ է խոսում նաև բուրսացի մեծահարուստ Անտոն Զելեբիի մասին, որի տված գումարներով կառուցվել է էջմիածնի զանգակատունը։ «Այս Անտոն շալապի յոյժ երևելի և հռչակեալ այնքան,— գրում է Դավրիժեցին,— մինչ զի յայտնի էր ի դուռն Թագաւորին Օսմանցւոց, նա և ի հեռաւոր աշխարհս ի Ֆռանկաց, ի Պարսից, զի կաղի ընչաւէտ և փարթամ էր ստացուածովք։ Եւ էր իւր գործ վաճառականութիւն...»[155]։

Խորաթափանց Դավրիժեցին գիտակցել ու թերևս կանխատեսել է նաև հայ մելիքությունների խաղալիք դերը գալիք բուռն իրադարձություններում։ Նրան շատ է ուրախացրել, որ շահ Աբբաս Ա Գեղարքունիքի Մելիք Շահնազարին մելիքության իշխանություն է տվել։ Նշելով, որ շահը գնացել է Մազրա և իջևանել է Մելիք Շահնազարի տանը, Դավրիժեցին գրում է. «Եւ էր Մէլիք Շահնազարս յազգէն Հայոց՝ և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր... էր ինքն բարեկամ և մտերիմ և արգոյ առաջի Թագաւորին։ Վասն որոյ և Թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք շքեղացուցեալ խիլայեաց. և պարգևեաց նմա զիշխանութիւն մէլիքութեան գաւառին, և այլ ևս դաստակերտս և գեղօրայս ետ նմա եւ եղբարց նորա։ Եւ հաստատուն նոմոս գրեաց և կնքեաց Թագաւորական կնքով և ետ նոցա զի անփոփոխ լիցի ժառանգութիւնն այն նոցա և զաւակաց նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեան»[156]։

Սխալված չենք լինի եթե ասենք, որ Դավրիժեցին գիտակցել է հայ հոգևոր վերնախավի առաջադեմ թևի և «բարեպաշտ քրիստոնյա» խոջաների համագործակցության անհրաժեշտությունը ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման և ուժերի համախմբան գործում, որ և հետագայում նպաստավոր հող պիտի հանդիսանար ազատագրական մտահղացումների և ավելի ուշ խմորումների ու բացահայտ շարժումների համար։

Հարկ է նշել սակայն, որ պատմագիր Առաքել Դավրիժեցին, լինելով հոգևոր առաջադեմ վերնախավի ու հայ առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների շահերի արտահայտիչն ու գաղափարախոսը, գերագնահատել ու իդեալականացրել է նրանց խաղացած դերը

154 Նույն տեղում, էջ 353։

155 Նույն տեղում, էջ 338—339։

156 Նույն տեղում, էջ 96։

հայ հոգևոր ու մշակութային կյանքում։ Խավարի, մղձավանջային իրողության, ոճրագործ հոգևոր պետերի դեմ պայքարի ելած իդեալիստ պատմագիրն այլ կերպ չէր կարող վարվել, նրան հարկավոր է եղել դրանց դեմ հակադրել նորոգչական, առաջավոր գաղափարներն ու դրանց կրողներին, ավելի ցցուն դարձնելու համար իր ապրած օրերում տիրող իրավիճակի պատճառները և դրա դեմ պայքարի անհրաժեշտությունը։

Դավրիժեցին չի տեսել, կամ ավելի ճիշտ, չի ցանկացել տեսնել հայ առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների գործունեության արատավոր կողմերը, նրանց շրջաններում արմատավորված բարքերը, շվայտ կենցաղվարությունը, որոնց մասին ցասումով գրել է Դարանաղցին և մասամբ Զաքարիա Ագուլեցի օրագրողը։

* * *

Դավրիժեցին որոշ տեղեկություններ է հաղորդում կաթոլիկ միսիոներների՝ Պարսկաստանում և Հայաստանում ծավալած գործունեության մասին և իր վերաբերմունքը ցուցաբերում նրանց նկատմամբ։ Բացառությամբ մի ֆրանկ «երևելի և փարթամ» եպիսկոպոսի, որն այն ժամանակ, երբ Սպահանի հայերը շարաչար տանջանքների էին ենթարկվում պարտքը չվճարելու համար, գտնվել էր Սպահանում և տեսնելով նրանց անելանելի վիճակը, 250 թուման էր տվել նրանցից պահանջածը վճարելու համար[157], մյուսների նկատմամբ բացասական է տրամադրված։ «Նոքա,— գրում է պատմագիրը,— ըստ մարդելոյզ և երեսահաճ և խաբուսիկ բարոյից իւրեանց զամենեսեան հաճեցուցանէին յինքեանս»[158]։ Նրան շատ են զայրացրել Ֆրանկ պատրիկները, որոնք եկել էին էջմիածին, կաշառել Մելքիսեթ կաթողիկոսին և սկսել սրբերի նշխարները գաղտագողի հայտնաբերել ու յուրացնել։ Դավրիժեցին ասում է. նրանք ունեցել են իրենց լեզվով գրված մի գիրք-աշխարհացույց, ուր «հաւաստեաւ և անվրէպ ցուցանէր թէ ուրանօր իցեն գերեզմանք և դամբարանք սրբոցն՝ որք կան ի վանօրայս Հայոց... այն գրոյն գտանէին զնշխարս սրբոցն, և տային ինչս բնակչաց վանիցն՝ և զնշխարսն առնուին»[159]։ Հռիփսիմե կույսի նշխարների հայտնաբերման կապակցությամբ էլ գրում է, թե նրանք «ըստ մարդելոյզ հնարից իւրեանց հաւասարիմք երե-

157 Նույն տեղում, էջ 154։

158 Նույն տեղում, էջ 178։

159 Նույն տեղում, էջ 178—179։

«Լեալք յաշս վանականացն և գեղականացն՝ հաճեցուցեալ են զնոսա յինքեանս»[160]։

Դավրիժեցին չի ասում, թե այդ պատրիկներն ինչ նպատակով են նշխարներ հավաքել, թերևս պետք է ենթադրել, որ նրանք նշխարները վաճառելու և հարստություն ձեռք բերելու նպատակ են հետապնդել, ինչպես այդ ցույց է տվել Դարանաղցին իր «Ժամանակագրության» մեջ։

* * *

Միջնադարի պատմագիրների նման Դավրիժեցին էլ ժողովուրդներին վրա հասած սարսափները նրանց՝ աստծու հանդեպ գործած մեղքերով է բացատրում։

Նկարագրելով մեծ սուրգունի ժամանակ գետանցը, ողբերգու պատմագիրը գրում է. «քանզի յորդութիւնք մեղաց մերոց փակեցին ընդդէմ մեր զդուռն ողորմութեան գթածին Աստուծոյ»[161]։ Նա էլ հավատացել ու գրել է զանազան հրաշքների, տեսիլների, երազների մասին[162]։

Իր ապրած օրերի շատ թե քիչ կարևոր իրադարձությունները չեն վրիպել պատմագրի տեսադաշտից և նա գրել է դրանց պատմությունը իբրև ականատեսի, շատ բաների մասին էլ, ինչպես ինքը բազմիցս նշում է, իրեն պատմել են ականատեսները, կամ գործող անձինք[163]։ Դավրիժեցու հարցասիրությունը որոշ չափով վնասել է գործին։ Առանձին դեպքերի մասին տարբեր մարդկանց պատմածները գրի առնելու հետևանքով, «Պատմության» մեջ կրկնողությունները շատ են, հատկապես բրոնագաղթի, շահ Աբբասի, Մելքիսեթ ու Մովսես կաթողիկոսների, Պողոս վարդապետի մասին։

Քրիստոնյաների նահատակությունների նկարագրությունները, որոնց նվիրված է հինգ գլուխ (44—48) գրեթե նույնն են, միայն անուններն են փոխված[164]։

Դավրիժեցու պատմության ամենաստվերոտ կողմը գրքի բովանդակության հետ առնչություն չունեցող կողմնակի նյութերի առատությունն է, որոնք որոշ դեպքերում խճողել են շարադրանքը, խախտել տրամաբանական կապը։ Պատմագիրը հաճախ ընդհատում է այս կամ այն իրադարձության և կամ անձի մասին պատմածը, մեջ է բերում բոլորովին կողմնակի զրույց ու նորից վերադառնում ընդհատված պատմությանը։

Այս կապակցությամբ Լեոն գրում է. Դավրիժեցին «մի հավատացյալ վանական է, լցված մի վառ սիրով դեպի հայրենի աշխարհը, դեպի ազգային մտավոր-կուլտուրական ստացվածքը ներկայացնող եկեղեցին։ Այդ սերը դարձնում է նրան երկարաբան, ուշադիր դեպի բոլոր մանրամասնությունները, դեպի ամեն մի հանգամանք, որ հարազատ ժողովրդի նահատակության փաստերն էր ցոլացնում»[165]։

Դավրիժեցու «Պատմության» մեջ զետեղված են նրա բովանդակությանը չառնչվող և ուրիշների գրած այլ պատմվածքներ, որոնցից են Կոստանդնուպոլսի հրդեհի (գլուխ Ծ) նկարագրությունը՝ ականատես Ստեփանոս Մեղրեցի վարդապետի հեղինակությամբ, Աղվանից աշխարհի պատմությունը՝ (գլ. ԾԵ) ծարեցի Հովհաննես վարդապետի, Թանկարժեք քարերի նկարագրությանը նվիրված գլուխները (ԾԳ—ԾԴ)՝ հալեպցի Սարգիս անունով մի ակնագործ քահանայի, հրեաների մասին հատվածը (էջ 651—665)։

Կոստանդնուպոլսի հրդեհի կապակցությամբ Դավրիժեցին ասում է թե այդ մասին Ստեփանոսը գրել էր ու ուղարկել էջմիածին և ինքը նրա գրածը «նովին շարադրութեամբ արդէն աստ գծագրեցի» և բացատրում է թե ինչու. «Նախ՝ զի զառ ձեռն պատրաստ գրեալն ոչ ի դէպ համարեցայ երկրորդել. և երկրորդ՝ վասն իմոյս բազմակի աշխատանացս, որով ձանձրացեալ եմ, զի արդէն ի մեռասան ամն մտի, որ աշխատիմ ի վերայ այսր պատմագրիս... և տակաւին աշխատիմ ի վերայ սորա. և երրորդ՝ զի ծերացեալ եմ և կարի պակասեալ ի զօրութեանց, և մահն եկեալ հանապազօր յանդիման իմոյս աչաց կանգնեալ է, և գիտեմ թէ ես մեռանիմ և այս գիրքս մնայ կիսակատար, կրեալ աշխատանքն իմ ամենայն ընդ վայր կորնչին, զի ոչ ումեք փոյթ է մտանել յաշխատութիւն իմ գրաւ հանեալ կատարել, վասն որոյ փութամ, ճեպիմ, զի թերևս հանից յաւարտ՝ զի մի անկատար մնասցէ, և աշխատանքն իմ կորիցէ»[166]։

Թանկարժեք քարերի կապակցությամբ էլ գրում է, որ ինքն է խնդրել ակնագործ Սարգսին, «զոր բանիւ ասես, գրով շարադրեալ տուր մեզ

160 Նույն տեղում, էջ 179—180։

161 Նույն տեղում, էջ 43։

162 Նույն տեղում, էջ 262—263, 323—324, 530, 539, 559...

163 Նույն տեղում, էջ 88, 148, 194—195, 214, 219—221, 426, 432—433։

164 Նույն տեղում, էջ 526—560, Լեոն գտնում է, որ դրանք ուրիշների գրածներն են, տե՛ս նշվ. աշխ. էջ 363։

165 Լեո, նշվ. աշխ., էջ 362—363։

166 Դավրիժեցի, էջ 561—562։

վասն օրինակի, և նա վասն մերոյ խնդրոյ գրեալ ետ, և մեք վասն հասարակաց օգտի ի մէջ այս պատմագրիս շարակարգեալ գրեցաք»[167]։

Պատմության 620—650 էջերում (գլուխ ԾԶ) զետեղված է մի շատ համառոտ ժամանակագրություն, որն ընդգրկում է մեր թվարկության 613 թվից մինչև մեր պատմագրի ապրած օրերի իրադարձությունների ժամանակագրական թվարկումը։ Անխորագիր այդ գլխից առաջ հեղինակը պատճառաբանում է այդ ժամանակագրության գրելու անհրաժեշտությունը. այնտեղ կարդում ենք. «Թուականաւ նշանակեալ համառօտ բանիցս՝ թէպէտ օրինակն յառաջնոյ ժամանակաց զոյր, այլ ոչ էր կարգաւ ըստ կարգի թուականին, և մեք կարգաւորեցաք։ Երկրորդ՝ ոչ էր ժողով ի մի վայր՝ այլ մասն ինչ անդ, և այնպէս ցիր և ցան, իսկ մեք ժողովեցաք ի մի վայր զորս և գտաք։ Երրորդ՝ և զոր ինչ ի մեր ժամանակս գործեցաւ նշանաւոր բանք՝ զայնս ևս ընդ սոցին դասաւորեալ գրեցաք զիւրաքանչիւրսն յիւրում տեղւոջ և հոգալով տքնութիւնս յոլովս կրեցաք, և յայն սակս ի գիրս մեր դասակարգեալ գրեցաք...»[168]։

Ինչպես այս ժամանակագրության, այնպես և «Պատմությունում» զետեղված ԾԱ և ԾԲ գլուխներում, ուր տրված են օսմանական ու պարսկական տիրակալների սահմանությունն ու ժամանակագրությունը, ինչպես նաև ԼԱ և ԼԲ գլուխներում՝ Սսի և Էջմիածնի կաթողիկոսների ու վարդապետների ժամանակագրությունը, հայագետների մի մասը վերագրել է ուրիշ հեղինակների, մի մասն էլ՝ Դավրիժեցուն։ Կոստանդնուպոլսի հրդեհի մասին Ստեփանոս Մեղրեցու կապակցությամբ Դավրիժեցու վերը բերված պատճառաբանությունը թերևս խոսում է վերջին կարծիքի օգտին։ Ներությունը հնարավորություն չի տվել ավարտելու, ամբողջացնելու սկսած գործը և նա ստիպված, որպեսզի իր կատարած քրտնաջան աշխատանքը չկորչի իզուր, հավաքած նյութերը ժամանակագրական կարգով շարադրել է իր ժամանակներում տարածված ժանրի՝ մանր ժամանակագրությունների ձևով։

Պատմագիր Դավրիժեցին ունի և մի այլ կարևոր առանձնահատկություն։ XV—XVI դարերի պատմությունը շարադրելիս, նա ամենայն բարեխղճությամբ նշում է իր աղբյուրները։ Այսպես. Ջահանշահի կողմից Շամշուլդե բերդին պատճառած աղետների մասին նա նյութը վերցրել է.

167 Նույն տեղում, էջ 595—596։ (Լեոն կարծում է, որ այդ երկու գլուխները ուրիշներն են զետեղել Դավրիժեցու գրքում։ Տե՛ս նշվ. աշխ. էջ 363)։

168 Նույն տեղում, էջ 619։

«Գնացեալ յԱսպահան քաղաք ի մէջ Ջուղայեցւոց, գտաք Յայսմաւուրք մի որոյ յիշատակարանն էր այսպէս գրեալ»[169]։

Զաքարիա կաթողիկոսի այցը Ջահանշահին և դրա արդյունքների պատմության նյութը վերցրել է Անկյուրիա քաղաքի եկեղեցում գտնված մի հայսմավուրքի հիշատակարանից «կարի երկարաբան, բայց վասն՝ կարևոր գոլոյ բանին զամենայն բանն նոյն շարադրութեամբն անպակաս գրեցի աստ. և վասն երկարութեան ոճոյն մի ինձ լիցիս մեղադիր և մի առաջին շինողին, զի ոճ պատմութեան այնպէս պահանջէ, քանզի երկար է պատմութիւն»[170]։

Էջմիածնում կաթողիկոսությունը վերահաստատվելու մասին նյութը վերցրել է Թովմա Մեծոփեցուց. ասում է «որպէս և պատմէ Թովմայ վարդապետն»[171] և այլն։

* * *

Դավրիժեցու «Պատմությունը» կարևոր աղբյուր է նաև XVII դարի առաջին կեսի Անդրկովկասի, Թուրքիայի և Պարսկաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրության համար։ Այն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Թուրքիայի և Պարսկաստանի կառավարչական սիստեմի, հարկային գիշատիչ քաղաքականության և դրանց ծանր ու ավերիչ հետևանքների մասին։ Պատմությունը ոչ պակաս կարևոր աղբյուր է նաև այդ ժամանակահատվածում նշված երկրների հասարակական-քաղաքական կյանքի հետազոտման համար։ Նրանում քիչ էջեր չեն նվիրված ջալալիների շարժմանը, հայ աշխատավորական զանգվածների կրոնական շղարշով քողարկված ընդվզումներին ու պայքարին՝ ուղղված թուրք-պարսկական ռազմաֆեոդալական կարգերի դեմ, վրաց ժողովրդի ազատագրական շարժումներին, պապականության դեմ լվովցիների համառ պայքարին։

Դավրիժեցու «Պատմությունը» ստուգապատում աղբյուր է հատկապես նշված երկրների այդ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների ուսումնասիրության համար։ Հանգամանորեն նկարագրված են Հայաստանի տարածքում տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմական գործողությունները, դրանց կործանարար հետևանքները Անդրկովկասի ժողովուրդների ու երկրների համար։

Հ. Փափազյանը նշում է, որ «Մատենադարանի պարսկերեն հրո-

169 Նույն տեղում, էջ 417։

170 Նույն տեղում, էջ 420։

171 Նույն տեղում, էջ 436։

վարակների» երկրորդ պրակի մեջ ընդգրկված մեծ թվով վավերագրերը կրկին անգամ հաստատում են Դավրիժեցու «Պատմության» տվյալները և ավելի քան ամրապնդում ուսումնասիրողների հավատը նրա հաղորդած պատմական կարևոր տեղեկությունների նկատմամբ[172]։

Ճիշտ է նկատում Լ. Դանեղյանը, որ Դավրիժեցու երկը որպես արժեքավոր պատմական աղբյուր սկսվում է օգտագործվել հենց XVII դ.։ Կարելի է ասել, որ Դավրիժեցու «Պատմությունից» հետո հայ պատմագրության մեջ չկա շատ թե քիչ խոշոր որևէ երկ, որտեղ XVII դ. առաջին կեսի պատմական իրողությունների նկարագրման համար լայնորեն օգտագործված չլինեն Դավրիժեցու հաղորդած տեղեկությունները[173]։

Իր դարաշրջանի ճշմարիտ արտացոլումը լինելով, գրում է Դանեղյանը, Դավրիժեցու երկը մինչև օրս էլ նպաստում է վեր հանելու և ճիշտ լուսաբանելու պատմության որոշ հարցեր։ Մերկացնելով թուրք կեղծարարների այն պնդումները, ըստ որոնց՝ հայերը թուրքական գերիշխանության ներքո մինչև 1878 թ. իրենց շատ լավ են զգացել, գերմանացի պրոֆեսոր Յ. Մարկվարտը գրում է, որ բավական է ծանոթանալ Առաքել Դավրիժեցու «Պատմությանը»՝ պատկերացնելու համար օսմանցիների վերաբերմունքը հայերի և ընդհանրապես քրիստոնյաների նկատմամբ դեռևս XVI դ.[174]։

Իր արծարծած հարցերով ու ընդգրկումներով Դավրիժեցու աշխատությունը դուրս է գալիս Հայաստանի պատմության շրջանակներից, այն հավասար չափով կարևոր աղբյուր է Վրաստանի, Ադրբեջանի, Պարսկաստանի, Թուրքիայի, անգամ Պարսկական Իրաքի XVII դարի առաջին կեսի պատմության համար։ Իր այդ բնույթով այն անզուգական կոթող է արևելագիտության համար ընդհանրապես։

Դավրիժեցու «Պատմության» մեջ բազմակողմանի ցույց է տրված հայ հասարակախավերի բռնած դիրքն օտար բռնակալների նկատմամբ, ինչպես և հատկապես ժողովրդի ստորին խավերի անելանելի դրությունը։ Սխալված չենք լինի, եթե ասենք, որ նա հիրավի Անդրկովկասի ժողովուրդների պատմագիրն է։ Նա միաժամանակ հայ հոգևոր ու մտավոր կյանքի զարթոնքի, խավարի դեմ լուսավորության պայքարի պատմագիրն է։ Գտնվելով օտար բռնակալների դաժան լծի տակ, նա է, որ խիզախել է ի լուր ամբողջ աշխարհի ու հետագա սերունդների, անարգանքի

172 Տե՛ս Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 2, Երևան, 1968, էջ 27, կազմեց Հ. Փափազյան։

173 Լ. Դանեղյան, Նշվ. աշխ., էջ 34—35։

174 Նույն տեղում, էջ 45։

այնին գամելու իր հայրենիքն ու ժողովրդին մռայլ կացության հասցնողներին, լինեն դրանք պարսիկ թե թուրք շահեր ու սուլթաններ, զորավարներ, պետական պաշտոնյաներ, թե հայազգի ոճրագործ հոգևոր պետեր, թե պապականության ներկայացուցիչներ։ Ֆիզիկական գոյությունը պահպանելու համար թափառաշրջիկ կյանք վարելով, գավառից գավառ, քաղաքից քաղաք շրջելով, Դավրիժեցին ստեղծել ու դարերին է թողել Հայաստանի ու հայ ժողովրդի 60-ամյա պատմության անկրկնելի կոթող։

300-տարուց ավելի է, ինչ այդ հուշարձանը հուզում է ընթերցողին, հայրենիքին ու ժողովրդին անհուն սիրով նվիրված Առաքել Դավրիժեցի պատմագիրը, «հայ միջնադարյան հարուստ պատմագրության վերջին խոշոր երախտավորն է»[175]։ Միանգամայն իրավացի է Լեոն, երբ գրում է. «Առաքելը հանդիսանում է առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թե նախորդ դարում և թե իր ժամանակակիցների մեջ»[176]։

175 Նույն տեղում, էջ 11։

176 Լեո, Նշվ. աշխ., էջ 362։

ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՎԱԳ ՔԱՆԱՔԵՌՑԻ

XVII դարի հայ պատմագիրներից էր քանաքեռցի Ղապոյենց (Գաբո) Զաքարիա սարկավագը, որը հաճախ հորջորջվում է նաև Զաքարիա Քանաքեռցի։ Իր իսկ վկայությամբ ծնվել է 1627 թ.։ 1687 թ. 60 տարեկան է եղել[1], մահացել է 1699 թ.։ Պատանեկության հասակում սովորել է ոսկերչության արհեստը, 1637 թ. իր եղբոր՝ Խաչատուրի հետ «գնացաք ի գիւղն Միափոր (Ղազախի գավառում). և ի տան Մելիք Աթային կալաք խանութ, և գործէաք արուեստ ոսկերչութեան»[2]։ Սակայն այդ արհեստով նա երկար չի զբաղվում, 20—25 տարեկան հասակում թողնում է այն, գնում է Հովհաննավանք, ուր և անց է կացնում իր ամբողջ կյանքը՝ 50 տարի։ Հովհաննավանքում նա աշակերտել է Զաքարիա և Հովհաննես վարդապետներին։ Իր ժամանակի կրթված հոգևորականներից է եղել, շատ ճանապարհորդություններ կատարել, եղել է Ղազվինում, Սպահանում, Թավրիզում, Զմյուռնիայում, Պոլսում և այլուր։ Աշխարհատեսությունն էլ նրան, անկասկած, շատ բան է սովորեցրել[3]։ Մ. Աբեղյանը ճիշտ է նկատում, որ չնայած այդ բոլորին, Զաքարիան կատարյալ պարզամիտ է մի լեռան հովվի, մի ուղտապանի չափ։ Խիստ նեղ հայացքով, գրեթե ամեն բանի, որ լսել է, հավատացել է[4]։

Զաքարիան մանկության հասակում տեսել ու զգացել է պարսիկների բիրտ ու վայրագ իշխանությունը։ Իր ապրած օրերի դաժան իրողությունը դրոշմվել է նրա հիշողության մեջ և իր արտացոլումը գտել նրա գրած պատմական երկում։ Այսպես, նա պատմում է, թե ինչպես են իր հորը տանջամահ արել։ Գրում է, որ խանի հարկահանը Քանաքեռում ցուցակագրել է հարկատուներին և որոշել, թե ով պիտի հարկ տա և ով

1 Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, հ. Գ., էջ 2։ Այսուհետև՝ Զաքարիա։

2 Նույն տեղում, հ. Ա., էջ 26։

3 Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946, էջ 365։

4 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ454։

պիտի հարկից ազատվի։ Զաքարիան կաղ էր ծնվել և պետք է որ հարկից ազատվեր։ Հայրը շալակել է նրան, իսկ մյուս որդուն, Խաչատուրին առաջը գցած, անցել է հարկահանի առջևով. «Եւ իբրև ետես զմեզ փոքր և կաղ՝ թիւր ոտամբ, բարկացաւ՝ և ասէ, զառողջ որդիսն քո պահեալ ես, և զանդամալոյծդ բերեալ ես. և հրամայեաց արկանել յերկիր իվերայ երեսացն. և բերեալ ջուր թափեցին ի վերայ անձինն, յոտաց մինչև ցգլուխն՝ ջրողող արարին. և նստոյց այր մի ի վերայ գլխոյն և այր մի ի վերայ ոտիցն. և հրամայեաց չորից զինուորաց՝ երկու կողմամբ հարկանել, և այնքան հարին, մինչ զի մորթն ի մարմնոյն ի բաց ոստեաւ, և ինքն անշնչացաւ. և համարեցին զնա մեռեալ, և ապա քարշեալ զնա թաղեցին ի մէջ փայլինի»[5]։

1687 թվին իր վաթսունամյա հասակում, նա ժամանակի Հովհաննավանքի առաջնորդ «Ի Սարգիս վարդապետէ խոհեմայ և բանասիրէ» հանձնարարություն է ստացել գրելու «Կոնդակ սուրբ ուխտին Յովաննու Վանիից» այլ խոսքով Հովհաննավանքի պատմությունը, որ և նույն թվականին ավարտել է։ Այս կապակցությամբ նա գրում է. «Յամենայն օր դեգերէի՝ թէ ը՞նդէր ոչ գոյ հաստատուն կոնդակ վանացս, որ ամենայն արձանք որմոցն գրեալ լինի ի նմա, և վարանէի միշտ առ այն»[6]։ Զաքարիան գրում է, որ ինքը միշտ մտածել է այդ անել, բայց ձեռնամուխ չի եղել, որովհետև իր առաջին ուսուցիչները՝ Զաքարիա և Հովհաննես վարդապետները նրան մարմնավոր գործերով են զբաղեցրել և միայն բանասեր Սարգիս վարդապետն է գիտակցել դրա անհրաժեշտությունը ու հանձնարարել գրելու։

Եվ Զաքարիան գրել է Հովհաննավանքի կոնդակը, «Թէ ի պատմագրաց, թէ ի յիշատակարանաց, թէ յարձանաց, և թէ ի լրոյ իմաստուն արանց և ի գիտուն ծերոց, նշանակեցից զամենայնն ստուգութեամբ. զի որք զկնի մեր գայցեն՝ ընթեռնելով ի միտ առնուն»[7]։

Ընդհանրապես նկատենք, որ չնայած իր պարզամտությանն ու պատմության մասին ունեցած խիստ նեղ հայացքին, Զաքարիան պատմություն գրելուն մեծ կարևորություն է տալիս։ Կոնդակի Ա գլխի վերջում բերում է Մովսես մարգարեի հետևյալ միտքը. «Հարցջիր հարց քոց, և պատմեսցի քեզ ի ծերոց, և ուսցիս զամենայն՝ որպէս և կամիս»[8]։

5 Զաքարիա, հ. Ա., էջ 66։

6 Նույն տեղում, հ. Գ., էջ 2։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

Կոնդակն էլ սկսում է այսպես. «Յուցմունք ժամանակաց և պատմութիւնք նոցին գրեալ եղև յառաջնոց պատմագրաց. որք ի ժամանակս և ի դարս գրեցին՝ որպէս գիտացին՝ ըստ իւրեանց իմաստութեանն՝ զերից ժամանակաց, այսինքն՝ զանցեալն ընթեռնլով, զներկայն գրելով, և զապագայիցն յուշ առնելով՝ յայտ արարին։ Ոմանք յաճախաբանութեամբ, ոմանք համառօտելով. ոմանք յառաջագիրք, և ոմանք ժամանակագիրք՝ որպէս և պատմութիւնն իւրեանց ցուցանէ ըստ ոճին իւրեանց։ Ոմանք փիլիսոփայական ճարտասանութեամբ, և ոմանք Աստուածաշունչ գիտութեամբ։ Ոմանք լի իմաստութեամբ, և ոմանք աշխարհօրէն։ Եւ որով իւիք և է՝ մեզ ծանուցին զանցեալն. զի և մեք ներկայումս ուսանելով՝ ապագայիցդ ծանուսցուք»[9]։ Ավելին, նա ընթերցողներին էլ է խորհուրդ տալիս պատմություն գրել. «Այլ և զոր ինչ և դուք գիտէք, դուք ևս գրեցէք՝ և զիմն ևս ընկալարուք զսեաւն, և շարադրեցէք ըստ գեղեցկագունիցն կարգի»[10]։

Կոնդակում Զաքարիան նախ շատ համառոտ գրում է, թե ընդհանրապես Հայաստանում երբ են շատ վանքեր շինվել և թե հատկապես երբ է կառուցվել Հովհաննավանքը, որի հնությունը նա հաստատում է մինչ Գրիգոր Լուսավորիչը։ Այնուհետև, համեմատաբար մանրամասն, խոսում է այդ վանքի թեմի ու վիճակի մասին և թե երբ է այն նորոգվել ու ծաղկել։

Կոնդակի կապակցությամբ Մ. Աբեղյանը նկատում է. «բացի մատենագիրներից ու գրքերի հիշատակարաններից՝ օգտվում է և արձանագրություններից, նա ընդօրինակում է պատերի վրա եղած արձանագրությունները և մանրամասն ճշտություն մտցնում յուր Կոնդակի մեջ, որով Զաքարիան հանդիսանում է մեր հնագրական արձանագրական թանկագին հիշատակարանները ժողովողների նախահայրը։ Մի բան, որ շատ կարևոր է»[11]։ Դա իհարկե, անժխտելի է, սակայն դժվար թէ կարելի լինի Զաքարիային այդ բնագավառի նախահայր համարելը, քանի որ իր ժամանակին մասամբ Մ. Խորենացին և շատ ավելի ուշ Ստ. Օրբելյանը, առավել մեծ չափերով ընդօրինակել են վիմական արձանագրությունները և օգտագործել իբրև պատմական սկզբնաղբյուրներ։

Այնուհետև Կոնդակում Զաքարիան, ժամանակագրական կարգով, հիշատակում է Հովհաննավանքի առաջնորդների անունները, որքան որ կարողացել է ձեռք բերել, նշելով նաև իր աղբյուրները։ Հատկապես նա

9 Նույն տեղում, էջ 1։

10 Նույն տեղում, հ. Ա., էջ 45։

11 Մ. Աբեղյան. Նշվ. աշխ., էջ 455։

մանրամասն խոսում է իր ժամանակի երեք նշանավոր առաջնորդների՝ Զաքարիա, Հովհաննես և Սարգիս վանահայրերի գործունեության մասին։ Վերջում տեղեկություն է տալիս Մողնու վանքի կառուցման մասին, վերջին գլխում էլ տալիս է իր նախորդների պատմությունը։

Զաքարիայի Կոնդակն իր պարունակած հարուստ նյութերով Հովհաննավանքի տնտեսական կյանքի պատմությունն է։ Մանրամասն թվարկված են վանքապատկան կալվածները և եկամտաբեր օբյեկտները։ Միաժամանակ հանգամանորեն նկարագված է վանքի ներքին և արտաքին տեսքը, որը ուժեքավոր է և հայ ճարտարապետության պատմության համար[12]։

Թերևս ճիշտ լինի Մ. Աբեղյանի այն ենթադրությունը, որ Զաքարիայի այս Կոնդակը հավանություն է գտել և նրան մի քանի բանասերներ խորհուրդ են տվել պատմություն էլ գրելու, որին ինքն էլ դեմ չի եղել։ Այս կապակցությամբ նրա մոտ կարդում ենք. «Ի սպառել ժամանակիս և ի վերջին դարուս՝ ի նուաստանալ ազգիս Հայոց, և ի զօրանալ ազգին Պարսից, յորում նեղիմք և տառապիմք ազգի ազգի կեղեքմամբ և պէս պէս աւարմամբ, ի թուիս մերում... (1699)... եղև աւարտումն պատմութեանս յերկրիս Արարատեան ի գաւառիս Անբերդու ի գերափառ մենաստանս... որ այժմ ասի Յօհաննուվանք... աշխատութեամբ իմում բազմավէր և փինատ Զաքէոսի Քանաքեռցւոյ՝ որ ի ծառայութենէ նոյն վանացն Յովհաննու, ի խնդրոյ ոմանց բանասիրաց՝ և մերում յօժարութեամբ։ Արդ որպէս առաջագոյն ծանուցաք, թէ զոր ինչ լուաք ի համբաւոյ՝ զայն գրեցաք, թ՛է սուտն և թ՛է ճշմարիտն, և թ՛է գովութիւն լիցի և թ՛է սուտ պարսաւանք՝ նոցա լիցի. և մեք զհրամայեալսն արարաք. և դուք որպէս և կամիք՝ այնպէս արարէք»[13]։

Շահ Աբբասի կապակցությամբ էլ ասում է. «Զսորա ամենայն գործ գրեալ է Առաքել պատմագիրն՝ անպակաս զամենայն։ Ո՛վ որ կամիցի գիտել զստոյգն, ընթեռնուցու զայն, և ի նմանէ ուսցի։ Այլ ես զոր ինչ լուեալ եմ վասն այս Շահ-Աբասիս, թ՛է սուտ և թ՛է առասպել, և թ՛է ճշմարիտ և յիրաւ, զամենն գրեմ, թէ պարսաւանք և նախատինք լինի(ն), և թ՛է գոհութիւնք և գովութիւնք լիցի(ն), նոցա լիցի՝ որոց պատմեցին մեզ։ Քանզի նոքա՝ որք ականատեսք էին, զստոյգն պատմեցին։ Իսկ նոքա՝ որք ականջալուրք էին, վեր ի վերոյ ասացին, սակայն մեք զոր լուաք, զնոյն պատմեսցուք՝ թ՛է սուտն և թ՛է իրաւն»[14]։

12 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 497։

13 Զաքարիա. հ. Բ., էջ 142—143։

14 Նույն տեղում, հ. Ա., էջ 14—15։

Ահա պատմության մասին մեր այս հեղինակի հայացքը։ Այդ բոլորը նա պատմություն է համարում և անհրաժեշտ գտնում գրի առնել՝ հաջորդ սերունդներին թողնելու համար։

Ի տարբերություն Առաքել Դավրիժեցու, որի «Պատմությունից» և առատորեն օգտվել է և որի մասին գրում է, թե «Որպէս և բազում անգամ հարցեալ եմք յԱռաքել վարդապետէն, և ուսեալ եմ ի նմանէ...»[15], Զաքարիան քննադատական վերաբերմունք չունի դեպի իր նյութը և այդ, ինչպես տեսանք, ինքն էլ չի ժխտում, հենց սկզբից նյութի ընտրության հարցում պատասխանատվությունն իրենից հեռացնում է, թողնելով այն ընթերցողի հայեցողությանը։

Միանգամայն իրավացի է Մ. Աբեղյանը, որ Զաքարիայի «Պատմությունն» իսկապես պատմություն չէ, սուտ ու ճշմարիտ, առասպել ու իրողություն վայրիվերո, խառնիխուռն ժողովված են մի տեղ՝ առանց որոշ դասավորության, առանց որևէ կարգի։ Ժամանակագրական ճշտություն, իհարկե, պահանջել կարելի չէ մի պարզամիտ մարդուց, որ պարզ սուտը ճշմարտից ջոկել չի կարողանում և առօրյա շնչին, մանր ու մունր դեպքերը իրրև կարևոր պատմական եղելություն՝ արձանագրում է»[16]։

Զաքարիայի «Պատմագրությունը» բաղկացած է երեք հատորից, առաջին հատորը հիմնականում սկսվում է Ջահանշահից և ավարտվում է Երևանի Թահմազ-կուլի խանի տված ճակատամարտով՝ թուրքական ղորքերի դեմ ու վերջիններիս պարտությամբ։

Հատորի սկզբում էջուկեսի վրա տված է «Պատմութիւն և կարգ թագաւորացն Պարսից», մեկ էջի վրա «Թագաւորք Հայոց» և մոտ մեկ էջի վրա էլ Սասանյան Արտաշիրի թագավորելու մասին։

Երկրորդ հատորը սկսվում է Մուրադ սուլթանի կողմից Երևանի գրավումով, ապա պարսիկների կողմից նրա վերագրավումով և ավարտվում է մի քանի նահատակությունների նկարագրությամբ։ Այն ընդգրկում է 1635—1699 թթ. ժամանակաշրջանի իրադարձությունները։

Առաջին հատորի 40-րդ գլխից սկսած Զաքարիան նկարագրել է այն իրադարձությունները, որոնց ժամանակակիցն ու ականատեսն է եղել։ Այդ մասին նա գրում է. «Այն ինչ՝ զոր գրեցաք ի սկզբանէ պատմութեանս մինչև ցաստ, զամենայն ի համբաւոյ և ի լրոյ՝ և ի պատմութիւնէ զրոց և ի յիշատակարանաց էր։ Այսուհետև ականատես եմ և ականջալուր մերձակայ իրաց. վասնորոյ գրեմ զամենայն անվրէպ»[17]։

15 Նույն տեղում, հ. Գ., էջ 26։

16 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 455։

17 Զաքարիա, հ. Ա., էջ 68—69։

Իրեն պատմողների նյութը շարադրելուց հետո, որպես կանոն, տալիս է նրանց անունները. «այս պատմեց Մարկոս Ջուղայեցի վարդապետը»[18], «Լսել ենք Զաքարիա վարդապետից»[19], «պատմեց Հովհան Կարնեցի զարդապետը»[20], «Հոռոմ Հովհան սարկավագը»[21] և այլն, որոնք իրենց պատմածներին ականատես են եղել։ Մի քանի պատմություններ էլ իբր իրեն պատմել են նկարագրվող դեպքերի գործող անձերը՝ վիշապից փախչողը, դև կին ունեցողը, նահատակվածի ընկերը, պատերազմի մասնակիցը և այլն։

Երրորդ հատորը կազմում է Կոնդակը, որի մասին վերևում արդեն ասվել է։

Մ. Աբեղյանը և Լեոն միանգամայն ճիշտ նշում են, որ Զաքարիայի «Պատմության» առաջին երկու հատորները իրենց պարունակած նյութի արժեքով հավասարաչափ չեն։ Առաջին մասի նյութերը, որոնք հիմնականում վերցված են հիշատակարաններից ու Դավրիժեցուց կամ ականատեսների պատմածներից, իբրև պատմական երկ արժեք չունեն, որովհետև զուտ ժողովրդական զրույցներից ու երգերից է բերված, որոնց հիմքը, սակայն, պատմական է։ Նրանք իրավամբ գտնում են, որ այդ հատորը իսկապես. մի ժողովրդական բանաստեղծության ժողովածու պետք է համարել և ոչ պատմություն, որով և «Զաքարիան, այս միամիտ մարդը, անգիտակցորեն, իր պարզամտության պատճառով, հանդիսացել է հայոց ֆոլկլորի-ժողովրդագիտության առաջին հավաքողը Խորենացուց հետո, բայց և Խորենացուց ավելի հարուստ ու հարազատ կերպով, քանի որ նա, հավատացած լինելով թե պատմություն է տալիս, մեզ ժողովրդական անգիր բանահյուսության օրինակներ է տալիս և կամ բովանդակությունը, առանց փոփոխելու և հետաքրքիր մանրամասնություն ներով, որով նա հանդիսանում է իբրև ժողովրդական գրող, որի գրվածքի մեջ մնում են ժողովրդական պարզությունը, կոպիտ, բայց թարմ կյանքը»[22]։

Շարունակելով իր միտքը Մ. Աբեղյանը ընդգծում է, որ եթե այդ զրույցները պատմություն չեն, ապա նրանց հիմքը պատմական է և նրանց մեջ շատ գեղեցիկ երևում է ժամանակակից կյանքը, բնավորություններ և դեմքեր ու կենցաղական գծեր։ Դրանք ցույց են տալիս, թե

18 Նույն տեղում, էջ 56։

19 Նույն տեղում, էջ 59։

20 Նույն տեղում, հ. Բ., էջ 29։

21 Նույն տեղում, էջ 116։

22 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 454։

ինչով էր զբաղվում իր ժամանակի հայ և պարսիկ մարդու միտքը, հայ ժողովրդի մտավոր կյանքն ու աշխարհայեցողությունը, բարքերը, նիստն ու կացը, սովորությունները, սնոտիապաշտությունները, հավատալիքը, և ցույց են տալիս ավելի պարզ, քան մեր որևէ ուրիշ պատմական կարեվոր երկի մեջ[23]։

«Մեր գրականության մեջ,— գրում է Լեոն— դա մի շատ ինքնատիպ դեմք է, առաջինն իր տեսակի մեջ, տաղանդավոր մի շինական, աշխույժ, հետաքրքրվող և հետաքրքրող, պարզամիտ և հավատացող՝ երևույթի չափ, ժողովրդական պատմվածքների սիրահար և ամբողջովին ժողովրդական գրողի հոգեբանությամբ լցված։ Շատ է սիրում իր Քանաքեռը և հաճախակի պատմություններ է տալիս նրա կյանքից։ Մի խոսքով, Զաքարիա Ղապոյենցը կարող է ամենայն հարազատությամբ համարվել XIX դարի մեծ Քանաքեռցու՝ Խաչատուր Աբովյանի գրական նախահայրը»[24]։

Լեոն, այնուհետև նշում է, որ «Իր անպաճույճ, վայրիվերո «Պատմագրության» մեջ Զաքարիան հավաքել է բազմաթիվ փաստեր ժողովրդական կյանքից, մի բան, որ մենք չենք գտնում մեր համարյա ամբողջ հին գրականության մեջ։ Այստեղ ավելի ևս պայծառ գծերով, քան երբևիցե առաջներում, երևան է գալիս Արարատյան երկրի գյուղը (գլխավորապես Քանաքեռը), և մենք տեսնում ենք շատ առօրյա երևույթներ, որոնք թեև չունեն պատմական նշանակություն, բայց մեծ հետաքրքրություն են ներկայացնում իբրև ժողովրդական նիստ ու կացի, հավատալիքների, կրած ճնշումների ու կեղեքումների պատկերներ։ Հեղինակը մեզ մտցնում է ժողովրդի կյանքի մեջ— ահա ինչն է ամենագնահատելին»[25]։

Կենցաղային զանազան, հաճախ երկրորդական թվացող, մանրուքների պատկերման շնորհիվ Զաքարիայի պատմածները բացառիկ արժեք են ստանում նաև որպես ազգագրական նյութ[26]։

Զաքարիայի Պատմության առաջին և երկրորդ հատորների նյութերի մեծագույն մասը կազմում են պարսից շահերի՝— շահ Իսմայիլի, շահ Թահմազի, շահ Աբբասի և շահ Սեֆիի մասին ժողովրդի մեջ տարածված զրույցներն ու երգերը։ Մեծ տեղ է տրված առանձնապես շահ Աբբասին վերաբերող զրույցներին, որոնց հիմքի վրա Զաքարիան բերել է բազմաթիվ ավանդություններ ու առասպելներ, իրադարձություններ ինչպես լսել կամ տեսել է և իրեն կարևոր է թվացել՝ երկրաշարժ, արեգակի խավարում, սով, մարախ, երկնային օդերևույթներ, առասպելազարդ պատմություններ։

Մ. Աբեղյանը այս առնչությամբ նկատում է. «Այսպիսի պարզամիտ մարդը բնականորեն ոչ միայն ինչ որ Շահաբասի վրա պատմվում է՝ պիտի բերեր իբրև Շահաբասի պատմություն, այլ և ուրիշ շատ առասպելներ ու սնոտիապաշտություններ և այնպիսի նկարագիրներ, որոնք պատմության հետ բնավ կապ չունեն»[27]։

Շահ Աբբասի կապակցությամբ, Լեոն ճիշտ նկատում է, որ Ասիական այս ահարկու բռնավորի արարքները, ինչպես երևում է, ժողովրդին խոսակցության առատ նյութեր են տվել, կազմելով շատ այնպիսի պատմվածքներ, որոնց մեջ Հայաստանի ավերողը բավական համակրելի գծեր է ընդունել[28], և Զաքարիա պատմագիրն էլ հավատացել է դրանց ու գրի առել թերևս և իր կողմից էլ որոշ չափով ծաղկեցրել։

«Սովորութիւն էր Շահ-Աբասին՝ որ երբեմն երբեմն՝ յայլակերպս եղեալ շրջէր։ Լինէր՝ զի երբեմն երիվարաւ և փայտեկաւ գնայր՝ ուր և կամէր, երբեմն միայն, երբեմն ի կերպ փօրեզկի՝ որ է շարչի։ Եւ այսպէս շրջէր ի մէջ մեծամեծաց և ռամկաց։ Հարցանէր և տեղեկանայր յամենայնէ՝ ի Շահէն և յերկրէն, ի հարկաց և յամենայն իրաց»[29]։ Եվ Զաքարիան տալիս է շահ Աբբասի այդպիսի այլակերպյալ-կերպարանափոխյալ այցելությունների մի քանի նկարագրությունները։

Գուլփիքան գյուղաքաղաքում շահը հորդ անձրևից պատսպարվելու նպատակով մտնում է մի տուն, դիմում է տանտիրոջը՝ ասելով «Վասն սիրոյ Շահին ընկալ զիս, զի պաղեցայ ի ցրտոյ»։ Տանտերը պատասխանում է «Որովհեւ զՇահն յիշեցէր, էջ ի ձիոյդ» և շատ լավ ընդունում է, հյուրասիրում, ուտում և խմում են ու մինչև կես գիշեր «Խոսէին յաշխարհէ և ի Շահէն։ Իսկ այրն միշտ բարւօք գոհանայր ի Շահէն։ Հետո տանտերը բերել է տալիս «մահիճս ազնիւս՝ Շահին և փայտեկին»։ Առավոտյան շահի հարցին, թե որքան պետք է վճարեմ ընդունելության և հյուրասիրության համար, տանտերը ասում է. «Աստուած մի արասցէ, զոր Շահի անունն յիշօղն և վասն Աստուծոյ եկեալ հիւրն՝ պատառ մի

23 Նույն տեղում, էջ 456—457։

24 Լեո, նշվ. աշխ., էջ 365։

25 Նույն տեղում, էջ 365—366։

26 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 497։

27 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 457։ Այդ էջի ծանոթության մեջ Մ. Աբեղյանը նշում է Զաքարիայի Պատմության մեջ զետեղված այդպիսի՝ պատմության հետ կապ չունեցող նյութերի խորագրերը։ Մենք այստեղ անհրաժեշտ չհամարեցինք դրանք թվարկելու։

28 Լեո, նշվ. աշխ., էջ 336։

29 Զաքարիա, հ. Ա., էջ 15, 20։

հաց կերիցէ, զգինս նորա առից, և կորուսից զվարձս իմ, և այսպէս արհակեաց զնա»[30]։

Շահը տանտիրոջ ծառայից իմանում է, որ նրա անունը Ալլահվերդի է։ Իր բանակատեղը հասնելուց հետո, հրամայում է իր մոտ բերել այդ Ալլահվերդուն, նրան բերում են, վերջինս ճանաչում է իր հյուրին։ Շահը նրան մեծ պարգևների է արժանացնում և նշանակում է Շիրազ քաղաքի խան։ Զաքարիան այս բոլորը գրելուց հետո ավելացնում է. «Այս այն Ալլահվէրտին է՝ զոր Առաքել պատմագիր յիշէ ի պատերազմին Արծկոյ և Վանայ, որ է ստոյգ այսպես, որպէս և գրեցաք։ Զայս լուաք մեք Մուրատ խան անուն յառնն միոջէ։ Այլև սակաւ ինչ ի մօրէ իմմէ»[31]։ Եվ բացատրում է, որ շահ Աբբասի բռնագաղթի ժամանակ իր մորն ու նրա ծնողներին նույնպես քշած են եղել ու բնակեցրած այդ Գուլփիքան գյուղաքաղաքում և մայրն այդ մասին այնտեղ է լսել, «որ և զպատմութիւնս զայս արար մայրն իմ»[32]։ Շատ հավանական է, որ այս հեքիաթը իմացել է և Դավրիժեցին, սակայն չի հավատացել ու գրի չի առել։ Վերջինիս մոտ այդ Ալլահվերդի խանը շահ Աբբասի սիրած զորավարներից է, ակտիվ մասնակցություն է ունենում նրա մղած պատերազմական գործողություններին օսմանցիների դեմ և շահը, հաշվի առնելով նրա ծառայությունները, կատարում է նրա խնդրանքը՝ գաղթեցրած հայերից 500 տուն ուղարկում է Շիրազ այնտեղ բնակեցնելու համար։

Շահը մանրավաճառի դերում Լենան գյուղում գնում է ոմն Դավիթ Երեցի տունը, որը գրիչ էր և հայսմավուրք էր գրում։ Նա մանրավաճառից գնում է փոքրիկ գրչահատ։ Այնուհետև երկար զրուցում են իրար հետ։ Շահի հարցին, թե շահից դո՞հ եք, նա պատասխանում է. «դեռ ոչ լաւն գիտեմք Շահի, ոչ վատն, այլ զի թագաւոր է, ոչ է արժան վատ ասել նմա»[33]։ Շահի հարցին, թե ի՞նչ գիրք է, որ գրում էր, Դավիթը պատասխանում է, որ այն նահատակների մասին է և կարդում է Հակոբ նահատակի մասին ու ասում, որ այն կատարվել է Հազկերտ թագավորի օրոք։

Արքունիք վերադառնալուց հետո, մի օր իր մոտ է կանչում արքունիքի մեծամեծներին, ասում, թե իբր երազ է տեսել և պատմում է այն, ինչ լսել էր Դավիթ Երեցից Հակոբ նահատակի մասին, սակայն Հազկերտի տեղը իբր իր հրամանով է այդ նահատակությունը կատարվել. «յորժամ կատարեցաւ հրամանն իմ, ապա լոյս յերկնից սաստիկ և ահեղ էջ

30 Նույն տեղում, էջ 16։

31 Նույն տեղում, էջ 18։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, էջ 20։

ի վերայ նորա (Հակոբի— Լ. Բ.), այնքան՝ որ զլոյս արեգականն արգելաւ։ Արդ ես ասեմ ձեզ. գրեցէք ի գիրս ձեր կանոնս՝ և նզովիւք փակեցէք, զի թե քրիստոնեայք տաճկանան, և յետոյ դառնան ի հաւատս իւրեանց, մի՛ արգելուք կամ՝ չարչարէք, այլ թոյլ տուք նոցա կալ ի հաւատս իւրեանց. մի գուցէ սպանանէք զնոսա, և իջանէ լոյս ի նոսա, և տեսցեն զայս Մահմետականք և երկմտեսցին ի հաւատոց իւրեանց. և լիցի պակասութիւն մեծ ազգի մերոյ. այլ յորժամ գան առ ձեզ, տուք նոցա զիր պաշտել զհաւատն իւրեանց և լինին մուրթատ (ուրացող), և տան հարկս ձեզ։ Եւ կատարի հրամանս այս մինչև ցայսօր։ Զի թէ ոք պատճառանօք իւիք տաճկացեալ իցէ, երթեալ առնուն նոմոս (հրովարտակ) արքունի, և եկեալ պաշտեն համարձակ զհաւատս իւրեանց և ի տաճկաց ոչ ոք ասէ ինչ»[34]։ Եվ որպեսզի իր ասածին հավատա ընթերցողը, ավելացնում է. «Իսկ մեք գնացաք ի Ղազուին քաղաք... սակս վանից գործոյ։ Եւ վասն Փարպեցի տաճկաց առաք նոմոս ի Շահ-Սուլէյմանէն՝ Ե(5) արանց. և ահա կան քրիստոսական հաւատով...»[35]։

Շահ Աբբասի մասին այս հեքիաթ-զրույցը մի պահ հիշեցնում է Եղիշեի մոտ Հազկերտի և հազարապետ Դենշապուհի միջև տեղի ունեցած խոսակցությունը իրենց գլխավոր մոգպետներից մեկի քրիստոնեություն ընդունելու կապակցությամբ։

Առաքել Դավրիժեցուց գիտենք, որ Պարսկաստան բռված հայերի մի մասն իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար հարկադրված հավատափոխ էր եղել։ Շահ Աբբասը ոչ բոլոր հայերի հավատի նկատմամբ էր հանդուրժողական քաղաքականություն վարել, այլ միայն հայ առևտրավաշխատուական կապիտալի և հոգևոր վերնախավերի նկատմամբ՝ ելնելով Պարսկաստանի շահերից, այդ մասին Դավրիժեցու «Պատմության» առնչությամբ հանգամանորեն խոսվել է, այստեղ կրկնելու անհրաժեշտություն չկա։ Հավատափոխության պրոցեսը, երևում է, գաղթականության մեջ հետագայում ավելի ու ավելի է խորացել։ Զաքարիան ասում է, որ ինքը միջնորդել է միայն Փարպի գյուղից հինգ դավանափոխ եղածների մասին։ Շահ Սուլեյմանի տիրապետության շրջանում քրիստոնյաների բռնի հավատափոխությունը ոչ միայն խիստ սահմանափակվել էր, այլև հանցանք չէր համարվում, եթե ուրացողը նորից իր հավատին էր անցնում, միայն թե հարկը վճարեր պետությանը։

Սակայն Զաքարիայի բերած այս զրույցը, թերևս վկայում է այն

34 Նույն տեղում, էջ 20—22։

35 Նույն տեղում, էջ 22։

մասին, որ հայ գաղթականության ստորին խավերի մարդկանց մեջ, որոնք հավատափոխ էին եղել, մտավախություն է տիրել և նրանք միջնորդների կարիք են ունեցել։ Ահա այդ մտավախությունը ցրելու նպատակով է, որ Զաքարիան բերել է այդ զրույցը, ցույց տալու համար, որ իբր դավանանքի ազատությունը, նորից իրենց դավանանքը պաշտելու իրավունք տվել է ոչ այլ ոք, քան շահ Աբբասը, ուստի բոլոր հայերը, որոնք ժամանակին հարկադրված հավատուրաց են եղել, կարող են և պետք է վերադառնան իրենց կրոնին։ Ահա հոգևորական պատմագրի նպատակը։

Պատմագրի այդ նպատակին է ծառայում նաև հայ Գյոզալ անունով կնոջ մասին բերված հեքիաթ-զրույցը։ Բռնագաղթի ժամանակ Աստապատ գյուղից քշված և Սպահանում բնակություն հաստատածների թվում է եղել և այդ գեղեցիկ արտաքինով կինը, որին Սպահանում շահ Աբբասը տեսել, հրապուրվել էր ու երկար ժամանակ պահել իր մոտ. «Բայց ոչ երկմտեցաւ ի հաւատոյն (Գյոզալը— Լ. Բ.), և ոչ Շահն ասաց ինչ վասն հաւատոյն և կայր նա այնպէս ի հաւատս քրիստոնէութեան»[36]։ Ավելին, իբր հետագայում շահը նրան տալիս է ազատության գիր. «Ես Շահ-Աբբաս եմու գիր ազատութեան Գօզալ անուն կնոջ. զի ուր և իցէ՝ պաշտեսցէ զհաւատն քրիստոնէից. և մի ոք լիցի հակառակ դմա վասն հաւատոյն. զի դա քրիստոնեայ է»[37]։

Որոշակի նպատակ է հետապնդել Զաքարիան նաև բերելով ոմն հովիվ Աթայի մասին զրույցը։ Այստեղ էլ շահ Աբբասը մանրավաճառի դերում Միափոր գյուղում այցելում է մի տուն, ուր տանտիրուհին նստած գուլպա գործելիս է եղել, հինգ տարեկան աղջիկն էլ մոտը նստած։ Տեսնելով մանրավաճառին, կինը հարցնում է, թե ուլունքներ ունի թե ոչ, վերջինս պատասխանում է, որ ունի և նրա առաջն է դնում իր արկղը. կնոջ հարցին, թե որքան արժե ուլունքները, հետևում է պատասխանը՝ որքան որ վճարես՝ այնքան է։ Սուտ վաճառականը ուտելիք է ուզում ուլունքի արժեքի դիմաց։ Կինն ասում է. «Մի՛թէ հաց տամք մարդոյ՝ և գին առնումք և լինիմք վարձավաճառ»[38]։ Այնուհետև երկար զրուցում են, շահը բաղում հարցեր է տալիս, ապա իմանում է, որ կնոջ ամուսինը հովիվ է, անունն է Աթա։ Շահը կնոջը ապարանջան է նվիրում, երեխային ուլունքներ ու հեռանում է։ Դրանից հետո հրաման է արձակում ամբողջ երկրով մեկ. «Եւ առաքեաց յերկիրն ահարկու, թէ՝ ով ոք ի Պարսից ազգէ

36 Նույն տեղում, էջ 34։

37 Նույն տեղում, էջ 35։

38 Նույն տեղում, էջ 24։

բռնութեամբ ինչ առնու ի ռամկաց, զգլուխն հատանեմ. այլ զոր ինչ առցեն, տացեն զգինն, քանզի,— ավելացնում է Զաքարիան,— գանգատեալ էր կինն»[39]։

Պատմագրի ապրած օրերում պարսիկների կողմից ռամիկների ունեցվածքի ապորինի հափշտակումները բավական տարածված են եղել և Զաքարիան անհրաժեշտ է համարել այս զրույցն իր «Պատմության» մեջ բերել, որպեսզի ցույց տա, որ իբր ռամիկներին կողոպտելն արգելել է ոչ այլ ոք, եթէ ոչ շահ Աբբասը և ժամանակակիցներն ու գալիք սերունդները պետք է որ այդ լավ իմանան։

Արդ, ինչով կարելի է բացատրել Զաքարիայի կողմից իր «Պատմության» մեջ շահ Աբբասի մասին եղած զրույցներին այդքան զգալի տեղ հատկացնելը և պատմության առջև մեղանչելը։ Նա շահ Աբբասի ռազմաքաղաքական գործունեության մասին գրեթե չի գրում, եթե չհաշվենք մի քանի ակնարկները՝ սկզբնական շրջանում նրա նվաճումների և հայերի բռնագաղթի մասին, այլ ընթերցողին հղում է այդ բոլորի մասին կարդալ Դավրիժեցու «Պատմությունը», իսկ ինքը մեծ հաճույքով ու մանրամասնություններով պատմում է այդ հեքիաթ-զրույցները, որոնք բոլորն էլ կապված են հասարակ մարդկանց հետ, կենցաղային բնույթ ունեն, սակայն կենսական, ժողովրդին հուզող հարցեր են շոշափում՝ դավանանքի ազատություն, ապաշխարության իրավունքի ձեռք բերում, ռամիկների ունեցվածքի հափշտակումների արգելում և այլն։

Զաքարիայի՝ պարսիկ առանձին շահերի ու խաների դրական բնութագրումները, հասկանալի է, չափազանցված են, նա չի գիտակցել, որ այդ «բարի», «քրիստոնեասեր» շահերն ու խաները այս կամ այն միջոցառումը արել են, ելնելով իրենց և իրենց պետության շահերից, պետություն, որն արդեն բռնել էր քայքայման ուղին, և ոչ թե ռամիկ հարկատուների նկատմամբ սեր տածելուց։ Զաքարիայի բնութագրումների չափանիշը հանդիսացել է այն, թե տվյալ անձնավորությունը ի՞նչ դիրք է բռնել հայոց եկեղեցու և նրա կաթողիկոսների նկատմամբ, ինչպի՞սի հարաբերությունների մեջ են գտնվել վերջիններիս հետ, հաշվի նստե՞լ են նրանց հետ թե՞ ոչ։

Զաքարիայի կողմից պարսիկ պաշտոնեության ներկայացուցիչների դրական բնութագրումներն, սակայն, շատ քիչ են և նա ցույց է տալիս, որ նրանց բարեգործությունները պատահական բնույթ են կրել, ժողովուրդը գտնվել է ծանր ու անտանելի վիճակում։

39 Նույն տեղում, էջ 25։

Այս իմաստով չի կարելի համաձայնվել Առաքել Առաքելյանի հետևյալ եզրակացության հետ, որ իբր «Զաքարիան պարսկական ժողովուրդի և պարսիկ ղեկավարների նկատմամբ բացասական վերաբերմունք չունի, նա կրոնական մոլեռանդությամբ կուրացած, կրքոտ ատելություն չի դրսևորում պարսիկների նկատմամբ, ինչպես նրա նախորդ կամ ժամանակակից մի շարք գրողներ»։ Առաքելյանը, սակայն միաժամանակ նկատում է, թե «ընդհակառակն, աշխատության մեջ ընթերցողը կարող է հանդիպել շատ դեմքերի ու դեպքերի, որոնք հաստատում են միանգամայն հակառակը»[40]։ Եթե այդ այդպես է, ապա էլ ուր մնաց բացասական վերաբերմունք չցուցաբերելը։

Այդ բանի վառ ապացույցն է հենց Զաքարիա Քանաքեռցու ամբողջ երկը և հատկապես ստորև բերվող նրա վկայությունները։

Նա գրում է, թե Խոսրով խանից հետո Երևանի խան նշանակված Մահմադ-կուլի խանը գոռոզ էր, ինքնահավան և ագահ, «Վասնորոյ և քայքայեաց զամենայն ուղղութիւնս՝ զոր եգեալ էր Խոսրով խանն։ Վասնզի ծանրացոյց զհարկն, և հաստատեաց զմաքսն ճանապարհաց, և զոր ինչ վաճառիւր ծանրագնի թէ ցորեան և թէ այլ ինչ։ Այլ և յամենայն ամի առաքէր քննիչս արտորէից գրել, և զհնգորդն ամ յամէ յաւելուին։ Նոյնպէս զթուօղս խաշանց, զչափօղս այգեաց, և զգլխագիրս, և այսպէս ի ներբոյ հարկի եդ զամենայն, և զոր ինչ Խոսրովն թեթևացուցեալ էր, սա ծանրացոյց և մեծագին արար։ Եւ եղև թշնամի և հակառակ աղգիս մեր»[41]։

Զաքարիան, ատելությամբ է խոսում թուլամորթ, ագահ վատնող շահերի ու խաների մասին։

Այսպես, շահ Իսմայիլին հաջորդած շահ Խուդաբանդի մասին ասում է, որ նա անարի և անփույթ էր պատերազմներում, սրա ժամանակ օսմանացիները գրավել էին Երևանը, Գանձակը, Թավրիզը, Շամախին և այլ վայրեր։ «Եւ վասն անարի լինելոյ նորա՝ գովիչք Պարսից ասացին նմա երգ արհամարհանաց. և ի մէջ երգոյն ասացին, քակեցիր զթաւրէզ, և աղբեցիր ի Մարանդ։ Նաև առասպելս յոդեցին այսպէս. թէ ասէին, թագաւոր այս ինչ քաղաք առին Օսմանացիք, և դու զի՞ կաս նստեալ։ Իսկ նա սաստէր նոցա ասելով, լուռ լերուք, զի հարսանիս են կատուաց և ինքն զարդարէր զկատուսն՝ դիպակ հանդերձիւ, և կախէր զանգակ ի պարանոցէ կատուացն, և հրամայէր փողս հնչել. և ինքն ծափս հարկանէր և խնդայր»։ Զաքարիան ավելացնում է. «Զայս առասպելեցին վասն տկար և անարի գոլոյն, որ նշանակէ թէ՝ որպէս կատու ի տուն բնակի, և ոչ ելանէ արտաքս, նոյնպէս և սա որպէս կատու անկեալ էր ի տան, ոչ ունէր փոյթ վասն աշխարհին»[42]։

Երևանի Սաֆի-կուլի խանի մասին պատմագիրը ասում է. «Սա եկեալ նստաւ յԵրևան, և սկսաւ նորաբոյս շարիս գործել... Եհան հրաման թէ յաւուր անձրևու քրիստոնեայք արտաքս մի ելցեն ի տանց, զի հոս գարշ ելանէ ի նոցանէ, և զտաճիկսն ապականէ»[43]։ Հրաման է տվել, որ առանց իր թույլտվության չթաղեն մեռած մեծամեծների և օտարականների՝ լինեն քրիստոնյա, թէ պարսիկ։ «Այլ և բազմացան աւաղակք ի ճանապարհի, և գողք ի շէնս, վասն այս պատճառի ո՛չ ոք կարէր գնալ ի ճանապարհ, զի կողոպտէին... եւ այսպէս կայր երկիրս ամենայն ի մէջ բազում տառապանոց»[44], ընդծում է Զաքարիան։ Այնուհետև գրում է, որ չտանելով այդ բոլորը, պարսիկները՝ քաղաքի ստորին պաշտոնյաները, որոնք իրենց անվանել են «գարաֆաշա», Ֆաթալի բեկի գլխավորությամբ հավաքվել են, խորհուրդ են արել, որոշել են նրան հեռացնելու համար դիմել շահին, նրան տնային կալանքի են ենթարկել։ Անձրև օրերին քրիստոնյաներին տներից դուրս գալն արգելելը շեշտելով, գրել են. «Մեք ահա դրացի եմք քրիստոնէից և խառն ի խուռն կամք ընդ նոսա. առևտուր ի միասին լինի, և շահս բազումս ունիմք ի նոցանէ, և սա կամի զրկել զմեզ ի շահից մերոց... Հարկս կամի առնուլ ի մեռելոց»[45]։

Պատմագրի այս վկայությունը ցույց է տալիս, որ նման խաներից դժգոհ են եղել ոչ միայն հայերն ու այլ հպատակները, այլև պարսիկները։

Այս դավադրության մասին վկայում է նաև Զաքարիա Ագուլեցին իր «Օրագրության» մեջ[46]։

Զաքարիա Քանաքեռցին զայրույթով գրում է, թե ոմն Մուրթուզա-կուլի խան, որ նշանակվել էր Երևանի խանի տեղապահ և մեծ հույսեր ուներ մնալ այնտեղ, դառնալ խան, և դրա համար շատ կաշառքներ էր ուղարկել արքունիքի մեծամեծներին, սակայն երբ համոզվել էր, որ իր հույսերը չի իրականացվելու, «կամեցաւ հնարիւք իմն կողոպտել զերկիրն»։ Արգելել է գինու վաճառքը, կնքել է տվել բոլոր կարասները, իսկ լեռնային գավառներում, ուր գինի երբեք չի եղել, կնքել են մածնի և

40 Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964,

41 Զաքարիա, հ. Բ., էջ 44—45։

42 Նույն տեղում, հ. Ա., էջ 13—14։

43 Նույն տեղում, հ. Բ., էջ 89։

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում, էջ 90։

46 Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 135։

թանի պտուկները և միայն մեծ կաշառք ստանալուց հետո իր հրամանը փոխել է[47]։

Ցասումով է խոսում Զաքարիան նաև Երևանի մի այլ խանի՝ Ֆարզալիի մասին։ Նա էր «այր ագահ և ոիշտ, կողոպտող և գերփող, և կաշառօղ, անիրաւ ի դատաստանի, և կաշառօք թիւրէր զդատաստանն. յորժամ որ գանգատէր յումեքէ, առանց քննութեան առնոյր տուգանս, որք մի փողոյ տեղիք էին, նա Ի (20) փող առնոյր, այսպէս իմա զամենայն։ Բաղմացան և գողք ի շէնս և աւազակք ի ճանապարհս և յանդաստանս։ Քանզի աւազակք համարձակ մտանէին ի փարախս խաշանց, և քշեալ, տանէին, և գողք մտանէին ի գոմս, և զանասունս հանեալ տանէին աներկիւղ։ Եւ թէ ըմբռնէին զգողն՝ և տանէին առ իշխանն, և նա առնոյր տուգանս և արձակէր առանց պատժոց, և նոքա գնային, և դարձեալ առնէին գողութիւն։ Եւ էր սագնապ մեծ յաշխարհին Արարատեան»[48]։

Պատմագիրն ատելությամբ է գրում նաև Երևանի՝ ծագումով լեզգի Սաֆի խանի մասին, որը հանդգնել էր Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին բանդարկել։ Այդ խանը կաթողիկոսից պահանջել էր իրեն տալ Էջմիածնի լիճն ու այգին, բայց մերժում էր ստացել, զայրացել էր և որոշել վրեժխնդիր լինել։ Կաթողիկոսին արգելել է գնալ Սպահան, ներկայանալ շահին։ Կաթողիկոսը նրան չի լսել, մեկնել է։ Խանն իմանալով նրա գնալու մասին անմիջապես զինվորներ է ուղարկել, որոնք և Աստապատից բռնությամբ ետ են վերադարձրել կաթողիկոսին Երևան, ուր խանը նրան կալանքի տակ է առել։ Զաքարիան գրում է, որ Ջուղայեցու Սպահան գնալու շարժառիթներից մեկն էլ կաթողիկոսարանի պարտքերը մարելու խնդիրն էր եղել։ Խանը նրան ասել էր, որ տեղի վաճառականներից գումար վերցնի, վճարի պարտքերը, սակայն կաթողիկոսը չէր համաձայնվել՝ պատճառաբանելով, որ հետո նա իվիճակի չի լինի այդ գումարը վերադարձնել նրանց։

Կաթողիկոսին կալանավորելուց հետո, խանը «ժողովեաց զամենայն փարթամ և մեծատուն մարդիկ, և էառ ի նոցանէ ՌՅ թուման դրամ, և պատճառ եղ՝ թէ աթոռին պարտն տամք, և յետոյ ձեզ հատուցեն էջմիածնի նստօղքն։ Եւ պատրեաց զամենեսեան և ինքն լափեաց, և ոչ ետ նմա փող մի»[49]։ Զաքարիան գոհունակությամբ գրում է, որ Ջուղայեցուն, սակայն հաջողվել է փախչել Երևանից, գնալ Պոլիս, այնտեղից էլ՝ Սպահան, ներկայանալ շահին, պատմել նրան Սաֆի խանի վարքագծի մասին։

47 Զաքարիա. հ. Բ., էջ 134։

48 Նույն տեղում, էջ 135։

49 Նույն տեղում, էջ 78։

Զաքարիա Քանաքեռցին պակաս ատելությամբ չի խոսում և ժողովրդին կեղեքող, գոփող, կաշառակեր հայ իշխանավորների մասին։ Գեղարքունիքի Ծմակ գավառի գավառապետի ոմն Մելիք Փարսադանի մասին գրում է. «էր կարի ագահ և յափշտակող, հպարտ և գոռոզ։ Եւ Երէցն Մխիթար խրատէր զնա, զի ի բաց կացցէ յայնմ անիրաւ գործոյն՝ և մի կեղեքել և զրկել զռամիկսն։ Իսկ Մելիքն Փարսադան փոխանակ զղջանալոյն և դառնալոյն ի չար գործոյն՝ յաւել ևս ատել զպատուական երէցն»[50]։

* * *

Զաքարիա պատմագիրն արժեքավոր տեղեկություններ է հայտնում շահ Աբբասի կողմից իրականացված մեծ բռնագաղթի՝ Հայաստանին պատճառած հետևանքների մասին և դրանով լրացնում է Առաքել Դավրիժեցուն և հնարավորություն է տալիս մեզ ավելի շատ բան իմանալու այդ հետևանքների մասին։ Նախ նա թվարկում է այն վայրերը, որտեղից գաղթեցրել են հայերին և որտեղ բնակեցրել են նրանց։ Նա գրում է. «Վասնորոյ մեք կարևոր համարեցաք շարադրել աստէն, զինչ երկիր որ աւերեաց, որք են այսոքիկ յանունէ յետ և թէ առաջ, և դու ի միտ առ սկսեալ ի կողմանցն Նախիջևանոյ՝ զԵղեգաձոր, զԳեղամ, զԼօռի, զՀամզաշիման, զՆիգ, զՇարապխանայ (Շապին-Գարաքար), զՇիրակ, զԶարիշատ, և զգեղորայսն Կարուց, և զձորն Կաղզուանայ, զԱլաշկերտ, զՄակու, զԱղբակ, զՍալամաստ, զԽոյ, զՈրմի, և զկողմն Թաւրիզու, զդաշտն Արարատու, զԵրևան քաղաք, զԿոտէս գաւառ, զՇաղկնուձոր, զԳառնուձոր, զՈւրնաձոր, և որ զգաւառն Կարնոյ և զԲասենոյ՝ զԽնուս, և զՄանազկերտ, զԱրծկէ, զԱրճեշ, զԲերկրի, և զամենայն գաւառս Վանայ, և այլ ամենայն տեղիս գերեաց և աւերեաց, այրեաց և հրդեհեաց զամենայն բնակութիւնսն, զի մի մնասցէ շէն... յայս տեղւոջեն՝ զորս բնակեցոյց. Արտաւիլ, Ահար, Ապահր, Ղազուին, Համատան, Շիրազ, Գուլփէքան, Քրման, Ասպահան, Խունսար, Սիլախոր, Փարիա, Փուլավարի, Գէնտուման, Լենճան, Ալինճան, Խոյիկան, Շեխաբան, և այլ գաւառսն Պարսից... և առաջ քան զոսա՝ երկիրն Կախեթու և Քարթլայ ևս քշեալ տարաւ ի Ֆահրապատ, և յԱշրաֆ, ի Քուշան։ Եւ այսպէս բնակեցոյց զնոսա յաշխարհն Բաղա (Իրաղայ)[51]։

Պատմագիրը ցավով հաղորդում է նաև. «Մնաց երկիրն Արարատեան

50 Նույն տեղում, հ. Ա., էջ 82։

51 Նույն տեղում, էջ 19—20։

ուր տեսանէր աբեղայ, մերկացուցանէր, և բրածեծ առնէր։ Եւ ասէր ցժողովուրդն, ո՛վ ոք աբեղայի տայ ինչ, ինքն ի ղժողքն իջանէ։ Քանզի ո՛չ է արժանի աբեղայն առնել պատարագ, վասնզի շնացողք են և պիղծ։ Այլ երիցուն արժան է առնել պատարագ, զի սուրբ ամուսնաւ կայ. և այլ այսպիսի խաբեբայ բանիւ պատրեաց զաշխարհն Աղուանից։ Եւ եկեալ յարեցան ի նա մարդիկ աւելի քան զՇ. և ոչ միայն գռեհիկ աշխարհականք և ռամիկք, այլև տգէտք երիցունք, և փարթամ և մեծազգի մարդիկք»[58]։

Պատմագիրն ասում է, թե Մեխլուն իր հարյուրավոր համախոհներից ընտրել է 12 «թոփուզավորներ» որոնք մահակներով կամ լախտերով զինված, կատարում էին նրա հրամանները՝ ծեծում էին վանքերի հաշվին հղփացած աբեղաներին, կալանավորում նրանց, ուրիշներից՝ կեղծավորելով, ոչինչ չէր վերցնում, այլ ամեն ինչ ստանում էր այդ 12 հոգու միջոցով և բաժանում 500 մարդկանց միջև ու ասում. «Քրիստոսի աշակերտացն չէ պիտոյ ստանալ ոսկի կամ արծաթ, և կամ զգենուլ հանդերձս ազնիւս, այլ մազ և շալ պիտոյ է նոցա զգենուլ»[59]։ Շքեղազգեստ աբեղաներից տարբերվելու համար նա կրել է երկու մեխով ամրացրած այծի մազից հյուսված փալաս։ Մուսուլմանական որոշ աղանդապետերի պես Մեխլուն ևս հանդես է եկել քողարկված դեմքով, շուռ տված վեղարով ծածկել է երեսը, իբր թե իրեն արժանի չհամարելով նայելու երկնքին[60]։ Աշ. Հովհաննիսյանը նկատում է, որ որոշ կողմերով Մեխլուի շարժման մեջ կարելի է տեսնել պավլիկյան և թոնդրակյան կամ Առաջավոր և Միջին Ասիայում տարածված աղանդների հեռավոր արձագանքները, որ Մեխլուի քարոզների մեջ խաչաձևվում էին քրիստոնեական և մուսուլմանական աղանդների հայացքները[61]։ Դրա համար էլ Զաքարիան ասում է՝ պարսիկները նրան Մեխլու բաբա անունն են տվել, իսկ հայերը՝ Մեխլու վարդապետ[62]։

Աղվանից կաթողիկոսի և հոգևորականության պահանջով Մեխլուն իր համախոհներով հեռացվել է Գանձակի բեկլարբեկության սահմաններից։ Նա Գեղարքունիքի վրայով եկել է Կոտայք և ապա Երևան։ Այստեղ նույնպես հաջողություն է ունեցել հայ և այլազգի գյուղացիների մեջ։ Մինչև իսկ Քանաքեռի տնարգել աղջիկներն էին ենթարկվել նրա խոս-

58 Նույն տեղում, էջ 48—49։

59 Նույն տեղում, էջ 49։

60 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 117—118։

61 Նույն տեղում, էջ 117։

62 Զաքարիա, հ. Ա., էջ 49։

քերի «բժժանքին» և իրենց երեսները քսել նրա հանդերձանքի փեշերին[63]։ Ավելին, Զաքարիան ստիպված խոստովանում է թե Երևանից նրան հեռացնելուց հետո «տգէտ ռամիկքն Քանաքեռոյ՝ յորժամ լուան զգալուստ նորա, գրոհ տուեալ ելին ընդ առաջ նորա... Եւ բազում ողջագուրելով ընդունէին զնա»[64]։

Քանաքեռցի մի պառավ կնոջ հորթն էլ բռնությամբ վերցրել են ու մատաղ արել Մեխլուի համար[65]։ Գնալով աճել էր Մեխլուի հետևորդների թիվը, և նրա քարոզները սպառնալից էին դառել պորտարույժ սևագլուխների համար։ Զաքարիան վկայում է, որ «տգետ քանաքեռցիները» նրան տարել են եկեղեցի «եւ ի շբաւել տեղոյն, ելեալ նստաւ ի վերայ սեղանին (Մեխլուն— Լ. Բ.) և զոտսն կախեալ ի վայր՝ և զողանջէր դէպ յարեղայսն՝ և ասէր, ո՛վ ոք՝ որ սպանանէ աբեղայ մի, այլ ո՛չ գոյ հարցումն մեղայ նորա, այլ երթայ յարքայութիւնն Աստուծոյ»[66]։

Այնուհետև գրում է, թե Մեխլուն վկայություններ էր բերում ինչ որ «ժողովածուից», որի հիման վրա վատաբանում էր վանականներին և հավաստիացնում, թե սևագլուխներին սպանողներն արժանանալու են արքայության։

Մեխլուն, երբ իր հետևորդների հոծ բազմությամբ մտել է Երևան, Ամիրգունա խանը նրան հարցրել է, թե այդ բազմությամբ պատրաստվել ես պատերազմի՞ գնալ, Մեխլուն պատասխանել է. «ո՛չ ուրեք գնամ, այլ զի ես քարոզեմ զճշմարտութիւն, վասնայնորիկ շրջին դոքա ընդ իս»[67] Պատմագիրն այնուհետև հայտնում է, որ նրան հեռացրել են քաղաքից։ Քանաքեռից է՛լ Ավետիս կաթողիկոսն ու խանի զինվորները Մեխլուին քշել են և նա գնացել է Էրզրում, ուր կեղացի Պողոս վարդապետը, որին մինչ այդ էջմիածնից հայտնել էին նրա ով լինելու մասին, բռնել է նրան, վերցրել է վեղարն ու փիլոնը, և որովհետև Մեխլուն ասել էր, թե գնալու է Երուսաղեմ, Պողոս վարդապետը Երուսաղեմ գնացող ուխտավորներին պատվիրել էր նրան իրենց հետ չտանել։ «Եւ նա,— վերջացնում է իր խոսքը Զաքարիան,— այնպէս կորեաւ և բարձաւ ի միջոյ՝ ընկալեալ զյաւիտենական կորուստն»[68]։

63 Նույն տեղում, էջ 51։

64 Նույն տեղում։

65 Նույն տեղում, էջ 52։

66 Նույն տեղում։

67 Նույն տեղում, էջ 50։

68 Նույնտեղում, էջ 53։

Գր. Դարանաղցու կապակցությամբ ասվել է, որ նրա վկայությամբ Մեխլուի քարոզներն արձագանք են գտել նաև Նոր Ջուղայի բնակչության մեջ։

* * *

Զաքարիա Քանաքեռցին էլ Դավրիժեցու նման, հիացմունքով է գրում հայ եկեղեցու վերանորոգիչներ Մովսես և Փիլիպպոս կաթողիկոսների ու նրանց հետևորդների մասին։ Մովսեսը նրա համար երկրորդ Լուսավորիչն է։ Միաժամանակ անհուն ատելությամբ է արտահայտվում երևանցի Օնոփրիոս վարդապետի մասին[69], որն ուսումնառությունը ստացել էր Էջմիածնում, արեղայի աստիճան ձեռք բերելուց հետո ուղարկվել է Սևանի անապատը որպես առաջնորդ, հետո վերադարձել է Էջմիածին, եղել է կաթողիկոսի տեղակալը, հետո գնացել է Տիգրանակերտ իբրև նվիրակ։ «Իսկ նա այնուհետև յատնեաց զչարութիւնն իւր ըստ գրեցելոյն, անհնար է օձի թողուլ զթոյնն, և Եթովպացւոյ՝ զթխպութիւնն, և կարճի՝ զխայթոցն։ Ըստ նոյն սարասի ունէր և սա մթերեալ զչարութիւնն ի սրտի իւրում, և ժայթքեաց ի գարշ սրտէ իւրոյ զպիղծ մաղձիւր։ Եւ առեալ թուղթ բաղում և կցեաց ընդ իրեար, և գրեաց առ սուրբ Աթոռն Էջմիածին, և առ կաթուղիկոսն Յակոբ, և առ միաբանք Աթոռոյն՝ և առ ամենայն վանորայս՝ և առ առաջնորդս նոցա՝ բաղում հայհոյանս, և զխօսս անարգս, բարբանջմունս և զօղանջումն սուտ և զուր, վայրապար հաշմունս որպէս շուն կատաղեալ ընտ Տեառն իւրոյ»[70]։

Սակայն Զաքարիան չի ասում, թե նա ինչ է գրել, բավարարվում է նշելով, թէ «Եթէ զչարութիւն սորա զամենայն պատմեմք, բաղում են, և լսողքն գայթակղին, և մեք ժ-նէն զմինն գրեմք համառօտ»[71]։

Զաքարիան հաստատում է Դավրիժեցու այն վկայությունը, որ թուրքական և պարսկական արքունիքներն ու բարձրաստիճան պաշտոնեությունը հայոց եկեղեցին դիտել են իբրև իրենց եկամտի աղբյուր։ Նա գրում է, որ մի վեզիր սուլթանին ասել է, «Բ գլխաւոր տեղի աղօթից գոյ Հայոց, մինն ի քում իշխանութեան է, որ կոչի Երուսաղէմ... և յամենայն ամի գան ուխտ անդ ի կողմանցն Պարսից բազումք և անթիւք, և տան մաքսս բազումս ի ճանապարհին և Երուսաղէմի անթիւտան դրամս, և յաւելու ի գանձ արքունի։ Այլև յԳ ամին միանգամ առաքեն յԵրուսաղէմայ յերկիրն Պարսից՝ և ժողովեն զբազում ոսկի և արծաթ և զդիպակ հանդերձս, և բերեն յԵրուսաղէմ, և է նա օգուտ ազգի մերում։ Իսկ ի մերս կողմանէ ոչ գնան բազումք յէջմիածին. և թէ գնան ևս, ոչ տան նոցա այնքան որ իւրեանց կերածն և ըմպածն վճարէ։ Եւ նոքա ևս առաքեն յԳ ամին միանգամ Նուիրակ ի մերս կողմ, բայց ոչ տան որպէս նոքա առան, այլ սակաւ, մեր Ժ տունն՝ նոցա մի տանն չափ ոչ տան, և զայն ևս Եղիազարն կամի չտալ։ Եւ զայս ծանուցանեն Շահին, և նա պնդապահս տայ առնել աշխարհին իւրոյ չգնալ յԵրուսաղէմ, և զնուիրակն ևս արգելուն, և այն պակասութիւն մեծ լինի թագաւորութեան մերում, նա թէ և խռովութիւն ևս անկանի ի մէջ Բ ուց թագաւորութեանց»[72]։

Քանաքեռցին այնուհետև գրում է, թե Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը Թուրքիայից վերադառնալուց հետո, գնացել է Սպահան շահի մոտ, Երևանի Սաֆի կուլի խանից բողոքելու և իր կաթողիկոսության հրովարտակը ստանալու համար։ Ասում է. «Նախ պատրաստեաց յիսուն ոսկին՝ որ սահմանեալ էր առաջին կաթուղիկոսացն տալ Շահին վասն իւր ռադամին»[73] (հրովարտակին)։ Ուրեմն, որպես կանոն, կաթողիկոսները այդ հրովարտակը ստանալու համար, պարտադիր կարգով, 50 ոսկի են տվել շահին, որը փոքր գումար չի կազմել այն ժամանակ։ Կաթողիկոսն իր բողոքագրում գրել էր. «Ի բնէ է ամենայն ազգ Հայոց՝ ուր և իցէ՝ թէ յաշխարհին Օսմանցւոց, թէ ի Ֆռանգաց, թէ Հնդկաց, թէ Մոսկովաց, և ուր և գտանի յազգէն Հայոց, ամենեքեան հնազանդին էջմիածնի՝ որ է ի ներքոյ տէրութեան քում. և ըստ օրինաց մերոց հարկս տան բնակչաց էջմիածնին, և նորա զարքունական հարկն տան։ Եւ ի մերում ժամանակի յաշխարհին Օսմանցւոց բարձին զայն՝ և ոչ կամէին տալ. և թագաւորական հրամանաւ հատին զայն։ Եւ մեք յուսացաք ի Շա-Սաֆու օճախն, և գնացաք առ խոնթկարն բաղում պարտօք և չարչարանօք, թագաւորի խաթիշարիֆովն, և հազիւ կարացաք դարձուցանել առ ի ներքոյ տէրութեան քում»[74]։

69 Արագախոսության պատճառով նա կրել է «Կարկուտ» մականունը։

70 Զաքարիա, հ. Բ., էջ 67։

71 Նույն տեղում, էջ 66։ Օնոփրիոսի կապակցությամբ, Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Նորերս հրապարակվեցին մի շարք նամակներ, որոնք առատ լույս են սփռում Հակոբ Ջուղայեցու դմ էջմիածնի վանական, միաբանության ներսում զլուխ բարձրացրած այս խլրտումների վրա», տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ..., հ. 2, էջ 153—154։

72 Զաքարիա, հ. Բ., էջ 75—76։

73 Նույն տեղում, էջ 80։

74 Նույն տեղում, էջ 81։

* * *

Զաքարիա Քանաքեռցու «Պատմությունը» բացառիկ կարևորություն է ներկայացնում Հայաստանի և հարևան երկրների սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար։ Մեր պատմագիրների մեջ, Ղազար Փարպեցուց հետո, Զաքարիան առաջինն է, որ հիացմունքով գովում է Արարատյան երկիրը։ «Արդարև,— գրում է նա,— բարելի է երկիրն Արարատեան՝ ծառովք և տնկովք պտղովք և սերմանեօք, ծաղկովք և բուսովք, լերամբք և դաշտիւք, գետովք և աղբերօք, այգեստանեօք և բուրաստանօք, թռչնովք և չորքոտանեօք, էրէիւք և որսովք, և ամենայն բարութեամբ լի և առատ»[75]։

Մեր և ոչ մի պատմագիր այնքան մանրամասներով չի տվել հայ գյուղի կյանքն ու կենցաղը, նրանց վիճակը, ինչպես Զաքարիա Քանաքեռցին, հատկապես իր ծննդավայրի կյանքը։ Ժողովրդական մեր այս պատմագրի գործող անձերի մեծագույն մասը շարքային, հասարակ մարդիկ են, հիմնականում գյուղացիները։ Միանգամայն ճիշտ է նշում Մ. Դարբինյան-Մելիքյանը, որ ինչի մասին էլ որ Զաքարիան խոսում է, լինի դա պատերազմների կամ շահերի և նշանավոր մարդկանց, նահատակությունների կամ վիշապների ու դևերի մասին, բոլոր դեպքերում ընթերցողի առաջ հանդես է գալիս հասարակ մարդն իր վերաբերմունքով՝ հանդեպ պարսկական պաշտոնեությունը, գյուղական իշխանությունները, եկեղեցին և իրեն հավասարներին[76]։

Պատմագրի ուշադրության կենտրոնում ռամիկն է՝ անկախ ազգային պատկանելիության, իր ապրումներով ու հոգսերով և նա ցավով է նկարագրում այդ ռամիկի՝ ծանր վիճակը և, ինչպես վերևում տեսանք, նա առիթ բաց չի թողնում անարգանքի սյունին գամել ու նրան կեղեքողներին, լինի նա օտար նվաճող, թե հայ իշխանավոր։ Մի Մխիթար եպիսկոպոսի բերանով նա գավառապետ Մելիք Փարսադանից ու նրա նմաններից պահանջում է «մի կեղեքել և զրկել զռամիկսն»։

Զաքարիան արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գյուղական համայնքի ներքին կյանքի, տանուտերերի ընտրության կարգի, համայնքին հաշվետու լինելու նրանց պարտականության մասին։

Քանաքեռում մի ոմն Ամիրջան անունով հպարտ ու գոռոզ մարդ է եղել։ Գյուղացիները նրա հպարտությունը սանձելու նպատակով, որոշել

75 Նույն տեղում, էջ 59։

76 Տե՛ս Закарий Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, М., 1969, предисловие, с. 17.

են նրան տանուտեր դարձնել։ Ոմն Մկրտիչ անունով ճարտար ու գրագետ մարդու էլ նոտար են նշանակել նրա մոտ, «զի զոր ինչ առևտուր լիցի վասն գեղջն՝ ձեռամբ Մկրտչին եղիցի, և գրեսցէ զամենայն, զի մի ինչ կորիցէ ընդ վայր»[77]։

Նրանք երկուսով երեք տարի միասին համերաշխ աշխատել են։ Մի անգամ գյուղի մեծամեծները հավաքվել են ու խոսել իրենց հուզող հարցերի մասին։ Նոտար Մկրտիչն էլ է մի բան ասել գյուղի օգտի մասին. տանուտերը գայրացել է նրա վրա՝ ասելով. «Քեզ ո՞ ետ հրաման խօսել ի հրապարակի»[78] ու հայհոյել է նրան։ Մի քանի օր հետո մարդ է ուղարկել, Մկրտիչից պահանջել նրա գրառումները, վերջինս հրաժարվել է տալ թղթերը և ասել է, «ես նորա հրամանաւն ոչ եմ գրեալ, այլ հրամանաւ աւագաց գեղջս»[79]։ Դրանից հետո գյուղի ավագները հավաքվել են, տանուտերին կանչել հաշվետվություն տալու իր գործունեության մասին։ Մինչ նրա խոսելը Մկրտիչը կարդացել է առևտրի իր գրառումները. «զամենայն՝ զոր ինչ տուեալ էին ի ձեռն տանուտեառն՝ մինչև ձու մի՝ զոր գրեալ էր. և կուտեցին ի վերայ նորա Գ ամաց հարկն ՅԺ թուման», հետո պահանջել են, որ նա հաշվետու լինի դրա համար. տանուտերը զայրացել է, հայհոյել նրանց բոլորին. «Դուք զի՞նչ շուն իցէք՝ որ ես ձերով բանիւ համարս տայցեմ»[80], որ ինքը հաշվետվություն կտա միայն խանի ոստիկանի ներկայությամբ։ Գյուղի ավագները Մկրտիչին ուղարկել են խանի մոտ, որին նա անձամբ ճանաչել է պարսկերեն իմանալու առնչությամբ, խանը լսել է Մկրտչին ու նրա հետ ուղարկել Գուլ-Նազար անունով մի ոստիկանի։ Տանուտերը բացատրություններ է տվել ծախսած գումարների մասին, բայց չի կարողացել ասել, թե 60 թումանը ինչ է արել։ Ոստիկանի հրամանով նրան գլխիվայր կախել են ու ծեծել, պահանջել այդ գումարը, բարեկամները ազատել են գյուղացիներին՝ գոնե մի մասը ղիջել, նրանք համաձայնվել են և 30 թումանը ղիջել են։ Տանուտերը հուսալքված ասել է. չորս տղա և մի գեղեցիկ դուստր ունեմ, թող խանը նրանց վերցնի ու ինձ ազատի։ Խանը չի համաձայնվել ու պատվիրել է 30 թումանը գանձել նրանից։ Ավելի ուժեղ են ծեծել ու տանջել տանուտերին, բայց, ասում է Զաքարիան, այդ ժամանակ ուժեղ կարկուտ է տեղացել, բոլորը փախել են, տանուտերը մնացել է կախված, միայն որոշ ժամանակ անցնելուց հետո մի կին նկատել է նրան, եկել կապանքները

77 Զաքարիա. Հ. Բ., էջ 1—2։

78 Նույն տեղում, էջ 2։

79 Նույն տեղում, էջ 2։

80 Նույն տեղում, էջ 3։

արձակել ու ստիպել, որ նա փախչի։ Զաքարիան գրում է, թե նա գնացել է մինչև Աղստեֆ դրանով ազատվել տանջանքից[81]։

Պատմագիրը Գողթան գավառի Շոռոթ գյուղի (Քանաքեռցու մոտ՝ Շաղկերտ) տանուտեր «անդգամ» Մալխասի մասին էլ է զայրույթով գրում։ Գյուղացիները նրանից պահանջել են հաշվետվություն, նա խաբել է նրանց՝ թե երեք օրից հետո կտա, և ինքը գնացել է Նախիջևանի խանի մոտ, խնդրել է նրան իր աղջկան նրա որդու համար կնության վերցնել ու իրեն ազատել գյուղացիների ձեռքից։ Խանը սիրով համաձայնվել է ու գրել Շոռոթի գյուղացիներին. «ես առի զհամար դորա, և ինձ եհաս զամենայն. և դուք չունիք հրաման խոսել ընդ դմա»[82]։ Զաքարիան դրանով ցույց է տալիս, թե նման մարդիկ համագյուղացիների հաշվեհարդարից ազատվելու համար ինչպես ստոր միջոցների են դիմել և ինչ ողբերգական հետևանքներ է ունեցել այդ վաճառքը։ Այդ մասին նա պատմում է «Նահատակութիւն կատարեալ կուսին» խորագրի տակ։ Մալխասի դստերը՝ Թամամին բռնությամբ տարել են Երևան խանի որդու հետ, ամուսնացնելու որն այնտեղ տեղապահ էր։ Թամամը որոշում է փախչել, մտածելով. «Բարուոք է իմով կամաւ և Քրիստոսի հաւատովն մեռանել, քան ուրացութեամբ մնալով կենդանի»[83], և մի գիշեր իրեն ձորն է գցել, բայց կենդանի է մնացել ու գնացել Եղվարդ գյուղը, մտել մի քրիստոնյայի տուն, խնդրել քահանա կանչել հաղորդվելու համար, քանի որ համոզված է եղել, որ իրեն բռնելու և սպանելու են։

Կույսը քահանային պատմել է իր գլխին եկածը։ Գյուղի տերը, որը պարսիկ էր, լսելով այդ մասին ասել է՝ բաց թողեք ուր ուզում է թող գնա, «Իսկ ոմն պիղծ՝ Սահակ անուն, որ էր տանուտէր գեղջին Եղավարդայ»[84], ասել է թե ինքը վախենում է խանից, մի գուցե նրա պատճառով իրեն վնաս հասնի, գնացել պատմել է խանին, նա հրամայել է սպանել Թամամին։ Երկու պարսիկ այդ Սահակի հետ գնացել են կապկպել աղջկան, տարել գյուղից դուրս, ուր և Սահակը խեղդել է նրան[85]։

Տալով վերը նշված երեք տանուտերերի բացասական նկարագրերը, Զաքարիան նրանց հակադրում է գյուղացիների հոգսերով ապրող, նույն Եղվարդի հաջորդ տանուտերերից՝ Ավագին. «այր ճարտար և ատենախօս, և պնդերես, և առաջի մեծամեծաց յարգոյ և պնդասիրտ։ Եւ գեղականքն առանց հրամանաց նորա ոչ առնէին ինչ»[86] Այնուհետև գրում է, թե գյուղը ջրի պակասություն է ունեցել, գյուղից հյուսիս ընկած ձորում ջուր են գտել և շատ չարչարանքներով ու մեծ ծախսերով առու են փորել ու ջուրը Ղարայօրան գյուղի անդաստաններով բերել խառնել են իրենց ջրին։ Դրանից հետո Ղարայօրան գյուղի տերը, որն ազդությամբ զաջար էր, փակել է տվել առուն, զրկել եղվարդցիներին օգտվելու այդ ջրից և ինքը տնկել է նոր այգի ու պարտեզ և այդ ջրով «արար բուրաստան»։ Եղվարդցիների աղաչանքներն ապարդյուն են անցել, նա ամեն անգամ հայհոյել, ծեծել է նրանց ու ետ ուղարկել։ Վերջիններս ստիպված դիմել են Երևանի խանին, նրա հրամանն էլ գյուղատերը արհամարհել է, չի կատարել, այլև հայհոյել է խանին ու եղվարդցիներին։ Խանը իմանալով այդ մասին, կարգադրել է եղվարդցիներին՝ գնալ սպանել նրան ու նրա համախոհներին, բռնագրավել ունեցվածքը։ Զաքարիան նկարագրում է, թե ինչպես վերջիններս «ելին ամբոխիւ ամենեքեան զուռնայով և զահուլով՝ ծափօք և պարուք, խաղալով և խնդալով ամենայն արուք մինչև կանայք ևս երգելով»[87], գնացել են այդ հրամանը կատարելու։ Երբ մոտեցել են նրա գյուղին, Ավագը զգուշացրել է եղվարդցիներին բավարարվել միայն ծեծով, արյուն չթափել։ Ղարայօրանցիք տեսնելով մոտեցող բազմությանը, իմաց են տվել իրենց գյուղատիրոջը՝ Հապուշ-Ղասիմին, իսկ «անիծեալը», գրում է Զաքարիան, կարծել է, թե նորից գալիս են իրեն աղաչելու ջրի համար։ Եղվարդցիները բռնել են նրան, գետին գլորել ու լավ ջարդ տվել։ Նա ընկել է Ավագի ոտքերը, համբուրել, աղիրսել, ասել, որ ինքն Ավագի շունն է։ Ավագը գթացել է նրան, ընկել է նրա վրա, չի թողել ծեծելը շարունակել, փրկել է նրա կյանքը։ Ի հատուցումն դրան այդ գյուղատերը որոշ ժամանակ հետո գիշերով սպանել է իր փրկարարին ու փախել։ Զաքարիան ընդգծում է, որ «Աւագն նահատակեալ վասն ժողովրդեանն»[88]։

Թե ինչպես է Զաքարիա պատմագիրն ատել գյուղացիների շահերը ոտնահարող մարդկանց՝ վերևում մի քանի օրինակներ բերվեցին, այստեղ բերենք նրա՝ նշված Հապուշ-Ղասիմ գյուղատիրոջ նկարագիրը։ «Լիրբ և անդգամ, հայհոյիչ և պղծաբերան, յանդուգն և անհնազանդ, չարագործ և շնացող, ինքնահաւան և գոռոզ, ամենեին կամարար՝ և ծառայ՝ և հաճոյական սիրելի սատանայի»[89]։

81 Նույն տեղում, էջ 3—4։
82 Նույն տեղում, էջ 128։
83 Նույն տեղում, էջ 129։
84 Նույն տեղում, էջ 130։
85 Նույն տեղում։
86 Նույն տեղում, էջ 116։
87 Նույն տեղում, էջ 118։
88 Նույն տեղում, էջ 120։
89 Նույն տեղում, էջ 117։

Բերելով եղվարդցիների ջրի այս պատմությունը, Զաքարիան ցույց է տալիս այն ժամանակ ջրօգտագործման բնագավառում տիրող կամայականությունները և գյուղացիների պայքարը դրանց դեմ։

* * *

Զաքարիա Քանաքեռցին այն բացառիկ պատմագիրներից է, որ տվել է հայ կնոջ խիզախության, հերոսության մասին արժեքավոր տեղեկություններ։

Մի քուրդ անընդհատ հետապնդել է Շնորհավոր անունով այրի մի կնոջ։ Մի օր նա դրսում բռնել է և ցանկացել համբուրել այդ կնոջը, կինը համառ դիմադրություն է ցույց տվել, այդ ժամանակ վրա է հասել կնոջ եղբայրը և սպանել քրդին ու հեռացել։ Երբ եկել են եղբորը բռնելու, Շնորհավորն ասել է. քրդին ես եմ սպանել ու նահատակվել է[90]։

Վերևում տեսանք, թե ինչպես եղվարդցի կանայք տղամարդկանց հետ միասին հարձակվել են պարսիկ գյուղատիրոջ վրա ու ծեծել։

* * *

Զաքարիան էլ իր նախորդների նման, բոլոր սարսափների ու չարիքների, լինի դա մարախ, թե սով, թե երկրաշարժ, թե ավերում, պատճառը համարում է աստծու հանդեպ մարդկանց գործած մեղքերը։

Նկարագրելով 1681 թ. Զմյուռնիայի (Իզմիր) սովը, պատմագիրը դառնությամբ նշում է. «բազում քրիստոնեայք զուստերս և զդստերս իւրեանց սակաւ գնոյ վաճառէին տաճկաց առ ի կեցուցանել զինքեանս. և բազումք զմանկունս իւրեանց տարեալ արկանէին առ դրունս տաճկաց՝ և փախչէին, և տաճիկքն առեալ զնոսա տանէին առ ինքեանս՝ և առնէին զնոսա տաճիկ։ Բարձաւ սէրս գութ բարեկամաց, ողորմութիւնք և տուրքևառք և խնամք վերացան, բարեկամք և սիրելիք օտարացան ի միմեանց»[91]։ Ի դեպ Զաքարիան գրում է, որ այդ ժամանակ նա եղել է այդ քաղաքում[92]։

Նկարագրելով Երևանի 1679 թ. ահավոր երկրաշարժը նա գրում է. «Զի թէպէտ յամենայն տեղիս ոչ կարացի իմանալ զմեռեալսն, այլ ի հայրենի գիւղն իմ Քանաքեռ թուեցին զմեռեալսն ՌՄԻԸ (1228) ոչ մնաց շուն, ոչ կատու և ոչ հաւ»[93]։

90 Նույն տեղում, էջ 125—126։

91 Նույն տեղում, էջ 112։

92 Նույն տեղում, էջ 111։

93 Նույն տեղում, էջ 105։

* * *

Զաքարիա Քանաքեռցին որոշ կարևոր տեղեկություններ է հաղորդում վրացիների՝ պարսիկների դեմ մղած պատերազմների մասին։ Եթե Դավրիժեցին Տփխիսի իշխան Մովրավին (Գեորգի Սահակաձեին) ներկայացրել է իբրև դավաճանի, որն առաջնորդել է շահ Աբբաս Ա-ի բանակները ու նպաստել Վրաստանի գրավմանը պարսիկների կողմից, ապա Զաքարիան տալիս է այդ Մովրավի հետագա գործողությունների մասին, երբ նա կարողացել էր իրեն սպանելու շահ Աբբասի տված հրամանը և դարձել էր նրա ոխերիմ թշնամին ու քիչ չարիքներ չէր պատճառել պարսկական զորքին[94]։ Այնուհետև նկարագրված են Քարթլիի և Կախեթի գահակալների ու իշխանների ներքին պայքարը, նրանց և պարսկական շահերի փոխհարաբերությունները[95], ի վերջո Քարթլիի Գեորգի թագավորի ապստամբությունը շահ Հուսեյնի դեմ[96]։

* * *

Զաքարիա Քանաքեռցու «Պատմության» երկրորդ հատորի ԿԳ(63) գլուխը, որը կրում է «Պատմութիւն պարոն Այվազին և տան նորա» խորագիրը, իր պարունակած նյութով նույնպես որոշակի արժեք է ներկայացնում։ Միջնադարի հայ պատմագիրներից և ոչ մեկը այնպես, մանրամասնություններով չեն տվել հայ նահապետական ընտանիքի կյանքի նիստ ու կացի, սովորությունների ու ավանդությունների մասին, ինչպես գրել է Զաքարիան։ Այստեղ նա, հիրավի, բացառություն է կազմում։ Այդ գլխում նա մեծ բավականությամբ նկարագրում է Կարբի գյուղաքաղաքի մեծատուն ու փարթամ վաճառական խոջա Այվազի, 30 հոգուց բաղկացած, իսկական նահապետական ընտանիքի ապրելակերպը ամենայն մանրամասնություններով։ Պատմագիրը գրում է, որ Այվազի պապը, հայրը և հորեղբայրները մեծ առևտուր էին ծավալել Թուրքիայի քաղաքներում և մեծ հարստություն էին կուտակել, որի մի մասը ներդրել էին գյուղատնտեսության մեջ և շատ բարեգործություններ էին կատարել առանձնապես եկեղեցու ու նրա սպասավորների նկատմամբ։ Այվազն էլ նրանց ուղիով է գնացել։ «Այս պարոն Այվազ,— գրում է Զաքարիան,— եղև հետևող բարի գործոց առաւել քան զհայր իւր։ Նախ սկսաւ տունն իւր կարգաւորել. զի արար զամենայն ընտանիս իւր միաբան, միակամ,

94 Նույն տեղում, հ. Ա., էջ 26—30։

95 Նույն տեղում, հ. Բ., էջ 94—98։

96 Նույն տեղում, էջ 98—102։

միախորհուրդ, միասիրտ, որպէս թէ մի շունչ և մի հոգի։ Ո՛չ ոք ասէր վասն իւր աւագ գոլ, կամ մեծ, կամ առաջին, ամենայն արուքն կային հրամանաւ պարոն Այվազին. և կանայքն կային հրամանաւ բարեպաշտօն և աստուածապաշտ մօր նորա Մարիամու՝ հլու և հպատակ, հնազանդութեամբ և խոնարհութեամբ և ամենայն բարեձևութեամբ։ Զկնի նորա շինուածոց և ընչից հետևեցաւ. և բազմացոյց զինչսն, և զարարս, և զանասունս և զխաշինս, զձիս և զկիսաէշս, և տնկեաց զայգիս և զբուրաստանս, շինեաց և ծով մի մեծ ի տեղին՝ որ կոչի Կարբույ-դաշտ... սիրող էր նա վանականաց և անապատաւորաց, և զամենայն պիտոյս նոցա կատարէր՝ թ՚է հոգևորն և թ՚է մարմնաւորն, վասնզի յեղբարց իւրոց մի մի առաքէր ի վաճառականութիւն, ոմն՝ յաշխարհն Պարսից, ոմն՝ Յունաց՝ ի գնել և վաճառել և շահուցն տայր ի պէտս եկեղեցեացն... էր աղքատասէր և ողորմասիրտ, և վասն համեստութեան ամենայն որ սիրէր զնա և զխօսս նորա ամենայն որ ընդունէր. զի ա՛յոն այո էր, և ո՛չն՝ ոչ»[97]։ Այնուհետև Զաքարիան նշում է, որ Այվազը շատ մոտ է եղել Նահապետ կաթողիկոսի հետ, Կարբիում մեծ ու շքեղ եկեղեցի է կառուցել ու պարսպապատել, խողովակներով Որդկան գյուղից ջուր է բերել մինչև այդ եկեղեցու դուռը, որպեսզի գյուղը ամեն ժամանակ ջրի պակասություն չզգա և այլն[98]։

Պետք է նկատենք, որ Զաքարիա պատմագիրն էլ Դավրիժեցու նման, բարձր է գնահատել հայ խոշոր առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների գործունեությունը, կոնկրետ ցույց է տվել նրանց խաղացած դերը հայ հասարակական ու հոգևոր կյանքում։ Դրեթե բոլոր դեպքերում կաթողիկոսները, եպիսկոպոսները, անդամ գյուղական համայնքների ներկայացուցիչները պարսկական ու թուրքական արքունիքներում իրենց հարցերը լուծել են այդ խոջաների միջնորդությամբ ու օժանդակությամբ։

* * *

Ասվել է, որ Զաքարիա Քանաքեռցու «Պատմությունը» պարունակում է շատ առասպելներ ու առասպելախառն զրույց— հեքիաթներ և նահատակությունների նկարագրություններ։ Նրանցում հանդիպում ենք վիշապների, դևերի, օձերի, նահատակների վրա երկնքից լույս իջնելու և այլ հրաշապատում երևույթների, որոնք ճանաչողական ու պատմագի-

97 Նույն տեղում, էջ 132—133։

98 Նույն տեղում, էջ 133։

տական ոչ մի արժեք չունեն, բայց իբրև ժողովրդական բանահյուսություն, կարևորություն ներկայացնում են։

Զաքարիայի «Պատմությունը» պարունակում է նաև շատ փաստական սխալներ։ Հայտնի է, որ ակ-կոյունլուների տիրապետությանը Պարսկաստանում վերջ է տրվել 1502 թ. և որ Սեֆյան դինաստիայի հիմնադիրը եղել է շահ Իսմայիլը։ Ըստ Զաքարիայի, սակայն, ստացվել է այնպես, որ իբր Սեֆյան հարստության հիմնադիրը կարա-կոյունլու Ջհանշահն է։ «Ջհան-Շահ թագաւորեալ՝ յորդւոց որդի մինչև ցմերս ժամանակ»[99]։

Քիչ թյուրիմացությունների առիթ չեն տվել Զաքարյան իշխանական տանը նրա կողմից քրդական ծագում վերագրելը և շատ ուրիշ մեծ ու փոքր փաստական սխալները։

Այդ բոլորով հանդերձ. Զաքարիա Քանաքեռցու «Պատմությունն» իր պարունակած հարուստ նյութերով ու մատուցման ձևերով, պատկերավոր լեզվով, գեղջկական անմիջականությամբ ու պարզությամբ իր պատվավոր տեղն է գրավում հայ պատմագրության մեջ։ Այն հիրավի պատմագրի ու նրա ապրած օրերի կենդանի հուշարձանն է։ Իրավացի է Ա. Առաքելյանը, որ նկատում է, թե «Զաքարիայի այս գիրքն արժեքավոր գրական մի կոթող է XVII դարի հայ գրական անշուք անդաստանում»[100]։

99 Նույն տեղում, հ. Ա., էջ 3։

100 Ա. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 568։

ԶԱՔԱՐԻԱ ԱԳՈՒԼԵՑԻ

Հայաստանի XVII դարի երկրորդ կեսի տնտեսական կյանքի, հայ առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների ծավալած գործունեության, նրանց և Երևանի ու Նախիջևանի խաների, ինչպես և պարսկական արքունիքի փոխհարաբերությունների, պետությանն ու եկեղեցուն տրվող հարկերի, կառավարող շրջաններում ստիրող արատավոր բարքերի պատմության ուսումնասիրության համար ստուգապատում ու կարևոր սկզբնաղբյուր է Ագուլեցի վաճառական՝ Քրդունց Զաքարիայի «Դավտարը»՝ օրագրությունը[1]։ Այն հիմնականում տեղեկատու բնույթ ունի, գրված Երևանի և Նախիջևանի խանությունների սահմաններում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների հենքի վրա։

Զաքարիան ծնվել է 1630 թ. Ագուլիս գյուղաքաղաքում, վաճառականի ընտանիքում և պատանեկության հասակից վաճառականությամբ է զբաղվել, մահացել է 1691 թ.։ Առևտրական աշխույժ գործունեություն է ծավալել Պարսկաստանի և Թուրքիայի քաղաքներում, եղել է նաև Իտալիայում, Հոլանդիայում, Իսպանիայում և Պորտուգալիայում։

Թէ ինչ կրթություն է ստացել Զաքարիան, հայտնի չէ, իր հավաստմամբ սովորել է հորեղբորորդու՝ քահանա Տեր-Մելքումի մոտ «Ես Զաքարէս այս Տէր-Մելքումիս մօտ կարդացի»[2]։

Ագուլեցու «Օրագրությունը», ըստ պարունակած բովանդակության, տպագրության ժամանակ Ս. Տեր-Ավետիսյանը ճիշտ կերպով բաժանել է երեք մասի։ Առաջին մասը (1—26 էջ), որ Ս. Տեր-Ավետիսյանը պայմանականորեն անվանել է «Ուղեչափություններ», բովանդակում է առևտրական երթուղիների նկարագրությունը։ Նրանում տրված են այն քաղաքները, գյուղերը, իջևանատները, որոնցով անցել են Զաքարիան և մյուս առևտրականները։

Ցույց են տրված բնակավայրերի ու կայարանների միմյանցից ունեցած հեռավորությունը, փոխադրամիջոցները, մաքսերի չափերը, օգտագործվող կշիռները, չափերն ու դրամները։ Երկրորդ հիմնական մասը (27—155 էջ) Զաքարիայի ճանապարհորդական հիշատակությունն է կամ օրագրությունը, ուր մանրամասն նկարագրված են նրա ճանապարհորդությունները, սկսած 1647 թ. մարտի 5-ից մինչև 1681 թ. հոկտեմբերի 11-ը։ Այստեղ ամենայն մանրամասներով գրի են առնված Զաքարիայի, նրա եղբոր ու հորեղբոր տղաների ընտանիքների հետ կապված բոլոր անցուդարձները՝ ամուսնություն, ուխտագնացություն, ծնունդ, մահ, շարժական ու անշարժ ունեցվածքի ձեռք բերում, շինարարություն, սնանկություն, ծանր տնտեսական կացություն, ժառանգության բաժանում և շատ այլ իրողություններ։ «Օրագրության» երրորդ մասը, որ Ս. Տեր-Ավետիսյանը խորագրել է «Ավարտաբանություն և ընտանեկան ժամանակագրություն» (155—165 էջ), պարունակում է Զաքարիայի հոր՝ Քրդունց Աղամիրի գերդաստանի ժամանակագրությունը։

Պարզամիտ վաճառականի նպատակն է եղել՝ «որ ես Քրդունց Աղամիրի որդի Զաքարիայ այսօր Ագուլաց դուս գնացի... ուր որ գնամք, թէ դիւղ և եթէ քաղաք թէ մտանիցեմ, կամ թէ զատիկ արարիցեմ, կամ թէ նշանաւոր բան կամ թէ օր հանդիբիցէ, գրիցեմ, պատճառն այս է. որ ով հարցնէ, սուրբ հոգին տացէ պատասխանին, այս է, որ կայ, յառջևն գրած է»[3]։ Եվ գրել է «ոչ թէ մին մարդ, Գ կամ Դ մարդ կուհարցնեմ անունն՝ կամ քանի աղաջ կայ կամ չկայ կամ մին աղաջ յետ կամ թէ առաջ, ոչ թէ չափելով իմացայ, այլ իմաստուն մարդիկ հարցանելով։ Ոչ թէ մին անգամ գնալով այս գրեցի. ՌՂԶ յամի Ագուլաց դուրս գնացի մինչի ՌՀԺԳ յամն շուրջ գալով, գնալով, հարցանէլով գրեցի ըստուքն»[4]։

Ըստ Ագուլեցու էլ բոլոր պատուհասների՝ սով, երաշտ, համաճարակ հիվանդություններ, գերառատ ձյուն, երկրաշարժ և այլն, պատճառը մարդկանց՝ աստծու հանդեպ գործած մեղքերն են[5]։

Առանձին դեպքերում Ագուլեցին մանրամասնություններ է հաղորդում, որոնք չկան ժամանակակից պատմագիրների մոտ և դրանով լրացնում է նրանց ու հնարավորություն ընձեռնում մեզ ավելին իմանալու այս կամ այն իրողության մասին։ Այսպես, Զաքարիա Քանաքեռցին գրել է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի՝ Կ. Պոլիս մեկնելու շարժառիթների ու այնտեղ մայր աթոռի շահերը պաշտպանելու մասին, սակայն Ագուլեցուց ենք իմանում, թե ինչ գնով է նա պաշտպանել այդ շահերը։

1 Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938։ Այսուհետև՝ Ագուլեցի։

2 Նույն տեղում, էջ 93։

3 Նույն տեղում, էջ 29։

4 Նույն տեղում, էջ 6։

5 Նույն տեղում, էջ 62, 74, 85, 94։

Նա գրում է, թե Երուսաղեմի վարդապետ Եղիազարը և Հակոբ Ջուղայեցին Կ. Պոլսում ծախսել են ԲԳՃՌ մարչիլ և «Վերջն թագաւորէն ամբր դուրս եկաւ, որ կաթուղիկոսն Օսմանցու երկրէն սրգուն քշեցին. ԲՌ թուման պարտքով փախաւ»[6]։

Կաթողիկոսը Կ. Պոլսից վերադառնալուց հետո, թեմերից փող է հավաքել պարտքը վճարելու համար։ Ագուլեցին նշում է, որ այդ նպատակով նա 1672 թ. դեկտեմբերին գնացել է Նախավկայի վանքը, ուր հավաքվել են Դողթանի բոլոր շրջաններից՝ «կաթուղիկոսին պարտքի ջուղաբ արին, վասն շատ պարտք ունէր։ Ջերայ Ըստամբօլու մարդ էր եկել, թէ՝ կաթուղիկոսն ԻԴՌ մարչիլ Մահմուդ աղային տալու այ, տվեք։ Ջումիաթ ջուղաբ արին, թէ չունքի կաթուղիկոսն Օսմանցու երկրէն սրգուն են արել, պարտքն Օսմանցու երկրին հայերքն տայ»[7]։

Այնուհետև Ագուլեցին հայտնում է, որ իբր կաթողիկոսի պարտքի մարման պատրվակով Երևանի Սաֆի-կուլի խանը մարդիկ է ուղարկել գավառները զինված չոկատներով, փող հավաքելու։ Ագուլեցին արձանագրում է նաև, թե ինչպիսի դաժանություններ են գործադրել այդ մարդիկ տեղերում։ Այսպես, Ագուլիս էր եկել Քայքայուղ բեկը կաթողիկոսի տեղակալ Սահակ վարդապետի, Նախիջևանի քալանթարի և 30 զինվորների ուղեկցությամբ և պահանջել է 1000 թուման։ Այդ բեկը, դառնությամբ նշում է Ագուլեցին, «մին գիշերի ԼԵ մարդ կախեց, շատ անհամութիւն, վերջն՝ Աքուլիս, Դաշտն, Վանքն ամենեցուն ԳՃՄ թուման դուս էլաւ։ Ոչ թէ միայն Աքուլիս, ամէն երկրէ առին, որ մինչի ԲՌ թուման կիտեց»[8]։ Խանն այդ գումարը չի տվել կաթողիկոսին, որի պատճառով նրանց հարաբերությունները սրվել են և կաթողիկոսը ծածուկ փախել է, գնացել Սպահան[9]։

Քանաքեռցին մանրամասն նկարագրել է Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության ժամանակ Երևանցի ոմն Օնոփրիոս վարդապետի՝ Էջմիածնին պատճառած չարիքների մասին, սակայն Ագուլեցուց ենք իմանում, որ այդ Օնոփրիոսը Երևանից կաթողիկոսի փախուստից հետո կաշառք է տվել Սաֆի-կուլի խանին, որպեսզի նա բոլոր վարդապետներին կանչի Երևան ու իրեն աթոռակալ ընտրեն, հետո էլ, երբ ջրօրհնեքը մոտեցել է, նորից խանին կաշառք է տվել, որ նա վարդապետներին նորից հավաքի, որ ինքը ջուրն օրհնի, վարդապետները հավաքվել են և բոլորը դեմ են

6 Նույն տեղում, էջ 66։

7 Նույն տեղում, էջ 110։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, էջ 111։

եղել Օնոփրիոսին, պատճառաբանելով, թե կաթողիկոսը նրան անիծել է և նա չի կարող օրհնել[10]։

Ագուլեցին գրում է նաև, որ Ցղնա գյուղի՝ ազգությամբ վրացի, պարոն Փարսադան-բեկը այդ Օնոփրիոսի հովանավորողներից է եղել, և երբ իմացել է վերջինիս մահվան մասին, զայրացել է կաթողիկոսի վրա, ասելով, թե նա նախանձից է սպանել Օնոփրիոսին, գնացել Երևանի խանին զանգատվել է, խանը, կաթողիկոսին կանչել է իր մոտ «Բ ամիս մնաց, ասա, անդ կաշառք տալ, Ե, ՉՃ թուման դուրս էլաւ. պատճառն Օնոփրիոսն»[11]։

Զաքարիա Ագուլեցու կողմից լրացումները կարելի է շարունակել, բայց բավարարվենք այսքանով։

Լինելով առևտրական, Ագուլեցուն առաջին հերթին հետաքրքրել է իր դրի առած անցուդարձերի նյութական կողմը։ Մեր միջնադարյան ոչ մի պատմագիր ժողովրդի տնտեսական կյանքը, շահագործումը, կեղեքումն ու կողոպուտը դրամական արժեքներով ու չափերով չի տվել, ինչպես դա արել է Ագուլեցին։ Նրա փոքրածավալ «Օրագրությունը» իր մեջ պարունակում է կոնկրետ ու չափազանց արժեքավոր տեղեկություններ Հայաստանի, Պարսկաստանի, Թուրքիայի, ինչպես նաև Եվրոպայի մի շարք երկրների XVII դարի երկրորդ կեսում ապրանքների գների թանգության ու էժանության, գյուղատնտեսական ու շինարարական ծախսերի, պարհակների, հարկաչափերի, ռազմական տուրքերի, հողի արժեքի, առևտրական գործարքների, կաշառքների, ընտանեկան ծախսերի և շատ այլ բնագավառների մասին։ Այն պարունակում է նաև հարուստ ազգագրական նյութ։ Խիստ արժեքավոր են հատկապես Ագուլեցու վկայությունները պաշտոնեության վրա ժողովրդի կատարած ծախսումների մասին։ Նա ցույց է տալիս, որ պաշտոնյաների ժամանումները գյուղերի ու քաղաքների համայնքների համար մեծ չարիք են եղել։ Ասում է. նրանք գալիս էին իրենց շքախմբերով, զինված չոկատների ուղեկցությամբ և մնում էին ամիսներով։ Ագուլիսի օրինակով տալիս է, թե յուրաքանչյուր օր ինչքան են ծախսել նրանց վրա, ինչ են նստել այդ ժամանումները Ագուլիսի համայնքին։

Ագուլիսի հարկահան-դարուղա, ոմն Բահրամ բեկ 1669 թ. 20 ձիավորով գնացել է Ագուլիս, 9 օր մնացել է այնտեղ, նա «Օրն մին թուման խարջ ունէր»[12]։ Բացի այդ, գնալիս էլ 17 թուման «ղուլուղ» էր վերցրել։

10 Նույն տեղում, էջ 120։

11 Նույն տեղում, էջ 128։

12 Նույն տեղում, էջ 94։

Մի այլ անգամ 1671 թ. այդ նույն Բահրամ բեկը 14 ձիավորներով 40 օր մնացել է Ագուլիսում, օրական ծախսը կազմել է ԲՌ (2000) դիան, գնալիս էլ 60 թուման է վերցրել[13]։ Մի ոմն էյնալի աղա նույն 1671 թ. իր մարդկանցով նույնպես 40 օր մնացել է Ագուլիսում, հայերը նրանց վրա ծախսել են 50—60 թուման, իսկ Ագուլիսում ապրող թուրքերը՝ 200 թուման[14]։

Մի երրորդ անգամ 1673 թ. նշված Բահրամ-բեկը 10 ձիավորով մեկ ամիս է մնացել, օրական ծախսը կազմել է 3000 դիան[15]։ 1674 թ. մի այլ դարուղա Բեհզատ-բեկ անունով 10 ձիավորներով երկու ամիս մնացել է Ագուլիսում և Դաշտում, օրական ծախսը կազմել է 3000 դիան, գնալիս էլ 80 թուման է տարել. «Թէ նաղտ, թէ ջնս, թէ ղուլուղ, թէ ահտաղ»[16]։ Դեռ չենք խոսում մի քանի օրով այցելությունների մասին, որոնց վրա նույնպես քիչ ծախսեր չեն կատարել ագուլեցիները։

Ագուլեցին գրում է, թե խաս գյուղերի մելիքները այդ դարուղաների ժամանումներից խուսափելու նպատակով, գնացել են Երևան, ուր գտնվել է այդ ժամանակ Ադրբեջանի (Ատրպատական) վեզիր Միրզա Իբրահիմը, «մի քանի թուման փէշքաշ արարին, որ այս տարի (1675 թ.— Լ. Բ.) դարուղայ չաղարկի»[17]։

Նա բերում է մի քանի փաստեր այն մասին, որ գյուղերի, քաղաքների բնակիչները չտանելով խաների ու գավառապետերի կամայականությունները, բողոքել են շահին և թէ ինչպես շահերն առիթ են դարձրել այդ բողոքները և դարձյալ ժողովրդից գումարներ կորզել։

Այսպես նաև՝ 7—8 ցղնացիներ գնացել են շահի մոտ, բողոքել իրենց գավառապետ, վերևում նշված Փարսադան բեկից, «Շահն բուրմիշ (հրաման— Լ. Բ.) կանէ, թէ ցղնեցիքն գուդէն վիզն դնեն, տանեն Ցղնայ, դիւանն էնտեղ անեն։ Զերայ շահին ծուռ ին արզ արել, շահն Ռ (1000) թուման ջարիմայ գցեց ցղնցուց վիզն»։ Փարասադանը նույնպես գնացել է շահի մոտ գանգատավորներին «ոմն գնդած, ոմն բուխաված» հետը բերել է Ցղնի, 6 ամիս այդպես պահել է մինչև ջարիմեն վերցրել է ու բաց թողել։ Ագուլեցին ավելացնում է «Ահա այս է (7) յամ է, այս Փարսադանս տնով, ախպէրով որ Ցղնայ ուտում ալ, շահի յօքմով»[18]։

13 Նույն տեղում, էջ 111։
14 Նույն տեղում, էջ 112։
15 Նույն տեղում, էջ 118։
16 Նույն տեղում, էջ 121։
17 Նույն տեղում, էջ 126։
18 Նույն տեղում,

Նա տեղեկություններ է հաղորդում նաև իր ապրած օրերում սնանկացած վաճառականների մասին, որոնց թիվը քիչ չէր և որոնց անվանում է «սատակածներ» և «Քրիստոսի դատաստանին սևերեսներ»։ Այդ «սատակածների» թվում է եղել և իր եղբայր Շմավոնը, որի մահից հետո պարզվել է, որ նա շատ պարտքեր է ունեցել և դրա համար օրագիր Զաքարիան շատ չարչարանք է կրել, անգամ Սպահանում շահի հրամանով բանտարկվել է, և ստիպված, մեծ դժվարություններ կրելով ու կաշառք տալով մարել է եղբոր պարտքերը։ Մի ոմն մեծատուն Ավագի մահվան կապակցությամբ Ագուլեցին բացականչում է. «Ով մահկանացու, մ'ի շատ ագահութիւն անիլ, վերջն այսպէս կու լինի»[19]։

Ագուլեցին նույնպես նկարագրում է իր հայրական տան վերակառուցումը, իր կատարած ծախսումները. «Ես Զաքարիայ,— գրում է նա,— ամէն շինեցի, թէ՛ ուստի, թէ՛ արկաթեղէնի, թէ՛ փայտի, թէ՛ դուրգար ու թէ՛ գաջի, թէ՛ քարի, չուրի Բ տարին մի ըստ միոջէ դավտարումն ջոկ գրեցի, չուրի մին դինարն գրած եմ ուրիշ դավտարումն, թէ՛ խորակ։ Ամենայն հսաբն տէսայ, ջամն տէղս գրեցի, որ էլաւ Կե (65) թուման»[20]։ Իր ունեցվածքի օրինակով Ագուլեցին պատկերացում է տալիս նաև հայ միջին վաճառականի կարողության մասին։ Եղբոր մահից հետո նա հոր թողած ժառանգությունից բաժին է տվել եղբոր ժառանգներին։ Նա գրում է «Ես Զաքարէս վեր առի մին խալի՝ ԷՌ դիան, մին կանաֆէա՝ գինն ԴՌ դիան, մին քուրսու լիէր՝ գինն ԵՌ դիան, մին քուրսու ջէջիմ՝ ԵՌ դիան, մին բոյլու թվանգ՝ ԲՌ դիան, մին դէղին Ֆանար՝ ԲՌ դիան, մին շամդան՝ Ռ դիան, մին Ֆնթայ՝ Ռ դիան, մին թամբի թաքալթու՝ Ռ դիան... Դարցեալ, արծաթէղէնն այս է. մին գուլաւդան, Բ փարչ, մին Բուխրդան, Բ. բարակ թափշի, մին ջամ, մին դահվադան, մին գինու թաս, մին կուլայ, մին պումպ քաշելու, ջամն ԺԱ ճոթ, քաշն ամեն ՌԵՃ դրամ»[21]։

Արժեքավոր ու արժանահավատ ակնարկումներ ունի Ագուլեցին ճանապարհների անապահովության, աղջկահավաքների, ջալալիների, Ամստերդամից Մոսկվայի թագավորին թանկարժեք ջահ ուղարկելու, Գիլանի ու Ռեշտի վրա դաղախների հարձակման, ներքին հակամարտությունների, եկեղեցուն տրվող հարկերի, կոռի և ներքին կյանքի շատ բնագավառների մասին։

Էջմիածնի 1678 թ. խորհրդաժողովի կապակցությամբ Աշ. Հովհաննիսյանը ճիշտ նկատում է, որ «Բոլոր պարագաներում էջմիածնի խորհրդ-

19 Նույն տեղում, էջ 85։
20 Նույն տեղում, էջ 91։
21 Նույն տեղում, էջ 115—116։

դաժողովի գումարման համար պիտի շտկելի համարենք 1678 թվականը և հավանական նկատենք 1677 թվականը, հիմք ընդունելով դեպքերին համընթաց տարեգրություն կազմող Զաքարիա Ագուլեցուն, որի մոտ ժամանակագրական սխալներ չկան գրեթե, ուստի և նրա նշումների արժանահավատությանն ապավինած՝ պիտի ճշտվեն անցքերից տարիներ կամ տասնյակ տարիներ հետո մյուս հեղինակների արձանագրած իրողությունների ու դեպքերի կատարման թվականները»[22]։

Լեոն միանգամայն ճիշտ է նկատում, որ Ագուլեցու «Օրագրությունը» շատ հետաքրքրական է նախ և առաջ լեզվական տեսակետից, քանի որ ներկայացնում է այն ժամանակվա գործածական աշխարհաբարը, որը մանավանդ առևտրականի լեզու էր։ Բայց դրանից, հայ վաճառականի կյանքն այնտեղ պատկերացած է զոկին հատուկ ռեալիզմով և մանրապատում ճշտությամբ[23]։

Աշ. Հովհաննիսյանն էլ գրում է, որ Զաքարիա Ագուլեցու «Դավտարը» XVII դարի հայ աշխարհիկ լեզվի և պատմագրության մեծարժեք հուշարձաններից մեկն է»[24]։

22 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 208։

23 Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 156։

24 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 208։

ԱԲՐԱՀԱՄ ԿՐԵՏԱՑԻ

XVII դարի վերջում և XVIII դարի առաջին չորս տասնամյակներում ապրած պատմագիր Աբրահամ Կրետացու մասին կենսագրական տվյալներ չեն պահպանվել. հայտնի չեն ծննդյան թիվը, ուսումնառության հանգամանքները, երբ և ում կողմից է ստացել վարդապետական աստիճանն ու եպիսկոպոսական կոչումը և այլն։ Սակայն գիտենք, որ նա ծնվել է Կրետեի Կանդիա քաղաքում։ Երկու տարվա իրադարձությունների մասին իր գրած «Օրագրից», ավելի ճիշտ անձնական հիշատակարանից (որը նրա հրատարակիչները խորագրել են «Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին Պարսից[1]), իմանում ենք, որ ինքը 25 տարի եղել է Թեքիրդաղի (Հռոդոս) հայոց հոգևոր առաջնորդ, 1734 թ. որպես ուխտավոր եկել է Էջմիածին Աբրահամ Բ կաթողիկոսի ժամանակ և նույն տարում, կաթողիկոսի մահից հետո, հակառակ իր կամքի, հաջորդել է նրան։

Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ից էլ իմանում ենք, որ այս Աբրահամ կաթողիկոսն էր «...մեծանձն և խելօք, ճարտարալեզու և հանճարեղ... ֆան զամենեսեան առաւել արար զբարերարութիւնս և զօգուտս սրբոյ Աթոռոյս և ազգիս և բոլոր երկրիս մերոյ... զբազումս աղատեաց ի մահուանէ, զշատս իջոյց ի կախաղանէ, զբազմաց աչսն և զականջսն և զայլ անդամսն աղատեաց ի հայտանելոյ և ի բրելոյ։ Զանհամար գերիս աղատեաց ի գերչաց։ Եւ զբազումս՝ զորս տաճկացուցեալ էին կամաւ և թէ բռնութեամբ. յետս դարձոյց և առ ի ձեռաց այլազգեաց։ Եւ զայլ անհամար բարերարութիւնս արար Տաճկաց, և Հայոց, Պարսից և Օսմանցւոց։ ... Ապա ի ՌՃՁԵ թուին հանգեաւ ի Տէր և սուգ մեծ էած ի վերայ բոլոր երկրիս արևելեան, և թաղեցաւ ի Շողակաթի ի ձախակողմն գաւթին որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Ունի և զգրեանս օգտարարս արքու-

1 «Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870։ Այսուհետև՝ Կրետացի։ Այս աշխատանքը թարգմանված է ռուսերեն՝ *Абраам Кретаци*, Повествование, Ереван, 1973, Критический текст, перевод, предисловие и комментарии Н. К. Корганяна.

նական և դատաւորական հոգացեալ, զորս յետոյ գրեսցուք։ Սա թէ իւր և նոյն ժամանակի անցից պատմութիւնն ինքնին յատուկ ունի գրեալ»[2]։

Կրետացու մեզ թողած անձնական հիշատակարանը հավաստում է Սիմեոն կաթողիկոսի տված բնութագիրը նրա մասին։

Այդ անձնական հիշատակարանում նկարագրված են ընդամենը երկու տարվա, քաղաքական բուռն իրադարձություններ ընդգրկող ժամանակաշրջանում Աբրահամ Կրետացու կյանքում տեղի ունեցած անցքերը, գրի է առնված նրա հանդիպումները Նադիր-շահի հետ, այդ հանդիպումների արդյունքները, ճանապարհորդությունը դեպի Մուղան և վերադարձը։ Նկարագրված են Նադիրի թագադրման արարողությունները Մուղանի դաշտում, պարսկական բայրամի՝ կրոնական տոնի, ծիսակատարությունները։ Հետաքրքիր տեղեկություններ է պարունակում «օրագիրը» պարսկական պալատական կանոնների, վարչակարգի, բանակի կառուցվածքի ու սպառազինման, պարսից բարքերի, նիստ ու կացի մասին, ինչպես նաև պարսկա-թուրքական վերջին կռիվների, հատկապես 1735 թ. Եղվարդի ճակատամարտի մասին։ Այդ բոլորը գրված են ականատես և, որ գլխավորն է, գործող անձի կողմից։

Կրետացին հավաստում է մեզ, որ ինքը գրել է ճշմարիտ պատմություն։ Գրվածքի վերջում կարդում ենք. «Աւարտ պատմութեանս խնդրի ի ընթերցողաց սիրելի որդւոց իմոց, զի վասն երկարաբանութեան և պարզաբան լինելոյն անմեղադրելի ունել զմեզ, զի որքան իմ կարն էր՝ շանացի, որ կարճ՝ համառօտ և պարզ լիցի՝ առ ի հասկանալ ամենայն ումեք. զի եթէ ամենայն անցս մի ըստ միոջէ գրեալ լինէի, ոչ քարտէզ և ոչ մելան բաւական լինէր, այլ այսքան գրեցաւ, զի ցանկացողք առ ի յիմանալ զանցս և զորպիսութիւնս սուրբ Աթոռոյս և զիմ, ահա այս ճշմարիտ պատմութենէս վերահասու լիցի և զովասցի, և եթէ ըստ հաճոյից ձերոց իցէ... ապա թէ ոչ՝ ներեցէ՛ք իմում դանդաղութեանս, զի ի մէջ տառապանաց և ի մէջ զբաղմանց, վշտաց, և շարշարանաց, և նեղութեանց գրեցի, հիւանդ՝ և խօթացեալ՝ անզօր անձամբ...»[3]։

Մ. Աբեղյանը գտնում է, որ «այդ պատմությունն իսկապես պատմություն չէ, այլ անձնական հիշատակարան (mémoires), և իբրև այդպիսին՝ մեր պատմության մեջ մի առանձին տեղ է բռնում և, կարելի է ասել, եզակի է իր տեսակի մեջ, քանի որ մեզանում պատմական հիշատակարաններ շատ չկան։ Աբրահամն այն է մանրամասն արձանագրում, ինչ

2 Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 30—31։

3 Կրետացի, էջ 90։

որ ինքն արել ու գործել է, կամ մտածել է. շատ քիչ բան՝ ուրիշներից լսած։ Հենց այդ պատճառով ևս Աբրահամի հիշատակարանը շատ հետաքրքիր է։ Նա ուրիշներին նկարագրելով հանդերձ՝ դարձյալ ավելի ինքն իրեն է նկարագրում, յուր ճաշակը, հասկացողությունները, առաքինություններն ու արիությունը»[4]։

* * *

Աբրահամ Կրետացին 1734 թ. գալիս է Էջմիածին, մեծ փափագ ունենալով գնալ նախ Տարոնի Ս. Կարապետ և այլ վանքեր, սակայն Աբրահամ Բ կաթողիկոսը, որին առաջին իսկ պահից Կրետացին շատ էր դուր եկել, թույլ չի տալիս, ասելով, «զքեզ ինձ աստուած առաքեաց տեսանելով զխղճութիւնս իմ, վասնորոյ յայսմ ամի գոնէ ոչ թողում գնալ, այլ կա՛ց մնա՛ ի գիրկս Մօր քո Լուսոյ սուրբ Էջմիածնիս, և լեր ինձ խորհրդակից, ցաւակից և կարեկից...»[5]։ Կրետացու աղաչանքներն ու պաղատանքներն արդյունք չեն տալիս և նա հարկադրված մնում է «Եւ այնուհետև ամենայն օր ընդ իւր ունելով զիս ի տուն՝ և առանձին, ի գրուցատրութիւնս և ի խորհրդակցութիւնս միշտ մինչև ցաւուրս»[6]։

Այնուհետև գրում է, որ կաթողիկոսի և միաբանների հետ գնացել են Հովհաննավանք, սակայն երկար չեն կարողացել մնալ այնտեղ «վասն զբաղմանցն և մեծի հոգունակութեան սուրբ Աթոռոյն», և ավելացնում. «զի նրբահայեաց գոլով Վեհն և յոյժ ցաւեցող վասն ամենեցուն, ոչ կամէր բնաւ զձանձրանալն ումեք. վասնորոյ անապարէր դառնալ ի սուրբ Գահն, մանաւանդ զի էր և ժամանակն խառնակ. և աղգի աղգի գրոյցք գային ի լսելիս Վեհին՝ վասն գալստեան Թահմազիանին։ և շարժել զօրացն Պարսկային. փութացաւ զդարձն անդրէն առ սուրբ Աթոռն, զի հոգացէ զհոգս ամենեցուն»[7]։ Որովհետև, ցավով ասում է Կրետացին, «այսպէս բնաւորեալ է ի բնութիւնս մերազնեացս ի բնուստ անտի ոչ հոգալ, և ոչ ցաւել, և ոչ փոյթ ունել յամենայնէ. այլ իւրաքանչիւր զիւր հանգստութիւնն ջանալ և ապահովել, և պաշտիչ ուրուականին իւրոյ լինել. իսկ զամենայն ցաւս ընկենուլ ի վերայ գլխոյն, և մինչ կենդանի է, թէ իրաւի և թէ անիրաւ՝ սակաւ մի ցաւեցող ցուցանել զինքն մեծաւորին իւրոյ. և այնպէս

4 Մ։ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 459։

5 Կրետացի, էջ 2։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, էջ 4։

թուի ինձ, վասն օգտի անձին իւրոյ իսկ և բարեկեցութեան. և յետ վախճանին՝ այլ ոչ յիշեալ ամենևիմբ և ոչ ցաւիլ, այլ փոխանակ ցաւելոյ և կոծելոյ, եպերել և հեգնել որպէս ի բնուստ անտի ունին զայն աղգն մեր, որոյ զպատճառն,— շեշտում է Կրետացին,— ոչ այլ ինչ գիտեմ, եթէ ոչ զտգիտութիւն և զապերախտութիւն»[8]։

Անշուշտ, Կրետացին այստեղ նկատի ունի հիմնականում հայ հոգեվորականությանը, որի նման վարքագիծը ստիպել է կաթողիկոսին «հոգասցէ զհոգս ամենեցուն»։ Եթե XVII դարի պատմագիր Առաքել Դավրիժեցին իր ժամանակաշրջանի հոգևորականության խավարամտության պատճառը տգիտությունն էր համարել, ապա Կրետացին ընդհանուր գործի նկատմամբ հոգևորականության անտարբերության, անհոգության պատճառը՝ տգիտությունը։

Երախտապարտ Կրետացին ողբում է Աբրահամ կաթողիկոսի մահը և նշում, որ իրեն կանչել են Երևանի փաշայի մոտ և հարկադրել ստանձնել կաթողիկոսությունը. «Իսկ ես հրաժարեալ,—գրում է նա,—յայնմանէ՝ սկսայ ասել, թէ չեմ բաւական այդմ գործոյ, և ոչ ունիմ կարողութիւն յամենայն կողմանց, մանաւանդ զարիպ և օտար եմ»[9], սակայն փաշան անդրդվելի է մնացել։ «Եդին ի ծառայութիւն և ի ներքոյ լծոյ սուրբ էջմիածնի և Աթոռոյն մեծի սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին. որ էր թուականն մեր ՌՃՁԳ»[10]։

Այս կապակցությամբ նա հաղորդում է տեղեկություններ, որոնք պատմական առումով չափազանց արժեքավոր են ու կարևոր։ Նա հաստատում է Առաքել Դավրիժեցու այն վկայությունը, որ հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները վճռական դեր են խաղացել հայ հասարակական կյանքում, նա գրում է, թե երբ իրեն ստիպել են ստանձնել կաթողիկոսությունը, ասել է թե «մեր նախնի սովորութիւնն այն է, որ մանսար անեն (տեղյակ պահեն, հարցնեն— Լ. Բ.) Սպահան և Ստամպօլ, որ այն Բ. քաղաքացիք միաբանին, և զմի ոմն ընտրեն և կացուցանեն։ Ապա թէ ոչ՝ սուրբ Աթոռին և կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի, գիր ևս ունիմք այսպէս հաստատեալ բազմաց գրով և կնքով»[11]։ Ուրեմն առանց այդ երկու քաղաքների քաղաքացիների համաձայնության, (Կրետացին անշուշտ նկատի ունի խոջաներին և դռվլաթավորներին), կաթողիկոսության թեկնածու չէին կարող առաջադրել։

8 Նույն տեղում, էջ 4—5։

9 Նույն տեղում, էջ 8։

10 Նույն տեղում, էջ 10։

11 Նույն տեղում, էջ 9։

Կրետացու պատկերացրած «Նախնի սովորությունը» ընդամենը հարյուրամյա պատմություն ուներ. և հիրավի, հայ առևտրական կապիտալի երկու այդ խոշոր օջախներն իրենց վճռական խոսքն էին ասում հայ հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում։ Այդ գիտակցել է Կրետացին և աշխատել այդ պատճառաբանությամբ խուսափել կաթողիկոսությունից։ Նա գիտակցել է նաև այն կարևոր հանգամանքը, որ պարսկա-թուրքական պատերազմների պայմաններում, երբ պատերազմական գործողությունների վայրը հիմնականում Արարատյան դաշտավայրն էր իր հայաշատ բնակչությամբ, էջմիածնի դերը, իբրև հայոց հոգևոր կենտրոնի, պարսից արքունիքի համար խիստ մեծացել էր։ Պարսից տիրակալները աշխատում էին ամեն կերպ ապահովել իրենց թիկունքը. փոփոխակի հաջողությունների պայմաններում տեղական բնակչության աջակցությունն ու ռազմական համագործակցությունը խիստ անհրաժեշտություն էր դարձել պարսիկների համար և, ստեղծված պատմական որոշակի իրադրության մեջ, դա հնարավոր էր ստանալ հայերի հոգևոր կենտրոնի միջոցով։ Անհրաժեշտ էր այդ կենտրոնը ծառայեցնել պարսկական պետության շահերին ու նպատակներին։

Խորաթափանց Աբրահամ Կրետացին շատ լավ է ըմբռնել էջմիածնի և իր նկատմամբ արևելքի բռնակալ Նադիրի հետապնդած նպատակները և իր հերթին աշխատել է օգտագործել այդ հանգամանքը հայոց կաթողիկոսության վիճակի բարելավման համար, քանի որ այն ֆինանսատնտեսական ծանր դրության մեջ էր։ Գտնվելով տասնամյակներ հարատևող պատերազմական գործողությունների կիզակետում, էջմիածինը հաճախակի էր կողոպտվում մերթ թուրքերի, մերթ պարսիկների կողմից. նրա գոյատևման միակ միջոցը՝ բռնակալներին կաշառք տալն էր դարձել, սակայն հնարավորությունները վաղուց սպառվել էին և էջմիածինն ընկել էր ծանր պարտքերի տակ։ Կրետացին ասում է. «Վասն պակասութեան փողից՝ որս ոչ գոյր ամենևին, իսկ Վանից ծախքն բաղում և անթիւ, յոյժ վշտանայի, տառապէի... երբեմն ի հողոյ արդեանց վաճառելով... և երբեմն փոխ առնելով, մինչ զի բաղում պարտք արարի մինչև ցայսօր. և այսպէս տանջանօք և խղճութեամբ կառավարեցի զսուրբ Աթոռն»[12]։ Վերը նշված հանգամանքի գիտակցումը թեավորել էր Կրետացուն, պահանջկոտ ու հանդուգն էր դարձրել և նա ուրիշ բաց չի թողել այն ծառայեցնելու մայր աթոռի շահերին՝ ինչքան հնարավոր է շատ արտոնություններ կորզել գիշատիչ բռնակալից։

12 Նույն տեղում, էջ 10։

Կարսի վրա արշավելու նախօրյակին Նադիր խանը այցելել է Էջմիածին, Կրետացին ըստ պատշաճի պատասխանել է նրա հարցերին. Էջմիածնից դուրս գալուց առաջ էլ իր մոտ է կանչել Կրետացուն ու ասել. «մի՛ հոգար, և մի՛ տրտմիր, և բնաւ մի՛ երկնչիր, այս օճաղս մեր է, և դու մէկ եախշի ծեր մարդ ես, տունդ աւատան լինի»[13]։ «Այս օճաղս մեր է»-ի իմաստը բացահայտում է նաև Երևանի փաշան։ Կրետացին գրում է, թե երբ ինքը նրա մոտ հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ առանց Սպահանի և Ստամբոլի քաղաքացիների համաձայնության հնարավոր չէ կաթողիկոս ընտրել, վերջինս բարկացել է նրա վրա և ասել, թե դա երկար կտևի, «ահա երկուց կողմանց զօրք և պատերազմունք երևին, և Էջմիածին ի վերայ ճանապարհին է, մինչև ցայն օրն վանքն պիտի քակուի, և միաբանքն անգլուխ գոլով մինն ոչ մնայ, այլ ցրուին, այնուհետև ի՞նչ օգուտ է ձեր ընտրութիւնն։ Դնա՛. ահա հրամեցի քեզ, և յանձն առ, և ըստ օրինաց ձերոց կատարեսցեն զկարգ կաթուղիկոսության ի վերայ (ձեր), և կառավարեա զայն թէքքէն, զի ոչ միայն ձերն է, այլ մեր թագաւորին է, և մեզ ասպնջատեղ և պիտանացու...»[14]։

«Յետ այսորիկ մտածեցի,— գրում է նա,— վասն երկրին աղատութեան և տառապանաց. զի փողն կարի յոյժ նուազեցաւ և քարշեցաւ, և գրեթէ իսպառ հատաւ։ Վասնորոյ խնդրեցի... խանէն՝ տալ հրաման վասն զառապխանային բանալոյ յԵրևան և արզ արարի վասն Մէլիք Յակոբջանին»[15]։

Ապա խնդրել է, որ նահանգի քալանթարն ու մելիքը, առանց իր գիտության, արքունիքից պահանջվածը (դրամ թե մթերք) չրաժանեն նահանգի գյուղերի ու քաղաքների վրա։ Խանի հրամանով վերականգնել է մ. աթոռի մուլքաղարական իրավունքը 7գյուղերի նկատմամբ (թվարկում է այդ գյուղերի անունները)։ «Այլև խնդրեցի,— շարունակում է Կրետացին,— զրախամ (հրովարտակ, հրաման) մի, զի մի ոք եկեալ նեղացուսցէ զնոսա գիւղական գոլով. նա և առանց իմ գիտութեան՝ գիւղորայից Քատխութայք թէվճիհ (բաժանում— Լ. Բ.) մի ձգեսցեն ի վերայ աղքատաց. զի շար սովորութիւն ունէին, որ զբեռս իւրեանց ի վերայ աղքատաց շրջէին»։ Կաթողիկոսը նշում է, որ այդ հրովարտակը ստացել է և ուրիշ հրովարտակներ էլ է խնդրել։ Ընդհանուր թվով «առեալ եմ մինչև ցայսօր ավելի քան զվեց բրախամ»[16] գրում է Կրետացին։

13 Նույն տեղում, էջ 15։

14 Նույն տեղում, էջ 9։

15 Նույն տեղում, էջ 26։

16 Նույն տեղում։

Թե այդ բախամներն մեր կաթողիկոսն ի՞նչ գնով է ձեռք բերել և փոխհատուցման ի՞նչքան և ի՞նչ միջոցներ է ծախսել, չհաշված առատաձեռն նվերները՝ «զձիանքն և զջորիքն, և զայլ պատրաստութիւնս»[17], այդ մասին նա ոչինչ չի գրում, եթե չհաշվենք մի քանի փաստերի ակնարկումը, այն էլ ոչ կաթողիկոսության հետ առնչված, և դա պատահական չէ։ Մայր աթոռի կապակցությամբ փոխհատուցման մասին գրելը կվնասեր Նադիրի և իր հետապնդած նպատակներին։ Ստեղծված կոնկրետ պայմաններում Նադիրին ու նրա իշխանավորներին անհրաժեշտ էր հայոց հոգևոր պետից կորզել ոչ այնքան նյութական միջոցներ, որքան բարոյական օժանդակություն ու օգնություն։ Նրանք ցանկանում էին, որ կաթողիկոսը ժողովրդի մեջ պատմի հայ եկեղեցու և իր նկատմամբ նրանց ցուցաբերած «հոգատարության», տրված արտոնյալ վիճակի և մյուս «բարեմաղթությունների» մասին, քարոզի ու աղոթի նրանց համար «օրհնութիւնս և զփառաբանութիւնս և երկրպագութիւնս»[18] մատուցանի։ Այսպես. Թավրիզից Էջմիածին վերադառնալու և Իբրահիմ խանի և Նախճավանի խանի՝ իրեն ցույց տված պատվի կապակցությամբ կաթողիկոսը գրում է. «ընդ առաջ ելեալ էին (Էջմիածնում— Լ. Բ.) ամենայն միաբանքն և գյուղականքն մեծ պայծառութեամբ. էին անդ ի գեղն և ի Օսմանցւոց (իմա՝ պարսիկ և թուրք—Լ. Բ.) բազումք, որք տեսեալ զպայծառութիւն հաւատոյս և արարողութեանց մերոց՝ հիացեալ ապշեալ զարմանային, որ և մտեալ մեր ի սուրբ տաճարն մեծի ընդհանրական Կաթողիկէի... անկեալ առաջի սրբոյ իջման տեղւոյն, զանչափական օրհնութիւնս և զփառաբանութիւնս և զերկրպագութիւնս մատուցանելով, ուրախութեամբ և արտասուօք ծանուցաք բոլոր միաբանից՝ և պատրաստ եղելոց, յորմէ իսպառ լցեալ էր եկեղեցին մարդկամբք՝ ի մերազգեաց և յայլազգեաց, զպատճառ խնդրելոյն զմեզ՝ և մեր գնալոյն, զպատիւն, և զյուսադրութիւնն՝ զոր արար մեզ (Իբրահիմ խանը—Լ. Բ.), յորմէ լսողք հիացեալ զարմանային և փառս տային աստուծոյ. և ապա աղօթս արարեալ և օրհնութիւնս տուեալ արձակեցաք ի խաղաղութիւն»[19]։ Ահա թե ինչն էր առաջին հերթին հարկավոր աշխարհակալության ձգտող Նադիրին ու նրա արքունիքին։

Օգտվելով իր դիրքից, Կրետացին քիչ ջանքեր չի գործադրել օգտակար լինելու իր ժողովրդին, հնարավորության սահմաններում զերծ պա-

17 Նույն տեղում, էջ 33։

18 Նույն տեղում, էջ 89։

19 Նույն տեղում։

հելու նրան հալածանքներից ու կողոպուտից, ֆիզիկական ոչնչացումից։ Պատահական չէ, որ Նադիրին ասել է, թէ «մենք վասն Բ. իրաց ձեզ ծառայութիւն կանենք. մին վասն հաւատոց մերոց, զի յայտնի պաշտեսցուք զհաւատս և զքրիստոնէութիւնս, և միւս՝ զի պահեսցուք անարատ զսիրաթս ընտանեաց մերոց»[20]։

Մուղանի դաշտում եղած ժամանակ նա բաղում գերիներ է ազատել, ուղարկել Էջմիածին, Աստապատ, Ագուլիս[21]։ Բացի դրանից, գրում է, որ էլի Մուղանում «կրկին թափեցի ի գերեացն որքան որ կարողացայ. և կարացի հնարել և գտանել, փոխ ստակ առի և տուի գին գերեացն...»[22]։ Հացի խիստ սղության պայմաններում պատվիրել է Ագուլիսում այդ ժամանակ գտնվող աղվանից Ներսես կաթողիկոսին, հոգալ նրանց կարիքները։ Ի դեպ, Կրետացին գոհունակությամբ նշում է վերջինիս մասին, թե «ինչ գրէի, վաղվաղակի տայր կատարումն»[23]։ Ներսեսին նա իր տեղապահն է համարել, «վեքիլն ու նայիպը», և նրա համար էլ արտոնություններ է ստացել Նադիրից, ասել է, թե Գյանջայի խաներն ու իշխանավորները «միշտ շամաթայ շլթաղ (զրպարտություն— Լ. Բ.) անելով, ոչ տան թույլ հանգիստ մնալոյ, այլ միշտ կեղեքեն և կողոպտեն։ Վասնորոյ խնդրի ի մեծութենէդ, որ յայսմհետէ ո՛չ խան, ո՛չ Սուլթան կամ Զապութ նորա հետ բան չունենան, զի իմ վեքիլ և նայիպ է, այլ թէ խօսք և զրույց ունին, ընդ իս տեսցէն»[24]։ Այդ հրովարտակը նա ստացել է ու տվել Ներսեսին։

Հացի սղության ժամանակ Կրետացին հրաժարվել է գավառների մելիքների հրավերքներից. «զի ի միջի յոյժ սղութիւն և պակասութիւն էր հացի և գարոյ, և ընդ իս մարդ և անասուն բազումք»[25]։

Կրետացին հիացմունքով է խոսում խնձորեսկցիների մասին, որոնք ամրանալով ապառաժ վեմի քարայրներում, որ նա «հիանալի բան» է համարել, հերոսաբար դիմադրել են թուրքերին և Ղարաչաուլի քրդերին։ Միաժամանակ դառնացած գրում է, որ Խնձորեսկը առաջ ունեցել է 500 տուն, իսկ ինքն, որ տեսել է քարայրներում դրա կեսն էլ չի մնացել «զի բազումք սպանեալք էին ի թուրքաց,— և ավելացնում է,— քանզի փա-

20 Նույն տեղում, էջ 86։
21 Նույն տեղում, էջ 64։
22 Նույն տեղում, էջ 66։
23 Նույն տեղում, էջ 64։
24 Նույն տեղում, էջ 74։
25 Նույն տեղում, էջ 74։

շայք զօրոք իւրեանց քանիցս անգամ եկեալ էին ի վերայ նոցա, և ոչ կարացին մուտ առնել, այլ պատերամեալ ընդ միմեանս՝ յետ դառնային ամօթով»[26]։

Նրա համար էլ լուսավոր ծալք է եղել անապատների ու անապատականների ծավալած հայրենանվեր գործունեությունը, ինչպես ժամանակին՝ Դավրիժեցու համար։ Կրետացին գրում է, որ առաջին անապատականների մասին կարդացել է Դավրիժեցու «Պատմության» մեջ և մեծ հարգանքով է խոսում նրանց նկատմամբ։ Հիացմունքով է խոսում նաև Սյունյաց աշխարհի վանքերի ու եկեղեցիների վերաբերյալ։ Նրանք «հիանալի և զարմանալի տեսողաց» են[27], Հարանց նախկին մեծ անապատը իր ապրած օրերում էլ «է մայր ամենայն անապատից յարևել և յարևմուտս Աղգիս մերոյ»[28]։ Տեսել է և ավերված ու ամայացված վանքեր ու կուսանաց անապատներ ու ողբացել է։ Դառնությամբ գրում է, թե Շնհերի Կուսանաց անապատում, ուր առաջ 150 կույսեր են ապրել, իր տեսած ժամանակ 20 ապաշխարողներ են եղել[29]։

* * *

Ասվեց, որ Աբրահամ Կրետացին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում պարսկական պետության վարչակարգի մասին։ Գրում է, թե պարսից սովորությունն էր, մանավանդ Նադիր շահի տիրապետության ժամանակաշրջանում, որ ամեն մի քաղաք երեքական մարդ նշանակի արքունական եկամուտների ու ծախսերի վրա (կեալուրի)։ «Առաջնոյն ասեն միրզէ վեքիլ, որ է զապիք միրիյի հետ իլխայ ունողաց վերայ. և է երիցն մեծ հրամայող՝ և ի վեր նստող քան զմիւս երկուսն, և սա է առնող տուող և դատաստան անող՝ որպէս մեծ տէֆթէրտար, բայց ոչ առանց միւսոցն գիտութեան, այլ համակամութեամբ։ Երկրորդին ասեն՝ վէզիր, որ է միջինն և ունի զտէֆթէրն նահանգաց, և ամենայն եղեալ կելուրի և կիտարի, իրատի և մասրաֆի (ելևմուտք— Լ. Բ.)։ Եւ զերրորդն ասեն՝ միրսօֆի՝ որպէս թէ տէֆթէր էմի, որ զամենայն տէֆթէրներն նա ունի, և Արքունի տէֆթէրին շինողն է. և տեղն ի տեղ գիւղորայքն և պէկլիկ եղած մուլքեր նորա գիտութեամբ է և նորա ձեռին»[30]։

Կրետացին նշում է նաև վարչական չորս-հինգ այլ պաշտոններ՝

26 Նույն տեղում, էջ 74—75։
27 Նույն տեղում, էջ 77։
28 Նույն տեղում, էջ 76։
29 Նույն տեղում։
30 Նույն տեղում, էջ 59։

մուհրտար, ռախամլար, մայարպաշություն կամ սահապայար[31] և մոլլապաշ[32], էլիաղաճլի[33]։

Առաջինը նշանակում է կնիք պահող-կնքապահ, երկրորդը՝ ռախամներ՝ հրովարտակներ գրող, «այլ և ի վերայ գրողաց՝ որպէս ռէյիզ» (ռայիս՝ պետ—Լ. Բ.), երրորդը՝ «դրամափորձ, պետ՝ որ ուղղէ զժամացոյցս, և կշռեալ փորձէ զդրամս հրահալելիս»[34]», չորրորդը՝ օրենսգետների գլխավոր պետ, հինգերորդը՝ շահին անմիջապես սպասարկողները՝ խաների որդիները[35]։

Հետաքրքիր են նաև Կրետացու հաղորդումները Նադիրի պահակազորքի կառուցվածքի, նրա ռեժիմի, հանդերձանքի սպառազինման, ինչպես նաև հրամանատարական կազմի ոռճիկների չափերի մասին։ Ըստ այդ հաղորդումների, պահակազորքը բաղկացած է եղել 7 հազար հոգուց։ Յուրաքանչյուր օր պահակ են կանգնել 2 հազար զինվոր, որոնք 24 ժամ կանգնելուց հետո 2 օր հանգստացել են, նրանց փոխարինել է երկրորդ երկու հազարը, սրանց էլ՝ երրորդ երկու հազարյակը։ Այնուհետև գրում է, թե մյուս հազարը կազմել են 350 սպասավոր նժույգաձիգները. 350 հանդերձապահները, 350 էլիաղաճլիները իրենց տասնապետներով ու հիսունապետներով։ Հազարապետի ոռճիկը տարեկան եղել է ԺՃ թուման, հիսունապետինը՝ ԼԶ թուման և տասնապետինը՝ ԺԵ թուման[36]։

Այնուհետև պատմագիրը տալիս է պահակազորքի ինչպես՝ նաև ամբողջ բանակի հանդերձանքի ու զինվածության նկարագրությունը։ Նա մեծ գովեստով է խոսում հատկապես պարսկական այրուձիի մասին. «կարեն զօր մի ընդ դաշտ և ընդ ձոր և զառ ի վեր քարաժեռս լերանց և ընդ զառ ի վայր՝ իբրև զկաքաւ ընթանալ, և խոնջ և տրտուջ բնաւ ոչ գիտեն. են զի և երբեմն զապառաժուտ անցուկ տեղիս՝ զապառաժն հատանեն, և զհողն պեղեն, նոյնպէս և զձիւնն՝ իբրև ոչ աշխատեալ բնաւ. մտանեն ի պատերազմ ընդ թշնամիս իւրեանց, և մարտնչին արիապէս և յաղթեն. զի թէպէտ՝ կՌ. լսի թիւ բոջաւորացն զօրաց, բայց թէ կամեսցի՝ Բ. և Դ. այնքան կարէ ժողովել ի սակաւ աւուրս»[37]։

31 Նույն տեղում, էջ 70։
32 Նույն տեղում, էջ 68։
33 Նույն տեղում, էջ 60։
34 Նույն տեղում, էջ 119։
35 Նույն տեղում, էջ 60։
36 Նույն տեղում, էջ 72։
37 Նույն տեղում, էջ 73։

Նկարագրելով Եղվարդի ճակատամարտն ու պարսիկների հաղթանակը, պատմագիրը գրում է, որ ինքը դրանից երեք օր հետո եղել է ճակատամարտի վայրում և իր աչքերով տեսել է նրա ողբերգական վախճանը թուրքերի համար։

«Ճանապարհին հանդիպեցայ դիականցն, սկսեալ ի Աշտարակայ հանտէն մինչև ցեղեւարդ՝ անթիւ բազմութեան սպանելոցն. և դեռ ևս կային ոմանք կենդանի, որ և խուզէին Պարսիկք զայնպիսիսն և սպանէին, որպէս և տեսայ աչօք իմովք մինչ գնայի ի ճանապարհին. որ և վերայ հասայ հայու մի կիսամեռի՝ մինչ կամէին մահացուցանել, և թափեցի ի ձեռաց նոցա. և զիմ շաթիր Պողոսն ի հետ եդի բառնալով ի վերայ գրաստու, և ետու տանել ի յԱշտարակ ի խուցն եկեղեցւոյն. և պատուիրեցի՝ զի քահանայք հոգ տարեալ խնամք տարցեն, որ և գտեալ զառողջութիւն... այլ և բազում վիրաւորեալք որք զերծան ի պատերազմէն, եկին երկրորդ օրն ի յէջմիածին, թուրք, հայ, հոռոմ, և բազմաց դեղ առնել ետու, և գիշերով զտաճկունսն յուղղոյ եդինք յԵրևան, և այլք ի մերայնոց և ի Յունաց, ոմանք մեռան և ոմանք առողջացեալ գնացին ուր և կամեցան»[38], գրում է պատմագիրը։

Որոշ տեղեկություններ է հաղորդում նաև ջիղլայի՝ գլխահարկի ծանր լինելու մասին։ Ասում է, որ իրեն դիմել են Շամախեցի երկու քահանա և հինգ-վեց իշխան, խնդրել՝ միջնորդելու շամախեցիների համար այդ հարկը թեթևացնելու մասին, քանի որ «շատ պահանջէին, խնդրեցին առաջի սահմանին՝ տնով մարդու՝ Գ ղուշ և կէս»[39]։

* * *

Կաթողիկոս պատմագիրն իր հիշատակարանում զգալի տեղ է հատկացրել Մուղանում Նադիրի թագադրման արարողությունների և պարսկական կրոնական տոնի՝ բայրամի, ծիսկատարությունների նկարագրությանը, որ առանձին արժեք է է ներկայացնում պարսիկների նիստուկացի ու բարքերի ուսումնասիրության առումով։

Աբրահամը, հայ եկեղեցու շահերից ելնելով, միտումնավոր ձևով ձգտել է Նադիրին ներկայացնել իբրև քրիստոնեասեր, ամեն դեպքում հայերին ընդառաջող, իր և կաթողիկոսության նկատմամբ բարյացակամ տրամադրված ու հոգացող։ Իր մտածածն ու ցանկալին, Նադիրի հետ տեսակցությունների ժամանակ, արտահայտել է նրա բերանով,

38 Նույն տեղում, էջ 19։
39 Նույն տեղում, էջ 65։

վերագրելով նրան դրանց նախաձեռնողի դեր։ Հնարամիտ մեր կաթողիկոսը սակայն մի քանի նախադասությամբ, բայց չափազանց դիպուկ բացահայտում է Նադիր բռնակալի դաժանություններն ու պատճառած արհավիրքները, սակայն հենց իրեն Նադիրի բերանով։ Նա գրում է, թե Մուղանում Նադիրը խորամանկություն է անում, դիմում է հավաքված իշխանավորներին, թե «ընտրեցէք ի ձէնջ զայլ ոմն, կամ ընտրեցէք զայր մի՝ որ կարիցէ կառաւարել զձեզ և զերկիրն. և ձեռք վեր առէք ինձմէ... և շատ անգամ հրաժարէր։ Իսկ խաներն ստիպէին, աղաչէին, շողոքորթեալ աղերսէին, և հաւանեցուցանէին... պատասխանի ետ... Վալինամաթն (Նադիրը—Լ. Բ.) և ասաց... բազումք ինձանէ պետամտոյ են եղեալ, և իրաւունս ունին. զի բազմաց ապրանս խլեցի. զբազումս մահացուցի, զոմանս կորուսի. և յոլովից զոսկին և զարծաթն խլեցի, և շատ տեղիս աւերեցի և զերկիրս սասանեցուցի և աղքատացուցի, վասնորոյ բաւական է այս չափս, թող հանգչին մարդիկք զոնէ յայսմհետէ ի նեղութենէ յայսմանէ»[40]։ Իր այս բնութագրումով, ուր մեր առջև հառնում է արևելքի իսկական բռնակալ Նադիրը, Աբրահամ կաթողիկոսը հոդս է ցընդեցնում իր իսկ իդեալականացրած Նադիրին, այս մի քանի նախադասությունն է իսկությունը, դրանք են, որ տալիս են բռնակալի ու նրա իշխած ժամանակաշրջանի ճիշտ ու օբյեկտիվ պատկերը, սակայն, նշենք, որ եկեղեցու և ժողովրդի ցավերով մորմոքված Աբրահամ Կրետացին այլ կերպ չէր կարող վարվել, նրա կողմից Նադիրին իդեալականացնելը թելադրված էր օրվա պահանջով։ Այդ մի քանի նախադասություններն են կազմում Կրետացու հիշատակարանի ուղն ու ծուծը, բնութագրում նրա հեղինակի հնարամտությունը, հանդգնությունն ու խիզախությունը։ Հայ պատմագիրների մոտ Հայաստանի բռնակալներից և ոչ մեկն իր բերանով նման ինքնախարազանում չի արել։ Մեր պատմագիրները անարգանքի սյունին են գամել միայն մահկանացուները կնքած բռնակալներին, մինչդեռ Կրետացին այդ տողերը գրել է ոչ միայն Նադիրի կենդանության, այլ ծաղկման օրերին, այն էլ ի՞նչպես է գրել՝ ի լուր ամբողջ աշխարհի նա բացականչել է. «Բաւական է այս չափս, թող հանգչին մարդիկք զոնէ յայսմհետէ ի նեղութենէ յայսմանէ»։ Ինչպես խաներն են Մուղանում Նադիրին, Կրետացու խոսքերով ասած, «շողոքորթեալ աղերսէին», այնպես էլ ինքն է, ահի ու սարսափի տակ, հարկադրված «շողոքորթեալ» գովերգել նրան, դարձնելով «երկրորդ Ալեքսանդր», սակայն միաժամանակ խիզախություն է ունեցել այդ մի քանի նախադասությամբ

40 Նույն տեղում, էջ 54։

ընթերցողին հասկացնելու, որ իրողությունը Նադիրի բերանով ասվածն է ,և ոչ թե՝ իր շռայլած գովերգումը։ Ի դեպ նկատենք, որ նրա այդ գովքը Նադիրի անձի ու գրված դիրքի գովքն է և ոչ նրա կատարած գործերի։ Ընդհակառակն երկրի ներքին կյանքի, ժողովրդի վիճակի նկարագրություններում չի երևում Նադիրի «մեծախելքությունը», «հանճարեղությունը, ամենուր հացի, ուտելիքի սղությունն է տիրել, դյուղացին սերմ չի ունեցել ցանելու, քարշող ուժ չի ունեցել վարուցանք անելու, ճանապարհներն անապահով են եղել, անգամ իր՝ Կրետացու ձին են գողացել[41]. «Եւ ոչ եթէ միայն ի Մուղան էր նուազութիւն հացի,— գրում է Կրետացին,— այլ յամենայն տեղիս Թարվիզու՝ և այսր՝ և ի Տուզախ, ի Կէնճէ, ի Ղազախ, ի Լոռի, ի Վրացտուն, ի Գեղամայ ծովի եզերայքն, ի Ծաղկնուձորն, ի Ղափան, ի Նախիջևան և յԵրևան... յետի օրերն թանկացաւ ցորեանն և գարին ի Մուղան, և եղև Թարվիզի լիտրն Ա. զոլաթա (երեսունանոց—Լ. Բ.) և Ժ. թիմին, որ է Թճ դրամ. և ի փետրվարի ԻԱ...[42]։ Նա դառնացած գրում է, որ Շամախին ավերելուց հետո, Նադիրը հրամայել էր կենդանի մնացած շամախեցիներին բնակեցնել մի շատ անբարենպաստ տեղում, ուր օդն ապականված էր, ջուրը քիչ, և ավելացնում է. «տաճկունք՝ որք են Լակզիք և Սուննիք՝ վշտացուցանէին և տառապեցուցանէին զԱզգն մեր»[43]։ Այնուհետև գրում է, որ նրանք իր օգնությանն են դիմել և ինքը ստիպված է եղել դիմել շահին ու խնդրել՝ նրանց նոր բնակավայր շինելու համար տեղ հատկացնել, ջիղյան պակասեցնել և այլազգիներին սանձահարել[44]։

Այսպիսով, Կրետացու՝ Նադիրին տրված «մեծախելք», «հանճարեղ» պիտակներն օդից կախված են մնում, իսկ ինչ վերաբերում է «մեծաբախտ» «մեծազօր» մակդիրներին, ինչպես նաև «երկրորդ Ալեքսանդր» հորջորջմանը, ապա դրանք թերևս հանդիսանում են Նադիրի՝ պատերազմներում ձեռք բերած փառքի ու դրա շնորհիվ ստեղծած ահ ու սարսափի մթնոլորտի ազդեցության տակ շռայլված «շողոքորթեալ» մեծարումներ եկեղեցու՝ հոգևորով տառապող կաթողիկոսի կողմից։ Անհրաժեշտ էր խտացրած չափազանցություններով Նադիրին ներկայացնել, իր ժողովրդին, ցույց տալ, որ նա վարելով Եղվարդի ճակատամարտը, փայլուն հաղթանակ է տարել՝ թուրքերը տվել են 40000 սպանված, իսկ պարսիկները ընդամենը 15—20 մարդ, անհրաժեշտ էր, որ Կրետացին գրեր.

41 Նույն տեղում, էջ 66։
42 Նույն տեղում, էջ 65։
43 Նույն տեղում, էջ 66։
44 Նույն տեղում, էջ 66։

«հիացումն էր կարկամիլն և կապիլն օսմանցոց առաջի Պարսից»[45] և որ ինքն իր աչքով է տեսել այդ բոլորը[46]։ Որ ինքն իր ականջով է լսել թե ինչպես երկրի խաղաղությունը ապահովելու նպատակով 40000 թուրք սպանող Նադիրն, ի լուր ամբողջ աշխարհի, թուրքերին պարսիկների եղբայր է համարել։ Կրետացին ասում է, թե թագադրումից առաջ Նադիրը բոլոր մեծամեծներին երեք պահանջ է ներկայացրել, որոնցից երկրորդը վերաբերել է պարսիկների և թուրքերի փոխհարաբերությանը։ Պահանջել է, որ պարսիկները չխախտեն հաշտության պայմանագիրը և «յորժամ քաղէն գնան ի Պարսկաստանու, չի նեղացուցանեն և աւելի ինչ չի պահանջեն, այլ որպէս զիւրեանց հաջիք պատուեսցեն, և որպէս զեղբայր համարիցեն»[47]։

Կրետացու վկայությամբ «շողոքորթեալ» բանաստեղծություններ է գրել Նադիրի մասին նաև Ատրպատականի վեզիրը, որը միաժամանակ և բանաստեղծ է եղել[48]։

Որ իսկապես Կրետացու կողմից Նադիրի իդեալականացումը շողոքորթյալ գովերգություն է եղել, ընթերցողին համոզում է նրանից մոտ 50 տարի հետո գրած իր «Պատմութիւն Պարսից» երկի հեղինակ Խաչատուր Ջուղայեցին[49]։ Այդ մասին քիչ հետո, նշենք միայն, որ Խաչատուրը Նադիրի՝ Կրետացու վկայած ինքնախարազանումն այլ ձևով է ներկայացնում։

Աբրահամը, սակայն չի զլացել ցույց տալ «երկրորդ Ալեքսանդրի» «արի» «մեծախելք», «մեծաբախտ», «մեծազօր», «հանճարեղ» Նադիրի խոսքի և գործի միջև անհամապատասխանությունը։ Այն նույն Նադիրի հրամանով, որ Թիֆլիսում իր մեծամեծներին ասել էր, թե «չի լինի թէ նեղացնէք զազգս Հայոց կամ՝ վնասէք»[50] հենց նույն ժամանակ էլ Թիֆլիսից 300 հայ ընտանիք է քշվել Խորասան, նույնքան էլ Արարատյան նահանգից։ Վերջինիս կապակցությամբ Կրետացին գրում է. «Բռնութեամբ հանեալ ի բնակութենէ իւրեանց քշեցին ի Խորասան»[51]։

Իսկ Թիֆլիսեցիների մասին՝ «Բազումք որ լսէին զգնալն և զգրաւիլն իւրեանց, գային յեկեղեցին՝ յորում ապաստանել էի, և կական բարձեալ ողբային և աղաղակն յերկինս ելանէր. լային, գոռային, գոչէին, յերկիր անկեալ թաւալէին, և աղերսէին, զի խնդրիցեմ ի խանէն ազատել զնոսա, և մի վարել ի յօտար երկիր։ Իսկ տառապեալս տեսանելով զաղէտս ժողովրդեան՝ արանց և կանանց, փղձկեալ այրեցեալ սրտիկս, և արեան արտասուս իջուցանէի, և դեղերեալ աստանդական ի դրունս մեծամեծաց՝ պաղատէի, աղաչէի, հայցէի, և աղերսէի ազատիլ նոցա ի յայն վշտաց։ Որ և... ի պատճառէ իմեքէ՝ քաղցրացաւ սիրտ խանին, և եթող զնոսա։ Բայց ԳՈՒ. թուման, և ԳՈՒ. սօմար ցորեան, որ և ժողովեալ հասուցին և զերծան»[52]։ Նադիրի սիրտը քաղցրացել է ոչ թե «ի պատճառէ իմեքէ» այլ խոստացած և ստացած կաշառքից։ Սակայն նա, որ կարողացել էր նյութական փոխհատուցում տալ «բարերար» շահին իր խնդրանքը չմերժելու համար, հաշվի էր առել Թիֆլիսցիների նյութական հնարավորությունները, մի բան, որ չէր կարող հաշվի առնել արարատցիների կապակցությամբ, քանի որ նրանք ի վիճակի չէին այդչափ փոխհատուցում տալու ու փրկվելու «Նոյնպէս և վասն Արարատու երկրին 3. (70) տանն շատ և անխոնջ տանջեցայ և տառապեցայ, և ոչ եղև հնար...»[53],— դառնացած գրում է Կրետացին։

* * *

Կրետացու մի վկայությունն այն մասին, թե Նադիրն իր նախկին գրագրին կարգել է պատմաբան՝ «գրել զպատմութիւն եղելոց իրաց և վասն թագաւորելոյն իւր»[54], հիմք է տալիս երկու հավանական ենթադրության հանգելու, մեկը, որ իմանալով այդ մասին Կրետացին ինքն է շտապել այն գրելու, մյուսն այն, որ այդպիսի պատմություն գրելու պատվեր թերևս նա ստացել է հենց Նադիրից և որ վերջինիս պահանջով է նա իր գրվածքի մի օրինակը և կոնդակը ուղարկել Պոլսի պատրիարքին և Ադրիանապոլսի մահտեսիներին՝ արևմտահայության իշխող վերնախավի մեջ էլ վստահություն ձեռք բերելու և մեծարվելու նպատակով։

Ինչևիցէ Աբրահամ Կրետացի կաթողիկոսի թողած ծավալով փոքր, բայց պարունակած նյութով խիստ արժեքավոր, անձնական հիշատակարանը, ստուգապատում աղբյուր է Հայաստանի և Պարսկաստանի XVIII դարի 30-ական թվականների պատմության ուսումնասիրության և Նադիրի

45 Նույն տեղում, էջ 19։
46 Նույն տեղում։
47 Նույն տեղում, էջ 53։
48 Նույն տեղում, էջ 59։
49 Խաչատուր Աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 272—273։
50 Կրետացի, էջ 24։
51 Նույն տեղում, էջ 25։
52 Նույն տեղում, էջ 25։
53 Նույն տեղում։
54 Նույն տեղում, էջ 70։

ու նրա ժամանակաշրջանի մասին ճիշտ պատկերացում ունենալու համար։

Աբրահամ Կրետացու «Պատմագրության» վերջում կցված է «Պատմութիւն Անի քաղաքին զոր գրեալ է Աբրահամու բաբունապետի եւ բանի սպասաւորի եւ առաջնորդին Թրակիոյ»[55] խորագիրը կրող 9 էջանոց մի գրվածք։ Նրանում խոսվում է Գագիկ երկրորդ Բագրատունու Պոլիս գնալու, Անիի իշխանների դավաճանության, քաղաքացիների բարոյալքման, արատավոր կողմերի, նրանց ուղղության բերելու՝ Հովհաննես Երզնկացու գործադրած ջանքերի, նրա կրած տանջանքների մասին։ Այնտեղ խոսվում է նաև անեցիների գաղթի մասին։ Ավարտվում է 1331 թվականով։ Միալաշատ այդ գործը դժվար թե Կրետացու գրչին պատկանի։ Նախ Կրետացու՝ Թրակիայում բաբունապետ լինելու մասին ոչ մի վկայություն չի պահպանվել և հետո, նա իր պատրաստությամբ չէր կարող այդպիսին լիներ։ Մեր կարծիքով այդ գործն ավելի վաղ ժամանակների մի այլ հեղինակի կամ գրչի գրածը պետք է լինի, որ սխալմամբ կցվել է Կրետացու «Պատմագրությանը»։

55 Նույն տեղում, էջ 101—109։

ԽԱՉԱՏՈՒՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ

XVIII դարի հայ ժամանակագիրներից է Նոր Ջուղայեցի Խաչատուր աբեղա Սահակյանը, որը պատմագրության մեջ մտել է ծննդավայրի անունով «Ջուղայեցի» հորջորջմամբ։ Ապրել ու գործել է Ղուկաս կաթողիկոսի հայրապետության և Ջուղայի Հակոբ արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակ։ Ուսումնառությունը ստացել է ս. Փրկչի «Հրաշակերտ» վանքում։ Հետագայում Ամենափրկիչ վանքի միաբանության գործիչներից մեկն է եղել, մահացել է, հավանաբար, 1795 թ. Բասրայում, ուր գնացել էր իբրև միաբանության նվիրակ[1]։

Ջուղայեցին առանձնապես մեծ կրթություն չի ստացել, այդ կապակցությամբ նա գրում է «Զի ո՛չ էի ես տրուպ թշուառագոյն վատաբաղդս կրթեալ եւ հրահանգեալ ի յիմաստս համալսարանի քերթողաց. եւ ո՛չ ի ճեմարանս, վսեմագոյն իսկ հզօր սոփեստաց էի արդեօք բնաւ մարդեալ»[2]։ «Պատմությունը» գրելու առիթով էլ նկատում է «ո՛չ վայել էր ինձ իրակել զայսպիսի իր. այլ այնոցիկ էր հաճ եւ ըմբոն՝ որք կրթեալք իցեն եւ մարդեալք համալսարանոջ զքերթողութիւն, զճարտասանութիւն, զտրամաբանութիւն, եւ զայլ արհեստս ազատականս»[3]։

Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից» երկը, ըստ «Պատմութիւն Նոր-Ջուղայի» հեղինակ Հարություն Տեր-Հովհաննյանցի, հրապարակ է եկել Միքայել Չամչյանի նախաձեռնությամբ։ Նա գրում է, թէ «Հայր Միքայել վարդապետն Չամչեան յամի 1787-ի 15 Յունվարի գրէ զթուղթ առ գիտնական պարոն Յարութիւն Սահակեան Աղանուրեանց, խնդրելով ի նմանէ առաքել առ ինքն զանուանս թագաւորացն Պարսից հանդերձ ժամանակագրական ծանօթութեամբ նոցին գահակալութեանցն»[4]։

Հարություն Սահակյանն էլ իր հերթին խնդրել է այդ գործի համար

1 Տե՛ս Խաչատուր Աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից, աշխատութեամբ Բարգեն վ. Աղաւելեանց։ Վաղարշապատ, 1905, Յառաջաբան, էջ Ը։ Այսուհետև Ջուղայեցի։

2 Նույն տեղում, էջ 4։

3 Նույն տեղում, էջ 2։

4 Տե՛ս նույն տեղում, Յառաջաբան, էջ Թ։

ձեռնհաս իր բարեկամ Խաչատուր աբեղային՝ գրել Չամչյանի խնդրածը։ Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից»-ի հրատարակիչ Բ. Աղավելյանը ճիշտ նշում է, որ իսկապես Խաչատուրը ոչ թե պատմություն է գրել, այլ մի ժամանակագրություն[5]։ Այդ հաստատում է նաև ինքը՝ Խաչատուրը. «Այլ ո՛չ ապաքէն գործս եւ զարութիւնս նոցա ուրոյն վիպելով. զորոց որք նախ քան զմեզ էին, գեղեցիկ եւ սեթեւեթեալ ոճով գրեցին, այլ եւ եթ՛ միայն զանուանս նոցա յիշատակելով, եւ եթէ արդեօք մարթ ինչ իցէ՝ եւ զթիւս ամաց թագաւորելոյն նոցա, այսինքն՝ եթէ յորում ամի, եւ քանի ամ թագաւորեցին»[6]։

Ջուղայեցին խոստովանելով իր անպատրաստությունն ու տկարությունը «վիպագրություն» գրելու մեջ, այնուամենայնիվ հույս ունի («ակն ունիմ») ավարտել այն նախ՝ «ձրիաբաշխ շնորհիւն Աստուծոյ» երկրորդ՝ աշխատանքով։ Աշխատանքի համար նա վկայակոչում է Վիրգիլիոսին, որ ասել է. «յարատեւ աշխատանքն յաղթէ զամենայն դժուարինս»։ Ապա ասում է, թե աշխատանքն է անվանիության մայրը («մայր բարեհամբաւոյ»), որովհետև աշխատանքի միջոցով հաղթողներն են հանդիսացել աշխարհի անվանիներ, առանց աշխատանքի չի եղել ոչ մի գերապայծառ ու չքնաղագույն բան, ո՛չ, առաքինությունը, ո՛չ արհեստները, ո՛չ որևէ բարի գործ։ Իսկ եթե աշխատանքը լեզու ունենար, կարող էր բարձրաձայն աղաղակել և ասել. թե առանց ինձ (ո՛վ մարդիկ) ոչ մի բանով չեք կարող պարծենալ և պանծալ, իսկ ծուլությունը բոլոր մոլորությունների դպրատունն է (դպրոցը), որով մարդը լքվում է, տարաշրջվում բոլոր մարմնավոր ու հոգևոր գործերի մեջ[7]։

«Պատմութիւն Պարսիցը» որը Խաչատուրը առաջին հատոր է համարում, սկսվում է Կյուրոսից՝ 559 թ. ն. մ. թ. հասցվում է մինչև Քերիմխանի մահը՝ 1779 թ.։ Երկրորդ հատորի մասին առաջինի նախագրության մեջ գրում է. «Իսկ զհատորն երկրորդ ունի յինքեան պարունակեալ զվէպս Պարսից եւ Եկբատանացւոց աշխարհի... զոր ի մահու Քեարիմ իշխանի Պարսից, սկսայ ուրոյն վիպել մի ըստ միոջէ... զհամայն անցս՝ զորս անցեալ փոթորկաբար պտուտկեցին ի կալուածս սահմանաց Պարսից աշխարհի, մինչեւ ուր ուրեք կամեցեալ հաճեսցի Տէր՝ յամբոկ արարեալ եղերեցից զկիր առնութիւնս իմ»[8]։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, էջ 14—15։

7 Նույն տեղում, էջ 8—9, տե՛ս և Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 591։

8 Նույն տեղում, Նախագրութիւն հեղինակի, էջ ԻԳ։

Խաչատուրի և նրա երկրորդ հատորի մասին 1795 թ. Մադրասում հրատարակված «Ազդարար» թերթի խմբագրությունը գրել է. «Ի վաղուց հետէ ի հանդիսի գիտնոց եւ գործառնութեանց նոցա. միաբանութիւն սրբոյ Ամենափրկչի վանիցն մեր որ ի նորն ջուղայ, իբրեւ արտաքոյ եւ անպըտղաբեր գտանի եւ որոյ պատճառն անհանդուրժութիւն տէրութեան յայնմ տեղոյ արգելու մտածել (ընդգծ. խմբագրությանն է— Լ. Բ.)։

Այլ մի ի միաբանութենէ նոցա անուամբ Խաչատուր յաբեղայ որդւոյ Սահակի, ըստ բնական ընդունակութեան իւրոյ եւ օգնականութեամբ բանասիրաց ոմանց՝ յետեւելով գիտութեան գրոց, արար վիպասանութիւն մի պարսից, ի կիւրոս առաջնոյ արքայէ մինչեւ ցմահ քէրիմ խանի, եւ նոյն բանասիրութեամբն խոստացաւ զմնացեալն եւս գրել (զոր կարելի յաւելի ստոյգ իցէր) այլ կասեցաւ եւ նահանջեցաւ ի փութոյ իւրմէ յաղագս մահու...»[9]։

Առաջին հատորի նյութը Խաչատուրը վերցրել է հայ պատմագիրներից և պարսից աղբյուրներից։ Վերջիններիս կապակցությամբ գրում է. «չոգայ առ գիտունս պարսից՝ ...բերին առաջի իմ զմեծ մատեան մի կարի թաւարձի, որ իբր ըստ դիտման եւ ըստ կարծեաց մտաց նոցա՝ էր Սոփեր ճշմարտաճառ վիպագրութեան որոց նախնեաց, եւ ստոյգ զրուցատրութիւն յառաջնոց»[10]։

Շահ Աբբասի կապակցությամբ էլ գրում է. «Արդ՝ ահաւասիկ մինչև ցաստ ծայրաքաղ արտահանեալ հաւաքեցի ի պատմութեանց Շահ Աբասայ՝ ստոյգ դիտողութեամբ ի մերոց և ի պարսից մատենից։ Բայց ոչ զբոլորն համանգամայն գրեցի, այլ ի բիւրոց և յանբաւից գործոց նորա, զյոյժ հաւաստին և զկարևորն վասն իմոյ իսկ տենչալոյս բացայայտեալ ղեկուցի»[11]։

Իսկ շահ Թահմազի և Նադիրի մասին նյութը վերցրել է անգլիացի վաճառական միստր Հանուեից, որը Թահմազի և Նադիրի ժամանակ եղել է Սպահանում և գրել նրանց պատմությունը։ Ասում է, որ ինքն օգտվել է այդ պատմության հայերեն թարգմանությունից, որը կատարել է ամիդեցի ոմն Պողոս Միրզայան[12]։ «Այլ մեք աստանօր միայն այսչափ և եթ՝ ...ինչ ինչ ի գրոց անտի հակրճիւ հաւաքեալ, յապա ուրեմն արձանագրեալ դրոշմեսցուք ի ճառս Շահ Թամազայ, իսկ զյաւելուածս մնացորդաց եղե-

9 Տե՛ս Նույն տեղում, Յառաջաբան, էջ ԺԱ։ «Ազդարար», 1795, թիւ 5, էջ 1, բերված է նույն ուղղագրությամբ։

10 Նույն տեղում, էջ 21—22։

11 Նույն տեղում, էջ 136։

12 Նույն տեղում, էջ 242—243։

լոց իրաց և բանից՝ ստուգութեամբ քեզ ուսուցանէ Անղլիացւոյ պատմութիւնն»[13], գրում է Խաչատուրը։

Խաչատուրը սիրում է ընթերցողին համոզել, որ ինքը «բաղում անգամ է ստուգել» հետո գրել. «Այլ այժմ յոյժ կարևոր վարկանիմ ճառել վերստին՝ զՇահաբասայ արքայէ, քանզի յայլուստ ճառից՝ որ զպատմութիւնս վարուց Շահաբազայ գրէր, այլ իմնապէս ուրեք ուրեք գտի՝ քան զայնս, զորս կանխապէս ճառագրեցի։ Որոյ վասն յօժարեցայ ապաքէն և զայնս անցանել ի գիրս յայս, զի մի ինչ արտաքս քան զբանս մեր մնասցէ, մանաւանդ այս զոր գրեմս թուեցաւ ինձ զոլ ուղիղ՝ քան զայն, զոր յառաջագոյն յայլ յուստեքէ մատենից գրեցի։ Ուրեմն՝ հարկաւոր է զի աշխատասիրեցայց զի գոնեա բացայայտեսցի զուղիղն, որով և համայն ընթերցասէրք՝ իսկապէս հասու լիցին եղելոց բանից։ Եւ մի ոք գուցէ երբէք զբանս մեր օտարոտի իմն՝ և կամ խառն ի խուռն ստապատիր կարծելով, այլ անվթար՝ և անստերիւր. զի բաղում անգամ յարախոյզ որոնմամբ՝ հետազօտեցաք ի ճառագրութիւնս Պարսից ազգի, և ի մերոց նախնեաց վիպագրաց՝ որք կարի ճշմամբ բաղդատելով առ միմեանս, և ապա հազիւ թէ՝ զուղղորդն շարահիւսեցաք ի բաղհիւսութեան բանիս մերոյ»[14]։

Խաչատուրը գրում է, որ ինքն օգտվել է նաև ժամանակագրություններից և գավազանագրերից։ Ուշ շրջանի արաբական խալիֆների անունների կապակցությամբ նշում է, թե «շփոթեալք խանգարին ի կանոն անկանիւ՝ անուանք ամբարիշտ բռնաւորաց ի հնագոյն պատմագրաց, և ժամանակագրաց։ Բայց ես ի բաղում տեղիս որոնելով գտի զանուանս զայսոսիկ ի քրիստիկոնաց և ի գաւազանագրաց ոմանց...[15]։

Ինչ չափով Ջուղայեցին կատարյալ վստահություն ունի հայ աղբյուրների տվյալների նկատմամբ, նույն չափով նա անվստահություն է տածում պարսկականի նկատմամբ։ Նա գրում է, որ երբ իր մոտ կարդացել են պարսկական մատյանը, ապա «սքանչացեալ զարմացայ» պարսիկների կուրության վրա, թե ինչպես է այս խորամանկ ազգը հավատում այդպիսի «շաղփաղփ և շամբուշ» զրույցների, որովհետև կարդալով համոզվեցի և ճանաչեցի պարսկական «ստապաճույճ» առասպելաբանությունը, նրանց գրքերը լեցուն են «շաղակրատ առասպելներով», «ստահոդ և ցոփաբան բաջաղանքներով»[16]։ Պարսկական աղբյուրները համեմատելով իրար հետ, պատմագիրը տեսել է, որ նրանց հաղորդումները չեն համապատասխանում իրար, չկա երկու պատմիչ կամ ժամանակագիր, որոնց գրածները լինեն իրար նման։ Ուստի ստույգ գրելու նպատակով նա դիմել է «մեր սրբազան նախնի հայրերին», մի կողմ թողնելով «պարսիկների ստապաճույճ բարբաջանքը»[17]։

«Պատմութիւն Պարսից»-ը կազմված է երկու մասից։ Առաջին մասում բացի պարսից թագավորների ժամանակագրությունից տրված է նաև Նոր Ջուղայի առաջնորդների և նրանց կյանքի պատմությունը, Հովհաննես վարդապետի դավանաբանական վիճաբանությունը պարսից Սուլեյման շահի որդի Հոսենի (Հուսեյնի— Լ. Բ.) հետ։ Խաչատուրը հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում շահ Աբբասի կողմից հայերի բռնագաղթի, Նոր Ջուղայի հայկական գաղթօջախի, հայերի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, ազգային ու կրոնական հալածանքների, հարկային ծանր քաղաքականության մասին։ Նրա երկը XVII դարի առաջին կեսին Նոր Ջուղայում ծավալված ազատագրական շարժման պատմության հիմնական աղբյուրն է։ Խիստ արժեքավոր են նաև ժամանակագրի հաղորդած տեղեկությունները գաղթօջախի առաջնորդ, հայկական առաջին տպարանի հիմնադիր նշանավոր Խաչատուր վարդապետի ծավալած բեղուն կուլտուր-լուսավորական ու մանկավարժական գործունեության մասին։

«Պատմութիւն Պարսից»-ի երկրորդ մասում տրված է Նադիր-շահից հետո Պարսկաստանում ստեղծված անիշխանության ժամանակաշրջանի պատմությունը, գահին տիրելու համար ծավալված միջֆեոդալական արյունահեղ պատերազմները, կենտրոնախույս ուժերի ակտիվացումը, այդ բոլորի կորստաբեր հետևանքները ժողովրդի համար, ի վերջո Քերիմ-խանի մղած կռիվները, հաղթանակն ու գործունեությունը։

Երկրորդ մասը Խաչատուրը գրել է իբրև ժամանակակից ու ականատես. «Արդ ժամ է մեզ,— նշում է ինքը,—այսուհետեւ եւ զերկրորդ մասն վճարել, որ է ճիշտ պատմութիւն գործոց Քէրիմ խանի մինչեւ ի մահ նորա՝ բովանդակելով»[18]։

Խաչատուրը «Պատմությունը» գրել է Նոր Ջուղայում 1787 թ. «Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու ...կաթողիկոսի»[19], իր ընկերոջ պա-

13 Նույն տեղում, էջ 243։
14 Նույն տեղում, էջ 123։
15 Նույն տեղում, էջ 69։
16 Նույն տեղում, էջ 22։

17 Նույն տեղում, էջ 23—24, տե՛ս և Ա. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 603։
18 Նույն տեղում, էջ 285։
19 Նույն տեղում, Նախագրութիւն հեղինակի, էջ ԻԴ։

հանջով. «Զորս յինէն մատենագրել պահանջեաց պայազատ և խոյական ընկերակիցն իմ հոգեզուգ պարոն Յարութիւն Իսահակեան»[20]։

* * *

Խաչատուր Ջուղայեցին ողբում է շահ Աբբաս Ա-ի կատարած հայերի բռնագաղթի՝ մեծ սուրգունի կորստաբեր հետևանքները, երբեմնի հարուստ ու փարթամ հայ գաղթօջախի,— Նոր Ջուղայի թշվառ ճակատագիրը։ Գոհունակությամբ արձանագրելով, որ ջուղայեցիները Նոր Ջուղայում «շինեցին... հրաշալի յօրինուածովք, և բարձրարերձ և գեղեցկազարդ շինուածովք, և ոսկենկար՝ և զանազան երփնափայլ երանգոց վայելչութեամբք զտունս և զյարկս բնակութեան իւրեանց. ըստ որում և զորոց պայծառութեանց ի տեսողաց գերահռչակ իսկ է արդյօք»։ Ուր և ջուղայեցիք՝ «գեր քան զառաջինն յղփացան և ճոխացան փարթամութեամբ, և պերճացան փառօք», և այնուհետև վշտացած գրում է. «Բայց զկնի բազմաց ամաց ի վերայ անցանելոց՝ բոլոր Ջուղայի հարուստք բնակիչքս զբիւրակերպ նեղութիւնս ի յԱղուանից, և ի Նադէր խրոխտ արքայէն, և ի յայլոց ամենի չարագոյն իշխանաց և մարզպանաց երկրիս կրեալք, փախեան ամենեքեան ի քաղաքէս... Իսկ յարդիս հազիւ գտանի ի Նոր Ջուղայս՝երեք հարիւր տունք բնակիչք ի հայոց ազգէս. իսկ շատքն ի միջի մերում բնակելոցն՝ են ի յազգէն պարսից, որք օր ըստ օրէ գան ի քաղաքէն և սեպհականէն զկալուածս բնակութեան մերոյ և ի վերայ մեր իսկ բռնացեալ կոփահարեն»[21]։

Այնուհետև դառնացած շարունակում է. «Ո՜հ, ա՜ւաղ՝ աղետալիր տեսութեանս մերոյ, և վատաբաղդ թշուառութեանս, քանզի պարտ իսկ է մեզ աստանօր՝ յորդորել զեղարամարս յաշխարհանուագ ձայնս, և միշտ լալ և ողբալ ի վերայ բեկման ժողովրդեանս... մերոյ, և ի վերայ աւերման՝ և խաթարման գեղեցկաշէն և հրաշալի բնակութեանս մերոյ»[22]։

Խաչատուրն ատելությամբ է գրում շահ Աբբասի մասին, նրան «ամենախարդախ նենգավոր օձն»[23] է համարում, չնայած արտաքնապես նա ցույց է տալիս, որ հայերի հետ խաղաղ է, հաշտ է, սակայն ներքուստ հայերի նկատմամբ լցված էր չարությամբ ու խարդախությամբ, գաղտնի նենգություն էր նյութում նրանց դեմ[24]։ Նշելով, որ նա «խստագույն»

20 Նույն տեղում, էջ ԻԳ։
21 Նույն տեղում, էջ 102—103։
22 Նույն տեղում, էջ 103։
23 Նույն տեղում, էջ 127։
24 Նույն տեղում, էջ 111։

օրենք էր սահմանել այն մասին, որ հայերից նրանք, ովքեր կընդունեն պարսից կրոնը ազատ կերպով կարող են վերցնել հայրենյաց տան ժառանգությունը՝ զրկելով մյուս ժառանգներին, դառնացած գրում է. «Որոյ աղագաւ բարձեալ եղեւ հնազանդութիւն երիտասարդաց և մանկանց՝ որ առ ծերս և ծնողս իւրեանց. և հաստատեցաւ յանդգնութիւն և անբարշաւութիւն, որովք բազումք ստահակեալք անկան ի յուրացութիւն և բերին մեծամեծ վնասս ի վերայ ազգիս հայոց բնակչացն ի Նոր Ջուղայ»[25]։

Խաչատուրը կարևոր է համարել գրելու Նոր Ջուղայում կառուցված եկեղեցիների մասին, որոնք շինվել են շահ Աբբասի հրամանով։ Եվ ահա թե ինչու. «Քանզի յորժամ վարեալ եբեր զազգս հայոց ի Պարսկաստան, որովք կամէր զսահմանս աշխարհին իւրոյ լցուցանել, և զերջանիկ և զգորովագութ մայր մեր խղճալի Հայաստան ի հիմանց տապալել, և զմեզ յավիտեան ի գերութեան և ի ստրկութեան պահել յազգաց յազգս, և յորդւոց յորդիս, վասն որոյ հնարս իմացաւ՝ զի մի դարձցին անդրէն նախնիք մեր ի Հայաստան, հրամայեաց շինել բարձրարերձ և գմբեթայարկ զեկեղցիս... եւ մերթ ընդ մերթ ինքն Շահաբաս գայր՝ և կանգնէր յանդիման ճարտարացն շինողաց, և հրամայէր գեղեցիկ յօրինուածով շինել... Որովք խորամանկութեամբք յանկոյզ զսիրտ նախնեաց մերոց առ ինքն. և մնացին մինչև ցայսօր ի ծառայութիւն պարսից»[26]։

Խաչատուրը սրանով հաստատում ու լրացնում է Առաքել Դավրիժեցու՝ շահ Աբբասի հրամանով եկեղեցիների կառուցման պատճառների մասին վկայությունը, բացահայտում է շահ Աբբասի հեռու գնացող նպատակները հայերի նկատմամբ։

Նա ցավով գրում է, թէ շահ Աբբասի կողմից հայերին տված դրամի ետ պահանջման ժամանակ գործադրված խստությունների պատճառով մեկ օրում իրենց կրոնն ուրացել են ՌՊ (1800) ընչազուրկ հայեր, իսկ շատերը ֆրանկներից են մեծ գումար վերցրել վճարել իրենց պարտքը, սակայն դարձել են երկաբնակ «ի յորդւոց յորդիս»[27]։

Խաչատուրը ցավով է գրում նաև այն մասին, որ Սպահանին արևմուտքից սահմանակից Փարիո գավառում հայ գաղթականներով բնակեցված 36 մեծ և փոքր գյուղ է եղել, իսկ իր ժամանակ մնացել է ընդամենը 13 գյուղ այն էլ շատ քիչ ընտանիքներով[28]։ Իսկ Նոր Ջուղայի մասին էլ

25 Նույն տեղում, էջ 112։
26 Նույն տեղում, էջ 113—114։
27 Նույն տեղում, էջ 126—127։
28 Նույն տեղում, էջ 129—130։

ասում է, թէ նրա բնակիչները սարսափներից ու հալածանքներից ստիպված հեռացել են քաղաքից, սփռվել աշխարհով մեկ «բնակեալք պանդխտութեամբ ի մեջ նժդեհութեան։ Վասն որոյ յայնմհետէ Ջուղայ թափուր եղև ի բնակչաց, և օր ըստ օրէ քակի ի հիմանց»[29]։

Նա Դավրիժեցու նման հավասար չափով ողբում է նաև վրաց գաղթականության կրած տառապանքները, ընչազրկությունը, զանգվածային ուրացությունը[30]։

Ջուղայեցին նկարագրելով շահ Աբբասի բռնությունները, միաժամանակ իր արդար զայրույթն է հայտնում, որ այդ խոշտանգումների հանդեպ հայերը անզգա են, անիմացք են ու համառ և քարացած իրենց մոլորության մեջ, երբեք չեն զարթնում քնից, չեն զգաստանում, չեն տեսնում և ճանաչում իրենց թշվառությունը, չեն ձգտում թոթափելու հեղգությունը, և ջանք չեն թափում ստանալու բարեբաստիկ ազատությունը, որը կրկնակի բարեգույն կյանքի սկիզբն է և արմատը[31]։

Այս կապակցությամբ Առաքել Առաքելյանը նկատում է, որ «Այս գողտրիկ տողերի հեղինակը՝ Խաչատուր Ջուղայեցին ըմբոստացման առաջին շեփորն էր XVIII դարի մռայլ իրականության մեջ. նա հայությանը կոչ է անում թոթափել ստրկության կապանքները և մարտնչել հանուն ազատության, հանուն ազատ և բարեկեցիկ կյանքի։ Ջուղայեցու՝ հանուն ազատության այս մարտահրավերը կարծես առաջնորդող սկզբունք հանդիսացավ հնդկահայ անդրանիկ քաղաքական գործիչների համար, որոնք պայքարի առաջին դրոշը բարձրացրին հանուն հայ ժողովրդի ազատագրման՝ օտար զավթիչների ծանր զնդանից»[32]։

Ջուղայեցու «Պատմություն»-ում զգալի տեղ է հատկացված Նադիր-շահի գործունեությանը, ցույց է տրված, թէ ինչպես աննշան տոհմից ռամիկ ուղտապանը[33] կարողացել է հասնել այդ փառքին, դրան հասնելու անցած ուղին, գործադրած խորամանկությունը, դաժանությունն ու նենգությունը։ Տրված է արևելքի այդ բռնակալի դիպուկ բնութագիրը, նրա տիրապետության կործանարար հետևանքները Պարսկաստանի և նվաճված երկրների համար։ «Այլ ո՛չ ինչ իւիք օգտեցան նոքա (պարսիկները—Լ. Բ.) ի սնոտի յուսոյ իւրեանց, քանզի նա (Նադիրը—Լ. Բ.) ևս քան զևս յաճախէր ի բռնաւորական իշխանութիւն՝ որով և օր ըստ օրէ

29 Նույն տեղում, էջ 289։
30 Նույն տեղում, էջ 127—128։
31 Նույն տեղում, էջ 113։
32 Ա. Առաքելյան, նշվ. աշխ. էջ 595—596։
33 Ջուղայեցի, էջ 255։

առաւել աճիւր և զօրանայր ուխտ ագահութեան ի սրտի նորա։ Եւ որով իսկ գրեթէ զբոլոր Պարսկաստան ընկլուղեալ ընկղմէր ի սաստիկ և յանբերելի թշուառութիւն»[34]։

Այն կապակցությամբ, որ Նադիրը հայ մի քանի հոգևորականների պատվիրել էր իր համար հայերենից պարսկերեն թարգմանել 4 սուրբ գրքերը և արաբերենից՝ պարսկերեն Ղուրանը և դրա համար նրանց հարյուր թուման պարգև էր տվել, Խաչատուրը գրում է.

«Եւ թէպէտ զոյզն ինչ էր զոր նա պարգևեաց նոցա, որ և չև ևս էր բաւական ծախուց ճանապարհին. սակայն աստանօր զարմանք իմն մեծ երևի. քանզի ի տատասկէ թուզ քաղեն, և ի մորենուջ խաղող։ Քանզի սա (Նադիրը Լ. Բ.) որ ի բնուստ իսկ ունէր զսովորութիւն՝ առնուլ, ստանալ և ժողովել զինչս. այդ ահաւասիկ ձօնէր նոցա զպարգևս, որ թուի թէ՝ որով իսկ ակն ունէր առ յապա զմեծամեծ պարգևս զանձուց ի նոցանէ ստանալ։ Թէ ո՞՝ զի՞նչ արդեօք դիտաւորութեամբ կարծել ետ նոցա հարիւր թուման, վասն վաստակո՞ցն, ո՛չ, այլ վասն իւրոյ իսկ սաստիկ ագահութեան։ Որպէս և ի նոյն իսկ ամին՝ յառաջագոյն պահանջեաց ի սրբբաղան Ղազար Կաթուղիկոսէն զքսան և չորս հազար դահեկանս...»[35]։

Խաչատուրը, ինչպես վերն ասվեց, Նադիրի ինքնախարազանումն այլ կերպ է ներկայացնում ու ամբողջացնում է նրա բնութագրումը։ Մի անգամ,—գրում է նա,—վերջինս իր մեծամեծներին հավաքել ու ասել է. «ահա զուք արք անողորմք և խիստք, և ես ի վերայ ձեր պատիժ և պատուհաս ի Տեառնէ առաքեցեալ։ Ուրեմն՝ ասէ՝ մի ոք այսուհետև զիս պախարակեալ հենգնեսցէ որպէս թէ ես իցեմ վաս և անողորմ,— Խաչատուրն անմիջապես բացականչում է,— Ա՜հա արդարև ճշմարիտ վճիռ՝ որ զնմանէ արտադրեցաւ առ նոսա»[36]։ Ավելին, նա Նադիրի բռնակալությունը ավելի դաժան է համարում քան աֆղաններինը, ուղղակի գրում է. «Քանզի յորժամ վերջաւորեցաւ բռնաւորութիւնք աղուանից, այնուհետև զսկզբբնաւորեցաւ շար բռնակալութիւն Նատրը արքայի, որ բռնակալութիւն աղուանից ազգին՝ առ որով համեմատելով՝ թեթևագոյն զտանի, և նորայնն յոյժ ծանրագոյն։ Որով իսկ բոլորովիմք կաշկանդեալ տուայտեցաւ բոլոր Պարսկաստան, և ի ծայրագոյնն իսկ ըմբոշխնեաց զթշուառութիւն»[37]։

«Արդ՝ Եղանի թէ Նատրը արքայն,—դառնացած գրում է Ջուղայե-

34 Նույն տեղում, էջ 263։
35 Նույն տեղում, էջ 264—265։
36 Նույն տեղում, էջ 271։
37 Նույն տեղում, էջ 272։

ցին,- ըստ հաւասար քաջութեան իւրոյ՝ բարոյական առաքինութեամբ պերճացեալ իցէր և բարգաւաճեալ... Բայց նա այնքան շափազանցաբար ի յանողորմութիւնս և յամբարտաւանութիւնս հակեալ ձկտեցաւ, մինչ զի ասեն թէ՝ նա երբեմն զգայլս անբանս՝ սաստկապէս տուժեաց տուգանօք[38]։

Մի այլ կապակցությամբ էլ նշում է նաև, թե «Եւ մինչ յայնմ ժամանակի կայր նա (Նադիրը—Լ. Բ.) յԱսպահան՝ զբարբարոսութիւնս մեծամեծս և զսարսափելիս գործէ. քանզի աճեցոյց զբեռինս բնակչաց նորա ծանրագոյն տուգանօք, և զբազումս ի յորոց անպարտ մահու դատապարտէր։ Որպէս և յազգէս մերոյ ևս իսկ ընդ կենդանւոյն այրել հրամայեաց»...[39]։

Նադիրի սպանության կապակցությամբ կարդում ենք. «Ահա՝ այսպէս անկեալ սատակեցաւ պատուհասն երկնային Նատրը... վասն խստագոյն չարութեանց իւրոց՝ ո՛չ կարաց ժամանել ի բարի վաղճանի։ Որով ուսանիմք մեք՝ զի թագաւոր մի և կամ իշխան՝ որ փոխարկէ զգութ և զողորմութիւն, ընդ անիրաւութեան և անգթութեան. նոյն գունակ թշուառաբար կորնչելոց է յաւուր միում. և ո՛չ դիպեսցի նմա ևս՝ զբարի վաղճան, որպէս և նոր այն»[40]։

Ջուղայեցու համար էլ ժողովուրդներին և երկրներին վրա հասած բոլոր արհավիրքները աստծու պատիժներն են, սակայն նրա մոտ ավանդական այդ ըմբռնումը խիստ ընդգծված է ու կատարելիության հասցրված։

Խաչատուր Ջուղայեցին չի զլացել դրվատական խոսք ասել Քերիմ-խանի մասին, որը կարողացել էր վերջ տալ գահակալական արյունահեղ կռիվներին ու միջֆեոդալական պատերազմներին, որոնք կորստաբեր հետևանքներ ունեին երկրների ու ժողովուրդների համար և Պարսկաստանում ստեղծել համեմատաբար խաղաղ ու կայուն վիճակ։

* * *

Խաչատուր Ջուղայեցին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Նադիրի դեմ վրացիների ապստամբության և նրանց «համակիցք» լինելու համար, հայերի դեմ նորանոր հալածանքներ գործադրվելու մասին։

Նա գրում է, թե Նադիրը Երևանը գրավելուց և 1746 թ. Թուրքիայի հետ հաշտությունը կնքելուց հետո որոշել էր գնալ Սպահան։ Բայց մինչ այդ հրովարտակ է ուղարկել Վրաստան, պահանջել բոլոր ազնվականների որդիներին ուղարկել իր մոտ իբրև պատանդ, սակայն, գոհունակությամբ ընդգծում է Խաչատուրը,— «Վիրք եդին ի մտի մանաւանդ զձեռս իւրեանց ի սուր արկանել. քան թէ հնազանդել անիրաւ հրամանի նորա։

Եւ այսպէս՝ իսկ նշկահեալ արհամարեցին նոքա զհրամանս նորա, և ի բաց յանձանց իւրեանց թօթափեցին զամեհի լուծ ապառում բռնաւորին այնորիկ, և քաջութեամբ իսկ յետս վարեցին զգունդս պարսից՝ որք գնացեալ էին անդ ժողովել զհարկս արքունական։ և յերկիւղի պահել զնոսա»[41]

Նադիրը չի կարողանում վրացիներից վրեժը լուծել, քանի որ լուր էր ստացել Խորասանում սկսված ապստամբության մասին ու շտապ վերադարձել էր Սպահան։

Ջուղայեցին ասում է, այնտեղ նա նորանոր բարբարոսություններ է անում՝ կենդանի այրել էր տվել երկու հայի։ «Բայց,—ավելացնում է նա,—թուի թէ՝ կասկածէր նա զազգէն հայոց, համակիցք լեալք ընդ ապստամբութեան ազգին վրաց»[42] Աֆղաններին հաղթելուց հետո Շէյնուն գյուղի պարսիկները գնացել են Նադիրի մոտ, գանգատվել հայերից, որ իբր նրանց դրդմամբ են աֆղանները ապստամբել, որ նրանք համատեղ են իրենց գյուղը կողոպտել, հրդեհել ու իրենց հասցրել վերջին թշվառության։ Դա առիթ է դառնում, որ Նադիրը հայերից պահանջի տարեկան տասը հազար թուման։ Հայերն ստիպված կատարել են այդ պահանջը, իսկ 1746 թ. նա հայերից խստությամբ պահանջում է 45 հազար թուման։ Այդ պատճառով «բազումք յազգէս հայոց,— դառնացած գրում է Խաչատուրը,— ետուն զամենայն ստացուածս իւրեանց, և ինքեանք մերկք և կողոպուտք անկան փախստականք ի յօտար աշխարհ. և յայնմհետէ սկսաւ իսկ խաթարեալ աղարտիլ զբազմամարդ և զգեղեցկաշէն աւանս մեր Նոր Ջուղայ։ Արդ՝ Նատրը արքայն զայն իսկ ի մտի իւրում ունելով, կարծեաց զազգէս հայոց զոլ համակիցք ապստամբութեան վրաց»[43]։

* * *

Ասվեց, որ Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից»-ը XVII դարի առաջին կեսին Նոր Ջուղայում ծավալված ազատագրական շարժման պատմության հիմնական աղբյուրն է։ Լինելով եկեղեցու սպասա-

38 Նույն տեղում, էջ 272—273։
39 Նույն տեղում, էջ 268—269։
40 Նույն տեղում, էջ 270—271։

41 Նույն տեղում, էջ 268։
42 Նույն տեղում, էջ 269։
43 Նույն տեղում, էջ 269—270։

վոր, բնական է, որ Խաչատուր Ջուղայեցին խիստ բացասական է տրամադրված եղել հանդեպ այդ շարժումը։ Նա զայրույթով ու ատելությամբ է գրում շարժման առաջնորդի ու նրա դաղափարախոսության մասին։

Ասում է, Խաչատուր արքեպիսկոպոսի՝ Նոր Ջուղայի առաջնորդությունը ստանձնելու տարում՝ 1620 թ. «յարեաւ ոմն ժանդ և դժնաբարոյ Թօմաս (իմա՝ Թումիկ—Լ. Բ.) անուն՝ որ խօսէր զհայհոյութիւնս ընդդէմ ուղղափառ հաւատոյս Քրիստոսի, որ էր առաւել չարագոյն և դժնդակագոյն քան զԱրիոս, զՆեստոր, և զսադուկեցիս՝ որք ո՛չ խոստովանին զյարութիւն հոգացեալ մարմնոյն, զդատաստան, և զհատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց»։ Այնուհետև թվարկում է Թումիկի թեզերը. «Քանզի նախ՝ զՔրիստոս Հօր Աստուծոյ հաւասար ո՛չ ընդունէր նման Արիոսի. այլ Քրիստոս սոսկ մարդ ասէր, և երջանիկ սուրբ կոյսն Մարիամ մարդածին։ Երկրորդ՝ համահանգոյն սադուկեցւոց զյարութիւն և զդատաստան ոչ ընդունէր։ Երրորդ՝ զխաչն Քրիստոսի, զպատարագն հաշտարար, և զհաղորդութիւնն սուրբ հայհոյէր իբրև զմահմետականսն։ Չորրորդ՝ զեղեալ կանոնս Առաքելականս, և զԱստուածեղէն սահմանս, և զեօթն խորհուրդս սրբոյ եկեղեցւոյ անարգէր։ Հինգերորդ՝ զառաջնորդս, զվարդապետս, զքահանայս, և զպաշտօնեայս սրբոյ եկեղեցւոյ պախարակեալ արհամարէր, և խաբերայս զնոսա կոչէր։ Եւ այսպէս այրս այս դժնդակ և անագորոյն կամէր նոր իմն չարագոյն հերձուած մուծանել յեկեղեցին Քրիստոսի»[44]։

Գր. Դարանաղցու մասին խոսելիս ասվեց, որ Մեխլուի ու նրա գլխավորած շարժման մասին նրա աղբյուրն, ինչպես ինքն է վկայում, Նորջուղայեցի վաճառականներն են եղել[45]։

Հայտնի է, որ Նոր Ջուղայի բնակչության սոցիալական կազմը միատարր չի եղել։ Այնտեղ բնակվել են հայ խոշոր առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների դասը, հոգևորականությունը, զգալի թիվ են կազմել միջին և չքավոր խավերը՝ մանր առևտրականները, հողագործները և մասնավորապես արհեստավորները, որոնք կրկնակի, եռակի շահագործման ենթարկվելով Սեֆյանների պետության, հայ խոջաների ու հոգևորականության կողմից, դասակարգային անհաշտ պայքար են մղել նրանց դեմ։ Դրանով պետք է բացատրել աղբյուրների այն վկայություն-

44 Նույն տեղում, էջ 115։ Այս հինգ պահանջները գրեթե նույնությամբ բերված են XVIII դարի ժամանակագիր Խաչակ վարդապետի մոտ, սակայն նա շարժման ղեկավար է ճանաչում ոչ թե Թովմասին, այլ ոմն Սև Պետրոսի, տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 300—303։

45 Ժամանակագրութիւն ... Դարանաղցւոյ, Երուսաղեմ, 1915, էջ 457։

ները, որ Մեխլուի քարոզները պարարտ հող են գտել Ջուղայի արհեստավորության մոտ։ Այդ է վկայում XVII դարի՝ 20—30-ական թվականներին Նոր Ջուղայի արհեստավորության մեջ ծագած աղանդավորական շարժումը, որն իր հետապնդած նպատակներով իրականում սոցիալական ու դասակարգային բնույթ է ունեցել։ Աղբյուրների վկայությամբ շարժման գլխավոր կազմակերպիչներն ու գաղափարական առաջնորդներն են եղել դերձակ Թումիկը և Սև Պետրոսը[46]։

Ջուղայեցին նշում է, թէ արքեպիսկոպոս Խաչատուրը հոգևորականների և աշխարհականների մեծ ժողով՝ «սյունհոդոս» է հրավիրել «յետ բաղում անգամ խրատելոյն զնա, և նորա ոչ գալոյն ի յուղղութիւն՝ ի բաց էհատ զխղխայթեալ և զապականեալ անդամն ի յողջ անդամոցն Քրիստոսի, զի մի փոք մի ևս մնացեալ ի յայլ յողջ անդամսն փոխադրեսցի զայն ապականութիւն»[47]։

Ասում է նա, որ արքեպիսկոպոսը նախապես փակել էր տվել եկեղեցիների դռները։ Ժողովը բանադրել է «ժանդ և դժնաբարո» Թումիկին, որը համարձակություն էր ունեցել ժողովում իսկ պաշտպանելու իր հայացքները, վստահ, որ իր կողմն է ժողովրդական խավերի համակրանքը[48]։

Պատմագրի այս վկայությունից երևում է, որ Թումիկի գլխավորած շարժումը բավական լայն տեղ է գտել Նոր Ջուղայում, կրել համառ բնույթ և տևել է 20 տարուց ավելի և միայն 1642 թ. ճնշվել[49]։

Նրա մի այլ վկայությունից երևում է, որ Նոր Ջուղայում հերձվածողներ եղել են և 1680-ական թվականներին, որոնց դեմ պայքարել է «երրորդ ընտրելագոյն և գերահրաշ աշակերտ նորա (Հովհաննես վարդապետի—Լ. Բ.) էր Ալէքսանդր Աստուածաբան և մեծիմաստ բաբունին, որ էր քաջափառ և անպարտելի հզօր ախոյեան ընդդէմ հերձուածողաց»[50]։

* * *

Խաչատուր Ջուղայեցին մեծ ոգևորությամբ է գրում ու գովերգում Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդներին և հատկապես Խաչատուր և Հովհաննես վարդապետներին։

Նշելով, որ Խաչատուր վարդապետը Նոր Ջուղայում համալսա-

46 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 333։

47 Ջուղայեցի, էջ 116։

48 Նույն տեղում, էջ 115։

49 Նույն տեղում, էջ 116։ Տե՛ս և Ա. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 110—117։

50 Նույն տեղում, էջ 219։ Նա Ջուղայի առաջնորդն է եղել 1699—1706 թթ.։

ման է բացել, ուր ուսուցել և մարզել է «գիտութիւնս հնոց և նորոց կտակարանաց, և զհամայն արհեստս աղատականս, և զդերբնազանցականս», Ջուղայեցին հպարտությամբ ընդգծում է. «Ուստի ճահ է մեզ կոչել սմա հայր հասարակաց, և պատճառ կրկին լուսաւորութեան աղգիս Արամեան, և նախասկիզբ հեղինակ սրբոյ տանս մերոյ շինութեան և բարեկարգութեան... և արմատ անմահութեան, վայելչութեան, և պայծառութեան՝ աղգիս մերոյ։ Քանզի արդարև որով, և ի ձեռս աշակերտաց նորին՝ ոչ միայն վարկցես ի նորս Ջուղայ, այլ և ամենայն ախարհս Հայաստանեաց լուսաւորեալ պայծառացաւ. նա զմշտապատում, և զմիգամած խաւարն անգիտութեան՝ ի յարեգակնափայլ ճառագայթից յորոց բացացրուեալ հալածեցաւ ի յաղգէս Հայոց, և վերստին նորոգեցան՝ և շքեղ մակացուցեամբ յոյժ պերճացան»[51]։ Խաչատուր վարդապետի ծավալած լուսավորական գործունեությունը Ջուղայեցին համեմատում է Սահակի ու Մաշտոցի ու նրանց աշակերտների գործունեության հետ և գտնում է, որ Խաչատուր վարդապետի ու նրա աշակերտների գործունեությունը նույն դերն ու նշանակությունն ունեն ինչ որ նրանցը։ Ապա հպարտությամբ բացականչում է՝ «սա և իրայինքն իւր, լինիլ պայծառ և ուղիափայլ Արեգակունք տանս Ասքանազեան, որք եղեն խաւարահալածք տանս Թորգոմեան»[52]։

Այնուհետև նշում է, թե նրա նախաձեռնությամբ Ջուղայում հիմնվել է հայկական առաջին տպարանը և 1647 թ. այնտեղ տպվել է «Պարզատումարը», ապա գրում է նրա ստեղծագործությունների ու թարգմանությունների մասին[53]։ Ջուղայեցին Խաչատուր վարդապետին համարում է «հզօր սոփեստէս Աստուածաբան»[54]։

Ոչ պակաս հպարտությամբ է գրում Խաչատուր Ջուղայեցին նաև Հովհաննես վարդապետի մասին, որի հետ հաշվի են նստել «պարսից Սլեման և Հասէն» շահերը։

«Յոհաննէս ճգնազգեաց և քաջ Ախոյեան իմաստնայեղց վարդապետն,— գրում է Ջուղայեցին,—որ իւրով անհնիւ իմաստութեամբն և ճգնողական վարուքն գերազանցեաց արտօնութեամբ քան զհամայն խումբս վարդապետաց, որ առ ժամանակաւ իւրով էին և ոչ զոք երբէք իսկ գտաւ կամ երևեցաւ ի ժամանակին յայնմիկ ոսկեզօծք համեմատնմին։

51 Նույն տեղում, էջ 116—117։

52 Նույն տեղում, էջ 117։

53 Նույն տեղում, էջ 117—118։

54 Նույն տեղում, էջ 115։

Նա զի և ոչինչ իւիք գտաւ ընդհատ՝ կամ պակաս քան զնախնի լեալ Սուրբ վարդապետսն, որ ի զորոց իսկ ի գիրս պատմի, այլ ստուգութեամբ ասեմ ի Քրիստոս, և ոչ ստեմ. զի ամենայն իրօք եղև համանման նոցա, և թուի ինձ թէ առաւել ևս քան զնոսա վաստակեցաւ ի վերայ հօտին Քրիստոսի, որ ի մասին Պարսկաստանի։ Քանզի սա եղև անվանելի և անպարտելի հզօր ախոյեան ընդդէմ Պարսից անաստուածից, որ ի ձեռս երկնաձիր շնորհաց նորա պահեմք մինչև ցայսօր անստգիտ և անսայթաք զհաւատս մեր ուղիղ և ամբիծ... իսկ եթե նա չիցէր լեալ արդեօք ի ժամանակս Շահ սուլտան Հուսէին Արքայի Պարսից, ստուգիւ վարկեցարուք, զի փոքր մի ևս եղծեալ և կործանեալ էր զլուսածագ և զԱրփիածաւալ հաւատս մեր»[55]։

Այնուհետև Ջուղայեցին բերում է նշված շահերի, հատկապես վերջինիս հետ Հովհաննես վարդապետի բավական ձգձգված դավանաբանական դրույցներն ու վեճերը (էջ 155—218), ուր միշտ հաղթանակող է «սքանչելահրաշ»[56]։ Հովհաննեսը ու պարտվող, և ստիպված՝ հանդուրժող պարսից շահերն ու իմաստունները։

* * *

Ա. Առաքելյանը ճիշտ նկատում է, որ Ջուղայեցին նպատակ է ունեցել շարադրել Պարսկաստանի պատմությունը սկզբից մինչև իր օրերը, և նրա «Պատմությունը» հետաքրքրություն է ներկայացնում ոչ այնքան հայ ժողովրդի, որքան առաջին հերթին ընդհանուր պատմության (մենք կասեինք Մերձավոր Արևելքի պատմության —Լ. Բ.) համար, բայց Պարսկաստանի պատմության հետ սուղչված է հայ ժողովրդի պատմությունը որպես նրան հպատակ ժողովրդի։ Պարսկական թագավորների պատմության հետ կապելով այնտեղ ապրող հայ ժողովրդի կյանքը, նրա կրած տառապանքները, Ջուղայեցին իր երկը դարձնում է հետաքրքրական նաև հայ ընթերցողների համար և որոշ չափով ամբողջացնում հայության այդ հատվածի պատմությունը նշված ժամանակաշրջանում[57]։

Ջուղայեցին մոլի քրիստոնյա է և ջերմ հայրենասեր, նկարագրելով պարսկական շահերի ու պաշտոնյաների ավերածությունները ու բռնությունները, հարկերի ծանրությունը, կողոպուտը, իրավունքի ոտնահարումը, անլուր հալածանքներն ու խոշտանգումները, որ կրել է հայ ժո-

55 Նույն տեղում, էջ 153—154։

56 Նույն տեղում, էջ 219։

57 Ա. Առաքելյան. Նշվ. աշխ., էջ 603։

ղովուրդը, նա անտարբեր չէ, այլ զարհուրում է. «Ո՜հ, ո՜հ, տե՛ս Նազենի իմ, թէ՝ որքան չարիք առդիպեցան ազգիս հայոց, վասն ծովացեալ և անհուն մեղաց մերոց, և մեք տակաւին ոչ ըղգաստանամք. ահա արդարև զայսոսիկ լսելով զարհուրի սիրտ իմ, և սարսափեալ քստմնին ոսկերք իմ, և գրիչ իմ անկանի ի ձեռացս իմոց»[58]։

«Հորդահոս արցունքներով» նա աղաչում է, որ ղգաստանա հայ ժողովուրդը և դիմի ամենակարող գթած աստծուն, որպեսզի նա հաշտվի հայերի հետ և խղճալով նրանց, բարձրացնի հայերի թագավորության գահը, պերճ փառքով ճոխացնի իր ցրված մանուկներին, և վերստին գուրգուրալով ժողովի մայր Հայաստան՝ աշխարհի բարեբաձև և ամենաբաղձ ծոցը[59]։

* * *

Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից» երկն, իբրև ժամանակակցի ու ականատեսի գրած, չափազանց արժեքավոր ու ստուգապատում աղբյուր է Պարսկաստանի ու Անդրկովկասի XVIII դարի 30—70-ական թվականների ժամանակահատվածի քաղաքական պատմության, գահակալական ու միջֆեոդալական պատերազմների, հատկապես դարի 50—60-ական թվականներին երկրում ստեղծված անիշխանության տարիների ու Քերիմ-խանի՝ իր հակառակորդների դեմ մղած կռիվների պատմության ուսումնասիրության համար։

Այն չափազանց կարևոր աղբյուր է և Պարսկաստանի հայկական գաղթօջախի XVIII դարի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի, պարսիկ իշխողների վարած ներքին բիրտ քաղաքականության ու դրա հետևանքների, ազգային ու կրոնական հալածանքների, պալատական մեքենայությունների, ինչպես նաև Նադիր-շահի ու նրա տիրապետության պատմության ուսումնասիրման և լուսաբանման համար։

58 Ջուղայեցի, էջ 91, տե՛ս և Ա. Առամեյան, նշվ. աշխ., էջ 604։

59 Նույն տեղում։

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ

XVIII դարի երկրորդ կեսի հայ եկեղեցական, քաղաքական, դիվանագիտական ու մշակութային կյանքի ականավոր գործիչներից էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսը։ Նրա կաթողիկոսությունը տևել է 17 տարի (1763—1780 թթ.), մինչ այդ նա արդեն հայտնի էր իբրև ճանաչված ուսուցիչ, քարոզիչ, գիտնական ու մեծ եռանդով օժտված հոգևորական։ Նրա գրչին են պատկանում կրոնական, փիլիսոփայական ու պատմագիտական բնույթի բազմաթիվ աշխատություններ[1], որոնցից ամենաարժեքավորն է, իր տեսակում ուրույն՝ «Ջամբռ»-ը։

Իբրև էջմիածնի նվիրակ, նա եղել է Հնդկաստանում, անձնական կապեր է հաստատել այնտեղի հայ գործիչների հետ և հետագայում նրանցից ստացած նյութական միջոցներով (նվերներով) էջմիածնում հիմնադրել է տպարան, որն ամբողջ Հայաստանում առաջինն էր։ Դրանից հետո, նա հայ վաճառականների և հատկապես ջուղայեցի խոջաների աջակցությամբ, էջմիածնում հիմնել է նաև թղթի գործարան։

Սիմեոն Երևանցու ապրած օրերում մշակութային կյանքի զարգացման համար, նման ձեռնարկությունների ստեղծումը չափազանց դժվարին ու բարդ գործ է եղել, սակայն իր նախաձեռնություններում անդիջող կաթողիկոսը կարողացել է հաղթահարել բոլոր դժվարությունները և իրականացնել իր նպատակները։

Այդ նպատակները թելադրված էին ժամանակի պահանջով։ Հայրենասեր կաթողիկոսը քաջ գիտակցել է՝ ազատագրական շարժման զարթոնքի պայմաններում իր ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման, լուսավորության տարածման ու արմատավորման գործում տպագիր գրքի դերն ու նշանակությունը և դրանում էջմիածնի, իբրև հոգևոր կենտրոնի, անելիքները։

Դարի նախորդ կաթողիկոսների համեմատությամբ, Սիմեոն Երևան-

1 Տե՛ս Սիմեոն կաթողիկոս Երևանցի, «Ջամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 34։ Այսուհետև՝ Ջամբռ։

ցու գործունեության համար ժամանակը որոշ առումով նպաստավոր է եղել։ Նա հովանավորվել է քաղաքական զարթոնք ապրող Վրաստանի կողմից ի դեմս նրա Հերակլ գահակալի, որի թիկունքում կանգնած էր ռուսական հզորացող կայսրությունը։ Երևանի խանը տեսնում էր Հերակլի կողմից Էջմիածնին ցույց տրվող աջակցությունը, կաթողիկոսի հեղինակության բարձրացումը, ուստի հարկադրված, մեղմ հարաբերություններ էր վարում նրա հետ, ստիպված էր հաշվի նստել նրա հետ։ Ավելին, երբ վրացական բանակը 1768 թ. պաշարել է Երևանի բերդը, Հուսեին խանը «իւրովք մեծամեծօքն գրեալ աղաչանօք Հայրապետիս մերոյ՝ զի միջնորդեսցէ ի խաղաղութիւն։ Եւ Հայրապետս մեր գնացեալ առ Հերակլ արքայն, յորմէ և սիրով ընդունեցեալ մեծարի, և հրաւիրէ զնա յաթոռս ի յուխտ և ի պատիւ. և ապա համոզեալ զնա ի սէր և ի խաղաղութիւն ընդ Երևանցւոցն, առանց յամենայնի վնասատութեան ուղարկէ զնա խաղաղութեամբ յերկիրն իւր։ Քանզի կարի սիրով էին ընդ միմեանս Հայրապետն մեր և Հերակլ արքայն»[2], գոհունակությամբ գրում է Սիմեոնն իր մասին։

Գործելու համար ստեղծված, այդ համեմատաբար, նպաստավոր պայմանները թնավորել են կաթողիկոսին ծավալելու եկեղեցական, քաղաքական, շինարարական ու մշակութային հայրենանվեր եռանդուն գործունեություն։

Սմեոն Երևանցին մի շարք բարեփոխություններ է մտցրել եկեղեցու ներքին կյանքում։ Դրանցից ամենախոշորը տոմարի բարեկարգությունն էր, ըստ որի հայերը զատիկը պետք է տոնեն մյուս քրիստոնյա ժողովուրդների հետ միաժամանակ, դրանով իսկ վերջ տրվեց ծռաղատիկների շուրջը դարեր շարունակ տեղի ունեցող վեճերին[3]։

Երևանցին շինարարական մեծ աշխատանքներ է կատարել Էջմիածնում։ Տնտեսական նշանակություն ունեցող անհրաժեշտ շինություններ է կառուցել, բարեկարգել է վանքի տնտեսությունը, միաբանության կեցությունը[4]։ Նա ջանքեր չի խնայել պաշտպանելու մայր աթոռի ընդհանրական շահերն ամեն տեղ, ուր նրանք վտանգվում էին։ Մեծ համառությամբ և Հերակլի աջակցությամբ նա Էջմիածնին ենթարկեցրեց Գանձասարի կաթողիկոսին, հօգս ցնդեցրեց Պոլսի պատրիարքի, Սսի կաթողիկոսի և, իր խոսքով ասած, արևմտահայ մյուս «սևագլուխների» ձգտումները, որոնք գործադրելով նենգ ու խարդախ միջոցներ, կաշառելով

2 Նույն տեղում, էջ 43։

3 Ակ, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946, էջ 770; Ջամբռ», էջ 34։

4 «Ջամբռ», էջ 34—36։

թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին, ամեն կերպ ուղում էին արևմտահայության համար ստեղծել ինքնուրույն և անկախ կաթողիկոսություն, անջատվել Էջմիածնից։ Երևանցին այդ կապակցությամբ զայրույթով գրում է. «զի հատցի թունալի լեզուք նոցին՝ որք զմեծ զէն առեալ ինքեանց՝ որպէս թէ արծարծէին աստ և անդ ի յականջս օսմանցւոց, թէ ի յերկրէս օսմանցւոց զարդիւնսն ժողովեալ տանին ի յերկիրն Պարսից, որպէս և մինչև ցայժմ ունին զայս սովորութիւն օսմանցւոց կողմանց սևագլուխքն. որք ի խոշտանգիլն ի Էջմիածնանիստ կաթուղիկոսացն և ի նուիրակաց սոցին վասն անկարգութեանց իւրեանց, զայս յառաջ բերեն որպէս թէ յանառիկ ամրոց իմն ապաւինեալք»[5]։

Հայ եկեղեցու նախանձախնդիր կաթողիկոսը խիստ հալածանքներ է կիրառել կաթոլիկությանը հարած հայերի, հատկապես հոգևորականության նկատմամբ, որոնք պառակտիչ գործունեություն էին ծավալել հայ եկեղեցու դեմ։ Ըստ Երևանցու, կաթոլիկները՝ «ախթարմայք»-ները «հոտեցուցիչք երկրին» են, իսկ պատրիկների մասին էլ ասում է. «յորջացեալ էին անդ» (Ախալցխայում)։

Քաղաքներից, գավառներից Էջմիածին ուղարկված կաթոլիկություն ընդունած հայերին Սիմեոն կաթողիկոսը տանջել է մինչև որ ստացել է մեղայական, ապա արձակել՝ նրանց[6]։

«Հայրապետս մեր,— գրում է ինքը,— նոյնպէս և զանազան կերպիւ խոշտանգեաց գանիւ, բանտիւ, և բանիւք, վերջապէս ի բերանոցն էառ գիր հայերէն՝ նզովիւք և հաստատուն ուխտիւք»[7]։

Թերևս ճիշտ է Լեոն, երբ նկատում է, «Այս հավատաքննական գործունեությունը Սիմեոնի կաթողիկոսության ամենամռայլ կողմն է կազմում»[8]։

Առանձնապես մեծ է Սիմեոն Երևանցու ծառայությունները Էջմիածնի կալվածատիրական իրավունքների վերականգնման ու ամրապնդման գործում։ Նա բավական մեծ ջանքեր է գործադրել Էջմիածնից հափշտակված կալվածները վերադարձնելու, նոր կալվածներ ձեռք բերելու և, որ կարևորն է՝ կալվածատիրությունն օրինական փաստաթղթերով Էջմիածնի վրա հաստատելու համար։ Այդ նպատակով նա կազմել է կաթողիկոսության կալվածների մանրամասն ցուցակը, հին թղթերից հանած տեղեկություններով ցույց է տվել, թե երբ է այս կամ այն կալվածը դարձել Էջմիածնի

5 Նույն տեղում, էջ 95։

6 Նույն տեղում, էջ 42, 248։

7 Նույն տեղում, էջ 42։

8 Լեո, Նշվ. աշխ., էջ 771։

նի սեփականությունը, ինչ կալվածաթղթերով կամ թագավորական հրովարտակներով, ինչ վեճեր են եղել այդ կալվածների ու մյուս անշարժ ունեցվածքի շուրջը և այլ նման գործնական ու անհրաժեշտ տեղեկություններ։ Այդ բոլորը նա հավաքել է «Ջամբռ» անունով իր աշխատության մեջ, որ կարելի է անվանել, ինչպես Լեոն է կարծում, Էջմիածնի իրավական դրության հանրագիտարան[9]։

Սիմեոն Երևանցին ընդհանրապես ուժ ու եռանդ չի խնայել մայր աթոռի հեղինակությունն ու տնտեսությունն ամրապնդելու գործում և «Ջամբռ»-ն էլ գրել է հենց այդ նպատակով։

Նրա առաջին տասներկու գլուխներում Երևանցին շատ համառոտ և ընդհանուր գծերով տվել է հայոց եկեղեցու պատմությունը նրա հիմնադրման օրից մինչև իր ժամանակները, ընդգծելով այդ պատմության մեջ Էջմիածնի տեղը, դերն ու նշանակությունը։ Մեծ ջանասիրությամբ ձգտել է հիմնավորել հայ մյուս հոգևոր կենտրոնների (Սսի, Ախթամարի Գանձասարի կաթողիկոսությունների, Կոստանդնուպոլսի ու Երուսաղեմի պատրիարքարանների) նկատմամբ Էջմիածնի առաջնության և գերիշխող դիրք ունենալու իրավունքները։

Պատահական չէ, որ նա Եկատերինա կայսրուհուն գրած կոնդակի մեջ ընդգծում է, թե հայոց եղած բոլոր իշխանությունները հնազանդ են մայր աթոռին, սակայն այդ նրա ձգտումն ու նպատակն է եղել, իրականում, ինչպես իր մերձավոր նախորդները, այնպես և ինքը, հարկադրված հանդուրժել են, տեղի են տվել առանձին հոգևոր թեմերի անջատողական ձգտումներին և հենց ինքը բազմաթիվ փաստեր է բերում այդ մասին։ Նա դառնացած գրում է Պոլսի «Սևագլուխների» մասին, թե ինչպես նրանք Էջմիածնից անջատվելու համար պատրիարքարանը հարկատու են դարձրել և նրանց առաջնորդներն ընտրվել են սուլթանների հրամանով. «Վասն այսորիկ և յաճախեցան ի կողմունսն յանոսիկ թերահաւատութիւնք, ախթարմայութիւնք, և պէսպէս ապօրինավորութիւնք, և յաճախեն ևս օր ըստ օրէ։ Չի առաջնորդք նոցին տաճկական հրամանաւ նստին և ջանան միայն զհարկս արքունեացն տալ և զանձինս իւրեանց ճարակել։ Իսկ կաթուղիկոսն գոլով ընդ տէրութեամբն պարսից, ոչ այնքան կարէ իշխել ի վերայ նոցա, ի հալածել, ի տուգանել, և այլովք մարմնաւորօք պատժել, միայն բանադրել կարէ, այն ևս ոչ ինչ օգտէ, զի վտանգաւոր է իշխանութիւնն Օսմանցւոց, յորմէ վնասք յառաջանան քան թէ օգտութիւնք, և մանաւանդ ցեցն ի միջոյէ և ոչ յարտաքուստ»[10]։

9 Նույն տեղում։

10 «Ջամբռ», էջ 57։

Այնուհետև Երևանցին տալիս է նաև բուն Հայաստանում ստեղծված վիճակը, ցավով գրում է, թէ պարսկական կենտրոնական պետության քայքայման պայմաններում քաղաքների խաները ինքնագլուխ են դարձել և ոչ մեկից երկյուղ չունեն, սրանք նույնպես սկսել են հարձակվել իրար վրա, քանդում, ավերում են մեկը մյուսի երկիրը, նրանք գրեթե ամայացրեցին պարսից և հայոց երկրները։ Մի երկրից կամ նահանգից մի ուրիշը գնալը կամ տեղափոխվելը համարյա անհնարին էր, կապված մեծ դժվարությունների հետ։ Ամեն մի խանի իշխանության տակ գտնվողները պետք է մնային իրենց խանի մոտ։ Թե՛ պարսիկները և թե՛ հայերը իրենց խաների կամայականության և անձնական հաշիվների պատճառով օտարացել են և թշնամի դարձել միմյանց։ Պարսիկ աղաները սկսել են հայերից ոմանց բռնի տանել իրենց գյուղերում բնակեցնել ու ծառայեցնել։ Կաթողիկոսը, որ երբեմն ցանկացել է պատժել անկարգացած հայերից ոմանց, պարսիկ աղաները տեր են կանգնել նրանց և թույլ չեն տվել պատժելու[11]։

Ապա Երևանցին դառնացած բացականչում է. «Արդ լա՛ց զգլուխ կաթուղիկոսին, որ յայսպիսում ժամանակի պատահի՝ որպէս և եսս որ գրեմս ամբոխեցեալ մտօք և թշուառական կենօք»[12]։

«Ջամբռ»-ի երկրորդ մասի յոթ գլուխներում (13—19) Երևանցին տվել է Էջմիածնի տիրույթների և ընդհանրապես ամբողջ անշարժ ունեցվածքի ցուցակը՝ նրա տնտեսության յուրօրինակ պատմությունը։

Վերջին հինգ գլուխներում էլ (20—24) նա բերել է Էջմիածնի կալվածների և ընդհանրապես տնտեսության կապակցությամբ տրված պարսկերեն և թուրքերեն այն հրովարտակների հայերեն համառոտ բովանդակությունը, որոնք պահվում էին վանքի դիվանում։

«Ջամբռ»-ը կարևոր ու հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում XVIII դարի 60—70-ական թվականների հայ-ռուսական, հայ-վրացական հարաբերությունների, Պարսկաստանի ու Թուրքիայի ներքին կյանքի, կառավարման սիստեմի, ագրարային ու հարկային քաղաքականության, նրանց արքունիքների ու հայ եկեղեցական կենտրոնների փոխհարաբերությունների, կառավարման ապարատներում արմատացած արատավոր կողմերի ու մեքենայությունների մասին։

Այն որոշակի պատկերացում է տալիս XVIII դարում Սսի, Ախթամարի, Գանձասարի կաթողիկոսությունների, Կոստանդնուպոլսի պատ-

11 Նույն տեղում, էջ 57—58։

12 Նույն տեղում, էջ 58։

րիարքարանի, Երևանի նահանգի մի քանի վանական տնտեսությունների վիճակի, կաթոլիկ միսիաների ծավալած քայքայիչ գործունեության, հայ հոգևորականության շրջաններում արմատացած արատավոր բարքերի և այլ երևույթների մասին։

Երևանցին զայրացած գրում է, երբ ինքը դիմել է մի քանի վանքերի առաջնորդների. «Հարցանելն մեր զորպիսութիւն ինչ զվանից յայնցանեաց, մնային պապանձեալք, զի զճանապարհս գինետանցն միայն էին սերտեալք և ոչ զայլ ինչ»[13]։

Հայաստանի XVIII դարի տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրության համար չափազանց կարևոր աղբյուր հանդիսացող «Ջամբռ»-ի գրելու դրդապատճառների մասին Սիմեոն Երևանցին ասում է. «Եւ որքա՞ն առ այս՝ ծանի՛ր սիրելի ընթերցող, զի ի ձեռնարկելն իմ զայսմանէ՝ կարի և շատ տարակուսանօք և յոգւոց հանելով գրեցի. քանզի որոց ցանկայի և յուսայի գտանել, զորս և հաւաստեաւ գիտէի իսկ գոլ յԱթոռոջս, զբաղումս, և զբոլորէն ոչ գտի»։

Այնուհետև ընդգծում է. «Քանզի թէպէտ (հրովարտակներ— Լ. Բ.) տուողքն են այլազգիք և թշնամիք մերոյս կրօնի, սակայն՝ տուրք և հրամանագիրք նոցին են ըստ աշխարհիս օգտարարք, բուժիչք, և ապահովացուցիչք, որպէս ի յօձից թունաւորաց սպասեմք առնուլ զթրակէղս ի բուժումն պէս պէս ցաւոց։ Զայս վասն այսորիկ երկարեմ, զի և դու ի յունիլդ զգուշութեամբ պահեսցես զմնացեալսն առ քեզ։ Եւ մի՛ ասիցես թէ՝ այժմ այս ինչ ռաղամ (բախամ-հրովարտակ) անօգուտ է, և կամ թէ թագաւորքն ոչ գոն, զի՞նչ օգտեն հրամանք նոցա. զի պիտոյանան բազմիցս և իւրաքանչիւրոցն գոյ ժամանակ պիտանաւորութեան, որպէս մեք փորձեցաք բազմիցս։ Եւ մանաւանդ որքան թագաւորական գիր գտանի յԱթոռոջս, այնքան պատիւ է սմա, որքան առ յայս՝ բաւ լիցի խոհեմութեանդ»[14]։

Ինչպես տեսնում ենք, Սիմեոն Երևանցին նույն նպատակներն է հետապնդել ու արձանագրել, ինչպիսին իր ժամանակին հետապնդել է ու արձանագրել Սյունյաց մետրապոլիտ, ականավոր պատմագիր Ստեփանոս Օրբելյանը Սյունյաց թեմի կապակցությամբ։

Միայն Սիմեոն Երևանցին կարող էր, պարսկական տիրապետության պայմաններում, խիզախել համեմատություն անցկացնելու թագավորներից և օձերից ստացած օգուտների միջև։ Դառն օրերը նրան չեն վհատեցրել, նա համոզված է եղել, որ գալու են ժամանակներ, երբ բոլոր ռաղամները (հրովարտակները) պիտանի են լինելու և դրա համար էլ բոլորին կոչ է անում զգուշությամբ պահել իրենց մոտ եղած, իր ձեռքը չընկած ռաղամները։ Դրանով նա, կարծեք, հուսադրում է ժամանակակիցներին։ Այն կապակցությամբ, որ ինքը վանական շատ տնտեսությունների մասին գրելիս, տվյալների բացակայության պատճառով մեծ դժվարությունների է հանդիպել, Երևանցին կարծեք նորից հուսադրում է ժամանակակիցներին ու գալիք սերունդներին՝ ասելով, թէ պետք է կանոնավորել վանական տնտեսությունները, ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթերը, ունեցվածքի ճիշտ հաշվառում կատարել ու խնամքով պահպանել, որովհետև «յուսամքք, զի իցէ թերևս երբեմն հարկեցեալ ի մարդասիրութենէ իւրմէ (Աստուծո—Լ. Բ.), և խոնարհեալ ի յաղաչանս իւրոց ծառայից և իւրահաճոյ սրբոցն (յորոց անուն կառուցեալք են այնք Եկեղեցիք), այց արասցէ և վերանորոգեսցէ զհնութիւն խղճալոյ Ազգիս մերոյ և վանօրէիցս»[15]։

Սիմեոն Երևանցու ամենից նշանավոր գործն այն էր, ինչպես միանգամայն ճիշտ նշում է Լեոն, որ նա շարունակեց և զարգացրեց իր նախորդի՝ Հակոբ Ջուղայեցու սկսած հարաբերությունները ռուսաց արքունիքի հետ[16]։ Ռուսաստանի հայկական համայնքներից մի թեմ կազմելու և Էջմիածնի իրավասության տակ դնելու նպատակով, Սիմեոն կաթողիկոսը 1766 թ. Թիֆլիսեցի Դավիթ վարդապետի միջոցով Պետերբուրգ է ուղարկել Եկատերինա կայսրուհուն գրած իր կոնդակը և իբրև նվեր՝ սրբերի մասունքներ։

Այնուհետև գրում է, որ թագուհին սիրով ընդունել է կոնդակը և ընծան, կատարել է ավելի քան խնդրածը՝ հրամայել է հրովարտակ գրել իր ամբողջ տերության և հայոց ազգի համար, հայտնելով կոնդակի բովանդակության, ստացած ընծայի, իր կողմից մեծ սիրով ու շնորհակալությամբ ընդունման մասին։ ապա կաթողիկոսի խնդիրքը կատարելու հրամանը և որոշումը թե՝ առանց Էջմիածնի հայրապետի հրամանի, ոչ մի եպիսկոպոս և կարգավոր իր երկիրը իրավունք չունի մտնելու և ուրիշ սիրալիր խոսքեր։ Այդ հրովարտակը թագավորը ոսկե գրով գրել է տվել մագաղաթի վրա և նույնը հրամայել է թարգմանել հայերեն և նույնպես գրել մագաղաթի վրա։ Հետո երկուսը, այսինքն՝ ռուսերենը և հայերենը

13 Նույն տեղում, էջ 271—272։

14 Նույն տեղում, էջ 209—210։

15 Նույն տեղում, էջ 271։

16 Լեո, Նշվ. աշխ., հ. Գ, էջ 773։

իրար հետ կապել է թելով, կապի վրա դրել կայսերական մեծ կնիքը, «ինչպես տեսնում ես,— մի տեսակ հպարտությամբ ավելացնում է Երևանցին,— որ կա Աթոռումս (իմա՝ կաթողիկոսարանում) փակի տակ դրված հատուկ արկղում»[17]։

Սիմեոնը գրում է նաև, որ կայսերական հրովարտակի հետ Եկատերինան իրեն, իբրև նվեր, ուղարկել է երեք թոփ թանկարժեք կտորներ։ «Եւ այսպես,— գոհունակութեամբ ընդգծում է Երևանցին,— 1763 թ. արար զբոլոր երկիրն զայն հաստատապէս վիճակ Տէրունի սրբոյ Աթոռոյս՝ արքունական հրամանագրով... Եւ յայնմ հետէ եղև ընտանութիւն և մեծ սէր թագաւորին Ռուսաց և նախարարաց նորին՝ և եպիսկոպոսացն, առ սուրբ Աթոռս, և առ յազգս մեր որպէս տեսանես զգրեանսն նոցին»[18]։

Սիմեոնի վերջին այս վկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ նա Եկատերինային դիմել է ոչ միայն Ռուսաստանի հայկական համայնքներից առանձին թեմ ստեղծելու մասին, այլև ստանալու հովանավորություն էջմիածնի և հայերի նկատմամբ ընդհանրապես։ Նա նշում է, որ «բարենախանձ Հայրապետս այս գրեաց առ Եկատարինէ թագաւորն Ալէքսիովնայ Ռուսաց երկարապէս զորպիսութենէ Աթոռոյս, և զհնազանդութենէ յամենայն յիշիանութիւնս եղելոց Հայոց՝ Սմա, և զապստամբութենէ միայն յայն յերկիրն եղեալ Հայոցն և զայլս այսպիսիս»[19]։

Այնուհետև ընդգծում է նաև. «և լիովին և քան զխնդրեալն առաւել կատարէ զխնդիրն»։ Կայսրուհու այդ հրովարտակի կապակցությամբ Լեոն նկատում է, որ այն «ոչ միայն էջմիածնի թեմ էր հրատարակում Ռուսաստանի բոլոր հայ գաղթականությունները, այլև վկայում էր, թէ կայսրուհին իր հովանավորության տակ է ընդունում կաթողիկոսին. հայ յուղարարներին և հայոց ամբողջ ազգը, որոնց ամենքին հուսադրում է իր ողորմությամբ»[20]։ Լեոն այնուհետև ասում է, թե որքան բարձր էր համարում Սիմեոնն այդ հուսադրությունը և թե առհասարակ որքան անկեղծ էր նա իր զգացումների մեջ դեպի Ռուսաստանը, կարելի է եզրակացնել նրանից, որ նա գրեց հատուկ մաղթանք ռուսաց ցարերի և նրանց տան արևշատության համար, և այդ մաղթանքը կատարվում էր ռուսաց պետության ենթակա բոլոր հայ եկեղեցիներում մինչև 1917 թ.։ Բացատրել այդ խոշոր հավատարմական ցույցը միայն նրանով, թե Ռուսաստանի հայերի առաջնորդական հարցը հաջող լուծում էր ստացել՝ անկարելի է։

17 «Զամբռ», էջ 40։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, էջ 39։

20 Լեո, Նշվ. աշխ., հ. Գ., էջ 773։

Լեոն դտնում է, որ մենք նկատի պիտի առնենք և այդ ժամանակի քաղաքական հանգամանքները։ Նույն այն միջոցին, երբ ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչը գտնվում էր Պետերբուրգում, Եկատերինան պատրաստվում էր պատերազմի՝ Թուրքիայի դեմ։ Իսկ 1769 թվին ռուսաց գործակալները Բալկանյան քրիստոնյա երկրներում և Վրաստանում ցրում էին կայսրուհու կոչը, որով քրիստոնյա ժողովուրդները հրավիրվում էին ապստամբության, Եկատերինան քրիստոնյաներին խոստանում էր ազատություն՝ անհավատների լծից։ Հերակլն ընդունեց այդ առաջարկությունը, և 1770 թ. ռուսաց մի զորագունդ մտավ Վրաստան ու միանալով Հերակլին պատերազմական գործողություններ սկսեց Թուրքիայի դեմ։ Մեծ հույսեր էին ծնվում Արևելքի տառապող քրիստոնեության համար, և հայերը չէին կարող անմասն մնալ այդ հույսերից։ Ըստ Լեոյի, այդ շատ կարևոր ժամանակներում Սիմեոն կաթողիկոսի կողմից Ռուսաստանի հայոց առաջնորդության հանձնումը իր սշակերտ Հովսեփ եպիսկոպոս Արղությանին մի շատ խոշոր քաղաքական քայլ էր։ Արղությանն, իբրև Սիմեոնին շատ մոտիկ մարդ, անշուշտ շատ լավ գիտեր նրա քաղաքական հայացքները[21]։ Մենք կասեինք նաև նպատակները։

Երևանցին մեծ երախտագիտությամբ է գրում XVII—XVIII դարերի հայ կաթողիկոսների մասին սկսած Մովսես Սյունեցուց մինչև ինքը, հանգամանորեն բնութագրում է նրանց, ցույց է տալիս յուրաքանչյուրի ծավալած եկեղեցական, քաղաքական, շինարարական և մշակութային գործունեությունը[22]։

Միանգամայն ճիշտ է նշված հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի IV հատորում, որ «Անշարժ կալվածքների առուծախի, եկեղեցական տնտեսությունների, վարձկան մշակների և այլ բազմաթիվ երևույթների մասին «Զամբռ»-ի մեջ գրանցված տեղեկությունները մեծ արժեք են ներկայացնում Հայաստանի տնտեսական կյանքի պատմության համար։ Այդ իմաստով Սիմեոն Երևանցու աշխատությունը հայ պատմագրության կարևորագույն հուշարձաններից է»[23]։

21 Նույն տեղում։

22 «Զամբռ», գլուխ Դ., էջ 21—33։

23 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 505։

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵԲԻ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ

XVII դարի արևմտահայ ազգային-հասարակական կյանքում, հատկապես Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի հայկական համայնքներում աչքի ընկնող դեր է կատարել ժամանակի ամենաեռանդուն հասարակաքաղաքական գործիչ, պատմաբան և գրող Երեմիա Չելեբի Քյոմուրճյանը։ Նա ծնվել է Կ. Պոլսում 1637 թ., քահանայի ընտանիքում, մահացել է 1695 թ.։ Նրա ուսումնառության մասին որոշակի ոչինչ հայտնի չէ, գիտենք միայն, որ սկզբնական կրթությունը ստացել է Կ. Պոլսի Ս. Մարգիս եկեղեցում Հովհաննես քահանայի մոտ, ուր և 14 տարեկանից եղել է դպիր և սարկավագ։ Հետագայում 18—19 տարեկան հասակում, հակառակ հոր ցանկության, որն որոշել էր նրան էլ հոգևորական դարձնել, նա վերջնականապես հրաժարվում է սքեմից և ողջ կյանքում մնում աշխարհական։

Հակառակ Ն. Ակինյանի այն կարծիքին, թե իբր Քյոմուրճյանն իր ուժերը տկար է համարել եկեղեցական գործին նվիրվելու համար[1], Վ. Թորգոմյանն ու Լեոն հանգել են, մեր կարծիքով, ճիշտ եզրակացության։ Ելնելով Քյոմուրճյանի մատենագրական ժառանգությունից, Վ. Թորգոմյանը գրել է, թե նա վաղ հասակից ականատես լինելով ժամանակի եկեղեցականների պորտաբույծ, զեխ կյանքին, նրանց «ամուլ կենցաղին» ու «ազգակործան», «վատթար» գործերին, չի ցանկացել «ասպարեզակից» լինել նրանց, մանավանդ որ նրա խելահասության տարիները համընկել են Էջմիածնի, Երուսաղեմի, Սսի և Կ. Պոլսի աթոռների շուրջը մղվող շահադիտական պայքարին[2]։

Լեոն էլ նշում է, թե «նա չուզեց մտնել հոգևորականության շարքերը, և այս, անշուշտ, այն պատճառով, որ նա պատվազգաց մարդ էր, իսկ այն ժամանակվա հայ հոգևորականությունը, մանավանդ Կ. Պոլսում, այնքան արատավորված ու փչացած էր, այնքան զրկված բարոյական

1 «Հանդէս ամսօրեայ», 1933, № 1—2, էջ 106—107։

2 Ստամպօլոյ պատմութիւն, հրատարակեց և ծանոթագրեց Վ. Թորգոմեան, Վիեննա, 1913, տե՛ս Թորգոմյանի գրած ուսումնասիրությունը, էջ 151։

զսպանակներից, որ կազմում էր հայ ազգի մեծագույն դժբախտություններից մեկը։ Երեմիան չէր կարող ապրել կղերական այդ խեղդող մթնոլորտում... թէ՛ իր և թէ՛ հասարակաց հավատը փրկելու համար՝ նա շատ փորձեր արավ կռվելու հոգևորականության ախտերի դեմ և այս կռվի ասպարեզում նա խիստ հայտնի դարձավ իբրև հասարակական գործիչ»[3]։

Երեմիայի մատենագրական ժառանգությունը վկայում է, որ նա եղել է ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը։ Ճիշտ է նկատել Վ. Թորգոմյանը, որ Երեմիան ստացել է անձկամիտ կղերականության ազդեցությունից ազատ դաստիարակություն ևս[4]։

Կրոնական գիտելիքներից բացի Քյոմուրճյանը սովորել է եկեղեցական երաժշտություն, տիրապետել է արևելյան և արևմտյան մի քանի լեզուների, գրել է կրոնական, պատմական, աշխարհագրական, քարտեզագրական բազմաթիվ աշխատություններ, գրական ստեղծագործություններ, նամակներ, ուղերձներ, ողբեր ու գանձեր։

Բացի այդ, նա հայերենից թուրքերեն է թարգմանել «Նոր կտակարանը», «Հին կտակարանի» որոշ մասեր, Դավթի սաղմոսները, Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը և այլ աղոթքներ ու քարոզներ[5]։

Քյոմուրճյանը թուրքերեն է թարգմանել նաև իր գրած «Հայոց պատմությունը», որի բնագիրը չի պահպանվել։ Թարգմանությունը, ինչպես գրում է Մ. Չամչյանը, նա կատարել է թուրք «գրագետների խնդրանքով»։ Հ. Սահակյանը գտնում է, որ նա օգտվելով առիթից նպատակ է ունեցել թուրք մտավորականությանը ծանոթացնել հայոց պատմության ամենածաղկուն դարաշրջանների՝ Արշակունիների, Բագրատունիների և Կիլիկյան հայկական թագավորությունների հետ, ընդգծել Հայաստանի երբեմնի հզորությունը[6]։ Այս կապակցությամբ Մ. Չամչյանը գրում է. «Թարգմանեաց եւ ի խնդրոյ գրագիտացն տաճկաց ի լեզուն նոցա զպատմութիւն Խորենացւոյն քաղուածով, ընդ նմին եւ զհամառօտ տեղեկութիւն ինչ ի վերայ Բագրատունեաց եւ Ռուբինեանց»[7]։

Մ. Չամչյանը թվարկելով Քյոմուրճյանի աշխատությունները նշում է նաև, որ «Գրեաց եւ ի խնդրոյ դեսպանին ալամանաց ի վերայ աշխարհաց պարսից, հնդկաց եւ անատոլիոյ, եւ ընդարձակ եւս ի վերայ Հայաս-

3 Լեո. Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946, էջ 367—368։

4 Վ. Թորգոմյան, նշվ. ուսումնասիրությունը, էջ 150—151։

5 Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1784, էջ 723։

6 Հ. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964, էջ 42—43։

7 Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 723։

տանու...» նույն Մ. Չամչյանի վկայությամբ Քյոմուրճյանը «թարգմանեաց եւ բազում ինչ ի յունաց եւ ի լատինացւոց ի հայս»[8]։

Նրա ստեղծագործություններից օգտվել են ու նրա մասին գրել Մ. Չամչյանը, Ղ. Ինճիճյանը, Տ. Պալյանը, Գ. Զարբհանալյանը, Ղ. Ալիշանը, Մ. Մաղաք-Թեոփիլյանցը, Հ. Թորոսյանը, Լեոն, Ս. Երեմյանը, Գ. Մրմրյանը, Ա. Զորանյանը, Ն. Ակինյանը, Վ. Թորգոմյանը, Մ. Նշանյանը, Աշ. Հովհաննիսյանը, Հ. Սահակյանը և ուրիշներ[9]։

Կրոնական գիտելիքների ձեռք բերման գործում Քյոմուրճյանին մեծապես օգնել են ժամանակի նշանավոր հոգևոր գործիչներ Եղիազար Այնթափցին և Մարտիրոս Ղրիմեցին։ Նրա խնամակալներն են եղել սկզբում մեծահարուստ քեռին՝ Մահտեսի Ամբակումը, որի մահից հետո՝ ավելի մեծահարուստ Աբրահամ (Ապրո) Ջելեբին, երկուսն էլ պոլսահայ գաղութի նշանավոր դեմքերից էին։ Ապրելով ու դաստիարակվելով նրանց տներում, եռիտասարդ Երեմիան հաճախ է հանդիպել ժամանակի հայ և այլազգի մի շարք նշանավոր ու բարձրաստիճան հոգևոր ու աշխարհիկ գործիչների։ Նրանց միջավայրում, դեռ պատանի հասակից, Երեմիան ականատես է դարձել բազմաթիվ գործարքների ու միջամուխ եղել եկեղեցական—քաղաքական խնդիրներին[10]։

Քյոմուրճյանի հասարակական գործունեությունն սկսվել է 1660-ական թվականներից և տևել է մինչև 1680-ական թվականները։ Նա նշանակվել է Կ. Պոլսի պատրիարք Մարտիրոս Ղրիմեցու նոտար և պատրիարքության խորհրդական[11]։

Այդ գործունեության ժամանակաշրջանը արևմտահայության համար թերևս ամենից ծանրն ու մղձավանջայինն է եղել։ Այն ընդգրկել է Երուսաղեմի և Էջմիածնի կաթողիկոսական աթոռների շուրջը ծավալված 20-ամյա համառ պայքարի ժամանակահատվածը։ Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթափցին, օգտագործելով արևմտահայ բարձրաստիճան հոգևորականության և առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների՝ խոջաների որոշ մասի դժգոհությունն Էջմիածնի համընդհանուր կաթողիկոսությունից, նպատակադրվել էր արևմտահայ եկեղեցին անջատել Էջմիածնից և ստեղծել հակաթոռ կաթողիկոսություն։ Քյոմուրճյանն Այնթափցու այդ պառակտիչ գործունեության մեջ տեսնում էր իր պատրանքների խորտակումը, քանի որ ըստ նրա, հակաթոռ կաթողիկոսությունը կնպաստեր հայ ժողովրդի արևելյան ու արևմտյան հատվածների մասնատմանը և դրանով դյուրին կդարձներ Օսմանյան կայսրության ձուլարարական քաղաքականության իրականացումը։

Այս կապակցությամբ Լեոն գրում է. «Երեմիա Ջելեպին Կ. Պոլսում մի ամբողջ շարժում ստեղծեց, ինքն անցավ նրա գլուխը, որպեսզի կարողանա ետ կանգնեցնել սանձարձակ հոգևորականին (իմա՝ Այնթափցուն—Լ. Բ.) իր վնասակար ձեռնարկությունից»[12]։ Սակայն Երեմիայի ջանքերն արդյունք չեն տալիս։ 1664 թ. Այնթափցուն հաջողվում է մեծագին ընծաներով կաշառել Օսմանյան կայսրության արքունիքի պաշտոնյաներին ու դառնալ հակաթոռ կաթողիկոս։ Այդ իրողությունը չափազանց զայրացրել է Քյոմուրճյանին։ Ելնելով ազգի համընդհանուր շահերից նա պաշտպանել է Հակոբ Ջուղայեցուն, ցույց է տվել, որ այդ պայքարի հիմքում դրված են եղել անձնական շահադիտական ակնակալություններ և դատապարտել է բոլոր նրանց, ովքեր հետապնդել են նման նպատակներ, անկախ դիրքից ու դեմքից։ Նա, որ երիտասարդ հասակում համակրանք էր տածել Այնթափցու և նրա ոխերիմ թշնամի Մարտիրոս Ղրիմեցու նկատմամբ, չի խնայել անգամ նրանց։ Հ. Սահակյանը նկատում է, որ Հակոբ Կաթողիկոսի մահվան առթիվ գրած ողբում, այլաբանորեն վերլուծելով հակաթոռ կաթողիկոսության դեմ Մարտիրոսի մղած պայքարի հանգամանքները, Քյոմուրճյանը ցույց է տալիս, որ Հակոբ Ջուղայեցուն խանգարել է ոչ միայն Եղիազարը այլև ինքը՝ Մարտիրոսը[13]։

Ոմն ձախմէ զշարվալ և սատան կանգնեալ,
Ի գլուխ մխեցեալ.
Ոմն յաջմէ ձախեալ, բարեկամացեալ,
Գլխոյս զվնաս բերեալ[14]։

Նույն ողբում նա սուր ու մերկացնող բառերով շեշտել է Եղիազարի և Մարտիրոսի անձնական շահադիտական նկատառումները.

Նախանձու մոլեալ, ընդ միմեանս բախեալ,
զԳլուխս պատճառ եղեալ,
Ընդ փառս նկրտեալ, ընդ պատուս ագահեալ
զԳլուխս զիջեցուցեալ[15]։

---

8 Մ. Չամչյան, Նշվ. աշխ., հ. Գ, էջ 723։

9 Տե՛ս սույն աշխատության վերջում տրված համառոտ մատենագիտությունը։

10 Հ. Սահակյան, Նշվ. աշխ., էջ 13։

11 Վ. Թորգոմյան, Նշվ. ուսումնասիրությունը, էջ 152։

12 Լեո, Նշվ. աշխ., հ. Գ, էջ 368։

13 Հ. Սահակյան, Նշվ. աշխ., էջ 24։

14 Հ. Սահակյանն իր գրքի 24-րդ էջի 47-րդ ծանոթագրության մեջ գրում է, որ այդ ողբը հրատարակող Ն. Ակինյանը նշել է, թե ձեռագրի լուսանցքներում Քյոմուրճյանը ծանոթագրություն-բացատրություններ է գրել, կոնկրետ առաջին «Ոմն»-ի մոտ գրված է եղել «Եղիազար», երկրորդ «Ոմն»-ի մոտ՝ «Մարտիրոս»։

15 Հ. Սահակյան, Նշվ. աշխ., էջ 24։

Քյոմուրճյանը խիստ քննադատել ու մերկացրել է և բոլոր նրանց, որոնք երկու կաթողիկոսների հակամարտությունը խաղաղեցնելու պատրվակով, փաստորեն, աշխատել են իրականացնել իրենց փառամոլական ձգտումները[16]։

Իր «Տարեգրական պատմության» մեջ Քյոմուրճյանը գրել է. «Ոմանք յաւուրս յայսորիկ մտին ի մեջ երկուց կաթողիկոսացն իբր զի խաղաղացուսցեն և զի չէր անկեղծաբար, այլ փառամոլութեամբ և տգիտաբար և ես ղանուն իւրեանց վերիվերոյ բարձրացուցանել կամէին. եթէ գերագոյն ցուցեալքն ոչ կարացին զհունս խռովութեանց գտանել, մեք մեզէն գտցուք ասելով։

Պոսոպրախտ բանիւք և սնոտիասպաս պարծանօք զմեծաբանութիւնս խօսէին ուր և երթային, և այլ աշխարհ գրեալ ծանուցանէին։ Եւ ահա այսորիկ են ազգիս հայոց իբրու արժանիս յիշատակի՝ արարք և խելք հանճարոյ և ի գիտութիւն յոտից մինչև ցգլուխ»[17]։

Այնուհետև դատապարտելով եկեղեցական վերնախավի ու նրանց գործակալների՝ նվիրակների շարաշահումներն ու գոփողականությունը Քյոմուրճյանը ծաղրանքով գրում է. «Մեք կոյր, մեք խուլ, մեք համր մինչև ցայսօր անարժան և նա լայեղ առ ի տեսանել և ի լսել և ի խօսել, մեք մուֆլիս (աղքատացած, սնանկացած— Լ. Բ.), նոքա խօճէքի, մեք ռամիկ և ռամկածին և պարտատէր. նոքա բառացի հարուստ և ազնուորդի և շահարար շինարար»[18]։

Վերը նշված ողբում նա մեծ զայրույթով է գրում նաև ժամանակի մեծահարուստների, առանձնապես Հակոբ Ջուղայեցու վարկատու ագուլեցի և ջահկեցի խոջաների մասին, որոնք անընդհատ նեղում էին նրան և իրենց պարտքերն ու տոկոսներն էին պահանջում։ Դրանք էին Միրզան, Եսրովը, Աստվածատուրը և Պնեաթը, որոնց մասին և գրում է.

Փասքուսաց դիպեալ, որք խորամանկեալ
զՍուրբ միշտ նենգեալ.
Բժիշկ իբր ցուցեալ, զչեղս միշտ մատուցեալ,
զախտն ծանրացուցեալ.
Սուրբս ապուշ մնացեալ, միամիտ վարեալ,
զարտաքնոցն չգիտեալ.
Ազգիս բողոքեալ, զդատաստան խնդրեալ,
զոչինչ շահեցեալ...[19]։
. . . . . .
...Բռնի աստ բերեալ, միշտ դաւաճանեալ,
Դատ դուռ մատնեալ.
Զհամարս պահանջեալ, զտոկոսս յարարարդեալ
Զպարտս բազումս խուզեալ.
Ցեցքն ևս զօրացեալ, զոսկերսն միշտ ծրծեալ
Մինչ յուղեղն հասեալ[20]։

Քյոմուրճյանն անարգանքի սյունին է գամել հատկապես մեծ հարստությունների տեր Անտոն Չելեբիին. ցույց տվել նրա նենգությունն ու ամբարտավանությունը. «Քանզի եօթն շարիք ծրարեալ էին ի սիրտ նորա և դարանակալ էր աղքատաց և տնանկաց և պարզամտաց՝ ձգել յորոգայթ իւր խոնարհեցուցանել ընդ լծով ձեռին իւրոյ, որպէս և զքեզ արար», 1676 թ. Քյոմուրճյանը գրել է Եղիազար Այնթափցուն և շնչտել, «եւս առաւել քոյդ օրինակաւ տիրել ի վերայ տնանկաց, տառապեցուցանել յորսանս իւր յամբարտաւանիլն և յանգոսնիլն իւրում»[21]։ Իր «Օրագրութիւն»-ում էլ նրա մահը համարել է «ապստամբելոյն Աստուծոյ բարձումն ի միջոյ և վաղափուլ կործանումն ամբարտակին»[22]։

Աշ. Հովհաննիսյանը նշում է, թէ «Ազգի և եկեղեցու համար ստեղծված կացությունից Քյոմուրճյանը ելք չէր որոնում պայքարող կողմերից որևէ մեկի հաղթության մեջ։ Չէր կամենում նա նաև այդ ժամանակ հանդես եկած մի երրորդ խմբակցության, բախվող հոսանքների արանքում խուսանավող Սարգիս Թոխատեցի վարդապետի խմբակցության հաղթությունը,— «Կաթոլիկ և հերձուածող Ֆռէնկ և հայ աղճատանօք»—այս բառերով է բնորոշում Երեմիան այդ խմբակցության մարդկանց։ «Թող որ աղճատին ի լեզուս այլազգեաց և կատարածն ո՞վ գիտէ թէ ո՞ւր նկատելոց և դադելոց, որոյ եղև առիթ Սարգիս ոմն Թոխատեցի, մեք զմեր ցաւն ունէաք, և այդ զսկիզբն երկանց կասկածեալ, շուարեալ մնացաք, մէկն օրհնեց, մէկն անիծեց, մէկն այլ եկաւ հաւատէն հանեց»[23]։

Աշ. Հովհաննիսյանը նկատում է, որ Քյոմուրճյանը չէր առաջնորդվում տարամերժության զգացմունքով, այլ կամենում էր սոսկ նշավակել հայ

16 Նույն տեղում, էջ 23։

17 Գ. Գալեմքյարյան, Կենսագրութիւններ, Վիեննա, 1915, էջ 76։ Տե՛ս և Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրային մտքի պատմության, հ. 2, Երևան, 1959, էջ 159—160։

18 Նույն տեղում։

19 Հ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 26։

20 Նույն տեղում։

21 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 160։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում։

գործիչներից ոմանց օտարահաճությունը. «Ոմանցդ սիրելեաց յայտնի է,— գրել է նա,—որ ժամանակս կենաց մերոց ընդ այլազգիս տրամաբանութեամբ անցուցեալ եմ մինչև ցայսօր, ըստ մարդկութեան ասեմ, զի ոչ ես քննեմ զդաւանունքս նորա այսօր, այլ գրեմ թէ զինչ է եկեղեցւոյ մերում պակասութիւն և եկեղեցականաց և կարգաւորաց մերոց և հայրապետացն»[24]։

* * *

Միանգամայն իրավացի է Հ. Սահակյանը, որ Քյոմուրճյանի հասարակական գործունեությունը կարող է ճիշտ գնահատվել միայն այն դեպքում, երբ պարզ լինեն այդ գործունեության դրդապատճառները, այն սկզբունքները, որոնցով պայմանավորվել է նրա այս կամ այն քայլը, որ Քյոմուրճյանի աշխարհայացքը պարզելուն ամենից առաջ, և թերևս ամենից լավ, օգնում են հենց նրա ստեղծագործությունները, հատկապես պատմական-հասարակական բնույթի երկերը[25]։ Այդ իմաստով, որպես կարևոր աղբյուրներ Սահակյանը նշում է պատմագրի «Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց Թագաւորացն», «Տարեգրական պատմություն» երկերը, «օրագրությունը», ինչպես նաև մի շարք նամակները, ուղերձներն ու գանձերը։

Ըստ Հ. Սահակյանի, Քյոմուրճյանի աշխարհայացքի ձևավորման, կազմավորման գործում առաջին և ամենաուժգին ազդակը հանդիսացել են Թուրքական տիրապետության տակ ապրող հայության ծանր վիճակն ու ազգային ինքնության կորստի վտանգը, որը և պայմանավորել է նրա աշխարհայացքի ամենահիմնական գիծը՝ հակապետական դիրքորոշումը[26]։

Ժամանակագրական առումով Քյոմուրճյանի պատմական երկերից առաջինը «Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ օսմանցոց Թագաւորացն» աշխատությունն է։ Նրանում տրված է Օսմանյան կայսրության 400 տարվա պատմությունը, սկսած հիմնադրման օրից մինչև պատմագրի ապրած օրերը, գրված չափածո։ Երկում շարադրված է օսմանյան սուլթանների ու կարևոր իրադարձությունների պատմությունը, նկարագրված են կայսրության վարած պատերազմները Արևմուտքում և Արևելքում, Թուրքերի մարտական տեխնիկան։ Երկը արժեքավոր ու արժանահավատ նյութ է պարունակում XVI—XVII դարերում Թուրքիայում գոյություն ունեցող վարչակարգի. հարկային սիստեմի, սուլթանների վարած ներքին ու արտաքին

24 Տե՛ս նույն տեղում։

25 Հ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 14։

26 Նույն տեղում, էջ 15։

քաղաքականության, կայսրությունում ապրող ժողովուրդների՝ բուլղարների, հույների, հրեաների, ալբանացիների, արաբների ու հատկապես արևմտահայության քաղաքական ու սոցիալական ծանր դրության, աղքատության և ժողովուրդների ազատագրական ընդվզումների փորձերի մասին, ինչպես նաև պետական ապարատի, պալատական հեղաշրջումների, Թուրք ավագանու և Թուրք ժողովրդի հակամարտությունների, արքունիքում և պաշտոնեության շրջաններում տիրող արատավոր բարքերի, չարաշահումների, կաշառակերության մասին։ Առանձնապես ընդգծված ձևով է տրված XVI—XVII դարերում պարբերաբար կրկնվող դինվորական խռովությունների ու ապստամբությունների ու դրանց պատճառների մասին։ Նա ցույց է տվել կայսրության քաղաքական, սոցիալ-տնտեսական ու պետական ամբողջ սիստեմի ճգնաժամային վիճակը։

Քյոմուրճյանը ընդգծված ձևով ցույց է տվել կայսրության ներքին քաղաքականության, արտաքին պատերազմների, ազգային ու կրոնական հալածանքների, ձուլարարական նպատակադրումների ու այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումների աղետալի ու կործանարար հետևանքները նվաճված ժողովուրդների այդ թվում և առանձնապես հայ ժողովրդի համար։ Ի դեպ նրա համակրանքը ամբողջապես, անկախ ազգային պատկանելիության ու դավանանքի, աշխատավոր ժողովրդի, հասարակության ստորին խավերի կողմն է եղել։ Իր «Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ...» աշխատության մեջ նա բերել է մի դավառի Թուրք գյուղացիների դանգատը սուլթանին, ուր ասված է.

«Օճաղ աղայք զոր տիրէին.
Ընդ արքունեացն և նուաճեալ,
Ռամիկք ի շատ հարկուց խոցեալ
Եւ զսիաուշն ընդ իւրեանս առեալ,
Եւ մուծին առ Թագաւորն,
Ասեն վեղիրդ զմնդ վշտացուցեալ,
Աղայից բանիւք շարժի,
Եւ առ համայնս անիրաւեալ[27]։

Նկարագրելով սուլթանների որսատեղերից մեկում որսը դեպի որսորդները և շները քշելու համար վարձված աղքատների վիճակը մեծ հումանիստ Քյոմուրճյանը վայրույթով գրում է.

«Զգիշեր և զցերեկ մնացեալ՝
Մարդիկքն որ անդ են հաւաքման,
Իւրեանց ստեղծողին յայտնի՝

27 Տե՛ս նույն տեղում, էջ 47—48։

Թէ զինչ վիշտ ի ցրտոյն կրրման։
Կրզկրեալ, կրծկեալ, կոճղ անկեալ
Ի սառնէն որք չոր փայտ դարձան,
Ի վերայ քայլ էր դիպէր՝
Թագաւորն անփոյթ արշաւման։
Ասեն ի ցրտոյն սառեալք՝
Անճարակ մնային աստ մեռան»[28]։

Հ. Սահակյանը ճիշտ է նկատում, որ Քյոմուրճյանը սոցիալական անհավասարության փաստեր է տեսել նաև հայ ժողովրդի կյանքում։ Նկարագրելով 1537 թ. Անատոլիայում կատարած հայ երեխաների մանկաժողովը նա գրել է.

«...Թէպէտ մեծատունք շատ ոսկով,
Զորդիսն հազիւեան զերծացուցեալ,
Վայ աղքատաց դառն արտասուաց,
Միամօր մարք աղէխարշեալ,
Զի ուր հասնի տանջեն զնակիչս,
Յողբոց նոցա ոչոր խնայեալ»[29]։

Իրավացի է Հ. Սահակյանը, երբ գրում է, թե Քյոմուրճյանը կարողացել է հասնել այնպիսի եզրահանգումների, որոնք այսօր զարմացնում են իրենց համարձակությամբ, սոցիալական հարաբերությունների բացահայտման խորությամբ[30]։ Նկարագրելով 1592 թ. թուրքական բանակում ծագած ապստամբությունը, պատմագիրը բացահայտել է դրա շարժառիթները, ընդգծել է կայսրության պաշտոնյաների և «զորքաների» կատարած շահատակությունները, ավերածություններն ու կողոպուտը, որոնք մեծ դժգոհություն են առաջ բերել շարքային զինվորների մեջ և նրանք ապստամբել են նրանց դեմ։ Քյոմուրճյանը ճշտորեն վեր է հանում նաև ապստամբության պարտության պատճառները, ցույց է տալիս, թե վտանգի պահին ինչպես են միավորվում իշխող դասերը և ներքին հակամարտությունները մոռացած՝ ելնում են ապստամբ ժողովրդի դեմ[31]։

1695 թ. Քյոմուրճյանը համառոտել է վերը նշված իր «Պատմութիւնը», այն խորագրել է «Թագաւորութեան օսմանցւոց համառոտիւ պատմութիւն»։ Նրանում ավելի բացահայտորեն է դրսևորել իր հակապետական դիրքորոշումը, ատելությունը կայսրության, նրա գահակալների ու վեզիրների նկատմամբ, ավելի որոշակի է մեկնաբանել ու վերլուծել

28 «Ստամպօլոյ պատմութիւն», հ. Ա., էջ 65։
29 Հ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 48։
30 Նույն տեղում, էջ 47։
31 Նույն տեղում։

սոցիալական երևույթները, ավելի ընդգծել երկրում տիրող սոցիալական անհավասարությունը, ավելացրել է հատվածներ, որոնցում նկարագրված են զորքի ու ժողովրդի ապստամբությունները[32]։

Ասվեց, որ Քյոմուրճյանը գրել է «Հայոց պատմություն», որի բնագիրը մեզ չի հասել։ Այդ երկի մասին միակ տեղեկությունը հաղորդել է Մ. Չամչյանը։ 1960 թ. Ա. Տեր-Ղևոնդյանն իր «Երեմիա Չելեպին որպես Մունաջջիմ Բաշիի աղբյուրներից մեկը» հոդվածում բանասիրական մանրակրկիտ ուսումնասիրության միջոցով ապացուցել է, որ արաբ պատմագիր Մունաջջիմ Բաշիի «Ջամի ադ-դուվալ» (Տիեզերական պատմություն) երկի մեջ հայոց պատմությանը վերաբերող հատվածի աղբյուրը Քյոմուրճյանի «Հայոց պատմությունն» է եղել[33]։

Քյոմուրճյանի գրած պատմական երկերից մեզ է հասել նաև «Ստամպօլոյ պատմութիւնը» չափածո աշխատությունը։ Այն իսկական իմաստով պատմություն չէ, այլ Կ. Պոլսի դարբասների «դռների», նրանց մոտ եղած պալատների, շենքերի, շուկաների, նավամատույցների, արհեստանոցների, պարտեզների, ինչպես նաև քաղաքի պարիսպներից դուրս տարածվող քաղաքամերձ շրջանների նկարագրությունն է գեղարվեստական որոշ զեղումներով։

Հ. Սահակյանը ճիշտ է նկատում, որ «Առաջին հայացքից թվում է թէ այդ նկարագրություններն այսօր ոչ մի պատմական նշանակություն չեն կարող ունենալ, բայց երբ խորամուխ ենք լինում երկի բովանդակության մեջ, տեսնում ենք, թե որքան նյութ է տալիս այն XVII դարի ոչ միայն Կ. Պոլսի, այլև առհասարակ Թուրքիայի պատմության համար»[34]։

Քյոմուրճյանը, մասնավորապես արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Թուրքիայի արտաքին ու ներքին առևտրի, ներմուծվող ու արտահանվող ապրանքների, զարգացած արհեստների, արհեստագործական արտադրանքի որակի, առևտրականների ու արհեստավորների կենցաղի մասին։ Ոչ պակաս արժեքավոր են նաև Կ. Պոլսի քաղաքամերձ գյուղերի նկարագրության կապակցությամբ հաղորդած տեղեկությունները գյուղատնտեսության զանազան ճյուղերի՝ անասնապահության, բանջարաբուծության, այգեգործության վիճակի մասին։ Պատմագիրը հարուստ տեղեկություններ է տալիս նաև Կ. Պոլսի էթնիկական կազմի և բնակչության տարբեր ազգերի ու խավերի կենցաղի մասին և այլն։

Չափազանց արժեքավոր են հատկապես Քյոմուրճյանի տվյալները

32 Նույն տեղում, էջ 52։
33 Տե՛ս «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 7—8, էջ 143—150։
34 Հ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 55։

XVII դարի արևմտահայ գաղութի, նրա ներքին կյանքի, հայերի զբաղմունքի, կրած ազգային ու կրոնական հալածանքների մասին։ Հայերին վերաբերող հատվածներում նա առիթ բաց չի թողնում անարգանքի սյունին գամելու հոգևորականության, նրանց կենցաղային այլանդակությունների, արատավոր բարքերի, այլասերման, հարբեցողության, խարդախությունների համար։ Պատմագիրը չի խնայել նաև հայ մեծահարուստներին, վեր է հանել ու նշավակել նրանց հակահայրենասիրական գործունեությունը։

Քյոմուրճյանի գրչին է պատկանում նաև «Տարեգրական պատմություն»-ը։ Այն չի հրատարակված։

Այդ «Պատմության» համար որպես նյութ ծառայել է պատմագրի «Օրագրությունը», որն ընդգրկել է 1648—1662 թվականների իրադարձությունները։ Այն բացահայտում է լայն հետաքրքրությունների տեր այդ մարդու, ջերմ հայրենասերի դիմապատկերը։ Քյոմուրճյանը ապրել է իր ժողովրդի ու ժամանակի հետաքրքրություններով, այդ պատճառով էլ նրա «Օրագրությունը» աչքի է ընկնում բովանդակության զարմանալի հարստությամբ։ 1648—1662 թթ. ընթացքում Թուրքիայում կատարված կարևորագույն դեպքերի, հայկական գաղութների ազգային-հասարակական ու եկեղեցական գործերի ուշագրավ նկարագրությունները, սուլթանների, պետական ու եկեղեցական գործիչների բնութագրությունները, կենցաղային վառ ուրվանկարները Երեմիա Չելեբիի այդ աշխատությանը տալիս են մեծ արժեք, նրա համար բացառիկ տեղ ապահովելով հայ գրականության առավել նշանավոր հուշարձանների շարքում[35]։ «Պատմությունը» բաժանված է երեք մասի։ Առաջինում տրված է Կոստանդնուպոլսում տեղի ունեցած տարերային աղետների նկարագրությունը, երկրորդում՝ կենտրոնական ու հարավ-արևելյան Եվրոպայի երկրների դեմ Թուրքիայի մղած պատերազմների պատմությունը։ Այդ մասում գրված է նաև կայսրության ներքին կյանքի նկարագրությունը։ Երրորդ մասում՝ Հայոց եկեղեցու պատմությունը, մասնավորապես, հոգևորականության տարբեր խմբավորումների պայքարը պատրիարքական աթոռի համար։ Այստեղ, նույնպես, նա խիստ զայրույթով է խոսում այդ պայքարի մասին. «Եւ բորբոքէին ամբոխեալք ընդ միմեանս,— գրում է Քյոմուրճյանը —թէ ես եղեց աթոռակալ և միւսն, թէ ես եղեց երեսփոխան։ Որպէս գերեզման բացէր կոկորդ նոցա։ Եւ զայսքան արդիւնս և զհասս եկեղեցեաց անիրաւաբար յափշտակեալ անխտրաբար ուտէին։ Եւ չքաւորք և տնանկք ի քաղցութենէ մեռանէին»[36]։

Քյոմուրճյանը քաջ գիտակցում էր, որ այդ պայքարից տուժում էին առանց այն էլ ծանր վիճակի մեջ գտնվող չքավորներն ու տնանկները՝ աշխատավոր ժողովուրդը։ 1690 թ. Եղիազար կաթողիկոսին գրած բողոքնամակում կարդում ենք. «Եկեսցուք ի խնդիր մեր, զոր ի գլուխ գրոյս այսորիկ ծանուցաք, թէ ոչ ի ժամանակիս իշխան մարգարե, այլ հոգևոր տէրդ ի հեռի եւ ոչ ոք ծանուցանէ... չեղեալ անկարգութիւնս որ վերասացաւ վասն եկեղեցւոյ եւ վասն եպիսկոպոսութեան եւ վասն սուրբ Երուսաղեմի վիճակին մերոյ։ Ապա զայս ո՞ւր դիցուք, աստանոր եկեալ հասեալ հեռ եւ նախանձ եւ վրդովմունք ի մէջ հայոց, յորոց պատճառէ եւ գայթակղութիւն բազմաց...»[37]։

Ճիշտ է նկատում Հ. Սահակյանը, որ Քյոմուրճյանը խարազանում է եկեղեցու հայրերին՝ տեսնելով, որ նրանք իրենց վարքագծով խաթարում են կրոնի և եկեղեցու հեղինակությունը։ Որ նրա քննադատությունը բխում էր հոգևորականությանն անբասիր տեսնելու ցանկությունից։ Որդուն՝ Գրիգորին գրած նամակներից մեկում նա զայրույթով բացականչում է «Զինչ մեղադրեսցուք ռամկացս, որոց քարոզիչք են մախանօք փառաց և ագահութեան ախտիւք և այլովք մոլեալք»[38]։

Եղիազար կաթողիկոսին ուղղված վերը բերված նամակի վերջում նա ցավով գրում է «այլ ես, որ կամիմ հնարս գտանել խաղաղութեան անգոսնիմ՝ յանոպայ անձանց, յասել նոցա թէ ո՞ կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր ի վերայ մեր. նմին իրի եւ անյոյս լեալ լռեցի ի խօսելոյ. եւ իբր վերջին աղաղարարութիւն գրեցի զայս թուղթ...»[39]։

Այս նամակի կապակցությամբ Վ. Թորգոմյանը գրում է «Ճշգրտատիպ պատկերն է այն ատենի ազգային գործերու շատ տխուր վիճակին, ո՛րչափ դառն վիշտն մըն է զոր Երեմիա զգացած է այդ առթիւ, եւ ինչ արդար բողոքի սրտառուչ ձայն մ՝է՛, զոր կը թոցունէ նա մինչեւ էջմիածին»[40]։

Վ. Թորգոմյանը միանգամայն ճիշտ նշում է, թե «Յուզումներով, յոգնութիւններով լի կեանք մըն էր, զոր մինչեւ այդ թուականը (1690—

35 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 499։

36 Տե՛ս Հ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 29—30։

37 Վ. Թորգոմյան, նշվ. ուսումնասիրությունը, էջ 174—176։

38 Տե՛ս Ե. Քյոմուրճյան «Օրագրութիւն...», հավելված, «Թուղթեր», Երուսաղեմ, 1939, էջ 467։

39 Վ. Թորգոմյան, նշվ. ուսումնասիրությունը, էջ 177։

40 Նույն տեղում, էջ 176։

—Լ. Բ.) վարած էր Երեմիա Չէլէպի, զարմանալի է նա արդարեւ։ Ինչ գործոն կեանք անոր կեանքը. Երեմիա ո՛չ միայն կաթողիկոսի, պատրիարքի անվերջ կռիւներու մէջ շարունակ հաշտութեան կապ ըլլալու կաշխատի, ո՛չ միայն մայրենի եկեղեցւոյն հզօր ախոյան մը կանգնելով, անոր անբարեկարգ պաշտօնեաները դէպ ի ուղղութեան ճամբան բերելու ջանադիր կըլլայ դրամով, ճամբորդութիւններով, խօսքով եւ գրչով, այլ եւ իր բազմազբաղութեան մէջ ժամանակ կը գտնէ իր Ազգին մտաւոր զարգացման համար ալ անվհատ վաստակելու, եւ ասոր մէջ իսկ է անոր մեծութիւնը»[41]։ Շարունակելով իր միտքը, Վ. Թորգոմյանը գրում է. «Ականատես ըլլալով ազգային տխուր կացութեան, իրաւամբ կը տեսներ անշուշտ, թէ անոր պատճառը, բուն արմատն, ո՛չ այլ ինչ էր, բայց եթէ տգիտութեան ախտը, տգիտութիւնը որուն խօսուն արձաններն էին շատ քիչ բացառութեամբ, այն ատենի բոլոր պատրիարքներն ու եպիսկոպոսներն իրենց ամենակերպ վատթար արարքներով, ահա այս ախտին դեմ կուզէ Երեմիա դարման տանելու փութալ»[42]։

Քյոմուրճյանը, ինչպես և XVII դարի առաջադեմ մտածողները, ազգային ինքնությունը պահպանելու ամենահիմնական միջոցներից մեկը համարել են տգիտության դեմ պայքարելը, ժողովրդի ինքնագիտակցության բարձրացումը և ընդգծել են այդ գործում լուսավորության, մայրենի լեզվով գիր ու գրականության տարածման, դպրոցների ստեղծման ու ուժեղացման անհրաժեշտությունը։ Քյոմուրճյանը հիացմունքով է խոսում Փիլիպպոս կաթողիկոսի ուսումնակրթական բնագավառում ձեռնարկած միջոցառումների մասին։ Ջուղայեցուն նվիրված «Ողբում» գրում է.

«Դպրատունք բացեալ, մարգարանք բանեալ,
Աշակերտք վարժեալ,
Դասատունք հաստեալ, վարժապետք
Յարգեալ, տէրէտք ճոխացեալ,
Իմաստք յառաջեալ, գիտութիւնք աճեալ,
Ըզշնորհս որ ձգրեալ[43]։

Ըստ Քյոմուրճյանի, կարևորը ոչ այնքան գիտելիքների կուտակումն է, որքան այդ գիտելիքները ժողովրդի շահերին ծառայեցնելը. «...զի զայրաթ իմն ջատագովութիւն հայոց ի մէջ բերել փութասցես, զայդքան զոր դու ծրարեալ ունիս ստացեալ, լինէր թէ դպրատուն դասատուն իմն

41 Նույն տեղում էջ 177։
42 Նույն տեղում, էջ 178։
43 Տե՛ս Հ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 32։

բանաւոր բանն ընթանայր յառաջ արդեամբք՝ երանի էր», գրել է նա նամակներից մեկում[44]։

Իրավացի է Հ. Սահակյանը, որ նշում է, թե հայերի ինքնությունը պահպանելու գործում Քյոմուրճյանն ու նրա նման մտածողները, շափազանց կարևոր են համարել նաև հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագների փառաբանումն ու հիացական վերապատմումը։ Որ մասամբ հենց այդ նպատակով է գրված Քյոմուրճյանի «Համառօտ հարցմունք և պատասխանիք» աշխատությունը, որտեղ քրիստոնեությանը վերաբերող հարցերից հետո, շոշափված են այնպիսի խնդիրներ, որոնք վերաբերում են հայոց պատմությանն ու մշակույթին։ Այսպես, հարցնում է, թե ո՞վ է սահմանել հայոց գիրը, ո՞վքեր են եղել Մեսրոպի աշակերտները, ո՞վքեր են հորինել շարականները, ո՞վքեր են մեր տաղասացները, որոնք են մեր պատմագիրները և այլն։

Հետագա հարցերն ամբողջությամբ վերաբերում են հայոց պատմությանը։ Այդ հարցերով ու պատասխաններով, ընդգծում է Սահակյանը, հեղինակը մի հիմնական նպատակ է հետապնդել. Թուրքիայում ապրող և իրենց ազգային սովորությունները, լեզուն, պատմությունը, մշակույթը աստիճանաբար մոռացող հայերի մեջ թարմացնել հայրենասիրական պատկերացումները, հիշեցնել Հայաստանի երբեմնի հզորությունը, ուժեղացնել ազգային արժանապատվության զգացումը, ինչպես նաև սրել ատելությունը բռնապետության դեմ։ Նույն այս նպատակին է ծառայել նաև նրա «Հայոց պատմությունը»[45]։

Աշ. Հովհաննիսյանը նկատում է, թե «Լինելով գիտության և գրչի մարդ՝ Քյոմուրճյանը մի պահ գրքի և դպրոցի մեջ որոնեց տգիտության մեջ թավալող ազգի և եկեղեցու փրկությունը»[46]։

Լուսավորության և գրականության տարածման գործում տպարանների դերի գիտակցմամբ է թելադրված Քյոմուրճյանի կողմից 1676 թ. Կ. Պոլսում հիմնադրած տպարանը, որը Աբգար Թոխատեցու տպարանից հետո երկրորդն էր։ Այդ տպարանը, սակայն երկար չգոյատևեց և շնչավորվեց քիչ թե շատ կարևոր գործերով։ Նույն ճակատագրին արժանացան նաև պատմագրի դպրոցական ջանքերը։ Այդ կապակցությամբ նա ցավով գրում է. «Մեզ ոչ մէդրէսէի պիտոյք՝

44 Ե. Քյոմուրճյան, «Օրագրութիւն», հավելված, «Թուղթեր», էջ 510։
45 Հ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 30—31։
46 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 161։

քանզի մերս որ խափանեցան,
Ցաւ զայլոց դիտել՝
անգլուխ այգդ մեր և անիշխան»[47]։

Վերջին խոսքերը հուշում են մեզ,—գրում է Աշ. Հովհաննիսյանը,— թե ինչի մեջ էր նշմարում Քեոմյուրճյանը հայերի դժբախտության արմատը, և մենք դեռ առիթ պիտի ունենանք տեսնելու, թե ստեղծված դրությունից ուր էր փրկության խարիսխ ձգում XVII դարի արևմտահայ խոհուն այս գրողն ու հրապարակախոսը»[48]։

Քյոմուրճյանը եկեղեցու միասնականության, լեզվի ու կրոնի պահպանման, լուսավորության տարածման համար պայքարը դիտում էր որպես կարևորագույն միջոց ժողովրդի ինքնագիտակցությունը բարձրացնելու և կայսրության ձուլարարական քաղաքականությանը դիմակայելու գործում։ Նա միաժամանակ գիտակցում էր, որ այդ պայքարով հնարավոր չէ իր ժողովրդին փրկել վերջնական կորստից։ Այդ փրկությունը նա տեսնում էր Հակոբ Ջուղայեցու ազատագրական ծրագիրը իրականացնելու ուղղությամբ ծավալած գործունեության մեջ և նա Ջուղայեցու ամենաակտիվ համախոհներից էր ու գործակիցը։

Երբ 1679 թ. Ջուղայեցու գլխավորած պատվիրակությունը ժամանում է Կ. Պոլիս, Քյոմուրճյանը և նրա մի քանի հետևորդները հասկացնել են տալիս, որ վտանգավոր է բանակցել արևմտյան պետությունների և հատկապես պապական եկեղեցու հետ՝ թիկունքում ունենալով ազգային երկչեղված իրականությունը և մասնավորապես Եղիազար Այնթափցու գլխավորած ընդդիմությունը։ Քյոմուրճյանի խորհրդով որոշվում է Հռոմ ուղևորվելուց առաջ պատվիրակությունը հանդիպում ունենա Եղիազարի հետ։ Սակայն ինչ ինչ պատճառներով հանդիպումը տեղի չունեցավ և պատվիրակության ուղևորությունը խափանվեց[49]։ Ջուղայեցին էլ 1680 թ. Կ. Պոլսում կնքեց իր մահկանացուն։

Աշ. Հովհաննիսյանը խոսելով Քյոմուրճյանի մասին՝ իբրև Ջուղայեցու համակիրներից մեկը, գրում է. «Սակայն նա ի վիճակի չգտնվեց արգասավորելու քննադատական իր հայացքները նոր որևէ ծրագրով. նախագծել հայ ազատագրական շարժման համար նոր մի ճանապարհ, մատնանշելով հայ ժողովրդին նրա երազած Ավետյաց երկրի ապահով ուղին։ Առայժմ Քեոմյուրճյանը ևս ոտք էր դնում խաբուսիկ այն արահետի վրա, որով իրենից առաջ ապարդյուն քայլել էին բազմաթիվ ուրիշները»[50]։

Այնուհետև Աշ. Հովհաննիսյանը մեջբերում է ձեռագրերից մեկում իր կողմից հայտնաբերած Քյոմուրճյանի՝ մինչև այդ անծանոթ էջեր։ «Այդ էջերը,—գրում է Հովհաննիսյանը,—պարզում են, թե պատմական ինչ իրադարձությունների տպավորության տակ էր գործում այդ պահին գրողը։ Քեոմյուրճյանն անդրադառնում է այն պարտություններին, որ կրում էր Թուրքիան եվրոպական բանակների և նավատորմիղի հարվածներից։ «Օսմանցիք,— գրում է նա,— որ զԱնատոլի և զՌումելի, Պոնտոս ծով ու մինչ յԵգիպտոս տիրէին իշխեալ զամս իբրև ԴՃ(400) միշտ գերելով և կոտորելով և տիրելով վիճակաց արդ զամս Գ(3) է աստանօր, զի ինքեանք հալածեցան, կոտորեցան, գերեցան ու կողոպտեցան և վէնեժացիք և Նէմեցք զբազում յաղթութիւն արարեալ ի ծով և ի ցամաք՝ առին զվիճակս օսմանցոց երկրի, որք ընդ սահմանօք իւրեանց՝ մեծաւ յաջողութեամբ։ Ընդ որս ամենայն թագաւորութիւնք աշխարհի զարմանան, մանաւանդ թէ և ինքեանք սքանչանան, կարծելով թէ օգնողն իւրեանց մեհմետն է, կարապետ Նեռինն։ Որոց ոչ միայն զօրք և զօրագլուխք խապառ ջնջեցան, այլև մեծամեծ փաշայք և պէկլերպեկիք ի սուր և ի սով գերութեամբ մաշեցան ու կարծի թէ յետին թշուառութիւնն սոցա նշանք են զարմանալի տկարութեանց սոցա և վառիլն յաջողութեամբ և քաջութեամբ քրիստոնէից, զորոց պատմութիւնս գրեալ իսկ եմք ժամանակիս ականատեսութեամբ։ Բայց աստ յիշեցուցանեմ զհարկատուացս նեղութիւն, քան յառաջն առաւել, որպէս թէ նման շան կատաղելոյ։ Ցագեցելոց ի ճոխութիւնս և ի հարստութիւնս իւրեանց յաւելուին գոռոզութեամբ և անիրաւութեամբ և զրպարտութեամբ ագահութեան ախտից։ Իսկ յորժամ տկարացան որպէս զքաղցեալ շունս և զգայլ առաւելան խորամանկութեամբ և զրկելով ի դարանի և յայտնի, յանապատս, և ի շէնս, և ի ճանապարհի։ Փրկագործն Քրիստոս, որ ազատեաց զմեզ ի դժոխոց և ի Բելիարայ բռնութենէ, ազատեսցէ զհաւատացեալս իւր յերևելի թշնամեաց մերոց նենգութեանցն մահմետական սնոտի ազգաց թերօրինականաց գարշելեաց»[51]։

«Այս տողերի մեջ,—շարունակում է իր միտքը Հովհաննիսյանը,— Քեոմյուրճյանը հայտնվում է, որպես թուրք բռնատիրության դատապարտող և ռայայի ազատագրման ջերմ ախոյան։ Ակներև է, որ նրա

47 «Ստամպոլոյ պատմութիւն», էջ 114։
48 Աշ. Հովհաննիսյան, Նշվ. աշխ., էջ 161։
49 Նույն տեղում, էջ 218։

50 Նույն տեղում, էջ 220—221։
51 Տե՛ս Նույն տեղում, էջ 221—222։

ակնկալությունները շաղկապվում էին Թուրքիայի կրած պարտություններ-ի հետ։ Նրա մյուս գրվածքներում հանդիպում ենք մի շարք էջերի՝ ուղղված եվրոպական պետություններին, որոնցից փրկություն էր սպասում հայ ժողովրդի համար»[52]։

Այդ նպատակով Քյոմուրճյանը 1679 թ. գրեց Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկուն ուղղված ներբող։ Այնտեղ նա մեծարում էր թագավորին որպես քրիստոնյա ժողովուրդներին սիրողի ու ազատարարի։

«Սիրող, խնամող, դաստիարակող
Հայր և դատաւոր, տէր և թագաւոր...
Ապստամբողաց թշնամեաց յաղթող...
Եղեռնագործից սաստող և տանջող,
Դատող և սպանող, արդար թագաւոր...
Քաւիչ և ազատիչ, փրկիչ թագաւոր»[53]։

Աշ. Հովհաննիսյանը գրում է. թե 1687 թ. Քյոմուրճյանը գրել է «Ուղեր համառոտ առ Լադովիկոս ԺԴ թագավոր Գաղիոյ, ի պատեհառիթ գահակալութեան նորին... ի դեսպանութեան Պ. Ժէրարդէնի, որ բնակէր ի Ղալաթիա»։ Այդ ուղերձը, ինչպես և 1682 թ. Քեռմյուրճյանի «Պատարանք իւրոյ ժամանակին» քերտվածքը անտիպ են ցարդ և մեզ ծանոթ՝ միայն վերնագրերով։ Բայց չենք սխալվի, եթե պնդենք, որ նշանավոր գրողն իր կյանքի այդ ժամանակաշրջանում դիմուղղվում էր դեպի Հակոբ Ջուղայեցու բռնած ճանապարհը։ Հիրավի, տակավին այդ կաթողիկոսի մահվան առթիվ գրած իր «Ողբի» մեջ անդրադառնալով նրա հակառակորդներին, Քեռմյուրճյանը բեռնում էր ազգի միտքը տեսիլներով սալարկված հին հուսակայանի վրա։

«Երգս ողբոց արժան.
Երգս կականական ողորմ ողբական,
Ազգիս Արամեան, տանս Թորգոմական, ցեղիս Աբեթեան,
Ողբս Մովսիսական, ըստ Ֆիլիսոֆիան, սրբոյ Խորենեան,
Ողբս Կողեոնեան սրբոյն Յոհաննեան։
Աւաղ եղկական,
Անէծք Ներսիսեան,
Ցեղին Պահլաւեան լուսաւորչական,
Ըստ Սահակայ տեսլեան,
Մարգարէութեան հոգովն ազգական,
Խսկոյն լրացան

52 Նույն տեղում, էջ 222։
53 Ե. Քյոմուրճյան, «օրագրություն», էջ 526։

Բանքն զոր խօսեցան և կատարեցան.
Երկուց գաւազանն,
Թագաւորականն, հայրապետական։
Ազգին Արշակեան
Պայծառ թագքն բարձան և նուաստացան,
Սրբոյ Գրիգորեան
Լուսաւորչական աղօտեալ շիջան։
Օտար ազգք յարեան
Ի մէջ բռնացան, մեք ծառայական.
Աշխարհ մեր առան,
Զվաստակս մեր կերան մեզ ակն յանդիման։
Բարի աղօթիւք Սուրբ Հայրապետիս
Տէր այց արա տառապեալ ազգիս,
Աղաչեմք, լուր տէր»[54]։

Բերելով «Ողբից» այս հատվածը Աշ. Հովհաննիսյանը նկատում է, թե «Քեռմյուրճյանի «Ողբը» ազդարարում է այն խոհերը, որոնք կապվում էին Հակոբ Ջուղայեցու անպսակ ակնկալությունների հետ։ Այն ընթացք էր տալիս, այն հույզերին, որոնցով գերեղման էին իջեցնում մեռած կաթողիկոսին նրա գլխավորած քաղաքական ձեռնարկի կուսակիցները[55]։

Ինչպես ասվեց, Երեմիա Չելեբի Քյոմուրճյանի պատմագրական ժառանգությունը չափազանց կարևոր աղբյուր է XVII դարի Թուրքիայի, նրա հայկական գաղութների, Արևելյան Եվրոպայի երկրների և ընդհանրապես Մերձավոր Արևելքի պետությունների պատմության ուսումնասիրության համար և ընդհանրապես այդ դարի արևելագիտության համար։

54 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 222—223։
55 Նույն տեղում, էջ 223։

«ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԴԱՒԻԹ ԲԷԳԻՆ»

XVIII դարի, հավանաբար, 30—40-ական թվականներից մեզ է հասել «Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին, եւ պատերազմաց Հայոցն Խափանու, որք եղեն ընդ դէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է՝ յամի տեառն 1722 եւ Հայոց 1171»[1] խորագիրը կրող պատմական փոքրածավալ մի երկ։ Այն գրի է առել Մխիթարյան միաբան Ղուկաս Սեբաստացին[2]։ Նա անվանաթերթի վրա նշում է, որ «զորս ետուն գրել, որք ի սկզբանէ մինչև ցվախճան յառաջադէմ լեալք էին յամենայն պատերազմունս, և ականատես իրացն եղելոց, այսինքն Ստեփաննոս Վրդանիսեան, որ ի տանէն էր Շահումեան, ի գաւառէն փոքր Սիւնեաց, և յաւանէն Եկաստանաց, և այլ ոմանք ընդ նմա»։ Երկից իմանում ենք, որ այս Ստեփանոս Շահումյանը եղել է Դավիթ-Բեկի սիրելի զորավարներից մեկը, որ նրա նախաձեռնությամբ են սյունեցիները դիմել վրաց Վախտանգ թագավորի որդի Շահնավազին (Բակուրին), խնդրել մի զորավար ուղարկելու Սյունիք՝ կազմակերպելու և գլխավորելու համար Սյունյաց երկրի ազատագրական ապստամբությունը՝ ուղղված պարսիկ զավթիչների դեմ։

Դարի 20-ական թվականների սկզբին պարսկական, թուրքական զավթիչների և լեզգիների ասպատակությունների դեմ պայքարում Ղարաբաղի սղնախների ձեռք բերած հաղթանակները ոգեշնչել էին Սյունյաց երկրի ժողովրդին ու ազատագրական հովերով տարված նրա իշխողներին, որոնք և օգտվելով մի կողմից Պարսկաստանում՝ աֆղանների ապստամբության հետևանքով ստեղծված անիշխանությունից, և մյուս կողմից ռուսական բանակների՝ դեպի հարավ առաջխաղացումից ու Վրաստանի հզորացումից, որոշել էին ապստամբել ու թոթափել պարսկական լուծը։

Ահա թե ինչպես են ներկայացնում պատմողները ապստամբության

1 «Ընտիր պատմութիւն...», Վաղարշապատ, 1871։

2 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 301։

նախօրյակին երկրում ստեղծված վիճակը. «յորժամ լուան բնակիչք Եօթնաբերդ գաւառին Խափանու զասպատակն (լեզգիների—Լ. Բ.), և ել աւերումն Դեանջայու և Շամախու, Հայկք, և Պարսիկք առ հասարակ խռովեցան, և զահի հարեալ, սասանեալ, տագնապէին, և իբր ամիսս երկու, կամ երեք երթ և եկս առ միմեանս առնել յիրերաց կասկածէին, զի զանձինս իւրեանց առ հասարակ ի խնամոց յընդհանուր ընտանի խնամակալութենէ լքեալս տեսանէին։ Վասն այսօրիկ քաղաք ի քաղաքէ, ազգ յազգէ, իշխան յիշխանէ, կասկածանս թշնամութեան կրել տագնապէին, և զսոյնպիսի աղետս շարեաց, և սոքա կրէին»[3]։

Ահա այդ օրերին է մեղրեցի Ստեփանոս Շահումյանի մեջ միտք հղացել Շահնավազին ներկայացնելու Ղափանի 50 տանուտերերի կնիքներն ու ստորագրությունները կրող մի խնդրագիր՝ հետևյալ բովանդակությամբ. «Տո՛ւր մեզ զայր մի լինիլ զօրապետ, որպէս զի քոյին հրամանաւ լիցի մեզ այս օրինաւոր, և մեք զզօրսն հոգամք պատրաստել, և նոքօք զգաւառն մեր ի թշնամեաց աներկեան առնել»[4]։

Ըստ «Ընտիր պատմության», 1722 թ. վերջերին Վախտանգ թագավորի հրամանով Դավիթ-Բեկը սակավաթիվ հայ մարտիկներով ժամանել է Ղափան ու գլխավորել հայերի ապստամբությունը։ Ապստամբությունը հաղթանակել է, հայերը ոչ միայն անկախություն են ձեռք բերել, այլև ստեղծել են իշխանապետություն Դավիթ-Բեկի գլխավորությամբ և այդ իշխանապետությունը ճանաչվել է պարսից շահի կողմից, դեռ ավելին, ընդհանուր թշնամու՝ թուրքերի դեմ կռիվը հարկադրել է շահին ընդունելու Դավիթ-Բեկի առաջարկությունը՝ զինական դաշնակցություն կնքելու մասին և նա լիազորել է Դավիթ-Բեկին գլխավորելու հայ-պարսկական զինված ուժերի պայքարը թուրքերի դեմ։

Պետք է ենթադրել, որ Սյունիքի ազատագրական ապստամբության կազմակերպիչը՝ Ստեփանոս Շահումյանը, հետագայում եղել է և «Ընտիր պատմության» ստեղծման նախաձեռնողը։ Իսկ դա բնավ էլ պատահական չէ։ Ջերմ հայրենասերն ու նրա զինակիցները գրել տալով իրենց հուշերը, մեր կարծիքով, երկու նպատակ են հետապնդել, նախ՝ ստեղծել կենդանի հուշարձան նվիրված իրենց հայրենիքի՝ Սյունիքի և սյունեցիների ութամյա մղած հերոսամարտերի պատմությանը, անմահացնել ազատության համար զոհվածների հիշատակը, տարփողել բոցաշունչ հայրենասեր, տաղանդավոր զորավար ու կազմակերպիչ Դավիթ-Բեկին ու

3 «Ընտիր պատմութիւն», էջ 3։

4 Նույն տեղում, էջ 4։

նրա զինակիցներին, և երկրորդ՝ սյունեցիների սխրանքներով հավատ ներշնչել ժամանակակիցներին և հետագա սերունդներին իրենց ուժերի նկատմամբ, ոգեշնչել նրանց գալիք գոտեմարտերի համար, հայրենասիրության ու ազատության գործին անհուն նվիրվածության վառ օրինակ ծառայեցնել։

«Ընտիր պատմությունը» վկայում է, որ Դավիթ-Բեկը Ղափան ժամանելու պես «առ նա ժողովէին ի Հայոց ամենայն արք զօրութեանց յամենայն կողմանց գաւառին որ լսէին զնմանէ... որք նեղեալք և տառապեալք էին ի դառն ծառայութենէ այլազգեաց, արք որք զանձինս իւրեանց եղեալք էին առ ի ազատ լինելոյ ի լծոյ ծառայութեանն այլազգեաց»[5]։

«Իբրև լուր լինէր ամենայն բնակչացն Խափանու, և Զավնդրու, թէ Դաւիթ Բէգն եկեալ հասեալ է ի թիկունս Հայոց, մեծաւ քաջութեամբ, առ նա հասանէին յամենայն կողմանց զորաւորք»[6], նույն ոգևորությամբ գրում է «Ընտիր պատմությունը»։

Ամբողջ երկում պաշտպանական ու հարձակողական ռազմական գործողությունները նկարագրելիս կարմիր թելի նման անց է կացված այն գաղափարը, որ հաղթանակների միակ երաշխիքը միասնությունն է, միաբանությունը, իսկ պարտություններինը, անհաջողություններինը՝ անմիաբանությունը։ Այնտեղ կարդում ենք. «Զի որպէս միաբանութիւնն հոգի է և կյանք ամենայն հասարակութեան, նոյնպէս և հակառակն սորին, այսինքն անմիաբանութիւնն եղծիչ է, և սատակիչ ամենայն հասարակութեան»[7]։

Եթե հիացմունքով, ջերմ հայրենասիրությամբ են գրված այն տողերը, որոնք վերաբերում են միաբանությանն ու դրա արդյունքներին, ապա դառնությամբ է խոսվում անմիաբանության ու նրա հետևանքների մասին։

«Ողորմեցան արդարև աստուած ամենայն տանն Սիսակայ որդւոցն Գեղամայ ի յայնպիսի դառն ժամանակի (յորում տագնապէին ամենայն բնակիչք Հայաստանեայց յերեսաց հանապազօր սրոյ, սովու, գերութեան և լլկանաց. յարուցանելով նոցա զԴաւիթ Բէկն, և զայլ ամենայն որդիս զօրութեանց, որք զօրացան և ի բաց վանեցին զամենայն ապականիչս երկրին իւրեանց. ո՛վ թէ ո՞րպէս քաջացան, ընդդեմ ելին մեծամեծ թագաւորաց, և ապրեցան, և անպարտելի մնացին նոքա... մինչդեռ միաբանի էին ի միասին։ Բայց իբրև եհաս առ նոսա ապականիչ ուխտս այս անմիաբանութեան, իսկույն եղծան, լուծան, բաժանեցան և եղեն իբրև զչեղեալս։

Զի մեռաւ Դաւիթ, ի քաջութենէ, որոյ սառսէին ամենայն բռնակալք յուսացեալքն ի զօրութիւնս իւրեանց, և յաջորդեաց Մխիթարն, վերջին մխիթարիչն Հայոց, որ իբրև կորիւսն առիւծու գոչեաց ի լերանցն Սիւնեաց, և ի նմանէ սասանեցան ամենայն գազանք ի մորիս իւրեանց, և էջ և յափշտակեաց զյափշտակութիւն ի միջոյ գազանաց։ Եհար՝ խորտակեաց զեղջիւրս հպարտաց, հատոյց զհատուցումն եօթնապատիկ ի գլուխս թշնամեաց, և յամօթ արար զմեծամեծս հեթանոսաց, և յաւար էառ զփառս նոցա առ ի մխիթարել զազգն Հայոց ողջոյն»[8]։

Աշ. Հովհաննիսյանը ճիշտ է նկատում, որ «Պատմության շարադրողը, հիմք ունենալով դեպքերի ականատես և մասնակից Ստեփանոս Շահումյանի խորը ապրումներով և հայրենասիրական ջերմ շնչով պատմածները, անխնա մերկացնում է շարժման հակառակորդներին, անարգանքի սյունին գամելով հատկապես ուրացողներին»[9]։

Մխիթար սպարապետի սպանության կապակցությամբ կարդում ենք. «Այլ գտան անօրէնք ի մէջ ժողովրդեանն, որք ախտացեալ իսկ էին այսու՝ ժանտ ախտիս անմիաբանութեան, վասնորոյ անօրէն խորհուրդովք ընդունայն, և սնոտի պատճառանօք իշխեցին սպանանել զառաջնորդն իւրեանց, և... եղեն կամաւ ստրուկ օտարաց որպէս յառաջն, որք մինչև ցայժմ մնացին»[10]։ Իբրև եզրակացություն էլ ասված է, որ եթե «սակաւ ինչ ևս ժամանակ ժուժկալեալք էին, մինչև անցանիցէր բռնութիւնն օսմանցւոց, մանաւանդ զի Աստուած օգնական էր նոցա՝ յամենայն պատերազմունս, և զի ոչ պակասէին նոցա անառիկ և ամուր տեղիք»[11]։

«Ընտիր պատմության» մեջ առանձնապես ատելությամբ է գրված Երից-Վանիկի Մելիք-Ֆրանգյուլի մասին, որի դավաճանության պատճառով, անհավասար մարտում զոհվեց Դավիթ-Բեկի հերոս հրամանատարներից մեկը՝ Զավնդուրի հրամանատար Թորոսը։ Երբ վերջինս պատրաստվել էր հարձակվել Օրդուբադի վրա, Մելիք-Ֆրանգյուլը, որը գաղտնի իր ծառայությունն էր առաջարկել Օրդուբադի Բաթալի խանին՝ սուլթանին, նամակ է գրում Թորոսին, խորհուրդ է տալիս, նրան, առաջ գնալ Բարգուշատի վրա, որտեղ իբր ինքն իր զորքը կմիացնի Թորոսի զորքին

5 Նույն տեղում, էջ 6։

6 Նույն տեղում, էջ 8։

7 Նույն տեղում, էջ 73։

8 Նույն տեղում, էջ 74—75։

9 Աշ. Հովհաննիսյան, տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան 1972, էջ 164։

10 «Ընտիր պատմութիւն», էջ 75։

11 Նույն տեղում։

և միասին կկռվեն Թշնամու դեմ։ «Այլ զայս ամենայն անօրէն մտօք, նենգաւոր խորհրդով գրէր, զոր գրէրն զի ի ծողակս Թշնամւոյն զնա անկանիցէր, առ ի հաւատարիմ ցուցանել զինքն Սուլթանին, զի մի ի բաց լինիցէր ի տէրութենէն (իբր թէ զհետ միտեալ իցէ նա Դաւթի, և զօրականաց նորա) և ոչինչ փոյթ եղև նման լինելն անհաւատարիմ, նենգաւոր, Թշնամի Աստուծոյ իւրոյ, և ժողովրդեանն մատնիչ և սատակիչ, որպէս ի հետագայս ցուցցին առնս այսորիկ Թշնամութիւն, և չարիքն»[12]։

Թորոսը հավատացել է դավաճանին, գնացել է դեպի Բարգուշատ, սահմանում նրան է միացել Ֆրանգյուլը երկու հազար կովողներով, այնտեղ է ժամանել և Բաթալի սուլթանը, Թորոսի զորքից եռապատիկ ավելի ուժերով։ Հայերը հարձակվել են Թշնամու վրա և փախուստի մատնել նրան, Թորոսը հետապնդել է նրանց, այդ ժամանակ դավաճան Ֆրանգյուլը մարդ է ուղարկել Բաթալի սուլթանի մոտ՝ ասելով «զի՞նչ գործէք, զիա՞րդ փախչիք, դարձարուք ի կրունկս, զի ահա ես ընդ ձեզ եմ, դուք ի յառաջոյ, և ես զկնի սոցա, խորտակեսցուք զսոսա»[13]։ Այդպես էլ արել են, հայերը մեծ կորուստներ են տվել, սպանվել է և քաջարի Թորոսը։

«Ահա զայսպիսի մեծ անօրէնութիւն գործեաց Ֆռանկիլն, և ոչ այսչափ միայն, այլ և առաւել հաճոյանալոյ վասն Սուլթանին, և ցուցանելոյ հաւատարիմ զինքն, ուրացաւ նաև զհաւատսն»[14], դառնացած ավարտում է «Ընտիր պատմությունը» Ֆրանգյուլի դավաճանության նկարագրությունը։

Պակաս ատելությամբ չի գրված նաև Ագուլիսի քաղաքապետ Մելիք Մուսու և մյուս իշխանների դավաճանության մասին։ Դավիթ-Բեկը զորքով գնացել է Ագուլիս, բանակել քաղաքից դուրս Ս. Թովմա վանքում։ Տասն օրվա ընթացքում Թուրքերը երեք անգամ հարձակվել են նրա վրա և երեք անգամ էլ «խորտակեցան ի քաջամարտիկ զօրացն Դաւթի»[15]։ Թուրքերի այդ հարձակումների կապակցությամբ կարդում ենք. «Եւ այս ամենայն յայն սակս պատահէր նոցա, զի իշխանքն Ագուլեցւոց ծածկապէս դաշնադիրք էին օսմանցւոց, և սոքա, ոչ գիտէին»[16]։

«Արդ՝ յետ այսորիկ իբրև երկու աւուրք ի վերայ անցին, արքն Ագուլիսու, և Մելիք Մուսին զթշնամութիւնս իւրեանց և զդաւաճանութիւնս յայտ արարին, զի ի մէջ քաղաքին գրոհ տուեալ ի վերայ զօրացն Դաւթի դիմեցին մինչդեռ ի վանսն էին նոքա Սրբոյն Թովմայի արտաքոյ քաղաքին, և սկսան ի քաղաքէ անտի հրացանս արձակել ի վերայ զօրացն»[17]։

Դավթի զորքը խնայել է նրանց՝ հաշվի առնելով, որ քաղաքում տասը հազար հայ ընտանիք է ապրում, Մելիք Փարսադանը, որի միջնորդությամբ միայն Դավիթ-Բեկը փոխել է իր հրամանը Մելիք Մուսուն գլխատելու մասին, դիմել է դավաճաններին իբրև խաղաղության միջնորդ, վերջիններս նրան սպանել են[18]։

Պատմության շարահարողը դառնացած գրում է, թե 1726 թ. թուրքական անհամար զորքը ներխուժել է Սյունյաց աշխարհը, պաշարել Հալիձոր բերդը, Թշնամու ահից շատերը լքել են Դավիթ-Բեկին, հպատակություն հայտնել թուրքերին։ Այնուհետև մեծ բավականությամբ ընդգծում է. «Բայց Դաւիթ յայսմ ամենայնի... ոչ զանգիտեաց ի բազմութենէ բարբարոսացն, և ոչ դադարեցաւ ի քաջագործութեանցն, և ոչ յուսահատեցաւ յԱստուածային խնամոցն։ Այլ արիաբար զբերդն ամրացուցանէր, զհամբար բերդին պատրաստէր, զզօրականսն առ ինքն ժողովէր, բազմացուցանէր...»[19]։

Դավիթ-Բեկը 350 հոգով հերոսաբար պաշտպանվել է, Թշնամին բազմիցս գրոհել է բերդի վրա, սակայն հաջողության չի հասել։ Երբ կարդում ես Թշնամու գրոհի նկարագրությունը, մի պահ թվում է թէ կարդում ես Եղիշէի՝ Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը։ «Անդ էր տեսանել զայն ահեղ տեսիլ կատաղեալ զօրացն աղմուկ աղաղակին. զի իբրև զմեքենայսն կանգնեցին, հարիւրաւոր և հազարաւոր դրօշակակիրքն յառաջ խաղացին, ապա զօրքն ամենայն զկնի հեղանէին իբր յորձանս յորդախաղաց գետոյ ահագին գոչմամբ, և կամ իբրու ամեհի ալիս ծովու յուզեալք ի բռնութենէ հողմոց դարիւ և դարիւ գային, մի զմիով անցանէին, և ի մեքենայից անտի իվերայ պարսպացն դիմէին, և առհասարակ յերկոցունց կողմանց ձայն փողոյ, և ձայն թմբկաց, գոչիւն զօրաց շառաչիւն հրալից գնդակաց, ճայթմունք հրացանից զականջս խլացուցանէին»[20]։

Ապա պաշարվածների մասին շարահարողը հիացմունքով գրում է. «Եւ ի յութներորդ ժամու աւուրն, իբրև տեսին, թէ բառնի այնուհետև յոյս կեցութեան, Մխիթար սպարապետն և Տէր Աւետիսն խրախոյս բարձին ի զէն յարձակեցան. յայնժամ զօրքն ամենեքեան առ նոսա կուտեցան...

12 Նույն տեղում, էջ 23։
13 Նույն տեղում, էջ 24։
14 Նույն տեղում, էջ 24։
15 Նույն տեղում, էջ 62—63։
16 Նույն տեղում, էջ 63։
17 Նույն տեղում, էջ 64։
18 Նույն տեղում, էջ 64—65։
19 Նույն տեղում, էջ 44։
20 Նույն տեղում, էջ 48։

վառեցան պատրաստեցան, զէն զգեցան և ի բարկութիւն բորբոքեցան ամենեքեան ի վերայ թշնամեացն։

Զի խոսիլ սկսա ընդ նոսա Մխիթարն, և Տէր Աւետիսն, և ասեն քաջացարուք, մի՛ երկնչիք. ելէք զհետ մեր, եթէ հասեալ իցէ վախճան մեր քաջութեամբ մեռցուք, զի լաւ լիցի մեզ արիութեամբ արտաքոյ պարսպաց մեռանիլ, քան ասէն առաջի աչաց մերոց, տեսանել զմահ ընտանեաց և բարեկամաց մերոց, և զայլ դժնդակութիւնս...»[21]։

Այս խոսքերն էլ կարծեք հիշեցնել են տալիս Ավարայրի ճակատամարտից առաջ Վարդանի արտասանած ճառը։

Եղիշեի ազդեցությունը Մխիթարյան շարահարողի վրա ակնառու է։ Միանգամայն իրավացի է «Ընտիր պատմության» հրատարակիչ Աբգար Գուլամիրյանցը, որ հիացմունքով է գրում, թե «Ընտիր պատմության» «գրիչը համարեա թէ՝ Ս. Թարգմանչաց Ոսկեղենիկ դարու ճաշակն է կրում, և համարեա մի նոր Ս. Եղիշէ է հանդիսանում Սիւնեաց նոր Նահատակների համար»[22]։

Պակաս ջերմությամբ չի գրված նաև մեղրեցիների հերոսական դիմադրության ու հաղթանակի մասին։ Պարսիկները պաշարել են Մեղրին, ներխուժել փոքր թաղը։ Մեղրեցիները Ստեփանոս Շահումյանի միջոցով օգնություն են խնդրել Զավնդուրի զորապետ Բայանդուրից, մինչ օգնության հասնելը «քաջ և սրի զօրքն Մեղրեցւոց գործ քաջութեան ի նմին գիշերի գործեցին. զի անցեալք յայնկոյս գետոյն, յեղակարծումն ժամանակի ի մէջ բանակի թշնամեացն յարձակէին, և զրաղումս ի նոցանէ ի սուր սուսերի սատակէին...»[23]։

Այնուհետև նույն մեղրեցիների մասին գրված է, թե Օրդուբադցիները բողոքել են նրանցից մեծաքանակ զորքով քաղաք ժամանած Երևանի խանի եղբորը, նա հրամայել է իր մոտ կանչել Մեղրու իշխաններին՝ պարզելու համար վերջիններիս կողմից օրդուբադցիների վրա հարձակվելու պատճառը։ «Իսկ իշխանքն Մեղրւոյ իբրև զայն լսէին, տագնապէին, վարանէին ի միտս իւրեանց, ի միասին ժողովէին խորհուրդ խորհէին, և ասէին զի՞նչ արասցուք, զի եթէ երթայցեմք մեծ վտանգ է մեզ. և եթէ ոչ երթայցեմք, նոյնպէս մեծ վիշտ վտանգի է մեզ, և ամենայն ժողովրդեանս։ Վերջապէս հաւանեցան ոմանք ի նոցանէ, վասն օգտի հասարակութեանն, զվտանգ մահուն յանձն առնուլ, երթալ ընդ սպասաւորսն խանին»[24]։

Նրանք ներկայացել են խանին, բացատրել, որ օրդուբադցիները պաշարել են Մեղրին՝ նպատակ ունենալով բնաջնջել իրենց և իրենք ստիպված պաշտպանվելու նպատակով հարձակվել են նրանց վրա։

Մեծ բավականությամբ է շարադրված նաև Մխիթար բեկի և Տեր-Ավետիսի կողմից Մեղրիում օսմանցիներին տված ջարդի ու վերցրած ավարի մասին։ «Զբեռն հարկահանին բացին,— կարդում ենք այնտեղ,— և անդ երեսուն և երկու հազար թուղթս հարկաց գտին, և զայն ամենայն ի հուրն այրեցին»[25]։

Այնուհետև բերված է շահի հրովարտակը. «Շահ-Թամազ արքայ Պարսից առ քաջդ Դաւիթ բէգ, և առ քաջ զօրաւարսդ Հայոց, որք ընդ քեզ են ողջույն, ի բազմաց բազում անգամ ազդ եղև մեզ՝ զքաջութեանց քոց. բայց արդ՝ իբր ականատես իսկ եղեալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց, որ ընդ դէմ թշնամեաց մերոց։ Ահա արդ կացուցի զքեզ այսօր իշխան, և գլուխ ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ, և երկիրդ Խափանու՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի։ Բայց դու ելցես, և ժողովեսցես առ քեզ զամենայն զօրս, և զխանս ի կողմանցդ այդոցիկ, և ի բաց հանցես զօսմանցին ի սահմանաց քոց»[26]։

Ապա նշված է թե շահը Դավիթ-Բեկին տվել է «ևս զիշխանութիւն կարող լինելոյ դրամ հատանել... Եւ եկին հնազանդեցան նմա ամենայն իշխանքն և դաւառապետքն Թուրքաց» (իմա՝ պարսից— Լ. Բ.)[27]։

Ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքարի անհրաժեշտությունն էր ստիպել պարսից արքային դիմելու այդ քայլին, ոչ միայն ճանաչելու Դավիթ-Բեկի իշխանապետությունը, այլև նրան կուսակալ նշանակելու։

Այնուհետև գրված է, թե 1728 թ. Դավիթ-Բեկի մահից հետո, նրա գործը շարունակել է Մխիթար սպարապետը։ Օսմանցիների կողմից Հալիձորի բերդի ավերումից առաջ Մխիթարը կարողացել է փախչել բերդից «Երթայր վերստին զօրաժողով լինէր, զզօրսն Օսմանցւոց խորտակէր, և առնոյր զվրէժ ի նոցանէ, զբաղում ամուրս, և զբաղաքս ի նոցանէ թափէր. ապա երթայր զՕրդուվար քաղաք պաշարել, և իբրև զբռամբ ածէր զայն, ի նոցանէ զամենեսեան ի սուր սուսերի սատակէր. և զաւար բազում յոյժ առեալ ի նոցանէ զհարիւր վաթսուն բեռինս ուղտուց, և անտի

21 Նույն տեղում, էջ 49—50։
22 Նույն տեղում, Իբրև յառաջաբան, էջ Թ։
23 Նույն տեղում, էջ 31—32։
24 Նույն տեղում, էջ 35։
25 Նույն տեղում, էջ 56։
26 Նույն տեղում, էջ 58—59։
27 Նույն տեղում, էջ 59։

չուեալ երթայր ժամանակ ինչ ի մեծ բերդն Խնծորէսք բնակէր»[28]։ Այնտեղ էլ 1730 թ. նա դավաճանությամբ սպանվել է յուրայինների կողմից[29]։

Ժամանակի պահանջով էր թելադրված նաև, որ շարահարողը գրեր. «Եւ յաւարտ բանիս ասեմք, թէ շար է արդարև, և դժնդակ շար անմիաբանութիւնն ընկերաց ի մէջ հասարակութեան, և նախադասելն զբարին, և զօգուտն իւրոյ անձին՝ քան զբարին հասարակութեան, և յորում հասարակութեան և գտանիցի շարս այս, առժամայն եղծէ, ապականէ, և ընդունայնացուցանէ զհասարակութիւնն զայն, թէ՛ տուն իցէ, թէ՛ քաղաք, թէ՛ ազգ իցէ, և թէ՛ անպարտելի թագաւորութիւն մեծ, զի՞նչ մեծագոյն քան զկայսերութիւնն Մակեդոնացւոց, և Հռոմայեցւոց, և ընդէ՞ր կորեան և կործանեցան. վասն զի, պակասեցաւ ի նոցանէ միաբանութիւնն և սէրն հասարակութեան, որով և զօրացեալ իսկ էին...»[30]։

* * *

Ճիշտ է նկատում Աշ. Հովհաննիսյանը, որ «Ընտիր պատմության» մեջ «նկատելի են նրա կազմողի ու խմբագրողի մտայնությունն ու կրոնաբարոյական հայացքների հետքերը։ Մխիթարյան վանականի շարադրած այդ գրքում ընդգծված է Դավիթ-Բեկի տիպականացած պատկերը, ուր արտացոլված է իդեալական «տանուտիրոջ» մասին շարադրողի ունեցած պատկերացումը, «Ազնուական, բարեպաշտ, արդարակորով, ծանոթ գրոց, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւք և գործովք և վրէժխնդիր թշնամեաց Ազգին մերոյ, ինքն և ամենայն հետևողք իւր»[31]։

Միանգամայն ճիշտ է նշում նաև Մ. Դարբինյանը՝ «Մխիթարյան վանականը պատմական անցուդարձերը գնահատել է կրոնական հայեցակետից և դրսևորել պատմական երևույթների մեկնաբանման ճակատագրապաշտական մոտեցում։ Նա համոզված է, որ պատերազմի բախտը չի որոշվում ոչ կովողների քանակով և ոչ էլ ռազմավարական հմտությամբ, այլ աստված է միայն, որ հաղթանակ է պարգևում ում որ կամենում է»[32]։

Նշելով, որ դեպքերի ընթացքը նկարագրելիս, վանական խմբագիրը մեծ մասամբ առաջնորդվել է քրիստոնեական գաղափարախոսությամբ,

28 Նույն տեղում, էջ 71։
29 Նույն տեղում, էջ 71—72։
30 Նույն տեղում, էջ 73։
31 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 164; «Ընտիր պատմութիւն» էջ 6։
32 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 507։

Աշ. Հովհաննիսյանը նկատում է նաև. «Սրանով հանդերձ, քննաբար մերձենալով «Ընտիր պատմությանը», կարելի է զանազանել իրականն ու ոչ իրականը»[33]։ Այդ գաղափարախոսությունը հիմնականում դրսևորված է իրադարձությունների հաջող և անհաջող ելքերի՝ վախճանների պատճառաբանություններում «ողորմութեամբն Աստուծոյ վանեալք զթշնամիս մեր»[34], Դավիթը «ոչ յուսահատեցաւ յԱստուածային խնամոցն»[35], նա «զԱստուածն ամենակարող յօգնութիւն ինքեան կոչէր»[36], «Մեծի բարեգթութեանցն Աստուծոյ»-ի շնորհիվ Մխիթար բեկն ու Տէր Ավետիսը Հալիձորի պարիսպներից դուրս 300 հոգով հարձակվում են թշնամու 70000 հազարանոց բանակի վրա, շատերին կոտորում, մնացածներին փախուստի մատնում[37], «Իսկ զօրքն հայոց, որք դարան մտեալք էին... զԱստուած յօգնութիւն ինքեանց կոչեցին, յանկարծակի զաղաղակ բարձին, ի վերայ յարձակեցան, հարին՝ կոտորեցին զբազումս ի նոցանէ, և զայլսն ի փախուստ դարձուցին»[38], «Իբրև ետես Դաւիթ, թէ Աստուած օգնական է ինքեան յամենայնի, խնդրէր այնուհետև տալ պատերազմ ընդ Օսմանցւոց, և հանել զնոսա ի Խափանու»[39]։ և այլն։

* * *

Իր թերություններով հանդերձ փոքրածավալ այս «Պատմությունը» պարփակում է ընդարձակ ու կարևոր տեղեկություններ Սյունիքի ազատագրական պայքարի մասին և հանդիսանում է այդ պայքարի մի քանի ակտիվ գործիչների հուշերի մատյան կամ հիշատակարան։ Այն միակ սկզբնաղբյուրն է ութամյա հերոսամարտերի պատմության ուսումնասիրության համար։ Դարերին ու սերունդներին թողած այդ հուշարձանը բազմաշարշար հայ ժողովրդի ազատատենչ ոգու, ազատության ու անկախության համար նրա մղած ծանր մաքառումների պատմության մի հերոսական էջի կենդանի վկայությունն է։

33 Տե՛ս նույն տեղում, էջ 164։
34 «Ընտիր պատմութիւն», էջ 32։
35 Նույն տեղում, էջ 44։
36 Նույն տեղում։
37 Նույն տեղում, էջ 50։
38 Նույն տեղում, էջ 10, 75։
39 Նույն տեղում, էջ 52։

ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼՅԱՆՑ

XIII դարի հայ ականավոր ռազմաքաղաքական և դիվանագիտական գործիչ, իշխանաց իշխան, «ինքնակալ թագավոր Արցախական աշխարհի» Հասան Ջալալ Դովլա Վախտանգյանի արժանավոր ժառանգ՝ Հայոց Արևելյան կողմանքի՝ Հայոց Աղվանքի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանցը Անդրկովկասի XVIII դարի առաջին քառորդի ազատագրական շարժման ամենանշանավոր դեմքերից մեկն է եղել։ Սերված լինելով այդ ազատատենչ ու հայրենասեր իշխանական տոհմից և հավատարիմ մնալով նրա լավագույն ավանդույթներին, Եսային՝ իր ժողովրդի համար ստեղծված օրհասական օրերին, Վարդանանց հոգևոր նահատակների նման, կաթողիկոսական գավազանը փոխարինել է թրով ու վրաց Վախտանգ թագավորի հետ սերտ զինակցած, ջանք չի խնայել իրականացնելու Իսրայել Օրու վեհ նպատակը։

Ժամանակի այդ եռանդուն հոգևոր ու քաղաքական գործիչը, մեծ հայրենասերը, հինգերորդ դարի հայ պատմագիրների փայլուն համաստեղության նման, գրիչն էլ է ի սպաս դրել հայրենիքի ազատագրմանը, գրչով էլ է պատերազմ հայտարարել օտար բռնակալներին։ Նա էլ խոր գիտակցել է պատմության դերն ու նշանակությունը ժամանակակիցներին և գալիք սերունդներին հայրենասիրության, ազգային ինքնագիտակցության ու ազգային արժանապատվության ոգով դաստիարակելու բնագավառում։ Եսայու համար պատմություն գրողները կորովամիտ, իմաստուն և քաջ մարդիկ են եղել. «Ոմանք առաջին մանաւանդ թէ յոլովք նախկին. կորովամիտ՝ իմաստուն և քաջ՝ նա և սուրբ արանց յառաջ բերեալ իւրաքանչիւր դարուց՝ և ժամանակաց զեղեալ եղեալ իրաց պատմութիւնս հոգևորաց և մարմնաւորաց շարադրեալ թողին ինքեանց առ յապայս եկելոց յիշատակ և զգուշութիւն»[1], գրել է նա իր «Պատմության» առաջաբանի հենց սկզբում։ Այդտեղ թվարկում է նա հայ և օտար պատ-

[1] Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, Յառաջաբանութիւն, էջ 1։ Այսուհետև՝ Եսայի։

մագիրներին, որոնց գրածները կարդացել է իր «Պատմությունը» շարադրելու համար և բացատրում է, թե ինչու է տվել նրանց անունները։ «Զի դիտաւորութիւն բանիս,— գրում է Եսային,— առ պատմութիւնս ներկայիցս է՝ յորում եմք, որոյ նիւթ բանից և շարադրութիւն բառից ի նոցին ուսեալ գոլով գրոց» և զգուշացնում է. «մի լիցուք ապերախտ նոցին երախտեաց արտաքոյ թողլով զանուանս արանցն երախտաւորաց»[2]։

Այնուհետև նշում է, թե ինչի մասին են գրել այդ պատմագիրները։ Ըստ Եսայու, նրանցից «սկսան որ առաւել հմտագոյնքն էին ի ստեղծողէն զարարածս, և ի նախկին մարդոյն ադամայ և ոճով իմն անցանելով ընդ դարս և ընդ ժամանակս, և աւարտեալ մինչև ի յինքեանց իսկ կեանս։ Իսկ ոմանք ի նշանաւոր դարուց՝ և ի քաջազօր թագաւորաց և սքանչելի արանց սկիզբն եղեալ են զբանս իւրեանց, և այսպէս իրաց ինչ եղելոց մեծամեծաց և փոքունց՝ և այլ ևս ի բռնակալաց արանց և ի գոռոզաց տիրողաց, և ընդ հաւատոյս քրիստոսի՝ և եկեղեցւոյ նորին մրցողաց, և հերձուածողաց ամբարշտաց, և նեղութեանց ժամանակաց։ Նա և խաղաղարար և բարեպաշտ թագաւորաց՝ և իշխանաց, աշխարհի շինութեանց, և եկեղեցւոյ բարեկարգութեանց, և թշնամեաց յաղթութեանց. ևս շարայարեալ են ընդ պատմութիւնս զանազանս և հիացուցանօղս արժանիս լսելեաց. և հասուցեալ են մինչ առ իւրաքանչիւր ժամանակս. առ ի խրատ և յօգուտ և ի զգաստութիւն յետագայիցս։ Որպէս զի զբարեաց արանց նախանձաւորքն ընդ բարիսն գովեսցին, և չարքն և արհամարհելքն ընդ նախկին չարեացն արհամարհելք արտաքսեսցին»[3]։

Պատմական երկերի պարունակած նյութերի այդ թվարկումը Եսային արել է, որպեսզի ընդգծած լինի բարու և չարի գաղափարը, որպեսզի «յետագայիցս» օգուտ քաղեն բարի, լավ գործերից և խրատվեն չար գործերից, զգուշանան նրանցից, խուսափեն վատ գործ կատարելուց, զգաստ լինեն։

Նա գրում է, եթե նախորդ պատմագիրները, որոնք գրել են «ի ժամանակս տէրութեան քրիստոնէից թագաւորաց և իշխանաց բարեպաշտից գոլով և կամ թէ ընդ իշխանութեամբ այլազգեաց բռնաւորաց անկեալ՝ որ թէպէտ թշնամիք օրինաց են, այլ կամին շինութիւն և խաղաղութիւն աշխարհի և յոլովութիւն ռամկաց վասն օգտի իւրեանց, այնքան աղէտ, և կսկիծ, և սառապանք, և աղաղակ, և ամբաստանութիւն տրտնջաւոք ճանդեր՝ զրեալ են ի պատմութիւնս իւրեանց... Ապա ո՞ւրշափ և քա-

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 4—5։

նի՞ցս և Իսա՞նի պատիկ պատրիմք մեմ ողբալ և ճառաչել և աւաղել ողորմելի կեանս մեր... և վաշ կարդալ զկորստեամբք մերովք, որ ոչ միայն ի թագաւորաց մերոց և իշխանաց զրկեցաք, այլ և այլազգի գոռոզաց և բռնակալաց, զոր ակամայ կամօք հաճեալ և հնազանդեալ էաք ընդ տէրութեամբ նոցին բազում ժամանակս։ Որք թէպէտ հակառակ էին եկեղեցւոյ և օրինաց սրբոց, այլ ոչ իսպառ դիմամարտէին։ Եւ թէպէտ կեղեքէին, և կողոպտէին զկեանս մեր, այլ ապահով և խաղաղ ևս պահէին զմեզ յարտաքին և յօտար թշնամեաց և աւարչաց»[4]։ Այնուհետև վշտացած շարունակում է. «Զնոսին ևս եբարձ տէր աստուած մեր յերեսաց իւրոց և ի մէջ... զի ընտանի հաւատակից հովուաց վաղուրեմն էաք զըրկեալք այժմ՝ օտարահաւատ և այլակրօն տերանց ևս մեկուսացաք. և եղաք իբրև նաւաբեկ ոք որ ի մէջ կոհակացեալ ալեաց ծովուն տարաբերի ոտիք և ձէռօք, և ո՛չ ուստեքէ լինի փրկութիւն։ Քանզի և ես այսպէս գիտեմ՝ թէ ի հնումն և թէ ի նորումս սուրբ հարքն որքան ողբք և սուգ զոր ասացեալ և գրեալ են զայն նախագիտութեամբ՝ վասն այսմ ժամանակիս է, և վասն մեր և ո՛չ իւրեանց։ Վասն որոյ ո՛չ կարեմ տալ լռութեան»[5]... Այնուհետև ասում է, թէ չնայած պատմություն գրելը իր կարողություններից բարձր ու բարդ գործ է, բայց երբ «հայիմ ի քաջսն և ի դիտունսն քան զիս, զի լռեալ յայսմ ամենայնէ անփոյթ առնեն, և հարկանելոյ սոտիս ո՛չ տոկալ այսմ անտանելի աղէտիս՝ այլ յուսացեալ»[6]. և դիմելով ապագայի ընթերցասերներին իր առաջաբանն ավարտում է այսպես. «Իբրև ի մէջ գիշերի թանձրամած խաւարեալ վերջացեալ ժամանակիս հաղիւ թէ այսքանս ընձեռել կարացաք ապագայից ընթերցասէր եղբարցդ»[7]։

Հայ և օտար պատմագիրների անունների սոսկ թվարկումն արդեն իսկ վկայում են Եսայի Հասան Ջալալյանցի՝ պատմություն գրելու համար ունեցած պատրաստականության մասին։ Եվ մեզ հասած, ճիշտ է, ծավալով փոքր, սակայն պարունակած նյութով չափազանց հարուստ և խիստ արժեքավոր երկը դրա փայլուն ապացույցն է։

Իր երկի առաջաբանում Եսային խոսում է պատմության դերի ու նշանակության, այն գրելու դրդապատճառների ու անհրաժեշտության մասին, ապա շատ համառոտ տալիս է Պարսկաստանի պատմության ընդհանուր ակնարկը և պարսից շահերի ժամանակագրությունը։ Ակնարկում

4 Նույն տեղում, էջ 6։

5 Նույն տեղում, էջ 7—8։ (Ընդգծումները մերն են—Լ. Բ.)։

6 Նույն տեղում, էջ 8։

7 Նույն տեղում, էջ 9։

Եսային ամենայն բարեխղճությամբ նշում է, թե որ պատմագրից ինքն ինչ է ծաղկաքաղ արել։

Իր ժամանակշրջանի պատմությունը Եսային սկսում է 1699 թ. դեպքերով և ավարտում երկը Կախեթի, աղգությամբ վրացի, Մուհամադկուլի խանի կողմից 1723 թ. մայիսին Տփխիսի գրավումով։

* * *

Պատմագիրը որոշակի տեղ է հատկացրել Սեֆյան հարստության անկմանը և բացահայտել անկման պատճառները։ «Զի յայտնի իսկ է,— գրում է նա,—ամենեցուն այս, թէ տուն և կամ այլ շինուած ինչ մեծ թէ փոքր յորժամ հնացեալ փլանալոց իցէ, նախ որմունք և հիմունք խախտեալ բաժանի, և ապա ծեղուն տանեացն իջանէ. և զկնի այնորիկ ամենայն տանիքն ի վայր իջեալ կործանի. այսպէս եղև և թագաւորութիւն պարսից»[8]։

Հիմնական պատճառը նա համարում է Հուսեին-շահի վարած ներքին, հատկապես հարկային ծանր քաղաքականությունը և հարկահանման դաժան, վայրագ ու կործանարար ձևերը, և իբրև հետևանք՝ աֆղանների և լեզգիների ապստամբությունը շահի դեմ ու նրանց ասպատակությունները։ Մանրամասներով տալիս է հատկապես լեզգիների ավերածությունները, գերեվարումը, մարդկանց կոտորումը Անդրկովկասում։ Եսային նրանց «ժպիրհ» ազգ է համարում և ատելությամբ է գրում նրանց ասպատակությունների ու պատճառած սարսափների մասին և, ընդհակառակը, գոհունակությամբ գրում՝ նրանց պարտությունների, տեղական բնակչության (Գանձակի, Կախեթի, Ջրաբերդի) ցույց տված դիմադրության, մղած պաշտպանական մարտերի մասին։

Խորաթափանց Եսային քաջ գիտակցել է Հուսեին-շահի վարած վերը նշված քաղաքականության ավերիչ հետևանքները, և պատահական չէ, որ իր «Պատմության» այն գլուխը, ուր շարադրել է այդ քաղաքականության մասին, խորագրել է. «Յաղագս վրդովման և խանգարման թագաւորութեանն պարսից»։ Նա գրում է, որ այդ շահն 1699 թ. հրամայել է ընդհանուր աշխարհագիր անցկացնել իր տիրապետության տակ գտնվող բոլոր երկրներում, հաշվառման վերցնել 15 տարեկանից վեր բոլոր հասակները։ Այնուհետև բավական մանրամասն պատմագիրը տալիս է այդ հրամանի իրականացման միջոցառումները։

Հարկահանները իրենց զինվորներով շրջել են գյուղից գյուղ հաշվառ-

8 Նույն տեղում, «Պատմութիւն», էջ 28։

ման ենթարկել մարդկանց, անասունները, շարժական և անշարժ գույքը, եկեղեցիները, անապատները, վանքերը, բոլոր հոգևորականներին, արհեստավորներին, վաճառականներին։ Գյուղերում տանուտերերին, քահանաներին, գզիրներին առանձին-առանձին փակել են տան մեջ, հարցրել գյուղի բակչության թվի մասին անուններով, եթե նրանց հայտնած տվյալների մեջ հակասություն են գտել, ապա սուտ ասողին տուգանել են, կախել, փայտով ծեծել, կաշառք պահանջել, տասանորդ և զինվորներին հասանելիք սահմանված վարձից շատ ավելի վերցրել, ապա տվյալները կրկնապատկել են ու ներկայացրել արքունիք. «Իսկ անդ եդին հարկս ի վերայ գրելոց գլխոցն, երեքպատիկ յաւելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին»[9]։ Հոգևորականներին, որոնք ապահարկ էին, տասնապատիկ ավելի հարկադրեցին քան աշխարհականներին։

Աշխարհագրի անցկացումը չորս տարի է տևել (1699—1702 թթ.). Եսային դառնությամբ գրում է, որ 1702 թ. հրաման է տրվել այդ չորս տարիների գլխահարկը միանգամից գանձելու մասին։ Ատրպատականի Միրզաթահիր վեզիրը հազար հարյուր մարդկանցով եկել է Գանձակ և Ղարաբաղ գլխահարկը գանձելու համար ու վերցրել գրածից շատ ավելին։

«Քանզի յոյժ ծանր էր լուծն, և ո՛չ կարէին տանել, վասն որոյ շարշարէին, կեղեքէին, և ջարդելով առնուին ըստ չափու իւրեանց ի յոլովիցն յոլով՝ և ի փոքունցն փոքր. զի գեղն Ճ Ծ. Ճ կամ Ծ. թուման. և յոյժ փոքրն 3 Լ. կամ Ի Ի. թումանէ չէր պակաս... Յետ այսորիկ միւս ևս կերպիւ հարկս եդին՝ և անուանեցին զայն ապիքուրան. դարձեալ միւս ևս եդին, և զայն ասացին Շահզատի ախրաջաթ, միւս ևս յաւելին, և անուանեցին շեշտինար և զայս երեքպատկեցին...[10]։

Ժողովրդի ցավերով ապրող Եսայի պատմագիրը դառնացած բացականչում է. «Զայս ամենայն զոր գրեցաք նորահնար շարիք էր. զոր եդին ի վերայ առաջնոյ սահմանեալ հարկացն, որ և յառաջինն ևս ծանրագոյն էր բեռն ի վերայ ժողովրդեանն, այժմս փոխանակ թեթևացուցանելոյ, զայսքան ևս յաւելին ի վերայ»[11]։

Եսային այնուհետև բացահայտում է պետական ապարատում արատավոր բարքերի արմատավորման ընթացքը և դրա քայքայիչ հետևանքները երկրի ու ժողովրդի համար։ Ասում է. ըստ ընդունված կարգի, արքունիքը քաղաքներում և երկրներում զորքերի գլխավորներ էր նշանակում՝ խան, սուլթան, զուլբեկի, վեզիր, դարուղա, թուիլտար և սրանց միայն մեծ հանցանքների համար էին իշխանությունից զրկում. «Իսկ այժմս և այսու թագաւորաւս ո՛չ այսպէս՝ այլ թագաւորն և նախարարք իւր կաշառակուր լեալ փոյթ ընդ փոյթ փոփոխեալ հանէին՝ և ի միում ամի, Բ և Գ տեարս և իշխանս, ի միում քաղաքի և գաւառի զկնի միմեանց առաքէին. և նոքա եկեալ որպէս և ինքեանք կաշառօք ստացեալ էին զիշխանութիւնս իւրեանց, նոյնպէս և նոքա այնպէս ամենայն զդատ և զիրաւունս ժողովրդեան ի բաց եդեալ կեղեքէին, կողոպտէին զհնազանդեալս իւրեանց... սոյնպէս առնէին և օրինապահք դպիրք նոցա, այսինքն դատաւորք... որոց զաղիս ասեն։ Դարձեալ յաւելին միւս ևս շարիս զի որք միանգամ տեարք էին գեղից, և ագարակաց, նա և վարձաւորք՝ (այսինքն դօնլուղ հատեալ զօրապետք և զօրք) որքան դրամոյ չափ որ ոք և ունէր զնորին տասանորդն ևս հատին, և թագաւորական արարին, իսկ նոքա ո՛չ յիւրոց դրամոցն տային, այլ զայն ևս յաւելին և եդին ի վերայ իւրաքանչիւր հնազանդելոցն՝ և այնպէս առնէին. նմանապէս և այլ բազմայոյլ շարիս յորդեցին. ուստերս և դստերս ուժգին քարշելով. զարս և զկանայս բռնի ուրացուցանելով, և զյետամնացելոց զինչսն և զստացուածսն՝ և գանձս յափշտակելով՝ և ուրացողացն տալով. որպէս և որքան դօվլաթաւորք և մեծատունս աշօք մերովք տեսաք ի Ջուղայ և յԵրևան որ ի վերջին աղքատութիւն և թշուառութիւն հասեալ էին. և հարցեալ դպատճառն տեղեկացաք. որ վասն ուրացողացն, և յափշտակութեան ընչից իւրեանց էին եղեալք այնպէս»[12]։

Այդ նույն բանը տեսել և գրի է առել Առաքել Դավրիժեցին իր Պատմության մեջ և Եսային հաստատում է նրա այդ վկայությունը։

Ի վերջո պատմագիրը դառնացած ասում է, «Այնպէս զամենայն բարեկարգութիւնս բարձին յերկրէ... և օրէնս եդին իւրեանց... Վասն այնորիկ եհաս և ի վերայ նոցա իրաւունք արդարադատին աստուծոյ. այլ և ի վերայ ազգիս հայոց. ևս ...սակս նոցին անողորմ և անաստուած զոլոյն կեղեքելոյն և կողոպտելոյն զկեանս տառապելոցն... իսկ յաղագս անօրէնութեան՝ օրինազանցութեան, սոպոութեան՝ անմտութեան և անմիաբանութեան սոցա... եղև պատճառ կործանման ինքեանց»[13]։ Ահա մեր պատմագրի իրականությունից բխող և իրականությանը համապատասխանող միանգամայն ճիշտ եզրահանգումը։

Ընդհանրապես Եսային ատելությամբ է խոսում պարսիկների մասին, նրանց պատերազմներում կրած պարտությունների պատճառը հա-

9 Նույն տեղում, էջ 19։

10 Նույն տեղում, էջ 19—20։

11 Նույն տեղում, էջ 21։

12 Նույն տեղում, էջ 22—23։

13 Նույն տեղում, էջ 23—24։

մարում է այն, որ նրանք «թուլամորթ և կանացի» ազգ են, որ «ըստ սովորութեան իւրեանց՝ զոր ի գիշերի մինչև ցառաւօտ խնճոյիւք արբենան. և յառաւօտուն ընդ խոր քնովք անկանին որպէս զշունս»[14]։

Եսայի պատմագիրը լեզգիների ապստամբության և ասպատակությունների հիմքում դավանանքի հարցն է դնում, ասում է, թե նրանք սունիի էին կատաղի թշնամի էին պարսիկներին և զզլբաշներին, որոնք շիյա դավանանքին էին պատկանում։ Լեզգիների կողմից Շամախու գրավման կապակցությամբ գրում է, թե քաղաքի բնակչության մի զգալի մասը նույնպես սյունի էր և երբ քաղաքը պաշարվել է լեռնականների կողմից, քաղաքի սյունի բնակիչները գիշերը իրենց թաղամասերի դռները բացել են ու թշնամուն ներս թողել և նրա հետ միասին հարձակվել են պարսիկների վրա ու շատերին կոտորել, մնացածներին փախուստի մատնել ու քաղաքն էլ ավարի ենթարկել։ Գրում է նաև, որ քաղաքի և շրջագա գյուղերի հայերից քիչ կոտորեցին բայց նրանց ինչքը նույնպես կողոպտեցին։ Եսային հիացմունքով է խոսում «ամենափարթամ մայրաքաղաք» Շամախու մասին։ Նշում է, որ շահ Աբբասի նվաճումից հետո «շիւղ մի ոչ էր ստերիւրեալ յայսմանէ, և զի էր պանտար (նավահանգիստ—Լ. Բ.) կասպիական ծովուն և յամենայն կողմանց վաճառականացն տեղիք բնակութեան, և վաճառի, և շահաւէտութեան ի հնգկաց, ի հոռոմոց, ի ջուղայու, ի ըռուսաց, և յամենայն երկրէ, և այսպէս լի էր ամենայն ստացուածովք և գանձիւք» և ցավով գրում է, թէ «վասն որոյ ագահ և անագորոյն ազգն այն (լեզգիների—Լ. Բ.), ...կողոպտեալ առ հասարակ մերկացուցին (քաղաքը— Լ. Բ.), որպէս այր մի անկեալ ի ձեռս անաստուած աւազակաց...»։ Եսային զայրույթով ավելացնում է. «Եւ այնքան տգետք էին պիղծքն այնոքիկ, զի ոսկի մի տային հացի միոյ և սեխի միոյ»[15]։

Եսային նույնպիսի հիացմունքով է խոսում «ամենափարթամ և վայելուչ քաղաքն Տփխիս»-ի մասին և ցավով նկարագրում նրա գրավումը՝ լեզգիների օգնությամբ, Կախեթի Մուհամադկուլի խանի կողմից։ «Բազմաշխատ վաճառականք են արք տեղւոյն (Տփխիսի—Լ. Բ.) և փափկասունք և գեղեցկատիպ կանայք, ուստերք և դստերք նոցա, և ըստ կենցաղոյս քաղաքաւարութեան աննմանք ի բազմաց. ապարանիւք գեղապաճուճօք զարդարեալ, կահիւք և կարասեօք ուռճացեալք... զամենայն սպասս և անօթս տանց և սեղանոց նոցա... արծաթեղէնս և ոսկեղէնս էին կազմեալ, իսկ զհանդերձից և զգեստուց զարդուց ականակուր դիպակաց

14 Նույն տեղում, էջ 42—43։

15 Նույն տեղում, էջ 41։

մարգարտաշարաց պայծառութիւն դիտեա որչափ որ միտք քո բաւեն։ Այլ վասն եկեղեցեացն շքեղութեան և պայծառութեան զի՞նչ ասացից, զի յոյժ շքեղացուեալ էին ոսկեղինօք և արծաթեղինօք և դիպակօք և ամենայն կահիւք և կարասեօք և անօթեղէն սպասիւք»։ Եվ նորից ցավով գրում է, թէ «Զայս ամենայն գրեալքս ի ձեռն առին վայրենի և անագորոյն և ագահութեամբ մասամբ անյագ գազանաբարոյ և տղրկանման ազգն այնոքիկ (լեզգի— Լ. Բ.)[16]։

Եսային ընդգծում է, որ Երևանի, Գանձակի, Շամքորի, Շամախու և մյուս նահանգների խաները լեռնականներին դիմակայելու համար անընդհատ դիմել են շահի օգնությանը, բայց վերջինս զբաղված լինելով արևելքում աֆղանների դեմ պատերազմով, ի վիճակի չի եղել ամենափոքր չափով զորք ուղարկել նրանց, միայն բավարարվել է հրամաններ արձակելով ու պարտավորեցնելով բոլոր միջոցները ձեռնարկելու թշնամիներին դուրս քշելու իրենց տիրապետության սահմաններից, կամ էլ նահանգների խաներին փոփոխելով։

Պատմագիրը ցավով նշում է, որ ոչ միայն լեռնականներն էին օգտագործում Պարսկաստանում ստեղծված անիշխանությունից, այլև պարսիկ ու տեղական իշխողները։ Անդրկովկասում ծայր աստիճան սրվել էին միջֆեոդալական հակամարտությունները, կենտրոնախույս ուժերը ակտիվացրել էին իրենց գործողությունները, հաճախ չզլանալով անգամ դիմելու ու հրավիրելու լեռնականներին իրենց օգնության, որոնք և մեծ խանդավառությամբ էին կատարում նման խնդրանքները և նորանոր ասպատակություններ ու ավերածություններ կատարում Անդրկովկասի զանազան կողմերում։ Այդպիսի դավաճանական ու նենգ գործարքների զոհն էին դարձել հենց Շամախին ու Տփխիսը։ Առաջինը՝ ծագումով հայ եղբայրներ Իբրահիմ և Ղասում Մելիքների պատճառով, որոնք Շամախու Հուսեին խանից իրենց եղբոր վրեժը լուծելու համար էին հրավիրել լեզգիներին, իսկ երկրորդը՝ Կախեթի Կոստանդ թագավորի, որ դավանափոխ լինելուց հետո անվանվել էր Մուհամադկուլի խան, պատճառով, որ շահի հրամանով պատերազմել էր Քարթլիի Վախտանգ թագավորի դեմ, վերջինիս՝ Պետրոս մեծի հետ դաշնակցելու համար, չարաչար պարտություն էր կրել և նրանից վրեժը լուծելու համար հրավիրել էր լեզգիներին։

Եսային գրում է, թե վերը նշված եղբայրների հայրը շատ հարուստ է եղել, գնացել է Սպահան, շահից ստացել է Շամախու մերձակա հայ-

16 Նույն տեղում, էջ 68—69։

կական մի քանի գյուղերի մելիքությունը, կաշառքով, կուրացրել է Շամախու խանին, հետո նրան բանտարկել են, ունեցվածքը բռնագրավել հարքունիս. «Ասէին զթիւ ոսկոյն և արծաթոյն լինիլ իբրև ՀԻ Թուման, զատ ի յայլ կահից և կարասեաց, և շորքոտանեաց և մլքերաց, որոց ոչ գոյր թիւ. քանզի ասէին լինիլ սմա ջրաղաց ԵՃ. տինկ որ զպրինծն զտէն ԵՃ, քում և մաջինակ որ զապրիշումն քաշեն ԵՃ. գետք և առուք զոր արիս ասեն ի վերայ արարից և արմտեաց երկրագործութեանց յոլովք, և այլն մտօք նկատեսցես փարթամութեան առնս»[17]։

Մուհամադկուլի խանի դեմ Վախտանգի մղած այդ պատերազմի կապակցությամբ մեր պատմագիրը հպարտությամբ գրում է, թե վերջինս «ժողովեաց զզօրս իւր մանաւանդ զքաղաքացիսն, զհայազուն քաջամարտիկ զօրականսն, որք զհոգիս և զորդիս, զինչս և զանձինս եղեալ էին ի վերայ նորա յօժար սրտիւ»[18]։

Իբրև ականատես զայրույթով նկարագրելով լեզգիների՝ Գանձակի և Ղարաբաղի տարածքներում մի քանի անգամ, ավարառության նպատակով կատարած ասպատակությունները, պատճառած սարսափներն ու արհավիրքները, բնակչության կոտորումն ու գերեվարումը, կողոպուտն ու ավերը, Եսային տվել է և նրանց բնութագիրը, «Մարդախանձ գաղանքն այնոքիկ՝ իբրու թե ընդելք որսորդք, քաջք, և կիրթք ի շարիս իւրեանց, և ահարկադէմք, որ զանուն և զձայն նոցա միայն լսելով սարսէին և դողային մերձակայք նոցին»[19]։

Խաչենի կապակցությամբ գրում է. «զգերին և զանասունսն ընդ միմեանս խառնեալ էին իբրև զհեղեղ յորդ. և որպէս զբանակ մեծ ի գնալն իւրեանց, զոր և մեք աչօք իսկ նկատէաք, քանզի փախստեայ հասեալ էաք ի կատար լերինն որ ի վերոյ է սրբոյ Աթոռոյն Գանձասարայ, և ոտք նոցա ոչ հասին առ մեզ։ Եւ մեք անտի հայեցեալ տեսանէաք զեղելոցն իրագործութիւն... Աստանօր տեսանելի է զաղէտ յետամնացելոց, զսուգ կոտորելոցն, և զաշխար գերելոցն, զկսկիծ մարցն, և զաղէտ գերեալ զաւակացն, զողորմն որք մնացելոցն, և զաւարառութիւն ընչիցն, զձայն լալականացն խառնեալ ընդ վայրմն միջակտուր արանցն. արդարև զբնութիւնս լերանց՝ և կարծր վիմաց փոփոխեալ ընդ ինքեանս սգակից ինքեանց առնէին»[20]։

Պատմագիրն ասում է, թե Գանձակի մեծամեծները նախքան լեզգիների կողմից քաղաքի պաշարումը, գնացել էին Վախտանգ Թագավորից օգնություն խնդրելու և նա 40000 զորքով գնացել է Գանձակ, մինչ այդ թշնամին մի քանի օր պաշարել է քաղաքը, բայց գրավել չի կարողացել քաղաքացիների դիմադրության պատճառով, և երբ իմացվել է վրաց բանակի մոտենալու մասին՝ լեզգիները ետ են քաշվել, և Վախտանգը հետապնդել է նրանց մինչև Կուրի այն կողմը, վերադարձել ու բանակ դրել Գանձակի հարավակողմում, մեկ ամիս մնացել այնտեղ։ Եսայու վկայությամբ՝ վրացական բանակը Գանձակի Ջավադ խանի խնդրանքով հրաձակվել է խանության տարածքում բնակվող՝ սունի դավանանքին պատկանող ցեղերի վրա, որ իբր նրանք են իրենց դավանակից լեզգիներին հրահրել գալու իրենց երկիրը։

Եսային վշտացած ընդգծում է, որ Վախտանգի հեռանալուց հետո, երկիրը անտերունչ է մնացել, մարդիկ ինչ ուզեցել են, այն էլ արել են և ինքը «տեսեալ զայս և նկատեալ զի աւարտ իրին ո՛չ գոյ նշան խաղաղութեան, որ և էի ի մէջ բանակին Վախտանկայ՝ ընդ նոսին և ես ուղղեցայ գնալ յերկիրն վրաց, որ և գնացաք իսկ»[21]։

* * *

Եսայի Հասան Ջալալյանցի երկը չափազանց կարևոր ու ստուգապատում տեղեկություններ է պարունակում կապված Պետրոս առաջինի Անդրկովկասյան արշավանքի և նրա նպատակի և դրա հետ կապված հայ-վրաց ժողովուրդների ազատագրական ակնկալությունների, ռուս-վրացական և հայկական բանակցությունների ու համագործակցության և զինակցության նախապատրաստման, Գանձակի մոտ վրաց—հայկական ուժերի կենտրոնացման ու համատեղ պատերազմելու պատրաստականության, ինչպես նաև Թուրքիայի կողմից Պարսկաստանի դեմ պատերազմ սկսելու դրդապատճառների մասին։

Եսային մեծ հայրենասերի հպարտությամբ ակնարկում է այն մասին, որ Ղարաբաղում «զհայազուն զօրսն որ գումարեալ կային անտ ի ձեռն մէլիքներաց և ղ գլխավոր եղեալ երիտասարդացն որոց անուանքն էին Աւան, Նրուան, Շահնի և Սարուխան, որ և սոքա հարիւրապետք և իւզպաշիք կոչէին։ Սոքա ը մելիքներացն Ղարաբաղու, զկնի առաջին դառնալոյն Վախտանկին և խախտելոյ իշխանութեան պարսից միաբանեալ ընդ ինքեանս զամենայն քաջասիրտ և արիական և զօրեղ մանկունս և երիտասարդս տանս աղուանից, ըստ ինքեանց կազմեալ էին զօրս բա-

17 Նույն տեղում, էջ 34—35։

18 Նույն տեղում, էջ 64։

19 Նույն տեղում, էջ 42։

20 Նույն տեղում, էջ 46—47։

21 Նույն տեղում, էջ 53—54։

զումս աւելի քան զերկոտասան հազար։ Եւ ամրացեալ յամուր վայրսն արցախու. և այսպէս բազում արիութիւնս ցուցեալ յերկրիս մերում, որոց պատմութիւնքն յառաջակայսդ յաճախագոյնս գտցես»[22]։

Այստեղ խոսքը սղնախների մասին է, սակայն դժբախտաբար Եսայուց մեզ հասած երկում վերն ասվածից բացի սղնախներում ծավալված հերոսամարտերի մասին ոչինչ չկա։ Պատմագրի այդ խոստումը հիմք է տալիս ենթադրելու, որ նա այդ մասին, ինչպես նաև 1722 թվից հետո տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ գրել է, սակայն մեզ չի հասել, և հավանաբար նրա գրած պատմության միայն մի մասն է պահպանվել, այն էլ, թերևս սկզբի։ Սակայն նրա վերոհիշյալ վկայությունն էլ չափազանց արժեքավոր է, որոշակի պատկերացում կազմելու համար սղնախներում ազատագրական շարժման սկզբնական շրջանում կամ առաջին փուլում ստեղծված հերոսական իրավիճակի մասին։

Անդրկովկասի ժողովուրդների՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրման Օրու ծրագիրը, հետագայում 1722 թ. Գանձակում և Տփխիսում վրաց Վախտանգ թագավորի հետ տեսակցությունը, մեծ ոգևորություն էին առաջացրել կաթողիկոս Եսայու մեջ և նա ջանք չէր խնայել իրականացնելու հայ-վրացական միաբանությունն ու զինակցությունը։ Եսայու այն վկայությունը, թե ինքը Վախտանգի՝ դեպի Գանձակ կատարած արշավանքի ժամանակ գտնվել է վրաց բանակում, հիմք է տալիս եզրակացնելու, որ արդեն 1722 թ. գարնանը այդ զինակցության հիմքը դրված է եղել։

Այլ աղբյուրներից հայտնի է, որ դեռ 1710 թ. Եսային պատրաստություն էր տեսել Օրու հետ մեկնելու Մոսկվա, անձամբ Պետրոս առաջինին ներկայացնելու իր երկրի ու ժողովրդի վիճակը և իրենց սպասելիք ակնկալությունները նրանից, որ 1721 թ. հայ հոգևոր ու աշխարհիկ մի քանի գործիչների՝ Պետրոսին ուղարկած նամակը, որով հայտնել են Օրու Անդրկովկասում կատարած գործերի մասին, ստորագրողներից մեկը Եսային է եղել[23]։ Ի վերջո 1718 թ. Պետրոս առաջինին ուղարկած իր նամակում Եսային որոշակի գրել է, թե հայ մելիքների, յուզբաշիների զինված ուժերի հետ մեկտեղ ինքն էլ ցանկանում է գալ նրա հովանու ներքո և պատրաստ է իր ծառայությունները մատուցելու կայսրին, հենց որ նա իր զորքերով մուտք գործի Անդրկովկասի սահմանները[24]։ Հետագա իրադարձությունները ցույց են տալիս, որ հայ ազատագրման այդ ականավոր գործիչը իսկապես ամեն ինչ արել է և նախապատրաստված է եղել կատարելու իր տված խոստումը։ Այս բոլորը հիմք են տալիս ասելու, որ Եսային է հենց եղել սղնախների ոգին ու առաջնորդը, հերոսամարտերի ոգեշնչողն ու կազմակերպիչը։

Պատմագիրը գրում է, թե Գանձակից Վախտանգի հետ Տփխիս վերադառնալուց հետո, չորս ամիս մնացել է այնտեղ։ Հավանական է, որ հենց այդ ընթացքում նա Վախտանգի և մյուս վրաց ու հայ գործիչների հետ մշակել են վրաց-հայկական ուժերի կազմակերպման ու համախմբման, Պետրոսին արժանավայել ու կազմ ու պատրաստ դիմավորելու ծրագիրը, նրա իրականացման միջոցառումները։ «Քանզի,— գրում է Եսային,— պայման ուխտի և ժամադիր եղեալ էր թագաւորն Պետրոս առ Վախտանկն զի յայսմ աշնան ի մուտն հոկտեմբերի՝ ինքնին ի քաղաքն Շամախի հասեալ և զնա անդ ի պատրաստի գտանել պարտէ»[25]։

Եսային մանրամասն նկարագրում է Պետրոսի արշավանքի օրերին Վախտանգ թագավորի համար ստեղծված ծանր կացությունը։

Ասում է՝ պարսից թագավորության թուլացման և քայքայման օրերին, նրա թշնամին թուրքաց թագավորը զորք հանեց նրա դեմ, ռուսները կամենում էին օգնել պարսից թագավորին, իսկ թուրքերը ուզում էին գրավել Պարսկաստանը, պատճառաբանելով, թե ուրիշներն են կամենում տիրել այն կողմերին, մինչդեռ այդ իրավունքը իրենցն է, քանի որ Ատրպատականի երկիրն առաջ իրենցն է եղել։ Թուրքիան Վախտանգից պահանջել է անցնել իր կողմը և հնազանդվել իրեն, Ռուսաստանը՝ թե հավատակից ես ինձ, պարտավոր ես ինձ օգնել ու իմ կողմն անցնել, քանի որ մինչ այդ էլ պայմանավորվածություն կար Պետրոսի և Վախտանգի միջև, որի մասին ասվեց վերևում։ Եսային ասում է՝ հենց այդ ժամանակ պարսից թագավորից, որ անկման եզրին էր կանգնած, Վախտանգը հրովարտակ է ստացել, թե նա իրեն է հանձնել Գանձակի և ամբողջ Ատրպատականի իշխանությունը և կարգել է իրեն այդ կողմերի բոլոր իշխողների վրա սպարապետ, միաժամանակ պահանջել է Վախտանգից զորք հավաքել գնալ Գանձակ ու զգուշանալ պարսիկների թշնամիներից— պաշտպանել այդ կողմերի սահմանները։

Վախտանգը մտահոգության մեջ էր ընկել թե որի պահանջը կատարի, ի վերջո որոշում է կատարել վերջին երկուսի հրամանը՝ շահի ու ռու-

22 Նույն տեղում, էջ 57։

23 Տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII в.», ч. I, Ереван, 1964, վավերագիր 161։

24 Նույն տեղում, վավ. 156։

25 Եսայի. էջ 55։

սաց կայսրի, «զի մինն բուն տէրն մեր է այսինքն պարսից թագաւորն, և միւսն հաւատակից մեր և քրիստոնեայ կայսր է, մանաւանդ թէ հզօր զօրութեամբ»[26], որը որ կհաջողվի՝ այն էլ կանի, իսկ ինչ վերաբերում է Թուրքիայի պահանջին, ապա այն անհնարին է քանի որ նա «այլահաւատ և օտար գոլով ի մէնջ կամի բռնութեամբ տիրել երկրի մերում»[27]։ Անկասկած այդպես է տրամաբանել և մեր պատմագիր կաթողիկոսը։

Այնուհետև Եսային գրում է, թե Վախտանգը հրամայել է վրացիներից և հայերից զորահավաք անել. իրեն էլ է կանչել և մեծ զորքով շարժվել են դեպի Գանձակ։ Ի դեպ նշում է, որ Տփխիսում, չորս ամիսների ընթացքում. Վախտանգը սիրով է ընդունել իրեն և իր մարդկանց ապրուստի միջոցները, ոռճիկն ինքն է տվել։

Այդա նշում է, թե որոշ ճանապարհ անցնելուց հետո, Վախտանգն իրեն կանչել է և հանձնարարել շտապ գնալ Ղարաբաղ այնտեղի, վերը նշված մելիքներին իրենց զինական ուժերով բերել իր բանակատեղին— Գանձակի մոտ։

Մեծ հայրենասերը հրճվանքով ու հպարտությամբ գրում է. «Ըստ հրամանին եկեալ մեր յարդարեցաք զնոսա ըստ օրինի զօրաց իշխանաց, վասն զի անվարժք էին զինուորական սպասաւորութեանց և այսպէս բովանդակեալ զամենայն. իբրև զտասն հազար արս ընտիրս և սպառազէնս, ընդ որոց և զդասս քահանայից. և պաշտօնէից մերոց առեալ մեծաւ ճոխութեամբ և խնջոյիւք համարելով նոր նորոգեալ զիշխանութիւն հայոց»[28], գնացել կանգ են առել նշանակված տեղում, իսկ Վախտանգն արդեն բանակել էր քաղաքի մյուս կողմում։ Երեք օրից հետո թագավորը Եսայուն և մելիքներին իրենց զորագնդերով կանչել է իր բանակատեղին։ «Որ և ելեալ գնացաք, և ի մերձենալ բանակի նորին. ինքն իսկ հրաման արար զօրաց իւրոց ընդ առաջ լինիլ մերայնոցն իբրև ողջամբ ընդունել զնոսա»։ Այնուհետև մեծ խանդավառությամբ շարունակում է. «Եւ այսպէս մեծաւ շքով հանդպիլ միմեանց երկուց կողմանց զօրացն. և իբրև զօրէն պատերազմի ռազմ կարգեալ ճակատ առ ճակատ, և քաջամարտիկ մանկունք մերոյս դիմաց յառաջ խաղացեալ ճախր առեալ քաջընթաց երիվարօք, և զինակազմ զրահիւք պարէին յանդիման ճակատուն. և ի ձայնէ հրացանացն որոտայր և թընդայր վայրն այն, և փոշեխառն ծուխ նորին, իբրև զկայծակնափայլ ամպ արգել զճառագայթս արեգականն մինչ զի զմիմիեանս հաղիվ տեսանէաք։ Եւ այսպիսի խրախութեամբ հասեալ իջաք մերձ առ բանակի նոցին. զոր տեսեալ Վախտանկին այսպիսի յառաջադիմութիւն մերայնոցս ցնծացաւ ի հոգի և ի մարմին իւր։ Եւ նոյն ժամայն յղեալ կոչեաց առ ինքն զմեզ և զգլուխ կարգեալ տղայսն և զմէլիքսն. և յորդորական բանիւ յուսադրեաց, և զօրացոյց ասելով՝ այսուհետև զօրասջիք և քա՛ջ լերուք իբրև յորդիս զօրութեան և յուստեքէ և յումեքէ մի երկնչիցիք զի ահա հասեալ է ժամանակ փրկութեան քրիստոնէից։ Եւ դարձուցեալ զբանն առ մեզ և յոյժ շնորհակալ եղև ի մէնջ. և ի վաղիւն զամենեսեան զգլխաւորսն խիլայեաց»[29]։

Վախտանգ թագավորի այս մարտակոչը ուղղված վրաց-հայ զորքերին մի պահ նույնպես հիշեցնում է Եղիշեի մոտ Վարդան Մամիկոնյան սպարապետի ճառը արտասանած Ավարայրի ճակատամարտից առաջ, ուղղված հայոց բանակին։ Ճիշտ է Եսայու և Եղիշեի ապրած ժամանակները միանգամայն տարբեր էին, սակայն երկու հայրենասերների նպատակները նույնն էին՝ տեսնել հայոց իշխանության նորոգումը—վերականգնումը, ոգեշնչել ժամանակակիցներին վերջնական նպատակի մոտալուտ հաղթանակի համար։

Այնուհետև գրում է, թե Պետրոսը եկել հասել էր Դերբենդ, տեղի բնակիչները ինքնակամ այն հանձնել էին նրան։ Հետո տալիս է կայսրի Աստրախան վերադառնալու և արշավանքը դադարեցնելու հավանական պատճառները։ Ասում է «բայց ոչ գիտեմ զինչ պատահումն եղև, ոմանք ասացին զի ի հիւանդութենէ և այլ պատահարաց վնասս յոլովս եղև զօրուն, և կոտորումն ձիոց վասն անընդելութենէ նոցա՝ օդոյ եղանակի երկրին, այլ և նաւաբեկութիւն ևս լեալ զինուց այսինքն ջապախանից, և ոռճկաց զօրուն, և այլք այլ իմն պատճառս ասացին»։ Սակայն այդ այլ պատճառների մասին ոչինչ չի գրում. միայն նշում է, որ Պետրոսի գնալուց հետո, Վախտանգն էլ լուր ստանալով այն մասին, որ իր հին թշնամիները ցանկանում են Տփխիսը գրավել. վերադարձել է Վրաստան։

Այդ բոլորից հետո մեր պատմագիրը վշտացած գրում է. թէ «Իսկ մեք անյոյս մնացեալ առաջնոյ ասացեալ յուսոյն դարձաք իւրաքանչիւր ի տեղիս մեր և ամրացաք ի լերինս ուր և դժուարին էր»[30]։

Ժամանակակից աղբյուրները սակայն վկայում են, որ դժվարին լեռներում ամրացածները անհույս չեն մնացել, նույն Եսայու գլխավորությամբ շարունակել են կենաց ու մահու պայքարը պարսիկների, և հետո Անդրկովկաս ներխուժած թուրք հրոսակների դեմ։ Բայց 1724 թ. հուլիսի

26 Նույն տեղում, էջ 56։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում, էջ 58։

29 Նույն տեղում, էջ 58—60։

30 Նույն տեղում, էջ 60—62։

12-ին Կոստանդնուպոլսում կնքված ռուս-թուրքական պայմանագրից հետո, որով ռուսները ճանաչել էին թուրքերի տիրապետության տարածումը Իրանի Անդրկովկասյան նահանգների նկատմամբ, հեռատես քաղաքականագետ Եսային, ելնելով ստեղծված բարդ ու անելանելի վիճակից, ստիպված է եղել խորհուրդ տալ սղնախների ղեկավարներին դադարեցնել դիմադրությունը, խուսափել արյունահեղությունից, երկրի ավերումից ու սմայացումից։ Իսրայել Օրու գործը շարունակող Մինաս վարդապետի՝ ռուսաց կառավարությանը ուղղված մի ղեկուցագրից իմանում ենք, որ խորապես ողբերգական է եղել մեր այս պատմագիր կաթողիկոսի վախճանը։ Թուրքերի դեմ պայքարը շարունակելու կողմնակիցները նրան մեղադրել են դավաճանության մեջ, իսկ նրանք ովքեր ակնկալություններ էին ունեցել Ռուսաստանի օգնությունից, նրան մեղադրել են խաբեբայության մեջ և Եսային յուր վշտի մեջ սուզված և անտեղի վիրավորանքներ կրելով ինքնասպան է եղել[31]։

* * *

Եսայի Հասան Ջալալյանցի պատմական երկի արժեքը չափազանց մեծ է, այն ականատեսի, գործող անձի ստուգապատում աղբյուր է Անդրկովկասի 18-րդ դարի առաջին քառորդի պատմության ուսումնասիրության համար։ Կարևոր տեղեկություններ է հաղորդում նվաճված երկրներում Պարսկաստանի վարած հարկային քաղաքականության, հարկահանման ձևերի, Սեֆյան հարստության անկման պատճառների, լեզգիների ասպատակությունների, միջֆեոդալական հակամարտությունների, ժողովուրդների ծանր ու անտանելի վիճակի մասին։

Նրա պատմական արժեքը շատ ավելի մեծ է հայ-ռուսական և հայ-վրացական հարաբերությունների, հայ ժողովրդի ազատագրական շարժման նախադրյալների ու առաջին փուլի, հայ-վրաց զինակցության պատմության ուսումնասիրության համար։

31 Տե՛ս «Армяно-русские отношения...» т. II, ч. II, վավերագիր 380, էջ 13; տե՛ս և Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 159։

ԱԲՐԱՀԱՄ ԵՐԵՎԱՆՑԻ

XVIII դարի 15-ամյա ժամանակահատվածի (1721—1736) հայերի, վրացիների, ադրբեջանցիների, աֆղանների լեզգիների և առանձնապես պարսիկների ու թուրքերի, նրանց փոխհարաբերությունների ու մղած պատերազմների, ռուս-պարսկական հարաբերությունների և ընդհանրապես Մերձավոր արևելքի քաղաքական իրադարձությունների պատմության ուսումնասիրության համար այս խիստ կարևոր աղբյուրի[1] հեղինակի մասին մեզ մինչև 1977 թ. ոչինչ հայտնի չի եղել։ Միայն մեզ հասած նրա գրած պատմության ձեռագիր օրինակներից մեկի վրա գրված «Երևանցի» հորջորջումն է, որ վկայել է նրա ծննդավայրի մասին։ 1977 թ. Վենետիկում տպագրվեց ս. Ղազարի Մատենադարանում պահվող Աբրահամ Երեվանցու ինքնագիր ձեռագիրը (№ 2717), որը հեղինակի իսկ կողմից կրում է «Պատմութիւն թագաւորի Պարսից» կամ «Պատմութիւն Պարսոյ» խորագիրը։ Նրանում պահպանվել է հեղինակի թողած ինքնագիր մի փոքր հիշատակարան, այն կարևոր կենսագրական տվյալներ է տալիս հեղինակի ով լինելու և «Պատմությունը» գրելու շարժառիթների մասին։ Այնտեղ կարդում ենք. «Վերջ եղավ զայս պատմութիւնիս բանըն, այլ ոչ գիտեմ քան սիս յառայվել. այս էր որ տեսի աչաց իմոյ գրեց եւ յիշեցի, թվ. ՌՃՀԳ (=1724) ումն մինչ ի 1183 (=1734)։ Նուրջ եկի ի մէջ օսմանցու, ի մէջ պարսոյ, տեսի եւ գրեցի, ես Երեւանցի Յոհանէս որդի Աբրահամ, որ զայս յիշեցի այս պատմութիւնըս։ Օվ աստուածայսէր քրիստոնէս, կարդայ զայս պատմութիւնըս, ողորմիս ասէ իմ հօր Յոհանին, իմ մայր Մարամին եւ քոյր Դարդա խաթունին...»։

Այնուհետև շարունակության մեջ թվում է մյուս քրոջ և վեց եղբայրների անուններն ու վերջացնում գրելով.

«Զայս անունքս որ յիշեցի, ի ձեռն օսմանցու մարտիրոսացան, թէ

1 Աբրահամ Երեվանցի, պատմութիւն պատերազմացն 1721—1736 թուի, Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանօթութիւններ, պատրաստեց հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ, 1977։ Այսուհետև՝ Երևանցի։

մայր, թէ հայր, թէ եպսպար։ Ով ասէ ողորմիս, վարձն Քրիստոսէ առցէ. ամէն» (թղ. 70բ)[26]։

Վերը մեր կողմից ընդգծված տողում Երևանցին, ինչպես տեսնում ենք, հավաստում է, որ ինքը իր կողմից նկարագրած իրադարձություններին ականատես է եղել։ «Պատմության» ընթացքում էլ հաճախ կրկնում է. «այսպէս որ ասացանք եւ յիշեցանք», «այսպէս որ ասացի եւ լսեցի» և կամ «...այլոց խօսելովն»։ Այս էլ գրել է ցույց տալու համար, թե շարադրանքի որ հատվածները գրի է առել ուրիշների պատմելով, կամ ուրիշներին լսելով։ Երևանցու, իբրև պատմագրի, առանձնահատկություններից է, այն, որ նա ամենայն մանրամասնությամբ տալիս է իրադարձությունների ժամանակագրությունը տարիներով, ամիսներով, օրերով անգամ ժամերով և դրանք ավելի են արժեքավորում նրա երկն իբրև սկզբնաղբյուր։

Հրատարակիչ Ս. Ճեմճեմյանը միանգամայն ճիշտ նկատում է, որ բացի պատմականից, Աբրահամի «Պատմությունը», ունի նաև ազգագրական արժեք, որովհետև նա գրել է XVIII դարի առաջին կեսի երևանյան գավառաբարբառով, բացատրություններով և բառամթերքով և դա, «Պատմությանը» տալիս է անցքերին հարազատ մնալու բնույթ և միաժամանակ վստահություն, թե հեղինակը հետամուտ չի եղել «խնամելու լեզուն եւ բացատրութիւնները, այլ ուզած է աւանդել մեզի լոկ պատմությունը, ինչպէս որ տեսած է եւ լսած»[3]։

Ելնելով «Պատմության» պարունակած նյութից, շարադրանքի ոճից և հեղինակի՝ նկարագրվող իրադարձությունների մեկնաբանություններից, կարելի է ենթադրել, որ նա ժամանակի կրթված, ռազմական գործին հմուտ անձնավորություններից մեկն է եղել, ժամանակին հայ հասարակությանը հուզող կրոնական հարցերին նա չի անդրադարձել, հայոց կաթողիկոսը նրա մոտ հանդես է գալիս միայն քաղաքական-դիվանագիտական գործիչի դերում։ Նրա «Պատմությունն» ամբողջությամբ վերցրած աշխարհիկ բնույթի գործ է և իբրև այդպիսին հայ պատմագրության մեջ բացառիկ պատմական երկերից մեկն է։

Քաղաքական իրադարձությունների, գերազանցապես պատերազմների նկարագրությանը նվիրված այս երկը սկսվում է աֆղանների դեպի Պարսկաստան կատարած արշավանքով և ավարտվում է Մուղանի դաշտում Նադիրի թագադրությամբ և Թուրքիայի հետ հաշտության կնքմամբ։

Եթե աֆղանա-պարսկական, աֆղանա-թուրքական և պարսկա-թուր-

2 Նույն տեղում, Յառաջաբան, էջ 6։

3 Նույն տեղում, էջ 8։

քական հարաբերությունները, դրանց առնչությամբ Նադիր խանի ծավալած գործունեությունը, Երևանցին համեմատաբար հանգամանորեն է շարադրում, ապա նշված ժամանակահատվածում բուն Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին, նրա վիճակին և Նադիրի՝ Հայաստան կատարած արշավանքներին, անցողակի ու շատ համառոտ ձևով է անդրադառնում։ Երևանցու «Պատմության» այդ բացը որոշ չափով լրացնում են նրա ժամանակակից Աբրահամ Կրետացի կաթողիկոսը և Նադիրի պալատական պատմագիրներ Մուհամմադ-Քյազիմը և Միրզա Մուհամմադ-Մեհդի խան Աստարաբադին։ Վերջին երկուսի, մասամբ և Կրետացու (այդ մասին իր տեղում ասվել է) հաղորդած տեղեկությունները Նադիրի մասին, սակայն, պետք է մեծ վերապահությամբ օգտագործել, քանի որ դրանք, Կրետացու իսկ խոսքերով ասած, մեծ մասամբ «շողոքորթեալ» պատմություններ են, ուր հակառակ ժամանակակից բազմաթիվ հիշատակարանների գրիչների և հատկապես Աբրահամ Երևանցու վկայություններին, իդեալականացված է Արևելքի այդ փառամոլ բռնակալը։ Ցավով պետք է նշենք, որ հիմք ընդունելով շողոքորթեալ այդ պատմությունները, սովետական առանձին պատմաբաններ ճիշտ պատկերացում չունենալով «ազատագրական կռիվ», «ազատագրական շարժման անձնվեր առաջնորդ» հասկացողությունների մասին, նենգ ու ստոր մեքենայություններով Իրանի գահին տիրացած Նադիրին «Իրանի նոր առաջնորդ» են համարում։ Սեֆյան բռնակալության դեմ աֆղան ժողովրդի ապստամբական շարժման ճնշումը Նադիրի կողմից, ինչպես նաև արևելքում դերիշխող դիրք ձեռք բերելու համար Իրանի մղած պատերազմները Թուրքիայի դեմ «ազատագրական կռիվներ» են համարում և Նադիրին էլ այդ բոլորի «փորձված զորավար»։ Նման «հայտնագործությունները», մեղմ ասած, պատմության առջև մեղանչում են նշանակում, եթե ոչ ավելին։ Այս ասվեց ի միջիայլոց, կապված Երևանցու Պատմության, իբրև Նադիրի ժամանակաշրջանի պատմական սկզբնաղբյուրի արժեքավորման հետ։ Այդ առանձին ուսումնասիրության հարց է և այստեղ տեղը չէ խորանալ դրանում։

Նշենք միայն երկու փաստ։ Հայտնի է, որ XVIII դարի 20-ական թվականներին հայ ամենանշանավոր ռազմական գործիչը Դավիթ-Բեկն էր, այդ ժամանակաշրջանի և ոչ մի աղբյուր չի հիշատակում Դիզակի Մելիք Եգանին իբրև այդպիսին, նա ավելի հայտնի է դարձել 30-ական թվականների սկզբին, այն էլ ոչ որպես հայ ազատագրական շարժման կապակցությամբ, այլ իբրև վերակենդանացող Իրանին հպատակ հայ աշխարհիկ իշխող վերնախավի ռազմաքաղաքական ներկայացուցիչ և իր ծառայություններն է մատուցել Նադիրին՝ օսմանցիների դեմ պատերազմնե-

ցրում և, հասկանալի է, մեծարվել է նրա կողմից։ Երևանցու մի վկայության համաձայն, Դավիթ-Բեկ անունով մի հայ իշխան Թահմազ Բ շահի մեծամեծների հետ խորհուրդ են տվել նրան զգուշանալ Թահմազ խանից։ «Դարձեալ շահ Թահմազին ունէր մեծ մեծ իշխաններ։ Թահմազ խանն դեռ չեկած ժամանակն. շահին ասացին թէ՝ «...Թահմազ խանն որ գալիս այ, մենք լսել ենք որ գը գայ, քեզ գը բռնայ գտընայ երկաթի մէջ, քո թագաւորութիւնն կը կորուցանէ»։ Թագաւորս ոչ հավատաց։ Գ(=3) յավուր անցնելոյ յետ, մին Դավիդ բէք կասեն, որ էր քրիստոնայ, որ թագաւորի մին մեծ իշխան է կամ թե խան... Այս Դավիթս գիշերն եկ դաքայորի տունն ծածկայբար, գնաց դաքայորին մոտ, ասաց... թէ՝ «Թագաւորն ողջ լինի, Թահմազ խանն քեզ ներհաք այ, քեզ գը բռնայ, քոյ թաքայորութիւնն կը տիրայ»։ Թաքայորն որ լսեց էս բանս, ոչ քուն եղավ. գիշերն լուսացավ, շուտով իւր իշխաններն խնդրեց, եկին ի դուռն թագաւորի, ԻԳՌ (=23.000) զօրք»[4]։

Պատմագրի այս վկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Սյունիքի և սղնախների ազատագրական շարժման առաջնորդները, որոնք լեզու էին գտել շահ Թահմազի հետ, միասնական ճակատ կազմելու ընդհանուր թշնամու դեմ և Դավիթ-Բեկը մեծ լիազորություններ էր ստացել շահից, բարյացակամ չեն եղել տրամադրված պարսից գահի հավակնորդ Նադիրի նկատմամբ։ Թերևս դրանով է բացատրվում այն, որ ժամանակակից նշված հայ և պարսկալեզու աղբյուրներն անգամ ակնարկներ չեն արել հայ ժողովրդի մղած հերոսամարտերի և նրա առաջնորդների մասին և դա բացատրելի է, նշված աղբյուրները գրվել են Նադիրի փառքի գագաթնակետին հասած ժամանակաշրջանում և անկասկած նրանց հեղինակներին հայտնի է եղել այդ իրողությունը և նրանք գիտակցաբար լռության են մատնել Դավիթ-Բեկին ու նրա հետ կապված իրադարձությունները, որպեսզի չգրգռեն Նադիր խանին, որ նրան էլ հայտնի պիտի լիներ այդ իրողությունը։ Դավիթ-Բեկի գլխավորությամբ հայ ազատագրական շարժումն հաղթանակել էր, պարսից շահը, ինչպես վկայում է Ստեփանոս Շահումյանը[5], լսելով Դավիթ-Բեկի՝ օսմանցիների դեմ տարած հաղթանակների մասին հրովարտակ էր ուղարկել նրան (այդ մասին արդեն ասվել է)։

Այդ պայմաններում շահ Թահմազի դեմ ամեն մի ոտնձգություն կվնասեր հայերի ձեռք բերած հաղթանակին և Թուրքերի դեմ հայ-պարսկական համատեղ պայքարին։ Խորաթափանց Դավիթ-Բեկը, հետագայում

4 Նույն տեղում, էջ 64։

5 «Ընտիր պատմութիւն...», Վաղարշապատ, 1871, էջ 58—59։

նրա զինակիցները, հավանաբար, հասկացել էին Նադիրի հեռու գնացող նպատակները և պարզ է, որ չէին կարող բարյացակամ լինել նրա նկատմամբ։ Ուստի պատահական չէ, որ պատմագիր Մուհամմադ-Քյազիմը մեծարում է ոչ թե Դավիթ-Բեկին, կամ Մխիթար սպարապետին ու Ավան Յուզբաշուն, այլ Նադիրին հպատակություն հայտնած Դիզակի Մելիք Եգանին։ Նա բազմիցս հիշատակում է նրան որպես նուրբ քաղաքագետին հատուկ արտակարգ ընդունակություններով օժտված իմաստուն մի գործիչ, որը Նադիրի կողմից մեծ սիրո և վստահության էր արժանացել։ Ավելին, Քյազիմը վերլուծելով 1723 թ. Անդրկովկասի վիճակը, հայ զինվորության առաջնորդների մեջ առաջին տեղը հատկացնում է Մելիք Եգանին[6]։

Մինչդեռ Եգանը իբրև քաղաքական-ռազմական գործիչ հայտնի է դարձել Նադիրի Հայաստան մուտք գործելուց հետո. Աբրահամ Երևանցին նրա անունը չի հիշատակում, Կրետացին նշում է միայն, որ Մելիք Եգանը (նրա մոտ՝ էկէնն—Լ.Բ.) մասնակցել է Մուղանում Նադիրի թագադրման արարողություններին։ Պատահական չէ, որ Նադիրին հպատակություն հայտնած և նրա մոտ ծառայության մտած հայ մեծամեծների-մելիքների շարքում աղբյուրները չեն հիշատակում Սյունիքի և սղնախների ազատագրական շարժման կենդանի մնացած առաջնորդներից և ոչ մեկին։

Պատահական չէ նաև, որ Նադիրը միայն Սյունիքի Սրփանվերդի իշխանին է պատժում։ Երևանցին գրում է. «Յետոյ Սիուն խանն, որ է անուն անվանի Սրֆան Վէրդի խան, ուզեց զնա ըսպանել։ Մեծայմեծք ոչ թողին ըսպանելու, ԳՌ (=3.000) թուման առավ, ոչ ըսպանեց։ Մանայվանդ պատճառն ի՞նչ է սորայ ըսպանելոյ, այս է պատճառն որ ասում. «Օսմանցին որ եկ մ՚երկիրն յէ՞ր չը կռիվ արիք, քան ըսերկիրն տվիք օսմանցուն, դուք եղաք խան, երկիրն քանդեցիք եւ ավերեցիք»։ Այս էր պատճառը»[7]։

Պատմագիր Աբրահամ Երևանցին Սեֆյան հարստության անկման պատճառը համարում է աֆղանների ապստամբությունը և իր Պատմությունն էլ հենց սկսում է դրանով։ Նշում է, որ 1721 թ. աֆղանների Միր-Մահմուդ շահը գրավել է Սպահան քաղաքը. «Հրայման եւ զօրքին՝ մտան ի քաղաքն, սուր քաշեց, յամենեքեան մեծայմեծ եւ իշխանք ըմբռնեց, շահ Յուսէն ըսպանեցին Ե (=5) որդին. մին որդի թաքուցեալ էր եւ փախեալ»[8]։ Փախած որդին-Թահմազը ժառանգում է հոր գահը (Թահմազ Բ) ու Թավրիզում զորք է հավաքում ու կռիվ մղում աֆղանների դեմ։ Սպահանի մոտ պարտություն է կրում աֆղաններից։ Դիմում է վրաց Վախտանգ թագա-

6 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 181։

7 Երևանցի, էջ 58։

8 Նույն տեղում, էջ 21։

վորին թե. «Իմ հայրս աղվան ըսպանեց, թախտն, ես մնացի անտէր, պիտի որ գաս գնաս»[9] (աֆղանների դեմ կռվելու—Լ. Բ.)։ Վախթանգը հրաժարվում է գնալ, պատճառաբանելով, որ իր դեմ օսմանցիները պատերազմ են սկսել։ Շահի հրամանով մահմեդականությունը ընդունած, վրացի Մահմադ զուլի խանն իր զորքով հարձակվում է Վախթանգի վրա, սակայն պարտվում է ու դիմում լեզգիների օգնությանը։

Երևանցին այնուհետև նկարագրում է Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունները, վրաց կաթողիկոսի դավաճանությունը Վախտանգի նկատմամբ, Վախտանգի ու նրա ընտանիքի Մոսկվա գնալը, նրա Շահնավազ որդու փախուստը Էրզրում հետո Մոսկվա, օսմանցիների կողմից Թիֆլիսի գրավումը, սպա Կարբի գյուղի գրավումը և 1724 թ. Երևանի պաշարումը[10]։

Ականատեսի մանրամասնությամբ պատմագիրը ասում է, թե «Կարբեցիքն իրեանց գեղն լավ շինեցին, պատերն, դարբասներն, ըսկսեցին կռվիլ օսմանցուն հետ... մարդ ղրկեցին քաղաքն, խանին, թե «Օսմանցին եկել այ, մեր գեղն պատել այ, մին փորքն հղօր ղրկայ մեզ, որ մենք կռիվ անենք օսմանցուն հետ»։ Երեւանայ խանըն ղրկեց ոչ։

Մնացին հայքն մենակ, կռիվ առին, մինչ ի մեծ փաշէն եկավ խ(=40) օրէն յետ»[11]։ Փաշան կարբեցիների մոտ մարդ է ուղարկել, պահանջել հպատակվել, խոստանալով ձեռք չտալ գյուղին ու չգերեվարել բնակիչներին։ Երևանցին թվարկում է կարբեցիների ինքնապաշտպանությունը կազմակերպողների անունները, ասում է թե նրանք փաշայից 10 օր ժամանակ են խնդրել պատասխան տալու համար, միաժամանակ նրանք «...մարդ ղրկեցին Երեւան Միհրալի խանին, թե՝ «Օսմանցին մեզ յաղթում այ, մենք էսպէս խօսք ենք արել մինչ ի ժ (=10) օրն, քեզ մարդ ենք ղրկել, ինչ որ դուն կասես մենք էնպէս կանենք»։ Միհրալի խանըն ղարուլ չարավ թէ բարութ կը ղրկեմ, զումբարայ կղրկեմ, կռիվ արէք, մինչեւ Աստուածատուր կաթիղիկոսն գնացել այ շահ Թամազին մոտ, տեսնեն ինչ խաբար կայ»[12]։ Տասն օրն անցնելուց հետո, կարբեցիները հարկադրված զինաթափ են լինում ու հանձնվում։

Այնուհետև Երևանցին հանգամանալից նկարագրում է պաշարված Երևանի ծանր ու օրհասական վիճակը, հայերի՝ ինքնապաշտպանական միջոցառումները, թվարկում է նրանց ու Երևանում բնակվող բոշաների,

9 Նույն տեղում, էջ 22։
10 Նույն տեղում, էջ 22—26։
11 Նույն տեղում, էջ 24։
12 Նույն տեղում։

որոնք հայերի հետ խիզախորեն մարտնչել են թշնամու դեմ մարտերին, ղեկավարների անունները, ապա տալիս է քաղաքի թաղամասերում ծավալված պաշտպանական համառ ու անձնազոհ կռիվները, թուրքական բանակի համալրումները, կռվող կողմերի մարդկային կորուստները։ Ցավով գրում է. թե օսմանցիների զորքերը՝ հայ բանագնացներին չեն թողել բանակցություններ վարելու համար փաշայի մոտ գնալու, Հարությունին և Ախիջանին ճանապարհին բռնել ու սպանել են։ Ապա դառնացած նկարագրում է օսմանցիների ներխուժման, բնակչության կոտորածի ու գերեվարման մասին։ «Օրն ուրբաթ, մտան քաղաքն... կռիվ ելաւ յառավօտուն մինչ ի յերիգվայ պահն, զպանելով օսմանցի քրիստոնէն, քրիստոնէն օսմանցուն, մինչ ի ԻԴ (=24) պահն... այնչաք յարուն թաբեց որ Զանկու ջուրն կամրայծառեց, յարունայ հոտն ի մէջ քաղաքէն կը բուրէ, ողորմելի քըրիստոնէքն բօվանդակ զսուրն քաշեցին, ոչ մնաց քրիստոնայ. անմեղ արդարներրն գերի վարեցին»[13]։

Աբրահամ Երևանցին էլ, իր նախորդներին նման հայերին վրա հասած արհավիրքները բացատրել է «վասն քրիստոնի մեղացն, որ մեղքն բազմացավ քրրիստոնի»[14]։

Երևանցին գրում է թե Երևանի Միհրալի խանն իր մեծամեծներով ու զորքով ամրացել էր բերդում, թողնելով քաղաքի պաշտպանությունը միայն հայերին։ Քաղաքի պաշարումը և գրավումը 60 օր է տևել[15]։

Նախորդ պատմագիրներից գիտենք, թե օտար նվաճողներն ինչպես են իրենց շահերին ծառայեցրել հայ ժողովրդի հոգևոր կենտրոնը՝ Էջմիածինն ու կաթողիկոսությունը, դրա համար էլ ոչ միայն հանդուրժողական են եղել նրա նկատմամբ, այլև օժտել են որոշ արտոնություններով։

Երևանցին վկայում է, որ օսմանական բանակը Էջմիածին չէր մտել, որովհետև «Ըսդամբօլու մին ֆարման եկավ թէ՝ «Յէջմիածնու հեղ բան չունէք»։ Էն թարիղին Աստուածայտուր կաթուղիկոսն յէջմիածին չէր, շահ Թամազն ուղել էր, գնացել էր Թարվէզ»[16]։

Օսմանյան բանակի գլխավոր հրամանատար Աբդուլլա փաշան իմանալով կաթողիկոսի վերադարձի մասին, նրան կանչում է իր մոտ «...պատվական ըսգեստ հագցուց»[17] և ասաց «Որպիսի կու լինի, թուրքն (իմա պարսիկը—Լ. Բ.) բերդն տալիս չէ», կաթողիկոսը պատասխանել է, թե

13 Նույն տեղում, էջ 31։
14 Նույն տեղում էջ 31։
15 Նույն տեղում, էջ 36։
16 Նույն տեղում, էջ 25։
17 Նույն տեղում, էջ 32։

«Փորք մի համբերէ, վաղն ես գը գընամ ի մէջ բերթն, խանին հետ կը խօսեմ, ես կառնեմ բերդն, քեզ կու տամ»[18]։ Մյուս օրը կաթողիկոսը գնացել է խանի մոտ։ Վերջինս նրան չի թույլ տվել բերդ մտնել այլ «...հրաման ետ Մահմէտ Ղասում բէկին թէ՝ «Գնայ բերդի դուռն, կաթիղիկոսն գալիս այ տեղս, բերդի դուռն բանաս ոչ, դուռն բերդի մէջէն, կաթիղիկոսն բերդի դուրսէն՝ խօսացէք, տե՛ս ինչ խաբար այ բերել շայհիցն»[19]։ Ղասում բեգի հարցին թէ «Շայհիցն ի՞նչ խաբար ունես», կաթողիկոսը ասել է. «Շայհիցն ձեզ ճար չկայ, ձեր գլխու ճարն տեսէք ձեզմէն, ֆիքր արէք»[20]։ Երևանցին գրում է, թե դրանից հետո խանը խորհրդակցել է իր և հայ մեծամեծների հետ ու որոշել են կանչել կաթողիկոսին, հանձնարարել նրան հաշտարարի դեր կատարելու։ Կաթողիկոսը խորհուրդ է տվել խանին բերդը հանձնելու մասին։ Վերջինս համաձայնվել է ու կաթողիկոսին ուղղարկել Աբդուլլա փաշայի մոտ։ Նա փաշային ասել է «...կուղեմ ձեր մէջն հաշտութիւն պարքեվենք»[21], փաշան համաձայնվել է ու կատարել կաթողիկոսի խնդրանքը՝ Միհրալի խանին չսպանելու և թույլ տալու նրան շահի մոտ գնալու մասին։ Պարսիկները բերդը հանձնել են 1724 թ. օգոստոսի 20-ին։

Երևանի գրավումից հետո, պատմագիրը, ավելորդ մանրամասնություններով նկարագրում է Խոյի, Մարանդի, Թավրիզի համար մղված մարտերը օսմանցիների ու պարսիկների միջև, ապա Թավրիզի ու Համադանի համար՝ աֆղանների պարսիկների, հետո վերջինիս համար օսմանցիների և աֆղանների ապա աֆղանների ու օսմանցիների դեմ Թահմազ կուլի խանի՝ Նադիրի մղած կռիվները։ Այնուհետև տալիս է շահ Թահմազի դեմ Նադիրի դավադրությունը, շահին դահրնկեց անելը, պարսկական գահի հավակնորդ Նադիրի՝ իր նպատակն իրականացնելու համար ծավալած գործունեությունը։ Վերջում նկարագրում է Երևանի գրավումը, որից հետո՝ Մուղանի դաշտում Նադիրին Իրանի շահ հռչակելը։

Հայ պատմագիրներից և ոչ մեկը պատերազմները, բանակների տեղաշարժերը, արշավանքները, անցած ուղիները, քաղաքների ու բերդերի պաշարումն ու գրավումը, զորամիավորումների մարտական ուժերի ու զենքերի տեսակների քանակական տվյալները, զորավարների կիրառած տակտիկան ու ստրատեգիան այնքան մանրամասնություններով չի նկարագրել, ինչպես այդ արել է Աբրահամ Երևանցին, փաստորեն նա պատերազմների պատմության պատմագիր է և դա է նրա՝ իբրև պատմագրի ամենաառանձնահատուկ կողմը։

Ցույց տալու համար, թե ինչպիսի մանրամասնություններով է Երևանցին նկարագրում ռազմաերթերը և մարտական ուժերը, բերենք միայն երկու օրինակ։ Օսմանական մեծաքանակ բանակը Ահմադ փաշայի հրամանատարությամբ շարժվում է դեպի Համադան. «...եկին հասին Սայհնայ, Սայնու յետ վեր կացի, գնացին Քանգայվար, Քանգայվարու գնացին Մուշբուլախ, որ մին յախբուր այն նորայ դուս եկել, քանզի շատ ջուր այ դուս գալիս էս յախբուրէս վերաս։ Վեր եկին այս հզօրքս փաշի, տեղէս վեր կացին, գնացի Սուղուր,... Սուղուրու վեր կացին գնացին Թաժլիք. Թաժլիքու վեր կացին՝ գնացի Թարջիլ. Թարջիլու վեր կացի գնացի Սատայվայ...»[22]։ Եվ այսպես շարունակ։

Խոսելով Հասան փաշայի հավաքագրած զորքի մասին գրում է. «Ղըրկեց բաջիլան, որ մին ասկ ա, որ բաջիլան կասեն, էՌ (=7000) բաջիլան քուրդ, բօվանդակ երկաթ հագաց... ղրկեց մառջանի արար կասեն, ԸՌ (= 8000) էլ տեղէն եկավ։ Աբդիլավանդ կասեն, էն էլ մին ազգ այ, 14.000 հզօրք տեղէն եկավ։ 9.000 էլ ենկիլարի, 6.000 ջաբաջի... 4.000 քուրդ ի Զանկանայ, 1.800 ջահ կասեն, խզըլայ ասկէն այ։ Ղարայ-Զօբան կասեն, որ էլ քուրդ այ, 800 էլ տեղէն եկավ։ Տարենայ բէկ կասեն, որ Զաղօվայ... 1.600 տեղէն եկավ, որ եղավ վերջայպէս 43.400 հզօր»[23]։

Երևանցին Թահմազ կուլի խանի ծավալած պատերազմական գործողությունների նկարագրությունն սկսում է նրա՝ Շիրազում աֆղանների դեմ մղած մարտերով, առանց, սակայն նրա մասին որևէ տեղեկություն հայտնելու, թե ո՞վ է եղել նա, ինչպես է հրապարակ եկել, ինչ փոխհարաբերության մեջ է եղել նա սեֆյան արքունիքի հետ։ Միայն բավարարվում է ասելով, թե երբ շահ Թահմազը իմացել է Թահմազ կուլի խանի Սպահան գալու մասին. «Մարդ ղրկեց Թահմազին թէ՝ «Լօռն (պետք է ենթադրել «Զօրքը»—Լ. Բ.) Բախտիարին զօրայցել այ, մեր գեղերն մեր գերայվարում այ գնաս նորա վերայ»[24]։ Խանը կատարում է շահի հրամանը, թշնամին պարտվում է. «...շահն յուրախացավ եւ խնդաց. ղրկեց Թահմազին լավ պատվայկան ըսգեստ հագնուձ»[25]։

Այնտեղից խանը շահից թույլտվություն է խնդրում գնալու «Դասվել Շուշտարայ վերայ, որ նորանք էլ թաքավորին ներհակ են, որ ԻԶ (=26)

18 Նույն տեղում։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում, էջ 32։
21 Նույն տեղում, էջ 34։

22 Նույն տեղում, էջ 46։
23 Նույն տեղում, էջ 39։
24 Նույն տեղում, էջ 53։
25 Նույն տեղում։

գեղ գեր են վարել», շահը նրան գրում է թե «էդ կողմդ ինչ որ ինձ ներհակ ասգն կայ, սուրն քաշես»[26]։ Թահմազ խանը շահի այդ հրամանն էլ է կատարում ու 15 հազար տուն գերի վերցնում և ուղարկում Խորասան՝ իր հայրենիքը։ Երևանցին գրում է թե՝ «Այսպէս գերայվարութիւն որ լսեց շահ Թամազն կամ յախտութիւն, շատ բաղում ուրախացավ, քաղաքումըն փողոցներ զարդարեցին, լավ ուրախութիւն արին...»[27]։

Պատմագիրը հմտալից ձևով բացահայտում է Թահմազ խանի հաղթանակների պատճառները, նշում է հատկապես, երկու կարևոր հանգամանք, նախ՝ նրա ռազմավարական բարձր տակտիկան, զորքերի արագաշարժությունը, մարտավարական արագ, անսպասելի գործողություններ ծավալելը և երկրորդ՝ թշնամիների անմիաբանությունն ու անմիասնությունը։

Այսպես, Թավրիզի գրավման կապակցությամբ նա գրում է. «Մինչ ի օսմանցիք իրեանց պատրաստութիւն տեսնելն, Թահմազ խանն Սաղկըզու մի յիրիկուն ԽԴ (= 24) ժամն տվաց ձիայորեց իւր զօրքովն, մին գիշերն ի միասին կէս օր եկ հաս Թարվէզ։ Եկ Թարվէզու մոտն, մին գեղ այ, եկ ի տեղն, որ օսմանցի ոչ է կարծում թե Թահմազն շուտով գը գայ, օսմանցին իւր մէջն կարծում են թէ Թահմազն Զ-է (= 6—7) յավուր գը գայ, քանզի Զ (=6) օրէն ճանապարհ այ, այսպէս են կարծում։ Թահմազ խանն մին օր կէսն հասավ տեղն։ Որ եհաս տեղն, օսմանցի տեսավ Թահմազին. չէր հավատում թէ էս Թահմազն այ։ Երբ որ մոտեցավ Թահմազն, յետոյ տեսին որ այ է։...»[28]։

Այսպիսի անսպասելի պահը իր թշնամիներին շատ է պատճառել Թահմազ խանը։ Երևանցին գրում է, թե Բաղդադի վրա արշավելու ժամանակ, Զաղով բերդին հասնելու համար մի ճանապարհ է եղել միայն, այն էլ օսմանցիների կողմից գտնվել է խիստ հսկողության տակ։ Որպեսզի իր բանակի առաջխաղացումը թշնամին չնկատի, Թահմազ խանը գիշերն իր 48 հազարանոց հեծելազորը և 6 հազարանոց հետևակն անց է կացնում մի անանցանելի լեռան վրայով. «Երբ որ գիշերի կէս եղավ, հրաման ետ զօրքին իւր բօվանդակ, ձիայորն ոտովացուց, ամէն մարդ իւր ձին յետնէն քաշէ, ճանհայպարօքն չրգնայ, էս լեռ սարովս ինքն խանն յառաջ գնաց, այսչաբ զօրքն իւր յետնէն գնացին, էս լեռիս գլխովն անցան, էս գիշերան կէսուն, գնաց մտան օսմանցու հողն...։

—Զաղովուն պաշտպանող Ահմադ բեկը,— ոչ էր խաբար թէ Թահմազն գալիս այ, քանզի Ահմատ բէկն որ ճանհայպարին պահայպան էր դրել, էն պատճառէն չէր հավատում թէ Թահմազն գը գայ իւր դրաց պահայպանքրն քնացեր, բաց թողել Թահմազ խան, ինքն յանցել, կացել, եկել, մտել իւրանց հողն, իւրեանք ոչ են խաբար»[29]։

Երևանցին գրում է, որ Ահմադ բեկի 6 հազարանոց զորքը փորձում է դիմադրել Թահմազ խանին, սակայն պարտություն է կրում։ Դրանից հետո պարսկական մեծաքանակ բանակը պետք է անցներ Զանգանու գետը, որն այդ ժամանակ շատ վարարել ու անանցանելի էր դարձել։ Թահմազը դիմել է իր բանակին ասելով. «Ով որ դիս կուզայ՝ ջուրն թաբի, ձիով անցնի»[30]. «Ցառաջ Թահմազ խանն ձին քշեց, ջուրն ինքն անցավ, այս ԽՐԻ (=48.000) ձիայոր զօրքս Թահմազ խանին հետնէն դառ, էն ջուրն անցան ջրի էն կողմն»[31]։ Որից հետո, գրում է Երևանցին, նրանք ճոպան են պատրաստել ու անցկացրել հետևակն ու թնդանոթները[32]։

Թահմազ խանի կողմից փորրաթիվ ուժերով թվական գերակշռություն ունեցող թշնամիներին հաղթելու պատճառն, ըստ Երևանցու, այն էր, որ «...սոքանք միայրան չեն գալիս կռիվ... սոցանց մէջն խարդախութիւն կայ, միմեանց խոով են. երբ որ Թահմազ խանըն գալիս այ կռիվ, միմեանց օգնութիւն չեն անում. Թահմազն սոցանց փորքն փորքն սուրն այ քաշում»[33]։

Նա գրում է, որ այդ ժամանակ հօգուտ Թահմազի բացահայտ դավաճանություն է տեղի ունեցել սուլթան Ահմադի դեմ։ Նրա առաջին վեզիրը «...խօսքն մէկ արել շայհի հետ Թարվէզու փաշին, Հայմայդանայ փաշին, Սինու փաշին, այսոնք չորքս մի խօսաց են՝ հնայզանդ որ լինի վէզիրի, ղրկաց գիրն ծածկայբար, որ ղրկել էր փաշէքանցն թէ՝ «Որ Թահմազ խանն երբ Հայմատանու վերայ կամ Թարվէզ կամ Սինու, դուք բաց թողէք Հայմայդան երկիրն, դուս ելէք, կռվէք ոչ»[34]։ Երևանցին գրում է, թե սուլթանից գաղտնի են պահել Թահմազի կողմից Թավրիզի, Համադանի և մի քանի այլ վայրերի գրավումը, նա «...խբար չէ. վէզիրի արարողութեանն այ. սուլթան Ահմատն ոչ է խաբար. այնպիսի կարծում այ թէ՝ Թարվէզ կամ Հայմայտան կամ Սենայ կամ Քրմանշայ իւր ձեռին այ»[35]։ Երևանցին ա-

26 Նույն տեղում, էջ 53։
27 Նույն տեղում։
28 Նույն տեղում, էջ 58—59։
29 Նույն տեղում, էջ 68—69։
30 Նույն տեղում, էջ 69։
31 Նույն տեղում։
32 Նույն տեղում։
33 Նույն տեղում, էջ 53։
34 Նույն տեղում, էջ 56։
35 Նույն տեղում, էջ 60։

սում է, թե վեզիրի հակառակորդներից մեկի ձեռքն է ընկել նրա՝ փաշաներին գրած նամակը այն մասին, որ «Թահմազն որ գայ բան չունէք, կովէք ոչ, փախէք»[36], և նա այն տարել է Ստամբուլ, ցույց տվել սուլթանին։ Վերջինս հրամայել է սպանել վեզիրին։

Ոգևորված իր հաղթանակներով և օգտվելով Սեֆյան դահակալի՝ շահ Թահմազի ծանր վիճակից, մանավանդ վերջինիս՝ Համադանի մոտ կրած պարտությունից հետո օսմանցիներից, Թահմազ խանը 47.000 հեծյալ և 6.000 հետևակ բանակով գալիս է Սպահան։ Մինչ շահի այդ պարտությունը, Թահմազ խանը լսելով օսմանցիների ներխուժման մասին, շահին գրել էր. «Օսմանցին որ գայ քեզ վնաս, դուն կովիս ոչ, մինչ ի ես գամ»[37]։ Շահը, սակայն, վախենալով օսմանցիների կողմից Համադանի գրավումից և հետագա առաջխաղացումից, խանին չեր սպասել, գնացել էր օսմանցիների դեմ, բայց ճակատամարտում մեծ զոհեր էր տվել ու պարտվել։

Սպահանում, լսելով Թահմազ խանի՝ մեծ բանակով գալու մասին, շահի մեծամեծները, այդ մասին վերևում արդեն ասվել է, շահին հասկացնել են տալիս, որ խանը գալիս է իրեն գահընկեց անելու նպատակով, ուստի պետք է նախապատրաստվել նրան դիմադրելու համար։ Շահը որոշում է իր զորքով քաղաքից դուրս դիմավորել Թահմազ խանին։ Վերջինս բանակել էր քաղաքից ոչ հեռու։ Իմանալով շահի քաղաքից դուրս գալու մասին, Թահմազ խանը «...շուտով իջավ ձիուցն, ոտոք գնաց Թաքաւորին ոտն համբուրեց, ասաց. «Թաքայորն ողջ լինի, էդ բանը դ որ դու լսել ես, էդ խօսքդ քեզ ներհակ մարդի խօսք այ, մի հավատալ էդպէս բանին, ես քոյ խաթեր համար՝ Խորասանայ տեղս եմ եկել, որ քեզ տեսնեմ, ինչ որ դուն հրայման կտաս, ես էնպէս կանեմ, ես ինձու դլուխ բան չեմ բռնում. թէ որ հրայման կրտաս՝ գնամ Խորասան, թէ որ կուզես՝ գնամ Ղազվին, թէ որ կուզես՝ գնամ օսմանցու վերէն, ինչ որ դու հրայման կտաս՝ ես էնաէ կանեմ»։ Վերջայպէս շայհին հավատացուց կախարդ լեզվավ»[38]։ Պատմագիրն այստեղից սկսում է բացահայտել Պարսկաստանի գահի հավակնորդ Թահմազ կուլի խանի հեռու գնացող պլանները։ Քաղաք վերադառնալուց հետո, գրում է նա, շահը խանին ասում է. «...քոյ զօրքդ բեր քաղաքի մէջն, դուն էլ եկ քաղաքի մէջն»[39]։ Թահմազը հրաժարվել է կատարել շահի առաջարկը, պատճառաբանելով թե. «Թաքայորն ողջ լինի, թէ որ

36 Նույն տեղում, էջ 62։
37 Նույն տեղում, էջ 63։
38 Նույն տեղում, էջ 64։
39 Նույն տեղում, էջ 65։

զօրքս բերեմ, քաղաքիս մէջն շատ նեղութիւն կտան քաղաքին... Յետոյ Թաքայորին հետ մին էնպէս լեզվավ եխպարսիրութիւն արավ, որ զարմանալի, շայհն հավատաց սորայ, ինչ որ յիշխանութիւն ունէր՝ ետ ի ձեռ Թահմազ խանի ասաց. «Դուն գիտես, ինչ որ կանես՝ արայ, մին բան մի անել, ասաց, օսմանցուն հետ կռիվ մի անել, որ ես հաշտութիւն եմ արել, լավ չէ, Թաքավորաց խօսքն մին պիտի»։ Թահմազ ասաց. «Թաքայորն ողջ լինի, լավ խօսկ այ, ինչ որ քո հրայմանոց խօսքն այ՝ ես էն կանեմ»[40]։

Այնուհետև Երևանցին գրում է, թե Թահմազ խանը հաշվեց իր զորքը, հետո շահինը, «Շայհն չէ խօսում, մանայլանդ այնպէս հավատացուցել որ շայհն ասում այ. «Ինչ որ կանայ Թահմազ խանն ինձ բավական այ»։ Այսպէս հավատացել այ խանի։ Ըսկսեց շայհի զօրքիցն ՁՌ (=6.000) ղրկեց Թարվէզ, ԵՌ (=5.000) ղրկեց Ղազրին, ԲՌ (=2.000) ղրկեց Մազանդարան, վերջայպէս ինչ որ շայհի լավ պատվայկան զօրք ունէր, բոլանդակ այսդին անդին ղրկեց։ Յետոյ ըսկսեց շայհի տունն գալն հանայպազ»[41]։

«Շահն ըսկսեց Թահմազին պատիվ։ Կանչեց Թահմազ խանն. գնաց Թագայորի տուն պատիվ Զ (=6) օր անցավ... Թաքայորին ասաց. «Թաքայորն ողջ լինի, ինձ պատվաց ես, գնանք իմ շատուրումն, մէկ տեղ հաց ուտենք յետոյ ես գնամ մ'երկիրն»։ Նմայնապէս Թահմազն մին խաբեբայ ձայն էր հանել, թե «ես գնում եմ իմ երկիրն»։ ...Վերջայպէս Թահմազն որ խնդրեց Թաքայորէն ի տուն իւր, Թաքայորն հնազանդ եղավ, վեր ել, գնալով ի տունն Թահմազին... լավ պատիվ, լավ ուտելիք...։ Թահմազ խանն ըսկսեց Թաքայորին թէ՝ «Թաքայորն ողջ լինի, քեզնէ մին բան եմ խնդրում, պիտի որ էս խնդիրս կատարես»։ Թաքայորն ասաց. «Ասայ»։ Թահմազն ասաց. «Լսել եմ թէ քոյ հրայմանդ գինի կը խմես. թէ հրայման կտաս՝ մին փորքն գինի բերեն տեղս, մին լավ շէնութիւն անեն կամ ուրախութիւն անենք»։ Շահ Թահմազն ասաց. «Լավ այ»։ Ղըրկեց շուտով Զուղայ Քալանթարին... Ի—Լ (=20—30) շուշայ... գինի բերեն ի տուն խանի։ Նստեցան տեղն, լավ ուտել, խմել, յուրախութիւնն, մինչ ի գիշերան կէսն։ Երբ որ գիշերան կէսն թամամ եղավ, Թահմազ խանն հրայման ետ շայհի զօրքին թէ՝ «Գնացէք քնեցէք, որ շայհն քնում այ»։ Շայհն այնպէս գինով այ որ խելքն մին բան չէ կտրում, այնպիսի հառրաց է»։ Երբ որ շայհի զօրքն գնացին իւրեանց բանն կամ քնիլ, Թահմազ խանն մտավ տունն։ Շայհն մինակ տեղն նստաց, մէկ սիլա մն այս երեսին, մին այն երեսին զարկեց, ընբռնեց ըսայ, պարանոք կապեց, խնդրեց իւր զօրքիցն Գ-Դ

40 Նույն տեղում։
41 Նույն տեղում, էջ 65։

(= 3—4) ուժով մարդ, եկի շահին կապեցին, ոտնքրն երկաթեցի, դրին տան մէջն։ Երբ որ լուսացավ ըսկսեց շայհի մեծ մեծ իշխաններն բռնել, բռնեց բովանդակ շայհի իշխաններն, սուրն քաշեց»[42]։

Այնուհետև Երևանցին պատմում է, թե Թահմազը ինչպես է վարվել շահի ու նրա ընտանիքի հետ։ Մտել է շահի տունը «...շայհի կինը եւ կամ քուրն տանէն դուս քաշեց, ...շայհ Թահմազն ղրկեց Խորասան, ...Շայհի քուրն իւրան կին շնն, շայհի կինն տարավ իւր տուն, ոչ թողեց դուս գալ, խատառնակեց շնութեամբ, ...թաքայորին ինչ որ ասք կամ բարեկամ, կամ կինն, կամ քուրն, ինչ որ ունէր որ ունէր շայհի տան մէջն կամ ասք կամ եաղայկան, բովանդակ տարավ իւր տուն, բովանդակ ավերեց շնութիւնով, անբսկամութիւնով»[43]։ Զորքին էլ խաբում է, թե շահի Աբբաս անունով 6 ամսեկան տղային է շահ դարձնում, հետո նրան ուղարկում է Ղազվին։ «Այս խարէութիւնովս երկրին մարդն խաղաղացուց։ Մին պատճառ էլ էս գտավ թէ՝ «Ձեր շայհն գինայ խումէր, լոթի էր, չէր կարում իւր երկիրն պահել, էսպէս արի, ղրկեցի Խորասան, որ բարքի խելքն գլուխն գայ»։ Էլ ինքն թաքայորն այս խաբելով երկերի մարդն իւրան սիրեց թէ՝ «Խանն լավ այ ասում»[44]։

Ինչպես վկայում է Երևանցին, արևելքի նոր բռնակալը իր փառքի ճանապարհը հարդարում էր ոչ միայն զենքով, այլև խորամանկ շողոքորթությամբ թշնամու հանդեպ։ Բաղդադի մոտ գտնվող մահմեդականների հոգևոր կենտրոնի՝ Հիմամ-Ազամի հոգևորականներին «մեծ մեծ կարդացողներին» սիրաշահելու նպատակով, երբ ժամանել է այնտեղ «...ասոնց լավ ըսդեստ հագցուց, լավ պատվեց։ Տեսին որ լավ այ պատում, Յիմամ-Ազամի շիեոն գրեցի Յիմամ-Ալու, Յիմամ-Մուսի, Յիմամ-Բաղերի, Յիմամ-Քազումի, Յիմամ-Աբասի, Յիյամ-Զէնալ, Յիմամ-Զէյնաբատու, ասոնց ամենեցուն գիր ղրկեցին թէ՝ «Թահմազն լավ այ պատիվ տալիս մեզ, լավ դուրք այ (իմա պարսիկ— Լ. Բ.), սորան հնազանդ եղէք, որ մենք հնայդանդ եղանք մեզ լավ այ պատիվ տալիս»։ Սոքանք որ լսեցին՝ բովանդակ հնազանդ եղան Թահմազին»[45]։ Երևանցու այս վկայությունը մեծ չափով օգնում է ճիշտ հասկանալու նաև Նադիրի՝ հայոց կաթողիկոսի և հոգևոր վերնախավի նկատմամբ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի պատճառը, որի մասին որոշակի գրել է այդ վերաբերմունքը վայելած Աբրահամ Կրետացի կաթողիկոս-պատմագիրը։

42 Նույն տեղում, էջ 65—66։

43 Նույն տեղում, էջ 66։

44 Նույն տեղում, էջ 67։

45 Նույն տեղում, էջ 71։

Երևանցին այնուհետև նկարագրում է Թահմազ խանի կողմից Բաղդադի 9-ամսյա պաշարումը, Թուրքական Կաղ Օսման փաշայի զորքի կողմից նրա բանակի ջախջախումը, փախուստը Համադան, ապա 15 հազարանոց բանակով հանկարծակի հարձակումը Օսման փաշայի զորքի վրա, Թուրքերի շարաշար պարտությունը, Օսմանի գլխատումը, Բաղդադի Ահմադ փաշայի հետ հաշտության կնքումը։ Ապա տալիս է Թահմազ խանի կողմից Շիրազի Մահմադ խանի ապստամբության ճնշումը, Երևանի, Գանձակի, Շիրվանի դրավումը, լեզգիներին հարկատու դարձնելը, Մցխեթ քաղաք գնալը, վրաց իշխաններին պարգևներ ու պատիվներ տալը, կախեթցիների ապստամբությունն ու հերոսական դիմադրությունը և նրանց կողմից Թահմազի պարտությունը[46]։

Այդ պարտությունից հետո, Երևանցու վկայությամբ, Թահմազ խանը գալիս է Երևան և պատրաստվում է ճակատամարտ տալ Քյոփրուլուզադե Աբդուլլա փաշայի 300-հազարանոց բանակի դեմ։

Ըստ Երևանցու, վճռական ճակատամարտը տեղի է ունեցել Եղվարդի մոտ։ Օսմանական թվական գերազանց գերակշռություն ունեցող բանակը գլխովին ջախջախվել է Մմնկերտի մոտ, Աբդուլլա փաշան բռնվել ու սպանվել է։ Ի նշանավորումն այդ հաղթանակի Թահմազ խանը փաշայի գերեզմանի վրա «...լավ քարով մին լավ դաջ ու կիրով ըսպիտակեցուց, մին պատվայկան պահայրան շինեց»[47]։

«Օսմանցին յախտվեց»—գրում է պատմագիրը,—օսմանցի որ էս ճանապարհիս վերայ թաքաց, նման այ լաշ լաշի վերայ, մարդ ոչ կարէր ճանապարհովն գնայ, լաշերն կոխ տալով. ձիանոնց ոտի տակն ամէն լաշ. հայում ես, լաշ այ երեւելի, այլ գետին կամ քար ոչ է երեւում, որ այսպէս լաշ այ»[48]։

«Պատմութիւն պատերազմացն», երկն ավարտվում է Մուղանի (Տամղան) իրադարձությունների նկարագրությամբ, ուր արևելքի նոր բռնակալն իրականացնում է իր վերջնական նպատակը, իրեն հռչակում է Իրանի շահ։ Երևանցին գրում է, թե Թահմազ խանը Մուղան է հրավիրել Պարսկաստանի մեծամեծներին ու դիմել նրանց թե «Գի՞տ ձեզ ինչ պաճառի խնդրեցի, ասաց քանի ժամանակ այ որ թուր եմ տալիս ձեր խաթեր հմար մինչ ի էս թարիղս, ձեր դուշմանն հատացրրի, աղվանն, օսմանցին, մսկովն բովանդակ փախցր կոտորեցի, պրծայ։ Հիմայ ձեզմէն շայհ դրէք» Երեք անգամ ասաց աս խոսքս։ Մին երկու մեծ իշխան ըսկսեց թէ «Խանն ողջ

46 Նույն տեղում, էջ 79—84։

47 Նույն տեղում, էջ 85։

48 Նույն տեղում։

լինի, շայ Թահմազն բեր դիր իր թախտն, էլ մեր թագավորն նա լինի։ Շուտով հրամման ետ, ըսպանեցին այս մի քանի իշխանիս։ Յետոյ կրկին անգամ հարցուց. բովանդակ վախեցան, ասացին. «Խանն ողջ լինի, դու ես մեր դաքայորն»։ Երեք անգամ որ այսպէս ասին «Դու ես մեր թաքայորն», Թահմազն ասաց. «Ինձ էք ուզում թաքայոր, գիր տվէք որ ես ձեզ թաքայոր զարիլ լինեմ»։ Բերին ժողովուրդն գիր տվին թե «Դու ես մեր թաքայորն, էլ քեզնէ ավել թաքայոր չունենք, դուն ես մեր թաքայորն»։ Գիրն տվին, ուրախութիւն արին, պուծան, եղավ թաքայորն»[49]։ «Վերջ ամէն» բառերից հետո այդ նույնը, սակայն որոշ մանրամասներով ու փոփոխություններով գրում է. «Ըսկսեց նայ խանն Թահմազ խնդրել ժողովուրդն պարսոյ երկրի։ Բովանդակ ժողովուրդն հնազանդեալ՝ դալով հասին ի մոտ խանին... խանն ըսկսեց դատաստան անել... Նստացուց բովանդակ մեծայմեծք եւ փոքք, հարցուց ժողովուրդին թէ՝ «Ես ձեր խաթեր համար այսչաք ժամանակ պատերազմեցի, երկիրն առի այլասգաց ձեռացէ. հիմա ո՞վ կը խնդրէք՝ ձեզ կայսեր դրէք»։ Ժողովուրդն ոչ կարեցավ տալ պատասխանն խանի։ Գ (=3) անգամ հարցուց այս բանս. նոքանք եւ ժողովուրդն ոչ տվին պատասխան։ Այս իշխանոնց մէջն կայր Գ (=3) մեծ իշխան, որ լավ զօրօք իշխանք անուվանէր. սա իշխանս, որ անունն անուվանի Սալախան բէկ Ըռէհանլու, որ այս մին ասգանուն անի, այսպէս անուվան գոջի։ Սայ ըսկսեց խնդրել խանին թէ «Խանն ողջ լինի, դու որ ասում ես թէ ձեզ մին կասեր սահմանեցէք, դուն մեր շայհն բանդի մէջ ես ձգել, դուրս բեր, մենք նորա կայսեր սահմանէնք»։ Այս բանս որ լսեց խանն, շուտով հրամման ետ, զի որին ձգեցին պարանն ի կուն նորա Սալախան բէկին, ըզպանելով պարանօք ըսպանեցին։...

Կրկին անգամ եհարց խանն թէ՝ «Ո՞վ կուզէք կայսերացու»։ Ժողովուրդն ահիվ ասացան. «Թահմազ խանն ողջ լինի, քեզ կուզենք մեզ կայսերացու, դուն մեզ եղի կայսեր»։ Գ (= 3) անգամ եհարց խանն, այսպիսի պատասխան տվին ժողովուրդն, հավանեցան խանին կայսերութեանն։

...Սա Թահմազ խանն տեղն նստավ մինչ ի խ (= 40) օր, որ կայսեր եղած ժամանակն, պարսոյ երկրի ժողովուրդն ըսկսեցին պատվայկան փէշքէշ տանիլ. գանձ, քարունք, դրամ, այսպէսի խ (= 40) օրն վերջ եղավ»[50]։ Այնուհետև նշում է, որ Թահմազը հաշտություն է կնքել օսմանցիների հետ, հետո արշավել է լեզգիների վրա, նրանց հաղթել ու վերադարձել է[51]։

Պետք է ենթադրել, որ «Վերջ ամէն»-ից հետո, որով ավարտել էր իր երկը, Երևանցին նոր նյութեր է ձեռք բերել և աշխատել է ամբողջացնել այն։ «Կայսր» բառի գործածելը թերևս ենթադրել է տալիս, որ հեղինակը այդ հատվածը գրել է Արևմտյան Հայաստանում կամ Հունաստանում, որտեղ ավանդաբար պահպանվել է տիրակալների այդ տիտղոսը, կամ էլ ուրիշն է գրել-լրացրել։

Աբրահամ Երևանցի պատմագիրը որոշ տեղեկություններ է հաղորդում 18-րդ դարի 20—30-ական թվականների ռուս-պարսկական հարաբերությունների մասին։ Գրում է, թե շահ Թահմազը ժառանգելով հոր գահը, դիմել է սուլթան Ահմադին պահանջելով «Իմ երկիրն ինձ տուր, մինչ ի էս թարիղս աղվանն իմ երկիրն տիրել էր, հիմայ Աստուած տվեց իմ երկիրն աղվանի ձեռնէն. արդ խնդրեմ քեզնէ որ իմ երկիրն ինձ տաս, որ իմ հօր օջախն խավարի ոչ»[52]։ Սուլթանը նրան գրել է թե «Լավ ես ասում, Մոսկովն Գիլանու դուս արայ, ես էլ իմ առաց երկիրն քեզ տամ գնայ տիրէ»[53]։ Շահն այդ մասին հայտնել է Մոսկվա և պահանջել Գիլանը։ Մոսկվան պատասխանել է, թե «Ես այսչաք այնչաք դրամ եմ կորուցել, այսչաք սօլդադրս, տեղդ փչացել այ, ես Գիլանն քեզ չեմ տալ. թէ որ յիմ խարջաց դրամն կտաս կրկին, տարին ուսուն հազար թուման էլ կտաս, քո երկիրն քեզ կտամ»[54]։ Երևանցին գրում է, որ շահը համաձայնվել է և որ «...շայհն Մոսկովին հետ լավ հաշտ եղան, ինչ որ եխպայր»[55]։

Մեկ տարի անցնելուց հետո, Մոսկվան Սիմոն անունով մի մարդ է ուղարկում Սպահան պայմանավորված գումարը ստանալու համար, սակայն շահ Թահմազն արդեն գահընկեց էր արվել։ Թահմազ խանի պահանջը՝ ռուսաց թագավորի գրած թուղթը իրեն հանձնելու մասին, Սիմոնը մերժում է։ Այն ժամանակ խանն ասում է, որ ինքը գնում է կռվելու, կվերադառնա ու պատասխանը կտա։ Սիմոնը երկու տարի մնում է Սպահանում։ Խանի վերադառնալուց հետո, Սիմոնը խանին ասում է. «Իմ թաքայորն գրել այ թէ՝ դուն որ քոյ թաքայորն յաբրշտակել ես, դուն ես էդ քաղաքիդ տէրն, եթէ դուն ես էդ քաղաքիդ թաքայորն՝ իմ դատաստանն դու արայ. ես քոյ երկիրումն պարտայկան ունեմ, որ ինձ հոգով պարտայկան

49 Նույն տեղում, էջ 86։

50 Նույն տեղում, էջ 86—87։

51 Նույն տեղում, էջ 87—89։

52 Նույն տեղում, էջ 79։

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում։

55 Նույն տեղում։

են կամ մարմնով, թէ իմ դրամս դուն կտաս, լավ այ, թէ չես տալ, իմ պարտականն իմ ձեռս տուր, ես իմ հախս կառնեմ»[56]։

Խանը նրան պատասխանում է, թէ «էն մարդն որ քեզ պարտական այ, ինձ էլ այ պարտական. պատճառն ի՞նչ է. պատճառն այս է որ իմ թաքայորն խենդ էր, գինախում էր, գինի կը խմէր, խելքն դոնուլ կտար, մեր երկիրն իւր խելացիցն բովանդակ յետ ի ձեռն օսմանցու կամ թէ քոյ. իմ թաքայորն քեզ վերայ կռիվ չունէր, քեզ ի՞նչ պիտոյ էր, որ դուն գաս Գիլան առնես կամ քոյ դրամն կամ քոյ զօրքն փչանայ. քեզ ո՞վ էր ասում այսչարէն տարոյ թաքավոր, որ տեղրտ նստաց այ մին թաքավոր, մեր երկրու վերայ պատերազմդուն չի արել, դուն ի՞նչպէս երկիր Գիլան առեր»։ Այսպէս էլչուն հետ լեղվաց կռիվ տվին»[57] գրում է Երևանցին։

Մոսկվայից ժամանում է երկրորդ ներկայացուցիչը (500 հոգով), հետո երրորդը։ Թահմազ խանը երեքին էլ ետ է ուղարկում ասելով «Գնացէք ձեր թաքայորին էսպէս խաբար տարէք թէ, ես քեզ հետ կռիվ ունեմ, էդ գիրդ որ դուն ղրկել ես, էդ գրիդ ես դրամ չեմ տալ, եայ դուն գիս էս հողումն կը փչացուցանես, եայ ես քեզ ծովումն ձգանց կուտացուցանեմ»[58]։

* * *

Աբրահամ Երևանցին էլ Առաքել Դավրիժեցու և Աբրահամ Կրետացու նման հարգանքով է խոսում հայ առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների մասին։ Գոհունակությամբ արձանագրում է, որ Ահմադ փաշայի կողմից Համադանի գրավման ժամանակ, նրա բանակում գտնվող համադանցի հայ վեց «մեծ իշխաններ» (հավանաբար առևտրականներ-մահտեսիներ) դիմել են փաշային թէ «Մենք քրիստոնեայ ենք, խարջ կտանք քեզ, մեր գերիքն հրայմայէ որ մեզ յետ տան...»։ Երևանցին ասում է, որ փաշան համաձայնվել է, սակայն ոչ բոլորին են ազատել, մի մասին բաց չեն թողել[59]։

Նադիրի՝ Անդրկովկասում 1734—1736 թթ. ծավալած գործունեությունը, Մուղանում նրա թագադրման և բայրամի տոնակատարության արարողությունները շատ ավելի հանգամանորեն է տվել Աբրահամ Կրետացին։ Այստեղ նշենք միայն, որ եթե մի կողմ թողնենք նրա մանրամասնությունները և «շողոքորթեալ» պատմությունները, ապա նա ընդհանուր գծերով հաստատում է Երևանցու հաղորդած տեղեկությունները այդ ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների մասին։ Կրետացու մոտ ոչինչ չի ասված վերը նշված երկու իշխանների մասին։ Ըստ նրա՝ Նադիրի ընտրության հարցում տարակարծություններ չեն եղել, նա, սակայն, ակնարկում է այն մասին, որ երբ ինքն էլ է հրավեր ստացել ներկայանալու Մուղան, շատ է զարմացել և ցանկացել է իմանալ կանչելու պատճառը. «Բայց կարծիք ոմանց,— գրում է նա,— թէ՝ զՇահն նստուցանելոց է ի գահոյս իւր, և ոմանք, թէ՝ ինքն նստելոց է. բայց հաւաստին և վասն էրն ոչ է յայտնի»[60]։

Երևանցու և Կրետացու հաղորդած տեղեկությունների պատմական արժեքը գնահատելիս, չպետք է մոռանալ այն կարևոր հանգամանքը, որ նրանք իրենց պատմությունները գրել են ելակետ ունենալով տարբեր նպատակադրումներ։ Առաջինը տալով Պարսկաստանի՝ իր թշնամիների դեմ մղած 15-ամյա պատերազմների պատմությունը, նպատակ է հետապնդել գրելու արևելքի նոր բռնակալ Նադիրի՝ փառքի գագաթնակետին հասնելու անցած ուղու մասին, երկրորդը՝ ելնելով հայոց հոգևոր կենտրոնի՝ էջմիածնի շահերից, Նադիրի և հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունների մասին։

Ավարտելով մեր խոսքն Աբրահամ Երևանցու մասին, գտնում ենք, որ «Պատմութիւն պատերազմացն» երկի հրատարակիչ Ա. Ճեմճեմյանը միանգամայն ճիշտ է վարվել՝ Երևանցու ինքնագիր ձեռագրի հետ հրատարակելով նաև, ինչպես ինքն է հավաստում, «Մխիթար Աբբահօր աշակերտներէն Հ. Մատթէոս Եւդոկիացի Գաբագաշեանի (1691—1772) կողմից խմբագրած բնագիրը»։ Նա գրում է, թէ այդ խմբագրությունն անհրաժեշտ է եղել, քանի որ «Աբրահամ Երեւանցիի պատմութիւնը կը ներկայանայ մեզի սաղմնային վիճակի մեջ, գրուած առանց ոճի եւ ընթերցողի հաճելի դառնալու մտահոգութեան»[61]։

Գարագաշյանը Երևանցու «Պատմությունը» ամբողջապես վերաշարադրել է, կենդանացրել, ոգի և կենսունակություն տվել, մատչելի դարձրել ընթերցողներին։ Որոշ տեղերում համառոտել է ինքնագիր բնագիրը, առանձին հատվածներում կատարել լրացումներ ու տվել մութ ու խրթին տեղերին յուրովի մեկնաբանություններ[62]։

Այդ լրացումներն ու մեկնաբանությունները ոչ միայն ամբողջացնում են Երևանցու բնագիրը, այլև իրենց պարունակած բովանդակությամբ, նոր իմաստ են տալիս առանձին իրադարձություններին ու երևույթներին, ավե-

56 Նույն տեղում, էջ 80։
57 Նույն տեղում, էջ 80—81։
58 Նույն տեղում, էջ 81։
59 Նույն տեղում, էջ 44։

60 Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ, պատմագրութիւն անցիցն իւրոց եւ նստոր Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 27։
61 Երևանցի, Յառաջաբան, էջ 8։
62 Նույն տեղում, էջ 9։

լի որոշակի բացահայտում դրանց պատճառները, այդ իսկ առումով ինքնագիր բնագիրն ավելի է արժեքավորվում ու կարևորություն ստանում, իսկ խմբագրած բնագիրը ծառայում է իբրև սկզբնաղբյուր։

Շատ օրինակներից բերենք միայն մի քանիսը։ Այսպես. եթե Երևանցին Սեֆյան հաղստության անկման պատճառը համարում է աֆղանների ապստամբությունը, ապա Գարագաշյանը, հենց սկզբից, բացահայտում է նրա անկման ներքին ու արտաքին պատճառները։ Նա նշելով, որ 1721 թ. աֆղան Մահմուդ սուլթանը գրավել է Սպահանը (նրա մոտ՝ Շոշ) գրում է «...ի ժամանակի, յորժամ սասանեալ, զդրդեալ, խռովեալ ծփիր աշխարհն Պարսից, եւ իշխանք գաւառացն ի հերձիլ լայնածաւալ միապետութեան նորա՝ հակառակ միմեանց յարուցեալ տագնապէին եւ զաշխարհն ամենայն հարուածովք սրոյ եւ գերութեան յաւեր ածել ձգէին տունս Հայոց, որ ըստ երեւելի մասին ընդ պարսից տէրութեան գրաւեալ կայ. ...Զի ոչ եթէ միայն առ ի ներքուստ վրդովմանց աշխարհին ի յընդանի գաւառակից պետաց հակառակ միմեանց յարուցելոց զհարուածս սրոյ եւ սովու կրէր, այլ եւ ի հագարացւոց սահմանակից պետութենէ անտի եւ ի լակզի թաթարացն յարձակելոց զանհամար անձանց՝ արանց և կանանց, երիտասարդ եւ կուսից, մանկանց եւ տղայոց առհասարակ՝ զչարաչար գերութիւն եւ զկոտորումն ընդունէր»[63]։ Հետագա շարադրանքում էլ գրում է. «Այլ ի պատճառս երկպառակութեանն, զոր աղուանն էած ի վերայ, իշխանք թագաւորութեանն այնորիկ լուծեալք ի կապից միութեան գլխոյն՝ յանձինս իւրեանց բաժանեցան, եւ ոմանք նուաճեցան ընդ տէրութեամբն աղուանից։ Եւ այնուհետեւ շահ Թահազին, որ գլուխ լինելով նոցա իրաւամբ ժառանգութեան՝ կոչէր զնոսա իբրեւ զանդամս ի միութիւն եւ ի ձեռնտուութիւն, ոչ հնազանդէին, եւ վասն այսորիկ, նա իբրեւ գլուխ մի լուծեալ յանդամոց՝ ոչինչ զօրէր առնել։ ...յաջողեցաւ նմա ի ձեռն միոյ յիշխանաց նորա, որոյ անունն էր Թամազ զուլի, այր բարեբաղդ ըստ անցաւոր կենցաղոյս եւ այր խոհական ըստ աշխարհիս եւ քաջ պատերազմող ի մանկութենէ»[64]։ Երևանցին նկարագրելով Արդուլլա փաշայի կողմից Երևանի գրավման մասին, բավարարվել է նշելով միայն, որ օսմանցիներն էջմիածինը չեն գրավել, որովհետև Ստամբոլից հրաման են ստացել թե «Յէջմիածնու հեդ բան չունէք»[65], առանց պատճառաբանելու թե ինչո՞ւ։ Այդ արել է խմբագիր Գարագաշյանը։ Նա գրում է

63 Նույն տեղում, խմբագրված բնագիրը, էջ 91։

64 Նույն տեղում, էջ 125—126։

65 Երևանցի, էջ 25։

«...եհաս հրովարտակ յօսմանցւոց սուլտանէն, յորում պատուիրէր փաշային անխայել յէջմիածին եւ ոչ կոխան տալ զօրաց իւրոց, պահապանս դնել նմա յիւրոց անտի զօրաց, զի մի ոք ինչ յափշտակիցէ անտի, կամ խուիցէ զոք անդ յեղելոց։ Եւ եղեւ այս ի յաջողելոյ խնամոց գթութեանն Աստուծոյ։ Զի ի ժամանակին, յորում լինէր զօրացն օսմանացւոց ի Հայաստան մխիլ, ոմն բարեպաշտ մեծատուն ի հայոց ազգէ, Սեղբոս անուանեալ, որ իրաց պիտոյից արքունի պաղատանն ծառայելով, շնորհս գտեալ էր եւ էր ինքն անուանի քան զամենայն մեծամեծս հայոց, որք ի Կոստանդնուպոլիս են, բարեխօս եղեալ էր վասն էջմիածնին, որպէսզի առ խնամս ազգիս հայոց եւ առ օգուտն արքունի հրաման տացէ սուլտանն եւ պատուիրեսցէ փաշային՝ ի սուրբ էջմիածինն անխայել, եւ ոչ թոյլ տալ զօրաց իւրոց զայն սուրբ տեղին ասպատակել»[66]։

Այս Սեղբոսն, ամենայն հավանականությամբ, հայ խոշոր առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչներից է եղել։ Գարագաշյանի այս լրացումը նախ հաստատում է Առաքել Դավրիժեցու և Աբրահամ Կրետացու հաղորդած տեղեկությունները հայ առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների՝ քաղաքական կյանքում խաղացած կարևոր դերի մասին, և երկրորդ, որ նրանք շատ լավ էին հասկացել Հայաստանը նվաճած բռնակալների համար հայոց հոգևոր կենտրոնի՝ էջմիածնի ու հոգևոր վերնախավի նկատմամբ ցուցաբերած հովանավորությունից ստացած օգուտները։ Եթե Կրետացին այդ ասում է Ջուղայի խոջաների և Երևանի քալանթար Մելիքջանի բերանով, պալատական պատմագիր Մուհամմադ Քյազիմը՝ Մելիք Եգանի բերանով, ապա Գարագաշյանը՝ Կոստանդնուպոլսեցի մեծատուն Սեղբոսի միջոցով։

Եթե Երևանցին Կարբիի՝ օսմանցիների կողմից գրավման կապակցությամբ բավարարվել է նշելով, որ Երևանի Միհրալի խանը մերժել է օգնել կարբեցիներին, պահանջել է դիմադրել թշնամուն մինչև կաթողիկոսի շահի մոտից գալը, ապա Գարագաշյանն ատելությամբ է գրում խանի այդ վարքագծի մասին։ Ըստ նրա, խանի պատճառաբանությունը «անօգուտ անմտութիւն էր»։

«...զսոյն զայս պատճառս,— գրել է նա,— յուսադիր լինելոյ նոցա դնելն ամպարիշտ իշխանին՝ անօգուտ անմտութիւն էր։ Ի կորուստ անձանց նոցա վարէր զնոսա թշուառականն զի էր օտարազգի եւ անհավատ. եւ ոչ ինչ փոյթ էր նմա գերութիւնն եւ կոտորումն քրիստոնեայ ազգին մերոյ։ Վասն զի եթէ հարազատ հաւատարիմ խնամածու իցէր, զիա՞րդ

66 Նույն տեղում, խմբագրված բնագիրը, էջ 99։

մարթ էր նմա զնոսա այսպէս իբրև զոչխար ի սպանդ վարել. քանզի զի՞նչ համեմատութիւն էր անպարիսպ, անխրամ եւ անզօր գիւղաքաղաքի միոյ առ այնչափ բազմութիւն զօրացն, որք պաշարեցին զնա...»[67]։

Նման լրացումները շատ են. բավարարվենք բերվածներով։

Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն», երկի, ինչպես ինքնագիր, այնպես և խմբագրված բնագիրը, ճիշտ է փոքրածավալ է, սակայն հետաքրքիր ու արժեքավոր նյութ է պարունակում Իրանի, Թուրքիայի և Անդրկովկասի երկրների XVIII դարի 20—30-ական թվականների քաղաքական բուռն իրադարձություններով հարուստ ժամանակահատվածի պատմության ուսումնասիրության համար։ Այն ականատեսի ստուգապատում աղբյուր է։

67 Երևանցի, էջ 98։

ՎԵՐՋԱԲԱՆ

Երկուհարյուր տարուց ավելի՝ սկսած Լանկ-Թամուրի աշխարհակործան ավերածություններից մինչև շահաբբասյան հրեշավոր աղետը, Հայաստանի հողն արյունով էր հեղեղվել։ Նրա շատ նահանգներն ամայացել էին, բնակավայրերը գազանների որջեր էին դարձել, նրա երկնակամարի տակ գրեթե մարել էր հայ քաղաքական կյանքը, նրանում տիրապետողը սուրն էր, թանձրամած խավարն ու իսլամի դաժան լուծը, որը հյուծել ու ուժասպառ էր արել նվաճված ժողովուրդներին՝ այդ թվում և հայ ժողովրդին։ Բազում դարեր դառն փորձություններ ու արհավիրքներ հաղթահարած բազմաչարչար հայ ժողովուրդը, չնայած մարդկային միլիոնավոր կորուստներ էր տվել, մի մասն էլ պանդխտության ցուպը ձեռքին սփռվել էր աշխարհով մեկ, դիմակայելու իր կենսունակությունը չէր կորցրել, չնայած նրա նկատմամբ նվաճողների վարած նենգ ու բիրտ քաղաքականությանը, գործադրած ստոր ու վայրագ միջոցներին, նրա ազատատենչ ոգին չէր մարել։

XVII դարի սկզբին էլ հայ ժողովրդի գոյատևման համար օրհասական վիճակ էր ստեղծվել։ Շահաբբասյան մեծ սուրգունը հայ ժողովրդի մեջ նորից կյանքի ու մահու գաղափարը, ինքնապաշտպանության հուժկու բնազդը ծնեցրեց։

Այդ գաղափարի ու բնազդի գիտակցման անհրաժեշտությունը նորից, ինչպես V և X դարերում, կյանքի կոչեց քաղաքական ու հոգևոր մաքառումների ամենահզոր զենքերից մեկին՝ պատմագրությանը։ XVII դարում էլ հայրենիքի ու ժողովրդի ճակատագրով մտահոգված հայ հասարակության առաջադեմ մտավորականները խոր գիտակցել են պատմական գիտության դերն ու նշանակությունը ժողովրդին ինքնաճանաչ դարձնելու, լուսավորելու, նրան հայրենիքի ու դավանանքի նկատմամբ սիրո և նվիրվածության ոգով դաստիարակելու, ազգային ինքնագիտակցությունն ու մարդկային արժանապատվությունը բարձրացնելու, վերահաս արհավիրքներին դիմակայելու համար ուժերը համախմբելու, կազմակերպելու ու լարելու գործում։ Նրանք էլ իրենց նախորդների նման

ձգտել են պատմության ուժով ու միջոցով հաղթահարել իրենց ժամանակների դառն իրականությունը, պատմության մեջ տեսնելով ուսուցանողի ու դաստիարակչի հզորագույն կարողությունը և ուժը։

Ի տարբերություն վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանների պատմագրության, ուշ միջնադարի վերջին երկու XVII—XVIII դարերի պատմագրությունն աչքի է ընկնում իր մի շարք առանձնահատկություններով։

Առաջին և հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն իր էությամբ զգալի չափով աշխարհականացված է, չնայած նրա ներկայացուցիչները, շնչին բացառությամբ, նորից հոգևոր դասին են պատկանում, դա բացատրվում է նյութի մատուցման ձևից ու բնույթից։ Այդ դարերից մեզ հասած պատմական բնույթի երկերը հիմնականում ժամանակագրություններ, օրագրեր, հուշագրեր են։ Նրանցում չկան եկեղեցու ու հայ ֆեոդալական տների պատմություն, աստվածաբանական դոգմաների քարոզ, դավանաբանական վեճերի ձգձգված շարադրանք։ Թեմատիկան հիմնականում աշխարհիկ է, նրանցում իր անդրադարձումն է ստացել ժողովրդի սարսափներով լի կյանքն իր բոլոր կողմերով, նրանց հեղինակները ողբացել են իրենց ապրած օրերի դառը կյանքը, միաժամանակ ամբողջ ուժով քարոզել են միաբանության ու միասնության վեհ գաղափարը, ընդգծված ձևով տվել են լուսավորության, քաղաքական ու մշակութային վերածնության և ազատության անհրաժեշտության մասին, նախապատրաստել են գալիք գոտեմարտերը։

Այդ դարերի հեղինակներից և ոչ մեկն իր երկը չի սկսել Ադամից ու Եվայից կամ աշտարակաշինությունից, նրանցից գրեթե և ոչ մեկը հատուկ նպատակ չի դրել ժամանակակիցներին իր ժողովրդի անցյալի սխրանքներով դաստիարակելու, ինչպես այդ արել են նախորդ պատմագիրները։ Ժամանակները խիստ փոխվել էին, առաջնահերթ խնդիրն էր վերակենդանացնել ժողովրդին, նրան դուրս բերել թանձրամած խավարից։ Այդ հեղինակները հիմնականում ողբալով իրենց օրերի, ինչպես նաև ոչ հեռավոր անցյալի սարսափներն ու արհավիրքները, ձգտել են բարձրացնել ժամանակակիցների ու գալիք սերունդների ազգային ինքնագիտակցությունն ու մարդկային արժանապատվությունը, անողոք պայքար են մղել խավարի, հասարակախավերում արմատացած արատավոր բարքերի դեմ։ Նրանք գրչով ու գործուն մասնակցությամբ ձգտել են վերականգնել իրենց ժողովրդի անցյալի լավագույն ավանդույթները, քարոզել ու գովերգել են նորը, առաջավորը, վերանորոգչական միջոցառումներն ու նախաձեռնությունները, մտավոր կյանքի

զարթոնքը։ Նրանցից շատերն իրենց կյանքը նվիրել են այդ զարթոնքի ու նրա հետագա զարգացման հայրենանվեր գործին։

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ այդ դարերի պատմագրության մեջ լայն անդրադարձում է գտել իր բուռն զարգացումն ապրող հայ առևտրավաշխառուական կապիտալի գաղափարախոսությունը, որը և զգալի չափով նպաստել ու խթանել է նրա աշխարհականացմանը։ Հանդես են եկել աշխարհիկ հեղինակներ հիմնականում առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչներն՝ իրենց օրագրություններով ու ուղեգրություններով և թարմություն մտցրել պատմագրության մեջ։

Պատմական երկերի հեղինակներն այդ նոր հասարակախավի մեջ են տեսել այն հեղափոխիչ ուժը, որը պիտի նպաստեր ժողովրդին դուրս բերելու թանձրամած խավարից, մղձավանջային վիճակից, որը պիտի խթաներ տնտեսական, քաղաքական, հոգևոր—մշակութային զարթոնքը և նպաստեր նրա հետագա զարգացմանը։

Երրորդ առանձնահատկությունն այն է, որ այդ դարերի պատմագրության մեջ համակողմանի արտացոլվել է հայ գաղթավայրերի ու պանդխտության պատմությունն իր դրական և բացասական կողմերով, նրանց դառն ճակատագիրը, ազգային ու կրոնական հալածանքները, ծայր աստիճան սրված դավանաբանական պայքարը հայադավանների ու ունիթորների միջև, պապականության վարած նենգ քաղաքականությունը գաղթավայրերում։

Չորրորդն այն է, որ նրանում երևան է եկել քաղաքական կողմնորոշման մեջ այն արմատական հեղաբեկումը, որ տեղի էր ունեցել մեծ հայրենասեր Իսրայել Օրու համառ ջանքերով և այն, որ XVIII դարի մի քանի պատմագիրներ կամ պատմական երկերի հեղինակներ հանդիսացել են Օրու ջերմ հետևորդները և իրենց պրակտիկ գործունեությամբ աջակցել են նրա նպատակի իրականացմանը (Եսայի Հասան Ջալալյան, Ստեփան Շահումյան, Սիմեոն Երևանցի)։

Ի վերջո, կարևոր առանձնահատկություններից է նրա լեզուն, նյութի մատուցման ձևերն ու եղանակները։ Լեզուն փոքր բացառություններով, միջին գրաբարն է և ժամանակի խոսակցական լեզուն, մատուցման ձևը չափազանց պարզունակ է, բայց միաժամանակ հագեցված հայրենասիրական ջերմ զգացումներով։

Ինչպես նախորդ դարաշրջանների, այնպես նաև ուշ միջնադարի հայ պատմագրության ներկայացուցիչների մեծագույն մասի պատմագրական ժառանգությունն իր պարունակած հարուստ, արժեքավոր ու

բազմաբովանդակ նյութերով՝ իբրև ականատեսի, ականջալուրի ու գործող անձի գրվածք, հավաստի և ստուգապատում սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի ու հայ ժողովրդի, հայ գաղթավայրերի նշված դարաշրջանի պատմության, այլ նաև Անդրկովկասի, Պարսկաստանի ու Թուրքիայի և նրանց ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար և ընդհանրապես արևելագիտության համար։ Դա է հայ պատմագրության առանձնահատկությունը, որը և պայմանավորել է նրա գրված ուրույն դերն ու տեղը համաշխարհային պատմագրության մեջ։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ

Հրատարակություններ

Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ, ի լոյս ընծաեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վրդ. Շահնազարեան. Փարիզ, 1860։

Թովմա Մեծոփեցու Ցիշատակարանը, Թիֆլիս, 1892 (Հրատարակեց իր առաջաբանով Կ. Կոստանեանց)։

Գրականություն

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Դիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 365—368։

Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 215—216, 473։

Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա., էջ 125 և մասն Բ, էջ 549։

Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 329—333։

Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 1, Երևան, 1959, էջ 475—482։

Դուրյան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885, էջ 76։

Զամինյան Ա., Հայ գրականութեան պատմութիւն, Նոր-Նախիջևան, 1914, էջ 217—281։

Զարբհանալյան Դ., Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց, հ. Բ. (Նոր մատենագրութիւն), Վենետիկ, 1878, էջ 162—168։

* Աշխատության մեջ նշված հայ պատմագիրների համառոտ մատենագիտությունը կազմել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի պատմագրության բաժնի կրտսեր գիտաշխատող Ս. Տ. Մարաբյանը, օգտագործելով մատենագրական երկերը, նրանց վերաբերյալ ուսումնասիրությունները (Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. Ա, 1959, հ. Բ, Երևան, 1964, հ. Գ, Երևան, 1975), մատենագիտական աշխատությունները (Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա, Երևան, 1941, Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959)։

Ս. Մարաբյանն օգտագործել է նաև Ալ. Մյասնիկյանի անվան պետական, ԳԱ ֆունդամենտալ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանների համապատասխան քարտարանները։

Լեո, Հայոց պատմություն, հ. Գ. Երևան, 1946, էջ 137, 207։
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 491—492։
Հովսեփյան Գ., Թովմա Մեծոփեցու կենաքը (Կենսագրական նոր Նիւթերով), Վաղարշապատ, 1914։
Մաթևոսյան Ա., Գրիգոր Տաթևացին և Մեծոփավանքի դպրոցի հիմնադրումը. «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 146—155։
Մուրատյանց Մ., Պատմութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, Երուսաղեմ, 1872, էջ 541—542։
Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 161։
Ցգանյան Գ., Պատմութիւն հայ լեզուի եւ բանահիւսութեան, Մարզվան, 1913, էջ 224։
Матевосян А., Рукописный центр Мецопского монастыря в XII—XV вв., автореферат, Ереван, 1970 .
Хачикян Л., Историография Армении («Очерки истории исторической науки в СССР», т. 1, М., 1955, գլ. 3 և 6-ի համապատասխան բաժինները)։

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՑԻ

Հրատարակություններ

Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, մէկ նմանատիպ պատկերով, Յառաջաբանով եւ Յաւելուածներով հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղեմ, 1915։

Գրականություն

Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 164։
Ակինյան Ն., Մատենախօսական, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1920, էջ 184—188։
Անասյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 624—627։
Անասյան Հ., 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 22, 26—27, 29—30, 36, 70, 112, 352։
Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 508—519։
Գալեմքյարյան Գ., Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1915, էջ 3—19։
Լեո, Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1946, էջ 229, 234—236, 260, 262, 284, 292—294, 296, 297, 299, 314 356—360։
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 494—495։
Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 47, 84, 107, 116, 466։
Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 192։
Օրմանյան Մ., Ազգապատում, Կ. Պոլիս, 1914, էջ 2317—2318, 2494—2495։

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ*

Հրատարակություններ

Գիրք Պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրիժացւոյ։ Սակս դիպուածոց Հայաստանեայց՝ և ևս գաւառին Արարատոյ՝ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի թուոյն Հայոց 1054 էն, մինչև յաւարտ պատմագրութեանս, այլև ի յիշոմն ածեալ մասնաւորաբար, ատոի և անտի։ Տպագրեալներ տպարանում սրբոյն Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարի։ Ի Հայրապետութեան տեառն Յակոբայ կաթուղիկոսի սրբոյ Էջմիածնի։ Եւ վերակացութեամբ տեառն Ոսկանայ Երևանցւոյ բանի սպասաւորի։ Յամսրթէլոդամում։ Ներ թուոջ փրկչին 1669 ին, Յունվարի 1։ Իսկ ըստ Հայոց 1118 ին, Մահմի 29։

Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ։ Սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ եւ մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ՌՄԴ թուականէն Հայոց մինչ ի ՌՃԺԲ թ.։ Ըստ ձեռագիր օրինակին արտագրելոյ ծախիւք և հսկողութեամբ հեղինակին։ Տպեալ հրամանաւ Սինոդի Ս. Էջմիածնի։ Ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, 1884—ՌՅԼԴ։

Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ։ Սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթն գաւառի սկսեալ ի ՌՄԱ թուականին Հայոց մինչ ի ՌՃԺԱ թ.։ Երրորդ տպագրութիւն։ Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1896—ՌՅԽԵ։

Թարգմանություններ ռուսերեն և օտար լեզուներով

Առաքել Դավրիժեցու Պատմության ԾԴ գլխի ռուսերեն թարգմանությունը տե՛ս
Патканов К. П., Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке, С.—Петербург, 1873.
Аракел Даврижеци, Книга историй, перевод с армянского, предисловие и комментарий Л. А. Ханларян, Москва, 1973.
Livre d'histoires, composé par le vartabed Arakel de Tauriz, հետևյալ ժողովածուի մեջ. M. Brosset (հրատ.), Collection d'historiens arméniens, t. I, St.-Pétersbourg, 1874, p. 267—608.

Գրականություն

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 439—440 և 442—454։
Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 131—132, պ. 134։
Անասյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 216, պ. 106։

* Վերցված է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն»-ից, հ. Ա. Երևան, 1959, էջ 1114—1155։

Անասյան Հ., Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ, «Էջմիածին», 1956, № 8—9, էջ 93—99, № 11—12, էջ 68—76։
Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 519—559։
Գասպենյան Դ., Հայ ողբերգուներ։ Առաքել Դաւրիժեցի, «Տաճար», 1912, էջ 337—340, 363—367 և 405—408։
Դանիելյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի 17-րդ դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978։
Դուրյան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885, էջ 81։
Զամիրյան Ա., Հայ գրականութեան պատմութիւն, Նոր-Նախիջևան, 1914, էջ 239—240։
Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ազգային վարժարանաց։ Բ.—Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 172—179։
Լեո, Հայկական տպագրութիւն, հ. Ա., Թիֆլիս, 1901, էջ 159—161։
Լեո, Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1946, էջ 272, 360—364։
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 495—496։
Ղազիկյան Ա., Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, 1909, էջ 183—189։
Ղամչյան Մ., Պատմութիւն Հայոց, Հ. Ա., Վենետիկ, 1784, էջ 17։
Պոտկանյան Ք., Հայ պատմագրների երկասիրութեանց ցուցակը, «Փորձ», 1880, № 1, հավելված՝ էջ 34—35։
Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 197—198։
Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 213։
Սարգիսյան Խ., Առաքել Դաւրիժեցին և իր պատմագրությունը, «Գլաձոր» Բեյրութ, 1956, էջ 69—75։
Օգանյան Գ., Պատմութիւն հայ լեզուի եւ բանահիւսութեան, Մարզվան, 1913, էջ 226։
Օրմանյան Մ., Ազգապատում, մասն Բ., Կ. Պոլիս, 1914, էջ 2491—2492, պ. 1712։
Ханларян Л., По поводу «замечаний» М. Гейдарова, «Լրաբեր», № 6, Երևան, 1977, էջ 79—92։
Назарянц Ст., Обозрение истории гайканской письменности, Казань, 1846, с. 42—43.
Brosset M., Des historiens arméniens des XVIIème et XVIIIème siècles. Arakel de Tauriz, Régistre chronologique, annoté par M. Brosset, St.-Pétersbourg, 1873. (=Mémoires de l'Académie impériale des sciences de Saint-Pétersbourg, VIIe série tome XIX. № 5).
Brosset M., (հրատ.), Collestion d'historiens arméniens... traduit par M. Brosset, t. I, St-Pétersbourg, 1874, d. XXXXXII.
Thorossian H. Histoire de la littérature arménienne des origines jusqu'à nos jours, Paris, 1951, p. 205—206.
Neuman C. F., Versuch einer Ceschichte der armenischen Litteratur, Leipzig, 1836, S. 548—249.
Petemann H., Reisem in Orient, Bd. I, Leipzig, 1860, s. 223.
Somal P. S., Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829, p. 157—158.

ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՎԱԳ ՔԱՆԱՔԵՌՑԻ

Հրատարակություններ

Զաքարիայ Սարկաւագի պատմութիւն, հ. Ա., Բ., Գ., Վաղարշապատ, 1870։

Ռուսերեն թարգմանություն

Закарий Канакерци, Хроника, Перевод с армянского, предисловие и комментарий М. О. Дарбинян-Меликян, Москва, 1969.

Գրականություն

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 454—458։
Աբել արքեպիսկոպոս, Կենսագրութիւն Զաքարիայ պատմագրի Սարկաւագի Յովհաննավանեցոյ, «Արարատ», 1870, էջ 151—155։
Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 41, 174, 295։
Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա., էջ 132։
Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երևան, 1944, էջ 200։
Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 560, 568։
Անասյան Հ., 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 243, 353։
Ավդալբեկյան Թ., Անհայտ աղանդաւորներ հայոց մէջ ԺԶ և ԺԷ դարերում, Վիեննա, 1926։
Դուրյան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885, էջ 81—82։
Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց, հ. Բ (Նոր մատենագրութիւն), Վենետիկ, 1878, էջ 179—184։
Լեո, Հայոց պատմություն, Հ. Գ., Երևան, 1946, էջ 122, 125, 271, 290, 293, 294, 299, 300, 303, 305, 317, 320, 322, 323, 346, 348—351, 353, 363—367, 373—378։
Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ., հ. 1, կազմեց Վ. Հակոբյան,, Երևան, 1951, էջ 302։
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 496—497։
Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 70, 118, 122, 129—131, 133, 136, 138, 144, 147—149, 152, 156, 158, 161—162, 165, 168, 202—208, 210, 217, 246, 248, 255, 286, 291, 295, 299—301, 455, 467։
Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948։
Շահխաթունյանց Հ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 1—2, Էջմիածին, 1842։

Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 192—193։
Օզանյան Գ., Պատմութիւն հայ լեզուի եւ բանահիւսութեան, Մարզվան, 1913, էջ 226։
Арутюнян Б., Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв. по архивным материалам Эчмиадзинского монастыря. Ереван, 1940.
Патканов К., Библиографический очерк армянской исторической литературы, СПб., 1880.
Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949.
Brosset M., Mémoires historiques sur les Sofis par le diacre Zacaria,-Collection d'historiens arméniens, T. II, St.-Pbg., 1876.

ԶԱՔԱՐԻԱ ԱԳՈՒԼԵՑԻ

Հրատարակություններ

Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938։

Ռուսերեն թարգմանություն

Дневник *Закария Акулисского*, Ереван, 1939.

Գրականություն

Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երևան, 1944, էջ 199—200։
Անասյան Հ., 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 270, 353։
Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 475—481։
Դանիելյան Կ., Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 72—73։
Լեո, Հայկական տպագրութիւն, հատոր առաջին, Թիֆլիս, 1901, էջ 291—295։
Լեո, Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1946, էջ 156, 157, 373, 443, 1021, 1022։
Կաժյան Վ., Բայը և նրա խոնարհման համակարգը Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունում», «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1977, էջ 137—150։
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 499—500։
Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 94, 123, 127, 137—138, 141, 155—158, 161—162, 170, 175, 203, 207—209, 211, 217, 232, 235, 248, 290, 292, 309, 362, 443—444, 454, 477—478։
Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 201—202։

ԱԲՐԱՀԱՄ ԿՐԵՏԱՑԻ*

Հրատարակություններ

Պատմութիւն անցից տեառն Աբրահամու սրբազան կաթուղիկոսին Հայոց Թաքիրդաղցւոյ, առ Նադրշահ արքայիւն Պարսից, Կալկաթա, 1796։
Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին Պարսից։ ՌՅԺԹ-1870, ի տպարանի սրբոյ կաթողիկէ էջմիածնի, ի Վաղարշապատ։
Աբրահամ Կրետացու հիշատակարանը (Ծոցի տետրակը)։
(Ձեռագիր Պետական Կենտրոնական Ձեռագրատուն—Մատենադարանի № 7130)։
Երևանի Պետ. համալսարանի գիտական աշխատություններ, հ. 13, 1940, էջ 310—343։

Թարգմանություններ ռուսերեն և օտար լեզուներով

Абраам Кретаци, Повествование, критический текст, перевод на русский язык, предисловие и комментарии Н. К. Корганяна, Ереван, 1973.
Mon histoire et celle de Nadir-Chah de Perse, par Abraham de Crète. Brosset (*հրատ.*), Collection des historiens arméniens, tome II, St.-Pétersbourg, 1875. p. 257—326.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 458—462։
Աճառյան Հր., Հայերէն նոր բառեր Աբրահամ Կրետացւոյ մէջ (տպ. Վաղարշապատ 1870), «Բազմավէպ», 1917, էջ 279—280։
Աճառյան Հր., Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, Վենետիկ, 1913, էջ 127—134՝ Հայերէն նոր բառեր Աբրահամ Կրետացւոյ մէջ (տպ. Վաղարշապատ 1870)։
Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 42, պ. 101։
Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 578—589։
Բաբայան Լ., Աբրահամ Կրետացի, «Պատմա-բանասիրական հանդես», № 4 (79), 1977, էջ 115—125։
Գալեմքյարյան Գ., Կենսագրութիւն Սարգիս արք. ի Սարաֆեան և ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1908, էջ 21—24 և 157—166։
Դաւրյան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885, էր 82—83։
Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց, հ. Բ (Նոր մատենագրութիւն), Վենետիկ, 1878, էջ 184—186։
Լեո, Հայկական տպագրութիւն, հ. Բ, Թիֆլիս, 1901, էջ 408—411։
Լեո, Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1946, էջ 715—716, և 943—944։

---

* Վերցված է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն»-ից, հ. Ա., Երևան, 1959, էջ 118—130։

Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 503—504։
Ղազիկյան Ա., *Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կենաց, Վենետիկ, 1909, էջ 12։*
Զամչյան Մ., *Պատմություն Հայոց, հ. Գ., Վենետիկ, 1786, էջ 806—807 և 818։*
Պետրոսյան Հ., *Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 238—239։*
Տեր-Ավետիսյան Ս., *Աբրահամ Կրետացու հիշատակարանը (Ծոցի տետրակը)։ Աբրահամ Կրետացու հիշատակարանի պատմական արժեքն ու նշանակությունը, Երևանի Պետական Համալսարանի գիտական աշխատություններ, հ. 13, Երևան, 1940, էջ 285—309։*
Օրմանյան Մ., *Ազգապատում, հ. Բ, կ. Պոլիս, 1914 պ. պ. 1969—1990.*
Օգանյան Գ., *Պատմություն հայ լեզուի եւ բանահիւսութեան, Մարդվան, 1913, էջ 226։*
(Անանուն), Ս. *Էջմիածնի գրագարան, «Արարատ», 1888, էջ 85—89։*
Тер-Аветисян С., Походы Тамас-Кули-Хана (Надир-Шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, Изд. Научно-исследовательского Института Кавказоведения Академии наук СССР, 1932, с. 4—7.
Brosset M., Revue de la littérature historique de l'Arménie, Mélanges asiatiques tirés du Bulletin de l'Académie Impériale des Sciences de St-Pétersbourg, t. VIII 1876—1881, p. 31—33.
Chamich Mich., History of Armenia, transl. by Johannes Avdall, vol. II, Calcutta, 1867, p. 480—481.

ԽԱՉԱՏՈՒՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ

Հրատարակություններ

Պատմություն Պարսից արարեցելոյ ի Խաչատուր վարդապետէ Նոր Ջուղայեցւոյ, «Ակդարար», Մադրաս, 1795, № 5—16։
Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ Պատմություն Պարսից (ԺԸ դար), աշխատությամբ Բարգէն վրդ. Աղաուելեանց, Վաղարշապատ, 1905։

Գրականություն

Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա., էջ 135։
Ազավելեանց Բ., *Առաջաբան, Խաչատուր Աբեղայի Ջուղայեցւոյ Պատմություն Պարսից (ԺԸ դար) գրքին, Վաղարշապատ, 1905, էջ է—ժե։*
Անասյան Հր., *Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երևան, 1944, էջ 489—490։*
Առաքելյան Ա., *Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 589—605։*
Լեո, *Հայկական տպագրություն, հատոր առաջին, Թիֆլիս, 1901։*
Լեո, *Հայոց պատմություն, հ. Գ. Երևան, 1946, էջ 965—966, 1052։*
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 504,
Նույնը՝ հ. 5, Երևան, 1974, էջ 515, 579, 689։

Հովհաննիսյան Ա., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 166, 576։*
Պետրոսյան Հ., *Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 237—238։*
Քարամյան Ն., *Պարթևները Պարսկաստանում և նրանց յարաբերությունները հայոց հետ, Վաղարշապատ, 1897։*

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ

Հրատարակություններ

Ջամբռ գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն։
Համաժողովեցեալ և շարադրեցեալ Սիմէոնէ ցաւահար և վշտակոծ Կաթուղիկոսէ Երեւանցւոյ, Վաղարշապատ, 1873։
Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը, մասն 1, (1763—1767)։
Դիւան Հայոց Պատմութեան, գիրք Գ., Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը, կենսագրութեամբ և յաւելուածներով ու ծանօթութիւններով հրատարակեց Դիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894։ Մասն 2 (1767—1776), Թիֆլիս, 1908։ Մասն 3 (1777—1779), Թիֆլիս, 1913։
Տօնացոյց, նախապէս կարգեալ և սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթևի Հայրապետին հայոց, ըստ աւանդութեան Հայաստանեայցս սրբոյ եկեղեցւոյ։ Արդեն վերստին նորոգմամբ ի յերկուս հատորս բաժանեցեալ աշխատութեամբ Տեառն Սիմէօնի Յոգնաջան և Սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց, էջմիածին, 1774։
Գիրք որ կոչի պարտավճար։ Արարեալ Տեառն Սիմէօնի վշտակոծ և ցաւակիր կաթողիկոսի, մեծագործ և յոգներախտ Հայրապետի ամենայն Հայոց՝ Երևանեցւոյ. ի Քրիստոսահիմն սուրբ Աթոռս էջմիածին, էջմիածին, ՌՁԼԹ, 1779։
Սիմէոն Երեվանցի, Տաղարան փոքրիկ։ Շարահիւսեցեալ ի Սիմեօնէ սրբազան կաթողիկոսէ հայոց յայլ և այլ ժամանակս, էջմիածին, 1793։

Ռուսերեն թարգմանություն

Симеон Ереванци, Джамбр, Памятная книга, зерцало и сборник всех обстоятельств святого престола Эчмиадзина и окрестных монастырей, Москва, 1958. Перевод С. С. Малхасянца, Под редакцией и с предисловием П. Т. Арутюняна, Примечания С. С. Малхасянца и П. Т. Арутюняна.

Գրականություն

Ալիշան Ղ., *Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 231, 243։*
Անասյան Հր., *Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երևան, 1948, էջ 518—519։*
Անասյան Հ., *17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 184, 253, 355։*
Դալեմբայան Գ., *Կենսագրութիւն Սարգիս արքեպ-ի Սարգիսեան և ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1908, էջ 73—75, 95, 115, 249, 251, 264, 279, 280, 285, 299, 300, 311, 336—338, 363, 382, 410—411։*
Դալեմբայան Գ., *Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոս-*

ներու և ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1915, էջ 100, 102, 104, 108, 150, 164, 165, 239։
Զամիեյան Ա., Հայոց եկեղեցու Պատմութիւն, մասն Բ., Նոր-Նախիջևան, 1909, էջ 48—60։
Լեո, Հայկական տպագրութիւն, հ. Բ., Թիֆլիս, 1901, էջ 548—554, 574։
Լեո, Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1946, էջ 132, 141, 307, 764, 770, 773, 785, 786 789, 790, 791, 798, 799, 801, 804, 809, 813—820, 823, 838, 855, 875, 900, 917 944, 957—960, 962, 1033, 1034, 1046, 1059, 1060,—1062։
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 504—505։
Հովհաննեիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 300, 334։
Մսերեանց Մ., Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի ի Սիմէոնէ մինչ ցՅովհաննէս Ը. Ամբ տեառն 1763—1831, Մոսկվա, 1876։
Զամչյան Մ., Պատմութիւն հայոց, հ. Գ., Վենետիկ, 1786, էջ 866, 872, 875, 878։
Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 221—223։
Օրմանյան Մ., Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 3019, 3034, 3041—3110, 3119—3123։
Буткова П., Материалы для новой истории Кавказа, с 1722 по 1803 год. Часть III. Хронологический и алфавитный указатели, составленные Л. Броссе. Санкт-Петербург, 1869, с. 124—154.
Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. Часть III, Москва, 1838, с. 212, 319.
Хубов Е., Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние 30 лет, т. е. от патриаршества Симеонова (1779 г.) до 1809 г. С армянского перевел армянск. церкви архид. Иосиф Иоаннесов. С.—Петербург, 1811.

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵԲԻ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ

Հրատարակություններ

Երեմիա Չելէպիի Քէօմիւրճեան, Ստամպօլոյ պատմութիւն, հրատարակեց և ծանօթագրեց տօքթ. Վ. Թորգոմեան, հ. Ա., Վիեննա, 1913, հ. Բ. Վիեննա, 1932, հ. Գ., Վիեննա 1939։
Օրագրութիւն Երեմիա Չելէպի Քէօմիւրճեանի, հրատարակեց Մ. Նշանյան, Երուսաղեմ, 1939։

Երեմիա Քէօմիւրճեան, պատմութիւն համառօտ Դ՚ մասուց Օսմանցոց թագաւորացն աշխատասիրությամբ Ժ. Մ. Ավետիսյանի, Երևան, 1982։

Գրականություն

Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա., էջ 133։
Ակինյան Ն., Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, կյանքն ու գրական գործունեությունը, Վիեննա, 1933։
Նույնը տե՛ս «Հանդէս Ամսօրեայ» 1932, № 7—9, էջ 510—536, № 10—12, էջ 624—677 և 1933, № 1—2, էջ 94—114։
Անառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երևան, 1944, էջ 139—141։
Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 3, Երևան, 1975, էջ 19—29։
Անասյան Հ., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 81—90։
Անասյան Հ., 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 33, 38, 44, 111, 181, 242—243, 252, 253, 255, 257, 259—260, 268—271, 311—314, 352—353։
Դալեմբյարյան Գ., Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1915, էջ 27, 64, 70, 74, 77։
Դանիելյան Կ. Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 72—74։
Երեմյան Ս., Երեմիա Չելէպի, Տարեգրական պատմութիւն, «Բազմավէպ», 1902, № 8, էջ 367—369 և № 9—10, էջ 473։
Զարբհանալյան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց, հ. Բ. (Նոր մատենագրութիւն), Վենետիկ, 1878, էջ 332 և 441—444։
Թեոփիլյանց Մ., Բառգիրք երեվելի արանց, հ. Ա., Վենետիկ, 1839, էջ 240—241։
Թորոսյան Հ., Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ, Վենետիկ, 1932, էջ 26։
Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե., Վենետիկ, 1804, էջ 62—63, 129—130։
Լեո, Հայկական տպագրութիւն, Թիֆլիս, 1904, էջ 368—378։
Լեո, Հայոց պատմություն, հ. Գ. Երևան, 1946, էջ 367—372, և 390—391։
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 497—499։
Հովհաննեիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 111, 145—146, 152, 159—161, 172, 202, 218—223, 383—384, 462։
Նշանյան Մ., Օրագրութիւն Երեմիա Չելէպի Քեօմիւրճեանի, «Շողակաթ» հայագիտական ժողովածու, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 47—65։
Զամչյան Մ., Պատմութիւն հայոց, հ. Գ., Վենետիկ, 1784, էջ 680, 688, 699, 700, 701, 702, 703, 710, 717, 718, 722, 723։
Պալյան Տ., Երեմիա Քէօմիւրճեան, «Բիւրակն», 1898, № 10, էջ 611—612։
Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 202—203։

Սահակյան Հ., Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964։
Օգանյան Գ., Պատմութիւն հայ լեզուի եւ բանահիւսութեան, Մարզվան, 1913, էջ 233։
Օշական Հ., Երեմիա Չէլէպի, «Սիոն», 1939, № 9, էջ 331, № 10—11, էջ 367, 1940, № 1—2, էջ 30, № 3, էջ 70, № 4, էջ 163, № 5—6, էջ 142 և № 7—8, էջ 194։
Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ., Կ. Պոլիս, 1914, էջ 2516, 2612, 2644, 2660։

«ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԻԹ ԲԵԿԻ»

(ՍՏԵՓԱՆՈՍ ՇԱՀՈՒՄՅԱՆ)

Հրատարակություններ

Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, եւ պատերազմաց հայոցն Խափանու, որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722, եւ հայոց 1171։
Զորս եառուն գրել, որք ի սկզբանէ մինչև ցվախճան յառաջադէմ լեալք էին յամենայն պատերազմունս, և ականատես իրացն եղելոց, այսինքն Ստեփանոս Վրդանիսեան, որ ի տանէն էր Շահումեան, ի գաւառէն փորը Սիւնեաց, և յաւանէն Եկեղեաց, և այլ ոմանք ընդ նմա։
Հրատարակութեամբ ի լոյս ընծայեաց հանդերձ յաւելուածովք Արգար Ստեփաննոսեան Գուլամիրեանց ՌՅԻ—1871, ի տպարանի սրբոյ կաթողիկէ էջմիածնի, ի Վաղարշապատ։
Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Սամուէլ Արամեան, Վենետիկ, 1978։

Ֆրանսերեն թարգմանություն

Brosset M., Collection d'historiens arméniens, t. II, St.-Pétersbourg, 1876, p. 221—256.

Գրականություն

Աբրահամյան Ա., Դարբիելյան Դ., Նոր փաստաթուղթ Դավիթ Բեկի մասին, «Սովետական գրականություն», 1942, № 7, էջ 129—131։
Աբրահամյան Ա., Նոր վավերագրեր Դավիթ Բեկի ու նրա գլխավորած ազատագրական շարժման մասին, ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ. «Տեղեկագիր», Երևան, 1951, № 8, էջ 61—73։
Աբրահամյան Ա., «Դավիթ բեկի պատմության» նախագաղափար՝ ընագիրը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3, էջ 85—114։
Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 277, 301—302։
Ալիշան. Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 136։
Անանյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երևան, 1948, էջ 678։
Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 3, էջ 77—81։
Արամյան Ս., Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցւոց, «Բազմավէպ», 1972, № 2—3, էջ 232—259։
Արամյան Ս., Մխիթարեան վարդապետներու նամակներ՝ որոնց մէջ յիշատակուած է Դաւիթ Բէկի պատերազմներու մասին, «Բազմավէպ», 1976, № 1—2, էջ 86—107։

Արամյան Ս., Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցւոց, «Բազմավէպ», 1977, № 1—2, էջ 298—324։
Գրիգորյան Ա., Դաւիթ Բէկի ծննդավայրը, «Յառաջ» (Փարիզ), 1972, մարտ 19 (թիւ 12.370)։
Թումանյանց Յ., Ծագումն Դաւիթ Բէկի, «Բանասէր» (Փարիզ), Դ. (1902), թ. 12, էջ 381—382։
Լալայան Ե., Զանգեզուրի գաւառ, Կապան կամ Ղափան, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1905, էջ 175—202։
Լեո. Հայկական տպագրութիւն, հ. Բ., Թիֆլիս, 1901, էջ 339—388։
Լեո. Երկերի ժողովածու, երրորդ հատոր, Երևան, 1973, էջ 173, 179—190, 193, 195—209, 216, 217, 219, 223, 231, 254, 262, 330, 446, 521, 525, 601—605։
Կեյազյան Հ., Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ, Երևան, 1963։
Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 507։
Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 236,238, 255, 323, 360, 382, 459, 532, 536։
Ղլտճյան Ա., Նիւթեր Դաւիթ Բէկի Պատմութեան վերաբերեալ, «Արարատ», 1905, էջ 382—387։
Միրզոյան Ա., Հայ ազատագրական շարժումները Սյունիքում (1722—1730 թթ.), Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հատոր 2, Երևան, 1950, էջ 99—191։
Ներսիսյան Մ., Դավիթ Բեկի շարժման արձագանքները Վատիկանում և Հարևան գավառներում, «Տեղեկագիր» ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի, 1941, № 5—6, էջ 73—75։
Չամչյան Մ., «Պատմութիւն հայոց, հ. Գ., Վենետիկ, 1786, էջ 785—860։
Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958։
Պարսամյան Վ., Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբությանը։ Նոր նյութեր 18-րդ դարի հայ ազատագրական շարժումների վերաբերյալ, Երևան, 1962։
Պարսամյան Վ., Ղրիմի հայերի մասնակցությունը Դավիթ Բեկի ապստամբությանը (նյութեր և մեկնաբանություններ), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1972, № 3, էջ 143—151։
Պարսամյան Վ., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Երևան, 1978։
Պետրոսյան Հ., Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 220։
Փեշիկյան Ե., «Դաւիթ Բէկ»-ի պատմական աղբիւրները եւ Մխիթարեանք, «Բազմավէպ», 1938, № 6—9, էջ 172—187։
Օրբելյան Ս., Դավիթ Բեկի ծագումնաբանության հարցի շուրջը, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1971, № 1, էջ 173—184։
Օրբելյան Ս., Դավիթ Բեկի պատմության ժողովրդական զրույցների շուրջը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 3, էջ 191—200։
Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ., Կ. Պոլիս, 1914, էջ 2837—2839, 2853—2862։

ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ—ՋԱԼԱԼՅԱՆ

Հրատարակություններ

Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, համառօտագրեալ 'ի Սրբազնակատար Կաթողիկոսէն Աղուանից ի Տէր Եսայեաց Հասան Ջալալեանց. ի թուականին հայոց ՌՃԿ, իսկ ի թուականի Տեառն մերոյ փրկչին Յիսուսի 1711, ի տպարանի բարձր Սրբազան Ասպետափառ Մետրապօլտին Բաղդասարայ, ի 1839, ի Շուշի, ի ՌՄԶԸ։

Եսայի Հասան-Ջալալյան, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի։ Ղերուբնա Եղեսացու, «Թուղթ Աբգարու թագաւորի հայոց, և քարոզութիւնք սրբոյն Թադեի առաքելոյ» գրքի մեջ, Երուսաղեմ, 1868։*

Գրականություն

Ալիշան Ղ., *Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա., էջ 135։*

Աճառյան Հր., *Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երևան, 1944, էջ 130—131։*

Առաքելյան Ա., *Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 605—611։*

Արզումանյան Զ., *Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեության գնահատման հարցի շուրջը, «Լրաբեր», 1979, № 5, էջ 50—57։*

Լեո, *Հայոց պատմություն, հ. Գ., Երևան, 1946, էջ 568, 573, 585, 587—590, 592, 595—597, 600—607, 614—621, 627, 632, 633, 636, 637, 647, 648, 650—655, 657, 658, 660, 661, 668, 855, 942։*

Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 507։

Հովհաննիսյան Ա., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 122, 133, 259, 286, 293, 333—334, 358, 367—368, 378, 380—382, 523, 526—527, 539—542, 545, 560, 606, 608—613, 619—624։*

Բաֆֆի, *Խամսայի մելիքություններ, Երկեր, հ. 10, Երևան, 1964, էջ 161—381։*

Օրմանյան Մ., *Ազգապատում, մասն Բ. Կ. Պոլիս, 1914, էջ 2771—2772։*

ԱԲՐԱՀԱՄ ԵՐԵՎԱՆՑԻ*

Հրատարակություններ

Աբրահամ Երևանցի, *Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թթ., Երևան, 1938,*

Աբրահամ Երևանցի, *Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թթ., Վենետիկ, 1977։*

Ռուսերեն թարգմանություն

Абраам Ереванци. История войн 1721—1736 гг. Издание Армфана, Ереван, 1939.

---

* *Վերցված է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն»-ից, հ. Ա., Երևան, 1959, էջ 106—108։*

Գրականություն

Ալիշան Ղ., *Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 286 և 305։*

Ալիշան Ղ., *Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 136։*

Անասյան Հ., *Մի էջ ռուս-թուրքական հարաբերությունների պատմությունից և Երևանի 1724 թվի հերոսամարտը (անտիպ)։*

Աճառյան Հր., *Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 43։*

Առաքելյան Ա., *Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 569—578։*

Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 508։

Պետրոսյան Հ., *Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա (5—19 դար), Երևան, 1941, էջ 218։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5
Թովմա Մեծոփեցի 21
Գրիգոր Դարանաղցի 52
Առաքել Դավրիժեցի 79
Զաքարիա Սարկավագ Քանաքեռցի 132
Զաքարիա Ագուլեցի 162
Խաչատուր Ջուղայեցի 185
Սիմեոն Երևանցի 201
Երեմիա Չելեբի Քյոմուրճյան 210
«Ընտիր պատմութիւն Դավիթ Բէգին» 228
Եսայի Հասան Ջալալյանց 238
Աբրահամ Երևանցի 253
Վերջաբան 275
Համառոտ մատենագիտություն 279

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱՐԱՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ XIV—XVIII ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

Հրատ. խմբագիր Ա. Հ. Դեռոյան
Նկարիչ Դ. Հ. Միսակյան
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր Հ. Մ. Մաեուչարյան
Սրբագրիչ Ա. Ա. Մուրադյան

ИБ № 968

Հանձնված է շարվածքի 19. 09. 1983 թ.։ Ստորագրված է տպագրության 11. 04. 1984 թ.։ ՎՖ 04576։ Չափը 60×84 1/16 թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 17,2 մամ., տպագր. 18,5, Ներկ. մամուլ հրատ.-հաշվարկ. 16,0 մամուլ։ Տպարանակ 1400։ Հրատ. № 6033։ Պատվեր № 900։ Գինը 2 ռ. 65 կոպ.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բագրամյանի պող 24 գ.։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բագրամյանի պող. 24։
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна 24.